
ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՀԱՏԸՆՏԻՐ
ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ





ՀՐԱՄԱՆԱՒ

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹԻՒՆ

Տ. Տ. ԳԱՐԵԳՆԻ Բ

ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԵՒ ՎԵՀԱՓԱՌ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՏԸՆՏԻՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

(2010-2018)

ՀԱՏՈՐ Բ

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին
2019

ՀՏԴ 27(042.3)
ԳՄԴ 86.37
Գ 349

Հրատարակվում է երաշխավորությամբ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Հրատարակչական խորհրդի

Կազմող՝ Տ. Արարատ քհն. Պողոսյան

Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս
Գ 349 Հատընտիր պաշտոնականք (2010-2018), հտ. Բ / Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոս; Կազմող՝ Տ. Արարատ քհն. Պողոսյան.– Ս. Էջմիածին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչություն, 2019.– 720+2 ներդիր էջ:

Ներկա ժողովածուում ընդգրկված են «Էջմիածին» ամսագրում 2010-2018 թթ. ընկած ժամանակահատվածում Վեհափառ Հայրապետի կոնդակները, Օրհնության գրերը, քարոզները եւ այլ նշանակալի միջոցառումների, եկեղեցական և պետական տոների առիթով ասված խոսքերը:

ՀՏԴ 27(042.3)
ԳՄԴ 86.37

Տպագրվում է մեկենասությամբ
«ՍԱՐԳԻՍ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ

ISBN 978-9939-59-233-6 © Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 2019

ԱՌԱՋԱԲԱՆ

Հայ ժողովրդի կյանքում Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հոգեփրկչական եւ ազգապահպան դերն ու նշանակությունը անհերքելի են. այս է հստակ վկայում Հայոց պատմությունը: Հայ Եկեղեցին արդյունավոր գործունեություն է ծավալել ազգային կյանքի գրեթե բոլոր ոլորտներում: Նրա ազգանվեր նպատակը ուժ եւ կամք է ծնել, սփռած լույսը՝ լույս, ցանած բարի սերմերը՝ բարի հունդեր:

Ազգապահպան առաքելության իրականացման բարձր գիտակցումով են իրենց վստահված բանավոր հոտն առաջնորդել Հայոց կաթողիկոսները: Հայոց պատմությունը, եկեղեցագիտությունը, աստվածաբանությունը եւ հայ մատենագրությունն ուսումնասիրելիս անհնար է շրջանցել Հայոց կաթողիկոսների գործունեությունը: Այսու, հայրապետների գործունեության պատմությունը համադրվում է Հայոց պատմության ընթացքի հետ: Հենց այս իրողությունն է նկատի ունեցել մեծանուն հայագետ Մաղաքիա արք. Օրմանյանն իր արժեքավոր «Ազգապատում» աշխատությունը շարադրելիս, որտեղ հայ ժողովրդի պատմությունը ներկայացրել է ըստ Հայոց կաթողիկոսների ժամանակագրական հաջորդականության:

Ահա այս սկզբունքը որպես ուղենիշ ընդունելով՝ հրատարակության ենք պատրաստել Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի «Հատընտիր պաշտոնականք»-ի երկրորդ հատորը:

Առաջին[1] եւ երկրորդ հատորների հրատարակության միջոցով ընթերցողը կարող է պատկերացում կազմել Վեհափառ Հայրապետի 20-ամյա պատկառելի գործունեության մասին[2]:

[1] Առաջին հատորը տպագրվել է 2010 թվականին. տես **Գարեգին Բ Կաթողիկոս Ամենայն Հայոց**, *Հատընտիր Պաշտոնականք (1999-2009),* կազմող՝ Տ. Հովակիմ վրդ. Մանուկյան, Ս. Էջմիածին, 2010:

[2] Նշենք, որ 1999-2019 թթ. ընթացքում տրված հայրապետական 1079 կոնդակ (34 ընդհանրական՝ ուղղված ողջ հայությանը, 19՝ արքության պատվի, 190՝ Ս. Գրիգոր Լուսավորիչ, 201՝ Ս. Սահակ - Ս. Մեսրոպ, 621՝ Ս. Ներսես Շնորհալի շքանշանների շնորհման առիթներով), օրհնության գրեր (թվով 1951) եւ տարբեր առիթներով ասված խոսքեր ու քարոզներ:

Այս եւ նախորդ հատորը հայրապետական կոնդակների, պաշտոնական խոսքերի եւ օրինության գրերի ընտրանին են, որոնք իրենց ժամանակին տպագրվել են «Էջմիածին» ամսագրում: Ներկա ժողովածուի մեջ որոշ խոսքեր ընդգրկված են նաեւ «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթից, որոնք չեն հրապարակվել «Էջմիածին» ամսագրում:


Ժողովածուում ընդգրկել ենք նաեւ 2010-2018 թթ.[1] ընկած ժամանակահատվածում Վեհափառ Հայրապետի՝ գիտաժողովների եւ այլ նշանակալի միջոցառումների ժամանակ ներկայացրած զեկույցները: Խոսքերը դասակարգելիս հաշվի ենք առել դրանց ժանրային բնույթը, ընդհանուր ուղղվածությունը եւ թեմատիկան: Ինչպես բոլոր նմանատիպ ժողովածուններում, սույնի մեջ ևս այս բաժանումները խիստ պայմանական են և ընդամենը միտված են ընթերցողի փնտրած նյութը արագ և հեշտ գտնելուն: Ուղերձները, կոնդակներն ու խոսքերը ներկայացված են ըստ բաժինների եւ ենթաբաժինների, դասակարգված՝ ըստ ժամանակագրության (յուրաքանչյուր բաժնում): Ժողովածուն ներառում է «Էջմիածին» ամսագրում ամբողջական հրատարակված խոսքերը միայն, ուստի դրանց հղումներն արված են սույն ամսագրի համապատասխան համարին:

Ժողովածուն նախատեսված է ընթերցողների լայն շրջանակի համար: Այն հնարավորություն է ընձեռում ծանոթանալու Հայ Եկեղեցու գործունեությանը վերջին տարիներին:

Լիահույս ենք, որ այս ժողովածուն տեղ կգտնի յուրաքանչյուր հավատացյալի գրադարանում:

Արարատ քահանա Պողոսյան
Մայր Աթոռի Հրատարակչական բաժնի
եւ «Վաչե եւ Թամար Մանուկյան» Մատենադարանի տնօրեն

[1] Վստահ ենք, որ 2029 թվականին Վեհափառ Հայրապետի գահակալության 30-ամյակի տոնակատարության շրջանակում, Մայր Աթոռը ձեռնամուխ կլինի այս ժողովածուի երրորդ հատորի պատրաստմանը (սույն հատորում տեղ են գտել «Էջմիածին» ամսագրի 2010 թ. Ա-ից մինչեւ 2018, թ. ԺԲ համարներում տպագրված նյութերը, ուստի երրորդ հատորը պետք է սկսել 2019 թ. Ա համարից):



ՆՎԻՐՎՈՒՄ Է

Ն. Ս. Օ. Տ. Տ.
ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕԾՄԱՆ
ԵՎ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ՔՍԱՆԱՄՅԱԿԻՆ





ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ 550 - ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(25 ՄԱՅԻՍԻ, 2011 Թ.)[1]

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Գոհանամք կքէն, Հայր ամենակալ, որ պատրաստեցեր մեզ նաւահանգիստ սուրբ կեկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաբանի Սուրբ Երրորդութիւնդ. Ալէլուիա»
(Պատարագամատոյց):

---

[1] «Էջմիածին», 2011, Ե, էջ 3:

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնիյ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքութեան հիմնադրման 550-ամեակի առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու չնորհաւորանքներն ենք յղում Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին, պատրիարքական ընդհանուր փոխանորդ գերաչնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեչեանին, գինուորեալ միաբանութեանն ու հոգեւոր սպասաւորներին, Պատրիարքութեան խնամքի ներքոյ գտնուող հաւատաւոր հայորդիներին եւ աշխարհասփիւռ զաւակներին քրիստոսասէր մեր ժողովրդի:

Այսօր մեր հայրերի աղօթքով գոհութիւն ենք մատուցում Տիրոջը, որ մեզ էլ կանչեց լինելու Աստուծոյ ժողովուրդ, Սուրբ Եկեղեցի: Տիրոջ հրաշափառ յարութիւնից եւ համբարձումից յետոյ, երբ առաքեալները, զօրացած Սուրբ Հոգով, Նրա պարգեւած փրկութեան յաղթական աւետիսը տարածեցին աշխարհում, Աստուծոյ ողորմութեան լոյսը ծագեց նաեւ մեր երկրում: Մեր առաջին լուսաւորիչներ Սուրբ Թադէոս եւ Բարդուղիմէոս առաքեալների քարոզութեան չնորհիւ մեր ժողովուրդը ճաշակեց ճշմարիտ աստուածճանաչողութեան պտուղները՝ դառնալով «ի խաւարէ ի լոյս, ի մահուանէ ի կեանս, յապականութենէ յանապականութիւն, յանգիտութենէ ի գիտութիւն ճշմարտութեան իւրոյ»:

Հայաստանը դարձաւ քրիստոնեական աշխարհի կենտրոններից մէկը: Սրբազան մեր երկրում, ուր մեծ ջրհեղեղից յետոյ հանգրուանել էր Նոյեան Տապանը, ուր նշխարներն էին Տիրոջ առաքեալների եւ բազմաթիւ սուրբ վկաների, ուր հասել էին տէրունական սուրբ մասունքներ, անհուն բարձունքներից իջած Տէրը հաստատեց Սուրբ Էջմիածինը, լուսանկար մեր Մայր Աթոռը: Գրիգոր Լուսաւորիչ Սուրբ Հայրապետի «Եկայք չինեսցուք սուրբ զխորանն լուսոյ» պատգամով կառուցուեցին բազմաթիւ եկեղեցիներ ու վանքեր՝ որպէս փրկութեան տապաններ հայ ժողովրդի: Բարձրեալի օրհնութեան ներքոյ Հայ Եկեղեցին զօրացաւ, բարեբեր եղաւ առատ պտուղներով՝ դարեր շարունակ Հայրենիքում եւ Սփիւռքում հովուելով եւ խնամելով Տիրոջ ժողովրդին:

Հայ Եկեղեցու առաքելութեան ճանապարհին նշանակալի հանգրուան եղաւ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքութեան հիմնադրումը 1461 թուականին, որով սկիզբ առաւ Թուրքիոյ հայութեան ազգային ու եկեղեցական կեանքի նոր վերազարթօնքը: Պատրիարքութեան հոգեւոր իշխանութեան ներքոյ, որ տարածուեց մեր Հայրենի-

քի գերակշիռ մասի վրայ, վերածնուեցին հնագոյն վանքերը, դարձան հայ կեանքի կենտրոններ, նրանց հովանու ներքոյ ստեղծուեց ազգային, հոգեւոր ու մշակութային սքանչելի ժառանգութիւն, որն այսօր էլ շարունակում է հարստացնել ազգային-եկեղեցական կեանքը մեր ժողովրդի: Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքական Աթոռի նուիրեալ եկեղեցականներ, ինչպիսիք էին Հայոց Հայրապետական գահին բազմած Մատթէոս Ա, Գեւորգ Դ, Մկրտիչ Ա եւ Մատթէոս Բ կաթողիկոսները, Յովհաննէս Կոլոտ, Յակոբ Նալեան, Ներսէս արքեպիսկոպոս Վարժապետեան, Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանեան, Եղիշէ արքեպիսկոպոս Դուրեան, Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրեան, Շնորհք արքեպիսկոպոս Գալուստեան պատրիարքները, բազմաթիւ վաստակեալ ազգային, մշակութային գործիչներ անձնուիրաբար ծառայեցին մեր ժողովրդի առաջընթացին ու յարատեւութեանը: Հազարաւոր մեր եկեղեցիներն ու վանքերը, պատմամշակութային բազմահազար յուշարձան-կոթողները, ձեռագիր ու տպագիր գրքերը, արուեստի եւ գիտութեան ձեռքբերումները խօսուն վկաներն են պատրիարքութեան ժառանգութեան:

Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքութիւնն իր բոլոր նուաճումներով ու ամուր աւանդներով եղել եւ այսօր էլ շարունակում է լինել հայ կեանքի նշանաւոր կենտրոններից մէկը: Դուք, Կոստանդնուպոլսի Հայոց Պատարիարքութեան սիրելի հաւատաւոր ժողովուրդ, մեր նախնեաց օրինակով անխախտ էք պահպանում ազգային ու հոգեւոր ձեր կեանքի նուիրական արժէքները, դժուարին պայմանների մէջ հոգ տանում եկեղեցիների ու ազգային հաստատութիւնների պայծառութեանը: Մենք սիրով յիշում ենք Հովուապետական Մեր այցելութիւնը Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքութիւն, երբ գոհունակութեամբ ականատես դարձանք, թէ որքան ջերմ սիրով է պոլսահայութիւնը կապուած Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն, Սուրբ Էջմիածնին, Հայրենիքին ու հայրենական սրբութիւններին: Այսօր Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքութեան հիմնադրման մեծ յոբելեանը անցեալի վերարժեւորմամբ հոգեւոր նորոգութեան եւ ազգային միասնականութեան ամրապնդման նոր հրաւէր է ձեզ եւ համայն մեր ժողովրդին: Անսասան մնացէք առ Աստուած հաւատի ու յոյսի մէջ, զօրացէք եղբայրսիրութեամբ եւ ձեր կեանքը հարստացրէք նոր, աստուածահաճոյ գործերի արգասիքներով:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած հաստատուն ու պայծառ պահպանի Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքութիւնը,

հաւատով զօրացեալ՝ հոգեւոր սպասաւորներին եւ ազգային գործիչներին, բարեպաշտ ողջ ժողովրդին՝ առաւել ծաղկեցնելու մեր Եկեղեցու օրհնեալ անդաստանը՝ ի փառս մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի, Հայ Եկեղեցւոյ եւ հայ ժողովրդի:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեսեանդ. Ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Մայիսի
յամի Տեառն 2011 եւ ի թուին հայոց ՌՆԿ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 618



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(28 ՀՈՒՆՎԱՐԻ, 2012 Թ.)[1]

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Եւ այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր»
(Ա Յովհ. Ե 4):

Հայոց բանակի 20-ամեայ պանծալի յոբելեանի առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու չնորհաւորանքներն ենք բերում մեր քաջարի զօրաց ու զօրականաց եւ հաւատաւոր համայն մեր ժողովրդին ի Հայրենիս եւ ի Սփիւռս:

Մեր Հայրենիքի խաղաղ կեանքի, մեր ժողովրդի ապահով ու պայծառ գալիքի տեսիլքով ծնունդ առաւ Հայոց ազգային բանակը եւ կազմաւորուեց ու ամրապնդուեց պատերազմի մէջ հերոսական մաքառումներով: Հայրենի մեր երկրի անկախութեան խռովայոյզ առա-

[1] «Էջմիածին», 2012, Ա, էջ 3:

ջին տարիներին հաւատաւոր մեր ժողովրդի որդիները ու դուստրերը արիութեամբ պայքարեցին յանուն Արցախի ազատագրութեան եւ Հայաստանի Հանրապետութեան անվտանգութեան ու խաղաղ կեանքի՝ վկայելով Քրիստոսի խօսքը, թէ չկայ աւելի մեծ սէր, քան այն, երբ մէկն իր անձը տայ իր բարեկամների համար (հմմտ.՝ Յովհ. ԺԵ 13): Այսպիսի անձնուիրումով ու սխրանքներով դրուեց Հայոց բանակի հիմքը՝ վերանկախացեալ մեր Հայրենիքում: Հայրենեաց քաջարի պաշտպաններին ոգեշնչում էին վառ օրինակները մեր պատմութեան մէջ անմահացած հերոսների, մեծանուն եւ մեծագործ զօրավարների: Նրանց քաջալերում էր հոգեւորականաց ներկայութիւնն ու խօսքը՝ զօրացնելով հոգու անհուն սէրը Հայրենիքի հանդէպ եւ հաւատքն ու աղօթքը առ Աստուած, քանզի «Տիրոջից է գալիս յաղթանակի օգնութիւնը» (Առակ. ԻԱ 31),- ինչպէս վկայում է Սուրբ Գիրքը: Այս ժայռեղէն հաւատքով ու ապաւինութեամբ առ Քրիստոս յաղթական դարձաւ մեր նորաստեղծ բանակի ուղին եւ հզօրացաւ նորանոր ձեռքբերումներով՝ ի փառս մեր Հայրենեաց եւ համայն մեր ժողովրդի:

Բանակը սիւներից մէկն է մեր պետականութեան: Ուժեղ բանակը գրաւականն է մեր Հայրենիքի խաղաղ, ապահով ու անվտանգ կեանքի, մեր երկրի զարգացման եւ ազգի յարատեւութեան: Հայոց բանակի մեծագոյն ձեռքբերումները, փառքն ու պարծանքը եւ մեր սահմանների պաշտպանութեան հրամայականը ներկայիս առաւել են պարտաւորեցնում պահպանել մարտունակութիւնն ու աննկուն ոգին մեր զինուած ուժերի: 20-ամեայ ուղին Հայոց բանակի նոյնպէս վկայում է, որ Հայրենեաց պաշտպան զինուորն ու սպան զօրեղ ու անպարտելի են ոչ միայն լաւագոյն զինուածութեամբ, այլեւ յատկապէս քաջարի ոգով, հոգեղէն ներուժով: Բանակի իրական հզօրութիւնը Հայրենասէր, արդարամիտ ու ճշմարտասէր հոգու մէջ է, հաւատքով ու անձնդիր ծառայութեան մէջ. «Եւ այս է այն յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հաւատքը»,- ասում է առաքեալը:

Փառք ենք մատուցում Տիրոջը, որ մեր նախնեաց օրինակով Հայոց բանակում հայ զինուորի կողքին այսօր ծառայում են նաեւ Հայ Եկեղեցու սպասաւորներ, Աւետարանի պատգամներով, որպէս անխոցելի զրահաշապիկ, զգեստաւորելով մեր զաւակներին: Այլեւ փառք ենք մատուցում Տիրոջը, որ Հայոց բանակը՝ զգօն ու մշտարթուն, խիզախութեամբ պաշտպանում է սահմանները Հայրենի մեր երկրի, որի խաղաղ երկնքի եւ չնորհի ներքոյ ազգս Հայոց չարունակում է իր ստեղծագործ կեանքը: Մեր ժողովուրդը հպարտ է Հայոց բանակով եւ հաւատում է, որ փորձութեան ժամին մեր բանակը միշտ կլինի կազմ ու պատրաստ Հայրենիքի պաշտպանութեան դիրքերում:

Սիրելինե՛ր, հոգու խոնարհումով այսօր աղօթք բարձրացնենք հոգիների համար սիրասուն մեր զաւակների, ովքեր իրենց կեանքը զոհաբերեցին ի սէր Հայրենիքի եւ հարազատ ժողովրդի՝ երկնի լուսեղէն խորաններում համապատիւ դառնալով «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» մեր մարտիրոսեալ նահատակներին: Նունկ, աղօթք եւ օրհնութիւն նրանց անմահ յիշատակին եւ տէրունաշնորհ երանեալ հանգստութիւն նրանց լոյս հոգիներին:

Հայոց բանակի քսանամեայ յոբելեանի տօնական եւ բերկրալի առիթով, սրտի ուրախութեամբ, Հայրապետական Սրբատառ Կոնդակով հռչակում ենք Հայոց բանակին պահապան Աչոտ Երկաթ քաջարի թագաւորի պատուական Սուրբ Խաչը, որի մէջ ամփոփուած է մեր Տէր Յիսուս Քրիստոսի կենարար խաչափայտի մասունքը: Կրկնօրինակը, պահապան Սուրբ Խաչի Տիրոջ խաչափայտի մասունքի սուրբ նշխարով՝ խաչաձեւ զետեղուած կենտրոնում, օրհնութեամբ յանձնում ենք Զինուած ուժերի հոգեւոր առաջնորդութեանը: Թող այս խաչի զօրութիւնն ու օրհնութիւնը միշտ լինեն հովանի մեր բանակի զօրաց ու զօրականաց, ամրապնդեն նրանց հաւատքն ու արիութիւնը, բերեն նրանց երկնառաք չնորհներն ու զօրակցութիւնը, որպէսզի Հայոց բանակը միշտ գտնուի Հայրենիքին ծառայութեան պատուի ու պատասխանատուութեան բարձունքում եւ լինի յաղթական ու անպարտելի:

Իմման Սուրբ Սեղանի առջեւ Մեր աղօթքն ու հայցն է, որ Բարձրեալի Ամենակարող Աչքը այսօր եւ միշտ հովանի լինի ու պահպանի հայրենեաց պաշտպան Մեր սիրեցեալ որդիներին, որպէսզի նրանց հաւատարիմ ու քաջարի ծառայութեամբ միշտ խաղաղ լինի երկինքը մեր երկրի եւ լուսաւոր ու պայծառ՝ հորիզոնները մեր ազգային կեանքի:

Թող Տէրն Իր օրհնութեան մէջ պահպանի աշխարհը համայն, Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը եւ աշխարհասփիւռ հաւատաւոր մեր ժողովրդին:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն պարգեւեսցէ մեզ Աստուած, որ ետ յաղթութիւն ազգիս ի ձեռն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 28-ն Յունուարի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 654

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ՀԱՅ ԳՐԱՏՊՈՒԹՅԱՆ 500-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(11 ՓԵՏՐՎԱՐԻ, 2012 Թ.)[1]

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒԻՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Ձի սէրն ձեր եւս քան զեւս առաւել լիցի
ի գիտութեան եւ յամենայն իմաստութեան»
(Փիլ. Ա 9):

Գոհութեան աղօթք ենք բարձրացնում առ Աստուած, որ Հայրենիքում եւ Սփիւռքում մեր ժողովուրդը խաղաղութեան մէջ բերկրաշատ հոգով տօնախմբում է 500-ամեայ յոբելեանը հայ գրատպութեան՝ վերարժեւորելով մեր գրաւոր մշակոյթի հարուստ ու անգին ժառանգու-

[1] «Էջմիածին», 2012, Դ, էջ 6:

թիւնը եւ նրա լուսաւոր առաքելութիւնը մեր կեանքում: Տօնական առիթով Քրիստոսասիրմն հոգեւոր կենտրոնից ազգիս՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ի սփիւռս աշխարհի մեր ժողովրդին հոգու խնդութեամբ բերում ենք Հայրապետական Մեր օրհնութիւնը եւ առաքեալի պատգամը. «Թող ձեր սէրը աւելի եւ աւելի առատանայ գիտութեան եւ ամենայն իմաստութեան մէջ»:

Հայոց Գրերի գիւտից յետոյ հայ գրահրատարակութիւնը իր նշանակութեամբ մեր դպրութեան պատմութեան յաջորդ շրջադարձային իրադարձութիւնը եղաւ եւ կեանքի կոչուեց ու արգասաւորուեց իմացութեան եւ գրքի հանդէպ անհուն սիրով ու նախանձախնդրութեամբ, որոնք Հայոց Գրերի առատ պարգեւներով ներշաղախուած են նկարագրին մեր ժողովրդի: Սահակ-Մեսրոպեան դպրոցի ուսումնաբաղձ ոգին ու աւանդները, ձեռագիր մատեաններում պահուող հոգեւոր, գրական, գիտական ժառանգութիւնը նոր կեանք առան բազմօրինակ տպագրութիւններով, եւ հայերէն գիրն ու գիրքը շարունակեցին սնուցել ու կրթել հոգին մեր ժողովրդի ու պահպանել նրան լուսաւորութեան շաւիղներում թէ ապահով եւ թէ աղէտալի ժամանակներում:

Ազգերի մէջ առաջիններից մէկը մեր ժողովուրդը ձեռնամուխ եղաւ գրահրատարակութեան գործին: Տպագրութեան գիւտից կարճ ժամանակ անց օտարութեան մէջ՝ Վենետիկում, ծնունդ առաւ հայ տպագրութեան երախայրիք «Ուրբաթագիրքը»՝ սկզբնաւորելով այն լայնահուն ուղին, որը Տիրոջ կամքով սպասուում էր հայ գրատպութեանը: Մեր պատմութեան դառնագին ժամանակներից էին այն տարիները, երբ տպագրուում էին հայերէն առաջին գրքերը: Զգաղարող պատերազմներից, աւերներից ու կողոպուտներից ծուատուած, աշխարհասփիւռ դարձած մեր ժողովրդի համար առաւել քան կարեւոր էր իր հոգեւոր ներուժի պահպանումն ու զօրացումը: Վենետիկից յետոյ աշխարհի չատ քաղաքներ Եւրոպայից մինչ Հնդկաստան դարձան հայ տպագրութեան կենտրոններ: Յակոբ Մեղապարտին՝ հայ առաջին գրահրատարակչին, յաջորդեցին տպագրութեան գործի այլ նախանձաւորներ: Հրատարակուեցին Սուրբ Գրական գրքերը, Աստուածաշունչ մատեանը, մեր մատենագիրների գործերը, հայագիտական, բնագիտական ուսումնասիրութիւններ, թարգմանական գրականութիւն, դասագրքեր, պարբերականներ, հրատարակուեցին վեհ ու ազնիւ մէկ նպատակով, որպեսզի պայծառ մնան հայ կեանքում հաւատքի լոյսը, կրթութեան ու գիտութեան ջահը, եւ տարագիր ու աշխարհասփիւռ հայութիւնը հարազատ մնայ մայրենի լեզուին ու նախնեաց

ժառանգութեանը եւ պահպանի յոյսն ու տեսիլքը Հայրենիքի ազատութեան ու լուսաւոր գալիքի: Աստուծոյ ողորմածութեամբ հայերէն առաջին գրքի հրատարակութիւնից չուրջ երկուսուկէս դար անց հայ գրատպութիւնը, լուսաւոր ջանքերով Սիմէոն Երեւանցի Հայրապետի, սկզբնաւորուեց նաեւ Հայրենիքում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Մեր հոգեւոր կենտրոնից եւ Հայրենի այլ քաղաքներից չարունակուեց տպագիր գրքի՝ իմացութեան լոյս բերող, հայերէն խօսքով ու հայրենեաց սիրով ազգին միաւորող եւ դէպի իր իղձերի մարմնաւորումն առաջնորդող առաքելութիւնը: Արդարեւ, մեր ժողովուրդը նորանոր յաղթանակներ պիտի արձանագրի՝ չարունակելով հայ գրքի էջերից քաղել ու ամբարել զօրութիւնը իմացութեան, արարումի եւ բացայայտել մեր սուրբ հաւատքի ակունքն ու մաքրութիւնը եւ գաղտնիքը՝ ազգիս յարատեւութեան:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, այսօր հոգու խոնարհումով եւ աղօթքով յիշենք հայ տպագրութեան երախտաւորներին, բոյլը տպագրիչների, տառաստեղծների, տառաճոյլ վարպետների, գիտնականների, հրատարակիչների, կրթութեան գործիչների, մեկենասների, նաեւ Հայոց Հայրապետերի ու եկեղեցականների: Նրանք եղան ջահակիրներ առաջադիմութեան, ազգային ոգու զօրութեան, մեր ինքնութեան պահպանման, նրանց ջանքերով, նուիրումով ու վաստակով հայ գրքի տպագրավայրերը եղան նաեւ կենտրոններ մեր մշակոյթի զարգացման, հայրենասիրութեան ու ազատագրական պայքարի ոգեշնչման:

Խորհրդանշական է եւ ուրախալի, որ յոբելեանական այս տարում քաղաքամայր Երեւանը ճանաչուել է գրքի համաշխարհային մայրաքաղաք: Այս պատիւը արժեւորումն է այն մեծ ձեռքբերումների, որ ունի մեր ժողովուրդը գրի ու դպրութեան անդաստանում, սակայն միաժամանակ պարտաւորութիւն ու պատասխանատուութիւն է՝ խնամելու եւ զօրացնելու գրքի ու ընթերցանութեան հանդէպ սէրն ու նախանձախնդրութիւնը, որպէսզի այն չարունակի գիտելիք ու ճանաչողութիւն բերել, սերմանել հաւատք առ Աստուած, կրթել ազնուութեան, արդարութեան, հայրենասիրութեան, մարդասիրութեան անանց արժէքներ, որպէսզի զուր չլինեն գիրքը կորստից ու ոչնչացումից ազատելու մեր նախնեաց անձնուրաց ջանքերն ու զոհողութիւնները, որոնց մասին են վկայում մեզ հասած բազում ձեռագրերի ու տպագիր գրքերի պատմութիւնները, ինչպէս գաղթական երկու կանանց ձեռքով փրկուած Մշոյ Ճառընտիրը, որը հանգրուան է գտել Երեւանի Մատենադարանում: Հայ գրատպութեան 500-ամեայ յոբե-

լեանը հրաւէր է մեզ՝ արժեւորելու գիրքը, վերականգնելու սէրն ու պատկառանքը գրքի հանդէպ, որպէսզի մեր ու մեր զաւակների կեանքում՝ որդուց որդի, ապրի ու հրաշագործի գիտութեամբ եւ ամենայն իմաստութեամբ զօրացած ու պայծառացած հոգին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում հայրենի իշխանութիւններին՝ յոբելեանական տօնակատարութիւնները նախանձախնդրօրէն եւ չուքով կազմակերպելու համար: Հայրական սիրով Մեր գնահատանքն ենք բերում գրքի մշակներին, գիտութեան, կրթութեան, մշակոյթի գործիչներին եւ համայն մեր ժողովրդին, որ, հաւատարիմ հայրենեաց ժառանգութեանը եւ արժէքներին, հոգեշահ, ազգաշէն ու հայրենաշէն գործերով ընթանում է դէպի նոր կեանքի լուսաւոր հորիզոններ: Աղօթում ենք առ Աստուած եւ հայցում, որ անմար ու վառ լինի լոյսը հայ հոգու ու մտքի եւ առաջնորդի մեր ժողովրդի ուղին Տիրոջից օրհնեալ ճանապարհներով դէպի խաղաղ, ոռոգեալ ու բարեբեր հանգրուաններ:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 11-ն Փետրուարի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 665

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՐԹԻԿԻ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԸ ՇԻՐԱԿԻ ԹԵՄԻ ԿԱԶՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՐԹԻԿԻ ԹԵՄ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2012 Թ.)[1]

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Փառք ենք բարձրացնում առ Աստուած եւ մեր Եկեղեցու բարեպաշտ զաւակների հետ կիսում Մեր սրտի անհուն ուրախութիւնը, որ Տէրը պարգեւում է մեզ Իր առատ չնորհները՝ պայծառացնելով մեր Եկեղեցին, արդիւնաւորելով քարոզութիւնը Իր Սուրբ Աւետարանի, բազմապատկելով թիւը Իր Սուրբ Սեղանի սպասաւորների եւ նորոգուած ու նորակառոյց եկեղեցիների, չէնացնելով նաեւ մեր նուիրական հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որտեղից Իր ողորմած ու բարեխնամ կամքով հաւատքի լոյսը ծագեց համայն հայոց վրա

[1] «Էջմիածին», 2012, ժ, էջ 3:

եւ միաւորում է ազգս ի սփիւռս աշխարհի: Հոգեւոր-եկեղեցական մեր կեանքի այս բարեյոյս ընթացքները հրամայական են դարձնում նաեւ համայնքների վերակազմակերպումը՝ ի շահ Մեր զաւակների հոգեւոր խնամքի: Վերջին տարիներին Հայրապետական սրբատառ կոնդակով Մենք, ընդառաջ անհրաժեշտութիւններին, հռչակեցինք Ֆրանսիայի Հայոց թեմի եւ Հայաստանում Վայոց ձորի ու Տաւուշի թեմերի ստեղծումը: Այսօր Արթիկի տարածաշրջանի եկեղեցական համայնքները եւս անհրաժեշտութիւնն ունեն համախմբուելու որպէս մէկ թեմ, որպէսզի եկեղեցավարչական գործունէութեան առաւել արդիւնաւոր կազմակերպմամբ առաւելագոյնս հոգացուեն հոգեւոր կարիքները Մեր զաւակների, եւ մատուցուող մշտական պաշտամունքով, Տիրոջ խօսքի մշտահունչ քարոզութեամբ զօրանայ ու պայծառանայ նրանց հոգեւոր կեանքը, նրանց սրտերում անսասան մնան հաւատարմութիւնն ու նախանձախնդրութիւնը մեր Սուրբ Եկեղեցու եւ նուիրական արժէքների հանդէպ: Արդ, Հայրապետական այսու կոնդակով Արթիկի տարածաշրջանի եկեղեցական համայնքներն առանձնացնում ենք Շիրակի թեմի կազմից եւ հռչակում ենք ստեղծումը Արթիկի թեմի: Նորաստեղծ թեմի առաջնորդի պաշտօնում ծառայութեան ենք կոչում գերաշնորհ Տ. Յովակիմ եպիսկոպոս Մանուկեանին: Թեմի հոգեւոր իրաւասութեան սահմանը հաստատում ենք Արթիկի տարածաշրջանը՝ Հայրապետական կոնդակին կից գրութեամբ ներկայացուած համայնքներով: Տիրախնամ թեմի հաւատաւոր Մեր զաւակներին հայրաբար յորդորում ենք, որ ըստ ամենայնի սիրով ա՛յակից լինեն թեմակալ առաջնորդին՝ ի չինութիւն եւ ի զօրութիւն նորաստեղծ թեմի: Մենք վստահ ենք, որ գերաշնորհ Տ. Յովակիմ եպիսկոպոս Մանուկեանի առաջնորդութեամբ եւ քաջեռանդ գործունէութեամբ պիտի բարգաւաճի Արթիկի թեմը, եւ նոր ձեռքբերումներով պիտի զարդարուի Մեր բարեպաշտ հայորդեաց ազգային եւ հոգեւոր եկեղեցական կեանքը: Արթիկի թեմի հաստատման այս ուրախ առիթով չնորհաւորում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում թեմակալ առաջնորդին, թեմի հոգեւոր դասին եւ բարեպաշտ հաւատացեալներին: Աղօթում ենք առ Բարին Աստուած, որ միշտ ծաղկեալ պահի Արթիկի թեմը՝ մշտատեւ խաղաղութիւն, բարօրութիւն եւ յաջողութիւններ չնորհելով մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին: Թող Աստուած հանապազ օրհնութեամբ Իր Ամենախնամ Սուրբ Աչի հովանու ներքոյ պահպանի աշխարհասփիւռ մեր ժողովրդին, եւ թող յաւէտ պայծառ ու անսասան լինի Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

«Հաստատո՛ւն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրո՛վ լիցի» (Ա. Կորնթ. ԺԶ. 13-14):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ.
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 692

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՄԵՔՍԻԿԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԸ ԱՄՆ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԿԱՉՄԻՑ ՀԱՆԵԼՈՒ ԵՎ ԱՄՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԹԵՄԻ ՄԵՋ ՆԵՐԱՌՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(21 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՑ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՑ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՉԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՉԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՑ ՍՐԲՈՑ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՑ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Գոհութիւն եւ փառք ենք մատուցում առ Բարձրեալն Աստուած, որ օրհնում է զաւակներին ազգիս հայոց՝ մեր հայրերի սուրբ հաւատքի անխախտ վէմի վրա չէն ու պայծառ պահելու ազգային ու հոգեւոր իր կեանքի անդաստանը ի սփիւռս աշխարհի:

---

[1] «Էջմիածին», 2014, ԺԱ, էջ 5:

Տակաւին 19-րդ դարուն, երբ Օսմանեան կոտորածներից մազապուրծ հայութիւնը բնակութիւն հաստատեց Հիւսիսային Ամերիկայում, երջանկայիշատակ Խրիմեան Հայրիկ Ամենայն Հայոց կաթողիկոսը Հայրապետական Կոնդակով հաստատեց թեմական կառոյց Հիւսիսային Ամերիկա մայրցամաքում, որպէսզի արդիւնաւոր լինի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սպասաւորութիւնը հաւատաւոր մեր հայորդիներին, եւ հայրենակարօտ մեր ժողովուրդը անմասն չմնայ հոգեւոր խնամատարութիւնից:

Հետագայ տարիներին եւ ,յատկապէս Հայոց ցեղասպանութեան հետեւանքով, առաւել մեծ թուով հայորդիներ կեանքի ապահովութիւն գտան Հիւսիսային Ամերիկայում: Հայ համայնքներ ձեւաւորուեցին Միացեալ Նահանգների Արեւելեան, այնուհետեւ նաեւ Արեւմտեան շրջաններում եւ կանադայում: Մեր ժողովրդի հոգեւոր կեանքը կազմակերպելու եւ հոգատարելու նպատակով, ընդառաջ եկեղեցական վարչութիւնների խնդրանքին, Գեւորգ Ե եւ Վազգէն Ա երջանկայիշատակ Հայրապետերը հաստատեցին ԱՄՆ Արեւմտեան Հայոց եւ Կանադայի Հայոց Թեմերը:

Վերջին տասնամեակներին ժողովրդագրական տեղաշարժերի արդիւնքում մեծացել է հայորդեաց թիւը նաեւ Մեքսիկայում: Այս ընթացքում այցելու հոգեւորականների միջոցով մեր եկեղեցին ջանքեր է բերել, որպէսզի Մեքսիկայում բնակեալ հայորդիները իրենց հոգեւոր ու ազգային կեանքը կառուցեն մեր հայրերի սուրբ հաւատի նուիրական վէմի վրա եւ անխախտ պահեն իրենց հոգեւոր ու ազգային ինքնուրոյնութիւնը:

Այսօր հրամայական է առաւել մեծ հոգեւոր խնամք ու հոգատարութիւն մատուցել Մեքսիկայում բնակեալ մեր ժողովրդի զաւակներին: Այս առումով, ընդառաջելով ԱՄՆ Արեւելեան եւ Արեւմտեան Հայոց թեմերի խնդրանքին եւ հաշվի առնելով Մեքսիկայի ու Կալիֆոռնիայի հայ համայնքների փոխադարձ սերտ առնչութիւնները եւ Մեքսիկայի աշխարհագրական դիրքի նպատակահարմարութիւնը, Հայրապետական այսու Կոնդակով Մեքսիկայի հայ համայնքները առանձնացնում ենք ԱՄՆ Արեւելեան Հայոց թեմից եւ ընդգրկում ԱՄՆ Արեւմտեան Հայոց թեմի կազմի մէջ:

Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում ԱՄՆ Արեւմտեան Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանին՝ յորդորելով հովուական նախանձախնդիր սպասաւորութեամբ

ջանքեր բերել Մեքսիկայում համայնքային կառոյցների ճեւաւորմանը եւ արդիւնաւոր գործունէութեանը:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնը, սէրն ու բարեմաղթանքներն ենք յղում Մեքսիկայում բնակեալ հաւատաւոր Մեր սիրելի զաւակներին: Ի խորոց սրտի աղօթում ենք եւ հայցում, որ Բարձրեալն Աստուած Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահպանի մեքսիկահայ համայնքը եւ երկնառաք Իր ամենակեցոյց չնորհներով առատապէս օրհնի ու պայծառացնի ազգային ու հոգեւոր կեանքը Քրիստոսասէր մեր ժողովրդի այժմ եւ յաւիտեանս. ամէն:

«Թագաւոր երկնաւոր, զեկեղեցի Քո անշարժ պահեա եւ զերկրպագուս անուանդ Քում պահեա ի խաղաղութեան»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2014 եւ ի թուին Հայոց ՌՆԿԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 877

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵՎ ՍՈՒՐԲ ԲԱՐԴՈՒՂԻՄԵՈՍ ԱՌԱՔԵԱԼՆԵՐԻ ՏՈՆԻ ՕՐԸ ՍՈՒՐԲ ԳԵՂԱՐԴԸ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀԱՎԱՏԱՑՅԱԼՆԵՐԻ ԵՐԿՐՊԱԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(28 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒԻՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱՋԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սէր եւ օրհնութիւն ենք բերում առաքելահաստատ մեր Սուրբ Եկեղեցու աշխարհասփիւռ զաւակներին:

---

[1] «Էջմիածին», 2014, ԺԱ, էջ 7:

Մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութիւնից եւ Համբարձումից յետոյ Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարդուղիմէոս առաքեալները հայոց աշխարհում տարածեցին Աւետարանի կենարար լոյսը, եւ Ամենակալ Տէրը նրանց ձեռամբ հիմնադրեց Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին: Տիրոջ չնորհազարդ առաքեալներն իրենց հետ Հայաստան բերեցին նուիրական սրբութիւններ. Սուրբ Թադէոս առաքեալը մեր ժողովրդին պարգեւեց Աստուածամուխ Սուրբ Գեղարդը եւ Տիրոջ կողմից օրհնուած իւղը, իսկ Սուրբ Բարդուղիմէոս առաքեալը՝ Աստուածածնի լոյս պատկերը:

Առաքելական ժամանակներից Սուրբ Գեղարդը մշտապէս պահուել է Հայոց աշխարհում, մեր հինաւուրց վանքերում, որոնցից Այրիվանքը, ի պատիւ Տէրունի սրբութեան, անուանակոչուեց Գեղարդավանք: ԺԲ դարի կէսերից Սուրբ Գեղարդը փոխադրուեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ լինելով Հայոց Հայրապետաց մշտարթուն հսկողութեան ներքոյ: Սուրբ Գեղարդով է օրհնւում եւ նուիրագործւում Սրբալոյս Միւռոնը, որպէսզի Աստուածամուխ Գեղարդի միջոցով եւս օրհնուելով՝ անուշ Իւղը զօրութիւն ունենայ աստուածային չնորհները դրոշմելու մկրտուածների եւ ձեռնադրեալ եկեղեցականների հոգիներին, սրբագործելու աստուածպաշտական սրբազան իրերն ու առարկաները, հաւատքի նորակառոյց տները: Պատմութեան ընթացքներում նշանակալի իրադարձութիւնների ժամանակ փորձութիւնների ու նեղութիւնների մէջ Աստուածամուխ Սուրբ Գեղարդը Հայոց Հայրապետաց օրհնութեամբ դուրս է հանուել ի տես եւ յերկրպագութիւն մեր աստուածասէր ժողովրդի եւ բարեպաշտ օտարաց, որպէսզի Սուրբ Գեղարդից ճառագող օրհնաբեր լոյսն ու աստուածային զօրութիւնը սփռուեն համայն հաւատացելոց վրայ եւ հրաշագործեն՝ պարգեւելով հաւատքի ամրութիւն, բժշկութիւն, մխիթարութիւն եւ երկնահեղ բիւր չնորհներ:

Գոհունակ հոգով, ականատես ուխտաւորաց անհատնում երթին ի Քրիստոսահիմն Սուրբ Էջմիածին եւ հաղորդ հաւատացելոց սրտի խորին փափագին, այսօր Հայրապետական այսու կոնդակով տնօրինում ենք, որ Հայոց առաջին լուսաւորչաց՝ Սուրբ Թադէոս եւ Սուրբ Բարդուղիմէոս առաքելոց տօնին Աստուածամուխ Սուրբ Գեղարդը մեծահանդէս թափորով իջեցուի Քրիստոսակերտ Մայր Տաճար՝ յերկրպագութիւն հաւատաւոր Մեր զաւակների՝ ի մխիթարութիւն նրանց յուսացեալ հոգիների եւ ի կատարումն սրտի բաղձանքների: Տիրոջ բիւր չնորհների եւ երկնահեղ պարգեւների հայցով Աստուածակառոյց

Սուրբ Էջմիածնից յորդոր եւ պատգամ ենք բերում հաւատաւոր, աստուածասէր Մեր զաւակներին, որպէսզի ամեն տարի այս մեծափառ տօնին ուխտի ելնեն ի Քրիստոսահիմն Սուրբ Էջմիածին, ծնրադիր երկրպագութեամբ եւ խոնարհումով Տէրունի մեծ սրբութեան՝ հրաշագործ Սուրբ Գեղարդի առջեւ, որը չնորհաց չտեմարան է, բարեաց աղբիւր եւ ամենայաղթ սուր ընդդէմ չարի, եւ աղօթք մատուցեն՝ հայցելով Փրկչի օրհնութիւնն ու հովանին համայն աշխարհին, Հայրենի մեր երկրին, մեր ժողովրդին եւ իրենց կեանքին՝ որպէս «դեղ կենաց առ հնարս ցաւոց հոգւոց եւ մարմնոց»:

Միածնաէջ Սուրբ Սեղանի առջեւ ի խորոց սրտի Հայրապետական Մեր աղօթքն ենք բարձրացնում առ Ամենակալ Տէրը, որ երկնային զօրակցութեամբ, «ընդ հովանեաւ Աստուածամուխ եւ աքանչելագործ սուրբ Գեղարդեանս ներկեալ արեամբն Քրիստոսի», միշտ հաստատուն ու պայծառ պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ ամենակեցոյց Իր չնորհներով խաղաղ ու ապահով պահպանի ու առատապէս օրհնի աշխարհս եւ աշխարհասփիւռ ազգս հայոց:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 28-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2014 եւ ի թուին հայոց ՈՆԿԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 879

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(28 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՅ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՅ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՅ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Ճանապարհք արդարոց որպէս լոյս ծագեն, առաջնորդեն եւ լուսաւորեն, մինչեւ տիւն լուսաւորեսցէ» (Առակ. Դ. 18):

Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցի առջեւ ենք՝ մեր հոգիներում արդարութեան եւ ճշմարտութեան անլռելի, զօրեղ պահանջով: 2015 թուականի իւրաքանչիւր օր մեր ժողովրդի համար ոգեկոչման եւ խնկարկման օր է, հոգեւոր երթ դէպի Հայրենիքում եւ

[1] «Էջմիածին», 2014, ԺԲ, էջ 5:

Սփիւռքում վեր յառնած նահատակաց յուշարձաններ՝ ծնրադիր խոնարհումով աղօթք բարձրացնելու անչիրիմ մնացած մեր անմեղ զոհերի հոգիների համար, ովքեր մահն ընդունեցին՝ մերժելով հաւատուրացութիւն եւ ազգուրացութիւն: Յիրաւի. «Արդարների ճանապարհները նման են ծագող լոյսի, որն առաջնորդում եւ լուսաւորում է նրանց, մինչեւ որ օրը լրիւ լուսաւորի»:

1915 թուականին եւ հետագայ տարիներին օսմանեան Թուրքիայի կողմից իրագործուեց Ցեղասպանութիւն մեր ժողովրդի նկատմամբ: Արեւմտեան Հայաստանում՝ բնօրրան մեր Հայրենիքում եւ Թուրքիայի հայաշատ բնակավայրերում կազմակերպուած ջարդերին, սովին ու հիւանդութիւններին, որոնք իշխում էին բռնագաղթի ճանապարհներին, զոհ գնացին ազգիս մէկ եւ կէս միլիոն զաւակներ: Թալանուեց դարերով ստեղծուածը, արդար վաստակը մեր ժողովրդի: Խոնարհուեցին ու աւերուեցին հազարաւոր մեր վանքերն ու եկեղեցիները, ազգային հաստատութիւնները, դպրոցները, ոչնչացուեցին եւ կորստեան մատնուեցին մեր հոգեւոր ու մշակութային արժէքները: Հայաթափուեց Արեւմտեան Հայաստանը, որտեղ մեր ժողովուրդը հազարամեակներ՝ Նոյեան դարից ի վեր, ապրել, արարել եւ իր պատմութիւնն ու մշակոյթն է կերտել: Մէկ դար առաջ, երբ հայրենազրկուած հայութեան բեկորները սփռուում էին ողջ աշխարհով, երբ Արեւելեան Հայաստանը կենաց եւ մահու դոյամարտ էր մղում թուրքական զաւթիչների դէմ, դժուար էր հաւատալ հայ ժողովրդի ապագային: Բայց այն ճառագեց: Մեր ժողովուրդը Տիրոջ շնորհով յառնեց մահուանից: Հայրենիքի փրկուած հողակտորի վրայ վերականգնեց պետականութիւնը, աւերակներից ու խլեակներից վերակերտեց հայրենի երկիրը, դարձրեց գիտութեան, կրթութեան, մշակոյթի, «լոյսի եւ յոյսի Հայրենիք»: Տարագիր հայութիւնը տարբեր երկրներում իր տունը կառուցեց, հայրենի ծուխը ծխեցրեց, ապրեցրեց ու բարձրացրեց իր հոգեւոր ու ազգային կեանքը: Որտեղ էլ ապրեցին մեր ժողովրդի զաւակները, հասան յաջողութիւնների, արժանացան յարգանքի, վստահութեան, ճանաչուեցին բարեխիղճ աշխատանքով, գիտութեանը, արուեստին, հասարակութեան բարօրութեանը բերած աւանդով: Այսպիսին է վերջին հարիւրամեակի պատմութիւնը մեր ժողովրդի՝ պատմութիւն մաքառումի եւ վերածննդի: Այսօր, հակառակ բոլոր դժուարութիւնների, մեր ժողովուրդը ամրապնդում է իր անկախ պետականութիւնը, կերտում իր ազատ նոր կեանքը եւ ազգային վերազարթօնքի յոյսերով, լաւատեսութեամբ ու վստահութեամբ նայում գալիքին: Փառք Քեզ,

բիւր փառք Քեզ, Տէ՛ր, «Քո սպառազինութեամբ պաշտպանեցիր մեզ» (Սաղմ. Ե. 13): Քո յոյսով, Տէ՛ր, մեր ժողովուրդը պայծառացաւ ու զօրացաւ: Քո լոյսով փայլեց մեր հոգու հանճարը, Քո զօրութեամբ ծնունդ առան մեր յաղթանակները: Ստեղծեցինք, երբ մեր ստեղծածը աւերեցին, ապրեցինք, երբ ուզեցին կորստեան մատնել մեզ: Դու, Տէ՛ր Աստուած մեր, կամեցար, որ ապրի ու բարձրանայ եղեռնագործ ծրագրով մահուան դատապարտուած մեր ժողովուրդը եւ մարդկութեան խղճի, միջազգային իրաւունքի առջեւ բարձրացնի ու պաշտպանի իր արդար դատը՝ ընդդէմ պիղատոսեան անտարբերութեան եւ Թուրքիոյ ոճրագործ ժխտողականութեան: Արդարութեան համար՝ մինչեւ մեր դատի յաղթանակ, միասնաբար՝ եկեղեցի, ազգ եւ Պետութիւն, աննահանջ պիտի շարունակենք մեր պայքարը:

Արդարութիւն է պահանջում մեր անմեղ զոհերի արիւնը, մեր ժողովրդի կրած տառապանքը, արդարութիւն են պահանջում մեր աւերակուած սրբութիւնները, մեր ժողովրդի ոտնահարուած իրաւունքները, նաեւ կեղծուող եւ խեղաթիւրուող պատմութիւնը մեր ժողովրդի: Ցեղասպանութիւն վերապրած մեր ժողովուրդը հաւատացել եւ հաւատում է, որ տասնեակ երկրների, պետական, հասարակական կազմակերպութիւնների ու անհատների կողքին, ովքեր ճանաչել են Հայոց ցեղասպանութիւնը, պիտի կանգնեն նորերը՝ համոզումով, որ արդարութեան հաստատումը պայմանն ու երաշխիքն է թշնամանքից եւ բռնութիւնից զերծ խաղաղ աշխարհի: Մէկ եւ կէս միլիոն մեր նահատակների յիշատակի առջեւ Մենք երախտագիտութեան Մեր խօսքն ենք վերստին ուղղում այն պետութիւններին, կազմակերպութիւններին եւ անձանց, ովքեր ճանաչել եւ դատապարտել են Հայոց ցեղասպանութիւնը: Երախտագիտութիւն ենք յայտնում մեր ժողովրդի զաւակներին եղբայրաբար ընդունած երկրներին ու նրանց բարեսէր ժողովուրդներին: Մարդկութեան պատմութեան լուսաւոր էջեր են արդարութեան եւ մարդասիրութեան այսօրինակ դրսեւորումները, որ սերունդներից միշտ պիտի յիշուեն եւ միշտ գնահատուեն ու նպաստեն աշխարհի խաղաղ, անվտանգ, համերաշխ կեանքին: Հայոց Հայրապետիս համար հոգեւոր մխիթարութիւն է ի լուր մեր ժողովրդեան ծանուցել, որ 2015 թ. ապրիլի 23-ին մեր Սուրբ Եկեղեցին՝ յընթացս սրբազան պատարագի, յատուկ արարողակարգով սրբերի շարքում է դասելու «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց» նահատակութեան պսակն ընդունած իր զաւակներին՝ Ցեղասպանութեան նահատակ սրբերի յիշատակի օր հռչակելով ապրիլի 24-ը: Շնորհընկալ ժողովո՛ւրդ հայոց, ազգ նահա-

տակ, ազգ յարուցեալ. խրոխտ ապրի՛ր, վստահ քայլի՛ր, հայեացքդ տապանակիր Արարատին աներկմիտ սրտով մեծ պահիր յոյսդ: Քեզ է ուղղուած մեր Տիրոջ խրախոյսն ու պատգամը. «Թէեւ քիչ զօրութիւն ունես, բայց պահեցիր իմ խօսքերը եւ չուրացար իմ անունը... պահիր,ինչ որ ունես, որպէսզի ոչ ոք չառնի քո պսակը» (Յայտ. Գ. 8-11): Արդ, պահպանենք մեր ընթացքը Աստուծոյ առաջ արդար ու ճշմարիտ, հաւատքի հաստատուն ուղիներում, որ ծագող այգաբացի պէս ցրում է խաւարը եւ պարզում յոյսի հորիզոնները: Աստուծոյ հետ է մեր ճանապարհը, եւ հաւատքի կեանքը՝ մեր յաղթութիւնը: 100-րդ տարելիցը արդիւնաւորենք՝ մեր ժողովրդի մէկդարեայ մաքառումի եւ վերածննդի ուղին արժեւորելով, որպէսզի մեր զաւակները, ճանաչելով իրենց պապերի եւ հայրերի՝ ապրելու եւ ստեղծելու հերոսական կամքը, յանուն ազգի եւ Հայրենիքի ստանձնած յանձնառութիւնները, կերտեն նոր պայծառ օրը հայրենի մեր երկրի ու աշխարհասփիւռ ժողովրդի: Մեր նահատակների յիշատակի ոգեկոչումը դարձնենք ուժ եւ զօրութիւն հոգեւոր, ազգային, հայրենական մեր կեանքին եւ Աստուծոյ ու մարդկանց առաջ արդար ընթացքով լուսաւորենք մեր ճանապարհը դէպի մեր իրաւունքների, մեր նուիրական իղձերի իրականացման հանգրուան: Քրիստոսակառոյց նուիրական հոգեւոր կեանքում ազգիս, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ աղօթում ենք առ Աստուած՝ հայցելով խաղաղութիւն, ապահովութիւն եւ բարօրութիւն մեր Հայրենիքին, սիրեցեալ մեր ժողովրդին ի սփիւռս աշխարհի եւ անմայրամուտ լոյս ու հանգստութիւն՝ Ցեղասպանութեան մեր անմեղ նահատակների հոգիներին: Թող մարդկութեան կեանքում թագաւորեն սէրն ու եղբայրութիւնը, արդարութիւնն ու ճշմարտութիւնը, եւ արդարների ճանապարհները որպէս լոյս ծագեն, առաջնորդեն ու լուսաւորեն, մինչեւ լուսաւորուի նոր օրը խաղաղ ու երջանիկ աշխարհի:

Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 28-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2014 եւ ի թուին հայոց ՌՆԿԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 886



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏՅԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ 350-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ

(28 ՀՈՒԼԻՍԻ, 2016 Թ.)[1]

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՑ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ, ՉՕՐԱՎԱՐԱՑ ԵՒ ՉՕՐԱՑ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Լուսովդ Քով Քրիստոս,
ամենեքեան լուսաւորեցաք» (Ժամագիրք):

Սիրեցեա՛լ ժողովուրդ հայոց ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս: Այս տարի լրանում է Աստուածաշունչ մատեանի հայերէն տպագրու-

[1] «Էջմիածին», 2016, ԺԲ, էջ 9:

թեան 350-րդ տարեդարձը՝ հայոց կեանքում Քրիստոսի լոյսը առատացնելու մեծաչնորհ, աստուածօրհնեալ գործի պանծալի յոբելեանը: Սուրբ Գիրքը հայախօս դարձաւ 5-րդ դարում, երբ Սուրբ Սահակ Հայրապետը, Աստուծոյ խօսքը հաւատացեալ մեր ժողովրդին հասկանալի դարձնելու անհրաժեշտութեամբ, Սուրբ Մեսրոպ Մաշտոց երանաչնորհ Վարդապետին յանձնարարեց ձեռնամուխ լինել հայոց գրերի ստեղծման բազմերախտ գործին: Գրերի գիւտից յետոյ դարեր շարունակ մեր վանքերում լուսամիտ գրիչները հազար-հազարներով ընդօրինակեցին Աստուածաշունչ մատեանը եւ նրա առանձին գրքերը: Աստուծոյ խօսքը պարունակող, Քրիստոսի մասին պատմող մագաղաթը մեր ժողովրդի համար դարձաւ ամենաթանկ հարստութիւնը բոլոր գանձերի մէջ: Աստուածաշնչի թարգմանութեամբ ու տարածմամբ լուսաւորուեց աշխարհը հայոց, պայծառացաւ Քրիստոսի լոյսով, հաւատքն ամրացաւ, սէրը բազմացաւ, յոյսն առատացաւ, չնորհը լիացաւ՝ բխեցնելով մեր ժողովրդի հոգու եւ մտքի յորդահոս արգասիքները: Տպագրութեան գիւտից յետոյ, երբ Եւրոպայում սկսեց տպագրուել մեծաքանակ գրականութիւն, դժուար էր հաւատալ, որ ասպատակութիւնների ենթարկուող, հալածանքների ու նեղութիւնների մէջ գտնուող մեր ժողովուրդը կարճ ժամանակ անց ծաղկեցնելու է նաեւ հայերէն տպագրութիւնը: Աստուծոյ օրհնութեամբ գրատպութեան գիւտից մի քանի տասնամեակ անց՝ 1512 թուականին, Յակոբ Մեղապարտի կողմից Վենետիկում լոյս ընծայուեց հայալեզու առաջին գիրքը՝ «Ուրբաթագիրքը»՝ սկիզբ դնելով հայ տպագրութեան փառաւոր աւանդներին: Գրքի, ուսման ու գիտութեան հանդէպ անսահման սէր ունեցող մեր ժողովուրդը ոչինչ չխնայեց, որպէսզի տպագրութեան ճանապարհով լուսաւորութիւնն առաւել տարածուի մեր երկրում: Յատկապէս անհրաժեշտութիւն էր Սուրբ Գրքի տպագրութիւնը, որի նպատակով Յակոբ Դ. Ջուղայեցի կաթողիկոսի կողմից Եւրոպա առաքուեց Սուրբ Էջմիածնի միաբան Ոսկան Երեւանցի վարդապետը: Լուսամիտ եկեղեցականը նիւթական շատ ծանր պայմանների ու զրկանքների մէջ բազմաթիւ դժուարութիւններ ու խոչընդոտներ յաղթահարեց, օգնութիւն գտնելու ակնկալիքով այցելեց եւրոպական տարբեր քաղաքներ ու հայաշատ բնակավայրեր եւ անխոնջ ջանքերով 1666 թուականին Ամստերդամում հրատարակեց հայերէն առաջին Աստուածաշունչը: Սուրբ Գրքի տպագրութիւնը նշանակալի հանգրուան եղաւ մեր ժողովրդի ու Եկեղեցու պատմութեան մէջ: Յաջորդող տասնամեակներին եւ յատկապէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում տպարանի հաստատումից

յետոյ բազմապատկուեց Հայալեզու գրականութիւնը, հարստացաւ հոգեւոր եւ գիտական արժէքաւոր բազմաթիւ աշխատութիւններով: Սուրբ Գրքի տպագրութեան յոբելեանն այսօր առիթ է հաւատաւոր հայորդեաց համար՝ երախտագիտութեամբ խոնարհուելու հայ գրի բոլոր նուիրեալ մշակների պայծառ յիշատակի, նրանց անմահ գործի առջեւ: Մեր յորդորն ենք բերում թեմական եւ համայնքային մեր կառոյցներին, կրթական ու գիտական հաստատութիւններին՝ պատշաճ միջոցառումներով ու տօնախմբութիւններով նշանաւորելու Աստուածաշունչ մատեանի տպագրութեան արժանայիշատակ յոբելեանը: Մաղթում ենք, որ մեր պատմութեան այս կարեւոր իրադարձութեան յիշատակութիւնն առաւել զօրացնի աշխարհասփիւռ Մեր զաւակներին՝ ամուր պահելու նախնեաց հաւատքը եւ հաւատարմութիւնը ազգային աւանդներին, որպէսզի Քրիստոսի լոյսը չարունակի սիրով, նուիրումով ու երկնային չնորհներով լցնել մեր կեանքը: Մեր աղօթքն է, որ Քրիստոս մեր Տէրը իր օրհնութեան ու չնորհաց լոյսը հանապազ սփռի հայոց աշխարհում, հանուր հայ կեանքում եւ ամենախնամ իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի հայրենի մեր երկիրը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ աշխարհասփիւռ ազգս հայոց այսօր եւ յաւիտեան. ամէն:

«Ամենայն գիրք աստուածաչունչք եւ օգտակարք ի վարդապետութիւն են՝ եւ ի յանդիմանութիւն, եւ յուղղութիւն, եւ ի խրատ արդարութեան. զի կատարեալ իցէ մարդն Աստուծոյ, յամենայն գործս բարութեան հաստատեալ» (Բ. Տիմ. Գ. 16-17):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 28 Յուլիսի
յամի Տեառն 2016 եւ ի թուին հայոց ՌՆԿԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 963

ԿՈՆԴԱԿՆԵՐ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(28 ՀՈՒՆՎԱՐԻ, 2017 Թ.)[1]

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ, ՉՕՐԱՎԱՐԱՑ ԵՒ ՉՕՐԱՑ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Տէր կօրութիւն ժողովրդեան իւրոյ տացէ եւ օրհնեացէ զժողովուրդ իւր ի խաղաղութիւն»
(Սղմ. 28.11):

---

[1] «Էջմիածին», 2017, Ա, էջ 7:

Գոհունքիւն եւ փառք ենք վերառաքում առ Բարերարն Աստուած, որ խաղաղութեան մէջ ենք տօնում Հայոց բանակի 25-րդ տարեդարձը: Հայրապետական այսու Կոնդակով օրհնութեան եւ չնորհաւորանքի Մեր խօսքն ենք ուղղում մեր յաղթական բանակի քաջասիրտ սպաներին ու զինուորներին եւ համայն մեր ժողովրդին:

Անկախ մեր պետականութեան փառապանծ զաւակն է Հայոց բանակը, որը կազմաւորուեց մեր հայրենիքի համար ծանր ու դժնդակ օրերին: Մեր ժողովուրդը դիմակայում էր հարձակումներին Հայաստանի սահմաններում եւ Արցախում պաշտպանում ազատ ապրելու իր իրաւունքը: Պատերազմի, չրջափակման, տնտեսական փլուզումների, գաղթականութեան, աւերածութիւնների, կուտակուած ահռելի դժուարութիւնների պայմաններում մեր ժողովուրդը չդադարեց հաւատալ, որ, ինչպէս սաղմոսերգուն է ասում. «Տէրն իր ժողովրդին զօրութիւն պիտի տայ եւ իր ժողովրդին պիտի օրհնի խաղաղութիւն պարգեւելով»: Խաղաղ ու ապահով ապրելու ձգտումով ազգիս զաւակները, ապաւինած Աստծուն, ելան պաշտպանելու մեր նուիրական հայրենիքը եւ մեր հայրերի ստեղծած ժառանգութիւնը: Հայրենասէր սրտերի բոցից մեր բանակը ծնունդ առաւ ինչպէս օր առ օր մեծացող Սասունցի Դաւիթ, ամրապնդուեց ու զօրացաւ մարտերում՝ իր յաղթանակներով զօրացնելով նաեւ խաղաղ կեանքի յոյսն ու լաւատեսութիւնը մեր ժողովրդի:

Այսօր հպարտութեամբ ենք անդրադառնում Հայոց բանակի 25-ամեայ պանծալի ուղուն, յաղթանակներին ու ձեռքբերումներին: Տիրոջ օգնականութեամբ ամրացուել են մեր սահմանները, ազատագրուած է Արցախը, որը, հակառակ թշնամու ամենօրեայ սադրանքների, չէնանում է ու բարգաւաճում: Մեր բանակը շարունակում է երաշխաւորել մեր հայրենիքի ապահովութիւնը եւ առաւել լուսաւոր ապագան՝ փառքով պսակելով իր ծառայութիւնը հայրենիքին: Նախորդ տարի՝ ապրիլեան պատերազմի օրերին, ականատես դարձանք քաջարի ոգուն եւ սխրանքներին մեր հերոս զաւակների, երբ մեր բանակը խափանեց հակառակորդի դաւադիր ծրագրերը եւ վերստին ապացուցեց, որ մշտապէս պատրաստ է պաշտպանելու մեր հայրենիքը, արցախահայութեան ազատ ապրելու իրաւունքը:

Աղօթքով ենք յիշում Մեր զաւակներին, ովքեր նահատակութեան պսակն ընդունեցին՝ յանուն մեր ժողովրդի խաղաղ կեանքի ու լուսաւոր ապագայի: Նրանց անմահ անունները միշտ պիտի ապրեն մեր

ժողովրդի հոգում՝ մեր պատմութեան խնկելի հերոսների շարքում, ովքեր իրենց անկեղծ հայրենասիրութիւնն ու ազգասիրութիւնը վկայել են իրենց կեանքով ու գործերով:

Այս յիշարժան օրը հայրական Մեր ջերմ սէրը, գնահատանքն ու օրհնութիւնն ենք բերում մեր փառապանծ բանակի զօրականներին, ովքեր մշտարթուն ծառայութեամբ ապահովում են անդորրութիւնը մեր երկրի: Մեր գնահատանքն ու օրհնութիւնն ենք բերում բանակի կայացման գործում իրենց աւանդն ունեցող բոլոր երախտաւորներին, այսօր բանակի զօրացմանը աջակցողներին եւ բանակում ծառայող հոգեւոր սպասաւորներին, ովքեր իրենց արժանաւոր նպաստն են բերում մեր զաւակների հաւատաւոր, պայծառ ու արի նկարագրի կերտմանը:

Հայոց բանակի սիրելի՛ փառապանծ զօրաւարներ ու զինուորներ, ղուք քաջ գիտէք, որ բանակն ուժեղ է ոչ միայն զէնք ու զինատեսակներով, այլ նաեւ ոգով ու պատրաստուածութեամբ: Ձեր սէրը հայրենիքի հանդէպ, ծառայութեան մէջ ձեր նախանձախնդրութիւնը, միմեանց հանդէպ ազնիւ վերաբերմունքն ու հոգածութիւնը, ձեր հոգին զօրացնող հաւատքն ու յոյսը նոյնպէս ձեր զէնքերն են: Մաղթում ենք, որ մեր բանակը միշտ լինի հայրենասիրութեան դարբնոց, աննկուն պաշտպանը մեր ժողովրդի արդար իրաւունքների ու ամեն առաքինութեան օրինակ, եւ մեր կեանքում միշտ ամուր լինեն յոյսն ու քաջալերութիւնը եւ հաւատքը աներկբայ, որ «Տէրն իր ժողովրդին զօրութիւն պիտի տայ եւ իր ժողովրդին պիտի օրհնի խաղաղութիւն պարգեւելով: Աղօթք ենք վերառաքում, որ Աստուծոյ Սուրբ Աջը հովանի եւ պահապան լինի ձեզ եւ պարգեւի ապահով ծառայութիւն հայրենեաց խաղաղ եղերքներում: Թող ձեր հաւատքը՝ որպէս վահան ամրութեան, ձեզ պաշտպանի փորձութիւններից ու նեղութիւններից եւ Աստուծոյ շնորհները առատացնի ձեր կեանքում:

Մեր յորդորն ու պատգամն ենք յղում հայրենիքում եւ սփիւռքում գործող ազգային հաստատութիւններին, եկեղեցական ու թեմական կառոյցներին եւ Քրիստոսասէր մեր ողջ ժողովրդին՝ աննուազ հետեւողականութեամբ զօրակցելու Հայոց բանակին եւ քաջալերելու մեր զօրաց ու զօրականաց իրենց հայրենանուէր ծառայութեան մէջ, որպէսզի շարունակենք հպարտանալ հայոց պանծալի բանակով եւ հիւսենք փառքը նրա յաղթանակների ու սխրանքների:

Թող Բարձրեալն Աստուած առատապէս օրհնի մեր երկիրը, խաղաղութիւն ու զօրութիւն պարգեւի համայն մեր ժողովրդին՝ կառուցելու

չէն ու բարգաւաճ մեր հայրենիքը եւ իրագործելու ազգային մեր իղձերը:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 28-ն Յունուարի
յամի Տեառն 2017 եւ ի թուին հայոց ՌՆԿԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 999

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ, ՇՈՒՇԻԻ ԱՂԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(7 ՄԱՅԻՍԻ, 2017 Թ.)[1]

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՂԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ, ՉՕՐԱՎԱՐԱՑ ԵՒ ՉՕՐԱՑ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Թող պարծենան Քեզանով Քո անունը սիրողները,
քանզի Դու պիտի օրհնես արդարին.
Տէր, Քո սպառապինութեամբ պաշտպանեցիր մեզ»
(Սաղ. Ե 12-13):

---

[1] «Էջմիածին», 2017, Ե, էջ 5:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սաղմոսերգուի այս փառաբանութեամբ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ Յաղթանակի եւ խաղաղութեան օրուայ, Շուշիի ազատագրութեան եւ Արցախի Հանրապետութեան Պաշտպանութեան բանակի 25-րդ տարեդարձի առիթով: Ողջոյն ենք յղում Արցախի պետական այրերին, Պաշտպանութեան բանակի հրամանատարներին ու մարտիկներին եւ Արցախի հերոսական մեր ժողովրդին:

Շուշիի ազատագրութեան լուսաւոր օրը մեր ժողովուրդը ապրեց լիառատ ուրախութիւն՝ ամրանալով հաւատքի, հայրենեաց սիրոյ եւ անվարան կամքի մէջ՝ յաղթական աւարտի հասցնելու Արցախի ազատագրական պայքարը: Ազատութիւնը, արդարութիւնը, խաղաղութիւնը նուիրական արժէքներ են քրիստոնեական կեանքում, որոնք վառ մնացին մեր ժողովրդի հոգում՝ հակառակ դարերով ապրած փորձութիւնների եւ մաքառումով գրուած մեր պատմութեան: Արցախեան ազատամարտում նոյնպէս մեր ժողովուրդը յանձն առաւ բազում զոհողութիւններ ու դիմակայեց բազում նեղութիւնների՝ հաւատով, որ Աստուած պիտի օրհնի իր արդար պայքարը: Մարտերի մէջ կազմաւորուեց, ամրացաւ ու զօրացաւ Արցախի Պաշտպանութեան բանակը, որն այսօր երաշխաւորն է Արցախի պետականութեան եւ ժողովրդի խաղաղ կեանքի:

Պայքարը Արցախի ազատութեան համար, որն արեւելեան մի փոքր տարածքն է պատմական մեր Հայրենիքի, զօրացրեց սրտերը, համախմբեց ուժերը աչխարհասփիւռ մեր ժողովրդի զաւակների, ովքեր ոչինչ չխնայեցին Արցախի համար: Անկախ պետականութեան հաստատումից ի վեր ականատես ենք, թէ ինչպէս Արցախի ստեղծարար ու արի մեր ժողովուրդը, ունենալով աջակցութիւնը Հայաստանի եւ Սփիւռքի, կառուցում է իր ազատ կեանքը եւ չէնացնում իր երկիրը: Կառուցապատուում եւ չէնանում է նաեւ Շուշին՝ պատմական ծաղկուն քաղաքն Արցախի: Բարձրանում են եկեղեցիները, դարաւոր վանքերն ու սրբատեղիները: Մեր ժողովուրդը նորոգում է քրիստոնեական իր կեանքը եւ, հաւատով, որ Տէրն օրհնում է արդարին, ջանքեր է գործադրում հայրենի երկրի բարօրութեան եւ իր խաղաղ կեանքի ապահովման համար: Ամեն օր մեր զաւակները հետ են մղում սահմանային ոտնձգութիւններն ու սադրանքները եւ անառիկ պահում հայրենիքի պաշտպանութեան դիրքերը: Այս պանծալի օրը, երբ անդրադառնում ենք Պաշտպանութեան բանակի յաղթանակներին, հերոս մեր զաւակների սխրանքներին, Արցախի ազատ ու խաղաղ կեանքի ձեռքբերում-

ներին, սաղմոսերգուի հետ փառաբանում ենք Աստծուն. «Տէ՛ր, Քո սպառազինութեամբ պաշտպանեցիր մեզ»:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Տիրոջ պարգեւած հոգեւոր սպառազինութիւնը մեր հոգիները զօրացնող հաւատքն է, մեզ չնորհուած Սուրբ Աւետարանը, մեր սէրը միմեանց հանդէպ, մեր նուիրումը մեր հայրենիքին ու ժողովրդին, մեր հոգու ազնուութիւնը, ճգտումը խաղաղութեան ու արդարութեան, որոնք առաջնորդում են մեզ արժանաւոր կեանքի ու գործերի: Այդ հոգեւոր ներուժով եւ արժէքներով են կերտուել մեր յաղթանակներն ու ձեռքբերումները, որոնք պարտաւոր ենք պահպանել ու բազմապատկել:

Մայիսի 9-ի այս տօնական օրը յիշենք հայազգի, նաեւ Արցախի զաւակ փառապանծ զօրավարներին ու զինուորներին, ովքեր Երկրորդ աշխարհամարտում նպաստ բերեցին յաղթանակի կերտման եւ խաղաղութեան հաստատման գործին: Աղօթքով յիշենք Արցախի ազատագրութեան եւ խաղաղ կեանքի համար զոհուած մեր ժողովրդի քաջարի զաւակներին, որոնց անունները պիտի ապրեն սերնդէսերունդ:

Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Արցախի սիրելի մեր ժողովրդին, բարեխնամ իշխանութիւններին՝ նախագահ Բակո Սահակեանի գլխաւորութեամբ, Արցախի թեմի բարեջան առաջնորդ գերաչնորհ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսեանին եւ ուխտապահ հոգեւոր դասին ու բանակում ծառայող մեր Եկեղեցու հոգեւոր սպասաւորներին՝ առաջնորդութեամբ գերաչնորհ Տ. Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանի: Հայրական սիրով Մեր գնահատանքն ենք բերում Արցախի Պաշտպանութեան նախարար եւ բանակի գլխաւոր հրամանատար գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականեանին, բոլոր զօրահրամանատարներին ու զինուորներին, ովքեր մշտարթուն ծառայութեամբ պահպանում են մեր ժողովրդի խաղաղ կեանքը: Յորդոր ենք բերում, որ գոտեպնդուէք ամուր հաւատքով, արիութեամբ, լաւատեսութեամբ: Ունենք գլխաւորը՝ հայրենի անկախ պետականութիւնը եւ այն, ինչը պատմութիւնը յաճախ մերժել է մեզ՝ խաղաղութիւն, կեանքի ապահովութիւն ու խնդութիւն, մեր հողում պիտի բարի արդիւնքներ տան՝ յանուն մեր զաւակների եւ մեր ժողովրդի լուսաւոր ապագայի: Արդ, ապրենք ու գործենք մեր հայրենիքը չէնացնելու, մեր բանակը զօրացնելու, ազգային զարթօնքի մեր իղձերը մարմնաւորելու ջանք ու եռանդով, յաղթանակի առաջնորդելով նաեւ Արցախի Հանրապետութեան ճանաչումը:

Այս յիշարժան օրը, սիրելինե՛ր, Արցախի Պաշտպանութեան բանակին ենք չնորհում խաչվառ՝ պատկերով Սուրբ Գրիգորիս Պարթեւ արքեպիսկոպոսի: Նա չնորհաչատ ու քաջահոգի թոռն էր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի եւ չատ երիտասարդ հասակում առաջնորդութեան կոչուեց Արցախում ու յարակից չրջաններում եւ իր առաքելութեան մէջ նահատակուեց անհաւատներից: Աչակերտները նրան հողին յանձնեցին Արցախում, եւ նրա գերեզմանին կառուցուեց Ամարասի վանքը, որը մեր ժողովրդի համար նուիրական սրբավայր է եւ ուխտատեղի:

Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Քրիստոսի նահատակ վկայ Սուրբ Գրիգորիսի բարեխօսութեամբ Տէրը խաղաղութիւն պարգեւի Արցախ աչխարհին, ոգով արի, բազկով անյաղթ պահպանի Արցախի Պաշտպանութեան բանակը եւ բոլոր զօրահրամանատարներին ու զինուորներին անփորձանք պահի իրենց պանծալի ծառայութեան մէջ: Աղօթք ենք բարձրացնում, որ Աստուած իր Սուրբ Աչի հովանու ներքոյ խաղաղ պահի համայն մեր ժողովրդին ի սփիւռս աչխարհի եւ պահպանի ամուր հաւատքով, սիրով ու միասնական՝ կերտելու բարօրութիւնը հայրենի երկրի, իրագործելու ազգային իղձերը եւ միչտ օրհներգելու.«Տէ՛ր, Քո սպառազինութեամբ պաչտպանեցիր մեզ. Թող պարծենան Քեզանով Քո անունը սիրողները, քանզի Դու պիտի օրհնես արդարին»:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 9-ն Մայիսի
յամի Տեառն 2017 եւ ի թուին հայոց ՌՆԿԶ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1006

ԿՈՆԴԱԿՆԵՐ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(8 ՀՈՒՆՎԱՐԻ, 2018 Թ.)[1]

ԳԱՐԵԳԻՆ Բ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲՆ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱՋԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՍՐԲՈՅ ԿԱԹՈՒՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՔՐԻՍՏՈՍԱՒԱՆԴ ՍԻՐՈՅ ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻԻՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈՅ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԵԱՆ, ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆՑ ՀԱՅՈՑ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԻՄԱՑ ԵՒ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼՍՈՑ, ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱՒԱԳԱՑ, ԹԵՄԱԿԱՆ ԵՐԵՍՓՈԽԱՆԱԿԱՆ ԺՈՂՈՎՈՅ, ԹԵՄԱԿԱՆ ԵՒ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴՈՅ ԵՒ ՊԱՇՏՕՆԷԻՑ ԵՒ ՍԻՐԵՑԵԱԼ ՀԱՄԱՅՆ ՀԱՒԱՏԱՑԵԱԼ ԺՈՂՈՎՐԴԵԱՆ ՀԱՅՈՑ

«Եւ այս է յաղթութիւնն՝ որ յաղթէ աշխարհի, հաւատքն մեր»
(Ա Յովհ. Ե 4):

Գոհութիւն եւ փառք ենք մատուցում Աստծուն, որ Հայաստանում եւ Արցախում վերականգնուած պետականութեամբ եւ ի սփիւռս

[1] «Էջմիածին», 2018, Ա, էջ11:

աշխարհի ազգային կեանքի ձեռքբերումներով է մեր ժողովուրդը դիմաւորում 100-ամեակը Հայաստանի առաջին հանրապետութեան եւ մայիսեան հերոսամարտերի: Նշանակալի այս իրադարձութիւններուն մէկդարեայ յոբելեանի առիթով Հայրապետական Մեր խօսքն ենք ուղղում սիրեցեալ մեր ժողովրդին՝ բարձրաձայնելով առաքելաւանդ պատգամը. «Եւ այս է յաղթութիւնը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հաւատքը»:

Մէկ դար առաջ մեր ժողովուրդը յայտնուել էր կեանքի եւ մահուան սահմանագծին: Օսմանեան Թուրքիան՝ օգտուելով Առաջին համաշխարհային պատերազմի խառնաշփոթ իրավիճակից, իրագործում էր ցեղասպանութեան իր հայաջինջ ծրագիրը: Արեւմտեան Հայաստանը եւ հայկական բնակավայրերը Թուրքիայում աւերակուել ու հայաթափուել էին, թուրքական զօրքերը ներխուժել էին նաեւ Արեւելեան Հայաստան՝ սպառնալով մեր ժողովրդի գոյութեանը:

Այդ օրհասական պահին յոյսն առ Աստուած՝ միահամուռ կամքով մեր ժողովուրդը Սարդարապատում, Ապարանում եւ Ղարաքիլիսայում ճակատ կազմեց թշնամու դէմ: Համախմբուելու խրախոյս ու քաջալերութիւն դարձաւ Գեւորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի կոչը՝ ժողովրդի սրտում առաջ բերելով յաղթանակելու ոգի եւ փակելով խուճապի ու նահանջի ուղին: Ետեւում մեր հայրենիքի փոքրիկ մի մասունքն էր, ետեւում Քրիստոսահաստատ Սուրբ Էջմիածինն էր՝ մեր հաւատքի օրրանն ու ինքնութեան պատուարը: Հայոց Հայրապետը մերժեց հեռանալ Սուրբ Էջմիածնից եւ քաջաշունչ պատգամով մարտի կոչեց ժողովրդին՝ ասելով. «Ես միշտ էլ հաւատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնութիւնները: Ես համոզուած եմ նաեւ, որ ազգն իմ հայոց անարգ թշնամուն ղեռ չի ասել իր վերջին խօսքը: Եւ խօսքն այդ պիտի լինի յաղթական»:

Մէկ ամբողջութիւն, մէկ կամք ու հոգի դարձած մեր ժողովուրդը ոտքի կանգնեց փրկելու հայրենիքը, իր կեանքը, իր սրբութիւնները, պաշտպանելու հայրենի հողում ազատ ապրելու իր իրաւունքը: Սրբոց Վարդանանց եւ Ղեւոնդեանց օրինակով Աւարայրի ոգին բոցավառեց մայիսեան մարտերում: Յաղթանակը ձեռք բերուեց արիութեան ու հերոսութեան չնորհիւ հայկական փոքրաթիւ զօրամիաւորումների ու զօրահրամանատարների եւ նրանց չարքերը լրացրած հոգեւորականների ու աշխարհազօրայինների: Թուրքական զօրքերի առաջխաղացումը կանգնեցուեց եւ ետ մղուեց: Աւերումից ու կոտորածից փրկուեց Արեւելեան Հայաստանը, եւ հինգ եւ կէս դարերի երկարա-

տեւ դադարից յետոյ վերականգնուեց հայկական պետականութիւնը: Եղեռնահար մեր ժողովուրդը վկայեց վեր յառնելու իր զօրութիւնը, իր հոգու կենսունակութիւնը եւ ուժը հաւատքի՝ նեղութիւնների, ցաւ ու տառապանքի մէջ յաղթանակ կերտելով: Առ Աստուած հաւատքի, հայրենասիրութեան ու նուիրումի հերոսական ոգին միաւորեց ու պաշտպանեց մեր ժողովրդին, որ գերագոյն ճիգով հայոց պետականութեան հովանու ներքոյ հայրենիքում ու սփիւռքում բարձրացրեց իր կեանքը եւ քայլեց վերելքի ուղիով:

Այսօր, սիրելի՛ ժողովուրդ հայոց, 100-ամեայ յոբելեանը հրաւէր է մեզ՝ նուիրուած մնալու ազգային գարթօնքի մեր իղձերին, հրաւէր՝ մեր հայրենի պետականութիւնը ամուր պահելու եւ հայրենիքով համախմբուած մնալու: Նշանակալի այս յոբելեանը նաեւ մի նոր հանգրուան է՝ հաւատաւոր ոգով ու նուիրեալ գործերով չէնացնելու, զօրացնելու մեր երկիրն ու ազգային կեանքը, շարունակելու հետեւողական ջանքերը յանուն Արցախի հիմնախնդրի կարգաւորման, մեր բանակի հզօրացման, որպէսզի խաղաղութիւնը անվրդով լինի մեր հայրենեաց սահմաններում: 100-ամեայ յոբելեանը պատգամն է բերում համազգային միասնութեան, հայրենիք-սփիւռք կապերի արդիւնաւորման, մեր եկեղեցու անդաստանում եւս միասնականութեան վերահաստատման:

Սիրեցեա՛լ հաւատաւոր ժողովուրդ Մեր, իւրաքանչիւրս մեր ծառայութեան մէջ, մեր կեանքի ընթացքներում միշտ առաջնորդուելով քրիստոնէական մեր հաւատքին, ազգին ու հայրենիքին զինուորագրութեան գիտակցութեամբ՝ պիտի կարողանանք զերծ մնալ կորուստներից եւ քայլենք յաղթանակից յաղթանակ: Պետականութիւնը ազգի կազմակերպման հիմքն է, առաջընթացի ուղի, իր արժէքներով ապրելու, իր հոգեւոր ներուժը դրսեւորելու յենարան, իր ճգտումները իրագործելու եւ իրաւունքները պաշտպանելու պատուար ու ազգի յարատեւութեան գրաւական: Զմոռանանք մեր կրած զոհողութիւններն ու տառապանքները եւ, միմեանց աջակից,կառուցենք բարօրութեամբ եւ խնդութեամբ լեցուն վաղուայ մեր օրը: Ձիչենք մեր Եկեղեցուն ու հայրենիքին իրենց կեանքը նուիրած մեր հայրերին եւ հաւատքի ու հայրենեաց սիրոյ մէջ ինքներս մեզ գերազանցենք, որպէսզի այսօր նոյնպէս մեր ազգային եւ հայրենական կեանքի առջեւ ծառացած դժուարութիւններին ու խնդիրներին տրուող մեր վճիռները եւ մեր երկրի խաղաղութեանը սպառնացող վտանգներին տրուող մեր պատասխանները լինեն յաղթական: Անվարան մեր հաւատքն ու հայրենեաց սէրը թող մեզ առաջնորդեն իրականութիւն դարձնելու Արարատի փեշերին

միասնական մեր հայրենիքի եւ մեր Սուրբ Եկեղեցու ու ազգային զարթօնքի տեսիլքները: «Եւ այս է յաղթութիւնը, որ յաղթում է..., մեր հաւատքը»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ համայն հայութեան նուիրական սրբօրրանից, Հայրապետական Մեր պատգամն ենք բերում սիրեցեալ մեր ժողովրդին, մեր Եկեղեցու թեմական, համայնքային մարմիններին, ազգային, գիտական, կրթական, մշակութային կառոյցներին՝ զանազան միջոցառումներով տօնախմբելու յոբելեանական տարեդարձը՝ դարձնելով հայրենասիրութեան ոգու, քաղաքացիական գիտակցութեան ու պարտքի արթնութեան, ազգի ու Եկեղեցու միասնականութեան ուժ ու զօրութիւն, նորոգութիւն հաւատքի եւ քաջալերութիւն հայրենաշէն ու ազգաշէն գործերի:

Աղօթում ենք, որ Քրիստոս մեր Տէրը պահպանի մեր ժողովրդին մաքուր հաւատքով եւ օրհնի ազգիս ջանքերը ի սէր մեր նուիրական հայրենիքի զօրացման, մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեան եւ մեր բարօր, լուսաւոր ու երջանիկ գալիքի: Թող Բարձրեալի օրհնութեան եւ չնորհների ներքոյ մեր երկիրը եւ ժողովուրդը, աշխարհը համայն ապրեն խաղաղութեան մէջ՝ այսօր եւ միշտ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս յ8-ն Յունուարի,
յամի Տեառն 2018 եւ ի թուին հայոց ՌՆԿԷ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1024

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ՏԻՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՐՏԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 80 – ԱՄՅԱԿԻ ԵՒ ՈՐՊԵՍ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵ-ՄԻ ԱՌԱՋՆՈՐԴԻ ՊԱՇՏՕՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ 50 – ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ. ԲՈՒԽԱՐԵՍՏ, ՌՈՒՄԻՆԻԱ

(22 ՓԵՏՐՎԱՐԻ, 2010 Թ.)[1]

Ձեր ծննդեան 80-րդ եւ Ռումինիայի եւ Բուլղարիայի Հայոց թեմերում որպէս առաջնորդ պաշտօնավարութեան 50-րդ տարեդարձերի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէն յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ շնորհաւորանքները:

Սիրելի՛ Սրբազան,

Հոգեւոր կրթութիւն ստանալով Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանում, ապա Մայր Աթոռիս Հոգեւոր ճեմարանում Բարձրեալ Տիրոջը ծառայելու սրբազան ուխտով Դուք արժանացաք կուսակրօն քահանայութեան սուրբ օծման եւ կոչուեցիք Աստուծոյ խօսքը մեր ժողովրդի զաւակներին մատուցելու նուիրական առաքելութեան:

Հովուական եւ վարչական գործունէութիւնը սկսեցիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում եւ մեր թեմերում ստանձնած տարբեր յանձնառութիւններով, ապա երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութեամբ առաջնորդական առաքելութեան կոչուեցիք Ռումինիայի եւ Բուլղարիայի Հայոց թեմերում: Այսօր տիրախնամ թեմերում կէս դարեայ առաջնորդական ծառայութեան վաստակն է Ձեր ուսերին՝ լեցուն եկեղեցաշէն ու ազգօգուտ գործերով ու նախաձեռնութիւններով: Նախորդող չիսուն տարիների ընթացքին քաղաքական ու տնտեսական բազում վայրիվերումների մէջ Դուք իմաստութեամբ

[1] «Էջմիածին», 2010 Բ, էջ 3:

առաջնորդեցիք Ձեզ վստահեալ հօտը եւ անխոնջ սպասաւորութեամբ մեր ժողովրդի կեանքից ներս յաւելեցիք հաւատը, յոյսն ու սէրը, միշտ մնալով հաւատարիմ զաւակը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի: Մենք սիրով ենք յիշում Հովուապետական Մեր այցելութիւնները Ռումինիայի եւ Բուլղարիայի Հայոց թեմեր, երբ առիթ ենք ունեցել ականատես դառնալու Ձեր ծառայութեան արդիւնքներին, որ արժանացրել են Ձեզ Ձեր հոգեւոր խնամքին հանձնուած ռումինահայ եւ բուլղարահայ համայնքների սիրուն ու համակրանքին:

Սիրելի՛ Սրբազան,

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ ի սրտէ աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած՝ հայցելով Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնը Ձեզ: Թող Ամենակարող Տէրը քաջառողջութիւն եւ արեւշատութիւն չնորհի Ձեզ եւ միշտ օգնական ու աջակից լինի նուիրեալ եկեղեցականիդ, շարունակելու Ձեր արդիւնաւոր ծառայութիւնը ի շինութիւն եւ ի պայծառութիւն Ռումինիայի եւ Բուլղարիայի Հայոց թեմերի, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 22-ն Փետրուարի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1007



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԵՄԵՐՋՅԱՆԻ 90 – ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ. ՓԱՐԻԶ, ՖՐԱՆՍԻԱ

(3 ՄԱՐՏԻ, 2010 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ ջերմօրէն շնորհատրում ծննդեան 90-րդ տարեդարձի օրհնեալ առիթով: Մեծարգոյ պրն. Սեմերճեան, Ձեր կեանքի աստուածաշնորհ տարիները լի են ստեղծագործական հարուստ վաստակով: Ձեր արուեստի մէջ Դուք ներդաշնակօրէն միաձուլել էք ազգայինն ու համաշխարհայինը՝ արժանանալով գեղարուեստի տեսաբանների ու քննադատների բարձր գնահատանքին: Ձեր վրձնած բարձրարուեստ ստեղծագործութիւնները Ձեր անունը քաջածանօթ են դարձրել արուեստասէր հասարակայնութեանը ինչպէս Ֆրանսիայում, նոյնպէս եւ շատ երկրներում: Այսօր շնորհաշատ հայորդուդ գործերը իրենց իւրօրինակ եւ նրբաճաշակ մտածողութեամբ ցուցադրւում են բազմաթիւ հանրայայտ թանգարաններում ու անհատական հաւաքածուներում, ի շարս որոց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ հիացմունք պարգեւելով այցելուներին: Ձեր ստեղծած գեղանկարչական մեծ ժառանգութիւնը կրում է կնիքը Ձեր հայրենանուէր ու եկեղեցասէր հոգու: Հայոց Մեծ եղեռնին նուիրուած շարքով, որն այսօր ցուցադրւում է Երեւանի՝ Հայոց ցեղասպանութեան թանգարանում, Դուք ձօն էք հնչեցրել մեր անմեղ նահատակների սուրբ յիշատակին, նաեւ արուեստի ճանապարհով մարդկութեան ուշադրութիւնը հրաւիրելով մեր ժողովրդի նկատմամբ իրականացուած ոճիրի վրայ:

Գոհութիւն Աստուծոյ, որ մեր ժողովրդին պարգեւել է Ձեզ պէս տաղանդաւոր զաւակ, ով իր ողջ կեանքն ապրելով Հայրենիքից հեռու, միշտ մնացել է հարազատ զաւակը իր ժողովրդի եւ կրողը նրա հոգեւոր ու մշակութային դարաւոր արժէքների: Ծննդեան յոբելեանի առի-

[1] «Էջմիածին», 2010 Գ, էջ 3:

թով, սիրելի պրն. Սեմերճեան, բերելով Ձեզ Մեր բարձր գնահատանքը, ի խորոց սրտի աղօթքով մաղթում ենք Ձեզ քաջառողջ կեանքի երկար տարիներ:

Թող Բարձրեալ Տէրը պարգեւի Ձեզ նոր եռանդ ու ստեղծագործական աւիւն, որպեսզի չարունակեք Ձեր բոլորանուէր ծառայութիւնը արուեստին, մեր Հայրենիքին ու ժողովրդին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 3-ն Մարտի
յամի Տեառն 2010 ի թուին հայոց ՌՆԾՔ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1009



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ՀՈՎՆԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԵՐՏԵՐՅԱՆԻՆ ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ 30 – ՐԴ ԵՎ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՕԾՄԱՆ 20 – ՐԴ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ. ԲԸՐԲԵՆԿ, ԱՄՆ

(26 ՄԱՅԻՍԻ, 2010 Թ.)[1]

Սիրելի՛ Սրբազան,

Գոհունակութիւն է Հայրապետիս համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր օրհնութիւնն ու շնորհաւորանքները յղել Ձեզ քահանայական ձեռնադրութեան 30-րդ եւ եպիսկոպոսական օծման 20-րդ տարեդարձերի առիթով:

Ձեր ծնողաց հոգածու խնամքով կրթուելով ու դաստիարակուելով մեր ազգային ու հոգեւոր արժէքներով, Դուք երիտասարդ հասակից ընտրեցիք եկեղեցական ծառայութեան ասպարէզը՝ Ձեր կեանքն ընդմիշտ կապելով մեր Եկեղեցու եւ Սուրբ Էջմիածնի առաքելութեանը:

Բարձրեալի օրհնութեամբ արժանանալով քահանայութեան բարձր կոչման՝ Ձեր սպասաւորութիւնը սկսեցիք մեր ժողովրդի կեանքում՝ մարմնաւորելու հոգեւորականի Ձեր տեսիլքներն ու երազները: Երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետի օրհնութեամբ հովուական ծառայութեան կոչուեցիք Կանադահայոց նորակազմ Թեմում՝ ջանքեր բերելով հայորդեաց հոգեւոր կեանքի պայծառութեանն ու Կանադայում Թեմական կառոյցների զօրացման աշխատանքներին: Այնուհետեւ ստանձնելով Թեմակալ առաջնորդի պաշտօնը եւ արժանանալով Եպիսկոպոսութեան սուրբ օծման՝ Դուք աւելի քան մէկ տասնամեակ առաջնորդեցիք մեր Եկեղեցու առաքելութիւնը Կանադահայութեան կեանքում՝ արձանագրելով բազում յաջողութիւններ:

Սիրելի՛ Սրբազան, հոգեւոր ու վարչական ծառայութիւնների մէջ տարիների ընթացքին ամբարած փորձառութիւնը Դուք այսօր արդիւնաւորապէս ի սպաս էք դնում Սփիւռքի մեր մեծագոյն թեմերից մէկի՝

[1] «Էջմիածին», 2010 Ե, էջ 7:

ԱՄՆ Արեւմտեան Հայոց Թեմի չինուԹեանն ու պայծառուԹեանը՝ 2003 Թուականից վարելով Թեմական առաջնորդի պատասխանատու պաշտօնը: Հաւատարիմ Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ Ձեր ուխտին՝ Դուք արԹուն հովիւ ու նուիրեալ սպասաւոր էք Ձեզ վստահեալ հօտի համար՝ անձնական օրինակով, խօսքով ու գործով հաւատացեալ հայորդեաց կեանքից ներս յաւելելով հաւատ ու յոյս, ազգասիրուԹիւն ու եկեղեցասիրուԹիւն:

Ձեր հոգու անկեղծ սէրը հանդէպ Սուրբ Էջմիածինը, որ տասնամեակներ առաջ Ձեզ բերեց Հայրենիք, այսօր արտայայտուում է Մայրավանքի եւ հայաստանեան Թեմերի չինուԹեանն ու պայծառուԹեանը աւանդ բերելու նախանձախնդրուԹեամբ: Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ, որ Ձեր քաջալերուԹեամբ բազմաԹիւ հայորդիներ աջակցուԹիւն են բերում Մայր Աթոռի աստուածադիր առաքելուԹեան իրականացմանը եւ Հայրենի մեր Երկրում հոգեւոր կեանքի վերազարԹօնքին: Այսօր Ձեր յոբելեանների առիԹով ուրախ ենք նշելու, որ Ձեր կեանքի աստուածաշնորհ տարիները Դուք իմաստաւորել էք Բարձրեալ Աստծուն, մեր Եկեղեցուն ու ժողովրդին մատուցած անսակարկ ծառայուԹեամբ:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ ի սրտէ աղօԹում ենք առ Բարձրեալն Աստուած՝ մաղԹելով Ձեզ Տիրոջ օրհնուԹեամբ բազմարդիւն քահանայագործուԹեան նորանոր յոբելեաններ: Ի խորոց սրտի Մեր աղօԹքն ու մաղԹանքն է, որ Բարին Աստուած աջակից լինի Ձեզ պատասխանատու Ձեր ծառայուԹեան մէջ՝ ի չինուԹիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, ԱՄՆ Արեւմտեան Հայոց տիրախնամ Թեմի եւ ի բարօրուԹիւն աստուածասէր մեր ժողովրդի:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ամենեսեան. ամէն:

ՕրհնուԹեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 26-ն Մայիսի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1044



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 300 – ԱՄՅԱ ՀՈԲԵՅԼԱՆԻ ԱՌԻԹՈՎ. ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ՌԴ

(18 ՀՈՒՆԻՍԻ, 2010 Թ.)[1]

Լուսոյ Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով եւ ուրախութեամբ ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում ձեզ՝ Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի հաւատաւոր զաւակներիդ, որ այս տարի յատուկ հանդիսութիւններով տօնախմբում էք համայնքի 300-ամեայ նշանակալի յոբելեանը:

Աստուծոյ օրհնութեան եւ խնամքի ներքոյ Ռուսաստանի հիւսիսային մայրաքաղաքում երեք դար առաջ սկիզբ առաւ հայ կեանքը եւ աճեց ու զօրացաւ նորահաստատ քաղաքի բարգաւաճման ու ծաղկման հետ: Վայելելով Ռուսական աստուածասէր, հզօր պետութեան բարեհաճութիւնն ու ռուս ժողովրդի եղբայրական սէրը՝ մեր ժողովուրդը Նեւայի ափին կառուցեց ու բարձրացրեց իր հոգեւոր ու ազգային կեանքը: Բարեկունք ու չնորհով լեցուն բազում գործերով մեր ժողովրդի զաւակները վկայեցին իրենց հաւատքն ու եկեղեցասիրութիւնը, իրենց ազգասիրութիւնն ու հայրենասիրութիւնը: Նոյն նուիրումով ու նախանձախնդրութեամբ մասնակցութիւն եւ գնահատելի աւանդ բերելով Ռուսաստանի պետական ու հասարակական, ռազմական, գիտական ու մշակութային կեանքին՝ մեր ժողովրդի զաւակները վկայեցին նաեւ իրենց հաւատարմութիւնը Ռուսաստանին, Սանկտ Պետերբուրգի պայծառ յոյսերին ու փառքին: Այդ մասին են պատմում 300-ամեայ փառապանծ պատմութիւնը աստուածախնամ Սանկտ Պետերբուրգի եւ նրա հայ զաւակների կենսագրութիւնները, որոնք հարուստ են անխոնջ ջանքով ու նուիրումով, մեծագործ ու տաղանդաշատ հոգու արգասիքներով: Մշտապէս արիութեան ու սխրանքի

[1] «Էջմիածին», 2010 Զ, էջ 5:

օրինակ է լինելու Հայրենական մեծ պատերազմի տարիներին Լենինգրադի հերոսական պաշտպանութիւնը, որին անձնուիրաբար մասնակցեց նաեւ հայութիւնը՝ հայրենի քաղաքի փառապանծ ազատագրումից յետոյ ջանքեր բերելով նրա վերականգնմանն ու զարգացմանը:

Տօնական այս օրերին մենք առիթն ունենք երախտագետ հոգով անդրադառնալու նաեւ, որ Սանկտ Պետերբուրգում արծարծուել են Հայաստանի ազատագրութեան ծրագրերը՝ արտայայտելով մեր ժողովրդի արդար ձգտումները եւ ամրապնդելով հայ եւ ռուս ժողովուրդների բարեկամութիւնը, որում մեծ ներդրում ունի Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը:

Այսօր փառք եւ գոհութիւն ենք մատուցում Աստծուն, որ վերազարթօնք է ապրում Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը: Խորհրդային դժուարին տարիներից յետոյ համայնքը նոր ձեռքբերումներով վերակերտեց իր ազգային-եկեղեցական կեանքը: Քաջեռանդ ջանքերով մեր Եկեղեցու հաւատաւոր զաւակների եւ նախանձախնդիր, բեղուն սպասաւորութեամբ հոգեւոր հովուի՝ ներկայիս Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի, պայծառացաւ համայնքային կեանքը, վերանորոգուեցին Սուրբ Յարութիւն եւ Սուրբ Կատարինէ եկեղեցիները, եկեղեցապատկան շէնքերը, համայնքի հովանու ներքոյ գործել սկսեցին կիրակնօրեայ եւ միջնակարգ դպրոցները, Լազարեանների անուան հայ կրթութեան կենտրոնը՝ բարի ու առատ արգասիքներ բերելով համայնքային կեանքին: Հայոց Հայրապետիս համար հոգեւոր բերկրանք եւ ուրախութիւն էր Սուրբ Կատարինէ եկեղեցու վերաօծումը տարիներ առաջ, երբ ականատես եղանք համայնքի ձեռքբերումներին, հոգեւոր եւ ազգային կեանքի վերազարթօնքին, որն այսօր շարունակուում է հոգածութեամբ եւ խնամքով Սանկտ Պետերբուրգում ծառայող հոգեւոր սպասաւորների, համայնքի բարերարների, համայնքային վարչութեան անդամների եւ նախանձախնդրութեամբ ու ջանքերով բարեպաշտ մեր բոլոր զաւակների:

Սիրելինե՛ր,

Մենք բարձր ենք գնահատում ձեր ազնիւ եւ հաւատաւոր ընթացքը, եկեղեցանուէր ու ազգաշահ գործերը՝ ի խնդիր համայնքի առաջընթացի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեան: Դուք, շարունակելով երանաչնորհ մեր նախնեաց աւանդները, Ձեր բարեպաշտ կեանքով ու գործերով ամրապնդում էք նաեւ դարաւոր բարեկամութիւնը հայ եւ ռուս ժողովուրդների եւ նպաստ բերում հա-

յաստանի եւ Ռուսաստանի՝ օրեցօր զօրացող դաշնակցութեանն ու համագործակցութեանը: Շնորհակալ հոգով Մեր գնահատանքն ենք բերում նաեւ Սանկտ Պետերբուրգի իշխանութիւններին, որոնց աջակցութեան ու սատարումի եւ հայ համայնքի հանդէպ բարեացակամ վերաբերմունքի շնորհիւ հնարաւոր եղաւ վերստին բարձրացնել ու զօրացնել Սանկտ Պետերբուրգի հայ կեանքը:

Աղօթում ենք առ Աստուած, որ խաղաղութեան մէջ պահպանի Ռուսաստանը եւ օրհնի նրա աստուածասէր ժողովրդի ջանքերը յանուն իր բարօր ու երջանիկ կեանքի, նաեւ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքոյ միշտ չէն ու պայծառ պահպանի Սանկտ Պետերբուրգի հայ համայնքը եւ պարգեւի ձեզ ամենքիդ քաջառողջ կեանքի երկար օրեր, եկեղեցանուէր ու հայրենասէն գործոց յաջողութիւններ: Մնացեք հաւատքով, երկնառաք շնորհներով զօրացած՝ անսասան հաւատարմութեամբ առ մեր Սուրբ Եկեղեցին եւ աստուածակերտ մեր հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, յարատեւէք եկեղեցասիրութեան ու հայրենասիրութեան մէջ: Եւ թող Տէրը առաջնորդի եւ օրհնի ձեր կեանքը եւ գործերը՝ շնորհելով առատ արգասիքներ ու ամենայն բարիք:

«Հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով լիցի» (Ա Կորնթ. ԺԶ 13-14):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 18-ն Յունիսի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1052



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ԼՈՆԴՈՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 100 – ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ. ԼՈՆԴՈՆ, ՄԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ

(10 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2010 Թ.)[1]

Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Վահան ծ. վարդապետ Յովհաննէսեանից տեղեկացանք, որ այս տարի լրանում է Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Լոնդոնի Մասնաճիւղի հիմնադրման 100-րդ տարեդարձը:

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան աւելի քան մէկ դարեայ գործունէութիւնը մերձաւորին, նեղեալին ու կարօտեալին օգնելու աստուածային պատուիրանի իրագործումն է ազգային ու եկեղեցական մեր կեանքում: Միութեան հիմնադիրները եւ նրա շուրջ համախմբուած հայորդիները պարտքի զգացումով հոգի, ջանք ու եռանդ բերեցին աստուածօրհնեալ այս հաստատութեան յաջողութիւնների կայացմանը՝ նուիրումով, կեանքով ու գործերով վկայելով իրենց հաւատքը, ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնն ու եկեղեցասիրութիւնը:

Ահաւասիկ, հիմնադրման հարիւրամեայ յոբելեանն է նշում Բարեգործականի Լոնդոնի Մասնաճիւղը: Ինչպէս ողջ աշխարհում, բրիտանահայ համայնքում եւս Միութիւնը արդիւնաւոր ծրագրեր է կեանքի կոչում՝ միտուած հայորդեաց ազգային, կրթական, մշակութային եւ ընկերային կեանքի զարգացմանը: Բազմիցս լինելով Միացեալ Թագաւորութիւնում՝ Մենք գոհունակութեամբ ականատես ենք դարձել, որ Բարեգործականը Բրիտանահայոց թեմի եւ ազգային այլ հաստատութիւնների հետ համագործակցութեամբ բարեզարդում է համայնքային կեանքը եւ կարեւոր աւանդ բերում հայորդեաց ազգային ինքնութեան պահպանութեան նուիրական գործին:

---

[1] «Էջմիածին», 2010 ԺԱ, էջ 5

Միութեան Լոնդոնի Մասնաճիւղը ազգային մեր կեանքում իր վաստակը հարստացրել է նաեւ հայրենի երկրին ու հարազատ ժողովրդին մատուցած ծառայութիւններով: Հայրենակերտութեան սրբազան գործին աւանդ բերելու նախանձախնդրութեամբ՝ անցնող տարիներին Միութիւնը հայրենիքում իրականացրել է բարեգործական տարբեր ծրագրեր՝ աջակցելով հանրակրթական դպրոցների, օգնելով ու զօրակցելով կարիքաւոր բազում ընտանիքների եւ երեխաների: Լոնդոնի Մասնաճիւղի հովանաւորութիւնն է վայելում Արցախի Բարեչէն գիւղը, որտեղ հայորդեաց կեանքը բարելաւելու համար ստեղծուում են անհրաժեշտ պայմաններ:

Հայրապետիս համար ուրախութիւն է նաեւ նշել, որ ՀԲԸ Միութեան Լոնդոնի Մասնաճիւղը ամենայն սիրով ու պատրաստակամութեամբ աջակցութիւն է բերում Մայր Աթոռիս երիտասարդ մխաբանների կրթութեան կարեւոր գործին՝ հովանաւորելով նրանց ուսումնառութիւնը Մեծ Բրիտանիայի բարձրակարգ հաստատութիւններում:

Հարիւրամեայ յոբելեանի առիթով գնահատանքով ենք յիշում ՀԲԸ Միութեան Լոնդոնի Մասնաճիւղի ննջեցեալ անդամներին՝ աղօթելով նրանց հոգուոց հանգստութեան համար: Աստուածակառոյց Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու չնորհաւորանքներն ենք յղում Մասնաճիւղի Վարչութեանն ու բոլոր անդամներին եւ մաղթում Բարձրեալ Տիրոջ հովանին ու զօրակցութիւնը՝ յանուն ազգօգուտ ու եկեղեցաշէն նոր յաջողութիւնների:

Հայրական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք յղում նաեւ Միացեալ Թագաւորութիւնում բնակեալ հաւատաւոր Մեր բոլոր զաւակներին՝ ի խորոց սրտի հայցելով, որ Փրկիչ մեր Տէրը Իր ամենազօր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Բրիտանիայի Հայոց թեմը եւ աշխարհսփիւռ մեր ողջ ժողովրդին:

Սէր եւ խաղաղութիւն Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 10-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1115



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՌԻՉԱՐԴ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ 80 – ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ. ԿԱԼԻՖՈՌՆԻԱ, ԱՄՆ

(15 ՓԵՏՐՎԱՐԻ, 2012 Թ.)[1]

ԱՄՆ Արեւմտեան Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանից տեղեկացանք, որ յատուկ հանդիսութեամբ պիտի նշուի Ձեր ծննդեան 80-րդ տարեդարձը: Ուրախալի այս առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր շնորհաւորանքները, օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Մեծարգո՛յ պրն. Յովհաննիսեան, Ձեր կեանքը՝ ազգային, հասարակական, գիտական ու մանկավարժական տասնեակ տարիների բեղմնաւոր գործունէութեամբ ամբողջական նուիրում ու ծառայութիւն է մեր ժողովրդին: Միացեալ Նահանգներում հայագիտութեան զարգացման վաստակաշատ մշակներից էք Դուք՝ Ձեր երկարամեայ հետեւողական աշխատանքով եւ գիտական ժառանգութեան հարուստ վաստակով: Մեր ժողովրդի պատմութեանը նուիրուած Ձեր ուսումնասիրութիւնները լոյս են սփռում մեր անցեալի էջերին՝ նպաստելով, որ հայորդիները ճանաչեն մեր արմատները, մեր հայրենեաց աւանդները, հաղորդակցուեն մեր մեծերին ու նրանց կերտած արժէքներին: Հայորդուդ նախանձախնդիր աշխատանքի շնորհիւ Կալիֆոռնիայի Համալսարանը, իր հարուստ գրադարանով, դարձել է հայագիտութեան կարեւոր կենտրոն, որտեղ հայ եւ օտարազգի ուսանողները, մանկավարժներն ու գիտնականները հնարաւորութիւն են ստանում ուսումնասիրել մեր ժողովրդի պատմութիւնը, մեր ոսկեղէնիկ լեզուն, մատենագիտական մեր հարուստ ժառանգութիւնը, հայ մշակոյթը:

Գնահատարժան է Ձեր աւանդը նաեւ Հայոց ցեղասպանութեան իրողութիւնը համաշխարհային գիտական, քաղաքական ու հասարակական շրջանակներին ներկայացնելու գործում: Հեղինակելով արժէ-

---

[1] «Էջմիածին», 2012, Բ, էջ 3:

քաւոր աշխատութիւններ ու գիտական յօդուածներ, հանդէս գալով բազմաթիւ դասախօսութիւններով Միացեալ Նահանգներում եւ նրա սահմաններից դուրս՝ Դուք տասնեակ տարիներ աննուազ հետեւողութեամբ ծառայում էք մեր ժողովրդի արդար դատի յաղթանակին:

Հայրապետիս համար գոհունակութիւն է նաեւ անդրադառնալ, որ Դուք՝ որպէս ընտանիքի հայր, Ձեր հայրենասէր, ազգասէր ու եկեղեցասէր ոգին փոխանցել էք Ձեր զաւակներին ու թոռներին՝ անձնական օրինակով նրանց խրախուսելով ազգանուէր ծառայութեան:

Ի գնահատութիւն ազգօգուտ Ձեր բազմարդիւն վաստակի՝ սիրով ընդառաջելով թեմակալ առաջնորդի խնդրանքին, Ձեր ծննդեան 80-ամեայ յոբելեանի առիթով չնորհում ենք Ձեզ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած՝ Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը հայցելով Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին:

Թող Բարին Աստուած Իր Ամենախնամ Աչով հովանի լինի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 15-ն Փետրուարի
յամի Տեառն 2012 եւ ի թուին Հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1298



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԱՆԴԱՄՆԵՐԻՆ ԹԵՄԻ 145 – ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

(25 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2012 Թ.)[1]

Հայոց հաւատքի վէմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով եւ ուրախութեամբ ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում ձեզ՝ Բուլղարիայի Հայոց Թեմի հաւատաւոր զաւակներիդ, որ այս տարի յատուկ հանդիսութիւններով տօնախմբում էք Թեմի 145-ամեայ նշանակալի յոբելեանը: Աստուծոյ օրհնութեան եւ խնամքի ներքոյ Բուլղարիոյ աւանդաշատ երկրում հարիւր քառասունհինգ տարիներ առաջ հիմնադրուեց տիրախնամ Թեմը, եւ աճեց ու զօրացաւ հայ համայնքը: Վայելելով պետութեան բարեհաճութիւնն ու բուլղար ժողովրդի եղբայրական սէրը՝ հայորդիք յաջողութեամբ կազմակերպեցին հոգեւոր ու ազգային կեանքը: Մեր ժողովրդի զաւակները նախանձախնդիր ոգով ու ստեղծագործ ընթացքով գնահատելի աւանդ բերեցին Բուլղարիայի բարգաւաճմանն ու առաջընթացին՝ պետական ու հասարակական, գիտական ու մշակութային կեանքին: Այդ մասին են վկայում դեռեւս հինգերորդ դարից սկսած հայերի բարերար ներկայութիւնը Բալկաններում, Բուլղարիայի հայ գրչութեան պատմական կենտրոնները, տնտեսութեան, արդիւնաբերութեան ու արհեստների մէջ հայոց մեծ ձեռքբերումները, երկրի պաշտպանութեան եւ ազատագրութեան համար մղուող մարտերում հայորդիների հերոսական մաքառումները բուլղար եղբայրների հետ միասին: Փառք եւ գոհութիւն ենք մատուցում Աստծուն, որ այսօր Բուլղարիայի հայ համայնքը վերազարթօնք է ապրում: Եկեղեցամարտ հասարակարգի դժուարին տարիներից յետոյ քաջեռանդ գործունէութեամբ բուլղարահայ համայնքը ջանքեր է ներդնում նոր ձեռքբերումներով վերակերտելու ազգային-եկեղեցական կեանքը: Գլխաւորութեամբ Բուլղարիայի Հա-

[1] «Էջմիածին», 2012, Թ, էջ 7:

յոց թեմի առաջնորդ հոգեշնորհ Տ. Աբգար վարդապետ Յովակիմեանի՝ արդիւնաւորուում է սպասաւորութիւնը հոգեւոր հովիւների: Սիրելինե՛ր, Մենք բարձր ենք գնահատում ձեր ազնիւ եւ հաւատաւոր ընթացքը, եկեղեցանուէր ու ազգաշահ գործերը՝ ի խնդիր համայնքի առաջընթացի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեան: Դուք ձեր բարեպաշտ կեանքով ու գործերով ամրապնդում էք նաեւ դարաւոր բարեկամութիւնը հայ եւ բուլղար ժողովուրդների, նպաստ բերում Հայաստանի եւ Բուլղարիայի համագործակցութեանն ու ներկայիս առաւել արդիւնաւորուող փոխյարաբերութիւններին: Գոհունակ սրտով Մեր գնահատանքն ենք բերում Բուլղարիայի Հանրապետութեան իշխանութիւններին, որոնց աջակցութեան ու բարեացակամ վերաբերմունքի շնորհիւ հայ համայնքը նոր իրագործումներով զօրացնում է ազգային-եկեղեցական իր կեանքը: Աղօթում ենք առ Աստուած, որ խաղաղութեան մէջ պահպանի Բուլղարիան եւ օրհնի նրա աստուածասէր ժողովրդի ջանքերը յանուն իր բարօր ու երջանիկ կեանքի: Թող Ամենակալ Տէրը նաեւ Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ միշտ չէն ու պայծառ պահպանի Բուլղարիայի Հայոց թեմը եւ պարգեւի ձեզ ամենքիդ քաջառողջ կեանքի երկար օրեր, եկեղեցանուէր ու հայրենաշէն գործոց յաջողութիւններ:

«Հաստատո՛ւն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրո՛վ լիցի» (Ա. Կորնթ. ԺԶ. 13-14):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 25-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1375



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐՔ «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻՆ ՀԱՍՏԱՏՄԱՆ 25 – ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ. ԵՐԵՎԱՆ

(6 ՓԵՏՐՎԱՐԻ, 2017 Թ.)[1]

«Հայաստան» համահայկական հիմնադրամի հաստատման 25-ամեակի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական բարձր գնահատանքով Մեր օրհնութիւնն ենք բերում հիմնադրամի նախկին եւ ներկայ յարգարժան հոգաբարձուներին, գործադիր տնօրէններին, բարձրապատիւ բարերարներին, նուիրատու եւ աջակից անդամներին, տեղական մարմինների բարեբան պատասխանատուներին եւ համայն մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփիւռս: «Հայաստան» համահայկական հիմնադրամը իր բազմարդիւն գործունէութեամբ մեր ժողովրդի մեծ ձեռքբերումներից է: Հայաստանում եւ Արցախում մեր անկախ պետականութեան վերահաստատումից յետոյ հիմնադրամը բացառիկ դերակատարութիւն է ունեցել հայրենական կեանքում կենսական նշանակութիւն ունեցող խնդիրների վճռման գործում՝ կենտրոնացնելով եւ ուղղորդելով մեր ժողովրդի հնարաւորութիւնները ու ջանքերը: Հիմնադրամի գործունէութիւնն ուղղուած է եղել ոչ միայն մեր պետականութեան առջեւ ծառացած դժուարութիւնների յաղթահարմանը, այլեւ մեր երկրի արագընթաց զարգացմանը, բարեկարգմանն ու բարգաւաճմանը: Այս տեսլականով «Հայաստան» համահայկական հիմնադրամի հաստատումը Հայրապետական կոնդակով օրհնեց երջանկայիշատակ Վազգէն Ա Վեհափառ Հայրապետը: Այսօր ուրախութեամբ ենք անդրադառնում կեանքի կոչուած ծաւալուն հարիւրաւոր ծրագրերին, որոնց շուրջ համախմբուեցին եւ իրենց աւանդն ու մասնակցութիւնը բերեցին հայորդիք աշխարհի բոլոր կողմերում: Քաջալեր հոգով տարեցտարի ականատեսը եղանք այն խանդավառութեանը, որով արձագանքել են մեր ժողովրդի զաւակները հիմնադ-

[1] «Էջմիածին», 2017, Բ, էջ 9:

րամի դրամահաւաքին եւ ծրագրերի իրագործման աշխատանքներին՝ հիմնադրամի առաքելութիւնը դարձնելով յոյսի, ապագայի հանդէպ լաւատեսութեան եւ նոր հեռանկարների ճանապարհ: Արդարեւ, «Հայաստան» համահայկական հիմնադրամի 25-րդ տարեդարձը պանծացումն է նաեւ մեր ժողովրդի հայրենասէր ու ազգասէր ոգու, միասնականութեան, հայրենիքով համախմբման եւ հզօր հայրենիք ունենալու նախանձախնդրութեան: Կարեւորելով հիմնադրամի հայրենաշէն առաքելութիւնը՝ Մենք ամենամեայ Մեր յորդորն ենք ուղղում մեր ժողովրդին եւ եկեղեցական մեր կառոյցներին՝ մասնակցութիւն բերելու եւ աջակցելու հիմնադրամի գործունէութեանը: Ողորմած Աստուծոյ հանապազ օրհնութիւնն ենք հայցում «Հայաստան» համահայկական հիմնադրամի կայացմանը նպաստած բոլոր երախտաւորներին ու բարերարներին եւ աղօթում, որ մեր ժողովուրդը կորովաշատ ոգով եւ հաստատուն քայլերով ընթանայ դէպի իր հայրենաշէն իղձերի ու նպատակների իրականացում:

Թող Բարերար Աստուած Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ խաղաղ պահի մեր հայրենիքն ու աշխարհասփիւռ ժողովրդին եւ պարգեւի մեր կեանքին նոր ձեռքբերումներ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Գիրս Օրհնութեան ի 6-ն Փետրուարի
յամի Տեառն 2017 եւ ի թուին հայոց ՌՆԿՉ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1787



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԻԼ Ա ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՌՈՒՍԻՈ ՊԱՏՐԻԱՐՔԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ

(17 ՄԱՐՏԻ, 2010 Թ.)[1]

Սիրեցեա՛լ եղբայր ի Քրիստոս, Առ Աստուած գոհաբանական աղօթքն է Մեր չուրթերին, որ Տիրոջ կամքով առիթն ունեցանք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ համայն հայութեան հոգեւոր սրբօրրանում, ողջագուրել Ձեզ՝ Ռուս Ուղղափառ Եկեղեցու չնորհազարդ Գահակալիդ: Ձեր այցելութիւնը Հայաստան ուրախութիւն է մեր հոգեւորականաց ու մեր ժողովրդի հաւատաւոր զաւակների համար: Մեր երկրում Դուք ճանաչուած էք իբրեւ քաջ հովիւ, որ, տասնեակ տարիներ Տիրոջ ծառայի կոչմանը հաւատարիմ, իր անձն ի սպաս է դնում, որպէսզի ռուս ժողովրդի զաւակները զօրանան հաւատի եւ աստուածճանաչողութեան մէջ: Հայ Եկեղեցու հաւատացեալները անկեղծ գոհունակութեամբ ընդունեցին Ձերդ Սրբութեան ընտրութիւնը Մոսկուայի եւ Համայն Ռուսիոյ պատրիարքի պատասխանատու պաշտօնում, հանապազ աղօթելով Ձեր յաջողութիւնների համար, որով առաւել պիտի զօրանայ Քրիստոսի Ընդհանրական Սուրբ Եկեղեցին՝ յանուն աշխարհում քրիստոնէական հաւատքի զօրացման, հոգեւոր-բարոյական արժէքների տարածման եւ ժողովուրդների կեանքում խաղաղութեան ու համերաշխութեան հաստատման: Մեզ համար մասնաւոր գոհունակութիւն է, որ հայ եւ ռուս հաւատակից մեր երկու ժողովուրդների եղբայրութեան եւ պետութիւնների համագործակցութեան ամրապնդ-

[1] «Էջմիածին», 2010 Գ, էջ 5:

մանը բարի աւանդ են բերում մեր Եկեղեցիները՝ հաւատարիմ «զի՛ բարի կամ զի՛ վայելուչ, զի եղբարք բնակին ի միասին»՝ սաղմոսերգուի պատգամին: Սիրեցեա՛լ եղբայր ի Քրիստոս, այսօր ուրախ ենք մեծապէս քաղաքամայր Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Մայր եկեղեցում Տիրոջ օրհնութեան հայցով զարդարելու Ձեր կուրծքը Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու պատուոյ բարձրագոյն

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

չքանչանով:

Ի խորոց սրտի աղօթում ենք եւ հայցում, որ Բարին Աստուած օգնական ու աջակից լինի եւ Իր հանապազ օրհնութեամբ զօրացնի Ձեզ բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ իբրեւ առաջին սպասաւորը Ռուս Ուղղափառ Եկեղեցու, «իբրեւ զբարւոք գինուոր Քրիստոսի», չարունակելու արդիւնաչատ Ձեր ծառայութիւնը ի փառս Աստուծոյ, ի պայծառութիւն Ռուս Ուղղափառ Եկեղեցու եւ ի չինութիւն Ձեր աստուածպարգեւ երկրի՝ Ռուսաստանի Դաշնութեան: Թող Տէրը քաջառողջ երկար գահակալութիւն պարգեւի Ձեզ, սիրելի՛ եղբայր, Սուրբ Հոգու առաջնորդութեամբ հովուելու քրիստոսասէր հօտը Ռուս Ուղղափառ մեր քոյր Եկեղեցու: Այլեւ հայցում ենք, որ Բարին Աստուած խաղաղ ու անվրդով պահի Ռուսաստանի Դաշնութիւնը եւ Հայաստանի Հանրապետութիւնը, եղբայր մեր երկու ժողովուրդների բարեկամական յարաբերութիւնները եւ միշտ պայծառ ու զօրացեալ պահպանի մեր Սուրբ Եկեղեցիները իր աստուածային սիրոյ ու խնամքի մէջ:

«Աստուած յուսոյ՝ լի՛ արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելուլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. ԺԵ 13):

Եղբայրական սիրով աղօթակից՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Մարտի
յամի Տեառն 2010 ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 548

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՍԱՐՕ ԽՈՒԴԱՎԵՐԴՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄԻԼԱՆ, ԻՏԱԼԻԱ

(1 ՀՈՒՆԻՍԻ, 2010 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սէր եւ օրհնութիւն ենք բերում Ձեզ, մեր եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Սիրելի՛ պրն. Խոդավերդեան:

Տարիների չարունակ ճանաչում ենք հաւատաւոր հայորդուդ եւ գոհունակութեամբ ականատես ենք Ձեր կեանքի բարի ընթացքին, որ զարդարուած է ազգային եւ եկեղեցական մեր կեանքում ստանձնած յանձնառութիւններով՝ ի սէր աստուածասէր մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Մեծապէս գնահատելի է Ձեր աւանդը Իտալիայում բնակեալ հայորդեաց ազգային եւ հոգեւոր կեանքի կազմակերպման եւ առաւել զօրացման գործում: Անդամակցելով Միլանի Սուրբ Քառասուն Մանկուք Եկեղեցու համայնքային վարչութեանը եւ ստանձնելով Ատենապետի պաշտօնը՝ Դուք աչխոյժ գործունէութեամբ ջակից էք հոգեւոր հովուին՝ իրականացնելու մեր Եկեղեցու աստուածօրհնեալ առաքելութիւնը, որպէսզի հաւատը, եկեղեցասիրութեան ու ազգասիրութեան ոգին միշտ արթուն մնայ Իտալիոյ հայութեան սրտերում:

Հայորդուդ ազգասէր ու եկեղեցանուէր ոգին արտայայտել է նաեւ Մայր Հայրենիքում իրականացուած նախաձեռնութիւններով՝ յանուն մեր Եկեղեցու պայծառութեան եւ հաւատաւոր ժողովրդի հոգեւոր կեանքի չինութեան: Հայրապետիս համար խորը գոհունակութիւն է, որ, Մեր հրաւէրին ընդառաջ, Քրիստոնէութիւնը Հայաստանում պետական կրօն հռչակման 1700-ամեակի յոբելեանական տարում Դուք սիրով ստանձնեցիք երեւանի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ

[1] «Էջմիածին», 2010 Ձ, էջ 3:

Մայր Եկեղեցու ջահերի պատրաստման, ապա նաեւ Էջմիածին քաղաքի մուտքին Ս. Գրիգոր Լուսաւորչի Աջի կառուցման հովանաւորութիւնը: Ուրախ ենք մեծապէս, որ մեր Եկեղեցու, հարազատ ժողովրդի եւ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր որդիական անկեղծ սէրը առաջնորդում է Ձեզ մեծարժան գործերի՝ Ձեր անունն արժանիօրէն դասելով Սուրբ Էջմիածնի բարերարների պատուաւոր շարքում:

Եկեղեցաչէն ու ազգօգուտ Ձեր գովարժան ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Հայաստանեայց Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ենք հայցում Ձեզ, Ձեր ազնիւ տիկնոջն ու զաւակները եւ մաղթում նորանոր յաջողութիւններ Ձեր եկեղեցաչէն ու ազգօգուտ գործերին:

Թող Բարին Աստուած Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահպանի օրհնակեալի գործերով ու հաւատաւոր ոգով ապրող Ձեր ընտանիքը՝ պարգեւելով Ձեզ քաջառողջ եւ երջանիկ օրեր:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Յունիսի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 559

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՄԱՐԿՈ ՁԱՐԻԿՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԿԱՐԱԿԱՍ, ՎԵՆԵՍՈՒԵԼԱ

(15 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2010 Թ.)[1]

Գոհունակ սրտով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքն ենք բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու երախտաշարժան զաւակիդ:

Սիրելի՛ պրն. Զարիկեան,

Ձեր ընտանիքի եկեղեցանուէր ընթացքի մասին լսել էինք բազմաթիւ անգամներ, տեղեակ դարձել Վենեսուելայում բնակեալ մեր ժողովրդի զաւակների ազգային ու հոգեւոր կեանքի պայծառութեանը սիրեցեալ Ձեր ծնողների բերած բարի աւանդին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին Ձեր քրոջ եւ հարազատների հետ կատարած այցի ընթացքին Մենք ուրախ առիթ ունեցանք ի մօտոյ ճանաչելու հաւատաւոր, եկեղեցասէր հայորդուդ եւ ականատես լինելու Ձեր ջերմ սիրուն ու նախանձախնդրութեանը՝ հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին եւ հոգեւոր մեր սրբօրրան Սուրբ Էջմիածինը: Գոհունակութիւն էր Հայրապետիս համար, որ այցելութիւնը Հայրենիք եւ Սուրբ Էջմիածին Դուք նշանաւորեցիք Մայր Աթոռիս տարածքի բարեկարգման հովանաւորութեան յանձնառութեամբ՝ հարստացնելով Ձեր ընտանիքի եկեղեցանուէր իրագործումների պերճախօս շարքը: Առ Աստուած փառաբանական աղօթքն է Մեր չուրթերին, որ աչխարհսփիւռ մեր ժողովրդի զաւակները իրենց հոգիներում կրում են լուսապայծառ խորհուրդը Աստուածատես Սուրբ Էջմիածնի եւ աներեր պատրաստակամութիւնը՝ հոգալու նրա յաւէտ չինութեան ու պայծառութեան համար:

---

[1] «Էջմիածին», 2010 ԺԱ, էջ 7:

Սիրելի՛ պրն. Զարիկեան, Ձեր հաւատաւոր ու ազգանուէր ոգու եւ մեր Եկեղեցուն եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին բերած արգասաւոր ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ օրհնութեամբ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ եւ Ձեր ընտանիքի անդամներին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 582

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(19 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2010 Թ.)[1]

Յարգարժա՛ն տիար Յովհաննիսեան, Շահումեանի Սուրբ Աստուածածին եկեղեցու օծման ուրախալի առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հաւատարիմ զաւակիդ:

Գոհունակութիւն է Մեզ համար, որ հաւատաւոր հայորդուդ սրտաբուխ բարերարութեամբ Ձեր հայրենի Շահումեան գիւղի խոնարհուած սրբավայրին կից կառուցել էք Սուրբ Աստուածածին եկեղեցին, հովուատունը, բարեկարգել եւ կառուցապատել էք եկեղեցու տարածքը, որով նոր չունչ էք հաղորդել հինաւուրց աղօթավայրին: Մենք հոգու ուրախութեամբ ենք ականատես եղել իրականացուած աշխատանքներին եւ Սուրբ Աստուածածին եկեղեցի Մեր այցելութեան ընթացքին մեծապէս տպաւորուել եկեղեցական կառոյցով: Այս գովելի նախաձեռնութեան իրականացմամբ Դուք Ձեր գովարժան նպաստն էք բերում Առաքելական մեր Եկեղեցու տէրունապատուէր առաքելութեանը, ինչը վառ վկայութիւնն է Ձեր եկեղեցասիրութեան ու բարեպաշտ ոգու եւ առ մեր սրբազան արժէքները որդիական հաւատարմութեան:

Սուրբ Աստուածածին եկեղեցին, արդարեւ, նոր խթան պիտի լինի գիւղի բնակիչների հոգեւոր-եկեղեցական կեանքի առաջընթացի համար, ովքեր այս եկեղեցու նուիրական կամարների ներքոյ պիտի ընդունեն Աստուծոյ որդեգրութիւնը սուրբ մկրտութեամբ, Տիրոջ Սուրբ Սեղանի առջեւ ամուսնական իրենց ուխտը կնքեն, Սրբազան Պատարագի խորհրդով հաղորդուեն Տիրոջ կենարար Մարմնին ու Արեանը

---

[1] «Էջմիածին», 2010 ԺԱ, էջ 9:

եւ, զօրացած հաւատքով ու եկեղեցասիրութեամբ, լինեն արժանաւոր գաւակներ ազգի եւ մեր Սուրբ Եկեղեցու: Փառք երկնաւորին, որ այլեւս մշտահունչ պիտի լինի աղօթքը Սուրբ Աստուածածնին եկեղեցում, ուր հաւատաւոր սրտերից ու հոգիներից առ Բարձրեալն Աստուած բարձրացող աղօթքներում պիտի յիշուեն նաեւ Ձեր անունը եւ եկեղեցաշէն բարի գործը:

Արմաւիրի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիօն եպիսկոպոս Ադամեանի խնդրանքին ընդառաջ եւ Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Հաւատում ենք, որ նոյն նուիրումով ու նախանձախնդրութեամբ Դուք պիտի շարունակէք Ձեր հաւատքը վկայել ազնիւ կեանքով եւ բարի գործերով՝ որպէս արժանաւոր գաւակը մեր Մայր Եկեղեցու:

Ի խորոց սրտի աղօթում ենք եւ հայցում, որ Սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ Ամենակալ Տէրը Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահպանի հաւատաւոր Ձեր ընտանիքը եւ հանապազ օրհնութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, արեւշատութիւն, առաքինի եւ աստուածահաճոյ գործոց յարանոր յաջողութիւններ:

Աստուած յուսոյ՝ լի՛ արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելո՛ւլ ձեզ յուսով՝ զաւրութեամբ Հոգւոյն Սրբոյ (Հռոմ 15.13):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 19-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 588

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԵԿԵՂԵՑԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՍՈՒՐԵՆ ՍԱՐԴԱՐՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՕԴԵՍԱ, ՈՒԿՐԱԻՆԱ

(25 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2010 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու գնահատանքն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ մեր ժողովրդի հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգո՛յ պրն. Սարդարեան,

Ուկրաինայի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Գրիգորիս արքեպիսկոպոս Բունիաթեանից գոհունակութեամբ տեղեկացանք, որ Դուք անխոնջ նուիրումով, ազգանուէր ու եկեղեցաշէն արդիւնաշատ գործունէութեամբ լծակից էք հոգեւոր մեր սպասաւորներին եւ տարիներ շարունակ բարի ծառայութիւններ էք մատուցում ի նպաստ տիրախնամ թեմի չինութեան ու պայծառութեան:

Ձեր հաւատն առ Աստուած եւ սէրը առ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին դրսեւորուեցին Օդեսայի հայ համայնքի կեանքում ստանձնած գովելի յանձնառութիւններով: Թեմակալ առաջնորդի վկայութեամբ՝ Դուք ազնիւ հոգով Ձեր նիւթական կարողութիւնները ի սպաս բերեցիք Օդեսայում հայկական եկեղեցու կառուցման, ապա եւ ամբողջական նորոգութեան ու բարեզարդման աշխատանքներին: Օդեսաբնակ հաւատաւոր Մեր զաւակներիդ զոհողութիւններով կառուցուած Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցին արդէն մէկ ու կէս տասնամեակ իր դռներն է բացել բարեպաշտ հայորդեաց առջեւ՝ փառաբանելու Ամենախնամ Բարձրեալին եւ արժանանալու երկնապարգեւ շնորհների: Ձեր գործերով Դուք, արդարեւ, աստուածային օրհնութիւնն էք

---

[1] «Էջմիածին», 2010 ԺԱ, էջ 13:

յաւելում Ձեր եւ համայն մեր ժողովրդի կեանքում՝ վարձք ամբարելով երկնքում:

Ձեր ազօգուտ ու եկեղեցանուէր ծառայութեանց բարձր գնահատանքով եւ սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐՉԻՑ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը բարեխոսութեամբ սրբոյ հօրն մերոյ Գրիգորի Լուսաւորչի պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն, եկեղեցաշէն ու ազգօգուտ գործերի յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 591

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՍԱՀԱԿ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ, ՌԴ

(29 ՄԱՅԻՍԻ, 2011 Թ.)[1]

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ, սիրելի՛ պրն. Կարապետեան, հարազատ, արժանաւոր զաւակիդ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Անճնապէս ճանաչում ենք Ձեզ եւ տարիներ շարունակ գոհունակութեամբ ականատես ենք արժանաւոր հայորդուդ կեանքի բարի, օրհնեալ ընթացքին: Ձեր կարողութիւնների ու անդուլ աշխատանքի չնորհիւ հասնելով բարձր պաշտօնների Ռուսաստանի Դաշնութիւնում՝ Դուք մնացիք նուիրեալ զաւակը աստուածասէր մեր ժողովրդի եւ հաւատաւոր ու ազգասէր հոգու կանչով միշտ ջանացիք օգտակարութիւն բերել մեր Սուրբ Եկեղեցու գործունէութեանը եւ ազգային մեր կեանքի առաջընթացին:

Այսօր առիթ ունենք բերկրաշատ հոգով ջերմ սիրոյ եւ գնահատանքի Մեր խօսքը ուղղելու Ձեզ՝ Դոնի Ռոստովում Ձեր հովանաւորութեամբ կառուցուած Սուրբ Յարութիւն եկեղեցու օծման առիթով, որ կատարեցինք Մեր զաւակների հետ միասնական աղօթասացութեամբ: Հաւատաւոր եւ որդեսէր Ձեր հոգու ջերմագին փափագով, ի յիշատակ Ձեր վաղամեռիկ որդու՝ Արթուր Կարապետեանի, կառուցուեց եկեղեցին, որն այսուհետ օրհնութիւն պիտի բաշխի Ռուսաստանում ապրող Մեր ժողովրդի զաւակներին: Հայրենիքում եւ Սփիւռքում մեր հազարաւոր վանքերի ու եկեղեցիների պէս Սուրբ Յարութիւնը ծառայելու է Մեր սիրեցեալ ժողովրդի հոգեւոր կեանքի վերազարթօնքին, զօրացնելու նրանց հաւատարմութիւնը հանդէպ մեր հայրերի նուիրական աւանդները, մեր սրբազան ժառանգութիւնը: Ձեր օրհնեալ ընթացքով

---

[1] «Էջմիածին», 2011, Ե, էջ 7:

ու պանծալի գործերով Դուք բարի օրինակ էք մատուցում հայորդեաց, ովքեր սերնդէսերունդ պիտի գնահատեն Ձեր վաստակը եւ սրտաբուխ աղօթքներով խնկարկեն յիշատակը Ձեր հոգելոյս զաւակի:

Ձեր ազգօգուտ ու եկեղեցանուէր ծառայութեանց բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, Սուրբ Յարութիւն եկեղեցու օծման բերկրալի առիթով Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի Մեր հայցն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած իր հայրական օրհնութեան ներքոյ պահպանի Ձեզ, Ձեր ազնիւ Տիկնոջն ու դստերը եւ պարգեւի քաջառողջ երկար կեանք, գործոց մշտանորոգ յաջողութիւններ եւ երկնատուր ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 29-ն Մայիսի
յամի Տեառն 2011 եւ ի թուին հայոց ՌՆԿ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 620

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԲՈՐԻՍ ՍԱՏԱԿՈՎԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՆՈՎՈՍԻԲԻՐՍԿ, ՌԴ

(6 ՀՈՒՆԻՍԻ, 2011 Թ.)[1]

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ առանձնակի գոհունակութեամբ անդրադառնում Ձեր եկեղեցաշէն ու ազգօգուտ գործունէութեանը: Մեծարգո՛յ պրն. Սահակով, ծնուելով ու հասակ առնելով Վրաստանում, ապա նախախնամութեան կամքով բնակութիւն հաստատելով Ռուսաստանի Դաշնութիւնում, Դուք միշտ մնացիք հաւատարիմ զաւակը աստուածասէր մեր ժողովրդի՝ հոգու ազնիւ նուիրումով ձգտելով հասարակական կեանքում արձանագրած Ձեր յաջողութիւնները ծառայեցնել նաեւ մեր ժողովրդի բարօրութեանը: Ձեր ազգասէր, հայրենանուէր եւ եկեղեցասէր հոգու կնիքն է կրում Ձեր բարի յանձնառութիւնը վիրահայ համայնքի զօրացման գործում: Դուք սրտաբուխ, ազնիւ հովանաւորութեամբ ստանձնեցիք տիրախնամ թեմի «Հայարտուն» մշակութային, կրթական ու երիտասարդական կենտրոնի կառուցումը, որն իր գործունէութեամբ նոր զարթօնք ու պայծառութիւն պիտի բերի Թբիլիսիում բնակեալ մեր ժողովրդի զաւակների ազգային ու հոգեւոր կեանքին: Այսօր թեմի հոգեւոր դասն ու հաւատաւոր հայորդիները, Ձեր հանդէպ սէրն ու յարգանքն իրենց հոգիներում,աղօթում են Ձեզ եւ Ձեր ընտանիքի համար եւ երախտագիտութեան ազնիւ զգացումով հայցում Բարձրեալի հանապազ հովանին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր բարձր գնահատանքն ենք բերում Ձեզ եւ սիրով ընդառաջ Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ

---

[1] «Էջմիածին», 2011, Զ, էջ 3:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջ արեւշատութիւն եւ գործոց յաջողութիւններ: Թող ընտանեկան Ձեր յարկը չնորհրնկալը լինի երկնապարգեւ չնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամեն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 6-ն Յունիսի
յամի Տեառն 2011 եւ ի թուին հայոց ՌՆԿ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 622

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԲԱՐՍԵՂ ԵՎ ԹԵՐԵԶԱ-ՍԻԼՎԻԱ ԳՐՁՐԼՅԱՆՆԵՐԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԿԱՀԻՐԵ, ԵԳԻՊՏՈՍ

(20 ՕԳՈՍՏՈՍԻ, 2011 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ եկեղեցու արժանաւոր եւ հաւատաւոր զաւակներիդ:

Սիրելի՛ տէր եւ տիկին Գրզրլեաններ,

Եգիպտոսի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Աշոտ եպիսկոպոս Մնացականեանից գոհունակութեամբ տեղեկացանք Ձեր ազգային եւ եկեղեցանուէր երկարամեայ գործունէութեան մասին: Երիտասարդ տարիքից սկսեալ՝ եգիպտահայ համայնքի կեանքում ստանձնած կարեւոր յանձնառութիւններով Դուք ազնիւ ջանքեր ու կարողութիւններ էք ներդնում ի նպաստ մեր Սուրբ եկեղեցու աստուածչնորհ առաքելութեան իրականացման եւ հաւատաւոր Մեր զաւակների հոգեւոր ու ազգային կեանքի պայծառութեան՝ արժանիօրէն վաստակելով սէրն ու յարգանքը Թեմի հոգեւոր դասի եւ բարեպաշտ հաւատացեալների:

Դուք Ձեր սրտում երկար տարիներ կրեցիք Հայրենի հողի վրա եկեղեցի կառուցելու տեսիլքը՝ որպէս հոգու պարտք Աստուծոյ, Հայրենիքի, Ձեր նախնեաց ու մեր ողջ ժողովրդի հանդէպ եւ ջանադրութեամբ հետամուտ եղաք աստուածահաճոյ այս նախաձեռնութեան իրականացմանը: Այսօր կամօքն Աստուծոյ օծուեց Ձեր հովանաւորութեամբ կառուցուած Սուրբ Բարսեղ եկեղեցին, որը սերնդէսերունդ պիտի ծառայի մեր ժողովրդի զաւակների հոգեւոր կարիքներին եւ վկայի Ձեր հաւատի ու արժանյիշատակ գործերի մասին: Փառք ենք մատուցում Ամենախնամ Բարձրեալին, որ հաւատաւոր Մեր զաւակ-

[1] «Էջմիածին», 2011, Ը, էջ 4:

ները չարունակում են եկեղեցանուէր նոր իրագործումներով առաւել զօրացնել ու պայծառացնել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Ազգաօգուտ եւ եկեղեցաչէն Ձեր երկարամեայ ծառայութեան բարձր գնահատանքով եւ սիրով, ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրն Իր հանապազ օրհնութեամբ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ եւ հաւատաւոր Ձեր ընտանիքի անդամներին՝ պարգեւելով ամենքիդ քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 20-ն Օգոստոսի
յամի Տեառն 2011 եւ ի թուին հայոց ՌՆԿ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 627

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՎԱՀԱՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(3 ԱՊՐԻԼԻ, 2012Թ.)[1]

Մեծարգո՛յ պրն. Աւագեան,

Համայն հայոց հոգեւոր նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Առաքելական մեր Սուրբ եկեղեցու բարերար գաւակիդ:

Հայրապետիս համար գոհունակութիւն է անդրադառնալ, որ Դուք ինքնաբուխ ցանկութեամբ նախաձեռնեցիք եկեղեցու կառուցումը Արմաւիրի Թեմի Աղաւնատուն համայնքում՝ Ձեր արդար վաստակը ի սպաս բերելով աստուածահաճոյ այս ծրագրի իրականացմանը: Տէրը զօրակից եղաւ Ձեր ջանքերին, եւ գիւղը օրհնուեց շքեղակառոյց եկեղեցիով: Այսօր Դուք երջանկութիւն ունէք հպարտ լինելու, որ հաւատոյ գործերով Ձեր անունն արձանագրել էք Առաքելական մեր Սուրբ եկեղեցու պատմութեան մէջ: Ձեզ ու Ձեր ընտանիքին իրենց աղօթքներում մշտապէս երախտագիտութեամբ պիտի յիշեն հոգեւոր մեր սպասաւորներն ու հազարաւոր հաւատացեալները՝ հայցելով Տիրոջ խնամքն ու հանապազ օրհնութիւնը:

Մեր Սուրբ եկեղեցուն եւ սիրեցեալ ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Արմաւիրի թեմի առաջնորդ գերաչնորհ Տ. Սիոն եպիսկոպոս Ադամեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

---

[1] «Էջմիածին», 2012, Դ, էջ 11:

Վստահ ենք, որ մեր Եկեղեցու հանդէպ Ձեր որդիական զգացումները պիտի շարունակուեն արդիւնաւորուել աստուածահաճոյ նորանոր ձեռնարկներով՝ ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու եւ ի բարօրութիւն հաւատաւոր մեր ժողովրդի:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը Իր հանապազ օրհնութեամբ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ եւ Ձեր ընտանիքին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն եւ ամենայն բարիք:

«Արդ՝ որպէս ընկալարուք զՔրիստոս Յիսուս զՏէր, նովին գնացէ՛ք, արմատացեա՛ք՝ եւ շինեալք ի նա, եւ հաստատեալք ի հաւատս, որպէս ուսարուքն՝ առաւելեա՛լք ի նմին գոհութեամբ» (Կող. Բ 7):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 3-ն Ապրիլի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 664

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԿԻՆ ԷՄՄԱ ՍՈՂՈՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԴԵՏՐՈՅԹ, ԱՄՆ

(20 ՕԳՈՍՏՈՍԻ, 2012 Թ.)[1]

Սիրելի՛ տիկին Թապիպեան-Սողոյեան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր, պատուարժան դստերդ:

Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ քաջածանօթ ենք Ձեր եկեղեցանուէր, ազգօգուտ գործունէութեանը: Ձեր լուսահոգի ամուսնու՝ Գալուստ (Քարլ) Սողոյեանի հետ միասին Դուք աստուածահաճոյ բազմաթիւ գործերի հեղինակ դարձաք՝ չանալով առաւել չէն ու պայծառ դարձնել հայ կեանքը Միացեալ Նահանգներում: Ձեր ընտանիքի հետեւողական յանձնառութիւնները ի նպաստ Տիթրոյթի Սուրբ Յովհաննէս եկեղեցու եւ ԱՄՆ Արեւելեան Հայոց Թեմի Առաջնորդարանի՝ արժանի յարգանք ու սէր են բերել Ձեզ ամերիկահայ համայնքում, ինչին ականատես ենք եղել Մենք Հովուապետական Մեր այցելութիւնների ընթացքին:

Ձեր բարեգործութիւնների շղթայի մէջ առանձնակի տեղ ունեն Ձեր իրագործումները Մայր Հայրենիքում: Տարիներ առաջ Դուք սիրով յանձն առաք Վայք քաղաքի Սուրբ Տրդատ եկեղեցու եւ համայնքային կենտրոնի կառուցման հովանաւորութիւնը, աջակցեցիք Հայաստանում եւ Արցախում բարեսիրական ծրագրերի իրականացմանը՝ ի նպաստ հայրենաբնակ եղբայրների ու քոյրերի բարօր կեանքի:

Մեզ համար անկեղծ գոհունակութիւն է, որ, Մեր խնդրանքին ընդառաջ, Ձեր բարեյիշատակ ամուսնու եւ Ձեր հետեւողական աշխատանքով հաւաքած ու կորուստից փրկած ձեռագրերը Դուք նուիրե-

---

[1] «Էջմիածին», 2012, Ը, էջ 3:

ցիք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ ի ցուցադրութիւն մեր հաւատացեալների եւ Սուրբ Էջմիածնի այցելուների:

Հաւատաւոր մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութիւնների բարձր գնահատանքով եւ սիրով ընդառաջ ԱՄՆ Արեւելեան Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին՝չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրն Իր հանապազ օրհնութեամբ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ եւ հաւատաւոր Ձեր ընտանիքի անդամներին՝ պարգեւելով ամենքիդ քաջառողջութիւն եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 20-ն Օգոստոսի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 680

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՀՈՎՀԱՆՆԵՍ ՉԻԼԻՆԳԱՐՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՆԻՍ, ՖՐԱՆՍԻԱ

(6 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2012 Թ.)[1]

Մեծարգո՛յ պրն. Չիլինգիրեան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմ ողջոյնով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ հաւատաւոր մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ:

Հոգու խնդութիւն եւ գոհունակութիւն է Մեզ համար գնահատանքի խօսք ուղղել Ձեզ: Տիրոջ կամքով առիթ ենք ունեցել հանդիպել ու ճանաչել Ձեզ եւ հաղորդ դառնալ Ձեր հայրենասէր ու եկեղեցասէր ոգուն, որ սերնդէսերունդ առաջնորդում է Ձեր հաւատաւոր ընտանիքին: Ուրախ ենք այսօր նշել, որ Դուք կեանքի ողջ ընթացքին ծնողաց օրինակով յետամուտ էք եղել ազգային խնդիրների լուծմանը՝ ճգտելով Ձեր օգտակարութիւնը բերել մեր ժողովրդին՝ որպէս պատմաբան, հրապարակախօս, ազգային ու հասարակական գործիչ:

Առանձնակի գնահատանքով ենք անդրադառնում, որ Դուք Հայրենի մեր երկրի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ հարազատ կապուածութիւնը արտայայտեցիք սրտաբուխ յանձնառութեամբ՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին նուիրելով Ձեր մեծ ազգականի՝ Հայ նշանաւոր բանաստեղծ ու բժիշկ, Յեղասպանութեան նահատակ, լուսահոգի Ռուբէն Սեւակի արխիւային նիւթերը եւ Ձեր նկարների արժէքաւոր հաւաքածուն: Ուրախ ենք մեծապէս, որ Մայր Աթոռում երջանկայիշատակ Ղազար Ա Ջահկեցի կաթողիկոսի կողմից 18-րդ դարում կառուցուած պատմական չէնքում չուտով իր դռները պիտի բացի Ձեր աջակցութեամբ նորոգուած ու կահաւորուած՝ Ռուբէն Սե-

[1] «Էջմիածին», 2012, Թ, էջ 4:

ւակի անուան թանգարանը, որը, Հայոց Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին ընդառաջ, յարգանքի յուրօրինակ տուրք է նահատակ հայորդուն: Թանգարանը Սուրբ Էջմիածնի հազարաւոր այցելուներին նաեւ հնարաւորութիւն պիտի ընձեռի ծանօթանալու Հայոց ցեղասպանութեան տարիներին մեր ժողովրդի կրած տառապանքներին ու փորձութիւններին, որպէսզի համընդհանուր դատապարտման արժանանան նմանօրինակ ոճիրները ու առհասարակ բացառուեն մարդկութեան կեանքից:

Բարձր գնահատելով Ձեր եկեղեցանուէր բարի վաստակը եւ ծառայութիւնները մեր ժողովրդին եւ սիրով ընդառաջելով Ֆրանսիայի Հայոց թեմի առաջնորդ եւ Արեւմտեան Եւրոպայի հայրապետական պատուիրակ գերաշնորհ Տ. Նորվան արքեպիսկոպոս Զաքարեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով երկնային օրհնութիւն, չնորհ ու ամենայն բարիք:

Աստուած յուսոյ՝ լի՛ արասցէ զՁեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելո՛ւլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ (Հռոմ. ԺԵ 13):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 6-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 687

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՀԱԿՈԲ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆԳՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԵՐԵՎԱՆ

(19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2012 Թ.)[1]

Համայն Հայութեան նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ եկեղեցասէր ու ազգասէր հայորդուդ, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները: Գոհունակութիւն էր Մեզ համար տեղեկանալ Գեղարքունեաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մարկոս եպիսկոպոս Յովհաննիսեանից, որ Դուք եկեղեցաշէն նախաձեռնութիւններով ներդրում էք բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու տէրունապատուէր առաքելութեանը, ինչը խօսուն վկայութիւն է մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր նուիրումի ու որդիական հաւատարմութեան: Ձեր սրտաբուխ բարերարութեամբ է հիմնովին վերակառուցուել տիրախնամ թեմի Ծովինար համայնքի Սուրբ Աստուածածին եկեղեցին, բարեկարգուել եկեղեցուն կից տարածքը, ինչպէս նաեւ հայորդուդ ազնիւ նուիրատուութիւններով են կատարուել առաջնորդարանի ամրակայման աշխատանքները, իրագործուել ծուխի կիրակնօրեայ դպրոցի ծրագրերը: Մենք վստահ ենք, որ վերանորոգուած Սուրբ Աստուածածին եկեղեցին նոր խթան պիտի լինի Ձեր հայրենի Ծովինար համայնքի բնակիչների հոգեւոր վերազարթօնքի համար, ովքեր իրենց հոգիներում ամրապնդելով լոյս հաւատքը, սէրն ու հաւատարմութիւնը առ մեր Սուրբ Եկեղեցին եւ նախանձախնդրութիւնը քրիստոնէական մեր սրբութիւնների նկատմամբ՝ առ Բարձրեալն Աստուած ուղղուած աղօթքներում պիտի յիշեն նաեւ Ձեր անունը եւ բարի գործը: Յարգարժան տիա՛ր Յակոբեան, Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով, ընդառաջելով Գեղարքունեաց

[1] «Էջմիածին», 2012, Թ, էջ 5:

Թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Մարկոս եպիսկոպոս Յովհաննիսեանի խնդրանքին, չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Մենք հաւատում ենք, որ նոյն քաջեռանդութեամբ Դուք պիտի շարունակէք Ձեր հաւատքը վկայել ազնիւ կեանքով եւ բարի գործերով՝ որպէս արժանաւոր զաւակը մեր Մայր Եկեղեցու: Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը Սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ չնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին կեանքի քաջառողջ ու արեւշող բազում օրեր եւ Ձեր բոլոր առաքինի ձեռնարկումները պսակի մշտանորոգ յաջողութիւններով:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 19-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 688

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՁԱՎԵՆ ԵՒ ՍՈՆՅԱ ԱԳԵԱՆՆԵՐԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԿԱԼԻՖՈՌՆԻԱ, ԱՄՆ

(5 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2012 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում եւ գնահատանքի խօսքը՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարեպաշտ, արժանաւոր զաւակներիդ: ԱՄՆ Արեւմտեան Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանից ուրախութեամբ տեղեկացանք ազգանպաստ ու եկեղեցանուէր Ձեր ընթացքի եւ գործոց մասին, որոնք բարեզարդում են Ձեր կեանքի ճանապարհը եւ յարգանք ու պատիւ բերում Ձեր անուանը: Հայրապետիս համար գոհունակութիւն է անդրադառնալ, որ Դուք՝ որպէս ազնիւ բարեգործներ մեր Սուրբ Եկեղեցու, երկար տարիներ Ձեր աւանդն էք բերում ԱՄՆ Արեւմտեան Հայոց թեմի պայծառութեանը, սատարում հոգեւոր եւ ազգապահպան ծրագրերի իրագործմանը: Հաւատաւոր հոգով եւ նախանձախնդրօրէն Դուք առատաձեռն սրտաբուխ մասնակցութիւն էք բերել առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեաց Մայր տաճարի կառուցման գործում՝ ստանձնելով նաեւ հովանաւորութիւնը եկեղեցու ժողովասրահի: Ձեր հաւատքի եւ եկեղեցասիրութեան վկայութիւնն է նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին մատուցած ընծայաբերումը, որ կատարեցիք որդիական սիրով եւ մեր ժողովրդի կեանքում մեր նուիրական հոգեւոր կենտրոնի առաքելութեան կարեւորումով: Գոհութիւն ենք մատուցում Բարձրեալին, որ, չնորհիւ Ձեզ պէս նուիրեալ ու յանձնառու հայորդիների ազնիւ ներդրումների, ջանքերի ու անսակարկ ծառայութիւնների, արգասաւորուում է մեր Սուրբ Եկեղեցու տիրաւանդ առաքելութիւնը եւ այսօր նոր արդիւնքներով քաղցր պտուղներ է պարգեւում մեր կեանքին: Ձեր

---

[1] «Էջմիածին», 2012, Ժ, էջ 5:

եկեղեցասէր ու ազգասէր ոգու եւ մեր Եկեղեցուն ու ժողովրդին բերած տարիների Ձեր վաստակի բարձր գնահատանքով, ընդառաջ ԱՄՆ Արեւմտեան Հայոց թեմի առաջնորդի խնդրանքին՝ չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած, որ բարեխօսութեամբ երանեալ Սրբոց Ղեւոնդեանց Իր Ամենախնամ Աչքի ներքոյ պահի ու պահպանի Ձեզ, հանապազ օրհնութիւն ու երջանկութիւն բաշխի ընտանեկան Ձեր յարկից ներս՝ չնորհելով նորանոր յաջողութիւններ ազգանուէր ու եկեղեցաչէն Ձեր բարի գործերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 5-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 691

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՆՀԱՆՆԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԽԱՉԱՏՈՒՐ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԿԻԵՎ, ՈՒԿՐԱԻՆԱ

(26 ՄԱՐՏԻ, 2013 Թ.)[1]

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգո՛յ պրն. Խաչատրեան,

Արմաւիրի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիօն եպիսկոպոս Ադամեանի միջոցով տեղեակ ենք Ձեր կեանքի ընթացքին, յանձնառութիւններին ու ձեռքբերումներին: Բարձրագոյն կրթութիւն ստանալով Ուկրաինայում՝ Դուք նուիրուեցիք գիտական ու մանկավարժական գործունէութեանը եւ ազնիւ ու անյոգնաբեկ աշխատանքով արձանագրեցիք գովարժան յաջողութիւններ: Ձեր բազմաթիւ գիտական աշխատութիւնները, մեթոդական ձեռնարկներն ու յոդուածները ծանօթ են դարձրել Ձեր անունը Ուկրաինայում եւ արժանացրել Ձեզ տեղական ու միջազգային բազմաթիւ պարգեւների:

Այսօր ուրախ առիթն ունենք անդրադառնալու Ձեր եկեղեցանպաստ արգասաւոր ծառայութիւններին: Դուք ազնիւ հոգով նախաձեռնեցիք Արմաւիրի Թեմի Բերքաշատ գիւղի Սուրբ Խաչ եկեղեցու կառուցումը՝ աւանդ բերելով հայրենի մեր երկրում հոգեւոր կեանքի վերազարթօնքին: Գոհութիւն Աստուծոյ, որ Ձեզ պէս հաւատաւոր հայորդիների սրտաբուխ գործերով զօրանում ու առաւել պայծառանում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին՝ իրականացնելով իր սրբազան առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում:

Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով եւ սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու

---

[1] «Էջմիածին», 2013, Գ, էջ 8:

Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Վստահ ենք, որ մեր Սուրբ Եկեղեցու նկատմամբ Ձեր որդիական զգացումները պիտի չարունակուեն արդիւնաւորուել աստուածահաճոյ նորանոր ձեռնարկումներով՝ ի շահ սիրեցեալ մեր ժողովրդի եւ ի զօրացումն համազգային մեր կեանքի:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը չնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին կեանքի քաջառողջ ու արեւշող բազում օրեր եւ Ձեր բոլոր բարի եւ առաքինի նախաձեռնութիւնները պսակի յարանոր յաջողութիւններով:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Մարիտի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 717

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՆՇԱՆՆԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՀԱՅԿ ՄԱՂԱՔԵԼՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժա՛ն պրն. Մաղաքելեան:

Այսօր գոհունակ սրտով առիթն ունենք բարձրօրէն գնահատելու մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կեանքում ունեցած Ձեր գովելի վաստակը: Տարիներ շարունակ Դուք աջակից էք մեր եկեղեցականներին եւ Ձեր կարողութիւններն ի սպաս էք բերում ՌԴ հիւսիսային շրջաններում ապրող մեր ժողովրդի զաւակների ազգային ու եկեղեցական կեանքի առաւել արդիւնաւոր կազմակերպմանը: Ձեր օգտաշատ ձեռնարկներն ու անկեղծ սրտից բխած բարեգործութիւնները կարեւոր դերակատարութիւն ունեն նաեւ հայրենի մեր երկրի առողջապահական եւ տնտեսական ոլորտների զարգացման գործում: Լինելով «Հայաստան» համահայկական հիմնադրամի խոշոր նուիրատուների շարքում՝ Դուք կարեւոր աւանդ էք բերել հայրենաշինութեանն ուղղուած համազգային ծրագրերի իրականացմանը՝ յանուն մեր ժողովրդի կեանքի բարգաւաճման ու առաջընթացի:

Հոգու խնդութիւն է Մեզ համար տեսնել հայորդուդ սիրահոժար յանձնառութեամբ Նորադուզում իրականացուող եկեղեցաշինութիւնը, որ Տիրոջ կամքով աւարտին պիտի հասնի՝ իր հովանու ներքոյ համախմբելով մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին: Ուրախութեամբ ենք գալիս հաստատելու, որ Ձեր անունը մշտապէս պիտի յիշուի նաեւ իբրեւ Սուրբ Էջմիածնի բարերար, ով իր սրտաբուխ ընծայաբերումով

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 33:

իրագործեց վերանորոգութիւնը «Հայկաշէն» կաթողիկոսական ամառանոցի:

Այսօր բարեպատեհ առիթն ունենք անդրադառնալու նաեւ Ձեր ինքնաբուխ յանձնառութեանը՝ աւանդ բերելու Ռուսաստանի Դաշնութիւնում մեր Սուրբ Եկեղեցու գործունէութեան առաւել զօրացմանն ու արգասաւորմանը, որով ազնիւ նուիրատուութեամբ Ձեր մասնակցութիւնն էք բերում Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ եկեղեցական համալիրի կառուցման մեծարժէք աշխատանքին: Առ Աստուած փառաբանական աղօթքն է Մեր հոգում, որ ազգս հայոց օրհնեալ է Ձեզ պէս հաւատաւոր, ազգասէր, եկեղեցասէր ու էջմիածնասէր զաւակներով:

Մեծարգո՛յ պրն. Մաղաքելեան, բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմարդիւն ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն ու ժողովրդին եւ՛ սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի բարեջան առաջնորդ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը չնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջ ու արեւշող կեանքի բազում օրեր եւ մշտանորոգ յաջողութիւններով պսակի Ձեր ձեռնարկումները՝ ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու եւ ի բարօրութիւն Քրիստոսասէր մեր ժողովրդի:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 783

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՎԱՐԴԱՆ ՎԱՐԴԱՆՈՎԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժա՛ն պրն. Վարդանով:

Ուրախութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ Ձեր ազգօգուտ եւ եկեղեցանուէր գործունէութիւնը Բարձրեալի ամենախնամ օրհնութեամբ արգասաւորուած է բարի արդիւնքներով: Դուք տարիներ Ձեր նուիրեալ ջանքերն էք բերում ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու՝ մշտապէս սատար լինելով Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաքելութեանը:

Ազգասէր Ձեր ոգու անկեղծ մղումով Դուք ստանձնեցիք կրաս-նողարում հայկական դպրոց կառուցելու օգտաշատ աշխատանքը, որով անգնահատելի ծառայութիւն մատուցեցիք մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին՝ սատար կանգնելով մեր լեզուի, մշակոյթի, գիր-գրականութեան պահպանման եւ մատաղ սերնդին հայրենի մեր արժէքների ու ազգային սրբութիւնների ոգով դաստիարակելու գովելի աշխատանքին:

Մեր ժողովրդին որդիաբար ծառայելու եւ հայորդեաց ազգային-եկեղեցական կեանքի չինութեանն ու պայծառութեանը Ձեր աւանդն առաւելաբար բերելու ազնիւ նուիրումով Դուք մեծագումար նուիրատուութեամբ մասնակիցը եղաք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ եկեղեցական համալիրի կառուցման աստուածահաճոյ գործին:

Բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմարդիւն ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն եւ հաւատաւոր մեր ժողովրդին՝

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 35:

սիրով ընդառաջ տիրախնամ թեմի բարեջան առաջնորդ գերաչնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնիւ խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ, մեծարգո՛յ պրն. Վարդանով, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Աղօթում ենք, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով ու ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր՝ շարունակելու Ձեր արդիւնաչատ ծառայութիւնը մեր ժողովրդին ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինեն ընտանեկան Ձեր յարկից եւ մեր ժողովրդի կեանքից:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 784

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ԱԴԻԲԵԿՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Փառք ենք վերառաքում առ Ամենակալն Աստուած, որ ամենուր մեր ժողովրդի զաւակաց հոգիներում զօրեղ է հաւատը եւ մշտարթուն սէրը՝ հանդէպ ազգային ու եկեղեցական մեր աւանդներն ու սրբութիւնները:

Բարձրեալ Տիրոջ կամքով առիթն ենք ունեցել ճանաչելու հաւատաւոր հայորդուդ եւ Ձեր գովարժան գործունէութիւնը: Ձեր նուիրեալ եւ հաւատաւոր ընթացքը զարդարեալ է Հայրենիքի եւ մեր ժողովրդի հանդէպ սիրով իրագործուած աստուածահաճոյ ձեռնարկներով: «Հայաստան» համահայկական հիմնադրամի միջոցով Դուք տարիներ շարունակ ծառայում էք հայրենաշինութեան գնահատարժան գործին՝ յանուն Հայաստանում եւ Արցախում կեանքի բարգաւաճման ու առաջընթացի: Դուք գովարժան աւանդ էք բերել նաեւ Հայրենիքում հոգեւոր կեանքի պայծառութեանը՝ սրտաբուխ յանձնառութեամբ Ձեր վաստակը ի սպաս դնելով Մասիսում Սուրբ Գեւորգ եկեղեցու կառուցմանը:

Ուրախ ենք մեծապէս, որ Դուք ազնիւ ջանադրութեամբ արդիւնաւոր նպաստ էք բերում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի գործունէութեանը: Մշտապէս զօրակից լինելով թեմակալ առաջնորդին ու հոգեւոր դասին՝ իրենց առաքելութեան մէջ՝ Դուք սիրով յանձն առաք նաեւ ազնիւ ընծայաբերումով մասնակից լինել Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցման աստուածահաճոյ գործին: Գոհութեան աղօթքն է Մեր հոգում, որ Տիրոջ օրհնութեամբ եւ հաւատաւոր Մեր զաւակներիդ ներդրած անսպառ ջանքերով ու պատրաստակամ զոհողութիւններով դէպի երկինք խո-

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 9:

յացաւ հայկական ճարտարապետութեան աւանդներով կառուցուած եկեղեցին, եւ այսօր Տիրոջ ողորմութեամբ իր յարկի ներքոյ է միաւորում բարեպաշտ մեր ժողովրդին:

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր վաստակը՝ սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի բարեջան առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Վստահ ենք, որ նոյն եկեղեցասիրութեամբ ու քաջեռանդ ոգով պիտի շարունակէք Ձեր հաւատքը վկայել Ձեր ազնիւ ու բարեպաշտ կեանքով եւ նորանոր առաքինի իրագործումներով:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը չնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին կեանքի քաջառողջ ու արեւշող բազում օրեր, ամենայն բարիք եւ նոր յաջողութիւններ:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 766

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԷԴԳԱՐ ԱՐԱՄՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Համայն հայութեան սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքները:

Սիրելի՛ պրն. Արամեան,

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով քաջատեղեակ ենք մեր ժողովրդի նուիրեալ զաւակիդ եռանդուն եւ նախանձախնդիր գործունէութեանը:

Այսօր գոհունակութիւն է Հայրապետիս համար անդրադառնալ Հայրենիքի յանդէպ սիրով իրագործած Ձեր հայրենանպաստ ձեռնարկներին: Դուք կարեւոր մասնակցութիւն էք բերել Արցախում իրականացուող բարեսիրական ծրագրերին, աջակցել Հայոց բանակի զօրացմանը՝ կարեւոր աւանդ մատուցելով մեր երկրի ապահովութեան ու առաջընթացի սուրբ գործին:

Ազնիւ ջանադրութեամբ Դուք գովարժան նպաստ էք բերում նաեւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի գործունէութեանը եւ ռուսահայ համայնքի բարօրութեանը: Ձեր հաւատն առ Աստուած եւ որդիական սէրը առ մեր Սուրբ Եկեղեցին արտայայտեցիք նաեւ տիրախնամ թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցմանը բերած մեծագումար օժանդակութեամբ՝ Ձեր անունը դասելով Ռուսաստանի Հայոց թեմի բարերարների պատուաւոր շարքում:

Նախանձախնդիր ոգով Դուք դրսեւորել էք նաեւ Ձեր որդիական սէրն ու նուիրումը հանդէպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ սրտաբուխ ցանկութեամբ Ձեր օժանդակութիւնը բերելով Մայր Աթոռի

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 11:

գործունէութեանը: Ուրախ է Մեր Հոգին, որ բարին արարելու կամքը մշտարթուն է հաւատաւոր Մեր զաւակների հոգիներում, ովքեր իրենց անձնական յաջողութիւններն ի սպաս են բերում մեր Եկեղեցու պայծառութեանն ու մեր ժողովրդի բարօրութեանը:

Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Մաղթում ենք, որ նոյն կորովով ու եռանդով եւ նորոգ քաջալերութեամբ չարունակէք Ձեր ազգանպաստ ու հայրենանուէր գործունէութիւնը: Աղօթում ենք, որ Ամենողորմ Տէրն իր ամենազօր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ պարգեւի կեանքի արեւշատ տարիներ, գործոց մշտակայ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

«Առաւե՛լ լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ. Գիտասջի՛ք՝ զի վաստակքն ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեառն» (Ա Կորնթ 15.58):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 768

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՎԱՐԴԳԵՍ ԱՐՇՐՈՒՆՈՒՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մեծարգո՛յ պրն. Արծրունի:

Ուրախութիւն է Հայրապետիս համար Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքը յղել Ձեզ՝ սիրելի զաւակիդ հաւատաւոր մեր ժողովիդի:

Ճանաչում ենք Ձեզ տակաւին Հայաստանում Ձեր գործունէութեան տարիներից: Երկար տարիներ վարչական պատասխանատու պաշտօններ վարելով կառավարութեան կազմում՝ Դուք արդիւնաւորութեամբ նպաստեցիք Հայաստանում քաղաքաշինութեան բնագաւառի զարգացմանը եւ մեր Երկրի առաջընթացին: 88-եան աւերիչ երկրաշարժի օրերին՝ ի նպաստ երկրաշարժից տուժուած հայորդիներին անհրաժեշտ օգնութիւն ցուցաբերելու գործի, Դուք ներդրեցիք Ձեր փորձառութիւնն ու մասնագիտական ողջ կարողութիւնները՝ անյոգնաբանեկ աշխատանքով աւանդ բերելով մեծ աղետի հետեւանքների վերացմանը:

Այսօր առիթ ունենք գնահատանքով անդրադառնալու, որ, բազմաբեղուն գործունէութիւն ծաւալելով Ռուսաստանի Դաշնութիւնում, Դուք բարեսիրական տարբեր ծրագրերի իրականացումով չարունակում էք Ձեր օժանդակութիւնը մեր Հայրենիքին՝ յանուն մեր ժողովրդի առաւել բարօր ու բարգաւաճ կեանքի:

Դուք գովարաժան ծառայութիւն էք մատուցում նաեւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց տիրախնամ թեմին, յետամուտ լինելով, որ մեր Սուրբ եկեղեցու առաջնորդութեամբ անխախտ լինի Ռուսաստանում բնակեալ հայորդեաց հոգեւոր ու ազգային կեանքը՝ հաստատուած մեր հայրերի հաւատի ամուր վէմի վրա: Մեզ համար գոհունակութիւն է, որ Ձեր հաւատքն առ Աստուած եւ նուիրումը առ

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 13:

մեր Սուրբ Եկեղեցին արտայայտեցիք նաեւ տիրախնամ թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը բերած մեծագումար նուիրատուութեամբ: Փառաբանական աղօթքն է Մեր հոգում, որ առ Աստուած ենք բարձրացնում Ձեր եկեղեցասիրութեան ու ազգասիրութեան համար:

Ի գնահատութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր օգտաշատ ծառայութեանց, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Միածնի Իմման Սուրբ Սեղանի առջեւ Հայրապետական Մեր աղօթքով ի խորոց սրտի Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ենք հայցում Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին եւ մաղթում նորանոր յաջողութիւններ Ձեր եկեղեցաչէն ու ազգօգուտ գործերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 769

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԿԱՐԵՆ ԲԱՂԴԱՍԱՐՈՎԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ բարեմաղթանքները:

Մեծարգո՛յ պրն. Բաղդասարով:

Այսօր առիթ ունենք հոգու խնդութեամբ անդրադառնալու Հայրենի մեր Երկրի զօրացմանն ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանը մասնակցութիւն բերելու Ձեր ազնիւ պատրաստակամութեանը:

Երկար տարիներ ապրելով ու գործունէութիւն ծաւալելով Ռուսաստանի Դաշնութիւնում՝ Դուք Ձեր հոգում անխախտ էք պահել որդիական կապուածութիւնը ազգային ու հայրենական մեր արժէքներին՝ մշտապէս ջանալով ծառայութիւններ մատուցել ի նպաստ հայրենակերտումի սուրբ գործի: Ուրախ ենք նշելու, որ Դուք բարեսիրական տարբեր ծրագրերով գնահատարժան աշակցութիւն էք բերում հայրենաբնակ ու արցախաբնակ մեր ժողովրդին՝ յաղթահարելու առկայ տնտեսական դժուարութիւնները եւ կառուցելու իր նոր, բարգաւաճ կեանքը:

Եկեղեցանուէր Ձեր ծառայութիւնը եւս Տիրոջ օրհնութեան ներքոյ արգասաւորուած է բարի արդիւնքներով: Դուք սրտաբուխ բարեգործութեամբ Ձեր արդար վաստակը ներդրեցիք ի սպաս Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցման, որը նոր, պանծալի խորհրդանիշ է ռուսաստանաբնակ Մեր զաւակների հաւատի արթնութեան, եկեղեցասիրութեան ու ազգասիրութեան:

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 15:

Գոհունակ սրտով գնահատելով Ձեր ծառայութիւնները մեր ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն եւ սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի բարեջան առաջնորդ գերաչնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Մաղթում ենք, որ չնորհեալ պարգեւը Ձեզ համար դառնայ խանդավառութեան նոր առիթ, որպէսզի Դուք չարունակէք օրինակելի նուիրումով ու հաւատարմութեամբ Ձեր բարի ծառայութիւնը ի բարօրութիւն մեր ժողովրդի եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Տիրոջ ամենառատ չնորհները Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ մաղթելով կենաց քաջառողջութիւն եւ առաքինազարդ գործոց յարանոր յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 770

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԳԵՐՄԱՆ ԳՐԵՖԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Յարգարժա՛ն պրն. Գերման Գրեֆ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ ռուս ժողովրդի արժանաւոր զաւակիդ, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքները:

Մեր ժողովուրդը ճանաչում է Ձեզ ՌԴ պետական կեանքում ստանձնած Ձեր կարեւոր յանձնառութիւններով: Դուք տարիներ շարունակ պատասխանատու պաշտօններում կարեւոր ջանքեր ներդրեցիք բարեկամ երկրի՝ Ռուսաստանի Դաշնութեան զօրացմանն ու առաջընթացին, որտեղ իրենց ազատ կեանքն են կառուցում նաեւ մեր ժողովրդի զաւակները:

Այսօր ուրախ ենք Մեր բարձր գնահատանքը բերել Ձեզ՝ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցմանը բերած Ձեր մեծ աջակցութեան համար: Ձեր բարեգործութիւնը բարի վկայութիւն է Ձեր հաւատի ու աստուածասիրութեան, նաեւ մեր ժողովրդի եւ մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ ազնիւ ու ջերմ վերաբերմունքի: Այսօր առ Աստուած փառաբանական աղօթքն է համայն հայութեան չուրթերին, որ ՌԴ մայրաքաղաքում իր օրհնաբաշխ դռներն է բացում չքեղակառոյց եկեղեցին՝ տարածելու քրիստոնէական լոյսը եւ հոգեւոր սնունդ մատուցելու բարեպաշտ հաւատացեալներին: Հաւատաւոր Մեր զաւակները մշտապէս երախտագիտութեամբ են յիշելու Ձեզ եւ աղօթքներ ու բարեմաղթանքներ ուղղելու առ Տէրը Երկնաւոր Ձեր եւ Ձեր ընտանեաց համար:

Ի գնահատութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ազնիւ ծառայութեանց, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 17:

եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած իր օրհնութեան ներքոյ նորանոր յաջողութիւններ պարգեւի Ձեզ՝ ի չինութիւն Ռուսիոյ օրհնեալ երկրի եւ ի բարօրութիւն աստուածասէր ռուս ժողովրդի:

Թող ընտանեկան Ձեր յարկը չնորհընկալը լինի երկնապարգեւ չնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 770

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՌՈՒԲԵՆ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մեծայարգո՛ պրն. Գրիգորեան:

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Անճնապէս ճանաչում ենք հաւատաւոր հայորդուդ եւ այսօր ուրախ առիթն ունենք գնահատանքի Մեր խօսքը բերել Ձեզ՝ բարեպաշտ մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր արդիւնաւոր ծառայութիւնների համար:

Գովելի է Ձեր վաստակը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի կեանքում, որի վերաբերեալ բազմիցս բարի վկայութիւններ ենք լսել թեմակալ առաջնորդ գերաչնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից: Դուք կարեւոր յանձնառութիւն էք ստանձնել Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցման աշխատանքներում՝ աստուածահաճոյ այս ծրագրի իրականացմանն ի սպաս բերելով Ձեր ժամանակը, ազնիւ ջանքերն ու կարողութիւնները: Եկեղեցանուէր հայորդիներիդ աստուածահաճոյ տեսիլքով ու յանձնառութիւններով կառուցուած չքեղատես եկեղեցին նոր շունչ պիտի հաղորդի թեմական կեանքին՝ ծառայելով բարեպաշտ Մեր զաւակների հաւատի զօրացմանը:

Ձեր հաւատաւոր ոգու, ազգասիրութեան ու հայրենասիրութեան դրսեւորումն է նաեւ Արմաւիրի Թեմի Սուրբ Գեւորգ Եկեղեցու վերանորոգութիւնը, որ իրականացրեցիք ինքնաբուխ նուիրումով՝ մեծ աւանդ բերելով նաեւ Հայրենիքում հոգեւոր կեանքի վերազարթօնքին: Գոհութիւն եւ փառք ենք մատուցում Աստծուն, որ հայորդեաց

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 19:

հոգիներում յաւելում է «գհաւատ, գյոյս եւ գսէր»՝ առաջնորդելով առաքինի գործերի ազգային մեր կեանքից ներս: Դուք, արդարեւ, մեծ երախտիք ունեք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու լուսաւոր անդաստանում:

Բարձր գնահատելով Ձեր ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն եւ սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին, Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը հաւատոյ մեր հայր Սուրբ Գրիգոր Լուսաւորչի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն գործերի յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած իր սիրոյ ու խնամքի մէջ պահի մեր Սուրբ Եկեղեցին, հանապազ օրհնի եւ Իր բազում պարգեւներով առատապէս չնորհազարդի մեր Եկեղեցու բարեպաշտ բոլոր զաւակներին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 772

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ԳԵՎՈՐԳՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Գոհունակ սրտով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական օրհնութիւն ենք բերում եւ գնահատանքի Մեր խօսքը՝ մեր Սուրբ Եկեղեցու բարեպաշտ զաւակիդ:

Մեծարգոյ պրն. Գեւորգեան, ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ ծանօթ ենք Ձեր բազմաբեղուն գործունէութեանը: Ուրախ ենք մեծապէս, որ Դուք արդիւնաւորութեամբ ծառայում էք հայ ոսկերչական արուեստի զարգացմանը՝ արժանագրելով գնահատելի յաջողութիւններ:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ Դուք տարիներ շարունակ ազնիւ յանձնառութիւններով եւ ընծայաբերումներով օգտաշատ ծառայութիւն էք բերում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմին, որպեսզի առաւել կազմակերպուած լինի Ռուսաստանում բնակեալ հայորդեաց համայնքային կեանքը, զօրաւոր՝ նրանց ազգանուէր եւ եկեղեցասէր ոգին: Այս հաւատքով Դուք ազնիւ մասնակցութիւն բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցմանը, որը նոր՝ լուսաւոր հանգրուան է թեմի պատմութեան մէջ եւ առաւել արդիւնաւոր պիտի դարձնի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու սպասաւորութիւնը հաւատաւոր իր հօտին:

Մենք առիթն ենք ունեցել ականատես լինելու նաեւ Ձեր հոգու ջերմ սիրուն ու աննուազ նախանձախնդրութեանը՝ հանդէպ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որի պայծառութեանը աւանդ բերելը համարում էք Ձեր հոգու պարտքը: Ձեր աշխատանքով ու ազնիւ հովանաւորութեամբ պատրաստուած Հայրապետական գաւազանը՝ որպէս թանգարանային արժէք, սերնդէ սերունդ պիտի պատմի Ձեր չնորհի ու

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 21:

վարպետութեան, նաեւ էջմիածնասիրութեան ու եկեղեցասիրութեան մասին:

Մեր Սուրբ Եկեղեցուն ու հարազատ ժողովրդին մատուցած գովարժան ծառայութեանց բարձր գնահատանքով եւ սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը Իր հանապազ օրհնութեամբ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ եւ հաւատաւոր Ձեր ընտանիքի անդամներին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, երջանկութիւն եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 773

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ՁԱՔԱՐՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆԴՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգո՛յ պրն. Ձաքարեան:

Ուրախ ենք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից տեղեկանալ ազգային ու եկեղեցական մեր կեանքում Ձեր աւանդի մասին: Ապրելով ու գործունէութիւն ծաւալելով Ռուսաստանի Դաշնութիւնում, Դուք Մայր Հայրենիքի հանդէպ անխախտ նուիրումը դարձրեցիք խրախոյս Ձեզ համար՝ գովարժան վաստակ բերելով Հայաստանի տնտեսութեան առաջընթացին ու մեր ժողովրդի բարօրութեանը:

Մեզ համար գոհունակութիւն է նաեւ գնահատանքի Մեր խօսքը բերել Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութիւնների համար: Դուք սրտաբուխ նուիրատուութեամբ աջակցութիւնն բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը: Մենք փառք ենք տալիս Աստծուն, որ օրհնեց մեր ժողովրդի ջանքերը, սէրն ու նուիրումը՝ միաբան սրտով աւարտին հասցնելու չքեղատես սրբավայրի կառուցումը: Հայորդիներիդ հաւատի ու զոհողութեան ոգու չնորհիւ եկեղեցին իր չնորհաբաշխ դռներն է բացում Մեր զաւակների առջեւ՝ աղօթք բարձրացնելու առ Աստուած եւ արժանանանալու երկնապարգեւ չնորհների:

Բարձր գնահատելով Ձեր վաստակը ազգային ու եկեղեցական մեր կեանքում եւ սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին,

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 23:

Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ քաջառողջ ու եռանդուն եւ շարունակէք Ձեր գնահատելի աւանդը բերել մեր Սուրբ Եկեղեցու չինութեանն ու պայծառութեանը:

Թող ընտանեկան Ձեր յարկը չնորհընկալը լինի Բարձրեալի չնորհների եւ ամենախնամ օրհնութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 775

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՀՈՎՆԱՆ ԼԱԼԱՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ, մեծարգո՛յ պրն. Լալայեան, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով ծանօթ ենք Ձեր երկարամեայ գործունէութեանը, որ պատիւ է բերում Ձեզ՝ որպէս ազգանուէր ու եկեղեցասէր հայորդի: Գնահատարժան է, որ Ռուսաստանում Ձեր գործունէութեանը զուգընթաց Դուք տնտեսական ծրագրեր էք իրականացրել նաեւ Հայրենի մեր երկրում՝ նպաստելով մեր երկրի զօրացմանն ու առաջընթացին:

Ուրախ ենք նաեւ անդրադառնալու, որ Դուք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմին բերած Ձեր աջակցութեամբ կարելին ի սպաս էք դրել մեր Սուրբ Եկեղեցու չնորհակալ առաքելութեան իրականացմանը՝ ի բարօրութիւն ռուսահայ Մեր զաւակների: Լուսահոգի Ձեր ծնողի օրինակով Դուք հոգու ողջ նուիրումով չինարարի Ձեր մասնագիտական կարողութիւնները եւ նիւթական ընծայաբերումները ծառայեցնում էք յանուն Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցման աստուածահաճոյ գործի: Առ Աստուած փառաբանութիւնն է Մեր հոգում, որ, հակառակ ժամանակի բոլոր դժուարութիւնների, հայորդիներիդ հաւատի ու զոհողութեան ոգու չնորհիւ կառուցուեց սուրբ եկեղեցին՝ սերնդէ- սերունդ իր յարկերի ներքոյ միաւորելու ազգիս զաւակներին՝ աղօթքներ ու չարականներ հնչեցնելու եւ Տիրոջ օրհնութեանն ու չնորհներին արժանանալու:

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 25:

Մեր Սուրբ Եկեղեցուն ու հարազատ ժողովրդին մատուցած գովարժան ծառայութեանց բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ՝ յետայսու եւս չարունակելու Ձեր ծառայութիւնը մեր Հայրենիքին, հաւատաւոր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յարանորոգ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բոլոր գործերին ու ծրագրերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 776

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՍԱՄՎԵԼ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Համայն հայութեան նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը, սէրն ու ամենաջերմ բարեմաղթանքները:

Հայրապետիս համար մշտապէս գոհունակութեան առիթ է անդրադառնալու մեր ժողովրդի պատուարժան զաւակների նուիրեալ գործունէութեանը, ովքեր աստուածահաճոյ, ազնիւ գործերով բարեզարդում ու շէնացնում են ազգային մեր կեանքը: Այսօր, ուրախ սրտով բարձր գնահատանքի Մեր խօսքն ենք ուղղում Ձեզ, սիրելի պրն. Կարապետեան, որ տարիներ շարունակ Ձեր հոգու ազնիւ մղումով ծառայում էք մեր Հայրենիքի զօրացմանը, մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի յաւէտ պայծառութեանը:

Համայն հայութիւնը քաջատեղեակ է Հայաստանին ու Արցախին բերած Ձեր շարունակական օժանդակութեանը: Ազգի ու հայրենիքի հանդէպ որդիական սիրոյ ու խոնարհութեան վեհ զգացումով Դուք հոգի, ջանք ու եռանդ էք բերում հայրենաշինութեան սուրբ գործին՝ մեր ժողովրդի առաջընթացի ու առաւել պայծառ գալիքի տեսլականով: Հայրապետիս համար ուրախութիւն է հաստատել, որ բարեսիրական բեղուն գործունէութեամբ Դուք իրագործում էք մերձաւորին, նեղեալին ու կարօտեալին օգնելու աստուածային պատուիրանը՝ Տիրոջը հաճելի գործերով կեանքը իմաստաւորելու բարի օրինակ մատուցելով սերունդներին: Կրթական, առողջապահական, տնտեսական, սոցիալական եւ բազմաթիւ այլ ոլորտներում Ձեր բարեգործութիւննե-

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 27:

րի արգասիքները յոյս ու լաւատեսութիւն են պարգեւում դժուարութիւնների մէջ ապրող մեր ժողովրդի զաւակներին:

Ձեր անունը լուսաւոր տառերով ամրագրուած է նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պատմութեան մէջ: Մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելութեանը սատար լինելու ազնիւ պատրաստակամութիւնը առաջնորդեց Ձեզ ստանձնելու Վեհարանի պատմական չէնքի նորոգութեան ու նոր մասնաշէնքի կառուցման հովանաւորութիւնը՝ Ձեր անունը դասելով Մայր Աթոռիս նուիրեալ՝ ազգային մեծ բարերարների շարքում: Պատուարժան հայորդուդ աստուածահաճոյ յանձնառութեան չնորհիւ առաւել բարեզարդուում, զօրանում ու պայծառանում է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Քրիստոսահիմն Սուրբ Էջմիածինը՝ ի փառս Աստուծոյ եւ ի բարօրութիւն մեր ժողովրդի:

Գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ նաեւ, որ իշխանական մեծագումար նուիրատուութեամբ Դուք հնարաւոր դարձրեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցման նուիրական գործը՝ երախտարժան ծառայութիւն մատուցելով Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմին եւ Ռուսաստանում բնակեալ մեր բարեպաշտ ժողովրդին: Արդարեւ, ազգասիրութիւնը, հայրենասիրութիւնն ու եկեղեցասիրութիւնը Ձեզ համար կոչում է, նուիրում, գործ ու յանձնառութիւն, ներդրած ջանք ու եռանդ, որոնցով իմաստաւորում էք Ձեր օրհնեալ կեանքի ընթացքը եւ Ձեր վարքը հարստացնում երկնքում:

Բարձր գնահատելով Ձեր ազգանուէր բարի վաստակը եւ ծառայութիւնները մեր ժողովրդին ու Եկեղեցուն, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եղրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Մեր աղօթքն է, որ Ամենակալն Աստուած հանապազ զօրաւիգ ու աջակից լինի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ կենաց բազում օրեր եւ գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինեն Ձեր կեանքից եւ ընտանեկան Ձեր յարկից:


Աստուած յուսոյ՝ լի՛ արասցէ զՁեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելո՛ւլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ (Հռոմ. ԺԵ 13)։

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 777

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՍԵՐԳԵՅ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժա՛ն պրն. Համբարձումեան, ճանաչում ենք Ձեզ՝ որպէս արժանաւոր հայորդու, եւ քաջածանօթ ենք ազգանպաստ բարեգործութիւններով զարդարուած Ձեր գործունէութեանը: Այսօր ուրախ առիթ ունենք անդրադառնալու, որ Դուք Ձեր արդար վաստակը ի սպաս էք բերում հայրենական, ազգային եւ եկեղեցական մեր կեանքի չինութեանն ու բարգաւաճմանը: Հայաստանին ու Արցախին բերած Ձեր չարունակական աջակցութիւնը խօսուն արտայայտութիւնն է աստուածպարգեւ մեր Հայրենիքը չէն ու պայծառ, ազատ ու ապահով տեսնելու՝ հայրենասէր ու ազգասէր հայորդուդ նախանձախնդրութեան: Ձեր բարեգործութիւնների շղթայի մէջ առանձնակի տեղ ունի Երեւանի Մ. Մաշտոցի անուան Մատենադարանի նոր շէնքի կառուցման հովանաւորութիւնը, որով Դուք երախտարժան վաստակ բերեցիք սրբազան մասունք դարձած մեր հազարաւոր ձեռագիր մատեանների պահպանութեանն ու ուսումնասիրութեանը:

Գոհունակութեամբ տեղեակ ենք նաեւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմին բերած Ձեր օժանդակութեանը: Որպէս Թեմի հոգաբարձու եւ բարերար՝ Դուք երկար տարիներ յամենայնի սատարում էք թեմակալ առաջնորդին եւ հոգեւոր դասին՝ իրականացնելու թեմի պատասխանատու առաքելութիւնը ի բարօրութիւն մեր ժողովրդի զաւակների: Ձեր եկեղեցաշէն վաստակը հարստացրեցիք

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 29:

նաեւ առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցմանը բերած մեծ աջակցութեամբ՝ մասնակիցը դառնալով Թեմի կեանքում վերջին տասնամեակների մեծագոյն եւ պատմական իրադարձութեան: Գեղեցկատես այս սրբավայրը, որը կառուցուեց հարիւրաւոր հայորդիների համախումբ յանձնառութեամբ, ռուսահայ Մեր զաւակների հաւատքի արթնութեան, աստուածասիրութեան ու եկեղեցասիրութեան բարի վկայութիւնն է:

Բարձր գնահատելով Ձեր ազգանուէր բարի վաստակը եւ ծառայութիւնները մեր ժողովրդին ու Եկեղեցուն, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց Թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ՝ յետայսու եւս չարունակելու Ձեր ծառայութիւնը մեր հաւատաւոր ժողովրդին:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ միշտ քաջառողջ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յարանորոգ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բոլոր գործերին ու ծրագրերին:


Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 781

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԿՈՆՍՏԱՆՏԻՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ ազգային ու եկեղեցական մեր կեանքում Ձեր իրագործումներին, որոնց մասին տեղեակ ենք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաչնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից:

Արդարեւ գովելի է, որ Դուք մեր հայրենիքի հանդէպ աննուազ հաւատարմութեամբ ջանում էք օգտակարութիւն բերել մեր երկրի զօրացմանն ու առաջընթացին: Հայոց Արցախ աշխարհում Ձեր կողմից իրականացուած բարեսիրական ծրագրերը նպաստում են արցախահայութեան նոր՝ առաւել ապահով, բարօր ու բարգաւաճ գալիքի կառուցմանը:

Գովարժան նոյն յանձնառութեամբ Դուք ծառայութիւններ էք մատուցում նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն՝ իրականացնելու Աստուծոյ Խօսքը աստուածասէր մեր ժողովրդին մատուցելու տէրունապատուէր առաքելութիւնը: Ուրախ ենք մեծապէս, որ Դուք մեծագումար նուիրատուութեամբ մասնակցութիւն բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը, որը երկար տարիների եռանդուն ջանքերից հետո իր դռներն է բացում հաւատացեալոց առջեւ: Տիրոջ կամքով այլեւս մշտահունչ պիտի լինի աղօթքը չքեղակառոյց եկեղեցում, ուր հաւատաւոր հոգիներից առ

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 31:

Բարձրեալն Աստուած բարձրացող մաղթանքներուս երախտագիտութեամբ պիտի յիշուին եկեղեցւոյ բոլոր պատուաւոր բարերարներիդ անունները:

Ազգանուէր եւ եկեղեցասէր Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով եւ թեմակալ առաջնորդի խնդրանքին ընդառաջ՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք եւ հայցում, որ Ամենակալ Տէրը Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց հաւատաւոր անդամներին եւ հանապազ օրհնութեամբ պարգեւի քաջառողջութիւն, արեւշատութիւն, առաքինի եւ աստուածահաճոյ գործոց յարանոր յաջողութիւններ:


Աստուած յուսոյ՝ լի՛ արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելո՛ւլ ձեզ յուսով՛ զաւրութեամբ Հոգւոյն Սրբոյ (Հռոմ 15.13):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 784

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԳԵՎՈՐԳ ՄԵՅՐԱԲՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՊԵՐՄ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժա՛ն պրն. Մեհրաբեան,

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք ազգային ու եկեղեցական մեր կեանքում Ձեր մեծ վաստակին:

Այսօր առիթ ունենք Մեր բարձր գնահատանքը բերելու Ձեզ՝ մեր ժողովրդին ու հայրենի մեր երկրին մատուցած Ձեր արդիւնաւոր ծառայութիւնների եւ Արցախի զօրացման ու առաջընթացի գործում բերած Ձեր կարեւոր ներդրումի համար: Ձեր իրագործումներում Դուք Ձեր հայրենասէր ու ազգանուէր ոգին էք դրսեւորել՝ արժանանալով բազմաթիւ հայորդեաց երախտագէտ մաղթանքներին:

Գովարժան է նաեւ Ռուսաստանի հայ համայնքի կեանքից ներս ծաւալած Ձեր բազմարդիւն գործունէութիւնը: Տարիներ առաջ Դուք սիրով ստանձնեցիք Պերմի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կառուցման հովանաւորութիւնը՝ հոգեւոր մեծ ուրախութիւն պարգեւելով Պերմում բնակեալ մեր ժողովրդի զաւակներին: Ազգային եւ եկեղեցական մեր կեանքում Ձեր վաստակը հարստացրեցիք նաեւ Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցմանը բերած սրտաբուխ օժանդակութեամբ: Արդարեւ, տարիների Ձեր նուիրեալ գործունէութիւնը, որ Տիրոջ օրհնութեան ներքոյ արգասաւորուած է բարի արդիւնքներով, պատուաբեր է հայորդուդ համար եւ օրինակ մեր ժողովրդի զաւակներին՝ իրենց կեանքի ընթացքը բարեզարդե-

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 37:

լու ազգասիրութեամբ, հայրենասիրութեամբ ու եկեղեցասիրութեամբ իմաստաւորուած գործերով:

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր գովելի ծառայութիւնը եւ սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Իր Հայրական օրհնութեան ներքոյ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջ արեւշատութիւն, գործոց մշտանորոգ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:


Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 786

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԱՐՄԵՆ ՇԱՀԱԶԻԶՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մեծարգո՛յ պրն. Շահազիզեան՝

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները՝

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք Ձեր հայրենանուէր գործերին, որոնք պատմում են առ Աստուած Ձեր հաւատի, Ձեր ազգասէր ու եկեղեցասէր ոգու մասին՝

Այսօր ուրախ ենք անդրադառնալու, որ Դուք երկար տարիներ ազնիւ բարերարութիւններով բարի աւանդ էք բերում ազգանուէր ծրագրերի իրականացմանը՝ նախանձախնդիր լինելով, որպէսզի առաւել բարօր ու բարգաւաճ լինի հայորդեաց կեանքը Հայաստանում եւ Արցախում: Ազնիւ հոգուց ծնուած Ձեր իրագործումները կարեւոր ներդրում են հայրենաշինութեան սուրբ եւ պատուաբեր գործին՝

Գոհունակութիւն է մեզ համար նաեւ, որ Դուք հաւատաւոր հոգով մշտապէս սատարում էք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի գործունէութեանը, որպէսզի Ռուսաստանի Դաշնութիւնում բնակուող մեր ժողովուրդը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու առաջնորդութեամբ չարունակի պահպանել հաւատարմութիւնը իր ազգային ու հոգեւոր ինքնութեանը, հայրենական արժէքներին: Եկեղեցանուէր նոյն ոգով Դուք ազնիւ մասնակցութիւն բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցման աստուածահաճոյ գործին, որը նոր չինութիւն ու պայծառայութիւն պիտի բերի ռուսահայ համայնքի հոգեւոր կեանքին՝

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 39:

Բարձր գնահատելով Ձեր ազգանուէր ծառայութիւնները մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն եւ սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ չնորհներն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Ամենախնամ Տէրը պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ ազգաշէն գործերի նորանոր յաջողութիւններ:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինեն Ձեր կեանքից եւ ընտանեկան Ձեր յարկից:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 788



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՌՈՒԲԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Համայն հայութեան սրբութիւն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնը, ջերմ սէրն ու գնահատանքն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Սիրելի՛ պրն. Վարդանեան, Տիրոջ կամքով ճանաչելով Ձեզ, Մենք Ձեր մէջ գոհունակութեամբ տեսանք չնորհալի, հաւատաւոր, հայրենասէր ու եկեղեցասէր պատուարժան հայորդու: Ազնիւ աշխատանքով դէպի առաջ ուղիներ հարթելու Ձեր նպատակասլացութիւնը, որով կառուցում էք աստուածպարգեւ Ձեր կեանքը, առաջնորդել է Ձեզ գովարժան յաջողութիւնների: Ձեր գործունէութեամբ Դուք բարձր էք պահում մեր ժողովրդի անունը Ռուսաստանի Դաշնութիւնում:

Գոհունակութեամբ փառք ենք մատուցում Բարձրեալն Աստծուն այն գործերի ու նախաձեռնութիւնների համար, որ կեանքի էք կոչում Դուք՝ մեր ժողովրդի կեանքը առաւել բարօր ու բարգաւաճ դարձնելու նախանձախնդրութեամբ: Ձեզ գործակից հայորդեաց հետ միասին Դուք իրականացրեցիք «Տաթեւի վերածնունդ» նախագիծը՝ մեծ աւանդ բերելով հնամենի վանքի պայծառութեանը, նաեւ Հայաստանում զբոսաշրջութեան զարգացմանը: Գնահատարժան են նաեւ Հայրենիքում կրթական, մշակութային ու տնտեսական ծրագրերի իրականացման Ձեր նախաձեռնութիւնները, որ կոչուած են աշխարհի առաջաւոր փորձի կիրառումով նպաստել մեր երկրի առաջընթացին:

Մենք սիրով հրաւիրեցինք Ձեզ անդամակցելու Գերագոյն Հոգեւոր Խորհրդին, որի կազմում Դուք ակակից էք Մայր Աթոռի առաքելութեանը՝ ի սպաս բերելով Ձեր ժամանակը, ջանքերն ու կարողու-

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 41:

թիւնները: Մեզ համար ուրախալի է, որ Ձեր մչտական աջակցութիւնն է վայելում Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմը՝ ռուսաստանաբնակ Մեր զաւակներին հոգեւոր սնունդ մատուցելու իր առաքելութեան մէջ: Այսօր ուրախ ենք անդարադառնալու, որ Դուք մեծագումար նուիրատուութեամբ օժանդակութիւն էք բերել տիրախնամ թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը: Նոր-բակառոյց սրբավայրը ռուսաստանաբնակ հայորդիներիդ հաւատքի ու ազգասիրութեան պանծալի վկայութիւնն է, որ պատիւ է բերում համայն մեր ժողովրդին:

Բարձր գնահատելով Ձեր վաստակը մեր Սուրբ Եկեղեցու եւ ժողովրդի կեանքում՝ Հայրապետական այսու Կոնդակով, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Վստահ ենք, որ մեր Սուրբ Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ Ձեր որդիական զգացումները պիտի չարունակուեն արդիւնաւորուել աստուածահաճոյ նոր ձեռնարկներով:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աչով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:


Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 795

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐՔ ՏԻԱՐ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՏԵՐ – ԱՎԱՆԵՍՈՎԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ արժանաւոր զաւակիդ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Մեծարգո՛յ պրն. Տէր-Աւանեսով, ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ քաջատեղեակ ենք Ձեր արդիւնաշատ գործունէութեանը: Գոհունակութիւն է Մեզ համար, որ Դուք պետական բարձր պաշտօններում նախանձախնդիր ծառայութեամբ կարեւոր աւանդ էք բերում Ռուսաստանի զօրացմանն ու առաջընթացին:

Այսօր առիթ ունենք ուրախ սրտով բարձր գնահատանքի մեր խօսքը ուղղել Ձեզ՝ ազգային ու եկեղեցական մեր կեանքում Ձեր գովարժան վաստակի համար: Աննուազ ջանադրութեամբ Դուք Ձեր հնարաւորութիւններն ի սպաս էք դնում Հայաստանի եւ Արցախի զօրացմանը, մեր Հայրենիքում բարօր ու բարգաւաճ կեանքի հաստատմանը: Հայրենաշինութեանն ուղղուած ծրագրերին Ձեր չարունակական աջակցութիւնը, պատիւ բերելով հաւատաւոր հայորդուդ, լաւագոյն վկայութիւնն է Ձեր ազգասէր ու հայրենասէր ազնիւ ոգու:

Ձեր մշտական օժանդակութիւնն է վայելում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց Թեմը: Որպէս Թեմի բարերար՝ Դուք ազնիւ յանձնառութիւններով առաւել արդիւնաւոր էք դարձնում մեր Սուրբ Եկեղեցու սպասաւորութիւնը Ռուսաստանում բնակեալ հաւատաւոր հայութեանը: Եկեղեցասէր ոգով ու սրտաբուխ ընծայաբերումով Դուք կարեւոր ներդրում բերեցիք նաեւ Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցմանը, որն այսուհետ իր սուրբ խորանից

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 43:

չնորհ ու օրհնութիւն պիտի բաշխի Ռուսաստանում ապրող մեր ժողովրդի զաւակներին:

Ուրախութիւն է Մեզ համար, որ Ձեր բազմաթիւ բարեգործութիւնների չարքին Դուք սիրով հովանաւորեցիք նաեւ ստալինեան բռնութիւններին զոհ գարձած եկեղեցականների յուշապատի կառուցումը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Գոհութիւն Աստուծոյ, որ Ձեզ պէս հաւատաւոր, էջմիածնասէր զաւակների ազնիւ ծառայանուիրումով օրաւուր պայծառանում է Մայր Աթոռը Քրիստոսահաստատ եւ զօրանում մեր ժողովրդին ծառայելու իր սրբազան առաքելութեան մէջ:

Ձեր ազգօգուտ ու եկեղեցանուէր ծառայութեանց բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի Մեր հայցն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած Իր հայրական օրհնութեան ներքոյ պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, գործոց մշտանորոգ յաջողութիւններ եւ երկնատուր ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 797



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՆՈՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանք ենք յղում արժանաւոր հայորդուդ՝ ազգային եւ եկեղեցական մեր կեանքում մատուցած գովելի ծառայութիւնների համար: Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաչնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով քաջատեղեակ ենք Ձեր եռանդուն եւ նախանձախնդիր գործունէութեանը: Ազնիւ յանձնառութիւններով ու ջանադրութեամբ Դուք տարիներ շարունակ աջակցում էք տիրախնամ թեմի գործունէութեանը՝ գովարժան նպաստ բերելով Ռուսաստանում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան արդիւնաւորմանը՝ յանուն հաւատաւոր հայորդիների հոգեւոր ու ազգային կեանքի բարօրութեան: Եկեղեցանուէր նոյն ոգով Դուք մասնակցեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցմանը՝ սրտաբուխ ընծայաբերումով ներդրում բերելով թեմական կեանքում պատմական մեծ իրագործման յաջողութեանը՝ Տիրոջ կամքով եւ օրհնութեամբ: Գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ, որ Դուք բարի ծառայութիւններ էք մատուցել նաեւ Հայրենի մեր երկրին եւ հաւատաւոր մեր ժողովրդին: Ձեր իրագործումները, արդարեւ, վկայում են Ձեր հաւատի, հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան մասին՝ պատիւ ու յարգանք բերելով արժանաւոր հայորդուդ: Բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմարդիւն ծառայութիւնները մեր Եկեղեցուն եւ սիրով ընդառաջելով թեմակալ առաջնորդի ազնիւ խնդրանքին՝ Հայրապետական այսու կոն-

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 45:

դակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Մաղթում ենք, որ նոյն կորովով ու եռանդով շարունակէք Ձեր ազգանպաստ ու հայրենանուէր գործունէութիւնը՝ նորանոր յաջողութիւններով զարդարելով Ձեր կեանքի ընթացքը:

Աղօթում ենք, որ Ամենողորմ Տէրն իր ամենազօր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով արեւշատ տարիներ եւ ամենայն բարիք:


Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԿԱՄՈ ԱՎԱԳՈՒՄՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆԶՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մեծարգո՛յ պրն. Աւագումեան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ եկեղեցու նուիրեալ զաւակիդ:

Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ քաջածանօթ ենք ազգօգուտ եւ եկեղեցանուէր Ձեր ծառայութեանը: Դուք տարիներ շարունակ նախանձախնդիր ոգով աջակցում էք Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաքելութեանը՝ արժանանալով թեմակալ առաջնորդի եւ հոգեւոր դասի անկեղծ յարգանքին ու գնահատանքին:

Ռուսահայոց ազգային ու հոգեւոր կեանքդ առաւել կազմակերպուած, շէն ու պայծառ դարձնելու տեսիլքով Դուք մասնակցութիւն բերեցիք նաեւ տիրախնամ թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցման նուիրական գործին: Ձեր աստուածահաճոյ յանձնառութիւններով բարեգործ հայորդիները փառաւոր նոր էջ յաւելեցիք ռուսահայ համայնքի պատմութեանը՝ եկեղեցասիրութեան պայծառ օրինակ մատուցելով յետագայ սերունդներին:

Ուրախ ենք նաեւ անդրադառնալու Արցախին բերած Ձեր գործակցութեանը, որն արգասիքն է Ձեր հոգու անկեղծ սիրոյ ու նուիրումի՝ հանդէպ հայրենի մեր երկիրն ու հարազատ ժողովուրդը: Գոհունակութեամբ փառք ենք մատուցում Բարձրեալին, որ ազգս հայոց օրհնել է Ձեզ պէս հաւատաւոր, ազգասէր զաւակներով:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած օգտաշատ ծառայութիւնները մեր ժողովրդին ու Եկեղեցուն, սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդ գերաչնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 3:

Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Հայրապետիս աղօթքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ զօրավիգ ու աջակից լինի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ կենաց բազում օրեր եւ գործոց մշտանորոգ յաջողութիւններ:


Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 767

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԴԱՎԻԹ ԴԱՎԻԴՅԱՆՑԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սէրը եւ օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ մեր եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգո՛յ պրն. Դաւիդեանց:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից տեղեկանալ Ձեր բարեպաշտ ու արժանաւոր ընթացքի մասին, որը զարդարուած է ազգային եւ եկեղեցական մեր կեանքում գովարժան իրագործումների բարի արգասիքներով:

Մեծապէս գնահատելի է Ձեր աւանդը Ռուսաստանի Դաշնութիւնում բնակեալ հայորդեաց ազգային եւ հոգեւոր կեանքում: Տասնամեակներ շարունակ Ձեր ազնիւ ընծայաբերումները Տիրոջ օրհնութեամբ արդիւնաւորուել են ի նպաստ ռուսահայոց թեմի պայծառութեան: Հայրապետիս համար առանձնակի գոհունակութիւն է, որ Դուք սրտաբուխ նուիրատուութեամբ մասնակցութիւն բերեցիք նաեւ թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցման մեծ եւ նուիրական գործին: Եկեղեցասէր հայորդիներիդ ազնիւ հոգածութեամբ դէպի երկինք խոյացած փառաշուք Եկեղեցին սերնդէ սերունդ պիտի ծառայի ռուսաստանաբնակ Մեր զաւակներին եւ երկնային օրհնութեամբ ու առատ չնորհներով լցնի նրանց հոգեւոր ու ազգային կեանքի անդաստանը:

Ի գնահատութիւն մեր ժողովրդի եւ Եկեղեցու կեանքում Ձեր բազմարդիւն վաստակի եւ սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 5:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աչքի հովանու ներքոյ պահպանի Զեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին եւ օրհնի Ձեր կեանքը քաջառողջութեամբ եւ երկնատուր բիւր բարիքներով:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 774



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԴԱՆԻԷԼ ԽԱՉԱՏՈՒՐՈՎԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգո՛յ պրն. Խաչատուրով,

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք տիրախնամ թեմի առաքելութեանը բերած Ձեր գովելի աջակցութեան մասին: Ուրախութեամբ ենք անդրադառնում, որ աստուածպարգեւ շնորհներով, տարիների ջանադիր աշխատանքով ձեռք բերած Ձեր յաջողութիւնները, Ռուսաստանի Դաշնութեան հասարակական կեանքում վաստակած արժանաւոր գործարարի բարի համբաւն ու կարողութիւնները Դուք ամենայն պատրաստակամութեամբ ծառայեցնում էք նաեւ ի չահ հարազատ ժողովրդի ազգային ու հոգեւոր կեանքի զօրացման: Հայրենասէր ոգով ու ազնիւ յանձնառութեամբ իրականացուող Ձեր ծրագրերի միջոցով Դուք կարեւոր մասնակցութիւն էք բերում Հայրենի մեր երկրի տնտեսութեան առաջընթացին եւ հայրենաբնակ Մեր զաւակների կեանքի բարօրութեանը: Փառք ենք մատուցում Բարձրեալին, որ մեր ժողովրդի զաւակները, հաւատարիմ մեր հայրերի աւանդներին, իրենց սրտից ծնուած ազնիւ յանձնառութիւններով բարի սերմեր են սերմանում ազգային մեր կեանքից ներս՝ առաւել լուսաւոր ու պայծառ դարձնելու համար մեր ներկան ու գալիքը:

Ձեր հաւատաւոր, ազգասէր ու եկեղեցասէր ոգու արտայայտութիւնն է նաեւ ի նպաստ Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 6:

կից համալիրի կառուցման կատարած մեծագումար ընծայաբերումը, որով Դուք Ձեր մասնակցութիւնը եւ բարի աւանդը բերեցիք աստուածահաճոյ այս մեծ ու պանծալի նախաձեռնութեան իրականացմանը:

Բարձրօրէն գնահատելով Ձեր վաստակը մեր ժողովրդի, մեր Հայրենիքի եւ մեր Եկեղեցու կեանքում եւ սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Տիրոջ հանապազ օրհնութեամբ լինէք միշտ քաջառողջ, եռանդուն ու կորովաշատ եւ շարունակէք Ձեր գնահատելի ծառայութիւնը բերել հաւատաւոր մեր ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն:

Թող Բարձրեալի օրհնութիւնն ու առատ չնորհները անպակաս լինեն Ձեր կեանքից եւ ընտանեկան Ձեր յարկից:


Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 778

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մեծարգո՛յ պրն. Խաչատրեան,

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում նուիրեալ հայորդուդ եւ գոհունակութեամբ անդրադառնում մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր բարի ծառայութիւններին:

Գովարժան է Ձեր վաստակը հայրենի մեր երկրի չէնացման գործում: Ազնիւ յանձնառութեամբ Դուք ստանձնեցիք Արցախում ծննդատան կառուցման հովանաւորութիւնը՝ յանուն Արցախի առաջընթացի եւ հերոսական արցախահայութեան առաւել բարօր ու բարգաւաճ կեանքի: Ազգանուէր նոյն ոգով եւ սրտաբուխ ընծայաբերումով Դուք մասնակցեցիք Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ եկեղեցական համալիրի կառուցմանը՝ Ձեր աւանդը բերելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանը եւ մեր ժողովրդի հոգեւոր ու ազգային կեանքի զօրացմանը: Յարգանքն ու սէրը, որ վաստակել էք Դուք Ձեր բարի, աստուածահաճոյ ընթացքով, արժանի գնահատանքն է Ձեր հայրենասէր ու ազգասէր ոգու եւ արդիւնաչատ գործունէութեան: Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր գովելի վաստակը, սիրով ընդառաջ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի բարեջան առաջնորդ գերաչնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 8:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարձրեալն Աստուած՝ Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը հայցելով Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին:

Թող Տէրն Իր Ամենախնամ Սուրբ Աչով հովանի լինի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

«Հաստատո՛ւն եղերուք, անշա՛րժ կացէք, առաւե՛լ լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասջիք՝ զի վաստակքն ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեառն» (Ա. Կորնթ. ԺԵ. 58)

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 779



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԱՀԱՐՈՆ ՄԵԼՔՈՆՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Մեծարգո՛յ պրն. Մելքոնեան,

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք ռուսահայ կեանքում Ձեր բեղմնաւոր վաստակին, հայանուէր ու եկեղեցանպաստ գործունէութեանը: Մշտապէս առաջնորդուելով հայ համայնքին սատար լինելու վեհ գիտակցութեամբ՝ Դուք Ձեր ջանքերով ու միջոցներով զօրակցում էք տիրախնամ թեմին՝ Տիրոջ հաւատարիմ հօտը համախմբելու, խնամելու եւ դէպի Աստուած առաջնորդելու իր սրբազան առաքելութեան մէջ:

Գոհունակութիւն է Մեզ համար նշել, որ մեր ժողովրդին աւելիով ծառայելու ազնիւ նուիրումով Դուք մեծագումար նուիրատուութեամբ մասնակցութիւն բերեցիք թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը, որը նոր պայծառութիւն պիտի բերի Ռուսաստանի հայոց հոգեւոր եւ ազգային կեանքին: Ձեր բարեպաշտ եւ ազգաշէն գործերով Դուք արժանի տեղ ունէք մեր ժողովրդի երախտարժան բարերարների շարքում:

Ի գնահատութիւն ազգօգուտ ու եկեղեցանուէր Ձեր երկարամեայ գործունէութեան՝ սիրով ընդառաջում ենք թեմակալ առաջնորդի խնդրանքին եւ Հայրապետական այսու Մեր կոնդակով շնորհում Ձեզ

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 9:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Տէրն Ամենակալ զօրաւոր պահի Ձեր եկեղեցասիրութեան ու հայրենանուիրումի ոգին, որպէսզի Բարձրեալի հանապազ օրհնութեամբ միշտ եռանդուն ու կորովաչատ չարունակէք գնահատելի ծառայութիւն բերել հաւատաւոր մեր ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն:

Թող Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն եւ չնորհի նորանոր ձեռքբերումներ ու յաջողութիւններ Ձեր ազգանպաստ, առաքինի գործերին:


«Աստուած յուսոյ՝ լի՛ արասցէ զՁեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաելո՛ւլ Ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռ. ԺԵ.13):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 785

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՀԱԿՈԲ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Յարգարժա՛ն պրն. Մուրադեան, Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք բարեգործական Ձեր արգասաւոր գործունէութեանը: Մենք փառք ենք մատուցում առ Բարձրեալն Աստուած, որ մեր ժողովրդի զաւակները ապրում են Հայրենիքի եւ ազգի հոգսերով, նախանձախնդիր են մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի չինութեան ու պայծառութեան համար:

Դուք տարիներ շարունակ ազնիւ ջանքեր ու նուիրում էք բերում ի սպաս ազգային ու հոգեւոր մեր կեանքի պայծառութեան, բարեսիրական տարբեր ծրագրերով աջակցում Հայրենի մեր Երկրի առաջընթացին եւ հայրենաբնակ մեր ժողովրդի բարօրութեանը: Որդիական սիրով եւ նախանձախնդիր նոյն ոգով Դուք ծառայում էք նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանը՝ ազնիւ աջակցութիւն բերելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի գործունէութեանը:

Գոհունակութիւն է Մեզ համար, որ ի յաւելումն Ձեր ազգօգուտ ու եկեղեցաշէն գործերի, Դուք սիրով գովարժան ներդրում բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը:

Ի գնահատութիւն Ձեր վաստակեալ գործունէութեան եւ սիրով

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 10:

ընդառաջ թեմակալ առաջնորդի ազնիւ խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ Իր Հայրական օրհնութեան ներքոյ պահպանի Ձեզ եւ Ձեր սիրելի ընտանիքը եւ պարգեւի քաջառողջ արեւշատութիւն եւ գործոյ մշտանորոգ յաջողութիւններ:


«Այսուհետեւ զօրացարո՛ւք Տէրամբ եւ կարողութեամբ զօրութեան Նորա, գիտասջի՛ք, թէ իւրաքանչիւր ոք՝ որ ինչ առնէ զբարին, զնո՛յն ընդունի ի Տեառնէ» (Եփ. Զ. 8,10):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 787

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՍՏԵՓԱՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Յարգարժա՛ն պրն. Յակոբեան,

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից գոհունակութեամբ տեղեկացանք Ձեր ազգանուէր եւ եկեղեցաշէն գործունէութեան մասին:

Առ Հայրենին որդիական Ձեր սէրն ու անյոգնաբեկ ջանքերը բազում բարի պտուղներ են տուել մեր ժողովրդի կեանքում: Նախընթաց տարիներին Դուք ազնիւ ընծայաբերումներով գովարժան աջակցութիւն էք բերել «Հայաստան» համահայկական հիմնադրամի ծրագրերին՝ նպաստելով մեր երկրի զօրացմանն ու առաջընթացին եւ մեր ժողովրդի առջեւ ծառացած դժուարութիւնների յաղթահարմանը:

Առանձնակի գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ Ձեր եկեղեցաշէն վաստակին: Որպէս Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի բարերար՝ Դուք ազնիւ հոգով մշտապէս զօրակցում էք թեմակալ առաջնորդին եւ հոգեւոր դասին իրենց սպասաւորութեան մէջ: Ձեր հոգածութեամբ թեմում իրականացուած եկեղեցանուէր եւ ազգօգուտ նախաձեռնութիւնները նպաստում են Ռուսաստանում բնակեալ Մեր զաւակների հոգեւոր եւ ազգային կեանքի արդիւնաւոր կազմակերպմանը:

Նուիրեալ նոյն ոգով ու նախանձախնդրութեամբ Դուք բարի աւանդ բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 11:

կառուցմանը, որը նոր պայծառութիւն պիտի բերի թեմական կեանքին՝ ի բարօրութիւն հաւատաւոր հայութեան:

Մեր սիրեցեալ Հայրենիքին ու ժողովրդին եւ մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով եւ սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ չնորհներն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ նորանոր յաջողութիւններ մաղթում Ձեր բարի գործերին ու նախաձեռնութիւններին:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինեն Ձեր կեանքից եւ ընտանեկան Ձեր յարկից:

«Աստուած յուսոյ լի արասցէ զՁեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ. ամէն» (Հմմտ. Հռ. ժե.13) :

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 780



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԿԱՐԵՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժա՛ն պրն. Յարութիւնեան:

Գովարժան են Ձեր գործերն ու յանձնառութիւնները ազգային եւ եկեղեցական մեր կեանքում: Հաւատաւոր եւ ազգասէր հոգով Դուք սատարում էք Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմին՝ զօրավիգ լինելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանն ու մեր ժողովրդի հոգեւոր կեանքի վերազարթօնքին: Այսօր գոհունակ սրտով ենք անդրադառնում, որ նոյն նախանձախնդիր ոգով Դուք մասնակցութիւն բերեցիք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ եկեղեցական համալիրի կառուցման աստուածահաճոյ գործին, որը վկայութիւնն է մեր ժողովրդի հաւատքի ամրութեան, հոգեւոր արժէքների հանդէպ նախանձախնդրութեան:

Ուրախութիւն է Հայրապետիս համար տեսնել մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ որդիական անմնացորդ սէրն ու նուիրումը համայն հայութեան նուիրական օրրան Սուրբ Էջմիածնի հանդէպ, որով Դուք ազնիւ գործակցութիւն էք բերում Մայր Աթոռիս պայծառութեանը: Փառք ենք մատուցում Ամենախնամ Բարձրեալին, որ հաւատաւոր Մեր զաւակները Հայրենիքում եւ Սփիւռքում եկեղեցանուէր նոր իրագործումներով սատար են կանգնում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու տիրաւանդ առաքելութեանը:

Բարձր գնահատելով ազգօգուտ ու եկեղեցանուէր Ձեր վաստա-

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 13:

կեալ գործունէութիւնը եւ սիրով ընդառաջ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ գերաչնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք, որ Բարին Աստուած Իր հանապազ օրհնութեան ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ առաջնորդելով եկեղեցաչէն ու հայրենանուէր նորանոր իրագործումների: Թող Տիրոջ չնորհներն ու երկնառաք բարիքները անսպառ լինեն Ձեր կեանքից:


Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 782

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՆՈՐԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանք ենք յղում արժանաւոր հայորդուդ՝ ազգային եւ եկեղեցական մեր կեանքում մատուցած գովելի ծառայութիւնների համար:

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով քաջատեղեակ ենք Ձեր եռանդուն եւ նախանձախնդիր գործունէութեանը: Ազնիւ յանձնառութիւններով ու ջանադրութեամբ Դուք տարիներ շարունակ աջակցում էք տիրախնամ թեմի գործունէութեանը՝ յանուն Ռուսաստանում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան արդիւնաւորման եւ բարեպաշտ Մեր զաւակների հոգեւոր ու ազգային կեանքի պայծառութեան: Ձեր անկեղծ եկեղեցասիրութիւնը վկայեցիք նաեւ թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը բերած սրտաբուխ ընծայաբերումով՝ Ձեր արդար վաստակը ծառայեցնելով եկեղեցաշինութեան յաւէտ օրհնեալ գործին:

Որպէս ազգասէր հայորդի՝ ազնիւ նախաձեռնութիւններով զօրակից էք եղել նաեւ Հայրենի մեր երկրի զօրացմանն ու առաջընթացին եւ Ձեր վաստակը բերել հայրենաշինութեան պատուարժան գործին: Ձեր ազգօգուտ եւ աստուածահաճոյ իրագործումները, արդարեւ, վկայում են Ձեր հաւատի, հայրենասիրութեան ու եկեղեցասիրութեան մասին՝ պատիւ ու յարգանք բերելով արժանաւոր հայորդուդ:

Բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմարդիւն ծառայութիւնները մեր Եկեղեցուն եւ սիրով ընդառաջելով թեմակալ առաջնոր-

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 14:

դի ազնիւ խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Մաղթում ենք, որ նոյն կորովով ու եռանդով չարունակէք Ձեր ազգանպաստ ու հայրենանուէր գործունէութիւնը՝ նորանոր յաջողութիւններով զարդարելով Ձեր կեանքի ընթացքը: Աղօթում ենք, որ Ամենողորմ Տէրն Իր ամենազօր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով արեւշատ տարիներ եւ ամենայն բարիք:

«Տէր մեր Յիսուս Քրիստոս եւ Աստուած Հայրն մեր, որ սիրեացն զմեզ, մխիթարեսցէ զսիրտս Ձեր եւ հաստատեսցէ յամենայն բանս եւ ի գործս բարութեան» (Բ. Թեսաղ. Բ.15-16):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 789



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐ ՋԱՆԻԲԵԿՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր սէրն եւ օրհնութիւնը:

Այսօր Տիրոջ կամքով առիթն ունենք բարձր չնորհի արժանացնելու մեր ժողովրդի ազնիւ զաւակիդ՝ ազգային-եկեղեցական մեր կեանքից ներս ունեցած Ձեր գնահատելի աւանդի համար:

Մեծարգո՛յ պրն. Ջանիբէկեան,

Ձեր անունը մեծապէս յայտնի եւ սիրելի է մեր ժողովրդին ոչ միայն որպէս մեդիա աշխարհում կարեւոր դիրք ունեցող գործչի, այլեւ որպէս ազգային կրթական եւ մշակութային մեր կեանքի զօրացման ու բարելաւման խնդրով մշտապէս մտահոգ արժանաւոր հայորդու: Ձեր ծնողի՝ Օթարի Յակոբեանի հետ միասին Դուք կարեւոր աւանդ բերեցիք Վարդենիս գիւղի Սուրբ Յակոբ եկեղեցու վերականգնման աշխատանքներին՝ Աստուծոյ Տունը վերստին դարձնելով լուսաւոր կենտրոնը Վարդենիսի հայորդեաց ազգային ու հոգեւոր կեանքի: Ձեր անունը պիտի յիշուի նաեւ մեր երկրում կրթական համակարգի առաջընթացի գործում ներդրած Ձեր ջանքերի ու աւանդի համար, որով Դուք արգասաւորեցիք հարազատ ժողովրդի հանդեպ Ձեր ունեցած հաւատարմութիւնն ու որդիական սէրը:

Գովարժան է Ձեր բերած աջակցութիւնը նաեւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի գործունէութեանը, որի մասին տեղեակ ենք առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով: Դուք սիրայօժար սրտաբուխ ընծայաբերումով Ձեր մասնակցու-

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 15:

թիւնն ունեցաք Մոսկուայի առաջնորդանիստ եկեղեցու եւ եկեղեցական համալիրի կառուցման աստուածահաճոյ գործին՝ արժանանալով մեր Եկեղեցու հաւատաւոր զաւակաց բիւր աղօթքներին ու սրտագին բարեմաղթանքներն:

Մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում ունեցած Ձեր արժանի վաստակի բարձր գնահատանքով եւ ընդառաջ թեմակալ բարեջան առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաշէն ու ազգօգուտ գործերի յաջողութիւններ:

«Այսուհետեւ զօրացարո՛ւք Տէրամբ եւ կարողութեամբ զօրութեան Նորա, գիտասջի՛ք, թէ իւրաքանչիւր ոք՝ որ ինչ առնէ զբարին, զնո՛յն ընդունի ի Տեառնէ» (Եփ. Զ. 8,10) :

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 790



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Յարգարժա՛ն պրն. Սարգսեան,

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք Ձեր ազգօգուտ ու եկեղեցանպաստ գործունէութեանը եւ Ռուսաստանի Դաշնութիւնում բնակեալ հայորդեաց կեանքում Ձեր գովարժան վաստակին: Տարիներ շարունակ Դուք ազնիւ հոգով ալակից էք թեմի Հայորդեաց տան առաքելութեանը եւ Ձեր անձնական միջոցները սիրով ծառայեցնում էք համայնքի կրթական ու մշակութային նախաձեռնութիւնների իրականացմանը, որպէսզի հայրենի հողից հեռու ապրող մեր ժողովրդի զաւակների հոգիներում ապրեն ու զօրաւոր մնան ազգային ինքնութեան գիտակցութիւնը եւ սէրն ու հաւատարմութիւնը մեր նախնեաց աւանդներին:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ Դուք սրտաբուխ ընծայաբերումով ալակցեցիք նաեւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդանիստ եկեղեցու կառուցմանը, որը հայոց հաւատքի փառաւոր վկայութիւնն է ռուսաց հողում: Առաքինի գործերով Դուք օրինակ էք հաւատաւոր հայորդեաց համար՝ ջանք ու եռանդ բերելու մեր ժողովրդի բարօրութեանը եւ մեր Սուրբ Եկեղեցու պայծառութեանը:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած ծառայութիւնները մեր Սուրբ

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 17:

եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին եւ սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ենք հայցում՝ մաղթելով, որ Ամենախնամ Տէրը պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաչէն գործերի յաջողութիւններ:

Թող ընտանեկան Ձեր յարկը միշտ չնորհընկալը լինի Բարձրեալի չնորհների եւ ամենախնամ օրհնութեան:

«Այսուհետեւ զօրացարուք Տէրամբ եւ կարողութեամբ զօրութեան Նորա, գիտասջի՛ք, թէ իւրաքանչիւր ոք՝ որ ինչ առնէ զբարին, զնո՛յն ընդունի ի Տեառնէ» (Եփ. Զ. 8,10):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 792

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆՇԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՍԱՖԱՐՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Յարգարժա՛ն պրն. Սաֆարեան,

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք Ռուսաստանի հայոց կեանքում Ձեր բեղմնաւոր գործունէութեան մասին: Ուրախ ենք մեծապէս, որ Ձեր սրտաբուխ ընծայաբերումներով Դուք երկար տարիներ կարեւոր աւանդ էք բերում ռուսահայոց տիրապետող թեմում ազգային եւ հոգեւոր կեանքի չինութեանն ու պայծառութեանը:

Յատկապես գնահատարժան է հաւատաւոր հայորդուդ չարունակական օժանդակութիւնը թեմի Հայորդեաց Տան գործունէութեանը, որի լուսաւոր յարկի ներքոյ հայ երիտասարդ սերունդը հնարաւորութիւն ունի սովորելու մայրենի լեզուն, ծանօթանալու մեր ժողովրդի եւ Եկեղեցու պատմութեանը, հաղորդ դառնալու մեր հայրերի աւանդներին ու ստեղծած արժէքներին: Ձեր եւ եկեղեցանուէր հայորդեաց աջակցութեան չնորհիւ կրթօջախը տարիներ չարունակ հայեցի սերունդ է կրթում ու դաստիարակում՝ նրանց մէջ զօրացնելով ազգային ինքնութեան գիտակցութիւնը:

Ձեր անկեղծ եկեղեցասիրութիւնն ու ազգասիրութիւնը Դուք արտայայտեցիք նաեւ Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ կից համալիրի կառուցմանը բերած մեծագումար ընծայաբերումով: Գոհունակութիւն է Հայրապետիս հա-

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 18:

մար, որ Տիրոջ ամենառատ օրհնութեամբ եւ եկեղեցաչէն բարերարներիդ յանձնառութիւնների չնորհիւ փառատես վեր է յառնել եկեղեցին եւ իր դռներն է բացել հաւատաւոր հայորդեաց առջեւ՝ դառնալով Մոսկուայի հայութեան ազգային ու հոգեւոր կեանքի կազմակերպման նուիրական կենտրոն:

Բարձր գնահատելով Ձեր բազմարդիւն վաստակը մեր ժողովրդի եւ եկեղեցու կեանքում եւ սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթքով Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Բարին Աստուած իր հայրական հովանու ներքոյ միշտ առողջ ու երջանիկ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բարի գործերին ու նախաձեռնութիւններին:

Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հայրէ, եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հաւր, ճշմարտութեամբ եւ սիրով եղիցի ընդ ձեզ (Բ. Յովհ. Ա. 3):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 793



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԳԵՆԱԴԻ ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Համազգային նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգո՛յ պրն. Ստեփանեան,

Գոհունակութեամբ եւ բարձր գնահատանքով ենք անդրադառնում Մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կեանքում ունեցած Ձեր գովելի վաստակին: Դուք ազգանուէր ոգով եւ իշխանական նուիրատուութեամբ հովանաւորեցիք ծննդատան կառուցումը Արցախում՝ նպաստելով Հայրենի երկրի առողջապահական ոլորտի զարգացման ազգաշէն գործին: Ազնիւ բարերարի Ձեր համբաւը յայտնի է նաեւ «Հայաստան» համահայկական հիմնադրամին ցուցաբերած աջակցութեամբ, որով Դուք մեծ ներդրում էք բերում հիմնադրամի շնորհաբեր ծառայութեան արագասաւորմանը մեր ժողովրդի կեանքում:

Մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան իրականացմանը աջակից լինելու սրտաբուխ յանձնառութեամբ Դուք բարի աւանդ բերեցիք նաեւ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ եկեղեցական համալիրի կառուցման գործին: Ձեր ընծայաբերումներն ու նուիրեալ ջանքերը Ձեր անունը դասել են եկեղեցու եւ տիրախնամ թեմի երախտաւորների պատուաւոր շարքում:

Մեր Սուրբ Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ Ձեր հոգածու վերաբերմունքը արժանի է բարձր գնահատանքի, եւ Մենք մեծաւ ուրախութեամբ, ընդառաջ տիրախնամ թեմի բարեջան առաջնորդ գե-

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 20:

բաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Թող Բարձրեալ Տէրը զօրավիգ ու ալակից լինի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ կենաց բազում օրեր եւ գործոց մշտանորոգ յաջողութիւններ:


«Հաստատո՛ւն եղերուք, անշա՛րժ կացէք, առաւել լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասջի՛ք՝ զի վաստակքն Ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեառն» (Ա. Կորնթ. ԺԵ. 58):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 791

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐ ՎԱՐԺԱՊԵՏՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում արժանաւոր հայորդուդ:

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանից գոհունակութեամբ տեղեկացանք ազգային ու հոգեւոր մեր կեանքից ներս Ձեր արդիւնաշատ գործունէութեանը:

Գովարժան է Ձեր աւանդը ի նպաստ Հայաստանի եւ Արցախի զօրացման եւ հայրենաբնակ մեր ժողովրդի բարօրութեան: Ձեր մշտական ուշադրութիւնն ու ազնիւ հոգածութիւնն են վայելում արցախեան պատերազմի հաշմանդամ, հերոս ազատամարտիկները, ովքեր իրենց կեանքի ու առողջութեան գնով կերտեցին մեր արդի պատմութեան փառաւոր յաղթանակը:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար անդրադառնալ նաեւ, որ Դուք անկեղծ սիրով ու նուիրումով աջակցում էք Ռուսաստանի Դաշնութիւնում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեանը՝ որպէս Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի բարերար: Ուրախ է Մեր հոգին, որ Դուք, նախանձախնդիր յաւէտ պայծառութեանը հաւատաւոր հայորդիների հոգեւոր ու ազգային կեանքի, մեծագումար նուիրատուութեամբ մասնակցեցիք նաեւ թեմի առաջնորդանիստ եկեղեցու եւ համալիրի կառուցման օրհնեալ գործին: Ձեր ազնիւ յանձնառութեան չնորհիւ Ձեր անունը արձանագրուած է փառաշուք եկեղեցու պատմութեան մէջ եւ միշտ երախտագիտութեամբ պիտի յիշուի հայորդիների հոգիներում:

---

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 21:

Բարձր գնահատանքի արժանացնելով Ձեր բազմարդիւն ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն եւ սիրով ընդառաջելով թեմակալ առաջնորդի ազնիւ խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Աղօթում ենք, որ Ամենախնամ Աստուած առատապէս օրհնի երախտաւորժան բարերարիդ եւ Ձեր ընտանիքը՝ չնորհելով կենաց արեւշատութիւն, ազգանուէր եւ եկեղեցասէն գործոց նորանոր յաջողութիւններ:

«Հաստատո՛ւն եղերուք, անշա՛րժ կացէք, առաւել լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասջի՛ք՝ զի վաստակքն Ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեառն» (Ա. Կորնթ. ԺԵ. 58):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 796



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՄԱՍԻՍ ՆԱԶԱՐՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԵԿԱՏԵՐԻՆԲՈՒՐԳ, ՌԴ

(12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Յարգարժա՛ն պրն. Նազարեան:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար Սուրբ Յովհաննէս Կարապետ եկեղեցու օծման բերկրալի առիթով Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքը բերել Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ եկեղեցու սիրելի զաւակիդ:

Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսեանից տեղեկացանք Ձեր գովարժան ծառայութիւնների մասին: Այսօր ուրախութեամբ ենք հաստատում, որ ծնունդով ու հասակ առնելով Իրանում, Դուք ժառանգել էք ազգասէր ու եկեղեցասէր ոգին իրանահայ աւանդաշատ համայնքի, որի բազմադարեայ պատմութիւնը վառ օրինակ է մեր ժողովրդի հաւատաւոր ոգու, Առաքելական մեր Սուրբ եկեղեցու եւ լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ որդիական սիրոյ ու նուիրումի:

Տասնեակ տարիներ Դուք աշխոյժ գործունէութիւն էք ծաւալում ՌԴ Եկատերինբուրգ քաղաքի հայութեան համայնքային կեանքում: Հայրապետիս համար գոհունակութիւն է, որ, մշտապէս աջակցելով տիրախնամ թեմի առաքելութեան իրականացմանը, ազգասէր ու եկեղեցասէր ոգով Դուք հովանաւորեցիք նաեւ հայկական եկեղեցու կառուցման աստուածահաճոյ նախաձեռնութիւնը: Հաւատաւոր Մեր զաւակներիդ հետ աղօթակցութեամբ կատարելով նորակառոյց աղօթատան օծման սրբազան արարողութիւնը, Մենք փառք ենք մատուցում Տիրոջը, որ եկեղեցու հովանու ներքոյ այսուհետ առաւել պայ-

[1] «Էջմիածին», 2013, Ժ, էջ 4:

ծառ պիտի լինի հայորդիների հոգեւոր ու ազգային կեանքը եւ գօրաւոր՝ ինքնութեան գիտակցութիւնը նրանց հոգիներում:

Բարձր գնահատելով Ձեր ծառայութիւնները մեր Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին՝ սիրով ընդառաջում ենք թեմակալ առաջնորդի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Վստահ ենք, որ Ձեր ազգանուէր ծառայութիւնները պիտի չարունակուեն արդիւնաւորուել աստուածահաճոյ նորանոր իրագործումներով՝ ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու եւ ի զօրացումն համազգային մեր կեանքի:

Թող Տէրը քաջառողջ երկար կեանք եւ գործոց յարանորոգ յաջողութիւններ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ հանապազ պահպանելով Իր խնամքի եւ օրհնութեան մէջ:


Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 812

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԿԻՆ ՇԱՔԵ ՊԱԹՄԱՆՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆԳՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՍԻԴՆԵՅ, ԱՎՍՏՐԱԼԻԱ

(23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ եւ գոհունակութեամբ անդրադառնում Ձեր ազգօգուտ ու եկեղեցաչէն գործունէութեանը, որի մասին տեղեակ ենք Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նալբանեանի միջոցով:

Սիրելի՛ տիկին Պաթմանեան,

Սիտնիում հայ համայնքի ճեւաւորման ակունքներում էք Դուք եւ Ձեր լուսահոգի ամուսինը՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ զաւակ Յովհաննէս Պաթմանեանը: Տարբեր յանձնառութիւններով ու կատարած սրտաբուխ բարերարութիւններով Դուք տասնեակ տարիներ Տիրոջ ապաւինութեամբ գնահատելի աջակցութիւն էք բերել Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց տիրախնամ թեմի առաքելութեանը, ազգային կրթօջախների ու հաստատութիւնների գործունէութեանը, որոնք կոչուած են ծառայելու Քրիստոսասէր մեր ժողովրդին եւ վերազարթօնք բերելու հայութեան ազգային ու հոգեւոր կեանքին: Այսօր Ձեր ընտանիքը մեծապէս սիրուած է աւստրալաբնակ Մեր հաւատաւոր զաւակների կողմից, ովքեր վայելում են Ձեր ազգանուէր ընթացքի բարի արգասիքները:

Բարձր գնահատելով մեր ժողովրդին եւ Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութիւնները եւ սիրով ընդառաջելով թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք

---

[1] «Էջմիածին», 2013, ժ, էջ 5:

Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք բարեյիշատակ Ձեր ամուսնու հոգու հանգստութեան համար՝ մաղթելով, որ Տէրն արարչական Իր սիրով նրա լոյս հոգին դասի «ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան Իւրոյ»:

Այլեւ հայցում ենք, որ Բարին Աստուած հանապազ օրհնութեամբ հովանի ու պահապան լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջութիւն, գործոց յարանորոգ յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 23-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 823

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԳՐԻԳՈՐ ՊԱԹՄԱՆՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՍԻՆՆԵՅ, ԱՎՍՏՐԱԼԻԱ

(24 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքն ենք բերում Առաքելական մեր Սուրբ եկեղեցու հաւատաւոր զաւակիդ:

Մեծարգո՛յ պրն. Պաթմանեան,

Աւստրալիայի եւ Նոր Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հայկազուն եպիսկոպոս Նալբարեանից տեղեկացանք տիրախնամ թեմին եւ մեր ժողովրդին մատուցած Ձեր օգտաշատ ծառայութիւնների մասին: Գովելի եկեղեցասիրութիւնն ու ազգասիրութիւնը Ձեր հոգում ձեւաւորուել են դեռեւս Ձեր ծննդավայրում՝ Եգիպտոսի աւանդաշատ հայ համայնքում, որտեղ գնահատելի մասնակցութիւն ունեցաք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան, ինչպէս եւ ազգային-եկեղեցական այլ կառոյցների աշխատանքներին: Եգիպտոսից Աւստրալիա տեղափոխուելով՝ առաջին իսկ տարիներից Առաքելական մեր Սուրբ եկեղեցու քրիստոսահաստատ առաքելութեան իրականացմանը սատար լինելու սրտաբուխ պատրաստակամութեամբ Դուք անդամակցեցիք Սիտնիի Սուրբ Յարութիւն եկեղեցու համայնքային վարչութեանը եւ տարբեր յանձնառութիւններով չարունակեցիք արդիւնաւոր ծառայութիւններ մատուցել ի նպաստ Սիտնիում բնակեալ հայորդեաց ազգային եւ հոգեւոր կեանքի աշխուժացման:

Առանձնակի գոհունակութիւն է Մեզ համար, որ Դուք սրտաբուխ նուիրատուութեամբ աջակցում էք Սիտնիում նոր եկեղեցու կառուցման աստուածահաճոյ նախաձեռնութեանը: Ազնիւ հոգով կատարած

---

[1] «Էջմիածին», 2013, Ժ, էջ 7:

Ձեր ընծայաբերածները Ձեր անունը դասել են եկեղեցու եւ տիրախնամ Թեմի երախտաւոր բարերարների պատուաւոր շարքում:

Դուք ջանադիր մասնակցութիւն ունեցաք նաեւ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Սիտնիի մասնաճիւղի հիմնադրման ազգաշահ գործին՝ հետամուտ լինելով, որպէսզի Միութիւնը նոր յաջողութիւններով շարունակի շնորհաբեր իր առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում:

Բարձր գնահատելով Ձեր ազգանուէր ու եկեղեցաշէն գործունէութիւնը, սիրով ընդառաջ Թեմակալ առաջնորդի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Աղօթում ենք, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով ու ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր՝ շարունակելու Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը մեր ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինեն ընտանեկան Ձեր յարկից:


Ողջ լերուք ի Տէր, գօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 824

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՎԱՐՈՒԺԱՆ ՍԱՐԿԱՎԱԳ ԱԼԹԸՊԱՐՄԱՔՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՖՐԵԶՆՈ, ԱՄՆ

(26 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ համայն հայութեան Աստուածկառոյց հոգեւոր կենտրոնից գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Սիրելի՛ Վարուժան սարկաւագ, ճանաչում ենք Ձեզ եւ Ձեր աստուածասէր ընտանիքին ու քաջածանօթ ենք հայրենանուէր եւ ազգօգուտ Ձեր գործերին, որոնք կենդանի վկայութիւն են առ Աստուած ունեցած Ձեր հաւատի ու սիրոյ: Հոգու բերկրանքով ենք անդրադառնում, որ աւելի քան քառորդ դար, իբրեւ Տիրոջ Սուրբ Սեղանի բարեչնորհ սպասաւոր, Ձեր ծառայութիւնն էք բերում մեր Սուրբ Եկեղեցու նուիրական առաքելութեան իրագործմանն ու կենաց Խօսքի տարածմանը:

Գովարժան են երկարամեայ Ձեր քաջեռանդ ջանքերը՝ ի խնդիր ամերիկահայութեան ազգային-եկեղեցական կեանքի զօրացման: Դուք՝ որպէս Ծխական խորհրդի անդամ, տարիներ շարունակ անճոռնուէր ծառայութիւն էք մատուցել Սագրամէնթոյի Սուրբ Յակոբ եւ Ֆրէզնոյի Սուրբ Պօղոս եկեղեցիների համայնքային կեանքից ներս: Գնահատելի են եկեղեցասէր հայորդուդ ազնիւ ընծայաբերումներն ի պայծառութիւն եւ ի բարօրութիւն առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի եւ Լա Քրէսէնթա Հովիտի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցու: Նուիրեալ ու ծառայասէր Ձեր ոգու արժանի գնահատանքով բազմիցս ընտրուել եւ պաշտօնի էք կոչո-

[1] «Էջմիածին», 2013, ԺԱ, էջ 22:

ւել որպէս Արեւմտեան Թեմի Թեմական Խորհրդի ատենապետ, որով պատասխանատու Ձեր կոչմամբ մշտապէս սատար էք կանգնել Թեմի առաքելութեանը: Դուք սրտաբուխ Ձեր նուիրաբերումներով յամենայնի աջակից էք ԱՄՆ Արեւմտեան Թեմի կողմից իրականացուող խնամակալութեան եւ բարեսիրական բազում այլ ծրագրերի՝ նախանձախնդիր լինելով, որպէսզի Միացեալ Նահանգներում բնակուող հարազատ մեր զաւակների հոգիներում չարունակի ապրել ու ծաղկել քրիստոնէական սուրբ հաւատն ու արթուն մնայ հաւատարմութիւնը հոգեւոր մեր արժէքներին:

Ուրախութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ Ձեր անունը ծանօթ եւ սիրելի է ամերիկաբնակ մեր ժողովրդին նաեւ որպէս առողջապահական ոլորտի նուիրեալ մշակի, ով իր գիտելիքներն ու տարիների տքնաջան աշխատանքով ձեռք բերած լայն հնարաւորութիւնները բազմից ծառայեցրել է հայ համայնքի կարիքների լուծմանն ի նպաստ: Այն հեղինակութիւնը, յարգանքն ու սէրը, որը վայելում էք Դուք Միացեալ Նահանգներում, արդար վաստակն է Ձեր աստուածահաճոյ գործունէութեան:

Այսօր գոհունակութեամբ ենք անդրադառնում նաեւ որդիական սիրով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին բերած Ձեր բազմարդիւն ծառայութիւններին: Տարիներ չարունակ, լինելով ջանասէր եւ բանիմաց անդամ Գերագոյն Հոգեւոր Խորհրդի, Ձեր կարելին էք բերում ի նպաստ ազգային-եկեղեցական կեանքի առջեւ յառնող խնդիրների լուծման: Նշանակալի է նաեւ ազնիւ բարերարիդ յօժարակամ աջակցութիւնը մեր Եկեղեցու հոգեւորականների պատրաստութեան նուիրական գործին:

Բարձր գնահատանքի արժանացնելով որդիական Ձեր սէրն ու նուիրումը հանդէպ մեր Սուրբ Եկեղեցին ու հարազատ ժողովուրդը եւ սիրով ընդառաջ ԱՄՆ Արեւմտեան Հայոց Թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Տէրը Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ Հայրապետի բարեխօսութեամբ պարգեւի Ձեզ եւ Ձեր

ընտանիքի անդամներին քաջառողջ արեւչատութիւն եւ եկեղեցաչէն ու ազգօգուտ գործերի յաջողութիւններ:

Թող Բարին Աստուած իր սիրոյ ու խնամքի մէջ պահպանի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ ազգս հայոց ի Հայրենիս եւ ի սփիւռս աշխարհի:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին Հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 826

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԱՐԹՈՒՐ ԿԱՐԱՊԵՏՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ

(25 ԱՊՐԻԼԻ, 2014 Թ.)[1]

Փառք ենք վերառաքում առ Բարձրեալն Աստուած, որ մեր ժողովրդի զաւակաց հոգիներում վառ են ազգային ու եկեղեցական մեր աւանդներն ու սրբութիւնները, եւ հաւատը նրանց կենդանի է գործերով:

Յարգարժա՛ն Պրն. Կարապետեան:

Գոհունակութեամբ տեղեկացանք Արմաւիրի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Սիօն եպիսկոպոս Ադամեանից ազգանպաստ ու եկեղեցանուէր Ձեր ձեռնարկումների մասին, որոնք բարեզարդում են Ձեր կեանքի ճանապարհը եւ յաւերժացնում Ձեր անունը՝ որպէս ազնիւ բարեգործը մեր Սուրբ Եկեղեցու: Հայրապետիս համար ուրախութիւն է անդրադառնալ, որ Դուք, լինելով Դոնի Ռոստով քաղաքի Սուրբ Աստուածածին եւ Սուրբ Խաչ եկեղեցիների խորհրդի անդամ, նաեւ առատաձեռն նուիրաբերութիւններով սատար էք կանգնում հայ համայնքի ազգային-եկեղեցական կեանքի առաջընթացին, նոր սերնդի հոգեւոր կրթութեան ու դաստիարակութեան կարեւոր առաքելութեանը:

Աստուածահաճոյ Ձեր գործունէութեան ընթացքում Ջանֆիդայ համայնքի Սուրբ Կարապետ եկեղեցին կառուցելու եւ յարակից տարածքը բարեկարգելու Ձեր ազնիւ յանձնառութիւնը մի նոր վկայութիւն է հայորդուդ գովարժան եկեղեցանուիրումի եւ աստուածսիրութեան: Մեծ նշանակութիւն պիտի ունենայ մեր ժողովրդի արժանաւոր զաւակիդ սրտաբուխ բարերարութեամբ յառնած եկեղեցին, որն այսուհետ, իր դռները բացած հաւատացեալից առջեւ, նոր աշխուժութիւն

---

[1] «Էջմիածին», 2014, Դ, էջ 11:

պիտի բերի համայնքային հոգեւոր կեանքին: Շնորհիւ Ձեր եւ Ձեզ պէս նուիրեալ ու յանձնառու հայորդեաց ազնիւ ջանքերի՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին բարուօք իրագործում է իր տէրունաւանդ առաքելութիւնը, եւ յաւելուում է չինուածիւնն ու պայծառութիւնը Հայ Եկեղեցու:

Համայն հայոց մեր նուիրական սրբօրրանից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր ծառայութիւնների բարձր գնահատանքով, սիրով ընդառաջելով Արմաւիրի թեմի բարեջան առաջնորդի խնդրանքին՝ չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

Ս ՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Փրկչի Իմման Սուրբ Սեղանի առջեւ Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ մեր Տէրը, բարեխօսութեամբ առաքելապատիւ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ մեր Հայրապետի, հանապազ օրհնութիւն բաշխի Ձեզ եւ Ամենախնամ Աջի ներքոյ երջանիկ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը՝ չնորհելով յարանորոգ յաջողութիւններ հայրենանուէր ու եկեղեցաշէն Ձեր բարի գործերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 25-ն Ապրիլի
Յամի Տեառն 2014 եւ ի թուին հայոց ՌՆԿԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 846

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՀՈՎԻԿ ԱԲՈՎՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆԳՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(26 ՄԱՅԻՍԻ, 2014 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ եւ Մեր չնորհաւորանքն ու բարեմաղթանքները բերում Ձեր ծննդեան 50-ամեայ յոբելեանի առիթով:

Գոհունակութիւն է Հարապետիս համար հաստատել, որ հաւատաւոր հայորդուդ սրտաբուխ բարերարութեամբ աւանդաչատ կողբ գիւղում վեր յառնեց նոր աղօթավայր, որը, արդարեւ, նոր խթան պիտի լինի գիւղի բնակիչների հոգեւոր-եկեղեցական կեանքի պայծառութեան համար: Նորակառոյց այս եկեղեցու նուիրական կամարների ներքոյ հաւատաւոր հայորդիք, եկեղեցական արարողութիւններին եւ խորհրդակատարութիւններին մասնակցելով, պիտի ընդունեն Աստծոյ պարգեւած չնորհները, նաեւ Սրբազան Պատարագի խորհրդով հաղորդուեն Տիրոջ կենարար Մարմնին ու Արեանը եւ հաւատքով ու եկեղեցասիրութեամբ զօրանալով՝ միշտ ամուր պահեն հաւատարմութիւնը սրբազան մեր արժէքներին: Ուրախալի է, որ այս օրը կատարուելու է նաեւ եկեղեցուն կից հովուատան բացումը, որը մեծապէս պիտի նպաստի հոգեւոր սպասաւորների ծառայութեան կազմակերպմանը:

Յարգարժա՛ն Պրն. Աբովեան, այս աստուածահաճոյ նախաձեռնութեան իրականացմամբ Դուք Ձեր գովարժան ներդրումն էք բերում մեր Սուրբ Եկեղեցու տէրունապատուէր առաքելութեանը, ինչը վառ վկայութիւնն է Ձեր եկեղեցասիրութեան ու բարեպաշտ ոգու: Ձեր ծառայութեան բարձր գնահատանքով, ընդառաջելով Տաւուչի թեմի առաջ-

[1] «Էջմիածին», 2014, Ե, էջ 3:

Նորդ գերաչնորհ Տ. Եղնիկ արքեպիսկոպոս Պետրոսեանի խնդրանքին՝ չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Մաղթում ենք, որ նոյն նուիրումով ու նախանձախնդրութեամբ շարունակէք Ձեր հաւատքը վկայել ազգանպաստ ու եկեղեցաշէն բարի գործերով՝ որպէս արժանաւոր զաւակը մեր Մայր Եկեղեցու:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը չնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին քաջառողջութիւն, կեանքի արեւշող բազում օրեր, մշտակայ ճեռքբերումներ եւ Ձեր բոլոր ազգաշահ ճեռնարկները պսակի նորանոր յաջողութիւններով:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 26-ն Մայիսի
Յամի Տեառն 2014 եւ ի թուին հայոց ՌՆԿԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 851

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՍԱՆԿՏ ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, ՌԴ

(29 ՄԱՅԻՍԻ, 2014 Թ.)[1]

Համայն հայոց նուիրական սրբօրրանից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից, Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ զաւակիդ:

Յարգարժա՛ն Պրն. Մկրտչեան:

Քաջատեղեակ ենք եկեղեցանուէր Ձեր ընթացքի մասին, որով գովարժան ներդրում էք բերում՝ ի չահ մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան եւ հայոց ազգային-եկեղեցական կեանքի պայծառութեան: Հայրապետիս համար գոհունակութիւն է անդրադառնալ, որ Ձեր կեանքի ճանապարհը բարեզարդում էք եկեղեցաչէն եւ ազգաշահ գործերով: Պատրաստակամ յանձնառութիւններով ու ծառայութիւններով Դուք մեծապէս ալակից էք Սանկտ Պետերբուրգի հայ համայնքում մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան արդիւնաւորմանը:

Մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կեանքի պայծառութեանը գովելի աւանդ բերելու ազնիւ մղումով Դուք նաեւ առատաձեռն նուիրաբերութիւն կատարեցի՝ ի խնդիր Արմաւիր քաղաքի եկեղեցու կառուցման հոգեշէն ու ազգանպաստ ծրագրի իրագործման, արատայայտելով Ձեր հոգու մշտավառ հաւատքը, ջերմ սէրն ու նախանձախնդրութիւնը հանդէպ սրբազան մեր արժէքները: Աստուածահաճոյ բարեգործութեամբ Դուք Ձեր եւ Ձեր ընտանիքի անունը կապեցիք նորակառոյց եկեղեցու պատմութեանը՝ արժանանալով Աստուծոյ հաճութեանն ու օրհնութիւններին: Ձեր ջերմ եկեղեցասիրութիւնը վկայող նշանակալի ներդրումով կառուցուած գեղեցկակերտ եկեղեցին

---

[1] «Էջմիածին», 2014, Ե, էջ 5:

մեծ կարեւորութիւն է ունենալու Թեմում՝ լինելով լուսաւոր կենտրոն ազգային ու հոգեւոր կեանքի:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր գովելի ծառայութեանց բարձր գնահատանքով եւ ընդառաջ Արմաւիրի թեմի բարեջան առաջնորդ գերաշնորհ

Տ. Սիօն եպիսկոպոս Ադամեանի խնդրանքին՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Իջման Սուրբ Սեղանի առջեւ Մեր աղօթքն է, որ Տէրը հանապազ օրհնութիւն բաշխի Ձեզ եւ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքոյ չէն ու երջանիկ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը՝ չնորհելով յարանորոգ յաջողութիւններ հայրենանուէր ու եկեղեցաշէն Ձեր բարի գործերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 29-ն Մայիսի
Յամի Տեառն 2014 եւ ի թուին հայոց ՌՆԿԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 850

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ԿՈԼՅԱ ԵՎ ՌՈՂԱ ԾԱՌՈՒԿՅԱՆՆԵՐԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԱՌԻՆՋ

(22 ՀՈՒԼԻՍԻ, 2015 Թ.)[1]

Յարգարժա՛ն տէր եւ տիկին Ծառուկեաններ:

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Այսօր առիթ ունենք գոհունակ սրտով Մեր գնահատանքը բերելու Ձեզ՝ Ծառուկեան ընտանիքի կողմից հայրենի մեր երկրում իրականացուող եկեղեցաշէն գործունէութեան համար: Հաւատքով ու սիրայօժար պատրաստակամութեամբ Դուք Ձեր որդու՝ տիար Գագիկ Ծառուկեանի հետ յանձն առաք եկեղեցիներ կառուցել հայրենի մեր երկրի տարբեր բնակավայրերում՝ հոգեւոր ուրախութիւն եւ մխիթարութիւն պարգեւելով բարեպաշտ հայորդիներին եւ առատացնելով Ձեր վարձքը երկնքում: Այսօր Մենք սաղմոսերգութեամբ եւ սրբազան մեր հայրերի աղօթքներով ու չարականներով կատարեցինք Ձեր ազնիւ հովանաւորութեամբ դէպի երկինք խոյացած Նոր Հաճըն քաղաքի Սուրբ Ամենափրկիչ գեղեցկակառոյց եկեղեցու օծման հոգենորոգ արարողութիւնը՝ գոհութիւն ու փառք մատուցելով առ Բարձրեալն Աստուած, որ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին չարունակում է չէնանալ ու առաւել պայծառանալ քրիստոսասէր իր զաւակների բարի գործերով ու նախաձեռնութիւններով:

Բարձր գնահատելով Ձեր մատուցած օգտաշատ ծառայութիւնները մեր Սուրբ Եկեղեցուն, սիրով ընդառաջ կոտայքի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Առաքել արքեպիսկոպոս Քարամեանի խնդրանքին՝ Սուրբ

---

[1] «Էջմիածին», 2015, Է, էջ 5:

Ամենափրկիչ եկեղեցու օծման բերկալի առիթով Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Ամենակալ Աստուծոյ օրհնութիւնն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ, Ծառուկեան ընտանիքի բոլոր անդամներին եւ մաղթում քաջառողջ արեւշատութիւն եւ եկեղեցաչէն ու ազգանուէր գործերի յարանոր յաջողութիւններ:

Թող ընտանեկան Ձեր յարկը չնորհընկալը լինի երկնապարգեւ չնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 22-ն Յուլիսի
յամի Տեառն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 912



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԳԱԳԻԿ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՍՈՉԻ, ՌԴ

(14 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Մեծարգո՛յ պրն. Պետրոսեան:

Համայն Հայութեան հաւատի նուիրական օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Այսօր ուրախ առիթ ունենք Մեր բարձր գնահատանքը բերելու հաւատաւոր հայորդուդ Ձեր ազգօգուտ ու եկեղեցաչէն գործունէութեան համար: Լինելով քահանայական տոհմի ժառանգ՝ Դուք առ հայրենին եւ առ մեր Սուրբ Եկեղեցին որդիական անկեղծ, ինքնաբուխ սիրով յանձն առաք հովանաւորել Գիւմրիի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու վերակառուցման, տարածքի բարեզարդման եւ երիցատան կառուցման աշխատանքները, նոր՝ լուսաւոր էջ յաւելելով Շիրակի թեմի պատմութեան մէջ:

Մենք գոհութիւն ու փառք ենք մատուցում առ Աստուած, որ խորհրդային անաստուածութեան տարիներին փակուած եւ երկրաշարժից խոնարհուած հնամենի ուխտավայր եկեղեցին վերստին իր դռներն է բացում հաւատացելոց առջեւ, որի օրհնաբեր կամարների ներքոյ Շիրակ աշխարհի Մեր սիրեցեալ զաւակները պիտի փառաբանեն Տիրոջ Սուրբ անունը՝ երախտագիտութեամբ յիշելով նաեւ Ձեզ եւ Ձեր եկեղեցասէր ընտանիքը:

Բարձր գնահատելով Ձեր եկեղեցանուէր բարի վաստակը եւ սիրով ընդառաջելով Շիրակի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Միքայէլ եպիսկոպոս Աջապահեանի խնդրանքին՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղե-

---

[1] «Էջմիածին», 2015, Ժ, էջ 5:

ցու վերաօծման առիթով Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Մաղթում ենք, որ չնորհեալ պարգեւը Ձեզ համար դառնայ խանդավառութեան նոր առիթ, որպէսզի Դուք չարունակէք օրինակելի նուիրումով ու հաւատարմութեամբ Ձեր բարի ծառայութիւնը ի բարօրութիւն մեր ժողովրդի եւ ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Ի խորոց սրտի աղօթքով հայցում ենք Տիրոջ ամենառատ չնորհները Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ մաղթելով կենաց քաջառողջութիւն եւ առաքինազարդ գործոց յարանոր յաջողութիւններ:

Աստուած յուսոյ՝ լի՛ արասցէ զՁեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելո՛ւլ ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ (Հռոմ. 15.13):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 924

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՍԵՐԳԵՅ ՍԱՐԿԻՍՈՎԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Մեծարգո՛յ պրն. Սարկիսով:

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ տեղեակ ենք Ձեր ազգանուէր եւ եկեղեցաչէն բազմարդիւն վաստակին: Դիւանագիտական գործունէութեամբ Դուք կարեւոր ջանքեր էք ներդնում ի խնդիր մեր երկրի զօրացման ու առաջընթացի, նաեւ ազնիւ բարերարութիւններով սատարում հայրենաշէն տարբեր ծրագրերի իրականացմանը՝ նախանձախնդիր լինելով, որպէսզի առաւել բարօր ու բարգաւաճ լինի մեր ժողովրդի զաւակների կեանքը Հայաստանում եւ Արցախում:

Գոհունակութիւն է Հայրապետիս համար, որ եկեղեցասէր ոգով ու սրտաբուխ ընծայաբերումով Դուք կարեւոր ներդրում բերեցիք նաեւ Վրաստանի Հայոց Թեմի առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգութեան աստուածահաճոյ գործին: Փառաբանական աղօթքն է Մեր հոգում, որ Տիրոջ օրհնութեամբ եւ հաւատաւոր Մեր զաւակների օժանդակութեամբ բարեզարդուեց պատմական սրբավայրը, որ դարեր շարունակ իր օրհնաբեր յարկի ներքոյ է միաւորում վիրահայ բարեպաշտ մեր ժողովրդին:

Բարձր գնահատելով Ձեր ազգանուէր ծառայութիւնները մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն, սիրով ընդառաջ Վրաստանի Հայոց Թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեա-

---

[1] «Էջմիածին», 2015, Ժ, էջ 7:

նի խնդրանքին՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալն Աստուծոյ չնորհներն ու օգնականութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Ամենախնամ Տէրը պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն եւ աստուածահաճոյ գործերի նորանոր յաջողութիւններ:

Թող Տիրոջ օրհնութիւնն ու առատ ողորմութիւնը անպակաս լինեն Ձեր կեանքից եւ ընտանեկան Ձեր յարկից:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 928

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԲԻՁԻՆԱ ԻՎԱՆԻՇՎԻԼՈՒՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԹԲԻԼԻՍԻ, ՎՐԱՍՏԱՆ

(30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Յարգարժա՛ն տիար Բիձինա Իւանիշուիլի;

Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ վրաց ժողովրդի արժանաւոր զաւակիդ, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքները:

Հայաստան կատարած Ձեր պաշտօնական այցելութեան ժամանակ առիթ ունեցանք ճանաչելու Ձեզ եւ մեծապէս տպաւորուելու Վրաստանի առաւել զօրացմանն ու առաջընթացին անմնացորդ ծառայելու Ձեր ազնիւ յանձնառութիւնից:

Այսօր գոհունակութիւն է Մեզ համար Մեր բարձր գնահատանքը բերել Ձեզ հայ-վրացական հարաբերութիւնների առաւել խորացման ու արդիւնաւորման գործին բերած նշանակալի աւանդի համար: Վրաստանի վարչապետի պատասխանատու պաշտօնում Ձեր ծառայութեան տարիներին նոր յաջողութիւններ արձանագրուեցին մեր պետութիւնների փոխգործակցութեան ասպարէզում, հնարաւոր դարձաւ լուծումներ գտնել վիրահայ համայնքի առջեւ ծառացած բազմաթիւ խնդիրների:

Առանձնակի ուրախութեամբ ենք անդրադառնում, որ Դուք մեծ աջակցութիւն բերեցիք Թբիլիսիի Նորաշէն Սուրբ Աստուածածին եւ Վիրահայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Գեւորգ եկեղեցիների վերանորոգութեան աստուածահաճոյ գործին, վկայելով Ձեր անկեղծ հաւատն ու աստուածսիրութիւնը, նաեւ մեր ժողովրդի եւ մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ ազնիւ ու ջերմ վերաբերմունքը: Վիրահայ հաւա-

---

[1] «Էջմիածին», 2015, Ժ, էջ 9:

տաւոր Մեր զաւակները մշտապէս երախտագիտութեամբ են յիշելու Ձեզ եւ աղօթքներ ու բարեմաղթանքներ ուղղելու առ երկնաւոր Տէրը Ձեր եւ Ձեր ընտանեաց համար:

Ի գնահատութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ազնիւ ծառայութեանց, սիրով ընդառաջ Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանի խնդրանքին, Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքն ու մաղթանքն է, որ Բարին Աստուած Իր օրհնութեան ներքոյ նորանոր յաջողութիւններ պարգեւի Ձեզ՝ ի չինութիւն Վրաստանի օրհնեալ երկրի եւ ի բարօրութիւն նրա բարեպաշտ ժողովրդի:

Թող ընտանեկան Ձեր յարկը չնորհընկալը լինի երկնապարգեւ չնորհների եւ Բարձրեալի առատ ողորմութեան:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 929

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԱԼԲԵՐՏ ԱՎԴՈԼՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Սիրելի՛ պրն. Աւդոլեան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ համայն հայութեան Աստուածակառոյց հոգեւոր կենտրոնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ տեղեակ ենք մեր ժողովրդի նուիրեալ զաւակիդ եռանդուն եւ նախանձախնդիր գործունէութեանը: Դուք երկար տարիներ բարեսիրական տարբեր ծրագրեր էք իրականացնում Հայաստանում եւ Ռուսաստանի Դաշնութիւնում, աջակցութիւն բերում բարեգործական հիմնադրամների ու կազմակերպութիւնների՝ հաւատարիմ առաքելական խօսքին. «Մի մոռացէք բարեգործութիւնը եւ ձեր ունեցած բարիքներին միմեանց մասնակից դարձնելը, քանզի այդպիսի պատարագներն են հաճելի Աստծուն» (Եբր. ԺԳ 16):

Այսօր առանձնակի գոհունակութիւն է Հայրապետիս համար անդրադառնալ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու չինութեանն ու պայծառութեանը մատուցած Ձեր ծառայութիւններին: Սրտաբուխ յանձնառութեամբ Դուք մասնակից դարձաք Վիրահայոց թեմի առաջնորդանիստ՝ Սուրբ Գեւորգ եկեղեցու վերանորոգութեան աստուածահաճոյ գործին՝ արտայայտելով Ձեր հաւատն առ Աստուած եւ որդիական սէրը առ Քրիստոսասէր մեր ժողովուրդը: Մենք փառք ենք մատուցում Բարձրեալն Աստծուն Ձեզ պէս հայորդեաց հաւատի, եկեղեցասիրութեան ու ազգասիրութեան համար:

Ձեր ազգօգուտ ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ Վրաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաչնորհ

---

[1] «Էջմիածին», 2015, Ժ, էջ 11:

Տ. Վազգէն եպիսկոպոս Միրզախանեանի խնդրանքին, Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Միածնի Իջման Սուրբ Խորանի առջեւ Հայրապետիս աղօթքն է, որ Ամենողորմ Տէրն Իր ամենագօր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ պարգեւի կեանքի արեւշատ տարիներ, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք՝ նոյն նուիրումով եւ նորոգ քաջալերութեամբ չարունակելու Ձեր ազգանպաստ եւ եկեղեցաշէն գործունէութիւնը:

«Առաւե՛լ լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ. գիտասջի՛ք՝ զի վաստակք ձեր ո՛չ են ընդունայն առաջի Տեառն» (Ա Կորնթ 15.58):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 30-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 930

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՍԻՆԱՆ ՍԻՆԱՆՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԿԱԼԻՖՈՌՆԻԱ, ԱՄՆ

(27 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Համայն հայութեան Սրբութիւն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ եկեղեցու հաւատաւոր եւ արժանաւոր զաւակիդ:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Ձեր աստուածաշնորհ կեանքի ընթացքը զարդարուած է ազգային-եկեղեցական անդաստանում բերած գովարժան վաստակով: Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ ուրախ ենք հաստատելու, որ Դուք երկար տարիներ լծուած էք ազգաշէն եւ եկեղեցաշէն ծառայութեան՝ Ձեր չնորհներն ու կարողութիւնները նուիրումով մատուցելով քրիստոսասէր մեր ժողովրդին եւ մեր Սուրբ եկեղեցուն:

Աստուածահաճոյ Ձեր սպասաւորութիւնը Տիրոջ օրհնութեան ներքոյ արգասաւորուել է հայկական բարեգործական ընդհանուր միութեան ծիրից ներս: Երկար տարիներ լինելով կենտրոնական վարչութեան անդամ՝ նպաստ էք բերել արդիւնաւորելու ազգանուէր այս հաստատութեան առաքելութիւնը, որը մէկ դարից աւելի երախտաւոր իր մշակներով մեծ ծառայութիւններ է բերում ողջ հայութեան կեանքում, զօրակից լինում մեր Սուրբ եկեղեցու առաքելութեանը: Այսօր Դուք՝ որպէս ՀԲԸՄ կենտրոնական վարչութեան փոխատենապետ, չարունակում էք ջանքեր ներդնել Միութեան գործունէութեան նորոգ արգասաւորման համար:

Ուրախալի է, որ Դուք պատրաստակամ յանձնառութիւններով աջակից էք ԱՄՆ Արեւմտեան Հայոց թեմին եւ գովարժան բարերարութիւններով պայծառութիւն էք հաւելում հայ համայնքի հոգեւոր-եկեղեցական կեանքին: Մեծապէս գնահատելի է տիրախնամ թեմի առաջնորդանիստ Սրբոց Ղեւոնդեանց Մայր Տաճարի կառուցման նո-

[1] «Էջմիածին», 2015, ԺԱ, էջ 5:

վիրական գործին Ձեր ներդրումը, աղօթավայրի շինութեան համար կատարած նշանակալի նուիրատուութիւնը: Դուք իշխանական սրտաբուխ նուիրատուութիւն կատարեցիք ՀԲԸՄ Մանուկեան-Տէմիրճեան Երկրորդական վարժարանի շէնքի համար: Լինելով Մանուկեան-Տէմիրճեան վարժարանի հոգաբարձութեան ատենապետը՝ ազնիւ ջանքեր էք ներդրել վարժարանի գործունէութեան լաւագոյնս կազմակերպման, կրթական մակարդակի բարձրացման, մանուկ ու պատանի հայորդեաց հայեցի եւ քրիստոնէական կրթութեան ու դաստիարակութեան համար: Գովելի է նաեւ հայրենի երկրին զօրակից լինելու նախանձախնդրութեամբ Ձեր նիւթական մեծ նուիրաբերութիւնը Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսարանին:

Յարգարժա՛ն պարոն Սինանեան, Ձեր կեանքի ողջ ընթացքին Դուք դրսեւորել էք որդիական անկեղծ սէր ու ծառայութեան պատրաստակամութիւն՝ հանդէպ հարազատ ժողովուրդը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, եւ Մենք ուրախ ենք, ընդառաջ ԱՄՆ Արեւմտեան Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին, Հայրապետական այսու կոնդակով չնորհել Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Ի խորոց սրտի Հայրապետիս աղօթքն ու բարի մաղթանքն է, որ Բարձրեալ Տէրը հանապազ զօրավիգ ու աջակից լինի եւ Իր Սուրբ Աջի բարեխնամ հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ երկար կեանք, նորանոր ձեռքբերումներ եւ ազգօգուտ ու եկեղեցաշէն գործոց մշտանորոգ յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 27-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 937

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ՎՐԵԺ ԵՒ ԻՄԱՍՏՈՒՀԻ ՆԻԿՈՂՈՍՅԱՆՆԵՐԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԿԱՆԱԴԱ

(15 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Սիրելի՛ տէր եւ տիկին Վրէժ եւ Իմաստուհի Նիկողոսեաններ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ՝ մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ զաւակներիդ, Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում տարիների Ձեր եկեղեցանուէր եւ ազգասէր ծառայութիւններին, որ տասնամեակներ շարունակ հաւատաւոր ոգով մատուցում էք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում: Բարեպաշտ ամոլիդ սրտաբուխ նուիրատուութիւններով առաւել արգասաւորուել է Կանադայի Հայոց թեմի հոգեխնամ առաքելութիւնը: Ձեր սպասաւորութիւնը գովելի արդիւնքներով էք զարդարել յատկապէս առաջնորդանիստ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում տարիների անսակարկ ծառայութեամբ՝ աստուածահաճոյ բարերարութիւններով զօրակցելով կանադահայոց ազգային-եկեղեցական կեանքում հաւատաչէն միջոցառումների իրականացմանը, նպաստելով հայ համայնքի չինութեանը: Ազգասէր ու հայրենասէր հայորդիներդ սրտաբուխ բարերարութիւններով նաեւ սատար էք եղել հայրենօգուտ ձեռնարկներին, ինչպէս նաեւ «Հայաստան» համահայկական հիմնադրամի բարեսիրական ծրագրերի իրականացմանը՝ վկայելով որդիական ջերմ սէրն ու նախանձախնդրութիւնը առ ազգն ու հայրենին: Արժանայիշատակ է Ձեր իշխանական նուիրատուութիւնը՝ ի խնդիր Հայաստանի Նոյեմբերեան քաղաքի մանկական հիւանդանոցի շէնքի նորոգութեան, որով բարի ներդրում բերեցիք այդ հաստատու-

[1] «Էջմիածին», 2016, Ա, էջ 7:

թեան ներքոյ իրենց դարմանումը ստացող երեխաներին խնամք եւ հոգածութիւն ցուցաբերելու կարեւոր գործում: Աստուածահաճոյ Ձեր ծառայութեանց չնորհիւ Դուք արդարօրէն արժանացել էք կանադայի հայ համայնքի եւ հոգեւոր դասի սիրուն ու յարգանքին: Սիրելի տէր եւ տիկին Նիկողոսեաններ, Ձեր վաստակի բարձր գնահատանքով, ընդառաջելով Կանադայի Հայոց թեմի առաջնորդ գերաչնորհ Տ. Աբգար եպիսկոպոս Յովակիմեանի ազնիւ խնդրանքին, չնորհում ենք Ձեզ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Մենք հաւատում ենք, որ նոյն գովարժան փութաջանութեամբ Դուք պիտի չարունակէք Ձեր եկեղեցանուէր ծառայութիւնները՝ աջակցութիւն բերելով հայորդեաց մէջ քրիստոնէական լոյս հաւատքը մշտավառ պահելու առաքելութեանը, նպաստելով Կանադայի Հայոց թեմի չինութեանն ու պայծառութեանը:

Աղօթում ենք, որ Ամենակալ Տէրը չնորհի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին կեանքի քաջառողջ ու արեւշող բազում օրեր եւ Ձեր բոլոր բարի եւ առաքինի ձեռնարկումները պսակի մշտակայ յաջողութիւններով:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 15-ն դեկտեմբերի
յամի Տեառն 2015 եւ ի թուին հայոց ՌՆԿԴ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 938

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԵՐ ԵՒ ՏԻԿԻՆ ԷԴՈՒԱՐԴ ԵՒ ԺԱՆԵԹ ՄԱՐՏԻԿՅԱՆՆԵՐԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԴԵՏՐՈՅԹ, ԱՄՆ

(23 ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2016 Թ.)[1]

Սիրելի՛ տէր եւ տիկին Մարտիկեաններ:

Ուրախ ենք մեծապես Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ընդունելու Ձեզ եւ Հայրապետական Մեր օրհնութիւնը, ջերմ սէրն ու բարեմաղթանքները բերելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակներիդ:

Ազգային եւ եկեղեցական մեր կեանքում մեծ, գովարժան վաստակ ունի Մարտիկեան բարեգործ ընտանիքը, որ սերնդէ սերունդ յաջորդականութեամբ իր սրտաբուխ ընծայաբերումներով ու ազնիւ յանձնառութիւններով ծառայում է յանուն հաւատաւոր մեր ժողովրդի բարօրութեան եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու յաւէտ պայծառութեան:

Մենք ուրախ առիթ ենք ունեցել ճանաչելու Ձեր ծնողներին, հաղորդ դառնալու նրանց եկեղեցասէր ու ազգասէր ոգուն, նրանց աստուածահաճոյ գործերին, որոնք մշտապէս աղօթքով ու երախտագիտութեամբ են յիշուելու հայորդեաց հոգիներում: Այսօր գոհունակութիւն է Հայրապետիս համար հաստատել, որ Ձեր ծնողաց լուսաւոր օրինակով՝ Դուք, սիրելի Էտուըրտ եւ Ճանէթ, ապրում ու գործում էք հայրենի մեր երկրին, մեր ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն ծառայելու ազնիւ նուիրումով ու նախանձախնդրութեամբ:

Մենք բարձրօրէն գնահատում ենք հաւատաւոր ամուլիդ երկարամեայ ազգօգուտ վաստակը: Դուք բարեսիրական բազմաթիւ ծրագրեր էք իրականացրել մեր երկրում, օժանդակել Հայաստանի սահմանամերձ չրջաններում ապրող կարիքաւոր հայորդիներին: Ձեր բարեգոր-

[1] «Էջմիածին», 2016, Թ, էջ 8:

ծուխիւնների արգասիքները յոյս ու լաւատեսութիւն են պարգեւում դժուարութիւնների մէջ ապրող մեր ժողովրդի զաւակներին:

Նախանձախնդիր նոյն ոգով Դուք դրսեւորել էք նաեւ Ձեր որդիական սէրն ու նուիրումը հանդէպ Սուրբ Էջմիածինը՝ հոգեւոր նուիրական կենտրոնը աշխարհասփիւռ հայութեան: Գոհունակութիւն է հայրապետիս համար, որ Դուք սիրով ստանձնեցիք նաեւ Սուրբ Էջմիածնի «Երեմեան» միաբանական չէնքի նորոգութեան հովանաւորութիւնը՝ նոր կեանք պարգեւելով պատմական կառոյցին: Ձեզ պէս հաւատաւոր Մեր զաւակների ազնիւ յանձնառութիւններով պայծառանում է Մայր Աթոռը՝ չարունակելով իր Տիրաւանդ առաքելութիւնը մեր ժողովրդի կեանքում:

Բարձր գնահատելով Ձեր վաստակը մեր Սուրբ Եկեղեցու եւ հաւատաւոր ժողովրդի կեանքում՝ Հայրապետական այսու Կոնդակով, սիրով ընդառաջ ԱՄՆ Արեւելեան Հայոց Թեմի առաջնորդ գերաչնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամեանի խնդրանքին, չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Վստահ ենք, որ մեր Սուրբ Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ Ձեր որդիական զգացումները պիտի չարունակուեն արդիւնաւորուել աստուածահաճոյ նոր ձեռնարկներով:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աչով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 23-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2016 եւ ի թուին հայոց ՌՆԿԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 968

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԵՐ ԵՎ ՏԻԿԻՆ ՍԱՄՍՈՆ ԱԲՈՎՅԱՆԻՆ ԵՎ ՍԱԹԵՆԻԿ ՆԱՍԻԲՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԿՈՂԲ, ՏԱՎՈՒԾ

(19 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2016 Թ.)[1]

Գոհունակութիւն է Հայրապետիս համար Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքը բերելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր զաւակներիդ:

Տաւուշի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանեանի միջոցով տեղեակ ենք Ձեր եկեղեցաշէն գործունէութեան մասին: Ուրախ ենք մեծապէս, որ աստուածահաճոյ իրագործումներով Դուք աջակցում էք մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան արդիւնաւորմանը եւ գնահատարժան վաստակ բերում մեր երկրում հոգեւոր կեանքի վերազարթօնքին:

Ձեր հաւատաւոր ոգու, ազգասիրութեան ու հայրենասիրութեան դրսեւորումն է Տաւուշի թեմի Կողբ համայնքում Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կառուցումը, որն իրականացրեցիք նուիրումով ու հետեւողական աշխատանքով՝ ի կատար ածելով Ձեր ծնողաց երկարամեայ լուսաւոր երազանքը: Եկեղեցու օծման հոգենորոգ այս օրը Մենք փառք ենք մատուցում Բարձրեալ Տիրոջը, որ ազգիս երախտարժան զաւակները ապրում են մեր հայրերի լոյս հաւատքով եւ կարելին ի գործ են դնում՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու լուսառատ օրհնութեան ներքոյ զօրացնելու մեր Հայրենիքը եւ բարեզարդելու կեանքը մեր ժողովրդի: Նորակառոյց եկեղեցին օրհնութիւն է հաւատաւոր հայորդեաց համար, որի կամարների ներքոյ նրանք սաղմոս ու չարական պիտի երգեն եւ իրենց աղօթքն առ Աստուած բարձրացնեն՝ գովաբա-

[1] «Էջմիածին», 2016, Ժ, էջ 9:

նելով Ամենակալն Աստծուն իր երկնային առատ չնորհների ու պարգեւների համար:

Բարձր գնահատելով Ձեր ծառայութիւնները մեր Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին, սիրով ընդառաջում ենք թեմակալ առաջնորդի ազնիւ խնդրանքին եւ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանշանը:

Վստահ ենք, որ չնորհեալ պարգեւը՝ Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու օծման առիթով, խրախոյս պիտի լինի Ձեզ համար՝ աստուածահաճոյ նորանոր իրագործումներով չարունակելու Ձեր ազգանուէր ծառայութիւնները՝ ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու եւ ի զօրացումն համազգային մեր կեանքի:

Թող Տէրը քաջառողջ երկար կեանք եւ գործոց յարանորոգ յաջողութիւններ պարգեւի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին՝ հանապազ պահպանելով Իր խնամքի եւ օրհնութեան մէջ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 19-ն Հոկտեմբերի
յամի Տեառն 2016 եւ ի թուին հայոց ՌՆԿԵ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 974

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ
ԼՈՒՍԱՎՈՐԻՉ
ԵՐԱՆԵԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՌԱՉՄԻԿ ԲԼԻԿՅԱՆԻՆ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՎԼԱԴԻՄԻՐ, ՌԴ

(7 ՕԳՈՍՏՈՍԻ, 2017 Թ.)[1]

Մեծարգո՛յ պրն. Բլիկեան:

Համայն Հայութեան Հոգեւոր Նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս արքեպիսկոպոս Ներսիսեանի միջոցով տեղեակ ենք եկեղեցանուէր Ձեր երկարամեայ վաստակի մասին: Ուրախ ենք մեծապէս, որ Դուք հասարակական աշխոյժ գործունէութիւն էք ծաւալել Ռուսաստանի Դաշնութիւնում՝ Ձեր ազնիւ ջանքերը, ժամանակն ու կարողութիւնները ինքնաբուխ սիրով ծառայեցնելով ռուսական վանքերի նորոգութեան, Վլադիմիր քաղաքում հայ-ռուսական մշակութային ու կրթական կենտրոնի, կիրակնօրեայ դպրոցի հիմնադրման երախտաշատ գործին:

Հաւատաւոր ոգով Դուք տարիներ առաջ աջակցեցիք նաեւ Մոսկուայի Ս. Պայծառակերպութիւն առաջնորդանիստ եկեղեցու կառուցմանը՝ Ձեր անունը արձանագրելով եկեղեցու բարերարների պատուաւոր շարքում: Մեր Սուրբ Եկեղեցուն եւ հարազատ ժողովրդին օգտակար լինելու ազնիւ նախանձախնդրութեամբ ստանձնեցիք նաեւ Վլադիմիրի Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու կառուցումը« որի օրհնաբեր յարկի ներքոյ այսուհետ առաւել պայծառ ու լուսաւոր պիտի լինի հայորդեաց ազգային ու հոգեւոր կեանքի անդաստանը: Հաւատացեալ զաւակները մեր ժողովրդի իրենց աղօթքներում երախտա-

[1] «Էջմիածին», 2017, Ը, էջ 5:

գիտութեամբ են յիշելու Ձեզ եւ Աստուծոյ օրհնութիւնը հայցելու Ձեր կեանքին ու գործերին:

Մեր ժողովրդին ու մեր Սուրբ Եկեղեցուն մատուցած Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով, սիրով ընդառաջ թեմակալ առաջնորդի խնդրանքին, Սուրբ Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու օծման ուրախ առիթով Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աչի հովանու ներքոյ պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին եւ օրհնի Ձեր կեանքը քաջառողջութեամբ եւ երկնատուր առատ բարիքներով:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եւ սէրն Աստուծոյ եւ հաղորդութիւն Հոգւոյն Սրբոյ ընդ ձեզ ամենեսին, ամէն (Բ Կորնթ. 13. 13):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 7-ն Օգոստոսի
յամի Տեառն 2017 եւ ի թուին հայոց ՌՆԿՁ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 1015



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԷԴՈՒԱՐԴ ՏԵՐ - ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԵՐԵՎԱՆ

(12 ԱՊՐԻԼԻ, 2010 Թ.)[1]

Հայոց հաւատքի նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Մեծարգո՛յ պրն. Տէր-Ղազարեան,

Ուրախ ենք մեծապէս գնահատանքի խօսք ուղղել տաղանդաշատ հայորդուդ, որ երկնապարգեւ Ձեր շնորհները անյոգնաբեկ ու տքնաջան աշխատանքով ծառայեցնում էք հայ մշակոյթի զարգացմանը: Հայ ժամանակակից արուեստի մէջ ուրոյն տեղ ու մեծ ճանաչում ունեն Ձեր մանրաքանդակները: Խոշորադիտակով միայն տեսանելի Ձեր զարմանահրաշ գործերը տասնեակ տարիներ ցուցադրուում են բազմաթիւ երկրների յայտնի թանգարաններում ու ցուցասրահներում, այդ թուում Մայր Աթոռիս թանգարանում՝ հիացմունք պարգեւելով այցելուներին եւ արժանացնելով Ձեզ միջազգային մրցանակների, բարձր կոչումների ու պարգեւների: Ձեր անունն արժանապէս դասուած է տաղանդաւոր ու շնորհալի հայորդեաց շարքին, ովքեր իրենց գործունէութեամբ պատիւ ու հռչակ են բերել Հայրենի մեր Երկրին ու ժողովրդին ամբողջ աշխարհում:

Արուեստասէր հասարակութեանը Դուք ծանօթ էք նաեւ որպէս նուիրեալ ու շնորհալի երաժիշտ: Կէս դար շարունակ Հայաստանի

[1] «Էջմիածին», 2010 Դ, էջ 13:

սիմֆոնիկ նուագախմբում Դուք Ձեր գործընկերների հետ միասին բարձրարուեստ կատարումներով մեր ժողովրդին մատուցել էք դասական երաժշտութեան գոհարները:

Մեծարգոյ պրն. Տէր-Ղազարեան, լինելով քահանայի թոռ, Դուք կրթուել ու մեծացել էք Քրիստոսասէր ոգով, հաւատարմութեամբ առ ազգային մեր սրբութիւններն ու հայրենական արժէքները: Մենք ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ մշտապէս ականատես ենք եղել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր անկեղծ սիրուն ու նուիրումին:

Արուեստի ասպարէզում Ձեր բեղմնաւոր գործունէութեան եւ Հայրենի մեր երկրին ու սիրեցեալ մեր ժողովրդին մատուցած ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Մայր Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր չքանշանը:

Ի խորոց սրտի Մեր աղօթքով հայցում ենք, որ Բարձրեալ Տէրն Իր ամենազօր Սուրբ Աչի հովանու ներքոյ պահի ու պահպանի Ձեզ եւ պարգեւի կեանքի արեւշատ տարիներ եւ ուժ ու եռանդ՝ կերտելու նոր, զարմանահրաշ մանրաքանդակներ: Մաղթում ենք նոր ներշնչանքներ եւ փառքի մշտական վերընթաց ուղի:


Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Ապրիլի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 552

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ
ԾՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՁՈՐԻ ԲԱԼԱՅԱՆԻՆ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԾՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԱՐՑԱԽ

(21 ԱՊՐԻԼԻ, 2010 Թ.)[1]

Մեծապէս ուրախ ենք համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, վեհարանի նուիրական յարկի ներքոյ ընդունելու Ձեզ եւ բերելու Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնը, սէրն ու բարեմաղթանքները:

Սիրելի՛ պրն. Բալայեան:

Ազգային, հասարակական, գրական-ստեղծագործական տասնեակ տարիների բեղմնաւոր գործունէութեան չնորհիւ Ձեր անունը ծանօթ ու սիրելի է մեր ժողովրդի զաւակներին: Արցախեան հերոսամարտի ակունքներում էք Դուք՝ որպէս գաղափարական պայքարի առաջամարտիկ: Հաւատաւոր ու հայրենասէր Ձեր հոգու կանչով Դուք նուիրուեցիք հայրենի մեր Արցախ աշխարհի ազատագրման սրբազան գործին եւ մեր մտաւորականութեան ներկայացուցիչների հետ միասին արցախահայութեան ու համայն մեր ժողովրդի ձայնը խիզախօրէն հնչեցրեցիք Խորհրդային Միութեան բարձր ատեաններում, պաշտպանելով ազգային մեր արդար դատը: Հայրենի մեր երկրին ու Արցախին պարտադրուած պատերազմի տարիներին մշտապէս եղաք Աստուածպարգեւ մեր հայրենիքը պաշտպանելու ելած հայրենասէր նուիրեալների կողքին՝ ոգեշնչելով քաջորդի Մեր զաւակներին ու մասնակցելով մեր յաղթանակների կայացմանը:

Ներկայիս Դուք աննուազ եռանդով չարունակում էք Ձեր ազգանուէր գործունէութիւնը՝ տարբեր յանձնառութիւններով ու նախաձեռնութիւններով ծառայելով ի խնդիր Հայրենի մեր Երկրի բարգաւաճման ու առաջընթացի, Արցախի անկախութեան ճանաչման,

[1] «Էջմիածին», 2010 Դ, էջ 15:

Հայրենիք-Սփիւռք յարաբերութիւնների զօրացման ու առաւել արգասաւորման եւ համայն մեր ժողովրդի միասնականութեան ամրապնդման: Առանձնակի գոհունակութիւն է Հայրապետիս համար նշել, որ կեանքի ողջ ընթացքին Դուք դրսեւորել էք Ձեր հոգու ջերմ սէրն ու նուիրումը՝ հանդէպ մեր Եկեղեցին եւ հոգեւոր մեր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Հայրենի մեր երկրին ու հարազատ ժողովրդին մատուցած Ձեր բազմարդիւն ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր չքանչանը:

Աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, հայցելով, որ միշտ չնորհառատ պահի Ձեր հաւատաւոր հոգին եւ պարգեւի երջանկութեամբ ու նորանոր ձեռքբերումներով լեցուն արեւշատ կեանքի տարիներ:

Թող Բարձրեալ Տէրը Ամենախնամ Իր Աջի հովանու ներքոյ պահպանի Ձեզ եւ Ձեր ընտանեաց անդամներին:


Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Ապրիլի
Յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 555

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐՔ ՏԻԱՐ ՍՈՒՐԵՆ ՁՈՒՐԱԲՅԱՆԻՆ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԵՐԵՎԱՆ

(1 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2010 Թ.)[1]

Սիրելի՛ պրն. Զոհրաբեան:

Երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի գահակալութեան տարիներից ճանաչում ենք Ձեզ եւ մշտապէս ականատես ենք եղել Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդէպ Ձեր անկեղծ սիրուն ու նուիրումին: Այսօր Տիրոջ կամքով ուրախ առիթն ունենք Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքը բերելու Ձեզ՝ հաւատաւոր հայորդուդ եւ անուանի բժիշկ-գիտնականիդ, որ տասնեակ տարիներ աննուազ սիրով ու նուիրումով Ձեր կեանքն ու աստուածահաճոյ գործը ընծայաբերում էք մեր երկրին ու ժողովրդին:

Բժշկութեան ասպարէզում մասնագիտական փորձառութիւնը Դուք սկսեցիք երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին՝ Ձեր գիտելիքներն ու կարողութիւնները ի սպաս բերելով մարտի դաշտերում վիրաւորուած զինուորների ապաքինմանը: Պատերազմի աւարտին վերադառնալով Հայրենիք, հիմնադրեցիք նեարդավիրաբուժական բաժանմունքը եւ ամբողջանուէր ոգով ծառայեցիք մեր երկրում բժշկութեան այս կարեւոր ճիւղի զարգացմանը: Այսօր աւելի քան վեց տասնամեակների արդիւնաւոր ծառայութեան վաստակն է Ձեր ուսերին: Բազմաթիւ հիւանդներ Ձեր ձեռքերով վերագտել են իրենց առողջութիւնը, եւ նրանց հոգիներում երախտագիտութիւնն ու բարի մաղթանաց հայցն է առ Բարձրեալ Տէրը՝ Ձեր եւ Ձեր ընտանիքի համար:

---

[1] «Էջմիածին», 2010 ԺԱ, էջ 4:

Ձեր անունն այսօր ճանաչուած է ինչպէս Հայաստանում, այնպէս եւ արտերկրում՝ որպէս առաջնակարգ նեարդաբան, անխոնջ գիտնական եւ մանկավարժ: Ձեր հարիւրաւոր ուսումնասիրութիւնները, գրքերն ու հրապարակումները, միջազգային գիտաժողովներում ու հեղինակաւոր կրօնական ակումբներում դասախօսութիւնները ու զեկուցումները արժանացրել են Ձեզ բազում կոչումների ու պարգեւների: Ձեր ղեկավարութեամբ բազմաթիւ երիտասարդներ պատրաստել են գիտական աշխատութիւններ՝ առաջին քայլերը կատարելով գիտութեան լուսաւոր անդաստանում:

Հայրենի մեր երկրին եւ սիրեցեալ ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց բարձր գնահատանքով Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալ Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ՝ յետայսու եւս չարունակելու Ձեր կարեւոր առաքելութիւնը հաւատաւոր մեր ժողովրդի կեանքում:

Մեր մաղթանքն է նաեւ, որ Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ միշտ քաջառողջ ու երջանիկ պահի եւ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յարանորոգ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բոլոր գործերին ու ծրագրերին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 580

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՌԱԶՄԻԿ ԴԱՎՈՅԱՆԻՆ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԵՐԵՎԱՆ

(24 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2010 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական սիրով ողջունում եւ Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ, եւ Մեր ջերմ չնորհաւորանքներն ու բարեմաղթանքները բերում Ձեր ծննդեան 70-րդ տարեդարձի յոբելեանական առիթով:

Յարգարժա՛ն պարոն Դաւոյեան, աստուածաշնորհ Ձեր գրական ձիրքն ու տաղանդը երկար տարիներ արգասաւորութեամբ ծառայեցնում էք հայ գրականութեանը եւ այսօր Ձեր յոբելեանը դիմաւորում էք ճանաչուած ու գնահատուած լինելով գրականասէր հասարակութեան կողմից: Ձեր պոեզիան, առանձնանալով մարդկային հոգու խորին ապրումներով, հայրենասիրական ոգով, խորհրդածութեան է մղում ընթերցողներին, զօրացնում նրանց ազգասիրութիւնը, յորդորում ապրել ու գործել՝ յանուն ճշմարտութեան, արդարութեան եւ խաղաղութեան: Ձեր բանաստեղծութիւններն ու պոեմները նաեւ թարգմանուած են այլ լեզուներով, որով օտար ընթերցողներ եւս հաղորդակից են դառնում Ձեր արուեստին, ծանօթանում արդի հայ գրականութեան ձեռքբերումներին:

Գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ Դուք գրական գործունէութեանը զուգահեռ նշանակալի մասնակցութիւն էք ունեցել ազգային-հասարակական մեր կեանքում: Դուք գովելի ջանքեր էք բերել Սփիւռքի հետ մշակութային կապերն ամրապնդելու ուղղութեամբ: Դեռեւս խորհրդային տարիներից հայրենանուիրումով եւ մեր պետութեան անկախութեան ու հզօրացման տեսլականով պայքարել

---

[1] «Էջմիածին», 2010 ԺԱ, էջ 11:

էք՝ ի խնդիր մեր ազգային շահերի եւ մեր ժողովրդի արդար իղձերի մարմնաւորման: Բարձրօրէն գնահատելի է, որ Դուք աստուածահաճոյ ներդրում էք ունեցել Հայաստանի Հանրապետութեան անկախ պետականութեան կայացման ու հաստատման գործում:

Ուրախ ենք, որ այսօր անխոնջ նուիրումով չարունակում էք Ձեր գովելի գործունէութիւնը հայ գրականութեան անդաստանում եւ մեր մշակութային կեանքում:

Մեծապէս գնահատելով Ձեր գրական վաստակը եւ ազգային կեանքում մատուցած զգալի աւանդը՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր չքանչանը:

Աղօթում ենք, որ Բարձրեալի օրհնութիւնը իր ամենառատ պարգեւներով միշտ Ձեզ հետ լինի, անպակաս Ձեր կեանքից: Թող Տէրը քաջառողջ արեւշատութիւն պարգեւի Ձեզ, նոր կորով ու ստեղծագործական աւիւն՝ չարունակելու Ձեր ծառայութիւնները հայ գրականութեանը, մեր Հայրենիքին ու ժողովրդին:

Շնորհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ եղիցին ընդ ձեզ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 24-ն Նոյեմբերի
յամի Տեառն 2010 եւ ի թուին հայոց ՌՆԾԹ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 589

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ
ԾՔԱՆԾԱՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԱՐԱՄԱՅԻՍ ՍԱՀԱԿՅԱՆԻՆ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԵՐԵՎԱՆ

(6 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2011 Թ.)[1]

Լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սրտաբուխ բարեմաղթանքները:

Ճանաչում ենք Ձեզ անձնապէս եւ քաջածանօթ ենք Ձեր հայրենասէր, ազգասէր ու եկեղեցասէր ոգուն, որը դրսեւորուած է Ձեր ստեղծագործական, հրապարակախօսական եւ հասարակական բեղուն գործունէութեան մէջ:

Հայ գրականութեան ծաղկուն անդաստանի մէջ վաստակաշատ մշակ էք Դուք, սիրելի պրն. Սահակեան: Ձեր արձակ ու չափածոյ ստեղծագործութիւնները, երգեր դարձած հարիւրաւոր բանաստեղծութիւնները, հրապարակախօսական յօդուածները քաջածանօթ ու հոգեհարազատ են մեր ժողովրդին: Ձեր ստեղծագործական վաստակը արժանիօրէն գնահատուած է բազմաթիւ պարգեւներով ու մրցանակներով:

Մեր ժողովրդի սէրը Դուք վաստակել էք նաեւ Ձեզ յատուկ առողջ եւ սրամիտ հումորի միջոցով: Տակաւին խորհրդային տարիներից Ձեր գլխաւորութեամբ «Ոգնի» երգիծաթերթը հումորի միջոցով վեր է հանում մեր կեանքում առկայ սոցիալական, տնտեսական, բարոյական խնդիրները եւ մերժելի երեւոյթները՝ ծառայելով հասարակութեան մէջ ճշմարիտ արժէքների տարածումին եւ հաստատմանը: «Ոգնի» երգիծաթերթը, ինչպէս նաեւ Ձեր հեռուստահաղորդումներն ու հումորային չարքերը միշտ սպասուած ու սիրելի են հայորդեաց կողմից:

---

[1] «Էջմիածին», 2011, ԺԲ, էջ 3:

Առ ի գնահատութիւն երկար տարիների Ձեր գրական ու հասարակական վաստակեալ գործունէութեան՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր չքանչանը:

Աղօթում ենք, որ Բարձրեալ Տէրը մեր մեծ ուսուցչապետերի՝ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխօսութեամբ աստուածային իր չնորհն ու օրհնութիւնը անպակաս դարձնի Ձեր կեանքից եւ պարգեւի Ձեզ քաջառողջ, արեւշատ երկար օրեր, նոր եռանդ ու ներչնչանքներ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 6-ն Դեկտեմբերի
յամի Տեառն 2011 եւ ի թուին հայոց ՌՆԿ
ի մայրաւանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 644

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԱԼԲԵՐՏ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԵՐԵՎԱՆ

(1 ԱՊՐԻԼԻ, 2012 Թ.)[1]

Համազգային մեր նուիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում Ձեզ՝ մեր ժողովրդի ու մեր եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Սիրելի՛ պրն. Մկրտչեան, ծնուելով ու հասակ առնելով արուեստաչունչ Գիւմրի քաղաքում, Դուք պատերազմական ու հետպատերազմական ժամանակներում դժուարութիւնների ու զոհողութիւնների գնով հարթեցիք Ձեր ճանապարհը դէպի կինոարուեստի եւ թատերարուեստի ասպարէզ: Ձեր գիտելիքները հարստացրեցիք Երեւանի Գեղարուեստաթատերական եւ Մոսկուայի կինեմատոգրաֆիայի ինստիտուտներում եւ լծուեցիք ստեղծագործ աշխատանքի՝ հայկական կինոյի ու թատրոնի լաւագոյն աւանդները չարունակելու եւ նոր բարձունքների հասցնելու աննուազ նախանձախնդրութեամբ:

Այսօր կինոյի եւ թատրոնի ասպարէզներում մեծապէս յայտնի են Ձեր նկարահանած տասնեակ կինոնկարներն ու բեմադրած ներկայացումները, որոնք արգասիքն են աւելի քան կէս դարեայ Ձեր գովարժան վաստակի: Արուեստագէտի նրբազգաց ճաշակով Դուք Ձեր աշխատանքներում ներկայացրել էք ժամանակի ոգին, Ձեր հերոսների միջոցով բացայայտել առօրեայ կեանքում ապրող հայ մարդու նկարագիրը, նրա աննկուն կամքը դժուարութիւնների մէջ, մարդասիրական, ազգասիրական ու հայրենասիրական բարձր յատկանիշները: «Մեր մանկութեան տանգոն», «Հին օրերի երգը», «Տխուր փողոցի լուսաբացը» եւ չնորհաչատ հայորդուդ միւս կինոնկարները թեեւ տասնեակ անգամներ դիտուած հայորդիների կողմից, միշտ էլ սպասուած են էկ-

[1] «Էջմիածին», 2012, Դ, էջ 9:

բաններին: Ստեղծագործական երկարամեայ աշխատանքը բերել է Ձեզ բազմաթիւ մրցանակներ ու պարգեւներ, բայց առաւել արժէքաւորը՝ մեր ժողովրդի անկեղծ սէրն ու գնահատանքը Ձեր հանդէպ:

Հայկական կինոյի ու Թատրոնի զարգացմանը Դուք ծառայել էք նաեւ մանկավարժական երկարամեայ արդիւնաւոր գործունէութեամբ՝ Ձեր գիտելիքները, հմտութիւնները ու կարողութիւնները փոխանցելով Ձեր սաներին Գիւմրիի ու Երեւանի բարձրագոյն կրթական հաստատութիւններում:

Առ ի գնահատութիւն երկար տարիների Ձեր վաստակեալ գործունէութեան՝ Ձեր ծննդեան 75-րդ տարեդարձի առիթով Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, հայցելով, որ միշտ չնորհառատ պահի Ձեր հաւատաւոր հոգին եւ պարգեւի երջանկութեամբ ու ստեղծագործական նորանոր ձեռքբերումներով լեցուն արեւշատ կեանքի տարիներ:

Թող Բարձրեալ Տէրը Ամենախնամ Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի ընտանեկան Ձեր յարկը:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 1-ն Ապրիլի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 663

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԿԻՆ ՍՎԵՏԼԱՆԱ ՆԱՎԱՍԱՐԴՅԱՆԻՆ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԵՐԵՎԱՆ

(14 ՀՈՒՆԻՍԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հաւատաւոր, պատուարժան դստերդ:

Այսօր ուրախ առիթ ունենք Մեր գնահատանքը բերելու Ձեզ՝ մեր երկրի ու ժողովրդի կեանքում Ձեր գովարժան վաստակի համար: Տակաւին մանուկ հասակից Դուք Ձեր կեանքն ընծայեցիք երաժշտարուեստին եւ գիտակից նուիրումով, հետեւողական ու անդուլ ուսումնառութեամբ զօրացրեցիք աստուածատուր Ձեր շնորհներն ու կարողութիւնները Երեւանի եւ Մոսկուայի պետական կոնսերուատորիաներում:

Մեր ժողովուրդը ի սկզբանէ սիրեց դաշնամուրային բարձրաճաշակ Ձեր մատուցումները: Համաշխարհային երաժշտութեան գանձերը՝ Բախի, Մոցարտի, Բրամսի, Շոպենի, Արամ Խաչատուրեանի եւ այլ մեծերի ստեղծագործութիւնները Դուք ներկայացրեցիք իւրօրինակ վարպետութեամբ ու Ձեզ յատուկ զգացմունքայնութեամբ՝ վաստակելով մասնագէտների բարձր գնահատանքը: Աստուածատուր Ձեր շնորհներով փայլեցիք աշխարհի հանրայայտ բեմահարթակներում եւ միջազգային մրցոյթներում՝ արժանանալով պետական ու հասարակական բազմաթիւ կոչումների, պարգեւների ու մրցանակների՝ Ձեր անունն արժանիօրէն արձանագրելով հայ երաժշտարուեստի պատմութեան մէջ:

Մեծ է Ձեր աւանդը նաեւ երաժիշտների նոր սերունդ պատրաստելու շնորհակալ գործում: Երկար տարիներ դասաւանդելով Երեւանի

---

[1] «Էջմիածին», 2013, Զ, էջ 3:

Կոմիտասի անուան պետական կոնսերուատորիայում, Դուք Ձեր սաներին փոխանցում էք Ձեր վարպետութիւնն ու տարիների ընթացքին ամբարած գիտելիքները, նաեւ նրանց մատուցում աշխատասիրութեան ու երաժշտարուեստին անսակարկ նուիրումի Ձեր վառ օրինակը:

Մեր ժողովրդին մատուցած Ձեր բազմարդիւն ծառայութեան եւ արուեստի լուսաւոր անդաստանում Ձեր աւանդի բարձր գնահատանքով Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր չքանշանը:

Ի խորոց սրտի Հայրապետիս աղօթքն ու մաղթանքն է, որ Սուրբ Սահակի եւ Սուրբ Մեսրոպի բարեխօսութեամբ Բարձրեալն Աստուած իր ամենազօր եւ ամենախնամ Աջի հովանու ներքոյ պահի եւ պահպանի Ձեզ՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, ստեղծագործական նորանոր յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Յունիսի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 725

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ
ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ
ԾՔԱՆԾԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ԱՐՏԵՄ ՍԱՐԳՍՅԱՆԻՆ ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ԾՔԱՆԾԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍ, ԱՄՆ

(17 ՀՈՒՆԻՍԻ, 2013 Թ.)[1]

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն լուսոյ խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնիս բերկրանօք սրտի Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Մեծարգո՛յ պրն. Սարգսեան:

Ձորս ու կէս տասնամեակ Դուք նախանձախնդրօրէն ծառայում էք հայագիտութեան զարգացման նուիրական գործին՝ ի սպաս բերելով Ձեր կարողութիւնները, ժամանակն ու անխոնջ ջանքերը: Ձեր գրչին են պատկանում չուրջ հարիւր գիտական աշխատութիւններ, ուսումնասիրութիւններ ու յօդուածներ, որոնք բարձրօրէն գնահատուած են մասնագէտների ու ընթերցողների լայն շրջանակների կողմից:

Մեր ժողովուրդը Ձեզ ճանաչում է նաեւ Ձեր հեղինակային հեռուստահաղորդումներով, որոնց միջոցով երկար տարիներ հետեւողականօրէն զօրացրել էք հայորդեաց սէրը մայրենի մեր լեզուի, մեր մշակոյթի ու ազգային ժառանգութեան հանդէպ:

Նոյն պահանջկոտութեամբ Դուք իրականացրել էք նաեւ արդիւնաւոր մանկավարժական գործունէութիւն՝ պաշտօնավարելով Կիպրոսի Մելքոնեան եւ Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարաններում՝ ջանքեր բերելով հայ պատանիների ու երիտասարդների կրթութեան չնորհակալ գործին:

Բարձր գնահատելով Ձեր երկարամեայ ծառայութիւնները մեր ժողովրդին, սիրով ընդառաջ ԱՄՆ Արեւմտեան Հայոց թեմի առաջնորդ գերաչնորհ Տ. Յովնան արքեպիսկոպոս Տէրտէրեանի խնդրանքին,

---

[1] «Էջմիածին», 2013, Զ, էջ 5:

Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Ամենակալն Աստուած, որ պարգեւի Ձեզ քաջառողջ արեւշատութիւն, ստեղծագործական նոր աւիւն ու կորով, որպէսզի Դուք չարունակէք Ձեր նպաստը բերել հայ դպրութեանն ու գիտութեանը եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն ու հաւատաւոր ժողովրդին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Յունիս
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 729



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ ՏԻԱՐ ՎԻԼԵՆ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԵՐԵՎԱՆ

(12 ՀՈՒԼԻՍԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները եւ չնորհաւորում ծննդեան 75-րդ տարեդարձի առիթով:

Սիրելի՛ պրն. Յակոբեան,

Աստուածպարգեւ Ձեր կեանքը Դուք ապրում էք Հայրենի մեր երկրի հանդէպ որդիական սիրով՝ միշտ ձգտելով Ձեր կարողութիւնները ծառայեցնել հաւատաւոր մեր ժողովրդին: Երկար տարիներ Դուք ղեկավարեցիք Երեւանի Մ. Հերացու անուան բժշկական համալսարանը, հեղինակեցիք բազմաթիւ գիտական ուսումնասիրութիւններ ու աշխատութիւններ՝ գնահատարժան վաստակ բերելով ի նպաստ մեր երկրում առողջապահութեան բնագաւառի զարգացման:

Այսօր առիթ ունենք առանձնակի գոհունակութեամբ անդրադառնալու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ որդիական Ձեր անկեղծ սիրուն ու նուիրումին: Տարիներ շարունակ, որպէս Գերագոյն Հոգեւոր Խորհրդի անդամ, Դուք նախանձախնդիր ջանքեր էք բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելութեան առաւել արդիւնաւորմանը, նոյն անսպառ եռանդով Ձեր հարուստ փորձառութիւնը ծառայեցնում Մայր Աթոռի «Իմմիրլեան» հիւանդանոցի գործունէութեանը՝ ի սպասաւորութիւն մեր ժողովրդի զաւակների: Մեզ համար ուրախութիւն է մշտապէս ականատես լինել Ձեր էջմիածնասիրութեանը, որ

---

[1] «Էջմիածին», 2013, Է, էջ 3:

արտայայտում էք Ձեր եկեղեցանուէր ընթացքով ու ստանձնած աստուածահաճոյ յանձնառութիւններով:

Երկարամեայ մեր ծանօթութեան ընթացքին սրտի բերկրանօք բազմիցս առիթ ենք ունեցել տեսնելու Ձեր բարի ու անկեղծ ոգու անվերապահ նուիրումը եւ անսակարկ հաւատարմութիւնը՝ հանդէպ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ առ Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը:

Հայրենիքին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն եւ հաւատաւոր մեր ժողովրդին մատուցած Ձեր ծառայութեանց ու վաստակի բարձր գնահատանքով Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր չքանչանը:

Ի խորոց սրտի աղօթքով Տիրոջ օրհնութիւնն ու զօրակցութիւնն ենք հայցում Ձեզ եւ մաղթում, որ Բարին Աստուած Իր հայրական հովանու ներքոյ միշտ առողջ ու երջանիկ պահպանի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ յաջողութիւններ պարգեւելով Ձեր բարի գործերին ու նախաձեռնութիւններին:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 12-ն Յուլիսի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 730

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ
ՇՆՈՐՀԱԼԻ
ՇՔԱՆՇԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻԲՅԱՆԻՆ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՇՔԱՆՇԱՆԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՍԱՆ ՊԱՈՒԼՈ, ԲՐԱԶԻԼԻԱ

(21 ՕԳՈՍՏՈՍԻ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ջերմօրէն ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Քրիստոսի հաւատարիմ զինաւորիդ եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու բարեջան սպասաւորիդ՝ քահանայագործութեան Ձեր յիսնամեայ յոբելեանի առիթով:

Սիրելի՛ Սրբազան,

Շուրջ հինգ տասնամեակ, որպէս հոգեւոր սպասաւոր Քրիստոսասէր մեր ժողովրդի, Ձեր կարողութիւններն ի սպաս էք դնում յանուն մեր Սուրբ Եկեղեցու Աստուածչնորհ առաքելութեան արդիւնաւորման: Այսօր ուրախ ենք արձանագրելու, որ նախնեաց սուրբ հաւատքն ու աւետարանական ճշմարտութիւնները քարոզելու աստուածահաճոյ գործին ծառայել էք հաւատարմօրէն, ջերմեռանդութեամբ եւ ամենայն նուիրուածութեամբ:

Գնահատարժան է հոգեւոր ծառայութեան Ձեր ուղին: Ավարտելով Երուսաղեմի Սրբոց Հակոբեանց վարժարանի ուսումնառութեան շրջանը եւ քահանայական ձեռնադրութիւն ստանալով ամենապատիւ Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Տէրտէրեան պատրիարքի կողմից՝ ծառայութեան անցաք ժառանգաւորաց վարժարանում որպէս փոխտեսուչ՝ անձնուէր ջանքեր բերելով յօգուտ հոգեւորականաց երիտասարդ սերունդի պատրաստութեան պատասխանատու գործի: Ապա 1966 թուականից սկսեալ շուրջ մէկ եւ կէս տասնամեակ սպասաւորութիւն իրականացնելով Կորդոբայում՝ անխոնջ քարոզչութեամբ ու անձնդիր ծառայութեամբ զօրացեալ պահեցիք մեր ժողովրդի զաւակաց հաւատը, եկեղեցասէր ու ազգասէր ոգին՝ առաջնորդելով առ Բարձրեալն

[1] «Էջմիածին», 2013, Ը, էջ 3:

Աստուած: Դուք երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց Հայրապետի ձեռամբ արժանացաք եպիսկոպոսական ձեռնադրութեան եւ Սուրբ Օծման, արդէն իսկ կարգուած լինելով իբրեւ առաջնորդ Բրազիլիայի Հայոց թեմի, որտեղ Ձեր քաջալերանքով ու նախաձեռնութեամբ իրագործուեցին բազում եկեղեցաշէն ու ազգանուէր ծրագրեր, կենդանի ու զօրավոր պահելով հայորդեաց ազգային եւ եկեղեցական կեանքը, որի ականատեսն ենք եղել նաեւ Մենք՝ յընթացս Հարաւային Ամերիկա կատարած Հովվապետական Մեր այցելութիւնների:

Սիրելի՛ Սրբազան, Ձեր կեանքի յոբելեանական այս հանգրուանին Մեր սէրն ու բարձր գնահատանքն ենք բերում Ձեզ մեր եկեղեցու ու ժողովրդի կեանքում Ձեր բազմարդիւն վաստակի համար եւ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԷՍ ՇՆՈՐՀԱԼԻ

պատուոյ բարձր չքանչանը:

Ի խորոց սրտի մաղթում ենք Ձեզ քաջառողջ եւ արեւշատ կենաց օրեր, որպէսզի Տիրոջ Սուրբ Աջի հովանու ներքոյ չարունակէք Ձեր առաքելութիւնը՝ նորանոր եկեղեցաշէն ու ազգօգուտ յաջողութիւններ արձանագրելով Ձեր ծառայութեան մէջ:

Թող Ամենակալ Տէրն անսասան պահի Հայաստանեայց Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ Ամենայն Հայոց Աստուածակառոյց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Օգոստոսի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 732



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ՍԵՊՈՒՀ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՉՈՒԼՋՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՎԱՆԱՁՈՐ

(15 ՄԱՅԻՍԻ, 2012 Թ.)[1]

Հայոց հաւատքի նուիրական վէմ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Քահանայական ձեռնադրութեան 25-րդ տարեդարձի առիթով:

Սիրելի՛ Սրբազան,

Քառորդ դար առաջ, աւարտելով Մայր Աթոռի հոգեւոր ճեմարանը, Դուք Միածնի Իջման Սուրբ Խորանի առջեւ խոնարհ ուխտադրութեամբ արժանացաք կուսակրօն քահանայութեան բարձր չնորհի՝ լծուելով Աստուծոյ Խօսքի քարոզութեան սրբազան առաքելութեանը: Այսօր Մենք ուրախ ենք հաստատելու, որ ծառայութեան ողջ ընթացքում Ձեր բոլոր յանձնառութիւնների ու պարտականութիւնների մէջ Դուք՝ որպէս զինուորեալ սպասաւոր Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, առաջնորդուել էք հայորդեաց հոգեւոր կեանքի վերազարթօնքին աւանդ բերելու ազնիւ նախանձախնդրութեամբ՝ հաւատարմօրէն պահելով ծառայանուիրումի Ձեր սրբազան ուխտը Բարձրեալ Տիրոջ հետ:

Մայր Աթոռում, Ժնեւի հայ համայնքում եւ Շիրակի թեմում ստանձնած յանձնառութիւններով հարստացնելով Ձեր փորձառութիւնը՝ Դուք կոչուեցիք Գուգարաց թեմի առաջնորդի պատասխանատու պաշտօնին: Նախընթաց մէկ ու կէս տասնամեակի ընթացքում անյոգնաբեկ սպասաւորութեամբ Դուք կարողացաք զօրացնել նորա-

---

[1] «Էջմիածին», 2012, Ե, էջ 3:

կազմ թեմը, եկեղեցիների չուրջ միաւորել մեր ժողովրդի հաւատաւոր զաւակներին, բարուօք աշխատանք իրականացնել ի նպաստ երիտասարդ հայորդեաց հոգեւոր կրթութեան ու դաստիարակութեան:

Սիրելի՛ Սրբազան,

Գոհունակութիւն է Հայրապետիս համար Մեր բարձր գնահատանքը բերել Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր նուիրեալ ծառայութեան եւ տարիների վաստակի համար եւ Հայրապետական այսու կոնդակով չնորհել Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՒ

Իջման Սուրբ Սեղանի առջեւ ի խորոց սրտի աղօթքով Բարձրեալ Տիրոջ խնամքն ենք հայցում Ձեզ եւ զօրակցութիւնը Ձեր եկեղեցաչէն գործունէութեանը:

Թող Ամենակալ Տէրը քաջառողջ եւ արեւշատ կենաց օրեր պարգեւի Ձեզ եւ գործոց նորանոր յաջողութիւններ՝ ի պայծառութիւն Գուդարաց տիրախնամ թեմի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեսեանդ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 15-ն Մայիսի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 667

ԱՐՔՈՒԹՅԱՆ
ՊԱՏՎԻ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ՆԱԹԱՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

(16 ՄԱՅԻՍԻ, 2012 Թ.)[1]

Սիրելի՛ Սրբազան, բերկրանօք սրտի Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստակաշատ սպասաւորիդ:

Շուրջ երեք տասնամեակներ առաջ, Աստուածոյ սպասաւորը լինելու կոչումը Ձեր սրտում, Տիրոջ կամքով եւ օրհնութեամբ մուտք գործեցիք Սուրբ Էջմիածնի հոգեւոր ճեմարանի նուիրական յարկից ներս: Ձեր հոգեւոր ուսումնառութիւնն ամբողջացնելով՝ Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ անձնուէր ծառայանուիրումի ուխտ կնքեցիք եւ ստանձնեցիք կուսակրօն քահանայի պատասխանատու առաքելութիւնը հաւատաւոր մեր ժողովրդի ազգային-եկեղեցական կեանքում:

Գնահատանքով ենք անդրադառնում Տէրունապատուէր Ձեր ծառայութեան արդիւնքներին: Դուք նախանձախնդիր ու նուիրեալ ոգով էք արգասաւորել Ձեր սպասաւորութիւնը ճեմարանի փոխտեսչի, այնուհետ՝ Ուկրաինայի եւ ապա՝ Մեծ Բրիտանիայի Հայոց թեմերի առաջնորդի պատասխանատու պաշտօններում:

Ուրախ ենք, որ այսօր Դուք, որպէս Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչական բաժնի տնօրէն, գովարժան աշխատանք էք իրականացնում հոգեւոր-աստուածաբանական գրականութեան հրատարակութեան կարեւոր գործում՝ ներդրում բերելով Տիրոջ կենարար խօսքի տարածման եւ մեր հաւատացեալների կրօնական գիտելիքների զօրացման առաքելութեան մէջ:

Սիրելի՛ Սրբազան, Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում տարիների Ձեր վաստակը եւ նուիրեալ ծա-

---

[1] «Էջմիածին», 2012, Ե, էջ 5:

ռայութիւնը՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՒ

Ի խորոց սրտի աղօթում եւ մաղթում ենք, որ Բարին Աստուած Ամենախնամ Իր Սուրբ Աչով պահի ու պահպանի Ձեզ, զօրակից լինի բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ չնորհելով քաջառողջութիւն ու արեւշատութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 16-ն Մայիսի
յամի Տեառն 2012 եւ ի թուին հայոց ՌՆԿԱ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 669



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ԱՌԱՔԵԼ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՔԱՐԱՄՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ԿՈՏԱՅՔ

(14 ՄԱՅԻՍԻ, 2013 Թ.)[1]

Սիրելի՛ Սրբազան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրեալ սպասաւորիդ:

Շուրջ քառորդ դար առաջ հոգեւոր ճեմարանի նուիրական յարկից ներս ամբողջացնելով Ձեր հոգեւոր ուսումնառութիւնը՝ Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ ծառայանուիրումի ուխտով ստանձնեցիք կուսակրօն քահանայի սրբազան առաքելութիւնը:

Դուք պատասխանատու սպասաւորութեան կոչուեցիք Սիւնեաց եւ Արարատեան Հայրապետական թեմերում, օրինակելի նուիրումով վարեցիք Սեւանի Վազգէնեան դպրանոցի տեսչի պատասխանատու պաշտօնը՝ Ձեր բոլոր յանձնառութիւնների մէջ դրսեւորելով ծառայասէր ոգի, աղնիւ կամք ու անսակարկ նախանձախնդրութիւն:

Ձեր գործունէութիւնը առաւել արդիւնաւոր եղաւ Կոտայքի թեմում: Որպէս առաջնորդ՝ Դուք ամենայն ջանք ու եռանդ ներդրեցիք Ձեր հոգեւոր խնամքին յանձնուած հայորդեաց հոգեւոր սնունդ ջամբելու սուրբ առաքելութեանը՝ բարի արդիւնքներ արձանագրելով ի նպաստ նորակազմ թեմի չինութեան ու պայծառութեան:

Սիրելի՛ Սրբազան, բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում տարիների Ձեր վաստակը եւ նուիրեալ ծառայութիւնը՝ Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՒ

[1] «Էջմիածին», 2013, Ե, էջ 3:

Ի խորոց սրտի աղօթում եւ մաղթում ենք, որ Բարին Աստուած Ամենախնամ Իր Սուրբ Աչով պահի ու պահպանի Ձեզ, զօրակից լինի բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ չնորհելով քաջառողջութիւն, արեւշատութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 14-ն Մայիսի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 722

ԱՐՔՈՒԹՅԱՆ
ՊԱՏԻՎ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ԱԲՐԱՀԱՄ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

(10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Սիրելի՛ Սրբազան,

Հայրապետական Սեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստակաշատ սպասաւորիդ:

Շուրջ երեք տասնամեակներ առաջ Սուրբ Էջմիածնի Հոգեւոր ճեմարանի լուսաւոր յարկի ներքոյ ուսումնառութիւնն աւարտելով՝ Դուք Ձեր սրտում զգացիք Բարձրեալ Տիրոջ սպասաւորը լինելու բարձր կոչումը: Աստուածասէր եւ ազգանուէր ոգով ամբողջանուէր ծառայանուիրումի ուխտ կնքեցիք Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ եւ յանձնառութիւնը ստանձնեցիք Հայոց ազգային-եկեղեցական կեանքում կուսակրօն քահանայի պատասխանատու առաքելութեան:

Գնահատանքով ենք անդրադառնում տասնամեակների Ձեր ծառայութեանը: Դուք քաջեռանդութեամբ արդիւնաւորել էք Ձեր սպասաւորութիւնը՝ նոր սերնդի եկեղեցականաց պատրաստութեան կարեւոր գործին գովելի աւանդ բերելով ճեմարանում դասաւանդութեամբ, Մայր Աթոռի պաշտօնական «Էջմիածին» ամսագրում ժրաջան աշխատանքով: Տէրունապատուէր Ձեր ծառայութիւնը բարեզարդել էք յատկապէս Քրիստոնէական քարոզչութեան կենտրոնի տնօրէնի պաշտօնում, նախանձախնդրութեամբ ու նուիրումով ջանքեր բերելով նոր սերնդի քրիստոնէական դաստիարակութեան, մեր ժողովրդի մէջ սրբազան արժէքների հանդէպ հաւատարմութիւնն առաւել զօրացնելու առաքելութեան մէջ: Առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ հանրակրթական դպրոցների համար «Հայ Եկեղեցու պատմութիւն» առարկայի դասագրքերի պատրաստման աշխատանքը

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 3:

կեանքի կոչուեց Ձեր գովելի ջանքերով եւ նախանձախնդրութեամբ:

Նուիրեալ եկեղեցականիդ ծառայութեան վաստակը յաւելուեց առաջնորդական քաջեռանդ գործունէութեամբ Սիւնեաց թեմում, ուր բոլորանուէր ծառայութիւն բերեցիք թեմի կարգաւորութեանն ու չինութեանը, հոգեւորականաց սպասաւորութեան արդիւնաւորմանը, հաւատացեալ հայորդեաց հոգեւոր խնամքի բարուոք իրականացմանը: Այսօր Դուք՝ որպէս Վայոց ձորի թեմի առաջնորդ, շարունակում էք նոյն նուիրումով պատասխանատու գործունէութիւն իրականացնել՝ ի փառս Աստուծոյ, ի պայծառութիւն Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Սիրելի՛ Սրբազան, բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում տարիների Ձեր վաստակը եւ նուիրեալ ծառայութիւնը՝ Հայրապետական այսու կոնդակով չնորհում ենք Ձեզ

Ա Ր Ք Ո Ւ Թ Ե Ա Ն Պ Ա Տ Ի Ւ

Ի խորոց սրտի աղօթում եւ մաղթում ենք, որ Բարին Աստուած Ամենախնամ Իր Սուրբ Աչով պահի ու պահպանի Ձեզ, զօրակից լինի բարձր ու պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ չնորհելով քաջառողջութիւն ու արեւշատութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 10-ն Մայիսի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 798

ԱՐՔՈՒԹՅԱՆ
ՊԱՏՎԻ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ՓԱՌՆԵՆ ԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՎԵՏԻՔՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

(10 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Սիրելի՛ Սրբազան,

Ուրախութիւն է Մեզ համար՝ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքները բերել Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստակաշատ սպասաւորիդ:

Աւելի քան հինգ տասնամեակ առաջ, ստանալով Ձեր հոգեւոր ուսումը նախ՝ Անթիլիասի դպրեվանքում եւ ապա՝ Երուսաղէմի ժառանգաւորաց վարժարանում, Ձեր սրտում զգացիք երկնաւոր մեր Տիրոջ սպասաւորը լինելու բարձր կոչումը եւ ձեռնադրուեցիք կուսակրօն քահանայ:

Աստուծոյ կամօք եւ օրհնութեամբ հետագային հովուական ծառայութեան մեկնեցիք ԱՄՆ Արեւելեան Հայոց թեմ, ուր նախանձախնդիր ու նուիրեալ ոգով սպասաւորեցիք Վաշինգտոնի, Զիկագոյի, Իլինոյսի եւ Դիթրոյթի ծուխերում: Տիրոջ խօսքը հաւատացեալ հայորդիներին մատակարարելու կարեւոր առաքելութեան հետ զուգահեռաբար՝ Դուք նաեւ Ձեր ուսումնառութիւնը ամբողջացրեցիք ԱՄՆ բարձրագոյն համալսարաններում: Տէրունապատուէր Ձեր ծառայութիւնը արգասաւորել էք յատկապէս Դիթրոյթի հոգեւոր հովուի պաշտօնում, ուր, Ձեր ազնիւ ջանքերով եւ անձնական հավաքածուի նուիրաբերումով, Սուրբ Յովհաննէս Մկրտիչ եկեղեցուն կից հիմնեցիք «Ալեք Մանուկեան» թանգարանը:

Գնահատանքով ենք անդրադառնում Ձեր ծառայութեան արդիւնքներին նաեւ Հայաստանում: Դուք քաջեռանդութեամբ բարեզարդել էք Ձեր սպասաւորութիւնը Շիրակի թեմում՝ իբրեւ թեմակալ

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 5:

առաջնորդ, գովելի աւանդ բերելով Շիրակի ընծայարանում, նոր սերնդի եկեղեցականաց պատրաստութեան կարեւոր գործին: Առանձնակի ուրախութիւն է Մեզ համար, որ Մեր գահակալութեան չրջանին Դուք Ձեր նուիրեալ ծառայութիւնը բերեցիք Մայր Աթոռում՝ Թանգարանների եւ Վարչատնտեսական բաժնի տնօրենի պաշտօններում: Այսօր Սուրբ Էջմիածնում Ձեզ յատուկ նուիրումով եւ նախանձախնդրութեամբ Դուք չարունակում էք Ձեր ջանադիր ծառայութիւնը՝ ի չինութիւն եւ ի պայծառութիւն Մայր Աթոռի:

Ազնիւ եկեղեցականիդ վաստակը ամբողջանում է Ձեր անձնական միջոցներով իրականացուող որբերի հովանաւորութեան աստուածահաճոյ ծրագրով, որով ուրախութիւն էք բերում ծնողական խնամքից զրկուած կարիքաւոր երեխաների կեանքում:

Սիրելի՛ Սրբազան, բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում Ձեր վաստակը եւ տարիների ծառայութիւնը՝Հայրապետական այսու Կոնդակով չնորհում ենք Ձեզ

Ա Ր Ք Ո Ւ Թ Ե Ա Ն Պ Ա Տ Ի Ւ

Ի խորոց սրտի հայցում ենք Բարձրեալից, որպէսզի Ամենախնամ Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ պահի ու պահպանի եւ զօրացնի Ձեզ քրիստոսապատուէր Ձեր առաքելութեան մէջ՝ չնորհելով արեւշատութիւն եւ նորանոր յաջողութիւններ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 10-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 800

ԱՐՔՈՒԹՅԱՆ
ՊԱՏԻՎ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐԸ Տ. ԵԶՐԱՍ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԵՐՍԻՍՅԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏՎԻ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՌԻԹՈՎ. ՄՈՍԿՎԱ, ՌԴ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Սիրելի՛ Սրբազան,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից յղում ենք Ձեզ Հայրապետական Մեր սէրը, օրհնութիւնն ու բարեմաղթանքները:

Աստուծոյ ողորմած կամքով չուրջ քառորդ դար առաջ Դուք ձեռնադրուեցիք կուսակրօն քահանայ՝ Միածնի Իջման Սուրբ սեղանի առջեւ ծնրադիր հոգով ուխտելով անսակարկ ծառայել Աստծուն, մեր Սուրբ Եկեղեցուն եւ հաւատաւոր մեր ժողովրդին:

Երջանկայիշատակ Վազգէն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնութեամբ հովուական Ձեր սպասաւորութիւնը սկսեցիք ՌԴ հիւսիսային մայրաքաղաք Սանկտ Պետերբուրգում, որտեղ տեւական ժամանակ դադար էին առել հայ ազգային ու հոգեւոր կեանքի փառաւոր աւանդոյթները: Քայլ առ քայլ յաղթահարելով խորհրդային տարիներին բնորոշ բոլոր դժուարութիւնները՝ Դուք կարողացաք վերաբացել եւ բարեզարդել Սուրբ Յարութիւն եւ Սուրբ Կատարինէ եկեղեցիները, հայ համայնքին վերադարձնել դարերի ընթացքին մեր հայրերի կողմից ստեղծուած պատմական չինութիւնները: Նուիրեալ ծառայագործութեամբ մեր եկեղեցու հովանու ներքոյ հաստատեցիք երիտասարդաց եւ մշակութային միութիւններ, կիրակնօրեայ դպրոց, երկլեզու ամսաթերթ, համայնքային այլ կառոյցներ՝ սկիզբ դնելով Սանկտ Պետերբուրգում հայ կեանքի վերազարթօնքի: Հովուապետական Մեր այցերի ընթացքին գոհունակութեամբ ականատես ենք եղել Ձեր գործունէութեան բարի արդիւնքներին եւ Ձեր հանդէպ հայորդեաց սի-

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 7:

րուն ու վստահութեանը, որը լաւագոյն վկայութիւնն է Ձեր նախանձախնդիր ծառայութեան:

Բարձր գնահատելով Ձեր ամբողջանուէր ծառայութիւնը՝ Մենք Ձեզ կոչեցիք Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդի պատասխանատու պաշտօնին՝ Ձեր փորձառութիւնը ի սպաս բերելու թեմի առջեւ ծառացած խնդիրների լուծմանը: Այսօր ուրախ ենք հաստատելու, որ Ձեր բարեխնամ առաջնորդութեամբ օրաւուր զօրանում է տիրախնամ թեմը, եւ արձանագրուող նորանոր յաջողութիւնները առաւել չէն ու պայծառ են դարձնում ռուսաստանաբնակ Մեր զաւակների հոգեւոր ու ազգային կեանքը:

Յատկապէս գովարժան է նուիրեալ հոգեւորականիդ վաստակը տիրախնամ թեմի առաջնորդանիստ եկեղեցու կառուցման գործում: Տիրոջ ապաւինութեամբ Դուք տարիներ շարունակ ի սպաս բերեցիք Ձեր աննուազ ջանքերն ու կարողութիւնները եւ Ձեզ գործակից եկեղեցասէր հայորդեաց հետ ի կատար ածեցիք եկեղեցու կառուցման աստուածահաճոյ նախաձեռնութիւնը՝ լուսաւոր նոր հանգրուան ամրագրելով թեմի երկարամեայ պատմութեան մէջ: Շքեղակառոյց համալիրը սերնդէսերունդ պիտի վկայի Ձեր բարի ու արդիւնաւոր սպասաւորութեան եւ Ձեր հօտի հաւատքի արթնութեան մասին:

Սիրելի՛ Սրբազան, առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում, որ ծառայութեան ողջ ընթացքին Դուք դրսեւորել էք Ձեր հոգու անսակարկ սէրն ու նուիրումը հանդէպ Սուրբ Էջմիածինը եւ միշտ ձգտել Ձեր գործերով ու նախաձեռնութիւններով աւանդ բերել Քրիստոսահիմն մեր Մայր Աթոռի յաւէտ պայծառութեանը: Այսօր Ձեր քաջալերութեամբ Ձեր թեմի բազմաթիւ հայորդիներ իրենց յանձնառութիւններով աջակից են Սուրբ Էջմիածնի առաքելութեանը՝ ի փառս Աստուծոյ եւ ի բարօրութիւն հաւատաւոր մեր ժողովրդի:

Բարձր գնահատելով Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում տարիների Ձեր վաստակը եւ նուիրեալ ծառայութիւնը՝ Հայրապետական այսու Կոնդակով Սուրբ Պայծառակերպութիւն առաջնորդանիստ եկեղեցու օծման բերկրալի առիթով չնորհում ենք Ձեզ

ԱՐՔՈՒԹԵԱՆ ՊԱՏԻՒ

Ի խորոց սրտի աղօթում եւ մաղթում ենք, որ Բարին Աստուած Ամենախնամ Իր Սուրբ Աջով պահի ու պահպանի Ձեզ եւ զօրակից լինի պատասխանատու Ձեր կոչման մէջ՝ պարգեւելով քաջառողջութիւն

եւ գործոց յաջողութիւններ՝ ի չինութիւն տիրախնամ Ջեր թեմի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցւոյ:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ չնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 17-ն Սեպտեմբերի
յամի Տեառն 2013 եւ ի թուին հայոց ՌՆԿԲ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 799



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(6 ՀՈՒՆՎԱՐԻ, 2010 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Չի այնպէս սիրեաց Աստուած կաշխարհ,
մինչեւ զորդին իւր Միածին ետ. զի ամենայն, որ հաւատայ ի Նա՝
մի կորիցէ, այլ ընկալցի կեանս յաւիտենականս»
(Յովհ. Գ 16):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Մեր հոգիներն այսօր ցնծում են Սուրբ Ծննդեան աւետիսով եւ լի են օրհներգութեամբ՝ ընդունելու խանճարուրով փաթաթուած եւ մսուրի մէջ դրուած Մանկանը, որ ծնուեց Բեթղեհէմում: Աստուծոյ Որդին է, որ մարմնացաւ, խոստացեալ Փրկիչն է, որ աշխարհ եկաւ: Եկաւ փրկելու մեզ մեղքից, ազատելու չարի իշխանութիւնից, կործանելու մահը:

Անսպառ է մեր ուրախութիւնը. Փրկիչ մեր Տէրը պարգեւել է մեզ նորոգուած հոգի, վերածնուած կեանք, որ ընթանանք դէպի Աստուած, դէպի Արարիչը կեանքի, «քանի որ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդուն տուեց, որպէսզի ով Նրան հաւատում է, չկորչի, այլ ընդունի յաւիտենական կեանքը» (Յովհ. Գ 16):

Աստուծոյ սիրոյ եւ ողորմութեան խորհուրդն է այսօր հսկում աշխարհը՝ վեր անցողիկ ունայնութիւններից, վեր ժամանակից: Ամեն

[1] «Էջմիածին», 2010 Ա, էջ 3:

ինչ խոնարհուած է այս անսահման սիրոյ առջեւ՝ մարգարէական խօսքի համաձայն՝ ձորերը լցուած են, լեռներն ու բլուրները՝ ցածրացած, դժուարին տեղերը՝ դիւրին դարձած, առապարները՝ դաշտեր, եւ թագաւորում է փրկութեան չնորհը (Եսայի խ 4), որ աչխարհ մտաւ Մանուկի հետ:

Ճշմարիտ նոյն սիրով, որով աչխարհ եկաւ Քրիստոս, համախմբեց իր ժողովրդին, որ լինեն Աստուծոյ որդիներ, արքայութեան զաւակներ: Իր ընտանիքը՝ Սուրբ Եկեղեցին, Քրիստոս հաստատեց սիրոյ պատուիրանի վրայ, հրաչագործ այն զօրութեան, որով մարդիկ միմեանց օտար չեն, այլ՝ իւրային: «Եթէ դուք միմեանց սիրէք, դրանով բոլորը պիտի իմանան, որ դուք իմ աչակերտներն էք» (Յովհ. ԺԳ 35),- ասում է մեր Տէրը: Ում մէջ սէր կայ, նա հետեւորդ է Աստուծոյ, նա կատարում է Աստուծոյ փրկարար կամքը:

Աստուծոյ եւ միմեանց հանդէպ սէրն է, որ խաղաղութիւն եւ համերաչխութիւն պիտի բերի բազում տագնապներով ապրող այս աչխարհին, բացառի մարդկանց, ազգերի իրաւունքների ոտնահարումը, նրանց սրբութիւնների եւ հոգեւոր արժէքների կործանումը: Այդպիսի սիրով պիտի յաղթահարուեն չքաւորութիւնը, հիւանդութիւնները, աղէտների պատճառած հոգսերն ու վնասները: Այդպիսի սիրոյ լոյսով աչխարհը պիտի նորոգուի, երկիրը երկինք դառնայ, մարդկային կեանքով Աստուած փառաբանուի:

Սիրելի՛ բարեպաչտ ժողովուրդ,

Քրիստոս այսօր աստուածային իր սիրով գալիս է բնակուելու մեր սրտերում, մեր ընտանիքներում, որպէսզի փրկութեան չնորհները, ընտանեկան յարկերից սփռուելով, փոխանցուեն կեանքին եւ առատ ու բարի արգասիքներ պարգեւեն: Ընտանիքում են խնամուում եւ զօրանում հաւատքը, յոյսն ու սէրը, որոնցով ընտանեկան ազատ, ջերմ ու հարազատ միջավայրում մարդը աճում ու զարգանում է դէպի բարին ու կատարեալը: Աստուած կազմեց եւ օրհնեց ընտանիքը, որ այն հաստատուած մնայ, աճի եւ բազմանայ սիրոյ մէջ եւ արտացոլի Աստուծոյ փառքը, Աստուծոյ ներկայութիւնը եւ Աստուծոյ խնամքը արարչութեան եւ բոլոր մարդկանց հանդէպ: Ընտանիքը կոչուած է չարունակելու Աստուծոյ արարչագործութիւնը եւ պաչտպանելու մարդկային հոգու աստուածապատկեր նկարագիրը: Իր այս կոչումով ընտանիքը սուրբ է, սնուցողը, կրողն ու փոխանցողը աստուածադիր պատուիրանների, որոնց վրայ հաստատուում է կեանքը Տէրունապարգեւ եւ կառուցուում են յարաբերութիւնները դէպի մերձաւորը, առ մարդը

եւ առ Աստուած: Ընտանիքներում սերմանուող արժէքներն են, որ դրսեւորուում եւ տեղ են գտնում կեանքի մէջ: Ինչը կկարեւորուի ընտանիքներում, կուսուցանուի ուղղակի կամ անուղղակի միջոցներով՝ ազնուութիւն, թէ կեղծիք, նախանձ, թէ բարի կամեցողութիւն, ատելութիւն, թէ դթասրտութիւն, չարախնդութիւն, արհամարհանք, թէ կարեկցութիւն ու մարդասիրութիւն,ամենը կարտայայտուի նաեւ հասարակական կեանքում: «Ժողովուրդը, եթէ առաջադիմում է, իր առաջին քայլը ընտանեկան սրահից է առնում, - գրում է Խրիմեան Հայրիկ Հայոց Հայրապետը եւ շարունակում,- եթէ լուսաւորուում է, իր լոյսն իր ընտանեկան ճրագից է, եթէ միանում է, իր ոգին ու կապը ընտանիքն է, եթէ զօրանում է, իր ուժն ու բազուկը ընտանիքն է, եթէ հարստանում է, իր գանձարանն ու գանձապետը ընտանիքն է, եթէ իր տունն ու սեղանը բարելից ու առատ է, արդիւնաբեր անդաստանն ընտանիքն է»:

Այսօր արդի կեանքի առաջընթաց զարգացումների եւ ձեռքբերումների պայմաններում, դժբախտաբար, չարունակում են աճել ընտանիքների առջեւ ծառացող խնդիրները: Մտահոգութիւն են մնում ոչ միայն նիւթական դժուարութիւնները, այլեւ ընտանիքում տեղ գտնող բռնութիւնները ու անհասկացողութիւնները, ընտանեկան սրբութեան, ընտանիքում անդորրի ու համերաշխութեան պահպանումը: Այսօր կեանք է ներթափանցում, նոյնիսկ երբեմն օրէնքներով հաստատագրուում ընտանիքի խեղուած ընկալումը: Եղծուում է այր եւ կնոջ ամուսնական սուրբ միութեան աստուածահաստատ կարգը եւ աստուածաշնորհ սիրով որդեծնութեամբ երջանկանալու պատիւը: Մենք չենք կարող ընդունելի համարել եւ անտարբեր մնալ աստուածամերժ այս իրողութիւնների հանդէպ, որքան էլ արդիականութեամբ հանդերձաւորուեն եւ ժողովրդավարական արժէքների եւ մարդու իրաւունքների անուան ներքոյ հանդէս գան: Այսօր անհրաժեշտ է, որ ընտանիքը, ինչպէս եւ մարդը, արժեւորուի եւ գնահատուի իր աստուածապարգեւ կոչման ու պատկերի մէջ, լինի եւ մնայ ճշմարիտ վկայողը մարդկանց հանդէպ Աստուծոյ սիրոյ:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ հայոց ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս,

Աստուծոյ ընտանիքի անդամներն ենք եւ մենք՝ զաւակներս էջմիածնակնիք հայ ժողովրդի: Դարերի ընթացքին մեր պատմութեան մահաբեր հողմերին ու խորշակներին յանդիման կանգուն ենք մնացել հաւատաւոր կեանքով հայ ընտանիքի: Եկեղեցիացած մեր փոք-

րիկ տունն է հայ ընտանիքը, որի աղօթքով ամրանում է աննիւթական շաղախը մեր հոգեւոր եւ ազգային կեանքի եւ հիմքը՝ մեր պետութեան: Հայ ընտանիքը առաջին դպրոցն է եւ հոգեկերտ արժէքների առաջին սնուցողը: Հայ ընտանիքը փոքրիկ հայրենիք է, ուր ապրում են նախնեաց յիշատակները եւ անկորուստ պահպանուում հայրենի ժառանգութիւնը, ուր երջանիկ է եւ յաւէրժում է հայ հոգին: Հաւատքով ամուր, յոյսով աննուազ եւ սիրով զօրացեալ պահենք մեր ընտանիքները, որպէսզի Տիրոջ փրկութեան շնորհով նորոգեալ ու պայծառ լինի միասնական կեանքը հոգեւոր մեր մեծ ընտանիքի՝ Հայ Եկեղեցու, որպէսզի, օրհնութեամբ առատ, մարմին առնեն իղձերն ու ձգտումները մեր մեծ տան՝ հայոց Հայրենիքի: Հայրենիքը մեր յոյսերի խարիսխն է, ազատ, ապահով, բարեչէն կեանքի, մեր գալիքի երաշխիքն է, ազգս համախմբող աստուածապարգեւ մեր տունը: Տան մէջ սէրը ինքնաբուխ է, օրէնք է համերաշխութիւնը, իշխող է ցանկութիւնը միմեանց օգնելու, բնական՝ միմեանց տխրութեամբ տխրելը, ուրախութեամբ ուրախանալը: Այս է ճանապարհ օրհնեալ, սիրելինե՛ր, որով պիտի կառուցենք մեր բարօր կեանքը Հայաստանում, Արցախում եւ Սփիւռքում, դիմագրաւենք ներքին եւ արտաքին մարտահրաւէրները, պաշտպանենք Արցախի ինքնորոշման իրաւունքը, մեր արդար Դատը, միասնաբար բարուրք ուղիներով կառուցենք յարաբերութիւնները բոլոր երկրների, բոլոր ժողովուրդների հետ՝ մեր աւանդը բերելով աւելի լաւ աշխարհ կառուցելու ջանքերին: Այս է ճանապարհ օրհնեալ, որով արժանի պիտի լինենք հասնելու երկնային մեր տունը՝ Հայր Աստուծոյ մօտ՝ շնորհով Միածին Որդու եւ առաջնորդութեամբ Սուրբ Հոգու: Մնանք հաւատքով, յոյսով ու սիրով, «քանի որ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր Միածին Որդուն տուեց, որպէսզի ով Նրան հաւատում է, չկորչի, այլ ընդունի յաւիտենական կեանքը» (Յովհ. Գ 16):

Մեր Տիրոջ եւ Փրկչի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի հոգենորոգ առիթով Քրիստոսաւանդ սիրով եղբայրական Մեր մաղթանքն ենք յղում եւ Սուրբ Հոգու առատ շնորհները հայցում քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին: Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սէրն ենք

բերում մեր Եկեղեցու ուխտապահ հոգեւոր դասին եւ ի սփիւռս աշխարհի համայն մեր ժողովրդին:

Սուրբ Ծննդեան աւետիսով եւ Բարձրյալի զօրակցութեան հայցով Մեր ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակո Սահակեանին, հայոց պետական ողջ աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին:

Աւետաբեր ու չնորհառատ այս օրը, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, աղօթենք, որ Բեթղեհէմեան աստղալոյսի երկնային անմար փարոսը լուսաւորի մեր ուղին եւ փարատի խաւարները, եւ Տէրը մեր Քրիստոս ամեն ժամ առաջնորդի եւ օրհնի աշխարհը համայն, մեր կեանքը ու ջանքերը բոլոր՝ յանուն մեր երկրի, աշխարհասփիւռ մեր ժողովրդի եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Զեզ եւ մեզ մեծ աւետիս:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՅԱՐՈՒԹԵԱՆ ՏՕՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 4 ԱՊՐԻԼԻ 2010 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Հաւատի բարի մարտը մղիր եւ պինդ կառչիր յաւիտենական կեանքից, որին կանչուեցիր»
(Ա Տիմ. Զ 12)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Քրիստոսի սուրբ եւ հրաշափառ Յարութեան տօնը վերստին խնդութիւն եւ ուրախութիւն է բերել մեր սրտերին, ցնծութիւն՝ բոլոր քրիստոնեաներին, ովքեր Տիրոջ փրկագործութեամբ կանչուած են յաւիտենական կեանքի: Այսօր օրհնաբանում ենք յարուցեալ Փրկչին եւ յուսավառ հոգով ընդունում կեանքի յաղթանակի եւ մարդկութեան փրկութեան աւետիսը:

Կեանքի յաղթանակը մահուան դէմ հնարաւոր դարձաւ Աստուծոյ մարդասիրութեամբ, Աստուծոյ Որդու՝ մարդկութեան Փրկչի յանձն առած չարչարանքներով, խաչելութեամբ եւ յարութեամբ: Պիղատոսի անիրաւ դատի ընթացքում ամբոխը Քրիստոսի փոխարէն նախընտրեց աւազակ Բարաբբային՝ խաչելութեան մատնելով Աստուածորդուն: Անմեղի փոխարէն ընտրուեց մեղաւորը, արդարի փոխարէն՝ չարագործը, որովհետեւ իրենց գործերը չար էին, որովհետեւ ով չարիք է գործում, ատում է լոյսը (Հմմտ.՝ Յովհ. Գ 19-20): Խաչի մոտ Քրիստոսին հաւատացողներն ու հետեւորդները ողբում էին, մինչ չատերը ծաղրում էին Նրան՝ ասելով. «Եթէ Աստծու Որդի ես, իջիր այդ խաչից... եւ... կհաւատանք» (Մտթ. Իէ 40-42): Խաչից չիջաւ երկնային

[1] «Էջմիածին», 2010 Դ, էջ 6:

Հօր ծոցից աշխարհ եկած, մարդացած ու մահկանացու դարձած Բառերար մեր Տէրը, այլ գերեզմանից յարուցիւն առաւ, որպէսզի նորոգի մարդկային բնութիւնը եւ պարգեւի յաւիտենական կեանքի չնորհը: Ահա բաց են յաւիտենութեան դռները, եւ կանչուած ենք ժառանգորդը լինելու երկնքի արքայութեան՝ Աստուծոյ մշտագոյ ներկայութիւնը ունենալու ուրախութեանն ու երանութեանը: Առանց երկիւղելու գնանք Նրա մոտ, ով Տէրն է կեանքի եւ գթառատ է ու սիրով լի: Մեղքերով բեռնաւորուած աշխարհը Նա կարող է նորոգել միայն մէկ խօսքով՝ տեսնելով զղջումը, վերափոխուելու ցանկութիւնն ու ջանքը մարդկային հոգիների: Նա գիտի մարդկանց սրտերը, նրանց խորհուրդները, գիտի բոլոր գործերի նպատակներն ու պիտի չնորհի իւրաքանչիւրին առ Աստուած ունեցած հաւատի եւ յոյսի համեմատ: Այս վստահութեամբ է յարուցեալ Փրկչին տեսած առաքեալը հորդորում Յիսուս Քրիստոսով կառչած մնալ յաւիտենական կեանքի յոյսին եւ հաստատուն ու անդիմում մղել հաւատի բարի մարտը:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, աւետարանական խօսքի համաձայն, հաւատացեալներիս համար կեանքը այս աշխարհում հոգեւոր պատերազմ է եւ իւրաքանչիւր քայլափոխին, ամեն մտածումի ու խօսքի մէջ անհրաժեշտ է, որ ընտրենք ճշմարիտն ու բարին, արդար գտնուենք մխմեանց ու Աստուծոյ առջեւ, որ կեանքում միշտ փայլի տիրաւանդ սէրը: Հաւատի մարտում չկայ երկընտրանք, չկայ զիջում, քանզի այն պատերազմ է սատանայի դէմ, որ կամենում է մարդկանց կործանումն ու մահը: Սատանան թուացեալ յաղթանակեց, երբ Քրիստոս խաչուեց ու գերեզման դրուեց: Տիրոջ սքանչելի, անճառելի յարութեամբ, սակայն, կործանուեցին չարը եւ չարի իշխանութիւնը, քանզի Աստուծոյ կամքը մարդկանց փրկութիւնն է՝ չնորհուած Քրիստոսի յարութեամբ:

Քրիստոս յարուցեալ կեանքի ճանապարհն է, Քրիստոսով զօրութիւնն ունենք նորոգուելու եւ կեանքը բարեփոխելու: Ինչպէս Քրիստոսի երկրային կեանքը բարիք էր մարդկութեան համար, այդպիսին պիտի լինի Նրան հաւատացողի կեանքը, քանզի հաւատի ուղին այն առանձնայատուկ սխրանքն է, որով մարդիկ հրաւիրուած են աներկմտօրէն լինելու Աստուծոյ փրկարար կամքի իրականացնողները երկրի վրա, լինելու Քրիստոսի բուրմունքը Աստուծոյ առջեւ (հմմտ.՝ Բ Կորնթ. Բ 15):

Սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ, Քրիստոսի յարութիւնից մինչ այսօր՝ չուրջ երկու հազար տարի, մարդկութիւնն անցել է հա-

սարակական, տնտեսական, գիտատեխնիկական զարգացման տարբեր հանգրուաններով, բայց արձանագրած բոլոր ձեռքբերումներով հանդերձ՝ բազմիցս թերացել է հաւատի բարի մարտը մղելու: Այսօր էլ յաճախ այս կեանքի բարիքները, ժամանակաւորը առաջնային են համարուում յաւիտենականից, այսօր էլ աշխարհը զերծ չէ պատերազմներից, աղքատութիւնից, անհաշտութիւններից՝ հասարակութեան մէջ, ընտանիքներում, միջանձնական յարաբերութիւններում: Եւ, ճշմարտապէս, չի լինի երբէք խաղաղութիւն, անխափան բարգաւաճում եւ խնդութիւն այնտեղ, որտեղ չի մղուում հաւատի բարի մարտը, որտեղ Քրիստոսի փոխարէն նախընտրում են Բարաբբային:

Մեր ժողովուրդը Քրիստոսին է ընդունել որպէս իր Տիրոջ ու Փրկչի եւ Նրան ապաւինած՝ դարերի մէջ բազում փորձութիւններ է յաղթահարել եւ իր համար փորուած գերեզմաններից հաւատքով յառնել: Քրիստոսի յարութեան խորհուրդը այսօր փառքով բարձրանում ու շողարձակում է հայ կեանքում, քանզի Հայոց ցեղասպանութեան 95-րդ տարելիցը յիշատակում ենք ինքնիշխան հայոց պետականութեան եւ վերազարթօնք ապրող Սփիւռքի իրականութեամբ: Այո՛, 20-րդ դարը մեր ժողովրդի ողբերգութեան, բայց նաեւ վերածննդի դարը եղաւ: Ցեղասպանութեան գողգոթայից անցնելով՝ Սփիւռքում եւ Հայրենիքում անհուն զրկանքներ ու զոհողութիւններ յաղթահարած մեր ժողովուրդը վերընձիւղեց իր նոր կեանքը, չարունակեց ստեղծել եւ մնայուն ձեռքբերումներով այսօր քայլում է ժամանակին համընթաց: Քրիստոսին ապաւինած՝ մեր ժողովուրդը եղաւ հաւատարիմ խաղաղ ու բարօր աշխարհի յոյսին եւ հաւատաց ազատութեան ու արդարութեան յաղթանակին: Այս տեսիլքով ու վստահութեամբ պիտի չարունակենք պաշտպանել մեր արդար դատը, որն այսօր արձագանք է գտնում աշխարհի շատ ժողովուրդների սրտերում, թէեւ դեռեւս համընդհանուր ճանաչում չի գտել Հայոց ցեղասպանութիւնը: Պիտի չարունակենք մեր ջանքերը Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան եւ նրա քաջարի ժողովրդի ազատ ապրելու աստուածաշնորհ իրաւունքի եւ մեր երկիրը չրջափակումից դուրս բերելու համար:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ հայոց:

Այսօր էլ անհրաժեշտ է հաւատի բարի մարտը մղել, որպէսզի մեր կեանքում հաստատուն լինեն աստուածպաշտութիւնը, սէրն ու համերաշխութիւնը, մնայուն՝ բարօրութիւնը, արդիւնաւոր՝ գործերը՝ յանուն մեր ներկայի եւ գալիքի: Այսօր մեր պատմութեան կարեւոր այն հանգրուանն ենք ապրում, երբ վերակերտուում ու բարձրանում

է պետական եւ ազգային մեր կեանքը Հայրենիքում եւ Սփիւռքում, երբ ներկայացել են հնարաւորութիւնները մեր իղձերը մարմնաւորելու, յաղթանակի առաջնորդելու Հայրենի երկրի զօրացմանը, ազգային նպատակների իրագործմանն ու մեր ժողովրդի առաջընթացին ուղղուած ջանքերը: Իւրաքանչիւր ոք իր ծառայութեան վայրում, իր գործունէութեան մէջ պիտի ընթանայ Աստուծոյ փրկարար կամքով եւ հայրենեաց սիրոյ աստուածահաճոյ ճանապարհով, որ բարի արգասիքներ է բերում մեր կեանքին եւ մեզ սիրելի դարձնում Տիրոջը, քանզի ինչպէս յարուցեալ Քրիստոսին առաքեալը ճանաչեց ողջ մարդկութեան համար կրած չարչարանքների նշաններով, նոյնպէս Քրիստոս ճանաչում է մեզ՝ Իր հետեւորդներին, հաւատքի վկայութիւններով, հրաժարումով այն ամենից, ինչ հակառակ է աստուածային կամքին՝ բարուն, արդարութեանն ու ճշմարտութեանը:

Սիրելինե՛ր, իւրաքանչիւրիս համար է հնչում առաքեալի խօսքը. «Հաւատի բարի մարտը մղիր եւ պինդ կառչիր հաւիտենական կեանքից, որին կանչուեցիր»: Հաւատարիմ մնանք մեր բարեպաշտ հայրերի քրիստոնէական սուրբ եւ արդար կեանքի ընտրութեանը: Ընտանիքում, անձնական յարաբերութիւններում եւ թէ ազգային կեանքին մեր մասնակցութեան մէջ պայծառ պահենք հաւատքի լուսաւոր ջահը եւ, ինչպէս հորդորում են առաքեալները. «պահենք մենք մեզ Աստծու սիրով՝ սպասելով մեր Տէր Յիսուս Քրիստոսի ողորմութեանը յաւիտենական կեանքի համար» (Յուդա Ա. 21)՝ նմանուելով «նրանց, որ հաւատով եւ համբերութեամբ ժառանգեցին խոստումները» (Եբր. Զ 12):

Քրիստոսի սուրբ Յարութեան տօնի ուրախութեամբ Մեր բարեմաղթանքներն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին եւ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին:

Ի Քրիստոս սիրով ողջունում ենք քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին՝ հայցելով, որ Տէրը Իր ամենառատ չնորհները պարգեւի իրենց բանաւոր հօտին:

Տիրոջ սուրբ Յարութեան աւետիսով ողջունում ենք Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեանին, հայոց պետական ողջ աւագանուն՝ հայցելով Բարձրեալի օրհնու-

թիւնը իրենց կեանքին եւ ջանքերին՝ յանուն հայրենի մեր երկրի եւ աշխարհասփիւռ մեր ժողովրդի բարօրութեան:

Մեր ողջոյնն ու բարեմաղթանքներն ենք բերում Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկաւարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով, որ Տիրոջ օրհնութեամբ արգասաբեր լինի իրենց գործունէութիւնը ի նպաստ խաղաղ աշխարհի, ժողովուրդների բարեկամութեան եւ համագործակցութեան:

Զատկական այս ողջունաբեր օրը յարուցեալ մեր Փրկչի Իմման Սուրբ Սեղանի առջեւ աղօթք ենք բարձրացնում, որ Աստուած առատ բարիքներով բարգաւաճում ու ծաղկունք չնորհի հայոց աշխարհին, խաղաղութեան ու բարօրութեան մէջ պահպանի Իր փոքրիկ հօտը՝ ազգս հայոց: Հայցում ենք, որ Տէրը մեր ժողովրդին պահի միաբան մեր սուրբ հաւատքով, նոր ուժ եւ զօրութիւն տայ մեր արդար իղձերի իրականացման համար:

Թող յարուցեալ Քրիստոսի չնորհները սփռուեն համայն աշխարհում, որպէսզի բարեկամութեան ու եղբայրութեան մէջ բոլոր ազգերը յոյսով ու հաւատով կերտեն մարդկութեան երազած կեանքը՝ լի սիրով, համերաշխութեամբ եւ անվրդով խաղաղութեամբ այսօր եւ յաւիտեանս, ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ԱՊՐԻԼ 2010 Թ.)[1]

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում աշխարհասփիւռ մեր ժողովրդին Աւետման չնորհազարդ տօնի առիթով եւ չնորհաւորում կանանց ու մայրերին՝ Մայրութեան եւ գեղեցկութեան օրուայ կապակցութեամբ:

Փրկչի Մարդացման մասին Սուրբ Աստուածածնին տրուած հրեշտակաճայն Աւետիսը աշխարհի փրկութեան աստուածային խոստումի բարի լուրն էր՝ վկայութիւնը մարդու նկատմամբ Բարձրեալի անսահման սիրոյ ու հոգածութեան:

Մեր մաղթանքն է, որպէսզի կենսապարգեւ այս տօնի խորհուրդով Աստուածամօր լուսաւոր կերպարը այսօր եւ միշտ ոգեշնչի եւ առաջնորդի կանանց՝ ապրելու առ Աստուած հաւատքով, ծառայելու իրենց ընտանիքների բարօրութեանն ու ամրութեանը, մայրական հոգածութեամբ դաստիարակելու արժանաւոր զաւակներ մեր Հայրենիքի եւ մեր Սուրբ Եկեղեցու համար:

Թող Սուրբ Աստուածածնի բարեխօսութեամբ Միածին Որդին մայրութեան չնորհով զարդարի բոլոր կանանց եւ խաղաղութեան ու բարօրութեան մէջ պահպանի մեր մայրերին ու քոյրերին՝ միշտ խինդով լեցուն ու երջանիկ, միշտ գեղեցիկ՝ օրհնուած առաքինութիւններով:

---

[1] «Էջմիածին», 2010 Դ, էջ 10:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(ՄԱՅԻՍ, 2010 Թ.)[1]

Սիրելի՛ չրջանավարտներ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրական սիրով ողջունում եւ շնորհավորում ենք ձեզ դպրոցական ուսումնառության չրջանը ավարտելու տոնական առիթով եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ:


Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Լուսո Խորանի առջեւ աղոթում ենք առ Աստված, որ հանապազ առաջնորդի եւ շնորհազարդի ձեզ եւ դեպի բարի իրագործում առաջնորդի ազնիվ ու չիտակ ձեր հոգու ձգտումները, հույսերն ու նպատակները: Միշտ եւ ամենուր անբաժան ուղեկից ունեցեք Աստվածսիրությունը, եկեղեցասիրությունն ու հայրենասիրությունը, որոնք կօգնեն ձեզ ճշմարիտն ու արդարն ընտրելու, ձեր կյանքը առատ արդյունքներով արգասավորելու:

Մաղթում ենք ձեզ երջանկություն եւ հաջողություններ՝ մեր ժողովրդին, մեր Սուրբ Եկեղեցուն եւ ազատ իր կյանքը կերտող մեր Հայրենիքին բարի ծառայության մեջ: Թող ձեր ձեռքբերումներով, ձեր գործերով զորանան մեր ժողովրդի հույսերը, եւ պայծառանա մեր ապագան: Եվ թող Ամենախնամ Աստծո օրհնաբեր Աջը մշտապես հովանի լինի ձեզ:

Շնորհք, սէր եւ աստուածային սրբարար զօրութիւնն Յարուցեալ Տեառն մերոյ եղիցին ընդ ձեզ ամենեսեան. ամէն:

---

[1] «Էջմիածին», 2010 Ե, էջ 3:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ ՏԱՆՈՂ ճՈՊԱՆՈՒՂՈՒ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ, 16 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2010 Թ.)[1]

«Եւ Աստված կարող է ամեն շնորհ շատացնել ձեր մեջ, որպեսզի ամեն ինչում ամենայն ժամ առատանաք բոլոր բարի գործերում»:
(Բ Կորնթ. Թ 8)

Մեծարգո՛ նախագահ,
Հարգարժա՛ն պետական այրեր եւ հյուրեր,
Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ:

***Բերկրաշատ հոգով ողջունում ենք ձեզ հիշարժան այս օրը, երբ հավաքվել ենք Տաթեւի հնագույն վանք տանող ճոպանուղու բացման արարողությանը, որը հավատավոր հոգով կյանքի կոչված բարի գործ է: Առաքյալի խոսքի համաձայն՝ Աստված է չնորհն ու ներշնչումը բերում մարդկային հոգիներին՝ բարի գործեր կերտելու եւ բարեգործության մեջ հարատեւելու: Գոհությունն ենք մատուցում Տիրոջը, որ այսպիսի բարի գործերով, մեր ժողովրդի ջանքերով ու նվիրումով այսօր չենանում է հայրենական, ազգային եւ եկեղեցական մեր կյանքը՝ քաջալերությունն պարգեւելով մեր հոգիներին եւ զորացնելով բարօր ապագայի մեր հույսերը: Գովելի է մեծապես տիար Ռուբեն Վարդանյանի կողմից ճոպանուղու կառուցման նախաձեռնությունը, որն իրագործվեց Հայաստանի կառավարության հովանու ներքո՝ հավատավոր մյուս բարերարների ջակցությամբ: Սյունյաց աշխարհում, որը վաղնջական ժամանակներից հարուստ է մարդու ստեղծագործական մտքի եւ աշխատանքի զարմանալի արդյունքներով, ուր գործել են նաեւ միջնադարյան մեր երկու համալսարանները, այսօր հավելվում է**

[1] «Էջմիածին», 2010 ժ, էջ 3:

արդիական եզակի այս կառույցը՝ Տաթեւի ճոպանուղին: Ուրախ ենք բոլորս, քանզի ճոպանուղին, որպես հինավուրց ուխտավայրի արագաթռիչ թեւ, օգնելու է մեզ ավելի հեշտ եւ արագ հասնելու Տաթեւի վանք եւ հաղորդվելու առաքելական ժամանակներից ուխտատեղի դարձած բազմադարյա սրբավայրի նվիրական խորհրդին:

Արդարեւ, հոյակերտ իր գեղեցկությամբ հայ ճարտարապետության բացառիկ արարումներից է Տաթեւի վանքը, որը դարեր շարունակ եղել է հայոց հոգեւոր կյանքի, գիտության ու մշակույթի պայծառ կենտրոն: Տաթեւի վանքում են ապրել, ուսուցանել ու իրենց անմահ գործերը ստեղծել մեծանուն վարդապետներ, Սյունյաց մետրոպոլիտ Ստեփանոս Օրբելյանը՝ հոգնաջան առաջնորդն ու պայծառամիտ պատմիչը, հայոց եռամեծ ռաբունապետը, չնորհառատ ու անսպառ քարոզիչ սուրբ Գրիգոր Տաթեւացին, ով վանքում գտել է նաեւ հավերժ բնակություն: Անխոնջ ջանքով ու նվիրումով այստեղ խնամվել է հավատքն առ Աստված, որպեսզի ճշմարտության եւ արդարության հոգին, միմյանց հանդեպ սիրո ոգին մարդկանց սրտերից բխելով՝ բարիք դառնա կյանքում: Այստեղ խնամվել են գիտությունն ու աշխատասեր կամքը, որպեսզի ծառայեն մարդկանց բարօրությանն ու առաջընթացին: Իր առաքելությամբ Տաթեւի վանքը հավատքի եւ դեպի Աստված ուղու կոթողացած բարձունք է: Այստեղ սրբեր են ապրել ու ամփոփվել: Այստեղ առատ է աղոթքն ու օրհնությունը: Նվիրական այս ուխտավայրում մեր հոգին մեր նախնյաց հետ է, զորեղ՝ նրանց հավատքի օրինակով եւ հավատքի գործերով: Մեր հոգին Աստծո հետ է՝ նորոգյալ ուխտով, հույսով քաջալեր՝ մեր իղձերը կյանքի կոչելու լավատեսությամբ: Արդարեւ, մեր ժողովրդի համար նոր օրհնություն, չնորհ եւ ուրախություն է, որ ճոպանուղու կառուցման ձեռնարկն իրականացրած բարերարները նախատեսում են նաեւ կյանքի կոչել «Տաթեւի վերածնունդ» ծրագիրը, որպեսզի վանքն ամբողջությամբ նորոգվի ու նոր կառույցներով համալրվի եւ առավել արդյունավետ շարունակի հոգեւոր, գիտակրթական ու մշակութային իր առաքելությունը եւ մնա քրիստոնեական մշակույթի գանձ ու արժեք:

Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ՀՀ իշխանություններին՝ ի դեմս այս հանդիսության ներկա ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանի, նաեւ ճոպանուղու կառուցումն իրագործած բոլոր բարերարներին: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Սյունյաց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանին եւ առաջնորդական փոխանորդ հոգեշնորհ Տ.

Զավեն աբեղա Յազիչյանին, թեմի հոգեւորականաց ուխտյալ գասին եւ բարեպաշտ ողջ ժողովրդին: Այսօր Սյունյաց աշխարհում նույնպես զորանում է հոգեւոր կյանքը, Սյունիքի քաջարի ու աշխատասեր մեր զավակները ջանքեր են բերում Հայրենիքի չենացմանը եւ ապրում են ազգային մեր բոլոր իղձերով, որոնց իրականացմանն առավել մոտ ենք զգում մեզ անկախ պետութեյան մեջ եւ ի սփյուռս աշխարհի հոգեւոր ու ազգային մեր կյանքի բարի գործերով ու ձեռքբերումներով:

Սիրելինե՛ր, սուրբ առաքյալի հորդորն ենք վերստին հնչեցնում այսօր. «Եւ Աստված կարող է ամեն չնորհ չատացնել ձեր մեջ, որպեսզի ամեն ինչում ամենայն ժամ առատանաք բոլոր բարի գործերում»: Զգոն եւ արթուն լինենք, որ մեր հոգիները միշտ ունկնդիր մնան Ավետարանի կենարար խոսքին, մեր բարերար Տիրոջ փրկարար կամքին եւ մեր հոգեւոր տունը՝ մեր Սուրբ Եկեղեցին, մնա պայծառ, անկեղծ ու մաքուր սրտից բխած մեր հավատքով եւ բարեխորհուրդ ու բարեբեր գործերով զորանա մեր Հայրենիքը եւ ապահով ու բարօր լինի կյանքը մեր ժողովրդի: Պողոս առաքյալի խոսքի համաձայն՝ «Բարին գործելուց չձանձրանանք, որովհետեւ հարմար ժամանակին պիտի հնձենք, եթե չթուլանանք» (Գաղ. Զ 9):

Աղոթենք, որ Աստված ամենախնամ Իր Սուրբ Աջով խաղաղ երկնքի ներքո պահպանի մեր երկիրն ու համայն ժողովրդին, առատ արդյունքներով օրհնի մեր ջանքերը եւ ամեն ժամ զորացնի մեզ աներկբա հավատքով, որպեսզի մեր եւ մեր զավակների կյանքից անպակաս լինեն բարի, արդար, արի գործերը՝ ի փառս Իր Սուրբ Անվան, ի պայծառութեյուն մեր Եկեղեցու եւ ի բարօրութեյուն մեր Հայրենիքի: «Եվ թող այդպես փայլի ձեր լույսը մարդկանց առաջ, որպեսզի տեսնեն ձեր բարի գործերը եւ փառավորեն ձեր Հորը, որ երկնքում է» (Մտթ. Ե 16), այսօր եւ միշտ եւ հավիտյանս, ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2010 Թ.)[1]

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ ի Հայրենիս եւ ի Սփյուռս:

Հուսառատ հոգով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք բերում ամենքիդ եւ Հայրապետական Մեր սերն ու բարեմաղթանքները՝ հավատքով պայծառ, խինդով լեցուն, բարիքով առատ նոր տարվա:

Տարեմուտի այս երեկո գոհություն ենք հայտնում եւ փառք մատուցում Տիրոջը, որ եւս մեկ տարվա խաղաղ կյանքի պարգեւը չնորհեց Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկրին եւ անխռով պահեց Սփյուռքի մեր համայնքները: Փառք ենք մատուցում Տիրոջը, որ առիթներ ունեցանք ուրախանալու հայրենաշեն ու ազգանվեր գործերով, հաջողություններով ազգային եւ եկեղեցական մեր կյանքում: Ազգս հայոց քաջարի ոգով աննվազ ջանք ու աշխատանք գործադրեց՝ հաստատուն պահելու իր ընթացքը դեպի չեն ու ծաղկուն երկիր կերտելու տեսիլքը, ջանք ու աշխատանք գործադրեց՝ դիմակայելու տնտեսական ընդհանուր ճգնաժամով, նաեւ մեր երկրի չրջափակումով պայմանավորված դժվարություններն ու մարտահրավերները:

2011 թվականին լրանում է 20-ամյակը մեր անկախ պետականության, որը նոր, հաղթական, ոսկեգիր էջն է մեր պատմության, լուսաչող նոր առավոտը՝ մեր ազգային զարթոնքի եւ մեր հոգեւոր կյանքի պայծառության: Հավատքով, նորոգված հավատքով դիմավորենք նոր տարին, դիմավորենք կամքով ու վճռականությամբ, որ առավել ու առավել ջանքեր եւ հոգածություն պիտի բերենք ի սեր մեր Հայրենիքի ազատ ու վերածնվող կյանքի, մեր պետականության ամրության, ազգային մեր իղձերի մարմնավորման եւ մեր արդար դատի պաշտպանության: Հայրապետական Մեր հորդորն ենք հղում ձեզ, սիրելի՛ աշխարհասփ-

[1] «Էջմիածին», 2011, Ա, էջ 3:

յուռ զավակներ Մեր, ամրացնենք սերը մեր կյանքում, ապագայի հանդեպ հավատն ու վստահությունը, լավատեսության ոգին եւ մեր ապավինությունը, որ ունենք առ Աստված: Մեր հույսն ու հավատքը պիտի լուսավորեն նոր ուղիներն ու հորիզոնները մեր կյանքի: Ջտարակուսենք փոխել, ինչ որ անհրաժեշտ ենք գտնում փոխելու ի նպաստ մեր նպատակների մարմնավորման: Ջվարանենք պաշտպանել, զորակից ու սատար լինել այն ամենին, ինչը բարիք ու առաջընթաց կբերի մեր պետական ու հասարակական, ազգային ու հոգեւոր կյանքին: Ամուր պահենք հայ ինքնությունը, որն արտահայտվում է ոչ միայն ազգային պատկանելությամբ, այլեւ՝ Հայրենիքի հանդեպ նվիրումով, մեր նախնյաց ժառանգության արժեւորումով, մեր ժողովրդի նկարագրի անբաժանելի մասը դարձած քրիստոնեական արժեքների հանդեպ հավատարմությամբ ու նախանձախնդրությամբ:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, քիչ անց նոր տարվա գալուստով պիտի ղողանջեն Սուրբ Էջմիածնի եւ հայոց սուրբ եկեղեցիների զանգերը: Մեր Տիրոջ Իյման Սուրբ Սեղանի առջեւ եկեղեցականների եւ հավատավոր մեր զավակների հետ նոր տարվա անդրանիկ մեր աղոթքը պիտի բարձրացնենք առ Աստված՝ հայցելով աշխարհին եւ հայրենի մեր երկրին խաղաղություն ու բարօրություն, հայրենի իշխանություններին՝ շարունակական ձեռքբերումներ, ազգիս հայոց՝ առատ արգասիքներ, Հայոց բանակին՝ զորություն, հայ ընտանիքներին՝ ամրություն: Ամենակարող Երկնավորից պիտի հայցենք զորակցություն կարոտյալ մեր զավակներին. վշտացյալներին՝ մխիթարություն, հիվանդներին՝ ապաքինություն, նեղության մեջ գտնվողներին՝ ապավինություն:

Թող Աստված՝ պարգեւատուն բարիքների, առատացնողն ու արդարացնողը հույսերի, ընդունի մեր աղոթքը եւ օրհնի ամենքիս ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս՝ այսօր եւ միշտ եւ հավիտյան:

Շնորհավոր Նոր տարի:

ՄԱՂԹԱՆՔՆԵՐ, ԽՈՍՔԵՐ, ՔԱՐՈԶՆԵՐ, ՈՒՂԵՐՁՆԵՐ, ՊԱՏԳԱՄՆԵՐ



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՅԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 6 ՀՈՒՆՎԱՐԻ, 2011 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զի ծնաւ ձեզ այսօր Փրկիչ,
որ է օծեալ Տէր, ի քաղաքի Դաւթի»:
(Ղուկ. Բ 11)

Սիրելի՛ հաւատաւոր ժողովուրդ հայոց ի Հայրենիս եւ ի Սփիւռս:

Այսօր կրկին խնդութիւն ու բերկրանք է մեր սրտերում տօնախմբութեամբ մեր Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան: Մանուկ Յիսուսով Աստուծոյ սէրը մարմին առաւ ու բնակուեց մարդկանց մէջ: Աստուած Իր բիւր չնորհները հեղեց մարդկութեան վրայ, բոլորի համար բացեց ճանապարհը փրկութեան:

«Այսօր ձեզ համար Դաւթի քաղաքում ծնուեց մի Փրկիչ, որ օծեալ Տէրն է»: Ուրախաբեր այս լուրը աւելի քան երկու հազար տարիներ առաջ տրուեց Բեթղեհէմի հովիւներին, եւ պայծառ աստղը Բեթղեհէմի երկնքում առաջնորդեց արեւելքի մոգերին, ովքեր ելան Տիրոջը փնտրելու եւ գտան խանձարուրի մէջ պարուրուած Մանկանը ու ճանաչեցին, որ Տէրն է՝ Փրկիչն Աչխարհի:

Քրիստոսի Ծնունդը այսօր եւս հրաւեր է մեզ, բոլոր մարդկանց ու ժողովուրդներին՝ մոգերի ու հովիւների նմանութեամբ գնալու դէպի Փրկիչը, Մարդասէրը ու Բարերար Տէրը. «Ովքեր Տիրոջն են փնտրում, նրանցից ոչ մի բարիք չի պակասելու»,- ասում է սաղմոսերգուն (Սաղմ. ԼԳ 11): Տիրոջը փնտրել՝ նշանակում է ընթանալ դէպի Աստուած, ընդունել Նրա փրկարար կամքը, հետեւել Նրան: Տիրոջը փնտրել՝ նշա-

---

[1] «Էջմիածին», 2011, Ա, էջ 5:

նակում է հանդիպել, տեսնել Նրան մարդկանց կերակրելիս, բժշկելիս, մխիթարելիս, յոյս, հաւատ ու կեանք պարգեւելիս, կեղծիքն ու երեսպաշտութիւնը սաստելիս, մարդկանց խաղաղութեան, արդարութեան, ճշմարտութեան ուղիով առաջնորդելիս: Այս ճանապարհներին Տիրոջը հանդիպողները զօրանալու են, նրանց սրտերը խաղաղ եւ ուրախ են լինելու, նրանք չեն տարակուսելու իրենց հաւատքում եւ նրանց «ոչ մի բարիք չի պակասելու»: Աստուած Միածին իր Որդուն ի սէր մարդկանց առաքեց աշխարհ, որով եւ մարդկանց մեծագոյն օրինակը մատուցեց միմեանց հանդէպ սիրոյ, խնամքի եւ հոգածութեան, ունեցած բարիքներին միմեանց մասնակից դարձնելու եւ երկնային չնորհները յուսալու: Ճշմարիտ, աստուածօրհնեալ այս կեանքով են ապրել արդարները, մարգարէներն ու առաքեալները, հաւատքի համար նահատակները, երանելիներն ու բարեպաշտները եւ որպէս փարոս՝ դարերի մէջ լուսաւորել դէպի Աստուած մարդկութեան ուղին:

Արդի դարը, որ բնորոշուում է աւելի նիւթապաշտութեամբ ու աշխարհիկութեամբ, առաւել կարիքն ունի հոգեւոր ներուժի, աներկմիտ հաւատքի, դարձի՝ դէպի Քրիստոսապատուեր հոգեւոր-բարոյական արժէքները, որոնցով իմաստաւորուում է կեանքը եւ հաստատուում իր նպատակի՝ դէպի Աստուած ընթացքի մէջ: Յարատեւ ու մնայուն են հոգեւոր արժէքները, որոնք լուսաւորել ու զօրացրել են ժողովուրդների կեանքը, ծաղկեցրել մշակոյթները, բարեփոխել հասարակութիւնները: Այսօր էլ առանց հոգեւորի, առանց Աստուածոյ՝ ձախողման են դատապարտուած սոցիալ-տնտեսական բարեփոխումները, գիտատեխնիկական զարգացումներն ու ձեռքբերումները եւ մարդկային բոլոր ջանքերը՝ ուղղուած կեանքի առաջընթացին: Արդարեւ, խաղաղութիւն, բարգաւաճում, բարօրութիւն եւ ամեն բարիք մարդկութիւնը ի զօրու պիտի լինի գտնել հոգեւոր-բարոյական նորոգութեամբ: «Քանի որ ամեն բարի չնորհ եւ ամեն կատարեալ պարգեւ, - ինչպէս Յակոբոս առաքեալն է ուսուցանում,- վերեւից է իջած, լոյսի Հօրից» (Յակ. Ա 17):

Սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս, մեր Հայրենիքում եւ ազգային կեանքում էլ ունենք բազմաթիւ խնդիրներ, որոնք կարող պիտի լինենք վճռել մեր հաւատքից բխող չնորհներով՝ միմեանց հանդէպ սիրոյ, արդարամտութեան, նուիրումի ու նախանձախնդրութեան, հայրենասիրութեան ու ազգասիրութեան ոգու զօրութեամբ: Չերկնչենք դժուարութիւններից ու նեղութիւններից. Տէրը մեզ համար շատ տխրութիւններ է ուրախութեան

փոխել, չատ յաղթանակներ մեզ պարգեւել, որոնցով այսօր քաջալեր են մեր հոգիները: Երկիւղենք մեր պարտքի ու պատասխանատուութեան մէջ թերանալուց, կեղծիքից ու անարդարութիւնից, նոյնքան նաեւ անտարբերութիւնից: Իւրաքանչիւրս՝ պաշտօնեան իր դիրքում, զինուորականն՝ իր ծառայութեան, հոգեւորականն իր սպասաւորութեան մէջ, հողագործն ու արտադրողը՝ իրենց աշխատանքում, ուսուցիչը, գիտնականը, բժիշկն ու արուեստագէտը՝ իրենց կոչման մէջ, լինենք առաւել ջանադիր, պատրաստ՝ առաւել նուիրումի ու յանձնառութեան, որպէսզի բարի արգասիքներ ամբարենք եւ Տիրոջ չնորհը առատացնենք մեր կեանքում: Ազգային եւ հոգեւոր զօրացեալ կեանքով, ամուր միասնութեամբ է, որ պիտի չէնացնենք մեր Հայրենիքը, բարօր դարձնենք մեր ժողովրդի կեանքը, աներեր պահենք մեր երկրի կայունութիւնը, աներեր՝ գալիքի հանդէպ լաւատեսութիւնը, որ մեր ժողովրդի զաւակները չհեռանան Հայրենիքից, այլ՝ վերադառնան, որ Հայրենիքում եւ Սփիւռքում բազմանան հայ ընտանիքները եւ զաւակները՝ հայոց ընտանիքներում: Դժուարութիւնները թող արգելք չդառնան, որ հայրենի գիւղերն ու չէները բազմամարդ դառնան, եւ ընտանեկան յարկերում մանուկների ճիչն ու խինդն աւելանան: Հարստութեան, հարմարաւետ պայմանների կամ փարթամութեան մէջ չէ, որ ծնուեց Աստուծոյ Որդին: Մեր Տէրը աշխարհ եկաւ համեստ ընտանիքում, որն ունէր յոյսն Աստուծոյ եւ խոնարհութիւնը Աստուծոյ կամքի առաջ: Ամեն մանկան հետ նոր յոյս է ծնուում, նոր հեռանկար՝ մեր ազգի առաջընթացի ու բարգաւաճման: Նրանց ձեռքերում է մեր ժողովրդի գալիքը: Նրանք պիտի չարունակեն վերածնուած մեր Հայրենիքի ազատ կեանքը, ազգերի մէջ մեր ժողովրդի ուղին՝ խաղաղ ու երջանիկ, առ Աստուած յոյսով լեցուն աշխարհի աննուազ հաւատով: Հոգանք, սիրելի՛ ժողովուրդ հայոց, որ մեր զաւակներն աճեն ու զօրանան Աստուծոյ խօսքով եւ չվտանգուեն՝ ընկնելով մեր ժողովրդին խորթ եւ օտար, հոգեսպան գաղափարախօսութիւնների թակարդը: Հաստատենք նրանց առ Քրիստոս հաւատքի ու յոյսի մէջ եւ Տիրոջ խօստումով՝ «կենդանի ջրերի գետեր պիտի բխեն» նրանց հոգիներում (Յովհ. Է 38), ու մարգարէի խօսքի համաձայն՝ «նրանք պիտի կոչուեն ազգ արդարութեան, տունկ՝ ի փառս Տիրոջ: Պիտի վերաշինեն դարաւոր աւերակները, նախկինում աւերուածները պիտի վերաշինեն եւ նորոգեն դարերից ի վեր փլուած քաղաքները» (Ես. ԿԱ 3-4):

Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի հոգենորոգ առիթով Քրիստոսաւանդ սիրով ողջունում ենք Առաքելական մեր Սուրբ

Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրատ֊եանին, սրբազան պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին եւ հայոց պետական աւագանուն: Ողջոյն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեանին: Հայրապետական Մեր օրհնութիւնն ու սէրն ենք բերում մեր Եկեղեցու ուխտապահ հոգեւոր դասին եւ ի սփիւռս աշխարհի համայն մեր ժողովրդին: Տիրոջ ամենառատ չնորհները մաղթելով՝ ողջոյն ենք յղում քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկաւարներին ու ներկայացուցիչներին:

Սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր, այսօր աւետաբեր հրեշտակի ձայնն է հնչում մեր հոգիներին. «Ծնուեց ձեզ Փրկիչ, որ օծեալ Տէրն է»: Ելնենք Տիրոջն ընդառաջ, ինչպէս մոգերն ու հովիւները, Բեթղեհէմեան մսուր դարձնենք մեր հոգիները՝ ընդունելու Մանուկ Յիսուսին: Նորածին Փրկչի սնարի առջեւ աղօթք բարձրացնենք, որ երկնային չնորհներով զօրանան երկրի վրայ խաղաղութեան, մարդկանց մէջ հաճութեան ուղիները, եւ մեր կեանքից չպակասի Աստուածոյ ներկայութիւնը սրտով զգալու եւ հոգով ճանաչելու զօրութիւնը, որպէսզի միշտ ցնծան մեր հոգիները, եւ մեր չուրթերը փառաբանութեամբ հնչեցնեն չնորհաբեր բարի լուրը.

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Ձեզ եւ մեզ մեծ աւետիս:

Շնորք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեսեանն. ամէն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՄԱՐՏ, 2011 Թ.)[1]

«Որ ճշմարտութեամբ միացեալ է ընդ սիրոյն Քրիստոսի,
հոգւոյն աչաւք տեսանէ կաներեւոյթ յստակ
լոյսն ճառագայթից իմանալի արեգական» (Եղիշէ)

«Որ կորուսցէ կանձն իւր վասն աւետարանին՝
Ապրեցուսցէ զնա» (Մարկ. 8.35):

Հայրապետական օրհնութեամբ ողջունում ենք ամենքիդ, որ համախմբվել եք հանդիսավոր միջոցառմամբ նշելու Սրբոց Վարդանանց տոնը: Գոհունակություն է Մեզ համար, որ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի սաները եւ առաջին անգամ Երեւանի պետական համալսարանի սաները դասախոսների առաջնորդությամբ, իրենց միասնական մասնակցությամբ պիտի չուք հաղորդեն այս հանդիսությանը: Այս առիթով Մեր գնահատանքի խոսքն ենք ուղղում Երեւանի պետական համալսարանի հարգարժան ռեկտորին եւ ռեկտորատի բարեջան անդամներին, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսչին եւ տեսչությանը, սիրելի դասախոսներին ու սաներին՝ բոլորիդ չնորհավորելով Վարդանանց ազգային մեծ տոնի եւ ձեր անվանակոչության առիթով:

Սիրելի՛ զավակներ Մեր, այսօր հոգու խնդությամբ ենք նշում տոնը Սրբոց Վարդանանց, ովքեր խիզախության ու անձնազոհության, Հայրենյաց սիրո ու պայծառ հավատքի մեծագույն օրինակը տվեցին հավատավոր մեր ժողովրդին: Մեր պատմությունը հաճախ է գրվել նահատակների ու մարտիրոսների արյամբ, սակայն նրանց քաջագործությամբ է, որ հարատեւել է մեր ազգը, փորձություններ հաղթահարել եւ չենացրել իր Հայրենիքն ու Եկեղեցին:

[1] «Էջմիածին», 2011, Գ, էջ 3:

Կան հաղթանակներ, որոնք հավերժի խորհրդով են դրոշմված եւ նման Քրիստոսի խաչակրութեան՝ բերում են հարութիւն ու կեանք, ոգեշնչում, անկոտրում ոգի եւ զորացնող քաջալերութիւն ազգին: Վարդանանց այսօրինակ սխրանքն է, որ պայքարների ու մաքառումների մեջ ազգիս հայոց եղավ հառնելու եւ հայրենաշէն ու ազգաշահ գործեր կերտելու անսպառ ոգեշնչում, դժվարութիւնների մեջ եղավ հավատքի եւ հույսի լուսավառ փարոս ու նորանոր մեծ հաղթանակների առաջնորդեց մեր ժողովրդին: Ավետարանի համար կեանքը տալու Քրիստոսի պատվերը, որ իրագործված ենք տեսնում Սուրբ Վարդանանց հերոսութեան մեջ, պատվեր է յուրաքանչյուր մարդու, նաեւ ողջ աշխարհին՝ հոգեւորը կարեւորելու, բարձր արժեքներով առաջնորդվելու, որո՛վ միայն մարդը կարող է փրկել ու ապրեցնել իր անձը, իր նվիրական Հայրենիքը ու սիրելի ժողովրդին: Մեր ազգի ուժը առաքելահաստատ հավատքի մեջ է, որ լուսավառ է հայորդյաց հոգիներում մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքո: Դարեր շարունակ աննկուն հավատքով եւ հոգու զորութեամբ է հարատեւել մեր ժողովուրդը, հոգեւորն է եղել այն հիմքն ու վեմը, որի վրա հաստատուն են մնացել մեր ինքնութիւնը, մշակույթը, ազգային ինքնագիտակցութիւնը, որոնցով պայքարել ենք ու հերոսացել հանուն Հայրենիքի ու հավատքի, հանուն մեր պետականութեան հաստատման ու առաջընթացի: Քրիստոսասեր մեր ժողովուրդը հոգու անպարտելիութեամբ է հարատեւել, քանզի մարմինը կարող է եւ պարտվել, բայց ոչ ոք չի կարող պարտութեան մատնել հավատավոր հոգին: Այս համոզումով է, որ եկեղեցական այրերը եւ նախարարները պատասխան գրեցին հավատափոխութիւն եւ ուրացում պարտադրող թշնամուն՝ ասելով. «Յայսմ հայատոց զմեզ ոչ ոք կարէ խախտել ...աւասիկ կամք զբոլոր մարմինս տուեալ ի ձեռս քո. վաղվաղակի արա զինչ եւ կամիս: Ի քէն տանջանք եւ ի մէնջ յանձնառութիւնք»: Այս համոզումով է, որ իր հավատքն ու Եկեղեցին պաշտպանելու ելած ժողովուրդը ձայնում էր. «Նախ զմեր պարանոցս հատէք եւ ապա յեկեղեցին ձեռնարկեցէք»: Պատմութեան ընթացքներում մեր ժողովրդի հերոսական պայքարներին ականատես թշնամիները հասկանում էին, որ հայ ժողովրդին անհնար է հաղթել ու ընկճել, քանի դեռ զորավոր է հավատքը, քանի դեռ հայոց հոգում փայլում է նվիրումն ու հավատարմութիւնը հանդեպ Քրիստոս եւ Նրա Սուրբ Եկեղեցին ու ջանում էին տկարացնել հայոց հավատքի զորութիւնը: Ցավով ենք անդրադառնում, որ այսօր չեն դադարել մեր ժողովրդին իր հայրենական սրբութիւններից, ազգային ինքնա-

գիտակցությունից զրկելու փորձերը, եւ նույն կերպ չարունակում են հարվածներ ուղղել դեպի հայոց հավատքի անառիկ բերդը: Հնօրյա թշնամիների պես չատերն են փորձում նաեւ մեր օրերում հարձակվել Եկեղեցու վրա, աղճատել հայոց բյուրեղյա հավատքը, որպեսզի թուլանա ու տկարանա մեր ազգը, կորցնի վճռականությունը՝ ապրելու եւ պայքարելու «վասն հաւատոյ եւ վասն հայրենեաց»: Աղանդավորական կազմակերպությունները եւ օտար գաղափարախոսությունները փորձում են քարկոծել հայոց գիտությունը, դպրությունն ու մշակույթը, մեր ազգի ու հայրենյաց գոյությունը դարերի հոլովույթում պահպանած ու պաշտապանած Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին: Եւ եթե հնում օտարներն էին չարահնար հարձակումներ գործում մեր հավատքի, մեր Եկեղեցու վրա, ապա այսօր այդ սրբապղծությունը ջանում են իրականացնել նաեւ ձեռամբ հայորդիների՝ աղանդավորների թակարդն ընկած մոլորյալների եւ կամ սրբություն չհանդուրժող անձերի, ինչպես նաեւ վայ- մտավորականների: Վստահ ենք, որ պատմությունը արդարացիորեն դատապարտելու է այդպիսիներին, ինչպես դատապարտվել են մատնիչներն ու ուրացողները: Վարդանանց պայքարի ելած բարեպաշտ մեր նախնիք բարձրաձայնում են, որ աստվածաշնորհ հավատքը անբաժանելի է Սուրբ Եկեղեցուց. «Մեզ իբրեւ Հայր ճանաչում ենք Սուրբ Ավետարանը եւ մայր՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին»: Այո՛, սրբություն է Քրիստոսի առաքյալների կողմից հաստատված Հայոց Սուրբ Եկեղեցին, ազգային մեծագույն սրբություն, եւ մայրն է հավատավոր մեր ժողովրդի, որը սնում է իր զավակներին երկնապարգեւ օրհնություններով ու չնորհներով՝ հաստատելով հավատքը բարեպաշտ հոգիներում:

Սիրելինե՛ր, Վարդանանց հերոսությունը մեզ համար միայն պատմություն կամ հիշողություն չէ, այն կենդանի խորհրդանիշ է բարու պայքարի, որ միշտ պիտի մղենք: Արդի ժամանակներում Հայրենիքում եւ Սփյուռքում բազմաբնույթ մարտահրավերներ ու խնդիրներ են հառնում մեր ժողովրդի կյանքից ներս: Եւ այսօր մեզ պետք է Վարդանանց ոգին, քաջալերությունը՝ ազգի միությունն ու միաբանությունը ամրապնդելու, մեր հավատքը զորացնելու, զերծ պահելու Հայրենիքը վտանգներից, հայ ընտանիքը՝ տկարանալուց, հայոց լեզուն՝ աղարտվելուց: Ավարայրը չարունակվում է այնքան ժամանակ, քանի դեռ անհրաժեշտություն կա պայքարելու մեր Հայրենիքի անսասանության, մեր պետականության զորացման, մեր Սուրբ Եկեղեցու պայծառության, մեր սրբազան արժեքների պահպանության համար: Նա-

խանճախնդիր ու եռանդուն ջանքեր ներդնենք՝ մեր գործերում, առաքելության ու ծառայության մեջ հաջողություններ ունենալու, քանզի յուրաքանչյուրիս առանձին հաղթանակը բարիք է ազգի համար, եւ համայն ազգի հաղթանակը փառք է բոլորիս համար:

Թող Տերը Սրբոց Վարդանանց բարեխոսությամբ խաղաղություն պարգեւի ողջ աշխարհին, իր բյուր չնորհները սփռի համայն մարդկության վրա ու պահպանի մեզ ամենքիս Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո սխրանքի ու արիության ոգու մեջ, որպեսզի, Սուրբ Վարդանի խոսքով, երբեք մեր քաջությանը վատություն չխառնենք, եւ Մեր զավակների չուրթերից առանձնակի հպարտությամբ չարուշնակի հնչել. «Թէպէտ եւ եմք ածու փոքր, եւ թուով յոյժ ընդ փոքու սահմանեալ, սակայն բազում գործք արուեստեան գտանին գործեալ եւ ի մերում աշխարհիս եւ արժանի գրոյ յիշատակի»:

Շնո՛րհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ, եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր, ճշմարտութեամբ եւ սիրով եղիցի ընդ ձեզ (Բ Հովհ. 1.3). ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ԱՊՐԻԼ, 2011 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում աշխարհասփյուռ մեր ժողովրդին Ավետման տոնի առիթով եւ շնորհավորում կանանց՝ Մայրության եւ գեղեցկության օրվա կապակցությամբ:

Աշխարհի փրկության համար Քրիստոսի մարդեղացման հրեշտակաճայն ավետիսն ենք վերստին հիշում նվիրական այս տոնին, որ մեզ բերում է նաեւ հորդորը Տիրամոր հեզ օրինակով աստվածային բարեբար կամքին հնազանդվելու, Ավետարանի լույս պատգամներով ապրելու եւ գործելու:

Աստվածածնի նման խոնարհությամբ, առ Աստված հավատարմությամբ կանայք պիտի արդյունազարդեն իրենց բացառիկ առաքելությունը՝ նոր սերունդ դաստիարակելու, ընտանեկան օրհնյալ հարկը սիրով եւ հոգատարությամբ զորացնելու, նաեւ ազգային-եկեղեցական մեր կյանքում իրենց կոչումը բարի գործունեությամբ արդյունավորելու: Ճշմարիտ գեղեցկությունը առաքինազարդ հոգում է կանաց ու մայրերի, ովքեր հավատքով եւ մարդկանց հանդեպ սիրով լեցուն օրհնյալ արգասիքներ են բերում ազգային մեր անդաստանում:

Թող Սուրբ Աստվածածնի գթառատ բարեխոսությամբ Տերն օրհնի բոլոր կանանց եւ մայրերին, շնորհի արեւշատություն, երկնապարգեւ երջանկություն եւ պահի ու պահպանի Ամենախնամ Իր Սուրբ Աչքի հովանու ներքո:

---

[1] «Էջմիածին», 2011, Դ, էջ 3:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, ԱՊՐԻԼԻ 24, 2011 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Չի խնդրէք կկենդանին ընդ մեռեալս.
չէ աստ, այլ յարեաւ»
(Ղուկ. ԻԴ 5-6):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայրենիս եւ ի Սփիւռս,

Քրիստոսի ՅարուԹեան հրեչտակաբարբառ այս աւետիսը, որ հնչեց Տիրոջ Թափուր գերեզմանի մօտ եւ խնդուԹեամբ ու բերկրանքով համակեց առաջին քրիստոնեաներին, այսօր Թեւածում է ամբողջ աշխարհում, Միածնակէզ այս Սուրբ Տաճարում, լուսազարդ մեր բոլոր եկեղեցիներում: Այսօր քրիստոնեայ ողջ աշխարհը բազմալեզու աղօԹքով փառաբանում է մարդկուԹեան համար խաչուած ու մահուանից յարուԹիւն առած Որդուն Աստուծոյ եւ օրհնաբանում մարդկանց պարգեւած Նրա անգերազանցելի չնորհը՝ լինելու ժառանգորդը երկնքի արքայուԹեան եւ աստուածտեսուԹեան խնդուԹեան մէջ ունենալու յաւիտենական կեանք:

Քրիստոսի ՅարուԹեամբ խորտակուել են մահուան չղԹաները, երկրի վրայ սփռուել երկնային օրհնուԹիւնները ու յաւիտենական պարգեւները, մարդկանց հոգիներում հաստատուել ոգեշնչումը, քաջալերուԹիւնն ու վստահուԹիւնը, որ Յարուցեալ Քրիստոս մարդկանց հետ է Իր անսահման սիրով, խնամքով ու ողորմուԹեամբ, չարից, փորձուԹիւններից ու նեղուԹիւններից ազատելու զօրուԹեամբ: Արդարեւ, որտեղ Յարուցեալ Տէրն է, այնտեղ պարտուում է մահը, եւ հորդում է

[1] «Էջմիածին», 2011, Դ, էջ 4:

կեանքը, որտեղ Յարուցեալ Տէրն է, այնտեղ յաղթանակն է կեանքի եւ խնդութիւնն ու երանութիւնը յաւիտենութեան:

Հաւատքը, որ յարուցեալ է Քրիստոս եւ Նրա հետ յարուցեալ են մարդն ու տիեզերքը, լուսաւորել է ազգերի ու պետութիւնների ուղին, վերափոխել պատմութեան ընթացքները՝ համաճայն Աստուծոյ փրկագործող կամքի եւ մշտնջենաւոր խօսքի. «Ով հաւատում է Ինձ, թէպէտ եւ մեռնի, կապրի» (Յովհ. ԺԱ 25): Մեր ժողովրդի պատմութիւնը նոյնպէս վկայում է անխորտակ զօրութիւնը Քրիստոսի յաղթական Յարութեան: Այդ զօրութեամբ է մեր ժողովուրդը յառնել գողգոթայից Ցեղասպանութեան, որն իրագործուեց Օսմանեան Թուրքիայում 20-րդ դարի սկզբին: Մէկ ու կէս միլիոն հայորդի եղեռնահար չարչարուեց, Տիրոջ պէս խաչուեց, բայց չուրացաւ Քրիստոսին: Յարուցեալ է Քրիստոս, յարուցեալ է ազգս հայոց, յարուցեալ է հայրենի իր պետականութեամբ եւ աշխարհի բոլոր կողմերում վերազարթօնք ապրող հոգեւոր ու ազգային իր կեանքով. յարուցեալ է հաւատով հանդէպ խաղաղ ու արդար, մարդասէր աշխարհը, որի յոյսը պարգեւում է մեզ Փրկիչ մեր Տէրը՝ ուսուցանելով. «ամէն ինչ հնարաւոր է նրա համար, ով հաւատում է» (Մարկ. Թ 22), քանզի «ինչ որ անհնար է մարդկանց համար, Աստծու համար հնարաւոր է» (Ղուկ. ԺԸ 27):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, մեր Տիրոջ սուրբ ու հրաշալի Յարութեան տօնը այս տարի համընկել է Հայոց ցեղասպանութեան յիշատակի օրուայ հետ: Քրիստոսի Յարութեան խորհրդով եւ մեր ժողովրդի վերածնուած կեանքի յոյսերով՝ այս առաւօտ Հայաստանի Հանրապետութեան նախագահի, հայոց պետական աւագանու, օտարերկրեայ դիւանագէտների հետ այցելեցինք մեր նահատակներին Ծիծեռնակաբերդի բարձունքում եւ աղօթեցինք նրանց հոգիների խաղաղութեան ու հանգստութեան համար՝ մեր հոգում կրելով երախտագիտութիւնը Հայոց ցեղասպանութիւնը ճանաչող ազգերի, պետութիւնների եւ Եկեղեցիների հանդէպ, երախտագիտութիւնը՝ մարդասէր բոլոր այն անհատների հանդէպ, ովքեր, հաճախ վտանգելով իրենց կեանքը, մահուան ճանկերից փրկեցին մեր ժողովրդի բազում զաւակների: Համայն մեր ժողովրդի հետ, ով այսօր աշխարհի չորս ծագերում իր խոնարհումն է բերում մեր անմեղ զոհերի յիշատակին, նորոգեցինք մեր ուխտը՝ աննահանջ պայքարով հետամուտ լինելու, որպէսզի համընդհանուր դատապարտութիւն գտնեն Հայոց ցեղասպանութիւնը եւ մարդկութեան դէմ գործուած բոլոր եղեռնագործութիւնները: Այս պահին քրիստոսահաստատ Մայր Տաճարում զատկական Սուրբ Պա-

տարագի մատուցմամբ քաջալեր են մեր հոգիները եւ լի հաւատով, որ Յարուցեալ Փրկչի շնորհները բնակութիւն պիտի հաստատեն մարդկանց սրտերում, լուսաւորեն հոգիները, հրաշագործեն կեանքում, որպէսզի զօրանան աշխարհը բարեփոխելու մարդասիրական ջանքերն ու ուղիները:

Մեր նահատակների անմար յիշատակի առջեւ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, պարտք ունենք առաւել զօրանալու մեր պարտականութիւնների, ծառայութեան ու առաքելութեան մէջ, պարտք ունենք՝ իրագործելու նրանց իղձերն ու տեսիլքները: Մեր հայրերը երազում էին Հայրենիքի ազատ եզերքներում հայ ժողովրդի ապահովութիւնն ու բարօրութիւնը, հայ կեանքի միասնականութիւնը եւ ազգային նուիրական արժէքների վրայ խարսխուած առաջընթացը: Արդ, այսօր, երբ ունենք ազատ Հայրենիք, կորով ու եռանդ ներդնենք մեր նախնեաց փափագի մարմնաւորման՝ մեր 20-ամեայ երիտասարդ պետութեան հզօրացման, մեր ժողովրդի բարգաւաճ կեանքի, պայծառ ու լուսաւոր գալիքի կերտման, ազատ ապրելու մեր իրաւունքի պաշտպանութեան, մեր արդար դատի յաղթանակի համար: Միջազգային ասպարէզներում արդարութեան համար մեր պայքարը եւ Հայրենիքում ու Սփիւռքում չէն ու բարօր կեանքի համար մեր ջանքերը, սակայն, յաղթական չեն լինի, եթէ մեր կեանքում, իւրաքանչիւրիս հոգում զօրեղ չլինեն արդարութիւնն ու ճշմարտութիւնը: Արդարութիւնն ու ճշմարտութիւնը բարի արգասաւորութիւն կունենան, երբ մեր կեանքում աննուազ լինեն եւ առաջնորդող՝ միմեանց հանդէպ սէրն ու հոգածութիւնը, մեղքն ու չարիքը մերժելու վճռականութիւնը, բարոյական արժէքների հանդէպ նախանձախնդրութիւնը:

Արդարութեան տկարացումը խարխլում է հիմքերը աստուածաստեղծ աշխարհի, խաթարում է կեանքի բնականոն, խաղաղ ընթացքը: Հոգեմտաւոր զարգացման մեծ ճանապարհ անցած մարդկութեան ձեռքբերումների, սխրանքների ու նուաճումների կողքին տակաւին տեսնում ենք նաեւ անտեսուած իրաւունք, կարիք, թշնամանք, տնտեսական ճգնաժամ ու պատերազմներ: Միջազգային ասպարէզում դեռեւս վիճարկուում է ժողովուրդների ազատ ապրելու աստուածապարգեւ իրաւունքը: Այս իրողութեանն ականատես ենք ի դէմս տարբեր երկրներում ընթացող հակամարտութիւնների եւ ազգային մեր անդաստանում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան միջազգային ճանաչման ձգձգուող գործընթացի: Ազգերի ազատ ապրելու իրաւունքը ոչ միայն արժանապատուութիւն է մարդ-

կային հասարակութեան համար, այլեւ՝ երաշխիք խաղաղ աշխարհի: Մենք հաւատում ենք, որ նոր սկսուած դարում պիտի յաղթանակի մերժողականութիւնը բռնութեան, իրաւունքի ոտնահարման հանդէպ, եւ, դրանց հակառակ, պիտի արգասաւորուի մարդասիրական արժէքների հաստատումը՝ հնարաւոր դարձնելով ամենուր արդարութեան եւ խաղաղութեան իրագործումը: «Արդար է Տէրը, արդարութիւն է սիրում, ճչմարտութեանն է նայում երեսը Նրա» (Սաղմ. Ժ 8):

Քրիստոսի Յարութեան հրաշափառ տօնն այսօր հրաւէր է ամենքիս, մեզ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, եւ աշխարհի բոլոր քրիստոնեաներին՝ յարուցեալ Հոգով ապրելու եւ գործելու, որ հաստատուի «երկրի վրայ խաղաղութիւն եւ հաճութիւն՝ մարդկանց մէջ» (Ղուկ. Բ 14): Հաստատուն մնանք Յարուցեալ Տիրոջ պարգեւած չնորհների մէջ, անդադրում հոգանք մեր ազգի, Մայր Հայրենիքի ու մեր Սուրբ Եկեղեցու համար, հոգանք, որ ի սփիւռս աշխարհի հաւատքով զօրանան հայ ընտանիքները, աճեն ու բազմանան՝ լրացնելով մեր ժողովրդի կորուստները, եւ մեր զաւակները՝ սիրով առ Հայրենիքն ու Մայր Եկեղեցին, դառնան ուժն ու զօրութիւնը մեր ազատ, նոր կեանքի, մեր նոր վերազարթօնքի:

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Սուրբ Յարութեան աւետիսով եւ եղբայրական սիրով ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին, մեր քոյր Եկեղեցիների չնորհազարդ հոգեւոր պետերին:

Երկնային չնորհների հայցով ողջունում ենք Սուրբ Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին՝ առաջին տիկնոջ հետ, ողջոյն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակո Սահակեանին, հայոց պետական ողջ աւագանուն՝ մաղթելով Աստուծոյ զօրակցութիւնը եւ Սուրբ Հոգու առաջնորդութիւնը՝ արգասաւորելու իրենց ծառայութիւնը Հայրենիքին ու մեր ժողովրդին նոր իրագործումներով ու ձեռքբերումներով:


Ամենայն բարեաց մաղթանքով ողջունում ենք Հայաստանում գործող դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին եւ հայցում Աստուծոյ օրհնութիւնն իրենց կեանքին

եւ ջանքերին՝ յանուն մեր երկրների ու ժողովուրդների բարեկամութեան, յանուն խաղաղ ու բարօր աշխարհի:

Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում մեր Եկեղեցու ուխտապահ հոգեւոր դասին եւ համայն մեր ժողովրդին՝ ի Հայաստան, Արցախ եւ ի Սփիւռս:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, զատկական այս նուիրական օրը, երբ ոգեկոչում ենք յիշատակը բիւրաւոր մեր նահատակների, աղօթենք նաեւ բոլոր ցեղասպանութիւնների զոհերի հոգիների համար: Աղօթենք Ճապոնիայում երկրաշարժից զոհուածների համար, հազարաւոր մարդկանց համար, ովքեր աշխարհի տարբեր կողմերում կրում են ծանր հետեւանքները բնական աղէտների եւ պատերազմական աւէրների: Հայցենք մխասնաբար, որ Յարուցեալ Տէրը անխռով պահպանի աշխարհը իր անբաւ ողորմութեան մէջ եւ պարգեւի մարդկանց կամքն ու իմաստութիւնը՝ յաղթահարելու փորձութիւններն ու դժուարութիւնները կեանքի, գտնելու հիմնախնդիրների կարգաւորման ուղիները: Աղօթենք եւ հայցենք նաեւ, որ երկնաւոր մեր Տէրը իր օրհնութեան, սիրոյ ու չնորհների մէջ պահի մեր Հայրենիքն ու աշխարհասփիւռ մեր ժողովրդին՝ այսօր եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց.
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԸ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2011 Թ.)[1]

Սիրելի՛ մանկավարժներ, ուսանողներ եւ աշակերտներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում Ձեզ Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա եւ նոր ուսումնական տարվա վերաբացման կապակցությամբ:

Լուսավոր այս օրը վերստին բացվել են կրթօջախների դռները: Խնդությամբ են համակված հոգիները սաների եւ ուսուցիչների, ովքեր նոր ուսումնական տարին սկսում են նոր հույսերով եւ բարին ու գեղեցիկը ճանաչելու լավատեսությամբ: Ուրախություն է Մեզ համար, որ, հավատարիմ իրենց կոչմանը եւ կրթադաստիարակչական հարուստ ավանդներին, այսօր նվիրյալ մեր մանկավարժները երիտասարդ սերնդին սնում եւ կրթում են ազգային ոգով եւ հայրենի սրբազան արժեքներով, սերմանում են նրանց հոգում ազնվության ու աշխատասիրության, հայրենասիրության ու ծառայասիրության բարի սերմերը:

Սիրելի՛ զավակներ, ուսումնասեր ու ջանադիր եղե՛ք ուսման մեջ, ուշադիր ու պարտաճանաչ՝ Ձեր պարտականությունների հանդեպ, քանզի կրթությունը Ձեզ համար լուսավոր եւ օրհնյալ պատվար է լինելու ողջ կյանքում: Սուրբ Գիրքն ուսուցանում է. «Մի՛թող իմաստությունը, եւ նա կպաշտպանի քեզ, սիրի՛ր այն, եւ նա կպահպանի քեզ» (Առակաց Դ 6): Իրապես, կրթության մեջ Ձեր ձեռքբերումներով է, որ պիտի արգասիքներ բերեք Ձեր կյանքին եւ ծառայեք մեր Հայրենիքին ու ժողովրդին:

Առ Աստված աղոթքով մաղթում ենք հաջողություններով առատ եւ արգասավոր նոր ուսումնական տարի, հայցում ենք եռանդ եւ կորով մեր մանկավարժներին եւ պայծառ միտք ու ջանադիր աշխատասիրություն սովորողներին:

---

[1] «Էջմիածին», 2011, Թ, էջ 3:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՓՅՈՒՌՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՆԵՐԻ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

(19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2011 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Մեծարգո՛ նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության,

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս,

Բարեպա՛շտ հայորդիք եւ հարգարժան հյուրեր:

Բերկրաշատ հոգով ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ՝ համաժողովի մասնակիցներիդ: Աշխարհի բոլոր կողմերից Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարներդ եւ ներկայացուցիչներդ եկել եք Հայրենիք՝ Հայրենի պետության եւ հայրենաբնակ ձեր քույրերի ու եղբայրների հետ միասնաբար քննարկելու ազգային մեր կյանքը հուզող խնդիրներ՝ ի սեր մեր երկրի ու ժողովրդի առաջընթացի եւ նվիրական իղձերի իրականացման:

Խորհրդանշական է համաժողովի հրավիրումը Մայր Հայրենիքում մեր երկրի անկախության 20-ամյա հոբելյանի լույսի ներքո, որը մեր ժողովուրդը տոնում է հոգու խնդությամբ, հպարտությամբ ու քաջալերությամբ: Ժողովուրդներն ապրում ու գոյատեւում են հայրենիքով, իսկ հայրենիքը ծաղկում է իր զավակների նվիրումով ու զոհողություններով: Արդարեւ, Արցախի եւ Հայաստանի անկախության հռչակումով նոր էջ է բացվել մեր պատմության մեջ, նոր դարագլուխ սկսվել մեր ժողովրդի կյանքում: Դարեր ի վեր ավերների ու կոտորածների, ցեղասպանության ենթարկված մեր ժողովուրդը անվարան հռչակեց, որ տերն է իր երկրի, իր իրավունքների, իր արդար դատի եւ իր ազգային ժառանգության ու միահամուռ ջանքերով ձեռնամուխ է

[1] «Էջմիածին», 2011, Թ, էջ 6:

ազգային իր նպատակների իրագործմանը:

Տոնական այս օրերին մենք հուզումով ենք վերհիշում 1991 թ. պանծալի սեպտեմբերը, մեր ժողովրդի ապրած խնդուքյունը, լավատեսությունը եւ իր նոր կյանքը կառուցելու հաստատակամությունը: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին երջանկահիշատակ Վազգեն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի փառաբանական աղոթքով օրհնեց իրականություն դարձած մեր ազգային երազանքը՝ անկախ Հայրենիքը՝ Հայաստանով ու Արցախով՝ աշխարհսփյուռ մեր ժողովրդին կոչելով միասիրտ ու միասնական չենացնել ու պայծառացնել Հայրենիքը: Երկու տասնամյակում մեծ տեղաշարժեր են եղել. մեր Հայրենիքը վերափոխվում ու զորանում է հայրենի իշխանության եւ մեր ժողովրդի ջանք ու նվիրումով: Այսօր գոհունակությամբ եւ գնահատանքով ենք անդրադառնում Սփյուռքի հայության մեծ աջակցությանը Հայրենիքին, պատրաստակամ հանձնառությանը, որով Սփյուռքի բարերար մեր զավակները, կազմակերպություններն ու անհատ անձինք գործակցություն բերեցին հայրենական կյանքին, Հայոց բանակին, կարեւոր եւ գնահատարժան մասնակցություն ունեցան տնտեսության մեջ, կրթական, առողջապահական, մշակութային ասպարեզներում, բնակավայրերի բարեկարգմանը, վանքերի ու եկեղեցիների վերանորոգության ու կառուցմանը եւ ամենուր, որտեղ եղել է անհրաժեշտություն սատարումի:

Ջեռքբերումներով եւ առաջընթաց զարգացումներով հանդերձ՝ այսօր մեր երկիրը դիմագրավում է տնտեսական, քաղաքական, ընկերային կյանքի բազմաթիվ խնդիրներ: Մեր առջեւ կանգնած հրամայականներ են Հայաստանում եւ Արցախում բարօր կյանքի կերտումը, Արցախյան հինախնդրի արդար կարգավորումը, Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը, որոնք մեր ժողովրդից պահանջում են նոր ջանքեր, հանձնառություններ ու իրագործումներ:

Հաշված տարիներ հետո հիշատակելու ենք Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը, որին ընդառաջ՝ մենք պիտի չարունակենք մեր համակարգված գործունեությունը ընդդեմ Թուրքիո՝ Ցեղասպանության ժխտողական քաղաքականության: Պահանջատիրությունը մեր ցանկություններուն, մեր որոշումների արդյունք չէ, այ՝ հետեւանքը մեր ժողովրդի նկատմամբ Թուրքիո գործած ոճրի: Հայ Դատի պաշտպանությունը ցեղասպանության ենթարկված մեր ժողովրդի հոգու պարտքն է նախնյաց եւ Աստուծո առջեւ: Մենք իրավունք չունենք տկար լինելու, մեր կարողություններն ու հնարավորությունները

վատնելու, այլ՝ համախմբված, հետեւողական ու աննահանջ շարունակելու պայքարը մեր ժողովրդի արդարության հաղթանակի համար:

Համաժողովի սիրելի՛ մասնակիցներ:

Ձեր օրակարգում կարեւորությամբ քննության եք առնելու երիտասարդությանը վերաբերող հիմնախնդիրները, մեր մատաղ սերնդի ուսման, ազգային կրթության ու դաստիարակության հրամայականները: Կրթության խնդիրը միշտ արդիական է, իսկ մեր ժողովրդի համար հայապահպանության լույսի ներքո՝ կենսականորեն կարեւոր: Տարբեր մշակույթների ու տարբեր արժեհամակարգերի պայմաններում հասակ առնող եւ հաճախ ժամանակակից աշխարհի անցանկալի ընթացքների ազդեցություններին ենթարկվող հայորդյաց համար ինքնության պահպանության պայման ու ապահով հենարան է հայրենաճանաչությունը, քրիստոնեական մեր հավատքին ու արժեքներին, մեր ազգային ավանդներին խարսխված որակյալ կրթությունը: Այս կերպով մեր ընտանիքներում, մեր եկեղեցիներում, ազգային ու կրթական մեր հաստատություններում կարող պիտի լինենք կերտել Աստծո, Ազգի, Հայրենիքի ու Եկեղեցու առջեւ պատասխանատվություն կրող երիտասարդություն: Ամենքս պիտի գործենք Հայրենիքի ու Եկեղեցու շուրջ մեր զավակների համախմբման նախանձախնդրությամբ, մեր հավատքը, մեր լեզուն ու մշակույթը սրբորեն պահպանելու եւ սերնդեսերունդ փոխանցելու կամքով: Ազգապահպանության, հայրենաշինության եւ ազգային մեր խնդիրների լուծման նախադրյալը մեր համագործակցությունն ու քրտնաջան աշխատանքն է, մեր միասնականությունն ու կազմակերպվածությունը: Այս նպատակների իրականացման գործում մեր Եկեղեցու անփոխարինելի դերի եւ առաքելության կարեւորության համոզումն ունենալով՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը ջանքեր է ներդնում առավել կարգավորված դարձնելու եկեղեցական կյանքը Հայրենիքի եւ Սփյուռքի համայնքներում, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության եւ նվիրապետական մեր մյուս աթոռների հետ համատեղ աշխատանքով լուծելու անցյալից ժառանգություն մնացած խնդիրները, որոնք խոչընդոտում են մեր հոգեւոր եւ ազգային կյանքի առաջընթացը: Մենք հավատում ենք մեր ժողովրդի պայծառ, լուսավոր ապագային, որը պիտի կերտենք այսօր անկախացյալ Հայրենի մեր պետականության ամուր հիմքերի վրա: Այդ հավատն է համախմբել ձեզ Հայրենիքում՝ միասնաբար քայլեր ձեռնարկելու, ջանքեր գործադրելու՝ զորացնելու համար հիմերը մեր անկախ պետականության, ամրապնդելու ազգային կյանքը Սփյուռքի

համայնքներում, հետամուտ լինելու մեր ժողովրդի իղձերի ու նպատակների իրականացմանը: Արդարեւ, մեզ չեն պակասում մարդկային ուժեր, նյութական հնարավորություններ, եկեղեցական, ազգային, պետական կառույցներ, մեզ չեն պակասում գիտական միտք ու չնորհալի հոգու կարողություններ՝ իրականություն դարձնելու ազգային մեր ծրագրերը եւ տեսիլքները:

Գոհությունն բարձրացնելով առ Աստված՝ ի խորոց սրտի հայցում ենք, որ Տերը խաղաղ ու հաստատուն պահի մեր պետությունը, օգնական ու աջակից լինի հայրենի մեր իշխանություններին եւ մեր ժողովրդի բոլոր զավակներին ամենուր, օրհնի մեր ջանքերն ու գործերը եւ հաղթությամբ պսակի մեր նպատակները:

Մեր բարձր գնահատանքն ենք բերում Սփյուռքի նախարարությանը եւ համաժողովի բոլոր կազմակերպիչներին, ինչպես եւ ձեզ, համաժողովի սիրելի՛ մասնակիցներ, հորդորելով, որ նույն անսակարկ նվիրումով շարունակեք ձեր ընթացքը՝ նորանոր բարի իրագործումներով զարդարելով ձեր ազգօգուտ, հայրենաշեն ու եկեղեցաշեն վաստակը: Առ Աստված աղոթքով մաղթում ենք բարի ընթացք եւ արդյունավոր աշխատանք Հայրենիք-Սփյուռք համաժողովին: Տերն է մեր ապավենը սերնդեսերունդ, որ օրհնում է ազգիս կառուցելու եւ պայծառացնելու իր վերածնվող կյանքը այսօր եւ հավիտյան. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԽԱՉԵՐԻ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(ՄՈՍԿՎԱ, 23 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2011 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Քաւ լիցի, որ ես պարծենամ այլ բանով,
քան միայն մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչով»
(Գաղ. Զ 14):

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր:

Այսօր ուրախ են մեր հոգիները Տիրոջ Սուրբ Խաչի գյուտի բերկրալի տոնի խնդությամբ: Հիշատակում ենք դարեր առաջ բարեպաշտ Սուրբ Հեղինե կայսրուհու ջանքերով Տիրոջ խաչափայտի գյուտը, որը նոր խանդավառություն բերեց քրիստոնյա աշխարհում: Նվիրական այս տոնին հոգեւոր ուրախության առանձնակի զգացումով եւ առ Բարձրյալն Աստված գոհաբանությամբ Մենք սրբալուսյա մյուռոնով կատարեցինք օծումը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդանիստ եկեղեցու խաչերի, որոնք, պսակելով եկեղեցու գմբեթները, օրհնություն պիտի հեղեն հավատավոր մեր զավակների կյանքից ներս, օրհնություն պիտի հեղեն Ռուսաստանի օրհնյալ հողին եւ Քրիստոսասեր ռուս եղբայր ժողովրդի կյանքին:

Հայրապետական սիրով եւ օրհնությամբ Մենք ողջունում ենք հոգեպարար այս արարողությանը ներկայությունը Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանի, ով Ռուսաստանի Դաշնությունում է գտնվում ՌԴ նախագահ տիար Դմիտրի Մեդվեդեւի հրավերով, ինչպես նաեւ ներկայությունը մեծազնիվ առաջին

[1] «Էջմիածին», 2011, Ժ, էջ 3:

տիկնոջ: Հայաստանի Հանրապետության հարգարժան նախագահը, պաշտոնական եւ աշխատանքային իր այցերի ժամանակ արտերկիր, մշտապես կարեւորում է նաեւ հանդիպումը հայ համայնքների հետ, ինչը վկայում է նախագահի եւ հայրենի երկրի իշխանությունների ուշադրությունը նաեւ Հայրենիքից հեռու բնակվող հայորդյաց հանդեպ, ինչպես նաեւ ստանձնած բարձր ու պատասխանատու առաքելության ընթացքում գովելի զորակցությունը համայն հայոց ազգային-եկեղեցական կյանքի առաջընթացին: Մեծարգո՛ նախագահ, հայցում ենք Տիրոջ Սուրբ Խաչի պահպանությունը Ձեզ եւ մաղթում կատարյալ հաջողություն հայրենաշեն ու ազգանվեր Ձեր բոլոր ծրագրերին եւ Ձեր այս առաքելությանը Ռուսաստանի Դաշնությունում, որը պիտի առավել զորացնի դարավոր բարեկամությունը եւ համագործակցությունը մեր պետությունների, նոր ասպարեզներ եւ հորիզոններ բացի մեր երկրների փոխգործակցության եւ հարաբերությունների առավել արդյունավորման համար:

Գոհունակ սրտով Մենք ողջունում ենք սրբազան այս արարողությանը ներկա Ռուս Ուղղափառ Եկեղեցու Միջեկեղեցական հարաբերությունների բաժնի տնօրեն գերաշնորհ Իլարիոն Միտրոպոլիտ Ալֆեեւին՝ ի Քրիստոս մեր սիրելի եղբոր՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ պատրիարքի ներկայացուցչին: Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ ներկայիս առավել ամրապնդվում են կապերն ու հարաբերությունները մեր եկեղեցիների, եւ համատեղ միջեկեղեցական գործակցությունն ու հանդիպումները բարեզարդվում են ցանկալի արդյունքներով Տիրոջ խոսքի քարոզչության, բարեխնամ ծառայությունների մատուցման, հոգեւոր-կրթական ծրագրերի իրականացման առաքելության մեջ:

Սիրելինե՛ր, մեր ժողովրդի համար միշտ պարծանք է եղել Քրիստոսի խաչը, որն արտահայտվել է խաչքարային սքանչելի արվեստում, հայոց ճարտարապետության, գրականության, մշակույթի ասպարեզներում: Խաչի պարծանքով մեր պատմության դժվարին ժամանակներում մեր ժողովուրդը իր փորձություններն ու նեղությունները համարել է խաչակցություն Քրիստոսին՝ հավատալով, որ եթե չարչարանակից ենք լինում Քրիստոսին, հաղորդակից ենք լինելու նաեւ Նրա փառքին: Ռուսիո օրհնյալ երկրում մեր հավատավոր զավակները հարյուրամյակներ շարունակ ապրում են հավատակից ռուս ժողովրդի

հետ: Հայ եւ ռուս եղբայր ժողովուրդների զավակները, օրհասական պահերին հաղթական խաչի զորութեանն ապավինած, միշտ զորավիգ են եղել միմյանց, հաստատուն մնացել ի Քրիստոս Հիսուս հավատքի մեջ: Եղբայրության, սիրո այդ ոգին չարունակելու է զարդարել բարեկամությունը մեր ժողովուրդների: Խաչը հոգեւոր ապրումի, ներշնչման ու քաջալերության աղբյուր է Ռուսաստանում եւ Հայաստանում կողք կողքի ապրող, ձեռք ձեռքի տված դժվարություններ հաղթահարող, միասնաբար արարող ու ստեղծող հայ եւ ռուս քրիստոսասեր հավատացյալների համար:

Փառք ենք վերառաքում առ Բարձրյալ Տերը աստվածային Իր օրհնության, առատ ողորմության եւ մեծ չնորհի համար, որ պարգեւել է այսօր մեր ժողովրդին: Ցնծության օր է ամենքիս համար, քանզի վեր է հառնել եւս մեկ հայկական եկեղեցի, ուր կրկին պիտի հնչի հայոց զորավոր աղոթքն առ Աստված: Այս եկեղեցին եւ կից եկեղեցական համալիրը պիտի դառնան կենտրոնը մոսկվաբնակ հայորդիների հոգեւոր եւ ազգային կյանքի: Մոսկվայի առաջնորդանիստ եկեղեցու կառուցումը հնարավոր եղավ Ռուսիո մայրաքաղաքի իշխանությունների զորակցությամբ ու աջակցությամբ: Այն գնահատանք է դարերով այստեղ կայք հաստատած ձեր հայրերի եւ ձեր կարեւոր ու գովարժան ներդրումի՝ ի խնդիր այս օրհնյալ երկրի բարօրության ու զարգացման, հասարակական կյանքի առաջընթացի, մշակույթի, արվեստի ու գիտության ասպարեզներում հաջողությունների ու ձեռքբերումների արձանագրման: Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Մոսկվա քաղաքի իշխանություններին հայ համայնքի հանդեպ մշտապես ցուցաբերած բարեհաճ վերաբերմունքի եւ բարյացակամության համար:

Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում այս գեղեցկակերտ եկեղեցու ճարտարապետին, ինչպես նաեւ բարերարներին, ովքեր սրտաբուխ բարեգործությամբ հովանավորեցին Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի ամենամեծ եկեղեցու կառուցման աշխատանքները: Աստծո անսպառ օրհնություններն ու երկնառաք նորանոր հաջողություններ ենք մաղթում ձեզ, սիրելի՛ բարերարներ: Այս հոյակերտ եկեղեցին վկայությունն է ձեր աստվածասիրության, եկեղեցանվիրումի եւ հայրենասիրության: Եկեղեցական այս համալիրում նոր աշխուժություն պիտի ապրի տիրախնամ թեմի

հավատավոր հայորդւյաց ազգային-եկեղեցական կյանքը, որով մշտավառ պիտի մնա լույս հավատքը, ազգային գիտակցությունն ու սրբազան մեր արժեքների հանդեպ նախանձախնդրությունը բարեպաշտ Մեր զավակների: Հայրապետական Մեր գնահատանքն ենք հայտնում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանին՝ առաջնորդական եռանդուն գործունեության եւ եկեղեցու կառուցման աստվածահաճո նախաձեռնությունը նախանձախնդրորեն կյանքի կոչելու համար: Մեր գնահատանքը նաեւ Թեմական խորհրդի բարեջան անդամներին, թեմի հոգեւորականներին, եկեղեցու չինության կարեւոր աջակցություն բերած բոլոր անձանց:

Մեր աղոթքն է, որ Աստված խաղաղության մեջ նոր առաջընթաց ու չինություն պարգեւի Ռուսաստանի Դաշնությանը՝ առաջնորդելով դեպի նոր բարգավաճում Իր Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո: Թող Տերն Ամենազոր օրհնի բարեկամությունը հայ եւ ռուս եղբայր ժողովուրդների եւ միշտ բարեչեն պահի նորակերտ այս եկեղեցին՝ ի վայելումն եւ ի մխիթարություն հավատացյալ Մեր զավակների: Թող Աստծո օրհնության ներքո միշտ զորանա ու չենանա Հայաստան եւ Արցախ մեր երկիրը, եւ ազգս հայոց ի սկյուռս աշխարհի ապրի ապահով, խաղաղ ու երջանիկ Տիրոջ Սուրբ Խաչի օրհնության ներքո:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

ՄԱՂԹԱՆՔՆԵՐ,
ԽՈՍՔԵՐ, ՔԱՐՈԶՆԵՐ,
ՈՒՂԵՐՁՆԵՐ,
ՊԱՏԳԱՄՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՓԵՏՐՎԱՐ, 2012 Թ.)[1]

«Որ վմահ ոչ գիտէ՝ երկնչի ի մահուանէ,
իսկ որ գիտէ վմահ, ոչ երկնչի ի նմանէ»
(Եղիշե):

Գերաչնորհ, հոգեչնորհ, արժանապատի՛վ հայրեր,
Հարգարժա՛ն ռեկտոր, հարգելի՛ դասախոսներ,
Սիրելի՛ ուսանողներ:

Ոսկեբարբառ Եղիշեի այս միտքն ենք ընտրել բնաբան Մեր խոսքին այսօր, երբ ուրախ եւ քաջալեր հոգով նչում ենք Վարդանանց՝ Քրիստոսի հազար երեսունվեց սուրբ վկաների տոնը: Չկա առավել նվիրական հիշատակ, որն այդչափ խանդավառի, ջերմացնի ու լուսավորի մեր հայ-քրիստոնյա ինքնությունը, որքան Վարդանանց տոնը: Ասում ենք «Վարդանանք», եւ հավատքն ու հայրենիքի պատկերը միահյուսված պայծառանում են մեր հոգիներում: Վարդանանց ոգին զարմանալի դյուրությամբ մեզ դարձնում է անվարան ու արի: Սուրբ Վարդանանց հետ յուրաքանչյուր հայորդի առանց երկմտանքի իր հոգում հավաստում եւ հանճն է առնում աննկուն մնալ վասն հավատքի եւ վասն հայրենյաց մարտահրավերների առջեւ: Սուրբ Վարդանանց հետ մեր հոգին լցվում է վստահությամբ, մեր կյանքը՝ լավատեսությամբ, եւ մենք հստակ տեսնում ենք՝ ով ենք եւ դեպի ուր է մեր ճանապարհը:

Այսօր վերստին տոնի խորհրդով մենք ունկնդիր ենք Եղիշե մեծ պատմիչին, ով բոլոր դարերի համար բացահայտում է Վարդանանց սխրանքի ու Վարդանանց հաղթանակի ակունքն ու իմաստը՝ գրելով. «ով չգիտե ինչ է մահը, վախենում է նրանից, իսկ ով գիտե մահը, նրանից չի վախենում»: Վարդանանց՝ Քրիստոսին ճանաչողների եւ

[1] «Էջմիածին», 2012, Բ, էջ 5:

ամբողջ սրտով ընդունողների համար մահը հոգին կորցնելն էր, մահը ուրանալն էր Քրիստոսին, Ով հավիտենական կյանք է պարգեւել մեզ եւ Ում անվանը ծունր պիտի դնեն բոլոր երկնայինները եւ երկրայինները (Հմմտ.՝ Փիլ. Բ 10): Մեր հայրերը, ընդդիմանալով պարսից գերազանցող ուժին եւ մահվան գնալով, մահը չէ, որ ընտրեցին, այլ՝ կյանքը, որ ունենք Քրիստոսով: Նրանք ռազմի դաշտ ելան պաշտպանելու իրենց հավատքը, դպրությունը, հայրենի սրբություններ, սրբազան հիշատակները, այն ամենը, ինչ «հայրենիք» ենք կոչում: Վարդանանց օրերին Հայաստանը կորցրել էր պետական անկախությունը, երկիրը բաժանված էր, բայց Հայաստա'ն էր. Հայաստա'ն էր մեկ ու միասնական լեզվով, գիր ու դպրությամբ, հավատքով, որն ազատ է պահում ազգի հոգին եւ զորացնում առ Աստված հույսով ու ապավինությամբ: Պատերազմ չէին ուզում մեր հայրերը եւ ամեն ջանք գործադրեցին պարսից հզոր տիրակալին հավատափոխության ծրագրից տարհամոզելու համար, քանզի գիտեին, որ իրենք Քրիստոսին չեն ուրանալու: Ամեն նեղության դիմացել էին՝ հալածանքներին, հարկերի ծանրությանը, պաշտոնազրկմանը, բայց ընդդիմացան հավատափոխության պարտադրանքին: Ընդդիմացան անվարան, քանզի քրիստոնեությունն ունեին ոչ իբրեւ հանդերձ, այլ՝ իբրեւ մաշկի գույն: Ընդդիմացան վստահությամբ, որ Քրիստոսի հետ պիտի ապրի ու կյանք ունենա հայ ժողովուրդը: Ավարայրում կանգնած էր Սահակ-Մեսրոպյան դպրոցի անդրանիկ սերունդը: Աչխարհական, թե հոգեւորական չերկնչեցին մահից, քանզի գիտեին՝ մահն իմացյալ եւ մարտնչում էին փրկելու համար հայոց ապագան, ազգի հավիտենական կյանքը: Մահվան գնալով հաղթեցին մահին, վանեցին թշնամուն, որպեսզի չկարողանա հայ կյանքից դուրս մղել Աստծուն, Սուրբ Եկեղեցին, առաքինազարդ հոգու զորությունը:

Այսօր մեր առջեւ հառնում են Վարդանանց պայծառ ու սիրելի կերպարները, առաքինության զորագլուխ Սուրբ Վարդանը: Նրանցից ոմանք ընկան մարտի դաշտում, ոմանք տարիներ անց հայրենիք վերադարձան բանտարգելության դերությունից: Անտեսելով փառք, բարօրություն, ապահովություն՝ նրանք մերժեցին իրենց պարտադրվող կեղծիքը եւ պաշտպանեցին մեր ժողովրդի՝ իր հավատքով, հայրենի արժեքներով, ազատ կյանքով ապրելու իրավունքը: Նրանք հաղթեցին, քանզի գիտեին, որ Աստծո հույսով իրենցից հետո 500, 1000, 1600 տարի անց ու միշտ հայ ժողովուրդը քրիստոնյա է լինելու:

1600-ամյա հեռավորությունից այսօր Վարդանանց սուրբը հիշատակի առջեւ Մեր աղոթքն է, որ հավատքի եւ հայրենյաց սիրո նրանց օրինակը ապրի մեր կյանքում եւ զորացնի մեզ մեր ժամանակի դժվարությունների ու հոգսերի մեջ, վճռելու մեր առջեւ հառնող խնդիրներն ու հրամայականները եւ իրագործելու մեր տեսիլքներն ու նպատակները: Այսօր չկա հավատքն ուրանալու պարտադրանք, սակայն հավատքը կարող է նահանջել անտարբերության, հայրենյաց ժառանգության հանդեպ նվազ նախանձախնդրության հետեւանքով: Վարդանանց ոգին պիտի օգնի մեզ կյանքի բոլոր պարագաներում, փորձություններին ու դժվարություններին հանդիման պահպանելու ուղղամիտ, արդար ու ազնիվ դիրքորոշումը, հավատքի ոգին, ազգին եւ Հայրենիքին ծառայելու նվիրումն ու նախանձախնդրությունը եւ անվարան հույսը առ Աստված, որով միշտ կգտնենք ճշմարիտ ուղիները եւ օրհնյալ հանգրվանները մեր կյանքի:

Սիրելինե՛ր, այսօր Մեզ համար մեծ ուրախություն է տեսնել, որ Վարդանանց հիշատակը ոգեկոչելու համար ճեմարանականների հետ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբվել են Երեւանի պետական համալսարանի ուսանողները՝ ռեկտորի եւ դասախոսների առաջնորդությամբ: Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ, գերաչնո՛րհ Սրբազան, մեծարգո՛ տիար Սիմոնյան, հարգարժա՛ն դասախոսներ, հիշատակի այս տոնը ուսանողության հետ կազմակերպելու համար, որով ճեմարանի նորակառույց այս հարկի ներքո թեւածում են Վարդանանց քաջարի եւ անմահ հոգին:

Մեր հայցն է, որ Տերը զորացնի Հայրենի մեր երկիրը, պահպանի մեր ժողովրդին խաղաղ ու անվրդով, պայծառ պահի մեր Սուրբ Եկեղեցին, մեր կրթօջախների առաքելությունը, շնորհազարդի ձեր միտքն ու հոգին, սիրելի՛ ուսանողներ, որ լավագույն պատրաստությամբ, մաքուր հավատքով, Հայրենիքի հանդեպ սիրով ու նախանձախնդրությամբ ձեր նվիրումն ու ջանքերը բերեք հայրենական կյանքի բոլոր ասպարեզներում: Ձեզ հետ, ձեր կյանքով Վարդանանց հավատավոր ու հայրենասեր հոգին պիտի չարունակի ապրել եւ փոխանցվել սերունդներին, որպեսզի Ավարայրի դաշտից Վարդանի ձայնը միշտ ազդարարի հայոց հոգիներին. «Թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից»: Մեր մաղթանքն է ձեզ, սիրելի՛ ճեմարանականներ, որ պատրաստվեք իբրեւ առատ հունձքի արժանի մշակներ եւ, չուտով համալրելով եկեղեցականաց ուխտյալ դասը, հովվեք Տիրոջ ժողովրդին: Պարտք ունենք առաջնորդել աշխարհասփյուռ մեր զավակներին

դեպի հավատքով ու հայրենյաց սիրով ոռոգյալ հարենի ափեր, ուր չեն վախենում մահից, քանզի գիտեն՝ ինչ է մահը եւ ինչ է կյանքը: Թող մեզ համար բարեխոս լինեն Սուրբ Վարդանանք, ովքեր դասակից են երկնային զորաց «անանցանելի ուրախության եւ անտրտում միխիթարության մեջ»:

Սիրելինե՛ր, այսօր անվանակոչության օրն է բոլոր նրանց, ովքեր անվանակից սուրբ չունեն: Վարդանանց պանծալի տոնի առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում եւ չնորհավորում Մեր բոլոր զավակներին, ում անվանակոչության օրն է այսօր:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ԱՊՐԻԼ, 2012 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ատտուած, որ եւ կՏէրն յարոյց, եւ կձեզ յարուսցէ զօրութեամբ Իւրով» (Ա Կորնթ. Զ 14):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Քրիստոսի հրաշափառ յարութեան տօնի արշալոյսն է վերստին բացուել եւ լուսազարդել աշխարհը: Տօնական բերկրանքն է թեւածում մեր հոգիներում, խնդութիւնն է պարուրել մեր սրտերը: Մեր ցնծութիւնն այսօր միախառնուում է առաքեալների ուրախութեանը, ովքեր եղան առաջին վկաները Քրիստոսի յարութեան:

Կիրակի էր օրը, կեանքն ընթանում էր սովորականի պէս, մարդիկ ապրում էին իրենց առօրեայով, բայց ամեն բան փոխուել էր աշակերտների ու նրանց համար, ովքեր տեսան թափուր գերեզմանը, լսեցին բարի լուրը եւ ընդունեցին Քրիստոսի յարութեան հրաշազարդ իրողութիւնը: Նրանք լցուեցին յարուցեալ կեանքի ու փրկութեան յոյսով, զօրացան հաւատքով եւ յարութեան կենսաբեր աւետիսը սփռեցին երկրի չորս ծագերում՝ ազդարարելով. «Ատտուած, որ Տիրոջը յարութիւն տուեց, ձեզ էլ յարութիւն պիտի տայ Իր զօրութեամբ»:

Աչխարհակեցոյց այդ օրը մարդն ու տիեզերքը նորոգուեցին: Մեր Տէրը՝ Քրիստոս, Իր խաչելութեամբ ու յարութեամբ խորտակեց մահը, քաւեց մարդկային մեղքերը եւ հաշտեցրեց աչխարհը Աստուծոյ հետ, որպէսզի այն մնայ այդ հաշտութեան մէջ հաւատքով ու պատուիրանապահութեամբ, խաղաղութեամբ, արդարութեամբ, սիրով ու ողորմութեամբ: Քրիստոսի հետ զատուած ենք հնից ու նոր արարած ենք

[1] «Էջմիածին», 2012, Դ, էջ 3:

(Բ Կորնթ. ե 17), ինչպէս վկայում է առաքեալը, որպէսզի երկրի վրայ յարուցեալ կեանքով ընթանանք դէպի մեր Հայրը, որ երկնքում է, եւ ժառանգենք յաւիտենական կեանքը: Քրիստոսի յարութեան աւետիսին ունկնդիր, սիրելինե՛ր, այսօր երախտագէտ սրտով գոհութիւն ու փառաբանութիւն մատուցենք մեր Տիրոջը մեզ պարգեւած փրկութեան շնորհի համար եւ հայցենք Նրա յարութեան կենդանարար զօրութիւնը մեր կեանքին եւ համայն աշխարհին:

Աշխարհն այսօր էլ կարիքն ունի վերափոխման, կեանքի նորոգութեան, քանզի բեկուած է խաղաղութիւնը, անկատար է արդարութիւնը, աննահանջ են չքաւորութիւնը, պատերազմները, աղէտներն ու աւերները: Տակաւին ազգեր ու ժողովուրդներ քայլում են Գողգոթայի ճանապարհով, կրում գանահարութեան ու հալածանքների փշէ պսակը, գամուում հակամարտութիւնների ու արիւնահեղութիւնների խաչին: Աստուածամերժ այս ընթացքներում օրհնեալ, յարուցեալ կեանքի յոյսն ու լաւատեսութիւնն է բերում առաքեալի աւետաբեր խօսքը, որն այսօր էլ հնչում է նոյն արդիականութեամբ. «Աստուած, որ Տիրոջը յարութիւն տուեց, ձեզ էլ յարութիւն պիտի տայ Իր զօրութեամբ»: Քրիստոսի պարգեւած փրկութեան շնորհներն ընդունելով՝ հոգով վերածնուելով է, որ մարդկութիւնը պիտի գտնի զօրութիւնը կեանքը վերափոխելու, վճռելու արդի աշխարհի խնդիրներն ու հրամայականները, յաղթահարելու փոթորիկները փորձանաց: Քրիստոսով նորոգուած հոգիներից առատօրէն պիտի բխի ու ծաղկի հաշտ ու խաղաղ, մերձաւորի հանդէպ սիրով ներշաղախ կեանքը եւ զօրանան ձգտումն ու ջանքերը՝ երկրի վրայ կերտելու այն երանեալ իրականութիւնը, որն ունենայ պատկերը երկնային թագաւորութեան:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Քրիստոսի յարութեան տօնն այսօր հրաւէր է մեզ անդրադառնալու, թէ մեր հոգում որքա՞ն տեղ ունի մեր Փրկիչը, որքա՞ն է մեր կեանքը լոյս առնում Նրա յարուցեալ ներկայութիւնից, որքա՞ն է վերափոխուում մեր իրականութիւնը Նրա խօսքով ու պատգամներով եւ արդեօ՞ք Նրա ճշմարտութիւնը մեր ճշմարտութիւնն է: Այս հարցադրումները հարկ է, որ մշտապէս հնչեցնենք մեզ համար, որպէսզի մեր ընթացքը հաստատուն լինի Տիրոջ շաւիղներում եւ մեր կեանքը լոյսն ու առաջնորդութիւնն ունենայ Աստծոյ: Աստծոյ հաճութիւնն ունեցող ժողովուրդն ու երկիրն են ընդունում տէրունապարգեւ օրհնութիւններն ու շնորհները: Արդ, սիրելինե՛ր, զօրացնենք մեր հաւատքը եւ հոգեւոր իմացութիւնը, մեր հոգին ամրացնենք աղօթքով, մեր հայրերի հոգեչէն խօսքով, Տիրոջ

Աւետարանի, Սուրբ Գրքի ընթերցանութեամբ, որպէսզի, առաքեալի խօսքի համաձայն, Նորոգուի մեր ներքին մարդը օրըստօրէ (Բ Կոր. Դ 16)։ Նոր մարդիկ լինենք նոր երկիր ու նոր կեանք կառուցելու համար։ Ինչպէս առաքեալները Տիրոջ յարութեան աւետիսով փոխակերպուած ու զօրացած աշխարհը վերափոխեցին, մենք էլ, մշտապէս աճելով ու զօրանալով հաւատքի մէջ, պիտի վերափոխենք մեր իրականութիւնը, յաղթահարենք կեանքի դժուարութիւնները եւ դիմագրաւենք ժամանակի մարտահրաւէրներին։ Մեր պատմութեան նոր այգաբացն է՝ լեցուն մեր անկախացեալ երկրի եւ ազգային կեանքի զարթօնքի յոյսերով։ Մեր հայրերը այս տեսիլքով վերապրեցին առաւել դժուարին ու բարդ ժամանակներ, համբերեցին ծանր փորձութիւնների, տոկացին հալածանքների ու նեղութիւնների մէջ, տքնեցին ու ստեղծեցին արդար վաստակով եւ Հայրենիքի համար ելան անհաւասար մարտերի։ Պարտք ունենք մեր հայրերի եւ սերունդների առջեւ՝ չէնացնելու մեր երկիրը, մարմնաւորելու ազգային մեր իղձերը։ Մեր Տիրոջ կենարար խօսքին ու պատգամներին հաւատարիմ, Նրա ճշմարտութեամբ տոգորուած՝ ամեն հարցում ու գործում դրսեւորենք սէր ու նուիրում առ Հայրենին, նախանձախնդրութիւն, ազգային շահի գիտակցութիւն, որ մեր ջանքն ու եռանդը դառնան արդիւնք, առաջընթաց, նոր յոյս ու հեռանկար։ Այս պատասխանատուութեամբ մասնակցենք նաեւ Հայաստանի Հանրապետութեան Ազգային Ժողովի առաջիկայ ընտրութիւններին, այն դարձնենք մեր երկրի եւ աշխարհասփիւռ մեր կեանքի զօրացման ու զարգացման ուժ ու հենարան։ Մենք կարող ենք ունենալ քաղաքական ու տնտեսական հեռանկարների, ազգն ու երկիրը չէնացնելու տարբեր ծրագրեր ու ակնկալիքներ, դրանց իրագործման տարբեր ուղիներ, սակայն արդարութիւնը, օրինայարգութիւնը, միմեանց հանդէպ յարգանքը, համերաշխութեան, հասկացողութեան ոգին բոլոր պարագաներում, նաեւ ընտրական գործընթացում, կենսական պահանջ են՝ միաւորուելու համար մեր նպատակների շուրջ եւ վկայելու կեանքը վերափոխելու մեր ձգտումն ու կամքը։ Այսպիսի ընթացքով, հոգեւոր-բարոյական արժէքներն ու սկզբունքները կեանք դարձնելով՝ միշտ պիտի ունենանք առաքեալի բերած քաջալերութիւնը, որ Աստուած, Ով յարութիւն տուեց մեր Տիրոջը, մեր կեանքն էլ պիտի օրհնի յարութեամբ ու զարթօնքով։ Այս հաւատով ու յոյսով լեցուն, սիրելինե՛ր, մեր հայեացքը հաւատոյ գործերով ուղղենք դէպի մեր վաղուայ օրուայ հորիզոնները, դէպի մեր լուսաւոր գալիքները։

Ջատկական տօնական առիթով եղբայրական սիրով Մեր ողջոյնն

ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրատեանին, քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին եւ մեր Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ Հայցում Տիրոջ հանապազ զօրակցութիւնը տէրունապատուէր իրենց առաքելութեան մէջ:

Հայրապետական օրհնութեամբ ու բարեմաղթանքներով ողջունում ենք Սրբազան Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին՝ առաջին տիկնոջ հետ, ողջոյն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակո Սահակեանին եւ Հայոց պետական ողջ աւագանուն՝ հայցելով հայրենաշէն նոր ձեռքբերումներ Տիրոջ ամենառատ չնորհների ներքոյ: Ողջունում ենք Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով յաջողութիւններ մեր երկրների եւ ժողովուրդների բարեկամութեան ու համագործակցութեան ամրապնդման ջանքերում:

Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում հաւատաւոր սիրեցեալ մեր ժողովրդին ի Հայրենիս եւ ի Սփիւռս եւ աղօթք բարձրացնում, որ յարուցեալ մեր Փրկչի խաղաղութիւնն ու ողորմութիւնը եւ փրկարար չնորհները սփռուեն աշխարհի ու մարդկանց հոգիների վրայ եւ պարգեւեն զօրութիւն՝ կառուցելու անխռով ու բարօր կեանքը մարդկութեան: Հայցում ենք, որ Տէրն Իր օրհնութեան ներքոյ անվրդով ու ապահով, պայծառ ու անսասան պահպանի հայրենի մեր երկիրը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ աշխարհասփիւռ ազգս Հայոց, եւ մենք այսօր, միշտ ու յաւիտեան խնդութեամբ աւետենք.

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(25 ՄԱՅԻՍԻ, 2012 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրական սիրով Մեր օրհնութիւնն ու շնորհավորանքներն ենք բերում ուսումնական հաստատութիւնների շրջանավարտներին, տնօրինութեանց, ուսուցիչներին ու դաստիարակներին:

Սիրելի՛ շրջանավարտներ, այսօր դուք ձեր կրթօջախներում ամբարած գիտելիքներով, հմայքներով ու երազանքներով քայլում եք դեպի կեանքի նոր հանգրուան: Դեպի ուր էլ առաջնորդի ձեզ այս նոր ճանապարհը՝ ուսումը շարունակելու, աշխատելու, բանակում ծառայելու, Աստուած մշտապես հոգածութեամբ պահապան եւ օգնական է ձեզ՝ իրականութիւն դարձնելու համար ձեր ազնիւ ու արդար իղձերը: Մեր Տէրը՝ Հիսուս Քրիստոս, ասում է. «Ես սիրեցի ձեզ, Իմ սիրո մէջ հաստատուն մնացէք» (Հովհ. ԺԵ 9): Մեր Տիրոջ այս կոչին ունկնդիր՝ ձեր սրտերում վառ պահեցեք հաւատքը, աստուածսիրութիւնն ու ազգասիրութիւնը, որպեսզի Բարձրեալի զորակցութեամբ ձեր ջանքերը պտղաբերեն հաջողութիւններով ու նորանոր ձեռքբերումներով եւ բարիք ու խնդութիւն հաւելեն մեր Հայրենիքի ու ժողովրդի կեանքին:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր աղօթքն ենք բարձրացնում առ Աստուած, որ օրհնի ձեր կեանքի ուղին եւ շնորհի երջանկութիւն ու ամենայն բարիք:

Մեր բարձր գնահատանքն ենք բերում կրթութեան գործի բոլոր նվիրեալներին ու ծնողներին՝ նոր սերունդ կրթելու ջանադրութեան, խնամքի ու հոգատարութեան համար եւ հայցում, որ Տէրը Իր Աջի հովանու ներքո խաղաղ պահպանի մեր Հայրենիքը եւ հաւատքով ու հուսով զորացեալ՝ մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի:

---

[1] «Էջմիածին», 2012, Ե, էջ 7:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(ՀՈՒՆՎԱՐ, 2013 Թ.)[1]

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ տարեմուտի այս երեկո:

Նոր տարվա սեմին ենք վերստին հուսառատ հոգով պատրաստվում ենք դիմավորել փրկչական 2013 թվականը, նաեւ վերհիշում ենք մեր ապրածը, մեր ձեռքբերումներն ու կորուստները անցնող տարում:

Գոհություն եւ փառք Աստծուն, ապրեցինք խաղաղության մեջ, ջանքեր գործադրեցինք հոգեւոր եւ ազգային մեր կյանքի զորացման, մեր ժողովրդի բարօրության եւ առաջընթացի համար, ջանացինք հաղթահարել մեր առջեւ ծառացող խնդիրները: Ունեցանք եւ՛ հաջողություններ, եւ՛ դժվարություններ: Տագնապեցինք Մերձավոր Արեւելքում ապրող մեր ժողովրդի զավակների համար, ովքեր չարունակում են կրել պատերազմական իրավիճակի նեղությունները:

Տարեմուտի այս երեկո, երբ մեր ավարտուն եւ անավարտ գործերով, ձեռքբերումներով, հոգսերով ու խնդիրներով պատմությանն ենք հանձնում անցնող տարին, աղոթքն ու մաղթանքն է Հայրապետիս հոգում, որ նոր՝ 2013 թվականը, լինի խաղաղաբեր ու բարեբեր աշխարհի եւ մեր ժողովրդի համար, եւ հավատավոր Մեր զավակները Հայրենիքում եւ Սփյուռքում ապրեն ու գործեն ազգասեր ու հայրենասեր ոգով, առ Աստված անսասան հավատքով, որպեսզի Տիրոջ զորակցությամբ իրականություն դարձնենք ազգային վերազարթոնքի մեր հույսերն ու տեսիլքները:

Եկող նոր տարին մեր կյանքում առանձնանում է նախագահական ընտրություններով, որը մեր բարօր, արդար ու ծաղկուն կյանքի հավատով պիտի դարձնենք բարի հանգրվան մեր երկրի կայուն առաջըն-

[1] «Էջմիածին», 2013, Ա, էջ 6:

թացի ու զարգացման, մեր հզոր Հայրենիքի կերտման ճանապարհին: Բոլոր դժվարություններով ու խնդիրներով հանդերձ՝ այսօր ավելի մոտ ենք տեսնում այդ լուսավոր օրը, որը մեր ջանք ու աշխատանքով պիտի կյանքի կոչենք յուրաքանչյուրս մեր տեղում՝ որպես ճշմարիտ հավատացյալներ, որպես արժանավոր քաղաքացիներ եւ ազնիվ զավակներ մեր երկրի: Այս հուսաբեր ժամանակում չունենք նահանջի իրավունք: Դեռ պետք է առավել զորացնենք ու ամրագրենք Արցախի անկախությունը, հասնենք համընդհանուր ճանաչմանը Հայոց ցեղասպանության, որի 100-ամյա տարելիցի ոգեկոչումը ուժ եւ անբեկանելի զորություն պիտի հաղորդի մեր ազգային միասնականությանը՝ շարունակելու մեր ջանքերը հանուն արդարության եւ մեր իրավունքների պաշտպանության:

Այս պահին, երբ բոլորս համակված ենք նույն զգացումներով, նույնացած ենք մեր լավատեսությամբ, հայրենյաց սիրով, ազգային հույսերով, մեր մաղթանքներով ու աղոթքներով, հաստատուն պահենք մեր կամքը՝ ազգանպաստ ու հայրենանվեր գործերով կերտելու լուսավոր նոր օրը մեր ազգի, չենացնելու երկիր հայրենին, հավելելու պայծառությունը մեր Սուրբ Եկեղեցու:

Բարի սպասումներով լի տարեմուտի այս պահին մեր աղոթքներում հիշենք Սիրիայում ապրող մեր ժողովրդի զավակներին, բոլոր նեղյալներին ու կարոտյալներին, աղոթենք հեռվում գտնվող մեր մերձավորների, 2012 թվականին ի Տերը ննջածների համար: Աղոթք բարձրացնենք Հայրենիքի սահմանները հսկող մեր բանակի եւ բոլոր նրանց համար, ովքեր իրենց ծառայական դիրքերում են դիմավորում նոր տարին:

Թող Աստված Իր օրհնության ներքո պահպանի ամենքիս, սիրելի՛ն ե՛ր, պարգեւելով խաղաղ ու բարի օրեր, հայրենաշեն ու ազգանվեր ջանքերի արդյունավորում, առաջընթաց ու բարգավաճում: Թող 2013 թվականը լինի հոգեւոր արգասավորության, բարիքով առատ, ձեռքբերումներով եւ ուրախությամբ լեցուն տարի:

Շնորհավոր Նոր տարի:

ՄԱՂԹԱՆՔՆԵՐ,
ԽՈՍՔԵՐ, ՔԱՐՈԶՆԵՐ,
ՈՒՂԵՐՁՆԵՐ,
ՊԱՏԳԱՄՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 6 ՀՈՒՆՎԱՐԻ, 2013 Թ.)[1]

«Ահա կոյսն յղասցի եւ ծնցի որդի, եւ կոչեսցեն զանուն նորա Էմմանուէլ, որ թարգմանի՝ ընդ մեզ Աստուած» (Մատթ. Ա 23, Եսայի Է 14):

Սիրելի՛ հաւատաւոր ժողովուրդ:

Հոգու անհուն ուրախութեամբ այսօր օրհնաբանում եւ փառաբանում ենք մեր Տէր եւ Փրկիչ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը՝ միմեանց փոխանցելով ողջոյնը. «Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ, ձեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Ի լրումն ժամանակի՝ իրականացաւ Եսայի մարգարէի խօսքը, թէ «Ահա կոյսը պիտի յղիանայ եւ մի որդի պիտի ծնի, եւ Նրան պիտի կոչեն Էմմանուէլ, որ նշանակում է Աստուած մեզ հետ»:

Երկնքի անհասանելի բարձունքներից մարդասէր Տէրը խոնարհուեց եւ, որպէս մանուկ ծնուելով քարայրում, աղքատացրեց Իրեն, որպէսզի մեզ հարստացնի հոգեւոր բարիքներով: Պօղոս առաքեալն ասում է. «Գիտէք չնորհները մեր Տէր Յիսուս Քրիստոսի, որ ձեզ համար աղքատացաւ, Նա, որ հարուստ էր, որպէսզի դուք Նրա աղքատութեամբ հարստանաք» (Բ Կորնթ. Ը 9): Աստուած մարդացաւ, որպէսզի Աստուծոյ պատկերով ստեղծուած մարդը ճանաչի իր Արարչին, Նրա կամքը, հարստանայ հաւատքով, Աստուծոյ խօսքով, հարստանայ աստուածահաճոյ կեանքի փափագով ու փութաջանութեամբ եւ փրկութեան արժանացած՝ ժառանգի յաւիտենական կեանքը: Արդարեւ, ոչինչ չի կարող համեմատուել այդ հարստութեան՝ Աստուծոյ արքայութեան մէջ յաւիտենական կեանք ունենալու չնորհի հետ, որ բերեց մեզ Փրկիչ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս՝ «մարդու Որդին, որ երկնքից էր» (Յովհ. Գ 13):

[1] «Էջմիածին», 2013, Ա, էջ 8:

Փառքի ու զօրութիւնների անմերձենալի Տէրը մանկացել, աշխարհ է եկել, եւ իւրաքանչիւրը կարող է համարձակաբար մօտենալ ու երկրպագել Նրան հովիւների ու մոգերի օրինակով, ովքեր ճանաչեցին Նրան եւ իրենց ընծաները բերեցին քարայրում մսուրի մէջ դրուած Փրկիչ մանկանը: Այսօր, սիրելի՛ հաւատաւոր ժողովուրդ, մենք ենք երկրպագում մանուկ Յիսուսի սնարի առջեւ, բայց ի՞նչ ընծաներ ունենք, որ մատուցենք մեր նորածին Փրկչին: Նիւթական հարուստ պարգեւներ չէ, որ սպասում է Տէրը: Պատուական պարգեւը Փրկչի համար քրիստոնեան ինքն է, ով մաքուր սրտով ընդունել է «Աստուած մեզ հետ է» մարգարէաբարբառ աւետիսը եւ ջանում է կեանքի ամէն մի օրը ապրել աստուածային կամքի համաձայն, լի՝ առ Աստուած հաւատքով, այլոց հանդէպ սիրով, Փրկչի հետ հոգեւոր նորոգութեամբ: Փրկչի շնորհներով վերածնուած մարդը վերափոխում է կեանքը՝ այն առաջնորդելով միշտ դէպի բարին, աւելի լաւն ու կատարեալը: Տիրոջ ներկայութեան եւ Նրա ողորմութեան անստուեր շողերի առջեւ, ինչպէս ասում է Սուրբ Գրիգոր Նարեկացին, հալչում են մեղքերը, ողջանում են վէրքերը, վերանում են ապականութիւնները, նահանջում են տխրութիւններն ու հեծութիւնները, փախչում է խաւարը, եւ տիրում է ամենախնամ թագաւորութիւնը Բարերար Աստուծոյ (Մատեան ողբերգ. ե, Բան ԽԱ): Այսօր եւ մինչեւ ժամանակների վախճանը, Իր խոստման համաձայն, մարդացեալ Աստուած մեզ հետ է (Մատթ. ԻՀ 20). մեզ հետ է փրկութեան Իր շնորհով, Իր սքանչելագործ մարդասիրութեամբ: Բայց արդեօ՞ք մենք Աստուծոյ հետ ենք եւ արդեօ՞ք աշխարհն ընթանում է այն ճանապարհով, որ ուղենշեց Քրիստոս:

Մարդկութեան, նաեւ մեր կեանքը, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, լի է տարաբնոյթ մարտահրաւէրներով, տագնապներով ու հոգսերով՝ ընկերային, տնտեսական հիմնահարցեր, ազգամիջեան եւ միջկրօնական խնդիրներ ու հակամարտութիւններ, կարիք, անձնական շահի մոլուցք, զրկուածների անտեսում, արդարութեան, մարդասիրութեան պակաս եւ այլ արատներ, որոնք հետեւանք են Աստծուց հեռանալու ընթացքների: Մարդը աշխարհի իրականութեան առջեւ յաճախ կարծում է, որ կեանքի բարելաւումը, հասարակութեան բարօրութիւնը հասանելի է յատկապէս նիւթականի առատութեամբ: Մինչդեռ, եթէ մարդկանց հոգում չկայ Աստուած, նիւթականը միայն բաժանում է մարդկանց, ցամաքեցնում կեանքի ուրախութիւնն ու երջանկութիւնը: Ունեւորն ապրում է անհանգստութեան մէջ, չունեւորը՝ նեղսրտութեան, ընդհանուր հասարակութիւնը՝ օտարացման: Յանուն նիւ-

թականի են մարդիկ հնարներ փնտրում կողոպտելու, զրկելու, նուաստացնելու: Ցանուն նիւթականի են օրէնքներ խախտում, պաշտօն չարաշահում, իրաւունք ոտնահարում, միմեանց կործանում: Ցանուն նիւթականի, աւաղ, երբեմն նաեւ Աստուծոյ անունով՝ ընդդէմ Աստուծոյ: Այն ինչ ծնունդ է առնում յանուն Աստուծոյ, բարիք է մարդկանց համար, մխիթարութիւն ու խնդութիւն: Աստուծոյ հետ մարդու համար գործում են կեանքի այլ չափանիշներ, գոյութեան իմաստի այլ սկզբունքներ ու արժէքներ՝ «սէր՝ առանց կեղծիքի. ատելով չարը՝ ընթանալ բարու յետեւից. եղբայրասիրութեան մէջ՝ միմեանց հանդէպ լինել գթասիրտ. պատիւ տալու մէջ՝ միմեանց գերազանցել» (Հռոմ. ԺԲ 9-10): Աստուծոյ հետ պաշտօնը ծառայութիւն է, մարդկային ունակութիւնները ու կարողութիւնները՝ աղբիւր բարիքի, երկրի չէնացման, կեանքի բարօրութեան:

Սուրբ Ծննդեան խորհրդով, սիրելինե՛ր, հանապազ չնորհն ունենք Քրիստոսի հետ բարձրանալու Պայծառակերպութեան լեռը, Տիրոջ ներկայութեամբ ապրելու աստուածահաճոյ հոգեչէն միջավայրում եւ մեր ընթացքը հաստատուն պահելու Աստուծոյ չաւիղներում բարոյական, ճշմարիտ արժէքների վրայ: Սուրբ Գիրքը մեզ խրատում է, որ Աստուծոյ հետ ընթանալը փրկում է փորձութիւններից, բազմացնում բարիքները եւ յաղթանակներ չնորհում երկնային զօրութեամբ: Մեր պատմութիւնն իսկ վկայում է, որ Փրկչին հաւատարմութեամբ է մեր ժողովուրդը կերտել իր ստեղծագործ կեանքի յաղթանակները եւ մշակոյթի վերելքները: Մեր Տիրոջ հետ ենք դիմակայել փորձութիւններին, վեր յառնել աւերներից, վերապրել ցեղասպանութիւն: Մեր Տիրոջ զօրութեամբ Սփիւռքում վերընձիւղուել ենք ու պահպանել մեր ինքնութիւնը, աշխարհասփիւռ միասնականութեամբ վերահաստատել մեր ազատ պետականութիւնը, մշտապէս վառ պահել տեսիլքը մեր աւետեաց երկրի, այլեւ՝ հաւատը, որ Տէրը համախմբելու է մեզ մեր Հայրենիքում: Այսօր «Աստուած մեզ հետ է» աւետիսով յուսավառ ու քաջալեր՝ խոնարհուենք մարդացեալ Փրկչի սնարի առջեւ՝ ջերմանալու Նրա սիրով, ընդունելու Նրա չնորհներն ու օրհնութիւնները, որպէսզի ի Հայրենիս եւ ի Սփիւռս բարեփոխենք ու զօրացնենք մեր կեանքը, իրագործենք մեր ազգային նպատակները, կերտենք մեր ժողովրդի բարօր ու երջանիկ, լուսաւոր գալիքը եւ յաւէտ մնանք Աստուծոյ հաւատարիմ ժողովուրդ:

Այս հայցն ու մաղթանքը մեր չուրթերին՝ Սուրբ Ծննդեան աւետիսով եւ եղբայրական սիրով ողջունում ենք Առաքելական մեր Սուրբ

Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրատ-ֆեանին, Երուսաղէմի Հայոց պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանեանին, քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին եւ մեր Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ հայցում Տիրոջ բիւր շնորհներն ու զօրակցութիւնը քրիստոսապատուէր առաքելութեան մէջ:

Տիրոջ Ծննդեան տօնի բարեմաղթանքներով ողջունում ենք Սրբազան Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին, Մեր ողջոյնն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեանին եւ հայոց պետական ողջ աւագանուն՝ հայցելով ազգաշէն ու հայրենաշէն գործոց յաջողութիւններ Տիրոջ երկնառաք օրհնութեան ներքոյ: Ողջունում ենք Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով, որ նրանց արգասալի ջանքերով ու մշտանորոգ ձեռքբերումներով միշտ բարեզարդուեն մեր երկրների եւ ժողովուրդների բարեկամութիւնն ու համագործակցութիւնը:

Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում սիրեցեալ մեր ժողովրդին ի Հայրենիս եւ ի Սփիւռս: Աղօթք ենք բարձրացնում, որ մարդացեալ Փրկչի սիրոյ, խաղաղութեան եւ համերաշխութեան շնորհները հանապազ ճառագեն աշխարհում, ի մասնաւորի հակամարտութեան մէջ գտնուող երկրներում, յատկապէս պատերազմական իրավիճակում յայտնուած Սիրիայում եւ այնտեղ դժուարութիւններ ու նեղութիւններ դիմագրաւող մեր եղբայրների ու քոյրերի կեանքում: Թող մարդկանց հոգիներում մշտապէս արձագանք գտնի Սուրբ Ծննդեան «յերկիր խաղաղութիւն եւ ի մարդիկ հաճութիւն» պատգամը եւ ամրապնդուի Աստուծոյ հետ ընթանալու կամքը: Թող Տէրն Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ խաղաղ ու ապահով պահպանի հայրենի մեր երկիրը, պայծառ ու անսասան՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ օրհնի աշխարհասփիւռ ազգս հայոց այժմ եւ միշտ եւ յաւիտեան. ամէն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ
Ձեզ եւ մեզ մեծ աւետիս:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ՄԱՐՏԻ 31, 2013 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Չի կեանս յաւիտենականս ետ մեզ Աստուած,
եւ այս են կեանքն, որ յՈրդին Նորա են»
(Ա Յով. Ե 11):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Բացուող գարնան ջերմութեան եւ նոր կեանքով լցուող բնութեան զարթօնքի հետ մեր հոգիներում այսօր «Քրիստոս յարեաւ» հրեշտակաձայն աւետիսով թեւածում են Յարութեան տօնի յոյսն ու խնդութիւնը՝ նորոգելով ու զօրացնելով մեզ վստահութեան մէջ, որ «Աստուած յաւիտենական կեանք տուեց մեզ, եւ այդ այն կեանքն է, որ Նրա Որդու մէջ է»:

Առաքեալի այս խօսքը վկայում է մարդկութեան պատմութեան ընթացքը վերափոխած իրադարձութեան մասին, որը կատարուեց, երբ խաչուած եւ գերեզմանում դրուած Քրիստոս յարութիւն առաւ մահուանից: Այդ պահից մահն իշխանութիւն չունի մարդկանց վրայ. մեղքը քաւուած է, մահուան թագաւորութիւնը՝ խորտակուած: Գերեզմանից այն կողմ փրկութեան ու յաւիտենական կեանքի լոյսն է, որը պայծառօրէն շողում է այսօր մեր հոգիներին՝ նորոգելով մեզ մեր յոյսի ու հաւատքի մէջ:

Քրիստոսի Յարութեան հաւատքը ուժ եւ զօրութիւն է բերում միշտ վեր յառնելու եւ ապրելու այն կեանքը, որն Աստուծոյ Որդու մէջ է: Այդ կեանքի հիմքը սէրն է, նուիրաբերուող սէրը, այն սէրը, որով Աստուծոյ Որդին աշխարհ եկաւ, փրկչական իր առաքելութիւնը

[1] «Էջմիածին», 2013, Գ, էջ 5:

իրականացրեց եւ պատգամեց Իր աշակերտներին ու հետեւորդներին՝ ասելով. «Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց» (Յովհ. ԺԳ 34): Մարդկային կեանքի հիմքում Քրիստոս դրեց սէրը, որպէսզի կատարեալ լինի մարդը, եւ ոչինչ չպակասի մարդուն: Սէրը ստեղծում է, կերտում ու հաստատում եւ ոչ՝ կործանում, լուսաւորում է, յուսադրում, խինդ ու երանութիւն է պարգեւում եւ ոչ՝ անորոշութեան ու վհատութեան մատնում, վիշտ ու տրտմութիւն բերում: Սէրը բարիքի ու երջանկութեան աղբիւրն է, վէմն է խաղաղութեան ու արդարութեան, քաջալերութիւնը՝ միմեանց աջակցութեան ու զօրակցութեան՝ յանուն մարդկութեան բարօր, միշտ զարգացող առաջընթաց կեանքի:

Այսօր Քրիստոսի Յարութեան տօնի բերկրանքի հետ Մեր սրտում նաեւ ափսոսանքն է, որ մարդկութեան կեանքում ամէնուր եւ մշտապէս չի դրսեւորուում մեր Տիրոջ պատգամած սէրը մարդու եւ Աստուծոյ ողջ արարչագործութեան հանդէպ: Երկու հազարամեակ քարոզուող քրիստոսապատուէր սիրոյ սերմերը ընկնում են յաճախ Աստծուց հեռացած հոգիների անբերրի ապառաժի վրայ, կամ արդիւնք չեն տալիս մարդկային անհոգութեան պատճառով, եւ կամ չարն է յափշտակում Տիրոջ կողմից սերմանուածը՝ սփռելով որոմ եւ մոլորեցնելով մարդկանց առ բարին ընթացքների մէջ: Ներկայիս աշխարհաքաղաքական ու ֆինանսատնտեսական բարդ զարգացումները, զօրացող անճնակենտրոն մտածողութիւնը, հոգեւոր-բարոյական արժէքների անտեսումը նոր հակասութիւններ ու հակամարտութիւններ, խնդիրներ ու հոգսեր են առաջ բերում հասարակութիւնների կեանքում եւ մարդկային յարաբերութիւններում: Խաղաղ ու ներդաշնակ կեանքը խաթարող այսպիսի իրողութիւններից վեր յառնելու ուղին է լուսաւորում այսօր հնչող աւետիսը Քրիստոսի Յարութեան՝ բերելով պատգամը այն կեանքի, որ Աստուծոյ Որդու մէջ է: Իրական է այդ կեանքը, մատչելի եւ հասանելի ամենքիս: Երբ մարդկային խոհերն ու գործերը ծնունդ են առնում եւ առաջնորդուում Աստուծոյ հանդէպ հաւատքով ու միմեանց հանդէպ սիրով, դա Քրիստոսի մէջ եղող կեանքն է: Երբ խնամքն ու աջակցութիւնը հասարակութեան նկարագիրն ու բնական վիճակն են, դա Քրիստոսի մէջ եղող կեանքն է, երբ 30 արծաթով չեն հարթուում յուդայական կեղծիքի ու մատնութեան ուղիները եւ պիղատոսեան անտարբերութեամբ անարդարութիւններ չեն իրագործուում, դա այն կեանքն է, որ Քրիստոսի մէջ է, երբ նեղութեան, թէ լիութեան մէջ աղօթքը եւ առ Աստուած փառաբանութիւնն են մարդկանց չուրթերին, ու ընտանիքներում հասակ են առնում բարեպաշտ

զաւակներ, դա այն կեանքն է, որ Քրիստոսի մէջ է, եւ որին Աստուծոյ բարեխնամ շնորհով կանչուած է մարդկութիւնը:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, այսօր մեզ համար շարունակում են մտահոգիչ մնալ հայրենական եւ ազգային մեր կեանքը յուզող լուրջ մարտահրաւէրները՝ Ղարաբաղի հիմնահարցը, մեր երկրի չրջափակումը, սոցիալ-տնտեսական խնդիրները, արտագաղթը, կեղծ արժէքների ու բարքերի ներթափանցումը: Անհանգստացնող են նաեւ վհատութեան, վատախօսելու տրամադրութիւնները, փոխադարձ վստահութեան պակասը, միմեանց ունկնդիր լինելու անպատրաստակամութիւնը եւ անհաչտ պարտադրանքը սեփական ճշմարտութեան: Վանենք մեզանից այսպիսի դրսեւորումները: Մեր ճշմարտութիւնը նորանկախ Հայաստանն է՝ դարերի անմար երազը մեր պապերի ու հայրերի, ազատագրուած Արցախը՝ մեր ոգու նորօրեայ հերոսացումը, մեր հպարտ յաղթանակը: Մեր ճշմարտութիւնը նեղութեան, դժուարութիւնների դիմակայող մեր ժողովուրդն է, պատերազմի սպառնալիքի ներքոյ հայրենի սահմանները պաշտպանող Հայոց բանակը, աշխարհասփիւռ մեր համայնքներն են՝ հանապազ մարտնչող ազգային եւ հոգեւոր ինքնութեան համար, այսօր վտանգուած, հիւծուող սիրիահայ համայնքն է՝ կարօտ սատարումի ու աջակցութեան: Այս իրողութիւններն են մեր առջեւ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ: Մեր Հայրենիքի հզօրացման, մեր ծաղկուն կեանքի կառուցման, ազգային վերածնութեան ու զարթօնքի մեր տեսիլքների ու իղձերի իրագործման համար մէկ ճանապարհ ունենք՝ այն կեանքը, որ Աստուծոյ Որդու մէջ է: Փրկչի յարութեան աւետիսով նորոգենք մեր ուխտը Աստուծոյ հետ, զօտեպնդուենք հաւատքով, յարուցեալ կեանքի յոյսով՝ յաղթահարելու համար առկայ նեղութիւններն ու դժուարութիւնները: Մերժենք մեր կեանքից երկիւղ, վհատութիւն եւ ամեն տարակոյս, որ կարող են ջլատել մեր ժողովրդին ու մեր միասնականութիւնը եւ միմեանց զօրակցութեամբ իրագործենք հայրենաչէն ու ազգաշէն մեր բոլոր ծրագրերն ու նուիրական նպատակները: Մեր Տիրոջ կողմից վկայուած եւ պատգամած սիրով ապրենք, որպէսզի իւրաքանչիւրիս յայտնութիւնը, ձեռքբերումը ծառայեն ընդհանուր բարօրութեանն ու առաջընթացին, յաղթանակ, փառք ու պատիւ դառնան մեր երկրի եւ ողջ ազգի համար, եւ մենք մնանք հաւատարիմ ու սեփական ժողովուրդ Աստուծոյ՝ արժանի Տիրոջ երկնային չնորհներին ու պարգեւներին:

Մեր Տիրոջ հրաշափառ Յարութեան աւետիսով ի Քրիստոս եղբայրական Մեր սէրն ու բարեմաղթանքներն ենք յղում Առաքելական մեր

Սուրբ Եկեղեցու Նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին, քոյր Եկեղեցիների չնորհազարդ հոգեւոր պետերին:

Հարուցեալ Տիրոջ չնորհների հայցով ողջունում ենք Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին, ողջոյն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեանին, հայոց պետական ողջ աւագանուն՝ մաղթելով արդիւնաչատ գործունէութիւն եւ մնայուն ձեռքբերումներ՝ յանուն մեր երկրի եւ մեր ժողովրդի լուսաւոր գալիքի: Քրիստոսի հրաշափառ Սուրբ Յարութեան աւետիսով Մեր օրհնութիւնն ենք բերում Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով երկնային ամենայն բարիք եւ գործոց յաջողութիւն: Հայրապետական Մեր սէրը եւ օրհնութիւնը՝ մեր Սուրբ Եկեղեցու ուխտեալ սպասաւորներին եւ հաւատաւոր Մեր զաւակներին ի սփիւռս աշխարհի:

Աղօթում ենք, որ հարուցեալ մեր Տիրոջ չնորհները հեղուեն մարդկանց հոգիներին, որպէսզի աշխարհում ամենուր հաստատուեն եւ արգասաւորուեն խաղաղութիւնը, միմեանց հանդէպ սէրն ու արդարութիւնը: Թող Տէրը խաղաղ պահի մեր Հայրենիքը, մեր ժողովրդին՝ ի սփիւռս աշխարհի եւ օրհնի բոլոր ջանքերը՝ յանուն մեր կեանքի բարօրութեան, մեր հաւատքի պայծառութեան, որպէսզի ազգս Հայոց այսօր եւ միշտ խնդութեամբ աւետի՝

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւն Քրիստոսի:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հղում ենք Հայրապետական Մեր օրհնությունը Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով եւ շնորհավորում կրթական հաստատությունների բոլոր մանկավարժներին, ուսանողներին եւ աշակերտներին:

Սիրելինե՛ր, տոնական այս օրը դիմավորում ենք ուրախ սրտով ու բարի ցանկություններով: Վստահ ենք, որ մեր նվիրյալ ուսուցիչների եւ կրթության բարի մշակների ջանքերով մեր զավակների համար ուսումը, գիրքն ու ընթերցումը դառնում են կյանքի լուսատու կանթեղները: Ուսանեք սիրով, քանի որ սուրբգրային խոսքով՝ խելացի սիրտը ձեռք է բերում իմացություն, եւ իմաստունների ականջները փնտրում են ուսանելի խորհուրդներ (Առ. ԺԸ. 15):

Մեր հայցն ու աղոթքն է առ Բարձրյալ Տերը, որ աստվածային երկնառաք Իր օրհնությամբ արգասավորվի նոր ուսումնական տարին, եւ մեր զավակները ջանադրությամբ ամեն ժամ բազմապատկեն իրենց գիտելիքները, որպեսզի իմացությամբ զորացած կարողանան լավագույնս ծառայել մեր Հայրենիքին եւ Սուրբ Եկեղեցուն:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի չնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն ձեզ բոլորիդ հետ: Ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 47:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄՈՍԿՎԱՅԻ ՍՈՒՐԲ ՊԱՅԾԱՌԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՆՈՐԱԿԱՌՈՒՑՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(17 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ահեղ խորհրդին երկինք են եկեղեցին,
աթոռ փառաց է սեղան խորհրդին,
եւ Քրիստոս իջեալ դնի ի վերայ՝
որ միշտ բաշխի ի փրկութիւն ամենեցուն»:
Ս. Յովհան Մանդակունի

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, Սրբալուսյս մյուռոնով, առ Բարձրյալն Աստված գոհաբանությամբ կատարեցինք օծումը Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմի առաջնորդանիստ Սուրբ Պայծառակերպություն եկեղեցու, որը պիտի հավելի օրհնությունն ու երկնառաք չնորհները այս ավանդաչատ երկրում, Ռուսաստանում բնակություն հաստատած հայության եւ քրիստոսասեր ռուս եղբայր ժողովրդի կյանքում:

Հոգու առանձնակի ուրախություն է, որ սրբազան այս արարողությանը մասնակցություն է բերում ի Քրիստոս Մեր սիրեցյալ եղբայրը՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ պատրիարքը, ում հայտնում ենք Մեր երախտագիտությունը այս խնդալի առիթով Մեզ աղոթակից եւ ուրախակից լինելու համար: Գոհունակ սրտով ողջունում ենք ներկայությունը Հայաստանի Հանրապետության մեծարգո նախագահ տիար Սերժ Սարգսյանի, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության մեծարգո նախագահ տիար Բակո Սահակյանի, Հայաստանի եւ Ռուսաստանի Դաշնության պետական հարգարժան այրերի եւ մաղթում, որպեսզի չեն ու պայծառ լինեն Հայաստանն ու Ռուսաստանը եւ չարունակա-

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 48:

բար արդյունավորվեն մեր երկրների ու ժողովուրդների բարի գործակցությունն ու եղբայրական հարաբերությունները: Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում մեր քույր Եկեղեցիների եւ կրոնական հարանվանությունների ներկայացուցիչներին, ինչպես եւ աշխարհի տարբեր երկրներից ժամանած մեր Սուրբ Եկեղեցու բարձրաստիճան հոգեւորականներին եւ աշխարհական հավատավոր զավակներին Ռուսաստանից եւ արտերկրից:

Սիրելինե՛ր, հոգեւոր բերկրանքի օր է այսօր ամենքիս համար, քանզի Ռուսաստանի մայրաքաղաք Մոսկվայում ռուսաստանաբնակ բարեպաշտ հայորդյաց ազնիվ, առատաձեռն նվիրատվություններով չքեղակառույց հառնել է նոր աղոթավայր՝ առաջնորդանիստ հոյակերտ համալիրով: Եկեղեցին կոչեցինք «Պայծառակերպություն» անունով, քանզի այն նոր պայծառություն պիտի բերի ռուսահայ համայնքին: Այստեղ հավատացյալ Մեր զավակները լեռան վրա պայծառակերպված Տիրոջ նմանությամբ պիտի փոխակերպվեն ու պայծառակերպվեն եկեղեցու լույս խորանից հեղվող երկնային չնորհներով, լցվեն հոգեւոր նորոգությամբ ու զորությամբ: Արդարեւ, ընդհանրական եկեղեցու Հայրապետերից Սուրբ Հովհան Ոսկեբերանը Եսայիի մարգարեության մեկնության մեջ Եկեղեցին նմանեցնում է բարձր լեռան, որը դիմակայում է չարի ամեն հարձակման, իսկ մեր Եկեղեցու Ս. Հայրապետ Հովհան Մանդակունին Եկեղեցին կոչում է երկինք երկրի վրա, որտեղ մենք հաղորդակցվում ենք երկնայիններին, մարմնավոր իրողություններից բարձրանում դեպի հոգեւորը, միավորվում ի Քրիստոս՝ կազմելով հավատացելոց հավաքականությունը, Քրիստոսի խորհրդական մարմինը: Տաճարը քարեղեն մանրակերտն է մեր այդ հոգեւոր հավաքականության, որի մասին առաքյալն ասում է. «Օտար եւ պանդուխտ չէք, այլ սրբերին քաղաքակիցներ եւ Աստծո ընտանիք՝ կառուցված առաքյալների եւ մարգարեների հիմքի վրա, որի անկյունաքարը Քրիստոս Հիսուսն է» (Եփ. Բ. 19-20):

Աչխարհասփյուռ մեր ժողովրդի համար կենսական նշանակություն ունի եկեղեցու միավորող ու պայծառակերպող սրբարար ներգործությունը: Հայ ժողովրդի պանդուխտ զավակները Մայր Հայրենիքից հեռու Մայր Եկեղեցու գրկում համախմբվեցին ու, հոգեւոր արժեքներով զորանալով, եղբայր ժողովուրդների ու պետությունների սատարումով ու օգնությամբ, ինչպես այստեղ՝ Ռուսաստանի Դաշնությունում, կազմակերպեցին ազգային-եկեղեցական իրենց կյանքը եւ հաստատուն պահեցին հավատքն ու ազգային միաբանության ոգին:

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, առաջնորդանիստ այս հոյակերտ եկեղեցին Մենք օծեցինք հավատով, որ այն նոր լիցք եւ վերելք է բերելու համայնքային ձեր կյանքում՝ հրավիրելով աղոթքի, աստվածպաշտության, հոգեւոր նորոգության, ազնիվ ու արդար գործերի: Եկեղեցին նաեւ հրաշագեղ է պատկերաքանդակներով, որոնք, որպես մեր դարավոր պատմության մաքառումների ու հաղթանակների էջեր՝ արձանագրված նվիրական աղոթավայրի սրբատաշ քարերին, պիտի հանապազ քաջալերեն ձեզ ազգային ոգու, եկեղեցանվիրումի ու հայրենասիրության մեջ: Այս պերճաշուք պատկերաքանդակները այլազգի մեր եղբայրներին պիտի ծանոթացնեն հայոց պատմության հիշարժան դրվագներին, վասն հավատո եւ վասն հայրենյաց պայքարներին, մեր ժողովրդի՝ երկրից երկինք ձգվող փառավոր գործերին, որոնց չարուճնակողներն այսօր դուք եք ձեր հավատավոր կյանքով ու ընթացքով:

Այսօր փառքով փայլում են մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի հանդեպ ձեր սերն ու հավատքը, ձեր հոգեւոր կյանքի վերազարթոնքի ճգտումն ու տեսիլքը, որոնցով կերտվել է Ս. Պայծառակերպության եկեղեցին: Զորավոր պահեցեք ձեր հավատքը, եկեղեցասիրության եւ ազգասիրության ոգին. այս է ձեզ հայրական Մեր հորդորը եւ Հայրապետական պատգամը: Միշտ հաստատուն քայլերով բանուկ պահեք ճանապարհը դեպի այս սուրբ եկեղեցին, որտեղ բաշխվող Տիրոջ չնորհներն ու զորությունը ուժ եւ կորով պիտի տան ամենքիդ՝ ձեր սրտերում կրելու լուսեղեն պատգամները մեր Տեր Հիսուս Քրիստոսի, ապրելու աստվածահաճո ընթացքով, հաղթահարելու մեր ժամանակների մարտահրավերները եւ մշտապես հավատարիմ մնալու հայրենական ժառանգությանն ու սրբազան մեր արժեքներին:

Եկեղեցու օծման հոգենորոգ այս առիթով գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում եկեղեցու բարերարներին՝ իրենց մեծազնիվ ներդրումների, մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ որդիական սիրո եւ նախանձախնդրության համար: Մեր հավատավոր ժողովրդի անունից, հանձին Մոսկվայի եւ համայն Ռուսիո Կիրիլ պատրիարքի, երախտագիտություն ենք հայտնում Ռուս Ուղղափառ Եկեղեցու հոգեւորականներին եւ բարեպաշտ զավակներին, որ քրիստոսապատվեր եղբայրական սիրով սատարում են ռուսահայության հոգեւոր կյանքի զորացմանը: Մեր մասնավոր երախտագիտությունն ենք հայտնում Ռուսաստանի Դաշնության եւ Մոսկվայի քաղաքային իշխանություններին, ովքեր բարյացակամ վերաբերմունքով հանդեպ հայ ժողովրդի զավակները, աջակից են Ռուսիո բարեկամ

երկրում հայոց ազգային-եկեղեցական կյանքի առաջընթացին: Մեր գնահատանքն ենք բերում Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի բարեխնամ առաջնորդ գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանին եւ ողջ հոգեւորականաց դասին՝ նվիրյալ եւ ժրաջան ծառայության համար: Առաջնորդ Սրբազանը այս գեղեցկակերտ եկեղեցու կառուցման գործում մեծ ջանք ու եռանդ է ներդրել, որպեսզի Ռուսիո հայության հոգեւոր եւ ազգային կյանքը բարգավաճի եւ առատանա նոր արդյունքներով: Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանի նախանձախնդիր ծառայության բարձր գնահատանքով այսօր Մենք Սրբազանին չնորհում ենք Արքունության պատիվ եւ նրա կուրծքը զարդարում ենք հայոց այբուբենը պատկերող եպիսկոպոսական պանակեով՝ մաղթելով, որ Սրբազանը շարունակի մեսրոպաչունչ մեր հայրերի նմանությամբ նորանոր հաջողություններով արգասավորել իր հոգեւոր առաքելությունը: Առանձնակի գնահատանք ենք բերում նաեւ թեմական եւ եկեղեցական համայնքային վարչության բարեջան անդամներին, եկեղեցու կերտմանը կարեւոր մասնակցություն բերած բոլոր անձանց, չինարարներին, բանվորներին, քանդակագործ վարպետներին, գլխավոր ճարտարապետ տիար Արտակ Ղուլյանին, ում նախագծերով Հայաստանում եւս հառնել են գեղեցկակերտ եկեղեցիներ:

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, այս տոնական օրը նորաօծ եկեղեցու լուսավոր կամարների ներքո աղոթենք միասնաբար, որ Բարձրյալն Աստծո օրհնությամբ չենանան եւ զորանան Հայրենի մեր երկիրը եւ Ռուսաստանի Դաշնությունը, մեր Տիրոջ հոգեւոր լույսով պայծառանան մեր Եկեղեցիները, եւ հավետ ամուր լինի հայ եւ ռուս եղբայր ժողովուրդների դարավոր բարեկամությունը, որը միշտ փայլել է պանծալի գործերով: Հայցենք, որ աշխարհը եւ ողջ մարդկությունը եւ աշխարհասփյուռ հավատավոր մեր ժողովուրդը ապրի ապահով, խաղաղ ու երջանիկ Տիրոջ Ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո: Եւ թող Աստված միշտ պայծառ պահի Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի Հայոց թեմը եւ նորակերտ այս եկեղեցին՝ ի վայելումն եւ ի մխիթարություն հավատացյալ Մեր զավակների:

Աստուած յուսոյ լի արասցէ զմեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելուլ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ. ամէն (Հմմտ. Հռ. ԺԵ. 13):



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԻՋՄԻՐԼՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ:

Մեծ ուրախությամբ կատարեցինք բացման արարողությունը հիմնանորոգված «Իզմիրլյան բժշկական կենտրոն»-ի: Գոհունակություն է Մեզ համար անդրադառնալ, որ այս կարեւոր միջոցառմանը մասնակից է նաեւ Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանը, ով իր բարձր եւ պատասխանատու առաքելության ընթացքին մշտապես մեծ գորակցություն ու կարեւոր աջակցություն է ցուցաբերում նաեւ բարեսիրական, խնամատար ծրագրերի իրականացմանը:

Սիրելինե՛ր, չուրջ մեկ տասնամյակ առաջ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միությունը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին նվիրաբերեց նախկին Պրոկտոլոգիայի ինստիտուտը, որը տարիներ շարունակ դժվարին իրավիճակներում ծառայություններ մատուցեց՝ բարեկարգ պայմաններում գործունեություն իրականացնելու այս բերկրալի օրը հուսալով: Բժշկական կենտրոնի հիմնանորոգմանը մեծ ներդրում բերեցին մեր Սուրբ Եկեղեցու նվիրյալ զավակներ տեր եւ տիկին Տիգրան եւ Հելենա Իզմիրլյանները՝ որպես հիմնական բարերար, ինչպես նաեւ մեծագնիվ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնը իր սրտաբուխ բարերարությամբ կարեւոր նպաստ ունեցավ այս աստվածահաճո գործում: Մեր սիրելի բարերարները ազգային-եկեղեցական կյանքի բարգավաճմանն ու չինությանն ի խնդիր իրենց մեծագործություններին հավելեցին նաեւ առատաձեռն նվիրաբերություններով իրականացված այս հիվանդանոցի նորոգությունը, որը, ի հիշատակ բարերար Տիգրան

[1] «Էջմիածին», 2013, Ժ, էջ 9:

Իզմիրլյանի լուսահոգի ծնողներ Սարգիս եւ Մարի Իզմիրլյանների, կոչվեց «Իզմիրլյան բժշկական կենտրոն»: Հիվանդանոցի վերանորոգմամբ եւ բարեկարգ պայմանների ստեղծմամբ գործունեության նոր սկիզբ է դրվում հոգատարության ու խնամքի այս հաստատության, որը ,հիրավի, բազմաթիվ մարդկանց համար պիտի լինի «տեղի ապաւինի եւ բժշկութեան»: Այսօր վերակերտյալ հիվանդանոցի բացումը կատարեցինք այս վստահությամբ եւ սպասումով, որ բժշկական հաստատությունը առավել արդյունավորությամբ շարունակի մեծ օգտակարություն բերել բժշկության կարիքն ունեցող մարդկանց:

Փառք եւ գոհություն Աստծո, որ Մեր զավակների առողջության հոգածու գործունեությամբ ամրապնդեց մեր Սուրբ Եկեղեցու սոցիալական ծառայության հիմքերը: Այս սկզբունքով «Իզմիրլյան» բժշկական կենտրոնը շարունակելու է մատուցել բժշկական ծառայությունների բարձր որակ եւ մատչելիություն, նաեւ բարեգործական սկզբունքով՝ ծառայություններ չրջաններում եւ քաղաքամայր երեւանում սոցիալապես անապահով հիվանդների համար:

Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, իր փրկչական առաքելության մեջ հատուկ ուշադրություն էր դարձնում նաեւ հիվանդների բժշկությանը, ինչպես վկայում է Ավետարանիչը՝ նշելով, որ Տերը քարոզում էր արքայության Ավետարանը եւ բժշկում էր ժողովրդի մեջ եղած բոլոր հիվանդությունները (Մատթ. Դ. 23): Մեր սուրբ հայրերը հոգու փրկության հետ մեծապես կարեւորել են երկրային այս կյանքում մարմնի առողջության համար հոգալը: Մարդու կյանքի եւ արդյունալի գործունեության նախապայման է առողջությունը: Քրիստոս ասում է.«Հոգին առավել է, քան կերակուրը, եւ մարմինը՝ քան հագուստը» (Ղուկ. ԺԲ. 23): Մեր Տիրոջ վարդապետության կարեւոր ուսուցումներից է ներկայացնում ավետարանական այս խոսքը, որով Քրիստոս հոգեւորի հետ մեկտեղ նաեւ մարմնի մասին է հիշատակում: Հիրավի, պարտավոր ենք հոգեւորն արժեւորելով՝ մարմնի մասին մտածել, առողջության համար հոգալ, քանզի մարդը միայն հոգի չէ եւ ոչ էլ՝ սոսկ մարմին, այլ այս երկուսի միավորությամբ է՝ ստեղված աստվածային պատկերով եւ նմանությամբ: Դրա համար Սուրբ Եկեղեցին հոգու փրկության առաքելության իրականացմամբ մշտապես կարեւորել է նաեւ մարդու ֆիզիկական առողջության համար հոգատարությունը, քանզի աստվածաշնորհ կյանքը բարի գործերով առավել կարող ենք արժեւորել, երբ զորեղ ենք առողջությամբ:


Սիրելինե՛ր, «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի բացման այս ուրախալի առիթով վերստին Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք բերում սիրելի բարերարներին, բացման այս արարողությանը ներկա հարգարժան տեր եւ տիկին Տիգրան եւ Հելենա Իզմիրլյաններին, «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի հիմնանորոգման նախաձեռնությանը մեծ օգտակարություն ցուցաբերած տիար Գրեգորի Ջերեջյանին, «Իզմիրլյան» հիմնադրամի երեւանյան գրասենյակի տնօրեն տիար Տարոն Առաքելյանին, բժշկական կենտրոնին բազմաբնույթ աջակցություն եւ նվիրատվություններ տրամադրած բոլոր անհատներին ու կազմակերպություններին: Հայրապետական առանձնակի գնահատանք ենք հայտնում հիվանդանոցի հոգեւոր տեսուչ գերաշնորհ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Սարգսյանին, ով Մեր ներկայացուցիչն է այս հաստատությունից ներս եւ հոգեւոր խնամակալություն է իրականացնում, ինչպես նաեւ հիվանդանոցի նախկին եւ ներկա տնօրեններին՝ նախանձախնդիր աշխատանքի համար, եւ տնօրենների խորհրդի պատվարժան անդամներին, ովքեր իրենց խորհրդատվությամբ ու թելադրություններով ուղղորդեցին կազմակերպելու հիվանդանոցի կառավարման գործընթացը: Մեր գնահատանքը նաեւ բժշկական կենտրոնի նորոգությունն իրականացրած ճարտարապետներին եւ հիվանդանոցի վերանորոգման գործում իրենց ջանքերը բերած բոլոր անձանց: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում հիվանդանոցի քաջեռանդ բժիշկներին, ովքեր նվիրյալ ծառայությամբ ու ջերմ սիրով մեր ժողովրդի կյանքում կարեւոր ու անփոխարինելի առաքելություն են իրականացնում: Մեր Հայրական հորդորն է ծառայասիրության ոգով տոգորված սիրելի բժիշկներիդ, «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի աշխատակիցներիդ՝ նախանձախնդրությամբ շարունակեք ձեր աստվածահաճո գործունեությունը՝ հոգատարությամբ ու խնամքով նորոգելով կյանքի ուրախությունն ու խնդությունը ապաքինման կարոտ անձանց:

Աղոթում ենք, որ Տերը զորացնի ամենքիս, հատկապես՝ մարմնական տկարություն ունեցող բոլոր անձանց, խաղաղ պահի Հայրենի մեր երկիրը, չինության ու առաջընթացի մեջ՝ աշխարհասփյուռ հայ կյանքը: Թող Աստված օրհնի եւ արգասավորի աստվածահաճո առաքելությունը «Իզմիրլյան» բժշկական կենտրոնի:

Մեր խոսքի ավարտին անհուն գոհունակությամբ բարերար տիար Տիգրան Իզմիրլյանին չնորհում ենք տիտղոս «Ասպետ Սուրբ Էջմիածնի» եւ Հայրապետական չքանշան՝ ազգային-եկեղեցական անդաստա-

նում իրականացրած ազգանվեր ձեռնարկների համար՝ մաղթելով սիրելի բարերարին քաջառողջություն, արեւշատություն, գործոց մշտանորոգ հաջողություններ եւ Բարձրյալն Աստծո Ամենախնամ Սուրբ Աջի հովանին:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Տարեմուտի տոնական այս երեկո Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ձեզ, սիրելի՛ հավատավոր ժողովուրդ՝ ի Հայրենիս եւ ի Սփյուռս:

Դիմավորում ենք փրկչական 2014 թվականը: Մեր Տիրոջ Սուրբ Ծննդյան խորհրդով նոր տարի է սկսվում: Ժամացույցի ազդարարող զարկերի հետ մեր եկեղեցիներում աղոթք ենք բարձրացնելու երկինք, որ 2014 թվականը լինի երկնային օրհնությամբ ու չնորհներով լեցուն տարի եւ աշխարհն ավելի մոտեցնի խաղաղության ու մարդկանց մեջ հաճության այն օրհնյալ օրվան, երբ չեն լսվի թշնամության ձայներ ու պատերազմի որոտ, երբ ամենուր կյանքը կծաղկի եղբայրասիրության, բարօրության ու խնդության մեջ:

Աստծո չնորհով 2013 թվականին մեր կյանքում ունեցանք բարի արդյունքներ, նաեւ կրեցինք դժվարություններ, ինչպես Հայրենիքում, այնպես եւ Սփյուռքում: Մեր առջեւ դեռ ծառացած են մնում մեր երկրի զարգացման, մեր արդար իրավունքների պաշտպանության, մեր պետականության ամրապնդման, ազգային եւ հոգեւոր մեր կյանքը չենացնելու խնդիրները: Մեզ մտահոգում է Մերձավոր Արեւելքում հակամարտությունների մեջ ապրող հայորդյաց դժվարին վիճակը: Լի ենք հավատով, որ ազգիս զավակունք, ինչպես միշտ, պիտի միավորվեն հայրենյաց եւ ազգի սիրով եւ հաղթահարեն հոգսաշատ կյանքը Հայրենիքում՝ դարձնելով այն ազգին համախմբող բարօր տունը հայության. պիտի միավորվեն միմյանց սատարելու եւ զորավիգ լինելու՝ հայրենաշեն ու ազգաշեն ձեռնարկներին: Այս առումով, սիրելինե՛ր, ինչպես առաքյալը պիտի ասեր՝ «մեծ վստահություն ունեմ ձեր հանդեպ, մեծապես հպարտ եմ ձեզնով...» (Բ Կորնթ. 7. 4), որովհետեւ

[1] «Էջմիածին», 2014, Ա, էջ 3:


Հավատավոր մեր ժողովուրդը անվեհեր դիմակայում է դժվարություններին, համբերում նեղություններին մեջ եւ ապրում լուսավոր իր գալիքը կերտելու վճռականությամբ՝ հաստատուն պահելով վերածնվող, ազատ իր կյանքի վերընթաց ուղին:

Տարեմուտի այս երեկո Հայրապետիս հորդորն է մեր սիրեցյալ ժողովրդին, որ տարին ապրենք որպես հոգեւոր նորոգության եւ ուխտի տարի: Մեր կյանքի հիմը դարձնենք ազնիվն ու արդարը, բարձր պահենք քրիստոնեական մեր արժեքները, ուղղենք մեր սխալներն ու բացթողումները՝ մերժենք եւ մեզանից հեռու վանենք մեր առաջընթացը կասեցնող երեւույթները, որպեսզի ի զորու լինենք չենացնել ու ծաղկեցնել մեր կյանքը Հայրենիքում եւ ի Սփյուռս աշխարհի եւ 2015 թվականին մաքուր խղճմտանքով կանգնենք հիշատակի առջեւ մեր նահատակների:

Միածնակէզ Սուրբ Տաճարի առջեւ Մեր հայցն ենք առաքում առ Բարձրյալը, որ 2014 թվականը խաղաղություն բերի աշխարհի բոլոր կողմերում, բարի կամք՝ մարդկանց ու ժողովուրդներին՝ հակամարտությունները կարգավորելու եւ հաստատելու հուսառատ ուղիներ երջանիկ ու բարօր կյանքի:

Աստծո օրհնություն ու ամենառատ չնորհներն ենք հայցում մեր երկրին եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին: Աղոթում ենք նեղություններուն մեջ գտնվող, դժվարություններ դիմակայող մեր ազգի զավակների համար, Մեր մաղթանքն ենք բերում Հայրենիքի սահմանները պաշտպանող Հայոց բանակի մարտիկներին եւ բոլոր նրանց, ովքեր տարեմուտը դիմավորում են ծառայության մեջ: Թող Տերը պարգեւի ամենքիս, սիրելինե՛ր, քաջառողջությամբ, բարիքով, ուրախությամբ լի տարի:

Շնորհավոր Նոր տարի:



ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳԻՐ ՍԻՐԻԱՀԱՅՈՒԹՅԱՆԸ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԻԹՈՎ [1]

Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօների առիթով Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագոյն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը հայրապետական օրհնութեան գրով իր չնորհաւորանքներն ու բարեմաղթանքներն է ուղղել Սիրիայի հայ համայնքի հոգեւոր առաջնորդներին, աշխարհիկ ու հոգեւոր սպասաւորներին, համայնքային պաշտօնէութեանը, ազգային վարժարանների տեսչական ու ուսուցչական կազմերին, սաներին եւ համայն սիրիահայութեանը:

«Այս օրերին, երբ քրիստոնեայ աշխարհի հետ միասին համայն հայութիւնը պատրաստւում է նչելու Սուրբ Ծննդեան տօները, Մեր մտքում ու ամենօրեայ աղօթքներում էք դուք, որ Սիրիայի ողջ ժողովրդի հետ միասին կրում էք երկրում ծայր առած հակամարտութեան ծանր ու անդառնալի հետեւանքները», - նչել է Վեհափառ Հայրապետն իր գրում:

Նորին Սրբութիւնն իր գնահատանքն է յայտնել հայորդիներին, որ հակառակ դժուարին իրավիճակի, ներկայ վտանգների, անորոչութեան ու փորձութիւնների պայմանների, չարունակում են արթուն պահել իրենց հոգեւոր ու ազգային կեանքը եւ գօրաւոր նախանձախնդրութիւնը՝ մասնաւորապէս հանդէպ նոր սերնդի հայեցի կրթութեան ու դաստիարակութեան երախտաւժան գործը:

«Սիրելի՛ հայորդիներ, սիրիահայ գաղութի պատմութեան մէջ բացառիկ դերակատարութիւն են կատարել հայկական վարժարանները, որտեղ կերտուել ու ձեւաւորուել են հայորդեաց հոգիները, ներչնչուել մայրենի լեզուի եւ ազգային արժէքների հանդէպ սիրով ու նախանձախնդրութեամբ: Կոտորածներից մազապուրծ ու եղեռն վերապրած ձեր հայրերը ամէն դժուարութիւն ու զոհողութիւն յանձն առան,

[1] «Էջմիածին», 2014, Ա, էջ 5:

որպէսզի իրենց զաւակները ուսման կարօտ չմնան: Այսօր առիթ ունենք դրուատանքով անդրադառնալու, որ նախընթաց տասնամեակների ընթացքին Սիրիայի ազգային վարժարանները կրթել են փայլուն սերունդներ, ովքեր Սիրիայում եւ աշխարհի չորս ծագերում սփռուած, ծառայում են մեր ժողովրդին ու Սուրբ Եկեղեցուն, աւանդ բերում հայ մշակոյթի, արուեստի, գրականութեան ու գիտութեան զարգացմանը:

Վարժարանների սիրելի՛ սաներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք յղում ձեզ եւ աղօթում ձեր ու ձեր ծնողաց, Սիրիայի բոլոր մանուկների ապահովութեան համար: Թող ձեր ծնողների եւ ուսուցիչների նախանձախնդրութիւնը՝ հանդէպ կրթութեան գործը, խրախոյս լինի ձեզ համար, որպէսզի չարունակէք ջանադիր սովորել՝ ապագային ձեր կեանքով ու հայրենաշէն գործերով աւանդ բերելու ազգային ու հոգեւոր մեր կեանքի առաւել չինութեանն ու պայծառութեանը», - ասուած է Հայրապետական օրհնութեան գրում:

Նորին Սրբութիւնն Ամենակալ Աստծոյ զօրակցութիւնն ու պահպանութիւնն է հայցել սիրիահայ համայնքի համար՝ մաղթելով, որ Սուրբ Ծննդեան խորհրդով բացուող 2014 թուականը խաղաղութիւն ու ապահովութիւն բերի Սիրիային ու նրա ողջ ժողովրդին:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՀՈՒՆՎԱՐ, 2014 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ես եմ ճանապարհն եւ ճշմարտութիւն եւ կեանք»
(Յովհ. ԺԴ 6):

Սիրելի՛ հաւատաւոր ժողովուրդ ի Հայրենիս, յԱրցախ եւ ի Սփիւռս. Քրիստոսի՝ մեր Տիրոջ Սուրբ Ծննդեան բերկրանքով այսօր մեր ցնծագին դոհաբանութիւնն ենք բարձրացնում առ Աստուած: Փառաբանում ենք մեր Փրկչին՝ Բեթղեհեմում ծնուած մանուկ Յիսուսին: Սուրբ Ծննդեան օրհնեալ օրը երկիրը երկինք դարձաւ, եւ նրանում ծագեց Արդարութեան արեգակը՝ ճշմարտութեան լոյսով լուսաւորելու համար մարդկային հոգիները, որպէսզի ճանաչեն, տեսնեն ու գտնեն իրենց փրկութիւնը:

Աստուծոյ Որդին խոնարհուեց երկնային բարձունքներից, մարդացաւ ու աշխարհ եկաւ՝ բանսարկուի խաբէութեամբ դրախտից վտարուած մարդուն ազատելու մեղքից եւ մեղք սերմանող սատանայի իշխանութիւնից: Եկաւ՝ պատուիրանազանցութեամբ Աստուծոյ դէմ ելած նախաստեղծ մարդու կորուսեալ սերունդներին վերստին երկնքի արքայութիւն վերադարձնելու եւ Աստուծոյ որդեգիրները դարձնելու: «Յո՛յց տուր ինձ ճանապարհն այն, որով պիտի գնամ, քանզի դէպի քեզ, Տէ՛ր, բարձրացրի հոգիս» (Սաղմ. ՃԽԲ 8), ի պատասխան մարդկութեան այս աղերսի, որ սաղմոսերգուի չուրթերով երկինք էր

[1] «Էջմիածին», 2014, Ա, էջ 7:

բարձրանում, հնչեց մեր Փրկչի ձայնը. «Ես եմ ճանապարհը եւ ճշմարտութիւնը եւ կեանքը»:

Ճշմարտութիւնը եւ կեանքը իր անձի հետ նոյնացնելով՝ մեր Տէրը ճշմարտութիւնը հաւասար արժէք հռչակեց կեանքին: Նա ճշմարտութեան ճառագայթներով ցրեց մարդկային մոլորութիւնների ու մեղսագործութիւնների խաւարը եւ պարգեւեց մարդկանց Ճշմարտութեան Սուրբ Հոգին (Յովհ. ԺԴ 17), որպէսզի մարդկութեան ընթացքը հաստատուի խաղաղութեան ու արդարութեան, միմեանց հանդէպ սիրոյ եւ ազնուութեան վրայ հիմնուած կեանքի մէջ:

Տիրոջ փրկագործութեամբ պարտութիւն կրած չարն այսօր էլ մոլեգնութեամբ պատերազմում է մարդկային հոգիների համար, փորձելով մշուշով պատել Քրիստոսի բերած ճշմարտութեան լոյսը, որպէսզի մարդիկ չտեսնեն դէպի երկինք տանող ճանապարհը եւ խաբէութեան որոգայթներում մոլորուելով՝ զրկուեն երկնային արքայութեան յաւիտենական կեանքից: Չարը դադար չունի. գործում է օրնիբուն եւ գործում է մարդկանց միջոցով: Չարը ճանապարհ է հարթում, երբ կեանքում պակասում է նախանձախնդրութիւնը ճշմարտութեան հանդէպ, եւ սուտը գոնում է իր համակիրներին: Չարի խաբեպատիր ընթացքները զօրանում են, երբ մարդը հեռանում է Քրիստոսի ուսուցանած սկզբունքներից՝ կեանքը լցնելով կեղծիքներով ու խեղաթիւրումներով: Այսպէս է, որ իրողութիւնների ներկայացումը ձեւափոխւում է բանսարկութեան եւ անճիշտ գնահատականների, կրօնի ընկալման մէջ կամայական ու չահախնդիր մեկնաբանութիւնները ծնունդ են տալիս աղանդների, մարդու իրաւունքի պաշտպանութեան պահանջով պարտադրւում են երբեմն նաեւ հասարակութեան մտածելակերպին ու արժեհամակարգին անյարիր բարքեր: Այսպէս է, որ աշխարհում բարոյականութիւնը տեղի է տալիս ապաբարոյականութեան առջեւ, խօսքի ազատութիւնը վերածւում է խօսքի սանձարձակութեան, վկայութիւնը՝ ճշմարտութեան խեղումի: Ճշմարտութիւնը նենգափոխելով՝ քաղաքական չահերը յաճախ հակադրւում են արդարութեանն ու խաղաղութեանը, նիւթականի մոլուցքը, եսակենտրոն ձգտումները՝ գթութեանն ու մարդասիրութեանը՝ աշխարհում բազմացնելով հակամարտութիւնները, վիշտը, կարիքն ու նեղութիւնները:

Կեանքն ալեկոծող այսպիսի իրողութիւններից աշխարհը կձերբազատուի, երբ մարդիկ ընդունեն Քրիստոսի ճշմարտութիւնը, երբ իրենց հաւատաւոր գործերով վկայեն Տիրոջ ներկայութիւնը եւ առաքեալի

պէս բարձրաձայնեն. «Իմ մէջ կա՛յ Քրիստոսի ճշմարտութիւնը» (Բ Կորնթ. ԺԱ 10): Ճշմարտութիւնը կրելով միայն մարդկութիւնը կարող է ապահովել կեանքի առաջընթաց, բարեփոխում, բարի արդիւնք ու զարգացում, քանզի ոչինչ մնայուն չի կառուցւում խաբէութեան վրայ, ո՛չ մարդկային յարաբերութիւնները, ո՛չ բարուրաք հասարակական կեանք ու պետականութիւն: Երբ ճշմարտութիւնը մարդկանց մէջ չէ, արժեզուրկ են նուիրում, արդարութիւն, եղբայրասիրութիւն, բայց ճշմարտութեամբ առնում են զօրութիւն եւ գործի վերածուելու ուժականութիւն:

Մեր իրականութեան մէջ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, նոյնպէս, ցաւօք, տեղ են գտնում վատաբանութիւնն ու բանսարկութիւնը, անտարբերութիւնը երկրի ընդհանուր բարիքի նկատմամբ: Նահանջ են ապրում ընտանեկան աւանդական արժէքները, դժուարութիւնների առջեւ՝ յանձնառութեան ոգին: Պատասխանատուութիւնը ստորադասւում է իրաւունքին, անզուսպ պահուածքն ու վիրաւորանքը ընկալւում է որպէս քաջութիւն: Սեփական կարծիքն արտայայտելու իրաւունքը յաճախ ի չարս է գործադրւում ճշմարտութիւնն աղաւաղելու, կողմնակալ տեսակէտներ տարածելու համար: Այսպիսի մտայնութեանց մէջ սուտը քօղարկւում է ճշմարտութեան դիմակով, բանավէճը դառնում է վիճաբանութիւն, քննարկումը վերածւում քամահրանքի ու դատապարտութեան խօսքի, որոնցից հեռանում է Աստուծոյ ճշմարտութեան Հոգին, Աստուծոյ իմաստութիւնը, եւ մենք դժուարանում ենք, այո՛, նոյնիսկ դադարում ենք տեսնել բարին, արդարը, ու մեր կեանքում տկարանում են միմեանց հանդէպ հաւատն ու վստահութիւնը եւ գալիքի յոյսն ու լաւատեսութիւնը:

Բեթղեհեմում ծնուած Մանուկն է, սիրելի՛ հաւատաւոր ժողովուրդ, ճանապարհը, ճշմարտութիւնը եւ կեանքը: Նրան պիտի ապաւինենք, մեր սրտերում Նրա ճշմարտութիւնը կրենք, որ վերափոխուի մեր կեանքը, լցուի աներկիւղ վստահութեամբ, դժուարութիւնները յաղթահարելու եւ ամեն բան Աստուծոյ բարերար կամքով ուղղելու զօրութեամբ: Ճշմարտութիւնն ազատարար է: «Եւ կճանաչէք ճշմարտութիւնը, եւ ճշմարտութիւնը կազատի ձեզ» (Յովհ. Ը 32),- ասում է մեր Տէրը: Ապրենք ու գործենք Քրիստոսի ճշմարտութեամբ, Նրա խօսքն ու պատգամները դարձնենք մեր կեանքի խաւարացիր լոյսը, մեր հանդէպ Նրա սէրն ու ողորմութիւնը՝ մեզ միաւորող ուժը, ազգի միասնութիւնը կերտող զօրութիւնը: Անխախտ ու ամուր պահենք

մեր միաբանութիւնը, համերաշխութեան ոգին, խնամք տանենք եւ հոգանք միմեանց համար, մեր երկրի, հոգեւոր եւ ազգային մեր կեանքի վերելքի համար: Միայն այսպէս, միմիայն այսպէս պիտի կերտենք չէն ու բարօր մեր Հայրենիքը: Միայն այսպէս կարող պիտի լինենք Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցը դարձնել մեր արդար դատի յաղթանակի հանգրուան եւ բարուրք, արդար լուծման առաջնորդել արցախեան հիմնախնդիրը: Այսպէս կենսունակ պիտի պահենք Սփիւռքը, յոյս ու ապաւէն դառնանք եւ նեցուկ լինենք հակամարտութեան դժուարութիւնները կրող սիրիահայ մեր եղբայրներին ու քոյրերին: Եւ թող մեր բոլոր գործերը Տիրոջով լինեն:

Այս մաղթանքով, Սուրբ Ծննդեան աւետիսով Մեր ողջոյնն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռներու գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին, Հայ Եկեղեցու ուխտապահ ու նուիրեալ ողջ հոգեւոր դասին, մեր քոյր Եկեղեցիների չնորհազարդ հոգեւոր պետերին:

Հայրապետական օրհնութեամբ եւ Սուրբ Ծննդեան չնորհների հայցով ողջունում ենք Սուրբ Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին եւ առաջին տիկնոջը: Մեր ողջոյնն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեանին, հայոց պետական աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին, միջազգային կազմակերպութիւնների ներկայացուցիչներին:

Աստուածակառոյց Սուրբ Էջմիածնից, մեր Տիրոջ եւ Փրկչի Իյման Սուրբ Սեղանից Սուրբ Ծննդեան աւետիսով Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում ի սփիւռս աշխարհի հաւատաւոր համայն մեր ժողովրդին:

Այս բերկրալի օրը հայցենք, որ Փրկչի Ծննդեան չնորհները մշտասփիւռ լինեն աշխարհում, եւ մարգարէի մաղթանքով ճշմարտութիւնը եւ ողորմութիւնը հանդիպեն, արդարութիւնն ու խաղաղութիւնը համբուրուեն (Սաղմ. ՁԴ 11):

Թող մեր Տէր Յիսուս Քրիստոսի Ծննդեան լուսազարդեալ չողերը պայծառացնեն մեր Սուրբ Եկեղեցին, մեր Մայր Հայրենիքը, աշ-

խարհասփիւռ հայ կեանքը, որ այն լինի փառաբանութիւն Բարձրեալն Աստծուն եւ պարգեւի ազգիս մշտապէս հոգեւոր անհուն ուրախութիւն, եւ մենք այսօր եւ միշտ խնդութեամբ աւետենք.

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
ձեզ եւ մեզ մեծ աւետիս:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(8 ՄԱՐՏԻ, 2014 Թ.)[1]

Լուսո Խորան Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ չնորհավորանքներն ենք բերում սիրելի տիկնանց եւ օրիորդաց՝ մարտի 8-ի առիթով:

Գարնանամուտին՝ բնության զարթոնքի այս օրերին, մարտիության տոնը խնդություն է հավելում մարդկանց սրտերին՝ առանձնահատուկ կարեւորելով կանանց լուսավոր առաքելությունն աշխարհում: Գործունեության տարբեր բնագավառներում մեր մայրերը, քույրերն ու դուստրերը իրենց հատուկ սիրով, հոգատարությամբ ու հավատարմությամբ արդյունավորում են իրենց ծառայությունը մեր երկրին ու ժողովրդին, ջանքեր ներդնում՝ ի խնդիր մեր հասարակության բարօրության, պետության զորացման, պայծառ ու լուսավոր գալիքի կերտման: Ազգային-եկեղեցական մեր անդաստանում անփոխարինելի եւ բացառիկ են կանանց ուրույն դերն ու նվիրյալ սպասավորությունը, մասնավորաբար՝ ընտանիքների ամրության, նոր սերնդի կրթության ու դաստիարակության գործում:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Մեր սրտագին բարեմաղթանքները բերելով՝ ի խորոց սրտի աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ օրհնության ու չնորհների ներքո պահպանի մեր մայրերին, քույրերին ու դուստրերին եւ զորացնի ազնիվ ու գովարժան ընթացքով ծառայելու մեր ժողովրդի եւ Հայրենիքի առաջընթացին:

Թող Աստված Իր Սուրբ Աջի հովանին տարածյալ պահի բոլոր տիկնանց եւ օրիորդաց վրա, պարգեւի քաջառողջ արեւշատություն, երջանկություն եւ երկնառաք բյուր բարիքներ:

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2014, մարտ Ա, թիվ 5 (409), էջ 1:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ԱՊՐԻԼ, 2014 Թ.)[1]

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք հղում տիկնանց եւ օրիորդաց՝ Ս. Աստվածածնի Ավետման տոնի եւ Մայրության ու գեղեցկության օրվա առթիվ:

Սուրբ Աստվածածինը, ով «օրհնյալն է կանանց մեջ», առ Աստված հավատքի, մայրական հոգատարության, սիրո եւ նվիրումի ներշնչման աղբյուր եւ օրինակ է բոլոր կանանց համար: Հոգենորոգ այս օրը մեր եկեղեցիներում կատարվում է մայրության բերկրանքին սպասող կանանց օրհնություն՝ աղոթքով եւ մաղթանքով, որ մայրերն ուրախ սրտով ու երջանիկ հոգով սնեն իրենց մանուկներին եւ մեծացնեն նրանց խաղաղության ու բարօրության մեջ:

Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ Տերը Ս. Տիրամոր գթառատ բարեխոսությամբ մեր մայրերին, քույրերին ու դուստրերին պարգեւի քաջառողջ արեւշատություն, երկնային ամենայն բարիք եւ չնորհներ՝ ջերմ հավատքով ապրելու իրենց կյանքը, հավատավոր գործերի օրհնությամբ լցնելու իրենց ընտանեկան հարկերը, պայծառություն բերելու մեր երկրին, ազգային եւ եկեղեցական մեր կյանքին:

---

[1] «Էջմիածին», 2014, Դ, էջ 5:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՎԱԳ ՇԱԲԱԹՎԱ ՈՒՂԵՐՁԸ

(ԱՊՐԻԼ, 2014 Թ.)[1]

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ:

Մեծ պահքի աղոթական, հոգեշահ եւ խոկումնալի օրերն են, ինքնաքննության, զղջումի, ապաչխարության օրեր՝ հոգեպես նորոգվելու եւ մեր կյանքում զորացնելու միմյանց հանդեպ սերը, բարեպաշտությունն ու պատվիրանապահությունը:

Տերունապատվեր եղբայրասիրության, համերաշխության, միմյանց զորակցության ազնիվ մղումն ու բարի ձգտումը հզոր եւ կենսական ուժ են, որ պիտի օգնեն մեզ դիմագրավելու մեր կյանքի դժվարությունները, անսասան պահելու ազատ ու խաղաղ մեր հայրենիքի հիմերը: Աստծո պատվիրանների իրագործումով է, որ անձնական եւ ազգային մեր կյանքում լայնորեն պիտի բացվեն Աստծո ողորմության եւ օրհնության դռները:

Մուտք ենք գործում Ավագ շաբաթ: Եկեղեցական արարողությունների խորհրդով, մեր մտորումներով ու ապրումներով մասնակից ենք դառնում մեր Տիրոջ երկրային կյանքի վերջին օրերի իրադարձություններին, մեր Փրկչի կրած չարչարանքներին, խաչելությանն ու մահվանը, նաեւ սքանչելագործ հարությանը, որով չնորհվեց մարդկությանը հարուցյալ կյանք երկրի վրա եւ հավիտենական կյանք՝ երկնային արքայության մեջ:

Սիրելի՛ հավատավոր զավակներ ի Հայրենիս եւ ի Սփյուռս, Ավագ շաբաթվա հոգեչեն խորհուրդը հրավեր դարձնենք դեպի Աստված մեր ընթացքի զորացման՝ վանենք մեզանից ամեն անարժան գործ, խոսք ու մտածում, որպեսզի մաքրամաքուր սրտով, հուսառատ ու խնդագին հոգով ընդունենք կենարար ավետիսը մեր Տիրոջ Հարության: Ջանանք, որ մեր իրականության մեջ ամենուր դրսեւորվի քրիստո-

[1] «Էջմիածին», 2014, Դ, էջ 6:

նեական ոգին, արժեւորվեն հոգու ազնվութիւնն ու նվիրումը, արդարամտութիւնը, կարեկցանքն ու գութը, որոնք մերժեցնում են մեզ Աստծուն: Աղոթենք միմյանց համար, մեր միասնական աղոթքը բարձրացնենք Սիրիայի ժողովրդի, Քեսաբի եւ համայն սիրիահայութեան համար եւ աջակցութիւն բերենք, որպեսզի ծայրահեղական զինյալների կողմից տեղահանված Քեսաբի մեր եղբայրներն ու քույրերը դիմակայեն դժվարութիւններին եւ Տիրոջ կամքով ապահով վերադառնան իրենց բնակավայրերն ու շարունակեն ապրել խաղաղութեամբ:

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հայրապետական օրհնութեամբ, Մեր սրտից բխած ամենաջերմ, բարի մաղթանքներով հայցում ենք, որ մեր Փրկչի Ս. Հարութեան չնորհներն իջնեն մեր կյանքին, եւ աստվածային օրհնութեամբ զորացած՝ միշտ մնանք հավատարիմ զավակներն Աստծո, հարազատ զավակները մեր ազգի եւ մեր Ս. Եկեղեցու: Թող երկնապարգեւ խաղաղութիւնը հաստատվի աշխարհի բոլոր կողմերում, անսասան մնա մեր անկախացյալ հայրենիքում, աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքում:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի չնորհը, սերը եւ ողորմութիւնը թող լինեն մեզ հետ եւ ամենքի՝ այսօր եւ միշտ. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ԱՊՐԻԼ 20, 2014 Թ.)[1]

«Ես եմ լոյս աշխարհի. որ գայ կինի Իմ՝
ընդ խաւար մի գնասցէ. այլ ընկալցի լոյսն կենաց»
(Յովհ. Ը 12):

Սիրելի՛ հաւատաւոր զաւակներ ի Հայրենիս եւ ի Սփիւռս:

Մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հրաշազարդ Սուրբ Յարութեան տօնը յուսառատութեամբ է լուսաւորել մեր հոգիները: Մահուանից յարութիւն է առել մեր Փրկիչը, մահաբեր գործիքից խաչը վերափոխուել է կենաց ծառի, մարդն ու տիեզերքը նորոգուել են կեանքի եւ յաւերժութեան չնորհով:

***Այսօր Քրիստոսով յարուցեալ նոր արարչութիւն է, նոր կեանքի ճանապարհ՝ պայծառացած կենարար լոյսով, որ պարգեւում է Փրկիչը. «Ես եմ աշխարհի լոյսը. ով Իմ ետեւից է գալիս, խաւարի մէջով չի քայլի, այլ կընդունի կենաց լոյսը»: Յարուցեալ մեր Տիրոջ այս խօսքերը յաւիտենական ու նաեւ երկրային լուսաւոր կեանք ունենալու աստուածային հրաւէր են՝ ուղղուած իւրաքանչիւր մարդու, քանզի Սուրբ Յարութեան չնորհները բաշխուում են բոլորին, նաեւ նրանց, ովքեր դեռեւս կանգնած չեն հաւատքի ճանապարհին, ովքեր, կեանքի փորձութիւններից սրտաբեկ՝ ընդվզում են Աստուծոյ դէմ: Սուրբ Յարութեան չնորհները սփռւում են նաեւ այնտեղ, որտեղ պատերազմների եւ մոլեգնող ահաբեկչութիւնների մէջ դառնացած են մարդիկ, կարծրացած են սրտերը, որտեղ մարդիկ կրում են տառապանքների դաժան բեռը, որտեղ զոհւում են հրեչտականման մանուկներ՝ աղքատութեան, անտարբերութեան, ռազմական գործողութիւնների հետե-**

[1] «Էջմիածին», 2014, Դ, էջ 7:

ւանքով: Մարդկութեան կեանքն ալեկոծող բոլոր հակամարտութիւնների, հումանիտար, բնապահպանական աղէտների, տնտեսական ու քաղաքական ճգնաժամերի, բոլոր հոգսերի ու մարտահրաւէրների վրայ այսօր փայլում է Քրիստոսի Յարութեան խաւարացիր լոյսը: Յարութեան հաւատքը, որ վերափոխել է պատմութեան ընթացքը, կրթել է հոգի ու միտք, կերտել մշակոյթ, զարգացման առաջնորդել պետութիւններ, առաջադրել արդարութեան եւ իրաւունքի համամարդկային չափանիշներ, մարդասիրական արժէքներ ու սկզբունքներ, այսօր էլ հրաշագործ զօրութիւնն է, որին պիտի ապաւինենք, որով պիտի նորոգուեն աշխարհն ու մարդկային հոգիները՝ նոր իրագործումներով, խաղաղութեամբ, սիրով, բարիքով պայծառակերպելու մարդկութեան կեանքը: Այսօր չկան հասարակութիւններ, պետութիւններ առանց խնդիրների, կարիքների ու նեղութիւնների: Հասարակութիւններն ու պետութիւնները, սակայն, չեն կարող ունենալ առաջընթաց, անգամ դատապարտուած են ոչնչացման, եթէ չլինեն հոգեւոր-բարոյական արժէքների վրայ կեանքի հաստատման, առաջընթացի ու կատարելութեան առաջնորդող տեսիլքն ու նպատակները եւ դրանց նուիրեալ առաքեալները: Արդարեւ, մարդկութեան մեծ նուաճումները խիզախումներն են ազնիւ տեսլական ունեցող անհատների, ինչպէս քրիստոնէութեան լոյսի տարածողները եղան Քրիստոսի աշակերտները, ովքեր առ Աստուած հզօր հաւատքով, անճնազոհ յանձնառութեամբ սկզբնաւորեցին յարուցեալ կեանքի ուղիներն աշխարհում՝ իսէր մարդու փրկութեան, երջանկութեան ու բարօրութեան: Ամեն ոք, ով հաւատում է Աստծուն, ով սէր ունի արարչութեան ու մարդկանց հանդէպ, առաքեալ է եւ պիտի իրագործի իր առաքելութիւնը աներկբայ գիտակցութեամբ, որ Աստուծոյ օրհնութիւնն է չնորհաց աղբիւրը, որն հեռացնում է կեանքի մռայլը, Աստուծոյ զօրակցութիւնը բազմապատկում է աշխատանքի արդիւնքները, Աստուծոյ մխիթարութիւնը փարատում է յուսահատութիւնն ու տխրութիւնը, Աստուծոյ երկնային արդարութիւնն ամրապնդում է հիմքերը երկրային արդարութեան: Այս գիտակցութեան, այս ոգու յառնումով պիտի ամոքուեն ներկայ աշխարհի վէրքերը, սիրոյ եւ համերաշխութեան ուղիներում հաստատուեն երկրների ու հասարակութիւնների ընթացքը, կեանքը վերափոխուի յարութեան լոյսով, որ պատգամն է մեր Տիրոջ եւ Խորհուրդը՝ Քրիստոսի Յարութեան:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Փրկչի Յարութեան աւետիսն այսօր հրաւէր է աշխարհասփիւռ մեր ժողովրդին հայրենական եւ ազ-

գային մեր կեանքի դժուարութիւնների առջեւ չընկրկելու, այլ աներ կամքով ջանքեր գործադրելու հայրենի մեր երկրի, մեր ժողովրդի բարօր ու լուսաւոր գալիքի համար: Ժամանակի հողմերի մէջ որտե՞ղ պիտի մնար մեր ժողովուրդը, եթէ չզօրանար Քրիստոսի Յարութեան չնորհներով, եթէ չունենար Հայրենիքի, ազգի հանդէպ սէրը եւ չկարողանար այն հենարան դարձնել նեղութեան ժամին եւ ուժ՝ ապրելու, ստեղծելու եւ վեր յառնելու: Մեր առջեւ ծառացած խնդիրներն ու մարտահրաւէրները կարող ենք վճռել կեանքը վերափոխելու անվարան ձգտումով, քրիստոնէական մեր արժէքներին հաւատարմութեամբ, ազնիւ, բարի ընթացքով, մեր յանձնառութիւններով, հայրենանուէր, ազգաշահ գործերով: Սուրբ Յարութեան տօնը մեզ բերում է քաջալերութիւնը յուսավառ ոգով կեանքի կոչելու այն ծրագրերը, որ իւրաքանչիւրը, Տիրոջը հետեւելու կոչին արձագանքելով, կարող է իրագործել ընտանեկան, հասարակական, պետական եւ ազգային մեր կեանքի համար՝ անձնական շահը չտարբերելով երկրի ու ժողովրդի շահից: Մեր կոչման եւ պատասխանատուութեան մէջ հոգով ու նուիրումով ծառայենք, ձգտենք յաջողութիւնների ոչ միայն մեզ համար, այլեւ՝ միմեանց, հայրենական եւ ազգային մեր կեանքի առաջընթացի համար եւ, ինչպէս պատուիրում է մեր Տէրը, համարենք, որ արեցինք ընդամենը այն, ինչ պարտաւոր էինք (հմմտ. Ղուկ. ԺԷ 10):

Հայրական Մեր խօսքն ենք ուղղում յատկապէս երիտասարդ Մեր զաւակներին ի Հայրենիս եւ ի Սփիւռս՝ յորդորելով լինել տէրունապատուէր առաքելութեան կրողներ՝ երիտասարդութեան հրաշալի նեբուժը յոյսով ու հաւատքով միախառնելով ազգային կեանքին: Մեր կեանքի դժուարութիւնների ու հրամայականների, մեր ժամանակների եսակենտրոն ու հոգեկործան անցողիկ ընթացքների եւ երեւոյթների, փորձութեան բոլոր հողմերի դիմաց ամուր պահէք երիտասարդական կենսահաստատ ոգին՝ անսասան կանգնած հաւատքի վէմին՝ յիշելով խօսքը մեր Տէր Յիսուս Քրիստոսի. «Ես եմ աշխարհի լոյսը. ով Իմ ետեւիցդ է գալիս, խաւարի մէջով չի քայլի, այլ կընդունի կենաց լոյսը»: Սիրելի՛ երիտասարդ զաւակներ Մեր, Դուք, որ անդրանիկ սերունդն էք մեր Հայրենիքի ազատ կեանքի, ձեր սրտերում, իբրեւ ամենամեծ գանձ, կրէք ու պահպանէք Քրիստոսով ազատ, Քրիստոսով պայծառ հոգու լոյսը: Ժողովուրդը, որն ունի Աստուածոյ օրէնքով կրթուած որդիներ, ունի նաեւ իրական յոյսեր, բարի հեռանկար: Դուք պիտի իրագործէք այդ յոյսերը պետական, ազգային եւ եկեղեցական մեր կեանքի անդաստաններում, մեր Հայրենիքի սահմաններում, Սփիւռքում մեր

մայրենիի եւ մշակոյթի պահպանութեան դիրքերում, մեր երկիրը հզօրացնելու, Արցախի ազատ ապրելու իրաւունքը, մեր արդար դատը պաշտպանելու մարտադաշտերում եւ ձեր հոգու նուիրումով, հայրենական եւ ազգային կեանքում ձեր յանձնառութիւններով պիտի հիւսէք յաղթանակները մեր նորօրեայ կեանքի:

Ներկայիս ազգային մեր կեանքի մտահոգութիւններից է շարունակում մնալ Մերձաւոր Արեւելքում, յատկապէս Սիրիայում ապրող մեր ժողովրդի զաւակների դժուարին կացութիւնը: Վերջին շրջանում նոր տագնապ են յարուցել Քեսաբում Թուրքիայի աջակցութեամբ ծայրահեղական զինեալների ծաւալած ռազմական գործողութիւնները: Հայաբնակ շրջանի աւէրումը եւ հայ բնակչութեան տարհանումը շարունակութիւնն է հայ ժողովրդի հանդէպ որդեգրած թուրքական նոյն ոճրագործ քաղաքականութեան, որին պիտի կարողանանք դիմակայել պետական, եկեղեցական, ազգային մեր կառոյցներով՝ միասնական ջանքերով պաշտպանելով մեր ժողովրդի իրաւունքները:

Այսօր, սիրելինե՛ր, երբ Քրիստոսի Յարութեան տօնի լոյսն ու խանդավառութիւնը վերստին բաբախում են մեր սրտերում, առաքելական խօսքի համաձայն՝ հագած լոյսի զրահը (Հմմտ. Հռ. ԺԳ 12), իբրեւ Տիրոջ Յարութեամբ ցնծացող, տրտմութիւնը, երկիւղն ու յուսահատութիւնը մերժող առաքեալներ, ելնենք վերափոխելու մեր եւ մեր հայրենեաց ու ժողովրդի կեանքը նոր իրագործումներով, գալիքի մեր պայծառ տեսիլքը լուսաշող իրականութիւն դարձնելու հաստատուն քայլերով:

Այս հաւատով եւ մաղթանքով, Սուրբ Յարութեան աւետիսով ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին եւ մեր Եկեղեցու ողջ հոգեւոր դասին, քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին եւ տիրախնամ նրանց հօտին: Տիրոջ պահպանութիւնն ենք հայցում իրենց եւ հանապազ գօրակցութիւնը՝ տէրունապատուէր առաքելութեան մէջ:

Քրիստոսի Յարութեան չնորհների հայցով Մեր ողջոյնն ենք բերում պատարագի սրբազան արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին եւ առաջին տիկնոջը: Մեր ողջոյնն ու բարեմաղթանքներն ենք յղում Լեռնային

Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեանին եւ հայոց պետական ողջ աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներին: Սուրբ Յարութեան բերկրալի աւետիսով Հայրական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում աշխարհասփիւռ Մեր զաւակներին:

Զատկական այս սուրբ եւ նուիրական օրը ի խորոց սրտի Մեր աղօթքն է, որ Յարութեան շնորհները զօրացնեն ձեզ, սիրելի՛ ժողովուրդ հայոց, ապրելու յոյսով ու հաւատքով եւ սիրով ու համերաշխութեամբ կերտելու մեր կեանքի նոր բարի օրը:

Թող Աստուած Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ խաղաղ պահի աշխարհը համայն, բարօր առաջընթաց շնորհի մեր Հայրենիքին, պայծառութիւն՝ մեր Սուրբ Եկեղեցուն եւ հաւատաւոր ազգիս հայոց՝ այսօր եւ միշտ բարեբանելու Սուրբ Յարութիւնը մեր Փրկչի.

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(31 ՕԳՈՍՏՈՍԻ, 2014 Թ.)[1]

Մեծարգո՛ տիար Արմեն Աշոտյան՝ ՀՀ կրթության եւ գիտության նախարար, հարգարժա՛ն ռեկտորներ բարձրագույն կրթական հաստատությունների, կրթության գործի պատվարժա՛ն պատասխանատուներ ու մշակներ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Մեծ խորհուրդ ունի գեղեցիկ այս ավանդությիը, որ նոր ուսումնական տարին մեր երկրի կրթության ոլորտի պատասխանատուներն սկսում են Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում միասնական աղոթքով: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից է սկիզբ առել հայ գրի ուղին՝ հավատքով ու գիտությամբ լուսավորելու մեր ժողովրդի հոգին, հանճարացնելու գիտության եւ իմացության սիրով, հաստատելու ճշմարիտ ուղիներում, գորացնելու եւ պահպանելու հոգեւոր ու ազգային մեր ինքնությունը: Հոգեխնամ այս առաքելությունը բարեբերությամբ շարունակելու հայցով առ Աստված՝ Մենք գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքն ենք բերում Ձեզ եւ չնորհավորում 2014-2015 ուսումնական նոր տարեշրջանի մեկնարկի առիթով:

Այս օրերին հայրենի կրթական մեր բոլոր հաստատությունները դարձյալ հրավեր են ուղղում մեր սիրասուն զավակներին՝ քայլելու գիտելիքի եւ իմաստության ամբարման ճանապարհով, գորացնելու ազգային ու հոգեւոր նկարագիրը, դպրության եւ մշակույթի նկատմամբ սերն ու ճանաչողությունը:

Մեր ժողովուրդը միշտ կարեւորել է գիտելիքը եւ ուսումը, որոնք, հակառակ կրած նեղությունների, էական եւ հիմնարար նշանակություն են ունեցել ազգային մեր կյանքում եւ բազմադարյա մշակույթում: Այսօր եւս մեր երկրի հզորացման, հայրենյաց կյանքի բարօրության, մեր պետության սահմանների ամրության եւ մեր ժողովրդի

[1] «Էջմիածին», 2014, Ը, էջ 5:

պայծառ գալիքի համար անգնահատելի է ազգի ուսյալ զավակի եւ գիտակից քաղաքացու դերը: Սուրբգրային խոսքի համաձայն՝ տունը չինվում է իմաստությամբ եւ հաստատվում հանճարով, եւ գիտությամբ են չտեմարանները լցվում ամենայն պատվական հարստությամբ եւ բարիքով (Առակ. ԻԴ 3-4):

Սիրելինե՛ր, գաղտնիք չէ, որ Հայաստանի անկախությանը հաջորդած դժվարություններն ու մարտահրավերներն իրենց հետքն են թողել նաեւ կրթության ասպարեզում: Ամբողջ մի սերունդ հասակ առավ, երբ մեր երկիրը գտնվում էր պատերազմական իրավիճակում, տնտեսական ու սոցիալական ծանր փորձությունների մեջ: Այսօր ուրախալի է տեսնել, որ, ինչպես մեր ժողովուրդը, այնպես եւ հայրենի կառավարությունը ամենայն հոգածությամբ ջանքեր են բերում, որպեսզի մեր նոր սերունդն առավել կրթված լինի, հաղորդ՝ համամարդկային ձեռքբերումներին:

Հայրապետական մեր գնահատանքն ենք բերում ՀՀ կրթության եւ գիտության նախարարության աշխատակիցներին եւ անձամբ նախարար տիար Արմեն Աշոտյանին, ով տարիներ շարունակ ձեռնահասորեն ղեկավարում է նախարարությունը եւ իր ավանդը բերում այս կարեւոր ոլորտում նորանոր հաջողությունների կայացմանը:

Մեր գնահատանքն ենք բերում նաեւ կրթության բոլոր մշակներիդ եւ մաղթում, որ Բարձրյալն Աստված միշտ զորակից ու ապավեն լինի ձեզ ձեր ազգանվեր ծառայության մեջ:

Այս խորախորհուրդ պահին, երբ ամենքդ ուխտավորաբար եկել եք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին՝ Աստծո առաջ աղոթելու եւ հոգեպես նորոգվելու, մեր հայցն է առ Բարերար Տերը, որ զորացնի ձեզ Իր չնորհներով: Աղոթում ենք, որ Տիրոջ օրհնությամբ ուսման սերը անբաժան լինի մեր գավակների սրտերից: Թող ուսումնական նոր տարում առատորեն արդյունավորվեն Ձեր նվիրյալ ջանքերը՝ հանուն մեր նոր սերնդի որակյալ կրթության, հայրենյաց ավանդներով ու քրիստոնեական մեր արժեքներով դաստիարակության եւ մեր Հայրենիքի եւ ի սփյուռս աշխարհի մեր ժողովրդի խաղաղ ու երջանիկ ապագայի:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի չնորհը, սերը եւ ողորմությունը թող լինեն ձեզ բոլորիդ հետ: Ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2014Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում եւ շնորհավորում կրթության գործի նվիրյալներին, բոլոր մանկավարժներին, ուսանողներին եւ աշակերտներին Գիտելիքի օրվա առիթով:

Այսօր կրթական մեր բոլոր հաստատությունները դարձյալ իրենց լուսավոր հարկի ներքո են ընդունել մեր սիրասուն զավակներին՝ հրավիրելով քայլելու գիտելիքի ամբարման, հոգեւոր արժեքների ճանաչման եւ իմաստության ճանապարհներով: Մեր ժողովուրդը միշտ կարեւորել է գիտելիքը եւ ուսումը, որոնք առանցքային նշանակություն են ունեցել մեր կյանքում:

Այսօր եւս մեր երկրի հզորացման, հայրենյաց կյանքի բարօրության, մեր պետության սահմանների ամրության եւ մեր ժողովրդի պայծառ գալիքի համար անգնահատելի է ազգի ուսյալ զավակի եւ քաղաքացու դերը, քանզի սուրբգրային խոսքի համաձայն՝ տունը չինվում է իմաստությամբ եւ հաստատվում հանճարով, եւ գիտությամբ են շեմարանները լցվում ամենայն պատվական հարստությամբ եւ բարիքով (Առակներ 24:3-4):

Սիրելինե՛ր, Մեր հայցն է առ Աստված, որ ուսման սերը անբաժան լինի մեր զավակների սրտերից, եւ ուսումնական նոր տարում առատորեն արդյունավորվեն մեր մանկավարժների նվիրյալ ջանքերը՝ հանուն մեր նոր սերնդի որակյալ կրթության, հայրենյաց ավանդներով ու քրիստոնեական մեր արժեքներով դաստիարակության եւ մեր Հայրենիքի եւ ի սփյուռս աշխարհի մեր ժողովրդի խաղաղ ու երջանիկ ապագայի:

---

[1] «Էջմիածին», 2014, Թ, էջ 5:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի չնորհը, սերը եւ ողորմութիւնը թող լինեն ձեզ բոլորիդ հետ: Ամեն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԲԵՐԴԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(13 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

«Զօրութիւն սուրբ խաչի Քո, Քրիստոս,
որ կանգնեցեր ի փրկութիւն աշխարհի,
սա պահեսցէ զմեզ յամենայն փորձութենէ»:
Սահակ Գ Ձորափորեցի կաթողիկոս
Շարական

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ՝
Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու զավակներ,
Պատվարժա՛ն հյուրեր եւ բոլոր ներկաներ:

Այսօր մեր երկրի այս գողտրիկ աշխարհում, Բերդ քաղաքի նորակառույց եկեղեցում հավաքվել ենք տոնախմբելու Խաչվերացը եւ տոնի պատշաճ խորհրդով կատարելու եկեղեցու օծումը:

Խաչվերացը է դարից ի վեր սեպտեմբերյան այս օրերին մեծ չուքով նշում է քրիստոնեական ողջ աշխարհը: Տոնի անվանումը՝ «Խաչվերաց», նշանակում է «խաչը վեր բարձրացնել»: Շուրջ 1400 տարի առաջ պարսկա-բյուզանդական մեծ պատերազմում Երուսաղեմից գերեվարվեց մեր Տիրոջ խաչափայտը: Տարիներ անց Հերակլ կայսեր գլխավորությամբ բյուզանդական զորքը, որի կազմում մարտնչում էր նաեւ հայկական զորագունդ, հաղթանակեց եւ վերադարձրեց խաչափայտը: Վերադարձի ճանապարհն անցավ նաեւ Հայաստանով: Դեպի Երուսաղեմ դարձի ողջ ճանապարհին, ինչպես եւ Հայաստանում, մարդիկ ամենուր ուրախությամբ երկրպագում էին փրկական խաչին, փորձում էին մոտենալ, որ տեսնեն, բայց քանի որ բազմությունն անափ ծովի էր նման, խաչափայտը տանողները ժամանակ առ ժամանակ այն վեր էին բարձրացնում, որպեսզի հեռվում գտնվողները տեսնեն, մխիթարվեն ու երկրպագեն:

[1] «Էջմիածին», 2014, Թ, էջ 9:

Այսօր մենք մեր հոգիներում ենք պանծացնում Տիրոջ խաչը, քանզի մեր Տերը մարդկանց փրկության համար հանձն առավ խաչ բարձրանալ եւ խաչի վրա հեղած արյամբ փրկեց մեզ դատապարտության անեծքից եւ չնորհեց հավիտենական կյանքը: «Արդարեւ, Նրա աստվածային զորությունը մեզ չնորհեց ամեն ինչ, որ վերաբերում է կյանքին եւ աստվածապաշտությանը՝ ճանաչեցնելով մեզ Նրան, ով կանչեց մեզ Իր փառքին եւ առաքինությանը» (Բ Պետր. Ա 3), - բարձրագոչ հայտարարում է Պետրոս առաքյալը: Նաեւ է դարի Հայոց կաթողիկոս Սահակ Ջորափորեցին խաչվերացի չարականում օրհնաբանում է՝ ասելով. «Սուրբը խաչիդ զորությունը, Քրիստո՛ս, որ կանգնեցրիր աշխարհի փրկության համար, թող պահպանի մեզ ամեն փորձությունից»: Այս աղոթքով եւ մաղթանքով Մենք, սիրելինե՛ր, ձեր աղոթակցությամբ այսօր օծեցինք նորակերտ այս եկեղեցին, որպեսի խաչի պահապան թեւերի ներքո պաշտպան կանգնի մեր բազմաչարչար հայրենիքի սահմաններին, նաեւ բարեբեր Տավուշ աշխարհին եւ օրհնի խաղաղ կյանքը Տավուշի մեր զավակների:

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, խաչը մեզ համար Տիրոջ խոսքով ապրելու հանձնառություն է: Խաչն արդարություն է, քանզի նրանով արդարացանք, խաչը ճշմարտություն է, քանզի նրանով ճանաչեցինք Աստծո ճշմարիտ սերը արարածներիս հանդեպ: Խաչով մենք արտահայտում ենք այս աշխարհում մեր կոչումն ու առաքելությունը, մեր հավատը կյանքի հանդեպ, մեր հավատը հավիտենական կյանքի հանդեպ: Խաչը նաեւ հաղթանակի նշան է քրիստոնյաներիս համար: Այս վստահությամբ ու ոգով է ապրել մեր ժողովուրդը՝ տերունական խաչը դարձրած վահան փորձությանց դեմ, օրհնություն եւ պահպանություն իր կյանքի, իր հույսերի ու ձգտումների: Հավատավոր այս հոգով ու սրտով դուք՝ մեր ժողովրդի տավուշեցի զավակունք, ապրում եք այս տարածաշրջանում, որ եղել ու շարունակում է լինել քրիստոնեական ոգու անառիկ բերդամրոց: Շինականի, գիտնականի, զինվորի տքնության արդար քրտինքով եւ ի սեր Հայրենիքի թափված արյամբ է շաղախված այս հողը, որով այն սուրբ ու նվիրական է: Այստեղ ապրող յուրաքանչյուր հայորդի զինվորն է իր հայրենի հողի: Այսօր Մենք եկել ենք այստեղ Մեր օրհնությունն ու գնահատանքը բերելու ձեզ, որ ձեր արիությամբ ու քաջությամբ անառիկ եք պահում մեր հայրենյաց սահմանները, եւ խաղաղ՝ հայ կյանքը Հայրենիքում: Եկել ենք նորաօծ այս եկեղեցու կամարների ներքո ի խորոց սրտի հայցելու Տիրոջ սուրբ խաչի պահպանությունը մեր սահմանամերձ քաղաքների

ու գյուղերի խիզախ ու արի հայ բնակչության ու մեր երկրի սահմաններն անսասան պահող քաջազուն հայ զինվորների համար:

Հայրենիքի սահմանների պահպանությունը նույնպես խաչի ճանապարհ է, հանճնառություն, որում դուք, սիրելինե՛ր, չեք թերանում՝ հակառակ բոլոր դժվարությունների: Այսօր նորակերտ այս եկեղեցին եւս մեկ հաղթական խաչ է խոյացնում երկինք՝ նրա աչխարհակեցույց թեւերի ներքո համախմբելու եւ զորացնելու ձեզ՝ Աստծուց օրհնյալ ձեր երկրամասը չենացնելու, ձեր իղձերը կյանքի կոչելու, բարեչեն ձեր կյանքը կերտելու համար, որպեսզի ինչպես էլ փոխվեն իրավիճակները, հավատավոր մեր ժողովրդով կանգուն ու աննահանջ մնան մեր հայրենի սահմանները: Մենք հավատում ենք, սիրելինե՛ր, որ եկեղեցին միշտ լեցուն պիտի լինի հավատացյալ ժողովրդով ու ջերմեռանդ աղոթքով, եւ Տավուշ աչխարհի դարավոր վանքերի կողքին այս եկեղեցին պիտի դառնա սիրելի սրբավայր եւ ուխտատեղի: Թող բարեպաշտ հայորդյացդ խնդրանքն ու հայցը ընդունելի լինեն մեր Տիրոջ կողմից, եւ ուխտն ի կատար, որ միշտ խաղաղ, բարօր ու երջանիկ լինի ձեր կյանքը, խնդությունն ու ուրախությունը թեւածեն ձեր հոգիներում, միշտ ժպիտ լինի ձեր եւ ձեր զավակաց շուրթերին: Ձեր աղոթքներում հիշեք նաեւ եկեղեցու հանգուցյալ բարերարին՝ երկրային կյանքից անժամանակ հեռացած ամերիկահայ Ջոն Սթիվենսին, որպեսզի նրա հոգին հանգչի խաղաղության ու հանգստության մեջ եւ մխիթարություն գտնի երկնքում:

Մենք գնահատանքով եւ օրհնությամբ ենք հիշում աստվածահաճո այս նախաձեռնության՝ Սուրբ Հովհաննես եկեղեցու կառուցման բարերար լուսահոգի Ջոն Սթիվենսին: Հանգուցյալ բարերարի հետ առիթ ենք ունեցել ծանոթանալու դեռ տարիներ առաջ, երբ մեկնել էինք ԱՄՆ Արեւմտյան Հայոց թեմ հովվապետական այցելությամբ, որի ընթացքում բարերար հայորդին իր ազնիվ ցանկությունը հայտնեց Մեզ՝ եկեղեցի կառուցելու հայրենի հողում: Մեր առաջարկով Բերդ քաղաք այցելելուց հետո ազնիվ բարերարը կամեցավ, որ Ամրամ իշխանի բերդի հարեւանությամբ բարձրանա մեծ ու հիասքանչ այս եկեղեցին: Այսօր իրականություն դարձավ երազանքը լուսահոգի պարոն Սթիվենսի, որի հիշատակին խունկ, աղոթք եւ բյուր օրհնություն թող լինի:

Սիրելի՛ բարեպաշտ հայորդիներ, հոգու ուրախություն է Մեզ համար նորակառույց եկեղեցու օծման հանդիսությանը ողջունելու ներկայությունը պետական պաշտոնյաների՝ գլխավորությամբ Հայաստանի Հանրապետության հարգարժան նախագահ տիար Սերժ Սարգսյանի՝ մաղթելով, որ Տիրոջ չնորհով հաջողությամբ պսակվեն եւ արդյու-

նավորվեն իր ջանքերը՝ ի սեր հայրենյաց խաղաղության, առաջընթացի ու բարօրության:


Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Տավուշի թեմի բարեջան առաջնորդ Տ. Եզնիկ արքեպիսկոպոս Պետրոսյանին եւ թեմի ողջ հոգեւոր դասին: Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ ձեր ծառայությունը սահմանամերձ տարածքներում մեծապես գնահատված է հավատավոր մեր ժողովրդի կողմից: Ուրախ ենք տեսնել, որ, որպես քաջ հովիվ, առանց տրտունջի եւ վերապահության, նախանձախնդիր կերպով ամենօրյա ձեր հովվական առաքելությունն եք իրականացնում՝ մշտապես ներկա լինելով մեր ժողովրդի կյանքում թե՛ ուրախության եւ թե՛ տխրության, թե՛ լարված հակամարտության եւ թե՛ հարաբերական խաղաղության պայմաններում: Աղոթում ենք, որ Տերը հանապազ աջակից եւ հովանավոր լինի ձեզ ու օրհնի ձեր ջանքերը՝ հանուն մեր Եկեղեցու պայծառության:

Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում ԱՄՆ Արեւմտյան Հայոց թեմի առաջնորդին, Թեմական խորհրդին եւ հավատավոր ժողովրդին՝ եկեղեցաշինության աստվածահաճո այս ծրագրի իրականացմանն իրենց գովարժան զորակցությունը բերելու համար: Այս նորաշուք եկեղեցին կերտելու նախանձախնդիր ջանքերի համար Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ճարտարապետ տիար Արտակ Ղուլյանին, «Այգեձոր» շինարարական կազմակերպության գործադիր տնօրեն տիար Արամայիս Որսկանյանին եւ բոլոր շինարարներին:

Սուրբ Հովհաննես եկեղեցու օծման այս հիշարժան օրվա եւ խաչվերացի բերկրալի տոնի առիթով Մենք նորակառույց եկեղեցուն ենք նվիրում Տիրոջ խաչելության սրբապատկերը, որի առջեւ հավատավոր հայորդիք պիտի աղոթեն եւ խաչի պարծանքն ու փառաբանությունը անմար պահեն իրենց հոգիներում՝ մշտապես նորոգվելով ու զորանալով Փրկիչ Հիսուս Քրիստոսի կենարար խաչի հաղթական զորությամբ:

Մեր աղոթքն ու մաղթանքն է, որ Սուրբ Հովհաննես Մկրտչի բարեխոսությամբ մեր Տերը Իր սուրբ խաչի կենարար օրհնության ներքո պահպանի Բերդ քաղաքը, Տավուշ աշխարհը՝ հավատավոր իր բնակչությամբ, մեր ժողովրդին զորացնի արդար ու բարի գործերում, շնորհի ուրախ հոգով, որդիների եւ դուստրերի հետ վայելելու իրենց արդար վաստակը, այլեւ խաղաղություն եւ անսասանություն պարգեւի սահմանապահ մեր բոլոր զավակներին:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, խաղաղությունն ու շնորհները ամենքիդ հետ լինեն, ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ» ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

(19 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության,
Մեծարգո՛ վարչապետ Հայաստանի Հանրապետության,
Սիրելի՛ Վեհափառ եղբայր, հոգեւո՛ր հայրեր,
Պատվարժա՛ն մասնակիցներ համաժողովի,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հոգու բերկրությամբ եկել ենք ողջունելու ձեզ «Հայաստան-Սփյուռք» հինգերորդ համաժողովի առիթով եւ Հայրապետական Մեր օրհնությունը բերելու համաժողովի աշխատանքներին:

Ուրախ է Մեր հոգին, որ աշխարհասփյուռ մեր համայնքներից, Արցախից ու Հայաստանից վերստին համախմբվել եք՝ միասնաբար, պատրաստակամ ու հանճնառության ոգով քննության առնելու մեր կյանքի հրատապ խնդիրները, որոնք անհրաժեշտ ուշադրության եւ վճիռների կարիքն ունեն ինչպես Հայրենիքում, այնպես եւ Սփյուռքում: Նույն տեսիլքն ունենք՝ պաշտպանված ու զորեղ, բարօր ու զարգացող դարձնել մեր Հայրենիքը եւ ապահով, չեն ու կենսունակ պահել Սփյուռքը: Այս նպատակների համար մեր ժողովուրդը մեծ զոհողություններ է հանճն առել, միավորվել ազգաշահ ու հայրենաշեն ծրագրերի շուրջ, որոնցում կարեւոր դեր են ունեցել նաեւ «Հայաստան-Սփյուռք» համաժողովները:

Հայրենիքի եւ Սփյուռքի միջեւ կապերի ամրապնդումը եւ սերտ գործակցությունը մեր կյանքի հրամայականն է: Այս գիտակցությամբ մեր ժողովուրդը, թեեւ աշխարհասփյուռ, շարունակում է մնալ մեկ ամբողջություն, հոգեւոր մեկ ներաշխարհ՝ նույն ինքնությամբ, ճգտումներով ու հույսերով: Այսպիսի միասնության մեջ է իրական

[1] «Էջմիածին», 2014, Թ, էջ 19:

աստվածային ներկայությունը եւ մեր կյանքին երկնառաք զորակցությունը, ինչպես որ Իր անունով համախմբածներին խոստանում է մեր Տերը Հիսուս Քրիստոս (Հմմտ. Մատթ. 18.20):

Հայրենիքի հզորացման եւ Հայրենիքով մխաբանման առանցքում են մեկտեղվում մեր ժողովրդի լուսավոր գալիքի եւ հարատեւության հույսերն ու հեռանկարները: Այսօր Հայաստանի եւ Արցախի՝ ամեն առումով առաջընթացի եւ անվտանգության ու Հայրենի մեր երկրի պաշտպանվածության հրամայականն է հառնած ազգային մեր անդաստանում: Վերջին շրջանում հայ-ադրբեջանական պետական սահմանին եւ ղարաբաղա-ադրբեջանական ուժերի չփման գծում հրադադարի խախտման բազմաթիվ դեպքերը, սահմանամերձ բնակավայրերի տեւական գնդակոծությունները ցույց տվեցին, թե որքան փխրուն է մեր երկրի խաղաղությունը: Մեր Հայրենիքի ու ժողովրդի ապահով ու խաղաղ կյանքին սպառնացող վտանգը կրկին եւ առավել չեչտում է մեր համախմբված ու միաբան լինելու անհրաժեշտությունը: Հիրավի, մեր երկրում տակավին առկա են անկատարություններ, անարդարության դրսեւորումներ, զանցանքներ ու հանցանքներ, որոնք, սակայն, չպիտի ստվերեն մեր Հայրենասիրությունը եւ Մայր Հայրենիքի հանդեպ որդիական սերն ու հավատարմությունը, այլ առավել մղեն մեզ մեր ազգն ու պետությունը զորացնելու նախանձախնդրության ու միասնական ջանքերի: Այս վստահությամբ ենք Մեր խոսքն ուղղում ձեզ, սիրելի՛ ներկաներ:

Մեր այս հավաքը կարեւորվում է նաեւ նրանով, որ գումարվել է նախօրյակին Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի, որը ազդակ պիտի դարձնենք մեր ժողովրդի կյանքում հոգեւոր մեր արժեքների անխաթարության եւ ազգային ինքնության գիտակցության զորացման, միասնականության եւ լուսավոր մեր գալիքը կերտելու կամքի ու լավատեսության ամրապնդման: Այս նպատակին պետք է ուղղվեն պետական, եկեղեցական, ազգային, անհատական մեր անմնացորդ ու ամբողջական ջանքերը, ուժերն ու ծրագրերը, որոնցում դուք նույնպես ունեք անմիջական մասնակցություն: Պիտի չարունակենք նաեւ մեր համակարգված գործունեությունը՝ ի խնդիր Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման եւ մեր արդար դատի պաշտպանության: Հայ Եկեղեցին իր նվիրապետական աթոռներով, իր բոլոր կառույցներով օրակարգային առաջնահերթություններից է նկատում մեր ժողովրդի դեմ գործված Ցեղասպանության միջազգայնորեն ճանաչման խնդիրը: Մեզ բոլորիս քաջալերում է այն իրողութ-

յունը, որ վերջին տասնամյակների ընթացքում բազմաթիվ երկրներ, պետական կառույցներ եւ կրոնական ու հասարակական կազմակերպություններ ճանաչել են եւ շարունակում են ճանաչել Հայոց ցեղասպանությունը՝ գիտակցելով, որ հայ ժողովրդի նկատմամբ արդարության իրագործումը էական է ավելի արդար ու խաղաղ աշխարհի կառուցման համար: Մեր Եկեղեցում ընթանում են նաեւ աշխատանքներ՝ ուղղված մեր անմեղ զոհերի սրբադասմանը, որը եկեղեցական կանոնով ու ծեսով պիտի կատարենք 2015 թ. ապրիլին՝ հավատով, որ մեր նահատակների հավատքի սխրանքը անմար հիշատակով պիտի հաստատի ու զորացնի մեր սերունդներին մարտիրոսյալ մեր նախնյաց սրբալույս հիշատակը մշտավառ պահելու, քրիստոնեական հավատքի զորացման, հայրենանվիրումի, ազգային արժեքների պահպանության ճգտումներում: 100-ամյա մեծ տարելիցին մեր անմեղ զոհերի հիշատակը հարգելու լավագույն գործը կլինի, որ 2015 թ. բազմանան մեր ընտանիքները եւ աճեն զավակներով: Այս կոչն ենք ուղղում մեր ժողովրդին, երիտասարդ մեր ընտանիքներին:

Այսօր աշխարհայնացման ընթացքների, այլակարծությամբ ազդված կեղծ ու սին գաղափարների առկայության պայմաններում անհրաժեշտ է, որ զորացնենք նաեւ մեր խնամքն ու ջանքերը՝ Սփյուռքում եւ Հայրենիքում մեր զավակներին հայրենյաց ավանդներով կրթելու համար, որպեսզի ապրեն ազգային ջերմ ու կենդանի զգացումով, ազգի, Հայրենիքի սիրով եւ ընթանան հավատքով ու տիրավանդ պատվիրաններով:

Ազգային մեր կյանքի մտահոգություններից են շարունակում մնալ հակամարտության իրավիճակներում հայտնված մեր ժողովրդի զավակաց խնդիրները: Տագնապահարույց է իրավիճակը Մերձավորարեւելյան տարածաշրջանում, պատերազմական դրություն է Ուկրաինայում, որտեղ ունենք հայկական համայնքներ: Հատկապես Իրաքում եւ Սիրիայում իսլամիստների բռնություններն ու ահաբեկչական գործողությունները սպառնալիք են դառնում խաղաղ բնակչության, նաեւ քրիստոնեական, այդ թվում՝ հայ համայնքների համար՝ ստիպելով լքել իրենց բնակավայրերը: Սիրիայում հակամարտության բռնկման առաջին օրերից հորդորել ենք Սփյուռքի մեր Թեմակալներին՝ հնարավոր բոլոր միջոցները գործադրելու՝ պետական, դիվանագիտական, միջազգային, էկումենիկ, իրավապաշտպան կառույցների եւ կազմակերպությունների առջեւ բարձրաձայնելու խնդիրը, որպեսզի անհրաժեշտ քայլերի ձեռնարկումով տեղահանված ազգաբնակչությունը


հնարավորինս չուտ կարողանա վերադառնալ սեփական օջախները եւ շարունակել իր խաղաղ կյանքը: Միաժամանակ կոչ ենք ուղղել՝ առաւել ջանքեր ներդնել եւ քաջալերել հավատացյալ հայորդիներին՝ բարոյական ու նյութական աջակցությամբ սատարելու իրենց քույրերին ու եղբայրներին, որպեսզի հաղթահարեն փորձությունները, ինչպես նաեւ իրականացրել ենք Մայր Աթոռի ծրագրերը՝ օգնելով տուժած համայնքներին, Հայրենիք ներգաղթած հայորդիներին:

Սիրելինե՛ր, եղբայրասիրության, հայրենասիրության ու միաբանության ոգին, խաղաղասիրության, արդարության ու ճշմարտության արժեքները մեր հոգուն միշտ զորություն են տալու, մեր բազկին՝ ուժ եւ մտքին՝ իմաստություն: Այդ արժեքներով պիտի չենացնենք մեր Հայրենիքը, կենսունակ պահենք Սփյուռքը, հույս ու ապավեն դառնանք եւ նեցուկ լինենք միմյանց՝ ղժվարությունները հաղթահարելու եւ մեր իղձերն իրագործելու:

Աղոթքով առ Աստված արդյունավոր ընթացք ենք մաղթում այս համաժողովի աշխատանքներին:

Հայցում ենք Աստծո օրհնությունը մեր Հայրենիքին եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի կյանքին:

Թող Աստծո սերը, չնորհները լինեն մեզ հետ եւ բոլորի. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՊԻՍԿՈՊՈՍԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 16 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զի գնասցես ի կատարումն վաստակոց քոց,
վոր ընկալար ի մշակել վայգի Տեառն վորութեանց»:
(Մաշտոց ձեռնադրութեան եպիսկոպոսի)

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, մեծ ուրախություն եւ խնդություն ենք ապրում այսօր ամենքս: Եպիսկոպոսական ձեռնադրության եւ օծման սրբազան արարողությամբ վերստին Հոգեգալուստ է մեր Սուրբ Եկեղեցում: Հավատացյալներին բաշխվող երկնառաք պարգեւներին այսօր հավելվեցին Սուրբ Հոգու արփիափայլ, առատ չնորհները, որոնք հեղվեցին նորաօծ եպիսկոպոսների հոգիներին եւ սրտերին: Այս պահին չարականագրի նման մենք եւս ձայնում ենք. «Ուրախ լեր, Սու՛րբ Եկեղեցի», որովհետեւ ընտրյալ քո սպասավորների միջից եպիսկոպոսներ են հառնում՝ հանձնառությամբ կրելու հոգեւոր տեսչի եւ առաջնորդի պատասխանատու եւ ծանր լուծը: Առաքյալը բազմիցս խոսում է եպիսկոպոսի կոչման բարձրության եւ ծառայության մեծ պատասխանատվության մասին, քանզի նրանց առաջնորդության ներքո են արդյունավորվում հոգեւորականների բարեխնամ սպասավորությունը, Սուրբ Գրքի կենարար խոսքով հավատացյալներին մատուցվող հոգեւոր սնունդը, խրատներն ու հորդորները, Եկեղեցու վարչական գործառույթները: Եպիսկոպոսը ձեռնադրության կանոնի մեջ համարվում է զորությունների Տիրոջ այգու՝ Եկեղեցու վաստակաբեռն մշակը, որի սպասավորությամբ ծաղկում ու պտղավորվում է Եկեղեցին բազում արդյունքներով: Ինչպես քիչ առաջ ընթերցեցինք,

[1] «Էջմիածին», 2014, ԺԱ, էջ 11:

եպիսկոպոսության պատիվը սրտի մաքրության մեջ է: «Երանի նրանց, որ սրտով մաքուր են» (Մատթ. ե 8),- ուսուցանում է Փրկիչ մեր Տեր-ը Լեռան քարոզում: Սրտի մաքրությունն է հիասքանչ երաշխիքը աստվածատեսության: Այսպիսի աստվածատեսներ պիտի լինեն հատկապես եպիսկոպոսները՝ Տիրոջ այգու մշակները: Արդարեւ, աստվածատեսության ճանապարհը բարի ընթացքն է, հավատավոր գործերը, եկեղեցանվեր խոնարհ ու արդյունավոր սպասավորությունն է, Քրիստոսի մշտական ներկայության ջերմ զգացողությունը, աղոթական խոկումներն են, հավատացյալների հանդեպ հոգածությունն ու անմնացորդ սերը: Հավատացյալների աստվածատեսության ուղին անցնում է եպիսկոպոսի վաստակի, քարոզչության, եկեղեցու կարգավորության, հոգեւոր ծառայությանց կանոնակարգման համար ներդրվող երկնահաճո ջանքերի միջով:

Սիրելինե՛ր, այսօր եպիսկոպոսության արժանացողները բարի վարուց վկայությունն ունեն հավատացյալ հայորդիների, թեմական վարչականների ու վկաների՝ որպես հեզ, բարեսեր, աստվածասեր, օրինապահ եւ լի խոնարհությամբ անձեր: Երեկ մեր ձեռնադրյալ եպիսկոպոսները Իջման Սուրբ Սեղանի առջեւ ծնրադրությամբ խոստացան եւ ուխտեցին հաստատակամ ընթանալ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վարդապետության եւ պատվիրանների համաձայն, բարի սպասավորությամբ ուսուցանել եւ խրատել իրենց խնամքին հանձնված հավատացյալներին եւ որպես Քրիստոսահաստատ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբան՝ ամենայն ջանք գործադրել համայն հայության հոգեւոր կենտրոնի զարգացման եւ պայծառության համար:

Պատմության հոլովույթներում եպիսկոպոսների քաջեռանդ ու կորովի առաջնորդությամբ է մեր ժողովուրդը, իբրեւ Քրիստոսի Սուրբ Եկեղեցի, զարգացրել գիտությունն ու մշակույթ, ստեղծել գիր ու դպրություն, կերտել վանք ու եկեղեցի, հաղթահարել դժվարին ժամանակների փորձությունները, վերապրել Հայոց ցեղասպանությունը, պահպանել մշտալույս հույսն ու հավատքը, հասել ազատ կյանքի, հայոց անկախ պետականության իր երազանքի իրականացմանը: Առաքեալահաստատ մեր Սուրբ Եկեղեցին եպիսկոպոսների գլխավորությամբ ու սպասավորությամբ, վարդապետաց, քահանայից ու սարկավագաց դասի ծառայությամբ, աստվածասեր մեր զավակների աջակցությամբ այսօր էլ բարվոք շարունակում է քրիստոսապատվեր իր առաքելությունը, հոգեխնամ ծառայությունը, ի սփյուռս աշխարհի ջանքեր գործադրում հայ կյանքի բարօրության ու առաջընթացի համար: Մեր

հոգեւոր-եկեղեցական կյանքում բազում են մարտահրավերները: Եւ այսօր էլ մեր եպիսկոպոսները պիտի անհոգնաբեկ ջանքեր գործադրեն, որպեսզի հայորդիք առավել հաղորդակից լինեն եկեղեցական մեր սրբազան ավանդույթներին, վերարժեւորեն մեր անգին հոգեւոր ժառանգությունը, աղանդների մոլորեցնող ուսմունքների ազդեցությամբ չչեղվեն ճշմարտությունից, անսայթաք ընթանան Քրիստոսի պատվիրանների համաձայն, անխաթար պահպանեն լուսավորչահաստատ հավատքը, ապրեն քրիստոնեական, մարդկային բարձր արժեքներով: Առկա խնդիրների ու դժվարությունների հաղթահարման համար կենսականորեն կարեւոր է, որ մեր ժողովրդի զավակունք համախումբ մնան մեր Սուրբ Եկեղեցու հովանու ներքո՝ ամուր առ Աստված եւ Հայրենին սիրո ու նվիրումի մեջ եւ ընթանան փրկության ճանապարհներով:

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, այսօր եպիսկոպոսության բարձր աստիճանին արժանացող եկեղեցականները իրենց խոնարհ ու ծառայասեր նկարագրով, անձնվեր սպասավորությամբ արժանացել են հավատավոր հայորդիների սիրուն ու հարգանքին եւ ստանձնել պատասխանատու պաշտոն ու գործունեություն տերունապատվեր հոգեւոր առաքելության մեջ: Հոգու ուրախությամբ ձեզ ենք ներկայացնում եպիսկոպոսացյալ մեր սիրելի հոգեւոր հայրերին: Տ. Նարեկ եպիսկոպոս Բերբերյանը ծնվել է Բեյրութում, ուսանել Սուրբ Էջմիածնի Հոգեւոր ճեմարանում, ուսումնառությունը շարունակել Նյու Յորքի «Սուրբ Վլադիմիր» Ուղղափառ աստվածաբանական ճեմարանում, «Սուրբ Ներսես» հոգեւոր ընծայարանում: Նա տարիներ շարունակ հովվական արդյունալի ծառայություն է իրականացրել ԱՄՆ Արեւելյան Հայոց թեմում, եւ, որպես փորձառու ու վաստակաշատ եկեղեցական, Բրազիլիայի Հայոց թեմի կողմից ընտրվել է թեմակալ առաջնորդ: Տ. Աբգար եպիսկոպոս Հովակիմյանը ծնվել է Բաթումի քաղաքում, սովորել Սուրբ Էջմիածնի Հոգեւոր ճեմարանում, իր ուսումնառությունը շարունակել Ջալցբուրգի աստվածաբանական համալսարանում, պաշտոնավարել Վիրահայոց թեմում՝ որպես առաջնորդական փոխանորդ, ապա եղել Բուլղարիայի եւ Ռումինիայի Հայոց թեմի առաջնորդը: Սրբազան Հայրը Հոգեւոր սպասավորության իր տարիների փորձառությամբ եւ գնահատարժան կարողություններով այսօր առաջնորդում է Կանադայի Հայոց թեմը: Տ. Վարդան եպիսկոպոս Նավասարդյանը ծնվել է Երեւանում, սովորել Շիրակի Հոգեւոր ընծայարանում, ապա՝ Գեւորգյան Հոգեւոր ճեմարանում: Սպասավորել է Մայր Աթոռում՝ որպես լուսարարապետի օգնական, ապա եղել Ավստրալիայի եւ Նոր

Զելանդիայի Հայոց թեմի առաջնորդական փոխանորդը եւ Սիդնեյի հոգեւոր հովիվը, այնուհետ ստանձնել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրենի պաշտոնը եւ մինչ այսօր մեծ եռանդով չարունակում է գովելի ջանքեր բերել մեր նոր սերնդի քրիստոնեական կրթության ու դաստիարակության կարեւոր առաքելության մեջ:

Սիրելի՛ Սրբազաններ, Մեր հորդորն ու պատգամն է, որ հաստատուն պահեք ձեր ուխտը, գործեք եւ ծառայեք մեր Տիրոջ եւ Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի լուսյա օրինակով եւ ձեր ազգօգուտ ու եկեղեցանվեր գործերին հավելեք նորանոր ձեռքբերումներ: Մաղթում ենք, որ մարգարեական նախանձախնդրությամբ, առաքելական հաստատակամությամբ, Տիրոջ խոսքը մատուվակող ավետարանիչների քաջալերությամբ, մեր երանելի սուրբ հայրերի լուսաշավիղ օրինակով միշտ փութեռանդ իրականացնեք ձեր առաքելությունը, որպեսզի հավետ չեն ու պայծառ լինի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին, մխիթարությամբ սփոփյալ՝ սրտերն ու հոգիները հավատավոր Մեր սիրելի զավակների, եւ նոր ձեռքբերումներով ու իրագործումներով զարդարվի ազգային, հոգեւոր-եկեղեցական առաջընթացը հանուր աշխարհասփյուռ հայության:

Ի խորոց սրտի աղոթում ենք առ Ամենակալն Աստված, որ Երկնավոր Տիրոջ կողմից Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքյալների ձեռամբ հիմնադրված, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի հաստատած Հայ Եկեղեցին, որը փրկության տապանն է համայն հայության, պայծառացյալ պահեք ձեր կորովի ծառայագործությամբ: Այլեւ հայցում ենք, որ Փրկիչ մեր Տերը զորակից եւ աջակից լինի ձեզ՝ անսայթաք ընթանալու տերունապատվեր ծառայության չավիղներով, Սուրբ Հոգու առաջնորդությամբ նոր հաջողություններ հավելելու մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում տարիների ձեր վաստակին: Թող Բարձրյալի օրհնությամբ հավիտյանս չողա փառքը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, համայն հայության Քրիստոսակերտ հոգեւոր կենտրոնի՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի, ու թող առավել զորանա Հայրենիքը մեր եւ ազգս հայոց՝ Երկնավորի ամենախնամ Սուրբ Աջի հովանու ներքո հարատեւի խաղաղության ու չինության մեջ այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

Տարեմուտի խորախորհուրդ երեկոն է: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր սերը եւ օրհնությունն ենք բերում ձեզ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս:

2015 թվականը սրբության լույսով է բացվում մեր կյանքում: Նչելու ենք 100-ամյա տարելիցը Հայոց ցեղասպանության: Ապրիլի 23-ին սրբոց չարքն ենք դասելու մեր անմեղ նահատակներին: Վերարժեւորելու ենք մեր նահատակ զավակների սխրանքը, ովքեր չուրացան Քրիստոսին, հայրենիքն ու ազգը, որ հավատարմության բարձրագույն օրինակով սրբության վկայություն է: Կատարելու ենք նաեւ մյուռոնօրհնության սրբազան արարողությունը, որպեսզի աստվածային շնորհաբաշխումով պայծառանա ու զորանա հավատքի մեր կյանքը, եւ ի սփյուռս աշխարհի մեր ժողովրդի զավակները Աստծո հովանու եւ պահպանության ներքո ապրեն սիրով ու միասնական, խաղաղության, ապահովության ու բարօրության մեջ:

Նոր տարվա սեմին վերստին փառք ենք մատուցում Տիրոջը, որ մեր ժողովուրդը իր հավատքի զորությամբ ուժականությունն ունի ժամանակների փորձություններն ու դժվարությունները հաղթահարելու, պետականություն կերտելու, արցախյան գոյամարտը հաղթանակով պսակելու եւ ի սփյուռս աշխարհի միախորհուրդ ու միասնական կյանքով իր ապագան կառուցելու: Լավատեսության ոգով բարի իղձեր ու նպատակներ ունենք հզորացնելու մեր հայրենիքը, մեր արդար դատը պաշտպանելու եւ բարօր, շեն ու պայծառ դարձնելու ազգային մեր կյանքը:

Խռովահույզ է այսօր աշխարհը. տագնապներ, ճգնաժամեր, հակամարտություններ, որոնցից տուժում են նաեւ մեր երկիրն ու ժողովուր-

---

[1] «Էջմիածին», 2014, ԺԲ, էջ 9:

դը: Խնդիրներ, մարտահրավերներ կան հայրենական մեր կյանքում: Անկայուն է խաղաղությունը եւ մեր սահմաններում: Մեր Հայրենիքը ապահով, մեր սահմանները պաշտպանված, պետական-հասարակական մեր անդաստանը խաղաղության մեջ պահպանելու եւ համայն մեր ժողովրդի կյանքը չենացնելու պատասխանատվությունը ամենքիս է: Աստծո հետ, տերունապատվեր եղբայրասիրությամբ, միմյանց աջակից ու զորակից, հաշտության ու խաղաղության ոգով, միասնական ջանքերով ի գորու ենք նեղություններն ու դժվարությունները հաղթահարելու, ձեռքբերումներն ու հաջողություններն ամրագրելու եւ իրական դարձնելու մեր սրտերում փայփայած բոլոր բարի իղձերը:

Տարին նվիրական է սրբության լույսով: Տարին հրավեր է ազգային արթնության, կոչ է հոգեւոր նորոգության, ինքնամաքրման, պատգամ է հանճնառության, պատվիրան՝ սիրո եւ հավատքի գործերի: Զորանանք մեր կոչման եւ ծառայության մեջ, մեր նվիրումը, ջանքը եւ ամեն կարելիությունը բերենք ազգին, հայրենիքին, մեր Սուրբ Եկեղեցուն եւ մեր զավակներին փոխանցենք ծաղկուն ու զարգացող երկիր եւ քրիստոնեական արժեքներով ամուր ազգային կյանք:

Առ Աստված աղոթքով հայցում ենք, որ ազգս հայոց մնա Տիրոջ օրհնության ու շնորհների ներքո, հեռու լինի փորձություններից, Աստծո զորակցությունն ու Սուրբ Հոգու մխիթարությունը ապավեն լինեն բոլոր նեղյալներին ու վշտացյալներին, եւ Տիրոջ ամենախնամ Աչքի պահպանությունը հովանի լինի հայրենյաց պաշտպան մեր զավակներին եւ բոլոր նրանց, ովքեր տոնական այս պահին գտնվում են իրենց ծառայական պարտականությանց մեջ:

Աղոթք ենք բարձրացնում հակամարտությունների եւ պատերազմների դժվարությունները կրող ժողովուրդների, Մերձավոր Արեւելքում եւ Ուկրաինայում ապրող մեր ժողովրդի զավակների համար՝ խնդրելով, որ խաղաղությունն ու ապահովությունը չուտով հաստատվեն նրանց կյանքում:

Խաղաղություն, սեր եւ բարօրություն ենք մաղթում աշխարհին եւ համայն աշխարհասփյուռ մեր ժողովրդին, մեր Հայրենիքին, ձեր ընտանիքներին, սիրելի՛ զավակներ Մեր: Բարի տարի ամենքիդ, Աստծո առատ օրհնությունը՝ ձեր կյանքին եւ հույսերին: «Հույսով ուրախացեք, բարին խորհեցեք, համերաշխ եղեք, միմյանց հետ խաղաղություն պահեցեք» (Հմմտ. Հռ. 12.12, 16-18):

Շնորհավոր Նոր տարի:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(8 ՄԱՐՏԻ, 2015Թ.)[1]

Լուսո Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում սիրելի տիկնանց եւ օրիորդաց՝ մարտի 8-ի տոնական առիթով:

Գարնանային վերազարթոնքի այս օրերին մեծարում ենք մեր մայրերին, քույրերին ու դուստրերին՝ իրենց անզուգական առաքելության մեջ:

Արդարեւ, կանանց կոչմանց մեջ վեհագույնը մայրությունն է, որ խարիսխն է ընտանիքի: Անփոխարինելի է կանանց դերը ընտանիքների ամրության, քրիստոնեական արժեքներով եւ հայրենյաց ավանդներով մեր զավակներին կրթելու գործում՝ լինելով ու մնալով սիրո ու քնքշանքի, հավատարմության ու անձնուրաց նվիրումի խտացումը մեր կյանքում: Հավասար հնարավորությունների մեր դարում անուրանալի են նաեւ կանանց դերն ու բերած ավանդը գիտության, կրթության, տնտեսության եւ հասարակական կյանքի մյուս բոլոր բնագավառներում՝ նպաստելով մեր հասարակության բարօրությանն ու զարգացմանը:

Սիրելի՛ մայրեր, քույրեր ու դուստրեր, Մեր մաղթանքն է, որ երկնավոր Տիրոջ խնամքի ներքո հարստացնեք մեր կյանքը՝ լցնելով այն ձեր բարի գործերով, սիրով, հոգատարությամբ ու առաքինի օրինակով, քանզի սուրբգրային խոսքի համաձայն՝ «Առաքինի կինը թանկ է բոլոր գոհարներից»:

Թող Ամենակալն Աստված չնորհազարդի ձեզ հոգեւոր առաքինություններով եւ պարգեւի ընտանեկան խաղաղ ու ապահով կյանք, աննվազ երջանկություն ու անսպառ ուրախություն՝ ձեր ընտանիքների, զավակների ու սիրելիների հետ:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեսեանդ. Ամէն»:

---

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2015, մարտ Ա, թիվ 5 (433), էջ 1:

ՄԱՂԹԱՆՔՆԵՐ,
ԽՈՍՔԵՐ, ՔԱՐՈԶՆԵՐ,
ՈՒՂԵՐՁՆԵՐ,
ՊԱՏԳԱՄՆԵՐ



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԻՐՈՋ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՈՒԱԾԱՅԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 6 ՀՈՒՆՎԱՐԻ, 2015 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Որ ի հրեղէն աթոռ ընդ Հօր ես բնակեալ
եւ ի հրեշտակաց սպասաւորեալ, այսօր կամով Հօր
ի յերկրի երեւեցար մարմնով կուսական ծննդեամբ,
կՔեզ ընդ կօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք»
(Շարական Ս. Ծննդեան):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Շարականագրի աղօթամատոյց այս օրհներգով բերում ենք ձեզ մեր Տիրոջ եւ Փրկչի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան սքանչելի աւետիսը:

Երկնային բարձունքներում Ամենակալ Հօրն աթոռակից եւ հրեշտակներից սպասաւորեալ Աստուծոյ Որդին մարմնացաւ եւ աշխարհ եկաւ, որպէսզի ընդունենք փրկութեան յոյսն ու չնորհը եւ միշտ նորոգուող կեանքը, որ Փրկիչ մեր Տէրն է պարգեւում: Բեթղեհէմում ծնուած Մանուկը նոր սիրտ ու հոգի է բերում աշխարհին՝ ճանաչելու Աստուծոյ սէրը մարդկանց հանդէպ եւ այն դարձնելու արդարութիւն, խաղաղութիւն ու սէր միմեանց հանդէպ: Բերում է զօրութիւնը՝ փարատելու անյուսութեան խաւարները եւ երկրի վրայ հաստատելու սիրով լի այն կեանքը, որն ունի յաւիտենական կեանքի աւետիսը:

Սուրբ Ծննդեան աւետարանական պատումը մարդկութեան կեանքում Աստուծոյ ներկայութեան մեծ խորհուրդն է պատկերում: Բեղ-

[1] «Էջմիածին», 2015, Ա, էջ 5:

թեհէմի քարայրը նախատիպն է Սուրբ Եկեղեցու, հասարակ հովիւները եւ իմաստուն մոգերը աստուածպաշտութեան համար մէկտեղուած հաւատացեալներն են, իսկ մատուցուած ընծաները՝ առ Աստուած հաւատքով ապրուած բարի ու երկնահաճոյ կեանքն ու գործերը: Բեթղեհէմեան երկնակամարում Տիրոջ փառքի ծագումը, եւ լուսափայլ հրեշտակների հնչեցրած պատգամը երկնային հրաւէրն է աշխարհին՝ խաղաղութեան ու մարդկանց մէջ սիրոյ եւ հաճութեան, որոնց այսօր էլ փափագում է նեղութիւններով ու մարտահրաւէրներով բեռնաւորուած աստուածաստեղծ օրրանը մարդկութեան:

Նիւթատեխնիկական մեծ ձեռքբերումներ արձանագրած, գիտական բարձունքներ նուաճած ներկայ աշխարհում չեն դադարում կեանքի խաղաղութիւնն ու բարօրութիւնը խաթարող տագնապներն ու ցնցումները: Քաղաքական հակամարտութիւնները, ռազմական բախումները, խորացող ֆինանսական, տնտեսական ճգնաժամերը բերում են աւեր, վիշտ ու տառապանք, կարիքի եւ անապահովութեան նոր խնդիրներ: Մարդկային ըմբռնումներում խեղաթիւրուում են աստուածադիր հիմնարար սկզբունքները. մարդը չի ընկալուում որպէս Աստուծոյ պատկերով եւ նմանութեամբ ստեղծուած, կեանքը՝ որպէս երկնաշնորհ գերագոյն պարգեւ եւ մերձաւորի հանդէպ սէրը՝ որպէս աստուածնմանութիւն: Այս իրավիճակները եւ մտածողութեան այսպիսի աղաւաղումները հեռացնում են մարդուն հոգեւորից՝ առաջնորդելով աստուածամերժ ընթացքների՝ մարդու եւ ազգերի իրաւունքների ոտնահարման, ընտանիքի գաղափարի, բարոյական արժէքների աղճատման:

Հակառակ Աստուածային կամքին մարդու հակոտնեայ ընթացքների՝ մարդեղութեան մեծ խորհրդով Տէրը ցոյց տուեց, որ Իր անսահման սիրոյ ու խնամքի մէջ է աստուածաստեղծ մարդը, եւ երկրային գոյութիւնը բաժանուած չէ յաւիտենականութիւնից, իսկ մարդկութեան պատմութիւնը՝ Աստուծոյ ներկայութիւնից: «Ահա Ես ձեզ հետ եմ բոլոր օրերում՝ մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթ. ԻՀ 20),-ասում է Փրկիչ մեր Տէրը: Մարդկային կեանքում Փրկչի մշտական ներկայութիւնը նոր իմաստ է պարգեւում, բարձր ու վեհ բովանդակութիւն հաղորդում մարդու եւ աշխարհի ընկալմանը՝ բերելով մարդկանց՝ Աստուծոյ ժողովուրդ լինելու գիտակցութիւնն ու պատասխանատուութիւնը եւ հրաւէրը՝ մնալու եւ յարատեւելու «սիրեցէք միմեանց» Տիրոջ նոր պատուիրանի մէջ (Յովհ. ԺԳ 34): Մերձաւորի հանդէպ սէրը վեհացնում եւ արժեւորում է մարդուն եւ նրա գործերը, պահում աս-

տուածնմանութեան չնորհի մէջ եւ հանրութեան կեանքը հաստատում բարու մէջ: Միմեանց հանդէպ սիրով առաջնորդուող հասարակութիւնը կարող է բխեցնել կեանքը ոռոգող հոգեւոր ներուժի անսպառ աղբիւրներ, լինել ճշմարտապէս արդարամիտ եւ իրաւադատ, կարեկից ու ողորմած: Տէրունապատուէր այս ուղիով մարդկութիւնը կարող է ձերբազատուել աղէտաբեր իրավիճակներից եւ հոգսերից, դիմակայել նեղութիւններին, արդարութեամբ հարթել հակառակութիւնները եւ համերաշխ գոյակցութեամբ կերտել նոր օրը մարդկութեան կեանքի:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Սուրբ Ծննդեան օրհներգին ու փառաբանութեանը այսօր միախառնուում են մեր սրտաբուխ աղօթքները յանուն Հայոց ցեղասպանութեան մեր անմեղ նահատակների, ովքեր չուրացան Փրկչին, իրենց ինքնութիւնն ու սուրբ հաւատքը: Եղեռնի դառնաղէտ տարիների ամենադաժան փորձութեանց մէջ անգամ չլռեց Փրկչին ուղղուած՝ մեր ժողովրդի հոգու օրհներգը: Մեր Տիրոջ հետ գտանք ոգին եւ ուժը վերածննդի, պետականութիւն կերտեցինք, ազգային մեր կեանքը բարձրացրեցինք, մեր իրաւունքների համար պայքարեցինք հաւատով, որ արդարութեան եւ ճշմարտութեան ուղիները պիտի կերտեն բռնութիւնից զերծ, մարդասէր ու խաղաղ աշխարհ:

Հայոց ցեղասպանութեան ոճրից 100 տարի անց նոյն հաւատով ու վստահութեամբ չարունակում ենք մեր պայքարը՝ յանուն մեր արդար դատի, մեր խաղաղ կեանքի՝ չդադարող շրջափակման եւ պատերազմի վերսկսման պայմաններում: Այսօր մեր կեանքում առկայ բազմաթիւ հրամայականների ու խնդիրների առջեւ, սիրելինե՛ր, առաւել ջանք ու նուիրում ներդնենք, յանձն առնենք հայրենաշէն ու ազգաշէն ծրագրեր ու գործեր՝ ի սէր մեր ժողովրդի բարօրութեան, մեր երկրի հզօրութեան, մեր իղձերի իրականացման: Մեր կեանքը ապրենք հայրենեաց աւանդներով, հաւատարիմ՝ քրիստոնէական մեր արժէքներին, նիւթապաշտութեանը դիմակայելով աստուածպաշտութեամբ, չհամոզութեան դէմ դնելով Տիրոջ կողմից գովաբանուած ողորմութիւնը (Մատթ. ե 7), ուժի եւ ատիպողականութեան փոխարէն՝ քրիստոսապատուէր սէրը (Յովհ. ԺԳ 34-35), եսասիրութեան եւ չհագործման փոխարէն՝ բարի սամարացու նման՝ կարիքաւորին օգնելը (Ղուկ. Ժ 30-37), եղբայրատեացութեան փոխարէն՝ առաքեալի յորդորած եղբայրսիրութիւնը (Հռոմ. ԺԲ 10) եւ մեր մեծերի օրինակով՝ «ես»-ի փոխարէն՝ «ազգ»-ը: Բարգաւաճենք եւ զօրանանք ընտանիքներում նոր զաւակների ծնունդով, ազգանուիրումի, հայրենասիրութեան նոր

վկայութիւններով՝ մեր ազատ երկրից, Սփիւռքի եղերքներից, վերականգնուած եւ նորակառոյց մեր եկեղեցիներից, հանուր հայ կեանքից երկինք բարձրացնելով մեր հայրերի օրհներգը. «զՔեզ ընդ զօրս անմարմնոցն անդադար օրհնաբանեմք»:

Սուրբ Ծննդեան խնդագին աւետիսով ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին եւ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին՝ մաղթելով Տիրոջ զօրակցութիւնն իրենց առաքելութեանը՝ ի զօրացում մեր ժողովրդի հոգեւոր կեանքի եւ ի պայծառութիւն մեր Սուրբ Եկեղեցու:

Ողջունում ենք քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին՝ Փրկչի ամենառատ չնորհները հայցելով իրենց եւ իրենց հաւատաւոր հօտին:

Հայրապետական օրհնութեամբ Մեր բարեմաղթանքներն ու ողջոյնն ենք բերում Սուրբ Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին եւ առաջին տիկնոջը, ողջոյն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակո Սահակեանին, հայոց պետական աւագանուն՝ աղօթքով, որ Տիրոջ օրհնութեամբ արգասաւորուեն մեր երկրի եւ ժողովրդի խաղաղութեանն ու բարօրութեանը եւ մեր ժողովրդի իրաւունքների պաշտպանութեանն ուղղուած նրանց ջանքերը:

Մեր ողջոյնն ու բարեմաղթանքներն ենք բերում Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներին՝ մաղթելով արգասաբեր գործունէութիւն՝ ի նպաստ մեր ժողովուրդների բարեկամութեան ու համագործակցութեան եւ տարածաշրջանում կայունութեան ու խաղաղութեան ամրապնդման:

Սուրբ Ծննդեան ողջունաբեր աւետիսով Հայրապետական Մեր օրհութիւնն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ մաղթանքով, որ ջերմ սիրով սրտում պահպանի Տիրոջն ուղղուած օրհներգը եւ մնայ Բարձրեալի ամենախնամ Աչի հովանու ներքոյ, հաւատարիմ՝ վերազարթօնքի իր տեսիլքներին եւ լաւատես, որ երկնային արդարութեան լոյսով պիտի բացուի իր հանդէպ արդարութիւնը վերականգնելու օրհնեալ օրը:

Աղօթք ենք բարձրացնում, որ Փրկիչ մեր Տիրոջ չնորհները սփռուեն մարդկանց սրտերում՝ խաղաղութիւն, համերաշխութիւն, ապահով

առաջընթաց բերելով աշխարհին: Թող մարդացեալ մեր Տէրը՝ Յիսուս Քրիստոս, ամեն ժամ օրհնի եւ առաջնորդի մեր կեանքը, խաղաղ, հաւատքով ամուր, սիրով ու միասնական պահպանի մեր ժողովրդին՝ այսօր եւ միշտ փառաբանելու Իր Սուրբ Անունը՝ Հոր եւ Սուրբ Հոգու հետ. ամէն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
ձեզ եւ մեզ մեծ աւետիս:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԲԸՄ ԵՐԵՒԱՆՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(4 ԱՊՐԻԼԻ, 2015 Թ., ԵՐԵՒԱՆ)[1]

Մեծարգո՛ նախագահ ՀՀ, տիա՛ր Սերժ Սարգսյան,
Մեծարգո՛ նախագահ ՀԲԸ Միության, տիա՛ր Պերճ Սեդրակյան,
Հարգելի՛ անդամներ ՀԲԸ Միության,
Սիրելի՛ ներկաներ:

Սրտի անհուն բերկրանքով ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ու չնորհավորանքն ենք բերում ամենքիդ: Օրը տոնական է, քանի որ ժամեր անց Առաքելական Մեր Սուրբ Եկեղեցու խորաններից պիտի ազդարարվի Հարության կենդանարար ու հոգենորոգ ավետիսը: Ուրախ ենք նաեւ, որ այսօր քաղաքամայր Երեւանում կատարվեց բացման արարողությունը ՀԲԸ Միության գրասենյակի, որին իր բարձր մասնակցությամբ պատվում է ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանը:

ՀԲԸ Միության մասին խոսելիս ամեն անգամ Մեր հոգին լցվում է հպարտության ու երախտագիտության զգացումներով: Անցնող ավելի քան մեկդարյա պատմության ընթացքին չափազանց ծանրակշիռ է Միության ներդրումը աշխարհասփյուռ հայության կյանքում: Միությունը հիմնադրվել է պատմական դժվարին ու ծանր մի ժամանակաշրջանում՝ նպատակ ունենալով նպաստելու մեր ժողովրդի հոգեւոր-մշակութային կյանքի զորացմանն ու կարիքների հոգացմանը: Սակայն Օսմանյան Կայսրության կողմից իրագործված սարսափելի ոճրագործությունը՝ Հայոց ցեղասպանությունը, ստիպեց, որ Միությունը առաջնահերթորեն լծվի սոսկալի հալածանքների ենթարկված եւ տարբեր երկրներում ապաստանած արեւմտահայության փրկված բեկորների խնամքին ու հոգածությանը եւ կենսական պայմանների ապահովմանը:

---

[1] «Էջմիածին», 2015, Դ, էջ 9:

Ժամանակի հետ ազգային-հայրենական կյանքում ստեղծված նոր պայմաններում մեր ժողովրդի առջեւ ծառացան նոր մարտահրավերներ: Մենք գնահատանքով ենք անդրադառնում, որ ՀԲԸ Միությունը երբեք կաղապարված չմնաց, այլ յուրաքանչյուր ժամանակաշրջանի մեջ համարժեքորեն արձագանքեց ազգային մեր կյանքի մարտահրավերներին՝ որպես չարժառիթ ու գործունեության գլխավոր ազդակ ունենալով մերձավորի հանդեպ սիրո տերունավանդ պատգամը:

Մեր ժողովրդի նորագույն պատմության ամենակարեւոր իրադարձությունը եղավ Հայաստանի անկախացումը: ՀԲԸ Միությունն անկախությունը հրավեր դարձրեց՝ Հայաստանում իր առաքելությունը նոր թափով եւ առավել մեծ ծավալով շարունակելու համար: Ակնառու է ահռելի այն ջանադիր աշխատանքը, որ այդ տարիներին իրականացվեց ՀԲԸ Միության կողմից՝ նախագահությամբ մեծազնիվ տիկին Լուիզ Սիմոն Մանուկյանի, ով, հավատարիմ մեծանուն իր ծնողի՝ Ալեք Մանուկյանի ավանդած ազգասիրությանն ու հայրենասիրությանը, կարողացավ առավել ամուր ու կայուն կապեր ստեղծել Հայրենիքի եւ Սփյուռքի միջեւ: ՀԲԸ Միությունը Մայր հայրենիքում ամբողջապես լծվեց նորանկախ մեր երկրի հզորացման մեջ ներդրում բերելու անգնահատելի գործին: 2002 թվականից ՀԲԸ Միության նախագահի բարձր պաշտոնն ստանձնեց մեծարգո տիար Պերճ Սեդրակյանը, ով բոլորանվեր ջանադրությամբ շարունակեց առաջնորդել Միության աշխատանքները՝ ի խնդիր աշխարհասփյուռ մեր ժողովրդի, մեր Սուրբ Եկեղեցու, հայրենի մեր երկրի զորացման ու առաջընթացի: Գոհունակություն է Մեզ համար հաստատել, որ այսօր էլ Միությունը, պատվարժան իր նախագահի հմուտ ղեկավարությամբ, մշտապես ուշադրության կենտրոնում է պահում ազգանպաստ այն ծրագրերն ու նախաձեռնությունները, որոնցով Բարեգործականը շարունակում է ներկա մնալ մեր երկրի կրթության ու գիտության, մշակույթի ու արվեստի, սպորտի ու առողջապահության, հայրենի երկրի պաշտպանության եւ բազում այլ կարեւոր ոլորտներում: Բարեգործականը մշտապես զորակից է նաեւ մեր Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը՝ արդյունավետ իրագործելու համար ողջ հայության հոգեւոր խնամքը, քաջարթուն ու պայծառ պահելու ազգային եւ եկեղեցական մեր անդաստանը: Մենք մշտապես զգացել ենք ՀԲԸ Միության որդիական նվիրումն ու ջերմ վերաբերմունքը Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդեպ:

Սիրելինե՛ր, երեւանյան սքանչելի այս նոր կենտրոնի բացումը ուղղակիորեն վկայում է ՀԲԸ Միության հայաստանյան ծրագրերի չարունակական լինելու մասին: Վստահ ենք, որ քաղաքամայր Երեւանում վեր հառնած Միության գեղեցկակառույց այս նոր չենքի հովանու ներքո առավել հաջողությամբ պիտի ընթանան Միության հայրենաշէն ծրագրերի կազմակերպման ու համակարգման աշխատանքները: Այս պահին առանձնակի գոհունակությամբ Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքի խոսքն ենք բերում մեծարգո տիար Նազար Նազարյանին, իր ազնիվ տիկնոջն ու զավակներին, որոնց ազնիվ նվիրաբերությամբ կյանքի կոչվեց ՀԲԸ Միության երեւանյան կենտրոնի կառուցումը: Հավատավոր մեր ժողովորդին քաջածանոթ է անունը Նազարյան ընտանիքի, ով մշտապես աստվածահաճո տարբեր ձեռնարկներով իր կարեւոր ներդրումն է բերել ազգային- եկեղեցական մեր կյանքի չինությանն ու պայծառությանը:

Այս տոնական օրվա առիթով վերստին չնորհավորելով՝ Մեր օրհնության եւ գնահատանքի խոսքն ենք բերում ՀԲԸ Միության նախագահին եւ իր ազնիվ տիկնոջը, կենտրոնական վարչության անդամներին, ինչպես եւ՝ աշխարհի չորս կողմերում ազգօգուտ գործունեություն ծավալող Միության բոլոր մասնաճյուղերի ղեկավարներին ու ջանասեր անդամներին, ովքեր, հայրենասիրության ու ազգասիրության զգացումներն իրենց սրտերում, նախանձախնդիր են Միության առաքելության իրականացմանը:

Ի սրտե Մեր աղոթքն է, որ Բարձրյալն Աստված պահի ու պահպանի ՀԲԸ Միության երախտավորներիդ, կյանքի քաջառողջ ու արեւշող բազում օրեր չնորհի ամենքիդ եւ բոլոր բարի գործերն ու ձեռնարկները պսակի հաջողություններով:

«Առավել լերուք ի գործ Տեառն յամենայն ժամ, գիտասջիք՝ զի վաստակք ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն» (Ա Կորնթ. 15.58):



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(5 ԱՊՐԻԼԻ, 2015 Թ., ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այսօր հրեշտակք յերկնից իջեալ
տան կաւետիս մարդկան.
յարեաւ հաչեալն եւ յարոյց
զնեղ ինքեանն»
(Շարական):

Սիրելի՛ հաւատաւոր զաւակներ Մեր ի Հայրենիս եւ ի Սփիւռս,

Քրիստոսի հրաշափառ Յարութեան ուրախութիւնն է վերստին թեւածում մեր հոգիներում: Բերկրում ենք իւղաբեր կանանց նման, ովքեր թափուր տեսան Փրկչի գերեզմանը եւ հրեշտակներից լսեցին Նրա Յարութեան աւետիսը: Ցնծում ենք վերնատանը հաւաքուած առաքեալների եւ Էմմաուսի ճամփորդների պէս, որոնց յարուցեալ Տէրը երեւաց եւ փարատեց նրանց տարակոյսներն ու տրտմութիւնը: Յարութեան լոյսի շողերով այլեւս լուսաւորուած է խաւարեալ երկինքը, թոթափուած են խաչելութեան վիշտն ու տխրութիւնը: Բացուած է դրախտը եւ խորտակուած է դժոխքը, պարտուած է մահը եւ յաղթանակած՝ կեանքը:

Քրիստոս՝ Փրկիչ մեր Տէրը, խաչի վրայ Իր զոհագործութեամբ եւ հրաշափառ Յարութեամբ մարդկութեան համար դարձաւ փրկութեան պատարագ, որ բաշխուում է ամենուր՝ հաւատքով ընդունողներին: Տէրունական անգին փրկագործութիւնը երկնից արքայութիւնը ժառանգելու չնորհին է արժանացնում հաւատացեալ հոգիներին, ինչպէս եւ շարականագիրն ասում է. «Յարեաւ խաչեալն եւ յարոյց զնեղ ինքեան»:

---

[1] «Էջմիածին», 2015, Դ, էջ 12:

Մեր ժողովրդի ընթացքը պատմութեան հոլովոյթներում յաճախ եղաւ նմանութիւն Քրիստոսին: Յաճախ չարչարանաց Golgotha բարձրացանք, խաչակից եղանք Տիրոջը եւ Նրա Յարութեան հաւատքով յարութիւն առանք: Տիրոջ չնորհով մեր ժողովուրդը յաղթահարեց իր դէմ մոլեգնած դաւերն ու աւերները, հալածանքներն ու կոտորածները եւ վառ պահեց յոյսը իր վերածննդի, իր ապահով ու լուսաւոր կեանքի:

Քրիստոսի Սուրբ Յարութեան լուսապայծառ տօնի այս հիասքանչ օրը մենք աղօթում ենք նաեւ Ցեղասպանութեան մեր նահատակների համար: Մէկ դար առաջ էր, երբ մեր ժողովրդի զաւակները հայ եւ քրիստոնեայ լինելու համար անլուր տառապանքներով Ցեղասպանութեան ենթարկուեցին: Նրանք նահատակութեան պսակն ընդունեցին՝ առաքեալի խօսքի ճշմարտութիւնն ունենալով իրենց սրտում. «Եթէ մեր այս հողեղէն տունը, որ մեր մարմինն է, աւերուի, Աստծուց չինուած անձեռակերտ յաւիտենական տուն ունենք երկնքում» (Բ Կորնթ. ե 1): Աչխարհին, ողջ մարդկութեանը մեր ժողովուրդը իր նահատակութեամբ եւ իր յարուցեալ կեանքով վկայեց յարութեան հրաշքի ճշմարտութիւնը: Եղանք խաչեալ, եղանք վշտահալած, բայց ոչ՝ յուսահատ, վիրաւոր, բայց ոչ՝ տկար, աչխարհասփիւռ, բայց ոչ՝ անհայրենիք:

Կորուսեալ հայրենիքի սէրը սրտում՝ մեր ժողովուրդը պատմական Հայաստանի արեւելեան հատուածում վերակերտած պետականութեան ներքոյ եւ սփիւռքի համայնքներում նոր կեանք վերընձիւղեց՝ հաւաստելով, որ իր կենաց ծառը՝ հաւատքի անսասան վէմին արմատացեալ, կենսատու զօրութեամբ պտղաբերում է եւ ազգն ու հայրենիքը չէնացնող զաւակներ ծնում:

Հայոց ցեղասպանութեան համընդհանուր ճանաչման ու դատապարտման համար մէկ դար պայքարեցինք եւ չարունակում ենք պայքարել՝ արդարութեան յաղթանակի հաւատով: Աչխարհը երբեմն լսեց մեզ, երբեմն՝ անտեսեց, որովհետեւ միշտ չէ, որ ունկնդիր է եւ հաւատարիմ Քրիստոսի բերած խաղաղութեան եւ մարդկանց մէջ հաճութեան պատգամին, ի հետեւանս որի՝ մարդկութեան նորագոյն պատմութիւնը կրկին մթագնեց նոր ցեղասպանութիւնների եւ պատերազմների խաւարով: Այսօր էլ մարդկային կեանքն ալեկոծուում է հակամարտութիւններով ու արիւնահեղութիւններով: Մարդկութեան օրրան երկիր մոլորակի վրայ տեղչալի խաղաղութիւնը եւ համընդհանուր հաճութիւնն ու համերաչխութիւնը տակաւին մնում են որպէս չիրականացուած երազանք: «Աստուած մահ չի ստեղծել, եւ Նա չի ուրախանում

ողջերի կորստեան համար»,- ուսուցանում է աստուածաշնչեան իմաստութիւնը (Իմաստ. Ա 13): Աւելին՝ խաչեալ եւ յարուցեալ Իր Միածին Որդու միջոցով Աստուած պարգեւել է չնորհը մահուանից յառնելու, որը պարտաւորեցնում է ազգերին եւ պետութիւններին՝ միասնական ու միահամուռ կամք դրսեւորել՝ կանխելու համար մարդկութեան խաղաղութիւնն ու բարօրութիւնը վտանգող սպառնալիքները, առաւել նախանձախնդիր լինելու արդարութեան ու ճշմարտութեան հաստատման, եղեռնագործութիւնների համընդհանուր դատապարտման գործում, այլապէս աշխարհի չարաղէտ ընթացքները պիտի չարունակեն առաջնորդել դէպի նոր ողբերգութիւններ: Մարդկութիւնը պարտք ունի՝ սրբելու աշխարհում ծովացող արցունքը, լուսաւոր մանկութիւն երազող որբ ու կարոտեալ երեխաների անօգնական հայեացքների, լաց ու ճիչի առջեւ լռեցնելու որոտները մահաբեր զէնքերի, արմատախիլ անելու աղքատութեան չարիքը: Խաչելութիւնն աշխարհում պետք է յաղթահարուի եւ փոխարինուի յարութեամբ:

Սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ, այսօր, երբ ունկնդիր ենք «Յարեաւ խաչեալն եւ յարոյց զՀեզ ընդ ինքեան» աւետիսին, քայլերուենք հոգով, ապրենք որպէս Քրիստոսի հետ մահից վեր յառնած ժողովուրդ, Քրիստոսին հաւատարիմ եւ յարութեան զօրութիւնն ունեցող ժողովուրդ: Դիմագրաւենք մեր կեանքի մարտահրաւէրները եւ նեղութիւնների ու դժուարութիւնների չարչարանաց մեր խաչը ծաղկեալ զարձնենք բոլորանուէր մեր ջանքերով, հայրենանուիրումի ու ազգանուիրումի նոր գործերով: Ազգային, պետական, հասարակական մեր կեանքը, հոգեւոր-եկեղեցական մեր անդաստանը չէնացնենք «զի Աստուած ընդ մեզ է» աներկբայ հաւատով եւ քայլենք դէպի վերելքի նոր հորիզոններ եւ դէպի յաղթանակը մեր արդար դատի:

Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնի խնդութիւնը Մեր Հոգում՝ Մեր բարեմաղթանքներն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին, քոյր Եկեղեցիների չնորհազարդ հոգեւոր պետերին:

Մեր Տիրոջ հրաշափառ Յարութեան աւետիսով ողջունում ենք Սուրբ Պատարագի արարողութեանը ներկայ՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին եւ առաջին տիկնոջը,

ողջոյն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեանին, հայոց պետական աւագանուն՝ մաղթելով արգասալի ծառայութիւն եւ նոր ձեռքբերումներ՝ յանուն մեր երկրի հզօրութեան եւ մեր ժողովրդի բարօրութեան ու առաջընթացի: Մեր բարեմաղթանքները եւ օրհնութիւնն են բերում այստեղ ներկայ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան նախագահ տիար Պերճ Սեդրակեանին եւ Միութեան անդամներին, ովքեր հայրենիքում անցկացնում են Միութեան տարեկան համագումարը: Սուրբ Յարութեան աւետիսով Մեր օրհնութիւնն ենք բերում Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների եւ միջազգային կազմակերպութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին՝ մաղթելով գործոց յաջողութիւններ՝ ի խնդիր մեր երկրների բարեկամութեան ամրապնդման եւ գործակցութեան զօրացման:

Քրիստոսի Յարութեան տօնի առիթով չնորհաւորում ենք հաւատաւոր Մեր զաւակներին ի սփիւռս աշխարհի եւ մեր Սուրբ Եկեղեցու ուխտեալ սպասաւորներին՝ բերելով Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնը եւ հայցելով զօրակցութիւնն ու ամենառատ չնորհները յարուցեալ մեր Փրկչի:

Աղօթում ենք, որ Ամենակալն Աստուած Իր անսահման ողորմութեան ներքոյ պահպանի աշխարհը համայն, զօրացնի մարդկանց սրտերում խաղաղութեան, արդարութեան ու ճշմարտութեան հոգին եւ օրհնի ապահով ու երջանիկ կեանք կառուցելու մարդկային ջանքերը: Մեր հայցն ենք բարձրացնում երկինք, որ Տէրը խաղաղ պահի մեր հայրենիքը, հաւատքով պայծառ եւ ոգով արի՝ աշխարհասփիւռ մեր ժողովրդին եւ Իր կենարար չնորհներով առաջնորդի ընթանալու դէպի կեանքի լուսաւոր հորիզոններ:

Թող յարուցեալ Տիրոջ սէրը եւ խաղաղութիւնը լինեն մեզ հետ՝ այսօր եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

ՄԱՂԹԱՆՔՆԵՐ,
ԽՈՍՔԵՐ, ՔԱՐՈԶՆԵՐ,
ՈՒՂԵՐՁՆԵՐ,
ՊԱՏԳԱՄՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁՆ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(7 ԱՊՐԻԼԻ, 2015 Թ.)[1]

Համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Սուրբ Աստվածածնի Ավետման տոնի կապակցությամբ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ու չնորհավորում բոլոր տիկնանց եւ օրիորդներին, մայրերին ու մայրության բերկրանքին սպասող կանանց:

Սուրբ Աստվածածնի բարի օրինակով՝ հոգեւոր ու բարոյական բարձր արժեքներով, սիրասուն մեր մայրերն ու քույրերը կրթում, մեծացնում են աստվածասեր եւ հայրենասեր զավակներ, նվիրական ու ազնիվ ջանքեր բերում հայրենի մեր երկրի, ազգային-եկեղեցական մեր կյանքի առաջընթացին եւ պայծառությանը: Մայրությանը նվիրված այս տոնը գեղեցիկ առիթ է բոլոր զավակների համար՝ երախտալից սրտով վերստին նորոգելու մայրերի հանդեպ իրենց սերն ու նվիրումը, անչեղորեն քայլելու մայրական խրատներով զարդարված եւ լուսավորված ճանապարհներով, քանզի սուրբգրային խոսքի համաձայն՝ մոր խրատն ու պատվիրանը չնորհի պսակ են մարդու գլխին եւ ոսկի մանյակ՝ պարանոցին:


Սիրելի՛ մայրեր եւ քույրեր, ի խորոց սրտի Մեր աղոթքն է, որ Սուրբ Տիրամոր բարեխոսությամբ երկնավոր մեր Հայրն Իր ամենախնամ Աչի հովանու ներքո պահի ու պահպանի ձեզ, ձեր ընտանիքներին ու զավակներին՝ պարգեւելով խաղաղ կյանքի բարօր ու երջանիկ երկար օրեր:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

[1] «Էջմիածին», 2015, Դ, էջ 16:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՆԵԱՊՈԼԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՏՐԱՆ ՎԵՐԱԲԱՑՄԱՆ ԵՒ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՁՈՆՎԱԾ ԽԱՉՔԱՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(11 ԱՊՐԻԼԻ, 2015 Թ., ՆԵԱՊՈԼ)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետութեան,
Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս,
Հոգեւո՛ր Տեր,
Ձերդ Գերազանցութիւն հարգարժա՛ն կարդինալ,
Մեծարգո՛ նախագահ կամպանիա նահանգի,
Նեապոլի մեծարգո՛ քաղաքապետ,
Հայաստանից եւ Սփյուռքից ժամանած սիրելի՛ հայորդիներ
եւ բարեպա՛շտ ներկաներ:

Ուրախութեան զգացումով են պարուրված մեր հոգիները: Համախմբվել ենք Իտալիայի հյուրընկալ երկրում՝նվիրական այս կամարների ներքո, միասնական մեր աղոթքը երկինք բարձրացնելու եւ փառաբանելու մեր երկնավոր Հորը, որ չնորհն ընծայեց ՝ կատարելու մեր հավատքի հայր Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքների վերադետեղման եւ Հայոց ցեղասպանութեան 100-ամյակի առթիվ կանգնեցված խաչքարի օրհնութեան արարողութիւնը:

Նշանակալի այս նախաձեռնութիւնը արտահայտութիւնն է Հայ Եկեղեցու եւ Կաթոլիկ Եկեղեցու եղբայրական կապերի, հայ եւ իտալացի ժողովուրդների բարեկամութեան: Հինավուրց ավանդութեան համաձայն՝ Հայաստանից միջնադարում Սուրբ Գրիգոր Լուսավորչի մասունքներից փոխադրվեցին եւ հանգրվանեցին Իտալիայի Նեապոլ քաղաքում, որոնք հետագայում զետեղվեցին ի պատիվ Լուսավորչի կառուցված այս եկեղեցում, եւ Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրա-

[1] «Էջմիածին», 2015, Դ, էջ 17:

պետը ճանաչվեց Նեապոլ քաղաքի հովանավոր սրբերից մեկը: Ահավասիկ, դարեր չարունակ Լուսավորիչ մեր Հայրապետի մասունքներն օրհնություն են այս եկեղեցու հավատացելոց եւ ուխտավորների համար՝ մշտապես հիշեցնելով Սուրբ Գրիգոր Լուսավորչի ու նրա մեծ առաքելության մասին:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս ասում է. «Եթէ մէկը կամենում է հետեւել Ինձ, թող ուրանայ իր անձը, վերցնի իր խաչը եւ գայ Իմ հետեւից» (Մտթ 16:24): Սուրբ Գրիգոր Լուսավորիչ առաքելապատիվ Հայրապետը Քրիստոսի այս պատգամը աստվածային զորակցությամբ կյանքի կոչեց Հայոց աշխարհում եւ իր չարչարանքներով ու հոգեւոր սխրանքներով պատմության մեջ հարթեց հաղթական ուղին քրիստոնեական լուսեղեն հավատքի, Հայաստանում՝ առաջինը աշխարհում, քրիստոնեությունը որպես պետական կրոն հռչակելու: Լուսավորչահաստատ հավատքով զորացյալ մեր ժողովուրդը, ունենալով Հայր Սուրբ Ավետարանը եւ Մայր՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին, Տիրոջ պատվիրանին հավատարիմ՝ անչեղորեն ընթացավ պատմության մեջ՝ չարի դիմաց գործելով բարիք, դժվարություններին տոկալով համբերությամբ, փորձությունները վերածելով հնարավորության, հայրենի եզերքում եւ օտարության մեջ բարիքներ ստեղծելով իր ու համայն մարդկության համար, կերտելով գրոյ չիշատակի արժանի, հոգեւոր ու մշակութային հարուստ ժառանգություն:

Սուրբ Գրիգոր Լուսավորիչ հայի եկեղեցում անցկացվող այս արարողությունը եւ Մեծ Եղեռնի 100-րդ տարելիցին նվիրված խաչքարի տեղադրումը հիշարժան իրադարձություն է մեր Եկեղեցիների գործակցության եւ մեր ժողովուրդների բարեկամության պատմության մեջ: Հիշարժան է եւ նրանով, որ սրբազան այս արարողությանը ներկա են ՀՀ նախագահը եւ պետական այրեր, մեր հոգեւոր եղբայրները՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը եւ Հայ Կաթողիկե պատրիարքը, Հայաստանից եւ տարբեր երկրներից ժամանած բարեպաշտ հայորդիներ՝ գործարարներ, գիտության եւ մշակույթի գործիչներ: Այս խաչքարը մշտապես խոսուն վկան պիտի լինի Հայոց ցեղասպանության՝ որպես Հորդոր Ցեղասպանության համընդհանուր դատապարտման եւ մարդկության դեմ նման ոճիրների կանխարգելման: Մեր ժողովուրդը երախտագետ է բարեկամ երկներին, քույր Եկեղեցիներին, բարի կամքի տեր բոլոր մարդկանց, որոնք դատապարտեցին Հայոց ցեղասպանությունը:

Ձե՛րդ Սրբազնութիւն, կարդինա՛լ Կրեչենցիո Սեպե, Տիրոջ նախախնամութեամբ Դուք առաջնորդութեան եք կոչված նվիրական մի վայրում, ուր մշտավառ է հիշատակը Հայոց Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայրապետի: Մեր մաղթանքն է, որ Ամենակալ Տերն Իր զորավոր աջով հովանի ու զորակից լինի Ձեզ, քաջառողջ կյանքի երկար տարիներ պարգեւի Ձեզ եւ Ձեզ լծակից ուխտապահ հոգեւորականներին եւ արդյունավորի Ձեր առաքելութիւնը նորանոր ձեռքբերումներով՝ ի նպաստ մեր երկկողմ հարաբերութիւնների զորացման ու մեր ժողովուրդների բարեկամութեան ամրապնդման:

Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Կամպանիայի նահանգային եւ Նեապոլի քաղաքային իշխանութիւններին, նաեւ Նեապոլի Սուրբ Գրիգոր հայի եկեղեցու հովանու ներքո բնակվող եւ այստեղ պահվող սրբութիւնների առջեւ հանապազ խնկարկող քույրերին: Հայցում ենք առաքելաշավիղ Սուրբ Գրիգոր Լուսավորչի բարեխոսութիւնը բոլորիդ համար, նաեւ մեր երկու ժողովուրդների եւ Եկեղեցիների, նրանց ուխտապահ սպասավորների համար:

Մեր օրհնութիւնն ու բարձր գնահատանքն ենք բերում Վատիկանում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Միքայել Մինասյանին՝ Նեապոլի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մատրան նորոգութեան եւ Հայոց ցեղասպանութեան 100-ամյակին նվիրված խաչքարի զետեղման աստվածահաճո նախաձեռնութեան համար՝ մաղթելով արեւշատութիւն, նորանոր հաջողութիւններ դիվանագիտական առաքելութեան մեջ:

Աղոթում ենք, որ Աստված հանապազ օրհնի հավատավոր հայ եւ իտալացի քրիստոսասեր մեր ժողովուրդներին, ամրապնդի հարաբերութիւնները ու գործակցութիւնը Իտալիայի եւ Հայաստանի Հանրապետութիւնների եւ պարգեւի խաղաղ ու լուսավոր առաջընթաց:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, սերը եւ ողորմութիւնը լիեն մեզ հետ եւ ամենքի. ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՊԱՆԹԵՈՆՈՒՄ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՂՕՐՀՆԵՔԻ ԱՌԻԹՈՎ

(22 ԱՊՐԻԼ, 2015 Թ., ԵՐԵՎԱՆ)[1]

Մեծարգո՛ պրն. նախագահ,
Պատվարժա՛ն բարերար,
Գերաչնո՛րհ հայրեր,
Սիրելի՛ ներկաներ:

Գոհությո՛ւն ենք մատուցում Երկնավորին, որ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման նախօրեին պարգեւեց Մեզ չնորհը՝ կատարելու հողօրհնեքի արարողությունը Երեւանի Պանթեոնում նախատեսված եկեղեցու: Խորհրդանշական է, որ եկեղեցու կառուցումը սկիզբ է առնում մեր ժողովրդի համար նվիրական այս տարում, երբ հիշատակում ենք 100-րդ տարելիցը Հայոց ցեղասպանության:

Ցեղասպանության աղետից հետո մեր ժողովուրդը աշխարհի բոլոր կողմերում նախ եւ առաջ իր եկեղեցին կառուցեց, որպեսզի լույս ունենա առաջնորդության, իր կյանքն ապրի առ Աստված աղոթքով եւ Աստծո օրհնության ներքո, որպեսզի իր որդիները լինեն հարազատ զավակները մեր Եկեղեցու, հարազատ զավակները մեր ժողովրդի՝ հավատարիմ հայրենյաց ավանդներին, հիշատակներին ու սրբություններին:

Անքնին Աստված Իր երկնային ու աստվածային չնորհներն է հեղում մեր քարակերտ եկեղեցիներին, նաեւ մեր հոգու տաճարներին՝ զորացնելով հավատքով, ամրացնելով մեզ տերունապատվեր ընթացքներում, ինչպես վկայում է չարականագիրը. «Խնդա եւ գուարճացիր հարսնացեալդ Աստուծոյ եկեղեցի, քանզի ի քեզ Տէրն տէրանց ընտրեաց եւ հաճեցաւ բնակիլ ի քեզ»: Հավատում ենք, որ այստեղ կա-

[1] «Էջմիածին», 2015, Դ, էջ 29:

ուսցվող եկեղեցին աստվածային օրհնության եւ չնորհների նոր աղբյուր է լինելու մեր ժողովրդի համար, որի ճանապարհը լեցուն է եղել դժվարություններով եւ փորձություններով, բայց նաեւ վերելքներով, որոնք վկայությունն են հավատավոր մեր ժողովրդի ապրելու եւ արարելու աննկուն կամքի:

Աստծո չնորհով այսօր մեծ մխիթարություն է մեր բոլորի սրտերին, որ նորակառույց եկեղեցին վեր է հառնելու նույն տեղում, որտեղ կանգնած է եղել խորհրդային բռնությունների շրջանում հիմնովին քանդված եկեղեցին: Եկեղեցու օրհնյալ կամարների ներքո մեր ժողովրդի զավակներն իրենց հայցն ու աղերսն են վերառաքելու առ Աստված եւ նվիրական այս աղոթավայրը Պանթեոնում նաեւ վկայություն է լինելու մեր ժողովրդի հոգեւոր-մշակութային միության եւ ամբողջականության: Այստեղ մենք խոնարհվում ենք մեր ժողովրդի մեծանուն զավակների չիրիմներին, հպարտանում նրանց թողած ժառանգությամբ, հայրենիքին ծառայությամբ, մեր մշակույթին բերած ավանդով: Այսուհետ նրանք պիտի հանգչեն եկեղեցու օրհնության, հավատացյալ Մեր զավակների աղոթքների հովանու ներքո:

Այս հոգեչեն օրը Հայրապետական սիրով Մեր օրհնությունն ենք բերում այստեղ համախմբված Մեր բոլոր զավակներին, ովքեր իրենց աղոթքներով մասնակից եղան եկեղեցու հողօրհնեքի սրբազան այս արարողությանը:

Բարձր գնահատանքով ողջունում ենք այստեղ ներկայությունը ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանի, ով հավատավոր հոգով մշտապես իր գորակցությունն է բերում մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանը եւ այսօր իր ներկայությամբ եւ մասնակցությամբ պատվեց այս արարողությունը:

Հայրապետական Մեր օրհնությունը եւ բարձր գնահատանքն ենք բերում նորակառույց եկեղեցու մեծազնիվ բարերարին՝ տիար Սամվել Կարապետյանին, մեր Եկեղեցու եւ ժողովրդի արժանավոր ու նվիրյալ զավակին, ով եկեղեցաշեն եւ ազգաշեն իր բազում գործերով մեծ աջակցություն եւ ավանդ է բերում մեր Եկեղեցու չենացմանը եւ մեր ժողովրդի բարօրության կերտմանը:

Աղոթում ենք առ Աստված, որ ամենախնամ Իր Սուրբ Աջով խաղաղության ու բարօրության մեջ պահպանի ազգս հայոց, հաջողություններով պսակի եկեղեցաշեն եւ ազգանպաստ իրագործումները: Մեր աղոթքն է, որ Աստված բյուր օրհնությունների արժանացնի եկեղեցանվեր բարերարին՝ տիար Սամվել Կարապետյանին, պարգեւելով

ազգաշահ գործոց նորանոր ձեռքբերումներ եւ երկնառաք ամենայն բարիք՝ կարապետյան ընտանիքին:

Թող հարուցյալ Մեր Տերը օրհնյալ եւ անսասան պահի հայրենի մեր երկիրը, ամբողջ եւ անխռով աշխարհասփյուռ մեր ազգի զավակներին՝ բարի ու ազնիվ ձեռքբերումներով ապրելու իրենց կյանքը՝ իրականացնելով մեր նվիրական իղձերը եւ լուսավոր գալիքի տեսիլքները:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՍԿՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(22 ԱՊՐԻԼԻ, 2015 Թ.)[1]

Սիրելի՛ եղբայրներ ի Քրիստոս,

Գերաչնորհ, հոգեչնորհ եւ արժանապատի՛վ հայրեր,

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ:

Այսօր համախմբվել ենք Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարում՝ պաշտամունք մատուցելու մեր Տիրոջը, հսկման արարողության միջոցով հիշելու Հայոց ցեղասպանության ընթացքում նահատակված հայորդիներին: Մխիթարված ենք, որ այս պահին մեզ աղոթակից են այստեղ ներկա մեր քույր Եկեղեցիների պետերն ու ներկայացուցիչները, էկումենիկ կազմակերպությունների ղեկավարները եւ պատվիրակները:

Տիրոջ կամքով վաղը՝ ապրիլի 23-ին, այս սուրբ տաճարի հովանու ներքո՝ հայոց առաջին քրիստոնյա արքայի՝ Սուրբ Տրդատի անունը կրող խորանի առջեւ, պիտի կատարենք սրբադասման արարողությունը Ցեղասպանության նահատակների՝ հայցելով սուրբ վկաների բարեխոսությունը ազգային ու հոգեւոր մեր կյանքի զորացման, առաջընթացի համար:

Նահատակության ոգին քրիստոնեական մեր կյանքի սնուցող աղբյուրն է, որն առատորեն ոռոգել է քրիստոսասեր ժողովուրդների հավատքի անդաստանները: Պատմության ընթացքում Եկեղեցուն կենսունակություն է պարգեւել մարտիրոսների հեղած արյունը: Քրիստոնյա մեծագույն նահատակներից Սուրբ Իգնատիոս Անտիոքացի Հայրապետի խոսքով՝ «Ո՛չ կիզիչ հուրը, ո՛չ ջուրը չեն կարողացել մարել քրիստոնյաներիս սերն առ Աստված: Խիզախ ու արիասիրտ քրիստոնյաների համար մեծ բարիք է այս աշխարհում Աստծո հետ մայր մտնելը եւ Նրա հետ հառնելը» (Ս. Իգնատիոսի վարքից):

Հայաստան աշխարհում եւս նորածիլ քրիստոնեական կյանքը սնուցվեց Քրիստոսի Սուրբ Ավետարանի լույսը տարածող մեր առա-

[1] «Էջմիածին», 2015, Դ, էջ 31:

ջին լուսավորիչներ Ս. Թադեոս եւ Ս. Բարդուղիմեոս առաքյալների, նորադարձ մարտիրոսների ու հավատի հերոսների արյամբ: Մեր ժողովուրդը պատմության ողջ ընթացքում հաճախ պատարագվեց նահատակության խորանի վրա՝ դառնալով աստվածպաշտության աքանչելի օրինակ: Ցեղասպանության տարիներին եւս մեր զավակների կրած նահատակության, չարչարանքի պատմությունները որքան ցավ ու տրտմություն են պատճառում, նույնքան եւ ավելի հավատքի մեջ ամրանալու, խիզախելու նոր խթան դառնում ամենքիս համար, ինչպես պարագան էր առաջին դարերի քրիստոնյաների, որոնց համար, ըստ Պողոս առաքյալի խոսքի՝ «...կյանքը Քրիստոսն է, իսկ մեռնելը՝ շահ» (Փիլիպ. Ա 21):


Նույն ոգին այսօր տեսնում ենք աշխարհի տարբեր կողմերում, մասնավորաբար Մերձավոր Արեւելքում, որտեղ քրիստոնյա հավատացյալներն իրենց կյանքով շարունակում են վկայել քրիստոսանվեր իրենց հավատքը: Մենք հիանում ենք այն քաջությամբ եւ տոկունությամբ, որ դրսեւորում են մեր քրիստոնյա եղբայրները զրկանքների ու չարչարանքների մեջ: Նահատակության այս պատկերները միաժամանակ ընդգծում են անհրաժեշտությունը Քրիստոսի Սուրբ Եկեղեցու ջանքերի բազմապատկման՝ հանուն առավել ապահով ու անվտանգ աշխարհ կերտելու, քանզի մեր Տերը «խռովության Աստված չէ, այլ՝ խաղաղության» (Ա Կորնթ. ԺԴ 33): Մեր ժողովուրդն ու Եկեղեցին ինչպես անցյալում, այնպես եւ այսօր մշտապես արտահայտել են իրենց նվիրվածությունը Քրիստոսի Սուրբ Ընտանիքի՝ Եկեղեցու այս սրբազան առաքելությանը:

Մեր մաղթանքն ու աղոթքն է, որ Հաղթանակած Եկեղեցուն միացած բոլոր նահատակները, նրանց հետ նաեւ Հայոց ցեղասպանության մարտիրոսները բարեխոս լինեն Տիրոջ առաջ աշխարհում խաղաղության եւ համերաշխության հաստատման համար: Մենք հավատում ենք, որ Ցեղասպանության նահատակներն այսօր եւս շարունակում են ապրել: Նրանց սխրանքն ու ոգեշնչող ներկայությունը մշտապես ուղեկից են եղել մեր ժողովրդին Ցեղասպանությանը հաջորդած բոլոր տարիներին:

Թող Աստված օրհնի արդարության եւ ազգերի միջեւ եղբայրության ճանապարհները, որ ոչ մի ժողովուրդ այլեւս չապրի ցեղասպանության ողբերգությունը: Աղոթք եւ օրհնություն Ցեղասպանության բոլոր անմեղ զոհերի հիշատակին:

Տիրոջ սերը եւ խաղաղությունը թող լինեն ամենքիս հետ այժմ եւ միշտ եւ հավիտյանս հավիտենից. ամեն:

ՄԱՂԹԱՆՔՆԵՐ,
ԽՈՍՔԵՐ, ՔԱՐՈԶՆԵՐ,
ՈՒՂԵՐՁՆԵՐ,
ՊԱՏԳԱՄՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՍՐԲԱԴԱՍՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(23 ԱՊՐԻԼԻ, 2015 Թ., ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ)[1]

«Իսկ եթէ նախատիցիք եւս
վասն անուանն Քրիստոսի,
երանելի՛ էք, սի ...Ատուծոյ Հոգին
ի վերայ ձեր հանգուցեալ է»
(Ա Պետ. Դ 14):

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալ եղբայրներ եւ քույրեր,

Աստվածաշնչյան Արարատի հայացքի ներքո, Քրիստոսակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի այս նվիրական սրբավայրում այսօր միասնական աղոթքով փառք ենք վերառաքում Ամենազոր Աստծուն իր բոլոր պարգեւների համար: Փառաբանում ենք Երկնավորին, որ զորություն տվեց մեր ազգին՝ իր դարավոր պատմության փորձությունները հաղթահարելու, Հայոց ցեղասպանության արհավիրքներից վեր հառնելու, իր նոր կյանքի հաղթանակներն ու ձեռքբերումները կերտելու: Օրհնաբանում ենք Տիրոջը, որ վասն հավատո եւ վասն հայրենյաց նահատակված Ցեղասպանության վկաներին թագադրում է սրբության պսակով ու նրանց բարեխոսությամբ հեղում մեր կյանքին իր անսպառ ողորմությունները:

Հայոց ցեղասպանության դժնդակ տարիներին մեր ժողովրդի միլիոնավոր զավակներ ծրագրված կերպով տեղահանվեցին եւ ջարդի ենթարկվեցին, անցան հրի ու սրի միջով, ճաչակեցին տանջանքների ու վշտի դառը պտուղները, սակայն սոսկալի նեղություններում, մահվան հանդիման մնացին Քրիստոսի սիրով զորացյալ՝ բերելով վկայությունը անսասան հավատքի՝ համաճայն առաքելավանդ խոսքի.

---

[1] «Էջմիածին», 2015, Դ, էջ 33:

«Իսկ եթէ նախատուէք էլ Քրիստոսի անուան համար, երանելի էք, քանի որ...Աստծու Հոգին հանգչում է ձեզ վրայ»:

Քրիստոսին նահատակությամբ վկայելը ընդելուզված է մեր ժողովրդի կյանքին: Սրբության, առաքինության, անձնվիրության հոգեւոր սխրանքի բազում վկայություններ են արձանագրված նաեւ Հայոց ցեղասպանության ողբերգական տարեգրության մեջ: Քրիստոնեական հավատքի համար հալածվող հայորդին աղոթքով է անցել նահատակության ճանապարհը, իսկ նրան անդուլ դաժանությամբ հալածողը կարծել է, թե իսպառ արմատախիլ է անում Քրիստոսի հանդեպ սերը հայի կյանքից: Հիսուս Քրիստոսի համար նահատակ հայորդու արյունը անխախտ հավատքի ու ազգասիրության դրոշմն է դրել անապատի ավազներին, մինչդեռ եղեռնագործը կարծել է, թե հայը անհետ կորչում է պատմության հողմերում: Քրիստոսանվիրումի եւ հայրենյաց սիրո նույն այդ ոգով մեր ժողովուրդը հոգեւոր եւ ազգային իր կյանքն է վերակերտել աշխարհի բոլոր կողմերում, վերածնունդ ապրել Արեւելյան Հայաստանում՝ մոխիրներից հառնած իր պետության հովանու ներքո: Վերելքի իր ուղին մեր ժողովուրդը կերտել է զոհողություններով, մաքառումով, մարդկային խղճի ու իրավունքի առջեւ իր արդար դատը բարձրաձայնելու ջանքերով՝ միշտ աղոթքով հիշելով բյուրավոր վկաներին Հայոց ցեղասպանության:

Նահատակության պատմությունը պարզ փաստերի ու դեպքերի չարադրանք չէ միայն, այն մեր առջեւ պարզվող հավատքի ճշմարտությունն է, որի հանդիման անզոր են հալածանքն ու ոճրագործությունները, քաղաքական խարդավանքն ու դավադրությունները: Նահատակությունը մարդկային կյանքը եւ պատմությունը կապում է ավելի զորավոր, երկնային մի իրողության հետ, որն անդրանցնում է ժամանակը եւ ծավալվում դեպի հավերժություն՝ ըստ տերունական խոստման. «Մի՛ երկնչիր այն բանի համար, որ պիտի չարչարուես. ...եղիր հաւատարիմ մինչեւ մահ, եւ Ես քեզ կեանքի պսակը պիտի տամ» (Յայտն. Բ 10): Քրիստոսին վկայած մեր նահատակները մեր հոգու հայացքը երկրային իրողություններից բարձրացնում են դեպի երկնային կյանք, հոգեւոր զվարթություն պարգեւելով նրանց բարեխոսությունը հայցողներիս եւ քաջալերելով Տիրոջն ապավինելու, փորձությունների հանդիման չերկնչելու եւ տերունաշնորհ կյանքն ապրելու հավատքի, հույսի եւ սիրո գործերով: Ցեղասպանության նահատակներն այսօր, երկնքի արքայության լուսեղեն օթեւաններում մարտիրոսության պսակով զարդարված, արդարության, մարդասի-

րութեան, խաղաղութեան հովանաւոր սրբեր են, որոնց բարեխոսութիւնը երկնքից Աստծո ողորմութեան եւ շնորհների աղբիւրն է բացում այնտեղ, ուր տկարանում է արդարութիւնը, խախտվում են խաղաղութեան անդորրն ու ապահովութիւնը, ուր ոտնահարվում են մարդկանց եւ ժողովուրդների իրաւունքները, սպառնալիքներ են հառնում ընդդեմ հասարակութիւնների բարօր կեցութեան, մոլեգնում են հալածանքներ հավատքի եւ ինքնութեան դեմ:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Մենք ամենքս այսօր ականատեսն ենք մեր պատմութեան հոգեւոր վերափոխման, որին մասնակից ենք թե՛ հավաքաբար, եւ թե՛ անհատաբար: Ցեղասպանութեան նահատակների սրբադասումը կենդանարար նոր շունչ, շնորհ եւ օրհնութիւն է բերում եկեղեցական եւ ազգային մեր կյանքում: Մենք հավատում ենք, որ մեր ժողովրդի հոգեւոր նոր վերածննդի պսակն ենք հյուսում՝ Հայոց Ցեղասպանութեան նահատակներին սրբադասելով: Մեր սուրբ նահատակների հիշատակն այլեւս ոչ թե զոհի ու ննջեցյալի հոգեհանգստյան աղոթք է, այլ՝ հաղթանակած ու նահատակութեան արյամբ սրբագործված անմարմին զինվորների հաղթական օրհներգութիւն: Այսօր մեր սուրբ նահատակների հավատքի եւ հայրենյաց սիրո ջերմեռանդ ոգին տարածվում է Դեր Զորից մինչեւ Սուրբ Էջմիածին եւ Միածեռնակաբերդ, նորանկախ Հայաստանից մինչեւ աշխարհասփյուռ հայ կյանքի վերածնված անդաստաններ՝ զորացնելով ապրելու անխախտ հավատքով, մեր կյանքի վերազարթոնքի պայծառ տեսիլքով եւ մեր արդար դատի պաշտպանութեան աներկբա կամքով:

Այսօր աշխարհի բոլոր կողմերում մեր ժողովրդի աղոթքները միահյուսված են աղոթքներին սրբազան այս արարողութեան, որին իրենց մասնակցութիւնն են բերում Հայաստանի Հանրապետութեան նախագահը՝ առաջին տիկնոջ հետ, Մեր հոգեւոր եղբայր Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, ի Քրիստոս Մեր սիրեցյալ եղբայրները՝ հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ քույր եկեղեցիների, Հայ Կաթողիկե եւ Ավետարանական եկեղեցիների բարձրապատիվ ներկայացուցիչները, հայոց եւ բարեկամ երկրների պետական այրեր, դիվանագիտական առաքելութիւնների եւ միջազգային կազմակերպութիւնների ներկայացուցիչներ:

Ցեղասպանութեան մեր սուրբ նահատակների բարեխոսութեան անդրանիկ հայցով այսօր Մեր աղոթքն ենք վերառաքում առ Աստված, որ Իր օրհնութեան ներքո անխռով պահպանի մեր ժողովրդին եւ

համայն մարդկութեանը, որ հագենա արդարութեան ծարավի հոգին մեր ժողովրդի, որ աստվածային ողորմութեամբ արդարութեան եւ ճշմարտութեան չողերը փայլատակեն աշխարհումս եւ ցրեն մարդկութեան կեանքն ալեկոծող ոճիրների եւ եղեռնագործութեունների խավարը, եւ եղբայրութեան ու համերաշխութեան մեջ մարդկութեունը կերտի իր բարօր ու երջանիկ կեանքը:

Թող սուրբ նահատակների բարեխոսութեամբ մեր Տեր Հիսուս Քրիստոսի չնորհը, սերը եւ ողորմութեունը լինեն ձեզ հետ եւ ամենքի՝ այսօր եւ միշտ. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԸՆԹԱՑՍ ՍՈՒՐԲ ՊԱՏԱՐԱԳԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ

(ՎԱՇԻՆԳՏՈՆ, 9 ՄԱՅԻՍԻ, 2015 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ամենայն որ առնէ կարդարութիւն՝
առ ի նմանէ է ծնեալ» (Ա Յովհ. Բ 29):

Սիրելի՛ բարեպաշտ հայորդիներ:

Աղօթաբոյր այս տաճարում հավաքվել ենք Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման առիթով: Սրբազան պատարագի ընթացքին ունկնդիր եղանք Հովհաննես առաքյալի Առաջին թղթի հետեւյալ խոսքին, թե ամեն ոք, ով արդարութիւն է անում, Նրանից, այսինքն՝ Աստծուց է ծնված: Առաքյալը Աստծուն որդիանալը պայմանավորում է մարդու արդարությամբ: Արդարության մասին առաքյալի ուղերձը ամբողջանում է այսօր ընթերցված Ավետարանում՝ ի ծնե կույրի պատմության դրվագով (Յովհ. Թ): Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, ինչպես պատմում է ավետարանիչը, բժշկում է ի ծնե կույր մի մարդու, փարիսեցիները, սակայն, չեն ընդունում հրաշագործ բժշկության փաստը եւ տաճարից արտաքսում բժշկվածին: Տիրոջ կողմից տեսողություն ստացած անձը ճեռք է բերում նաեւ հոգեւոր տեսողություն եւ ճանաչում Քրիստոսին՝ որպես «լույսն աշխարհի» (Յովհ. Թ 5):

Մինչդեռ տեսողություն ունեցողները կուրանում են ճշմարտության առջեւ: Ահա ավետարանական մի պատում, որ նկարագրում է հոգեւոր կուրության ողբերգությունը՝ պայմանավորված ճշմարտության, ակնհայտ իրողության ժխտումով, որը ծնեց անարդարություն եւ չարիք:

Ավետարանական այս պատումն այսօր նույնպես արդիական է: Մեր ժողովուրդը 100 տարի չարունակ բախվում է Թուրքիո կողմից Հայոց ցեղասպանության փաստի ժխտման քաղաքականությանը: Թուրքիան

[1] «Էջմիածին», 2015, Ե, էջ 9:

իր ժխտողականությունը իրագործում է պետական մակարդակով, դիվանագիտական խարդավանքներով ու ճնշումներով: Ժամանակը եւ այսօր Ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները ցույց տվեցին, որ անհեռանկար է Թուրքիայի այս ամոթալի քաղաքականությունը: Ճշմարտությունը, արդարության մեր կանչը առավել զորեղ են եւ արձագանքում են աշխարհում, մարդկանց, ժողովուրդների սրտերում: Նորանոր երկրներ, հեղինակավոր կազմակերպություններ ճանաչում եւ դատապարտում են քսաներորդ դարասկզբին մեր ժողովրդի դեմ կատարված ոճրագործությունը որպես Ցեղասպանություն: Բայց եւ չարունակվում է կրավորական կեցվածքը, որն առայժմ դիրքորոշումն է նաեւ Ամերիկայի Միացյալ Նահանգների:

Ճշմարտության ճանաչումը, արդարության իրագործումը անհրաժեշտ է ոչ միայն մեր ժողովրդին, ոչ միայն մեր նահատակներին, ովքեր, այլեւս սրբազրասված,բարեխոս են աշխարհում արդարության, մարդասիրության, խաղաղության համար, այլեւ նույնքան Թուրքիային՝ սեփական պատմությանն առերեսվելու, անցյալի ոճրագործության մեղքից թոթափվելու, անհրաժեշտ է եւ ազգերի ու ժողովուրդների մեծ ընտանիքին՝ արդարության հիմքի վրա կառուցելու հաշտ ու խաղաղ իր ապագան:

Արդարության իրագործումը ճանապարհ է աստվածանմանության, երկնավոր Հոր պարգեւած որդիության չնորհին արժանանալու: Այս է հաստատում առաքյալը՝ ասելով, որ արդարություն գործող ամեն ոք Աստծուց է ծնված: Մինչդեռ արդարության ժխտումը՝ քաղաքական, տնտեսական կամ շահադիտական այլ պատճառներով, հեռացնում է Աստծուց, մարդկության կյանքը ենթարկում վտանգների: Արդարության անտեսումով, ոճիրների անպատժելիությամբ աշխարհը ականատես եղավ նոր ցեղասպանությունների, մեր օրերում չարունակվող ահաբեկչությունների, զանգվածային կոտորածների, արյունահեղությունների: Առաքյալի՝ երկնավոր Հորը որդեգրվելու հորդորը կոչ է արդարությունը մշտապես իրագործելու անձնական, պետական եւ հասարակական կյանքում: Կոչ է ճշմարտության պաշտպանության ու հաղթանակի, բացառելու ճշմարտության եւ արդարության առջեւ փարիսեցիական կուրությունը, որպեսզի մարդկությունը կարող լինի ընթանալ դեպի արդար, բարօր ու համերաշխ աշխարհ:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Արդար Աստծո որդիներ որպես՝ մենք պիտի չարունակենք աննվաղ ջանքերը մեր ազգի հանդեպ, ինչպես եւ մարդկության կյանքում

արդարության հաստատման եւ հաղթանակի համար: Այս ոգով նաեւ մեր ժողովուրդը իր մասնակցությունը բերեց Երկրորդ աշխարհամարտի տարիներին ֆաշիզմի դեմ պայքարում, ինչպես եւ Արցախ աշխարհի ազատագրության գործում, որոնց հիշատակումով հաղթական եւ տոնական են մայիսյան այս օրերը: Հայրապետական Մեր հորդորն է, որ անսասան մնանք ազգաչեն ու հայրենաչեն չավիղներում, աննահանջ՝ արդարության մեր պայքարում եւ չարունակենք բարի արարումներով չենացնել ազգային-եկեղեցական մեր անդաստանը: Հայրենիքն ու պետականությունը այն արժեքներն են, որոնք ամուր են պահում ազգի գոյության, ազգային ինքնագիտակցության հիմքը: Ջորեղ լինի հայրենիքը, զորեղ կլինի նաեւ ազգը, եւ դրանով նույնքան զորեղ՝ մեր պահանջատիրությունը՝ Ցեղասպանության համընդհանուր դատապարտման, հետեւանքների վերացման:

Հայրենանվիրումի եւ ազգանվիրումի ոգին պիտի առաջնորդի համախմբվելու ազգային մեր անդաստանում ծառացած խնդիրների դիմագրավման համար: Հայաստանի չրջափակումը, պատերազմի վերսկսման վտանգը, արցախյան հիմնահարցը, հայրենաբնակ հայորդիների կյանքում հառնած մարտահրավերները, հակամարտությունների պատճառով սիրիահայության եւ իրաքահայության դժվարին կացությունը չեչտում են հրամայականը՝ միաբանությամբ հաղթահարելու առկա նեղություններն ու խնդիրները: Եղբորն աջակցելը, ազգ ու հայրենիք չենացնելը նույնպես արդարության իրագործում է, ըստ Աստծո կամքի ընթանալու հաստատակամություն:

Մեր աղոթքն ենք վերառաքում առ Բարձրյալն Աստված, որ պահի ու պահպանի չինության ու բարօրության մեջ, խաղաղ երկնքի ներքո Ամերիկայի Միացյալ Նահանգները, մեր Հայրենքին ու ողջ ժողովրդին եւ պարգեւի երջանկություն, հավատավոր գործոց հաջողություններ եւ երկնառաք բյուր բարիքներ:

Սրտագին ողջունում ենք այս սրբազան Պատարագին ներկայությունը քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին, ի մասնավորի Կաթողիկ Եկեղեցու հոգեւորականաց, որ եղբայրական սիրով եւ պատրաստակամությամբ հնարավորություն ընձեռեցին Պատարագ մատուցելու այս սրբազան տաճարում:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի չնորհները, սերը եւ ողորմությունը թող լինեն ձեզ ամենքիդ հետ. ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ ՍԵՎԱՆԻ ՍՈՒՐԲ ՀՐԵՇՏԱԿԱՊԵՏԱՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(31 ՄԱՅԻՍԻ, 2015 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Այսօր անմարմնոց փինուորութիւնքն մեծապէս տօնեն,
քանզի երկրաւոր փինաւորաց բազմութիւնքն
ընծայեցան ի խորան սրբութեան երկնից»:
Շարակնոց

Սիրելի՛ հավատավոր զավակներ:

Հոգու ցնծությամբ գալիս ենք Հայրապետական Մեր օրհնությունը բերելու եւ չնորհավորելու Սեւան քաղաքի նորակառույց եկեղեցու օծման ուրախալի այս առիթով: Հիրավի, ամեն մի նոր եկեղեցու օծում ուրախությամբ եւ մեծ հույսով է լցնում մեր հոգիները, քանզի տեսնում ենք հոգեւոր այն արթնությունը, որ առաջնորդում է մեր ժողովրդին դեպի Տեր Աստված եւ մեզ ուղղորդում աստվածահաճո կյանքի լուսավոր հորիզոններով:

Հոյակերտ այս սուրբ տաճարն այսօր անվանակոչեցինք Սրբոց Հրեշտակապետաց՝ ի պատիվ երկնային անմարմին զորությունների: Շարականագիրը մարտիրոսներին նվիրված շարականի մեջ ասում է. «Այսօր անմարմին զինվորությունները մեծապես տոնում են, քանզի երկրավոր զինվորների բազմությունները ընծայվեցին երկնքի սուրբ խորանին»: Անմարմին զինվորությունները հրեշտակապետերն են՝ ինը դաս հրեշտակների հետ միասին, իսկ երկրավոր զինվորությունները՝ այս աշխարհում Հիսուս Քրիստոսին իբրեւ Տեր եւ Աստված դավանող հավատավոր անձինք, ովքեր իրենց կյանքից առավել են համա-

[1] «Էջմիածին», 2015, Ե, էջ 13:

րում Աստծո հանդեպ ունեցած հավատն ու սերը: Սիրելինե՛ր, մեկ դար առաջ Օսմանյան կայսրությունում մեր ժողովրդի զավակները մարտիրոսության պսակն առան եւ ընծայվեցին երկնքի սուրբ խորանին: Այս տարի՝ ապրիլի 23-ին, Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին սրբատասեց մեր քաջարի նահատակներին, եւ այսօր, երբ Սեւան քաղաքում կատարեցինք օծումը նորակառույց այս եկեղեցու, Մեր մտքում կրկին չարականագրի խոսքերն են: Երկնային զորությունները՝ սուրբ հրեշտակապետերը, ցնծում են երկնքում, քանզի երկրի վրա հանուն հավատի եւ հանուն հայրենիքի նահատակված մեր հայրերը երկնքի սուրբ խորանին ընծայվեցին:

Առաքելական Մեր Սուրբ Եկեղեցին դարեր շարունակ առաջնորդում է հայ ժողովրդին առ Աստված տանող փրկության ճանապարհով: Հայ Եկեղեցին, հոգեփրկչական իր առաքելությանը զուգընթաց, կերտում, պահպանում է նաեւ մեր ժողովրդի ինքնությունը, սերը եւ նվիրումը ազգին ու հայրենիքին: Հոգեփրկչություն եւ ազգապահպանություն, այս են հիմնասյունները մեր Եկեղեցու առաքելության, որն այսուհետեւ, սիրելինե՛ր, ձեր կյանքում պիտի չարունակվի նաեւ այս եկեղեցու միջոցով:

Շուրջ 25 տարի առաջ Սեւանա թերակղզում հիմնադրվեց Վազգենյան հոգեւոր դպրանոցը, եւ սկսեցին կանոնավոր կերպով ժամերգություններ կատարել, սուրբ եւ անմահ պատարագներ մատուցել: Քաջատեղյակ ենք, որ անցնող տարիներին Սեւան քաղաքի հավատավոր մեր հայորդիք իրենց աղոթքն են վերառաքել եւ աստվածպաշտական արարողություններին մասնակցել Սեւանա թերակղզու Սուրբ Առաքելոց վանքում: Վստահ ենք՝ Սեւան քաղաքի նորաօծ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցին պիտի առավել դյուրին դարձնի հավատավոր մեր ժողովրդի հոգեւոր կյանքի կազմակերպումը եւ համախմբումը Եկեղեցու շուրջ՝ արթուն պահելով հույսն ու հավատքը ձեր սրտերում, հավատարմությունը մեր հայրենյաց արժեքներին: Վստահ ենք, որ եկեղեցին միշտ լեցուն պիտի լինի հավատացյալներով: Այստեղ երկինքն ու երկիրն են միավորվում, եւ երկնային զինվորություններն Աստծուն են օրհնաբանում երկրային զինվորության հետ, որ դուք եք՝ առ Քրիստոս մեր Տերը ձեր անխախտ հավատքով:

Սիրելի՛ ներկաներ, եկեղեցու օծման այս տոնական առիթով, այս հոգեչեն պահին Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու բարերար մեծարգո տիար Սարգիս Պետոյանին, ում իշխանական նվիրատվությամբ իրականություն դար-

ձավ գեղեցկատես այս եկեղեցու կառուցումը: Մեր գնահատանքն ենք բերում նաեւ Սեւան քաղաքի քաղաքապետ մեծարգո տիար Ռուդիկ Ղուկասյանին՝ եկեղեցու կառուցման գործին մեծապես նպաստելու համար: Շնորհավորում ենք նաեւ Սրբոց Հրեշտակապետաց եկեղեցու ճարտարապետ տիար Արտակ Ղուլյանին, ով մասնագիտական իր բարձր կարողություններով յուրօրինակ նոր չունչ ու ոգի է հաղորդում ավանդական հայ ճարտարապետությանը:

Մեր օրհնությունն ու գնահատանքի խոսքն ենք ուղղում նաեւ Գեղարքունիքի թեմի առաջնորդին, Սեւան քաղաքի եւ թեմի հոգեւոր բոլոր սպասավորներին, աղոթում, որ Տերը բազմապատկի նրանց ջանքերը՝ ի չահ մեր Սուրբ Եկեղեցու պայծառության, հավատավոր հայորդյաց հոգեւոր արթնության:

Թող սուրբ հրեշտակապետերը մշտապես խաղաղության ավետիս եւ բարի լուր բերեն Սեւան քաղաքի մեր սիրելի զավակներին ու աստվածասեր մեր ժողովրդին, բարեխոս լինեն ամենազոր Տիրոջ առջեւ տերունահաստատ մեր Սուրբ Եկեղեցու եւ օրհնյալ մեր Հայրենիքի համար:

Շնորհ Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեսեան. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՐՏԱՇԱՏԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(31 ՄԱՅԻՍԻ, 2015 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

*«Տէր, սիրեցի կվայելչութիւն տանդ քոյ
եւ վտեղի յարկի փառաց քոց» (Սաղմ. 25.8):*

Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր:

Առ Բարձրյալն Աստված գոհաբանությամբ սրբալուսյա մյուռոնով կատարեցինք օծումը Արտաշատի նորակառույց Սուրբ Հովհաննես եկեղեցու« որը պիտի հավելի օրհնությունն ու երկնառաք չնորհները հայրենի մեր երկրում« մեր ժողովրդի կյանքում:

Հոգու առանձնակի ուրախություն է Մեզ համար ողջունել սրբազան այս արարողությանը ներկա Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ տիար Բակո Սահակյանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վաստակյալ նախագահ տիար Արկադի Ղուկասյանին, պետական բարձրաստիճան հարգարժան այրերին եւ հավատավոր Մեր բոլոր զավակներին:

Հայոց հինավուրց մայրաքաղաք Արտաշատում վեր հառնած այս հոյակերտ եկեղեցին, հիրավի, նոր հոգեւոր չունչ եւ վերելք է բերելու համայնքային կյանքում՝ հրավիրելով աղոթքի« աստվածպաշտության, ազնիվ ու արդար, հայրենաշեն ու ազգանվեր գործերի: Եկեղեցու կամարների ներքո բարեպաշտ հայորդիք պիտի զորանան ոգով, առ Աստված սիրով, ստանան հոգեւոր մխիթարություն՝ իրենց սրտերում գոհաբանության զգացումով հնչեցնելով սաղմոսերգուի խոսքերը. «Տե՛ր,

[1] «Էջմիածին», 2015, Ե, էջ 15:

սիրեցի Քո տան վայելչությունը եւ Քո փառքի բնակության վայրը»:

Եկեղեցին Բարձրյալի ներկայությունն է մեր կյանքում, ուր ամեն հավատավոր՝ աշխատավոր թե իշխանավոր, այր թե կին, երիտասարդ թե տարեց, խոնարհությամբ են մուտք գործում եւ իրենց հոգու հայցը բարձրացնում առ Աստված, գոհաբանություն մատուցում Տիրոջը Իր անգին պարգեւների, Իր հայրական խնամքի եւ օրհնություննների համար: Եկեղեցին սրբություն է պարգեւում՝ իր նվիրական կամարների ներքո համախմբված հավատացյալների հոգիներից ներս հեղելով աստվածային կենարար չնորհները, առաջնորդելով Աստծո հետ աղոթական հաղորդակցության, Տիրոջ հետ մերձավորության: Աղոթավայրի օրհնյալ հարկից ներս Սուրբ Հոգու չնորհների ներազդեցությամբ սրբության կնիքն ու դրոշմն է կրում հավատացյալ անձը, պայծառակերպվում ու մաքրագործվում, ինչպես այս մասին վկայում է առաքյալը. «Ամբողջ կառուցը Տիրոջով վերաճում է տաճարի, որի մեջ դուք էլ նրա հետ կառուցվում եք որպես բնակարան Աստծու՝ Սուրբ Հոգու միջոցով» (Եփ. 2.21-22):

Մեր Սուրբ Եկեղեցին հայի հոգու ծննդավայրն է, ինչպես բնորոշում է մեր մեծանուն բանաստեղծ Վահան Թեքեյանը, քանզի մեր Մայր Եկեղեցու սուրբ ավազանից ենք ի հոգեւորս ծնվում իբրեւ քրիստոնյաներ, այստեղ ենք զորություն ստանում հոգեւոր կյանքի եւ առաքինի գործերի համար: Եկեղեցու հովանու ներքո մենք հաղորդակցվում ենք մեր հոգեւոր-ազգային դարավոր արժեքներին, մեր պատմությանը, ազգային մեր ինքնությունը ձեւավորած անգին ժառանգությանը մեր հայրերի: Այստեղ ենք մենք ճանաչվում որպես հետնորդները Աստծո խոսքը հայերեն հնչեցրած, հայոց գրերը երկնած Մեսրոպ Մաշտոցի եւ հայոց ոսկեդարը կերտած նրա աշակերտների, հայ ոգու եւ նկարագրի վրա անջնջելի դրոշմ տպավորած Վարդան Մամիկոնյանի, Գրիգոր Նարեկացու, Ներսես Շնորհալու, Ցեղասպանության մեր սուրբ նահատակների եւ մեր բազում սրբերի, ովքեր իրենց կյանքը դարձրեցին ընծայաբերում Աստծուն, ազգին ու հայրենիքին: Ահա այսպես է Եկեղեցին ամուր բերդը մեր ազգային ինքնության պահպանության, ազգային նկարագրի կերտման ու ինքնագիտակցության ամրապնդման, ամուր բերդն է մեր հավատքի, քանզի, ըստ տերունական առակի, սա Քրիստոս Վեմի վրա հաստատված այն տունն է, որն անսասան ու զորեղ է պահում այստեղ բնակվող իր զավակներին: Եկեղեցու կառուցումը նաեւ ոգեկոչում է Ցեղասպանության մեր նահատակների հիշատակը, ովքեր զոհվեցին անկախ ու ազատ հայրենիքի տեսիլքը

իրենց հոգում, երազելով, որ մեր ժողովուրդը, պետականության հովանու ներքո հայրենյաց հավատքով զորացյալ՝ չենացնի իր կյանքը, պայծառացնի ազգային-եկեղեցական անդաստանը:

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր, Ցեղասպանության մեր սուրբ նահատակների կտակին հավատարիմ՝ այսօր դիմակայենք մեր կյանքում առկա դժվարություններին, չվհատվենք ու չտկարանանք խնդիրների ու մարտահրավերների առջեւ, այլ հավատքով զորացյալ եւ առ Աստված ապավինությամբ իրականություն դարձնենք մեր բարօր ու առաջադեմ կյանքի, լուսավոր ու հզոր հայրենիքի տեսիլքը: Միշտ բանուկ պահեք ճանապարհը դեպի այս սուրբ եկեղեցին եւ ամրապնդեք ձեր կամքը, ուժն ու կորովը՝ ձեր սրտերում կրելու լուսեղեն պատգամները մեր Տեր Հիսուս Քրիստոսի, ապրելու աստվածահաճո ընթացքով, հաղթահարելու մեր կյանքի դժվարությունները եւ մշտապես հաստատուն լինելու հավատքի, հայրենասիրության ու ազգասիրության մեջ: Բարիք պիտի լինի ձեզ համար հաճախ այցելել եկեղեցի, աղոթամատույց մասնակցել աստվածպաշտական արարողություններին, քանզի ձեզ համար այս եկեղեցուց, որ Տիրոջ տունն է ու Նրա փառքի բնակության վայրը, մշտապես ճառագելու է Ավետարանի լույսը, եւ հեղվելու են երկնային չնորհները ձեր եւ ձեր զավակների հոգիներից ներս՝ դառնալով առաջնորդության լույս, ամրության եւ պահպանության դեպի Աստված ճշմարիտ ուղիներում: Հավատքը եւ եկեղեցասիրության ոգին վառ են եղել Արտաշատի հավատավոր զավակներիդ սրտերում, եւ բարեպաշտ ընթացքով այստեղ ապրող հայորդիներդ միշտ հաստատուն եք եղել աստվածպաշտության չավիղներում, նաեւ որպես ուխտավոր հաճախ այցելելով Նվիրական Խոր Վիրապ վանքը՝ Սուրբ Գրիգոր Լուսավորչի բարեխոսությամբ Աստծո օրհնությունը հայցելու ձեր կյանքին ու հայրենի մեր երկրին:

Սիրելինե՛ր, Սուրբ Հովհաննես եկեղեցու օծման հոգենորոգ այս առիթով գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում եկեղեցու բարերարին՝ Հայաստանի Հանրապետության մեծարգո վարչապետ տիար Հովիկ Աբրահամյանին: Ուրախությամբ ենք անդրադառնում, որ մեր Սուրբ Եկեղեցու պայծառության նախանձախնդրության կրողն է նաեւ բարերարի որդին[a] տիար Արգամ Աբրահամյանը, ով տարիներ առաջ հանձն առավ Արարատի մարզի Մխչյան գյուղի Սուրբ Հովհաննես եկեղեցու նորոգության աշխատանքների գովարժան հովանավորությունը[a] բարի ավանդ բերելով գյուղում հոգեւոր-եկեղեցական կյանքի առաջընթացին: Մենք

Մեր գնահատանքն ենք բերում Աբրահամյան ընտանիքին՝ ներդրած եկեղեցաչեն կարեւոր նպաստի համար եւ փառք ենք մատուցում Ամենակալ Աստծուն, որ մեր Սուրբ Եկեղեցին զորանում է իր հավատացյալ զավակների աստվածահաճո գործերով ու նախաձեռնություններով: Ի գնահատություն եկեղեցական անդաստանում տիար Հովիկ Աբրահամյանի բարի ավանդի՝ գոհունակ սրտով այսօր չնորհում ենք նրան Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն շքանշանը[a] մաղթելով նորանոր հաջողություններ գործունեության մեջ: Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում նաեւ Արարատյան Հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանին եւ թեմի հոգեւոր դասին՝ գովարժան ծառայության, հավատավոր հայորդիների հոգեւոր խնամքի եւ հոգեւոր-եկեղեցական մեր կյանքի առաջընթացին բերած ջանքերի համար:

Այս տոնական օրը նորաօծ եկեղեցուն ենք նվիրում մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչելության սրբապատկերը՝ նկարված հայ մանրանկարչության ավանդույթներով: Տիրոջ խաչելության այս նվիրական պատկերի առջեւ եկեղեցի այցելող հավատացյալները պիտի աղոթք վերառաքեն առ Բարձրյալ Տերը՝ հայցելով Տիրոջ հովանին մեր ազգին ու հայրենիքին:

Թող Աստված միշտ պայծառ պահի նորակերտ այս եկեղեցին՝ ի վայելումն եւ ի մխիթարություն հավատացյալ Մեր զավակների: Թող մեր սուրբ եկեղեցիների խորաններից սփռվող օրհնությունը հանապազ տարածվի մեր կյանքում եւ հովանի լինի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկրին, աշխարհասփյուռ հայ կյանքին, որպեսզի մեր ժողովուրդը ապրի անվրդով խաղաղության ու ապահովության մեջ եւ կերտի իր լուսավոր գալիքը:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, չնորհը եւ օրհնությունները թող միշտ լինեն ձեզ հետ եւ ամենքի. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ԱՆԹԻԼԻԱՍՈՒՄ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(18 ՀՈՒԼԻՍԻ, 2015 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սրբալուսյ Մյուռոնի օրհնութեան հոգենորոգ արարողութիւն է: Աստվածակառուցյ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եղբայրական սիրով ողջույն ենք հղում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ին, քույր Եկեղեցիների բարձրապատիվ ներկայացուցիչներին, պատվարժան բարձրաստիճան այրերին եւ Մեր օրհնութիւնը բերում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության նվիրյալ եկեղեցականաց դասին ու հավատավոր բարեպաշտ Մեր զավակներին:

Գոհութիւն ենք վերառաքում Երկնավորին, որ սուրբ Մյուռոնի օրհնութեամբ արժանացնում է մեր ժողովրդին Իր չնորհներին ու Ամենազոր Իր Աջի պահպանութեանը եւ հաստատուն պահում Քրիստոսով փրկության ճանապարհին:

Սրբալուսյ Մյուռոնի օրհնութիւնն այսօր կատարվում է մեր ժողովրդի համար նվիրական տարում, երբ ազգովի ոգեկոչում ենք 100-րդ տարելիցը Հայոց ցեղասպանության: Ամիսներ առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Մեր հոգեւոր եղբոր՝ Արամ Ա կաթողիկոսի հետ, մասնակցությամբ հայոց պետական ավագանու, քույր Եկեղեցիների պետերի ու ներկայացուցիչների եւ աղոթակցությամբ մեր ողջ հոգեւոր դասի ու հավատավոր ժողովրդի, կատարեցինք սրբաղասումը հընթացս Ցեղասպանության վասն հավատո եւ վասն հայրենյաց նահատակված մեր ժողովրդի զավակների: Սրբացյալ մեր նահատակների եւ բոլոր սրբերի բարեխոսության աղերսով այժմ միավորում ենք մեր աղոթքները սուրբ Մյուռոնի օրհնության առիթով, հայցելով, որ Տերը

---

[1] «Էջմիածին», 2015, Է, էջ 7:

նրանով պարգեւի մեզ հոգեւոր նորոգութիւն, դեպի Աստված անսայթաք ընթացք եւ մեր կյանքը պահպանի խաղաղութեան ու բարօրութեան մեջ:

Սրբալուսյս Մյուռոնը Սուրբ Հոգու ներկայութիւնն է մեր կյանքից ներս, որ Աստծո օրհնութիւնն ու կենդանարար շնորհներն է բաշխում մեզ՝ դրոշմի սուրբ խորհրդով պարգեւելով հոգեւոր նոր ծնունդ եւ Քրիստոսով նոր կյանք: Սուրբ Գրիգոր Նարեկացին հետեւյալ վկայութիւնն է բերում, ասելով, որ սուրբ Մյուռոնը՝ փրկութեան լուսով կատարյալ այս յուղը, հեղվելով մեզ վրա՝ օծում է երեւութապես մեր արտաքին խորանը, այլեւ աներեւույթ կերպով, ծածկապես մտնում է հոգուց ներս եւ ներքին մարդուն նոր կենդանութիւն պարգեւում (Մատյան ողբերգութեան, Բան ՂԳ 3): Մյուռոնով դրոշմված՝ մենք կազմում ենք հոգեղեն Եկեղեցին, որի գլուխը Քրիստոսն է եւ հիմքը՝ Տիրոջ առաքյալներն ու մեր սուրբ հայրերը, որոնց հավատքի վեմի վրա հաստատված ենք որպես Սուրբ Հոգու տաճար: Մյուռոնի դրոշմը տերունապարգեւ նշանն է Քրիստոսին եւ Սուրբ Եկեղեցուն մեր պատկանելութեան, հանձնառութիւն է անբասիր ու արդար կյանքով ապրելու, եւ ընկալյալ շնորհները ավետարանական մշակների պես շարունակ արդյունավորելու: Սրբալուսյս մյուռոնի կնիքով մենք հաստատվում ենք քրիստոսապատվեր սիրո մեջ, զորանում սրբութեան ու կատարելութեան ճանապարհին, լուսավորված տեսնում մեր առջեւ փրկութեան ուղին, ամրապնդվում տերունապատգամ եղբայրասիրութեան ոգով: Մյուռոնի դրոշմով մեր ժողովրդի զավակաց միջեւ հաստատվում է զորավոր ու անխզելի այն հոգեւոր կապը, որը միավորում է մեզ եւ պահպանում իբրեւ մեկ ազգ ու ժողովուրդ:

Մյուռոնօրհնութեան այս սրբազան արարողութիւնը վերստին հրավեր է մեզ առ Աստված հավատքի եւ ուխտի նորոգութեան, նախանձախնդրութեան հոգեւոր ու ազգային մեր ինքնութեան հանդեպ, հրավեր՝ միաբան ու միասնական մեր ջանքերը ներդնելու ի սպաս մեր Եկեղեցու պայծառութեան, մեր հայրենիքի շենացման ու հզորացման, ի սփյուռս աշխարհի ազգային մեր կյանքի զորացման:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միածնաէջ Սուրբ Խորանի առջեւ աղոթում ենք, որ Աստված սրբալուսյս Մյուռոնի շնորհաբաշխ օրհնութիւնը առատորեն հեղի հոգեւոր եւ ազգային մեր անդաստաններին, անուշաբույր Մյուռոնի կենարար զորութեամբ մշտավառ պահի հավատքը Մեր զավակաց հոգիներում, հաստատուն ու անվրդով պահպանի մեր Եկեղեցին՝ նվիրապետական իր աթոռներով, խաղաղ ու

բարօր՝ մեր հայրենիքը եւ պայծառ աշխարհասփյուռ քրիստոսասեր մեր ժողովրդի կյանքը:

Թող Աստծո չնորհներով խաղաղություն հաստատվի Մերձավոր Արեւելքում եւ աշխարհի տարբեր շրջաններում պատերազմական դժվարությունները կրող բոլոր ժողովուրդների կյանքում:

Թող Տիրոջ չնորհները, սերն ու խաղաղությունը այսօր եւ միշտ լինեն մեզ հետ եւ ամենքի.ամեն:

ՄԱՂԹԱՆՔՆԵՐ, ԽՈՍՔԵՐ, ՔԱՐՈԶՆԵՐ, ՈՒՂԵՐՁՆԵՐ, ՊԱՏԳԱՄՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՔԱՐՈԶԸ ՆՈՐ ՀԱՃԸՆԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(22 ՀՈՒԼԻՍԻ, 2015 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Չի ամենայն որ կարդասցէ կանուն Տեառն՝ կեցցէ»
(Հռոմ. Ժ 13):

ՀՀ մեծարգո՛ նախագահ տիար Սերժ Սարգսյան,
Հարգարժա՛ն պետական այրեր,
Հոգեւո՛ր հայրեր, հարգե՛լի հյուրեր,
Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ ի Հիսուս Քրիստոս:

Մեծ է բոլորիս ուրախությունն այսօր. Հայոց աստվածօրհնյալ երկնակամարի ներքո մի նոր աղթաթուն՝ Նոր Հաճընի չքեղաշուք Ս. Ամենափրկիչ այս եկեղեցին, իր դռներն է բացում հավատավոր մեր ժողովրդի առջեւ: Գոհությո՛ւն ենք մատուցում երկնավոր Տիրոջը, որ հերթական անգամ Մեզ առիթ ու հնարավորություն է ընձեռում՝ կատարելու նորակառույց եկեղեցու օծման հոգենորոգ արարողությունը:

Սիրելինե՛ր, Եկեղեցին փրկության տապանն է, որն այս կյանքի խռովահույզ ծովում մեզ առաջնորդում է դեպի խաղաղության հանգրվան՝ դեպի բաղձալի նավահանգիստը փրկության, որն Աստված է պարգեւում: Քրիստոնյայի երկրավոր կյանքի ճանապարհը ուղեւորություն է դեպի այդ օրհնյալ հանգրվանը, որին առանց Եկեղեցու առաջնորդության անհնար է հասնել: Ինչպես Ընդհանրական Եկեղեցու հայրերից Ս. Կիպրիանոսն է ասում. «Ձիք փրկութիւն յարտաքոյ Եկեղեցւոյ» (Եկեղեցուց դուրս փրկություն չկա): Յուրաքանչյուր նորաօծ եկեղեցու հետ մեր կյանքում բացվում է երկնային չնորհների

[1] «Էջմիածին», 2015, Ե, էջ 9:

եւ օրհնութեան մի նոր աղբյուր՝ զորացնելով առ Աստված հավատքն ու առավել հաստատուն դարձնելով հույսը դեպի փրկութիւն: Փառք Տիրոջ, որ Ս. Ամենափրկիչ եկեղեցու միջոցով փրկագործ այս առաքելութիւնը զորանալու եւ արգասավորվելու է նաեւ Նոր Հաճընի քաղաքում:

Մենք Աստծո նախախնամութիւնն ենք տեսնում, որ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցի նվիրական այս օրերին է օծվում եւ մեր ժողովրդի կյանքում իր առաքելութիւնն սկսում Նոր Հաճընի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին: Հաճընը պատմական Կիլիկիայի ծաղկուն քաղաքներից էր, որի հայ բնակչութիւնը՝ չուրջ 30.000, հարյուր տարի առաջ տարհանվեց եւ աքսորվեց դեպի Դեր Զոր, որտեղ նրանց մեծ մասը դաժանաբար կոտորվեց: Փրկվածները վերադարձան իրենց հայրենի բնաշխարհ, ձեռնամուխ եղան վերականգնելու իրենց տները, շարունակելու իրենց խաղաղ կյանքը, սակայն 1920 թ. կրկին հայտնվեցին բնաջնջման սպառնալիքի առջեւ: Քեմալական դերակչիռ ուժերի դեմ 8 ամիս շարունակվեց Հաճընի հերոսամարտը: Եվ հատկանշական է, որ քաղաքի ինքնապաշտպանութիւնը գլխավորում էր Հաճընի արիասիրտ առաջնորդ Պետրոս եպիսկոպոս Սարաճյանը, ով, Քրիստոսի օրինակին հետեւելով՝ պատրաստ էր իր կյանքը տալու հանուն իր հոտի փրկութեան: Քաջարի հայորդիք՝ հավատարիմ իրենց հայրենիքին ու հավատքին, աղոթքը շուրթներին կյանքի գնով պաշտպանում էին հայրենի սրբութիւնները: Շնորհիվ ինքնապաշտպանութեան՝ փրկվեցին մեր ժողովրդի շատ զավակներ, իսկ տասնամյակ անց հաստատվեց Նոր Հաճընն ավանը, որն ընդարձակվել, քաղաք է դարձել՝ վկայելով մեր ժողովրդի վերածնունդը եւ հավատքով նորոգվող կյանքը:

Այսօր Նոր Հաճընում վեր է հառնել ու մեր աղոթքները երկինք է բարձրացնում Ս. Ամենափրկիչ եկեղեցին, որի օծման այս հոգեզվարթ եւ լուսավոր օրը Մեր միտքն են գալիս առաքյալի աստվածաշունչ խոսքերը. «...ամենայն ոք, որ Տիրոջ անունը կանչի, կփրկուի» (Հռոմ. Ժ 13): Այս հավատքով մեր ժողովուրդը դիմակայել է պատմութեան փորձութիւններին, ի զորու եղել վեր հառնել մահվան ճիրաններից եւ նոր կյանք կառուցել: Հայոց ցեղասպանութենից հետո աշխարհով մեկ սփռված հայութիւնը, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու չուրջ համախմբված, կարողացավ պահպանել ազգային իր դիմագիծը, Աստուծո անունը կանչելով՝ հաղթահարեց նեղութիւններն ու հավատաց իր լուսավոր ապագային: Այսօր, երբ ազատ է մեր հայրենիքը, երբ նոր

չունչ է առնում մեր հոգեւոր եւ ազգային կյանքը, մեզ առավել եւս պիտի միավորի մեր հավատքը, որ մեր ամեն կարելիությամբ չենաց-նենք մեր երկիրն ու պայծառ պահենք մեզ դեպի փրկություն առաջ-նորդող մեր Սուրբ Եկեղեցին:

Հավատում ենք, որ Ամենափրկիչ մեր Տիրոջ սուրբ անունը կրող այս նորաշուք եկեղեցին միշտ լեցուն պիտի լինի հավատացյալներով եւ ձեր աղոթքներով, արդար, քաջ եւ դրվատելի գործերով, ձեր հավա-տավոր ընթացքով Աստծո չնորհներն ու օրհնությունը պիտի առատա-նան մեր կյանքում:

Սիրելինե՛ր, գոհունակ սրտով ողջունում ենք Ս. Ամենափրկիչ եկե-ղեցու օծման հոգեշեն արարողությանը պետական այրերի հետ ներ-կայությունը Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանի եւ աղոթք ենք բարձրացնում, որ Տերն օրհնի հարգարժան նախագահի ու հայրենի իշխանության ջանքերը՝ հանուն մեր երկրի խաղաղության եւ մեր ժողովրդի բարօրության:

Մեր բարձր գնահատանքն ենք բերում հարգարժան տեր եւ տիկին Կոլյա եւ Ռոզա Ծառուկյաններին, նրանց արժանավոր զավակ տիար Գագիկ Ծառուկյանին, որոնց ազնիվ հանձնառություններով այսօր վեցերորդ եկեղեցին է վեր հառնում հայրենի մեր երկրում: Բարձր գնահատելով Ծառուկյան ընտանիքի եկեղեցաշեն գործունեությունը՝ Ս. Ամենափրկիչ եկեղեցու օծման ուրախ առիթով Հայրապետական սրբատառ կոնդակով տեր եւ տիկին Կոլյա եւ Ռոզա Ծառուկյաննե-րին չնորհում ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն չքանշանը: Ամենողորմ Տիրոջ օրհնությունն ու պահպանությունն ենք հայցում Ծառուկյան ընտա-նիքի անդամներին՝ մաղթելով արեւշատություն եւ ամենառատ չնորհ-ներ՝ նոր բարի գործերի:

Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Կոտայքի թեմի առաջնորդ գերաչնորհ Տ. Առաքել արքեպիսկոպոս Քարամյանին ու հոգեւոր դասին, ովքեր նվիրումով իրենց ծառայությունն են բերում ի պայծառություն տիրախնամ թեմի եւ Առաքելական մեր Սուրբ Եկե-ղեցու:

Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում եկեղեցու չնորհա-լի ճարտարապետին՝ տիար Արտակ Ղուլյանին, ով, հայ եկեղեցական ճարտարապետության ավանդներին հավատարիմ, իրականացրել է Ս. Ամենափրկիչ եկեղեցու նախագծումը: Մեր օրհնությունը եկեղեցու շինարարներին ու բոլոր նրանց, ովքեր իրենց մասնակցությունն են

բերել այս հոյակերտ եկեղեցու կառուցման եւ բարեզարդման աշխատանքներին:

Աղոթում ենք առ բարին Աստված, որ Իր ամենազոր Աջի հովանու ներքո միշտ խաղաղ ու ապահով պահպանի հայրենի մեր երկիրը, չեն եւ պայծառ՝ մեր Սուրբ Եկեղեցին, երկնային Իր չնորհներով առատապես օրհնի ու զորացնի Նոր Հաճընի հավատավոր Մեր զավակներին եւ եկեղեցու ազնիվ բարերարներին:

Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ եւ Փրկչին Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ Ձեզ, ընդ ամենեսեանդ. ամէն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2015Թ.)[1]

Գիտելիքի օրվա եւ 2015-2016 ուսումնական տարվա բացման առիթով Մայր Աթոռ Ս. Էջմիածնից հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ չնորհավորանքներն ենք բերում կրթության ասպարեզի նվիրյալ սպասավորներին, մեր սիրելի ուսանողներին եւ աշակերտներին:

Մեր ժողովուրդն առանձնահատուկ սեր ու ճգտում ունի դեպի կրթությունը եւ մեծ պատկառանք ու խոնարհում է տածում ուսուցչի եւ մանկավարժի հանդեպ, ովքեր անմնացորդ նվիրումով ծառայում են սերունդների կրթության եւ դաստիարակության վսեմ գործին: Մեր երկրի առաջընթացի ու զարգացման, մեր ժողովրդի բարօր կյանքի հաստատման համար առաջնային դեր ունեն կրթական մեր հաստատությունները, որ կոչված են ապահովելու արդի պահանջները բավարարող որակյալ կրթություն, սերմանելու հոգեւոր եւ ազգային արժեքներ մեր զավակց հոգիներում, որոնց ձեռքերում է մեր ապագան: Ամենքիս առաքելությունն է կերտել ազնիվ, հայրենասեր ու հավատավոր նկարագիրը մեր զավակների, զորացնել նրանց մեջ պատասխանատվությունն ապագայի նկատմամբ եւ ամրապնդել Աստծո կողմից տրված չնորհները բազմապատկելու եւ ի չահ մեր երկրի եւ ժողովրդի գործադրելու հանձնառությունը:

Հայրական սիրով եւ օրհնությամբ մաղթում ենք, որ երկնավոր մեր Տերը բազում հաջողություններով պսակի մեր սանների ուսումնառության ընթացքը եւ չնորհազարդի ու զորակից լինի մեր սիրելի

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2015, սեպտեմբեր Ա, թիվ 17, (445), էջ 1:

մանկավարժներին եւ կրթության գործի բոլոր մշակներին՝ իրենց նվիրական եւ պատասխանատու կոչման եւ առաքելության մեջ:

Թող մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի աստվածային ամենառատ սերն ու չնորհները միշտ ձեզ հետ լինեն, ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՐԲԱԼՈՒՅՍ ՄՅՈՒՌՈՆԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Սրբալուսյս Մյուռոնի օրհնութեան հոգեներոգ արարողութիւն է: Աստվածակառույց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից եղբայրական սիրով ողջույն ենք հղում Մեծի Տանն Կիլիկիո Կաթողիկոս Արամ Ա-ին, քույր Եկեղեցիների բարձրապատիվ ներկայացուցիչներին, պատվարժան բարձրաստիճան այրերին եւ Մեր օրհնութիւնը բերում Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության նվիրյալ եկեղեցականաց դասին ու հավատավոր բարեպաշտ Մեր զավակներին:

Գոհութիւն ենք վերառաքում երկնավորին, որ սուրբ Մյուռոնի օրհնութեամբ արժանացնում է մեր ժողովրդին Իր չնորհներին ու Ամենազոր Իր Աջի պահպանութեանը եւ հաստատուն պահում Քրիստոսով փրկութեան ճանապարհին:

Սրբալուսյս Մյուռոնի օրհնութիւնն այսօր կատարվում է մեր ժողովրդի համար նվիրական տարում, երբ ազգովի ոգեկոչում ենք 100-րդ տարելիցը Հայոց ցեղասպանության: Ամիսներ առաջ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Մեր հոգեւոր եղբոր՝ Արամ Ա կաթողիկոսի հետ, մասնակցութեամբ հայոց պետական ավագանու, քույր Եկեղեցիների պետերի ու ներկայացուցիչների եւ աղոթակցութեամբ մեր ողջ հոգեւոր դասի ու հավատավոր ժողովրդի, կատարեցինք սրբազասումը հընթացս Ցեղասպանության վասն հավատո եւ վասն հայրենյաց նահատակված մեր ժողովրդի զավակների: Սրբացյալ մեր նահատակների եւ բոլոր սրբերի բարեխոսության աղերսով այժմ մխավորում ենք մեր աղոթքները սուրբ Մյուռոնի օրհնության առիթով՝ հայցելով, որ Տերը

[1] «Էջմիածին», 2015, Թ, էջ 12:

նրանով պարգեւի մեզ հոգեւոր նորոգութիւն, դեպի Աստված անսայթաք ընթացք եւ մեր կեանքը պահպանի խաղաղութեան ու բարօրութեան մեջ:

Սրբալուսյ Մյուռոնը Սուրբ Հոգու ներկայութիւնն է մեր կեանքից ներս, որ Աստծո օրհնութիւնն ու կենդանարար շնորհները է բաշխում մեզ՝ դրոշմի սուրբ խորհրդով պարգեւելով հոգեւոր նոր ծնունդ եւ Քրիստոսով նոր կեանք: Սուրբ Գրիգոր Նարեկացին հետեւյալ վկայութիւնն է բերում, ասելով, որ սուրբ Մյուռոնը՝ փրկութեան լուսով կատարյալ այս յուղը, հեղվելով մեզ վրա՝ օծում է երեւութապես մեր արտաքին խորանը, այլեւ աներեւույթ կերպով, ծածկապես մտնում է հոգուց ներս եւ ներքին մարդուն նոր կենդանութիւն պարգեւում (Մատյան ողբերգութեան, Բան ՂԳ 3): Մյուռոնով դրոշմված՝ մենք կազմում ենք հոգեղեն Եկեղեցին, որի գլուխը Քրիստոսն է եւ հիմքը՝ Տիրոջ առաքյալներն ու մեր սուրբ հայրերը, որոնց հավատքի վեմի վրա հաստատված ենք որպես Սուրբ Հոգու տաճար: Մյուռոնի դրոշմը տերունապարգեւ նշանն է Քրիստոսին եւ Սուրբ Եկեղեցուն մեր պատկանելութեան, հանճնառութիւն է անբասիր ու արդար կեանքով ապրելու, եւ ընկալյալ շնորհները ավետարանական մշակների պես շարունակ արդյունավորելու: Սրբալուսյ մյուռոնի կնիքով մենք հաստատվում ենք քրիստոսապատվեր սիրո մեջ, զորանում սրբութեան ու կատարելութեան ճանապարհին, լուսավորված տեսնում մեր առջեւ փրկութեան ուղին, ամրապնդվում տերունապատգամ եղբայրասիրութեան ոգով: Մյուռոնի դրոշմով մեր ժողովրդի զավակաց միջեւ հաստատվում է զորավոր ու անխզելի այն հոգեւոր կապը, որը միավորում է մեզ եւ պահպանում իբրեւ մեկ ազգ ու ժողովուրդ:

Մյուռոնօրհնութեան այս սրբազան արարողութիւնը վերստին հրավեր է մեզ առ Աստված հավատքի եւ ուխտի նորոգութեան, նախանձախնդրութեան հոգեւոր ու ազգային մեր ինքնութեան հանդեպ, հրավեր՝ միաբան ու միասնական մեր ջանքերը ներդնելու ի սպաս մեր Եկեղեցու պայծառութեան, մեր հայրենիքի շենացման ու հզորացման, ի սփյուռս աշխարհի ազգային մեր կեանքի զորացման:Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Միածնակ Սուրբ Խորանի առջեւ աղոթում ենք ,

որ Աստված սրբալուսյ Մյուռոնի շնորհաբաշխ օրհնութիւնը առատորեն հեղի հոգեւոր եւ ազգային մեր անդաստաններին, անուշաբուսյր Մյուռոնի կենարար զորութեամբ մշտավառ պահի հավատքը Մեր զավակաց հոգիներում, հաստատուն ու անվրդով պահպանի մեր Եկեղեցին՝ նվիրապետական իր աթոռներով, խաղաղ ու բարօր՝ մեր

հայրենիքը եւ պայծառ աշխարհասփյուռ քրիստոսասեր մեր ժողովրդի կյանքը:

Թող Աստծո չնորհներով խաղաղություն հաստատվի Մերձավոր Արեւելքում եւ աշխարհի տարբեր շրջաններում պատերազմական դժվարությունները կրող բոլոր ժողովուրդների կյանքում:

Թող Տիրոջ չնորհները, սերն ու խաղաղությունը այսօր եւ միշտ լինեն մեզ հետ եւ ամենքի: Ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄՅՈՒՌՈՆՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ ՏՐՎԱԾ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒՅԹԻՆ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Մեծարգո՛ վարչապետ Հայաստանի Հանրապետության,
Քույր Եկեղեցիների չնորհազա՛րդ պետեր եւ հոգեւոր հայրեր,
Սիրելի՛ բարեպաշտ զավակներ եւ հարգելի՛ հյուրեր:

Փառք եւ գոհություն ենք առաքում առ Բարձրյալ Տերը, որ Իր խնամքի ու հովանու ներքո սրբալուսյա Մյուռոնի օրհնությունը կատարելով, համախմբվել ենք հյուրասիրության սեղանի չուրջ՝ կիսելու միմյանց հետ Մյուռոնօրհնության մեր ուրախությունն ու բերկրանքը: Մյուռոնի օրհնության սրբազան արարողությանը մենք երկնառաք պարգեւների հայցով միավորեցինք մեր աղոթքները նաեւ աշխարհի խաղաղության, ժողովուրդների բարօրության, մարդկության կյանքում արդարության ուղիների զորացման համար՝ մեր հայացքի առջեւ ունենալով այսօր աշխարհի տարբեր անկյուններում հակամարտությունների եւ տնտեսական ցնցումների հետեւանքով բազմաթիվ մարդկանց, նաեւ մեր ժողովրդի զավակների անդառնալի կորուստները, տառապանքներն ու զրկանքները:

20-րդ դարասկզբի մեր լուսամիտ եկեղեցականներից Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանն այսպես է բնութագրել հայոց կյանքում Մյուռոնի նշանակությունը. «Քրիստոսի Սուրբ Խաչի հետ՝ ամենից նվիրական, խորհրդավոր եւ սրտի մոտ սրբությունը հայ քրիստոնյայի համար սուրբ Մյուռոնն է»: Մեր ժողովրդի ինքնության հիմքն ու հավատքի առհավատչյան է սուրբ Մյուռոնը, որը մեր Եկեղեցու հիմնադիր սուրբ առաքյալների եւ սուրբ Գրիգոր Լուսավորիչ մեր Հայրապետի ձեռամբ չաղախվել է մեր հայրենիքին, մեր ժողովրդի էությանն ու մշակույթին: Մկրտությամբ եւ սրբալուսյա Մյուռոնի դրոշմով մեր

[1] «Էջմիածին», 2015, Թ, էջ 16:

ժողովրդի զավակները միավորվում են միմյանց հետ ինչպես հավատքի, այնպես եւ՝ հայրենիքի հոգեւոր կապով, որը ո՛չ ժամանակը, եւ ո՛չ էլ տարածությունը ի զորու չեն խախտելու եւ սասանելու: Այս վկայությունը մեր ժողովուրդը բերեց նաեւ Հայոց ցեղասպանության դժնդակ տարիներին:

Ցեղասպանությունից 100 տարի անց, այսօր Հայոց հոգեւոր ծննդավայրում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, կատարելով օրհնության սրբալույս Մյուռոնի՝ Մենք այն կոչեցինք «Հաղթության Մյուռոն», քանզի մյուռոնադրոշմ հավատքով հաղթահարել ենք մեր կյանքի բազում փորձությունները, կերտել մեր պետականությունը, ազգային-եկեղեցական վերածնված կյանքը եւ հավատում ենք՝ այնքան ժամանակ, որ Քրիստոսի սերն է բնակվում մեր մեջ, մյուռոնադրոշմ հավատքի զորությամբ կարող պիտի լինենք հարատեւել եւ կերտել հաղթական ու լուսավոր գալիքը մեր ժողովրդի:

Սիրելինե՛ր, խորին գոհունակություն է Հայրապետիս համար, որ մեր ժողովրդի հազարավոր զավակներ աշխարհի բոլոր կողմերից Սուրբ Էջմիածնում մասնակցեցին սրբալույս Մյուռոնի օրհնությանը, ինչպես եւ ապրիլի 23-ին՝ Հայոց ցեղասպանության նահատակների Սրբազոսման արարողությանը: Այս համախմբվածությամբ էր, որ ազգովի՝ հայրենիքում եւ ի սփյուռս աշխարհի, բազմաբնույթ միջոցառումներով եւ հիշատակի արարողություններով ոգեկոչեցինք Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի հիշատակը եւ ի լուր աշխարհի մեկ անգամ եւս բարձրաձայնեցինք մեր ժողովրդի արդարության պահանջը:

Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում հայրենի իշխանություններին՝ ի դեմս այստեղ ներկա մեծարգո վարչապետի եւ պետական այրերի, մեր Եկեղեցու հանդեպ դրսեւորած ազնիվ ու բարյացակամ վերաբերմունքի, Մյուռոնօրհնության ու Սրբազոսման արարողություններին իրենց մասնակցության եւ ցուցաբերած աջակցության համար:

Մեծապես զգացված ենք, որ այսօր Մյուռոնօրհնությանը եւ ապրիլի 23-ին Հայոց ցեղասպանության նահատակների Սրբազոսման արարողությանը մասնակցություն բերեցին եւ Մեզ ու մեր ժողովրդին աղոթակից եղան քույր Եկեղեցիների պետեր ու հոգեւոր առաջնորդներ՝ վկայելով եղբայրական սերն ու ջերմ փոխհարաբերությունները մեր Եկեղեցիների: Ի խորոց սրտի չնորհակալության Մեր խոսքն ենք բերում Ձեզ, սիրելի՛ հոգեւոր եղբայրներ: Հայցում ենք մեր Տիրոջ

չնորհները եւ պահապան Սուրբ Հոգի հովանին Ձեզ եւ տիրախնամ Ձեր հոտին՝ մաղթելով քաջառողջ կյանքի երկար տարիներ եւ հաջողութ-յուններ քրիստոսապատվեր առաքելության մեջ:

Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում այստեղ ներկա մեր Սուրբ Եկեղեցու ազնիվ բարերարներին, ովքեր ներկայացնում են մեծ բանակը մեր ժողովրդի ազգասեր ու եկեղեցանվեր բարեգործ զավակների, ինչպես եւ՝ մեկդարյա ազգաշեն առաքելության վաստակ ունեցող Հայ Բարեգործական Ընդհանուր Միության երախտարժան անդամներին, որ որդիական ջերմ զգացումներով եւ հանձնառութ-յամբ իրենց արդար վաստակն ու ժամանակը ի սպաս են դնում մեր Սուրբ Եկեղեցու պայծառությանը, մեր երկրի զորացմանը եւ մեր ժո-ղովրդի բարօրությանը: Հոգու բերկրանքով այսօր Մեր բարձր գնահա-հատանքն ենք բերում Մյուռոնօրհնության կնքահայր, մեր Եկեղեցու եւ ազգի գովարժան բարերար տիար Հայկ Տիտիզյանին, իր մեծազնիվ տիկնոջը՝ Էլզային եւ Տիտիզյան ընտանիքին, ովքեր իրենց սրտաբուխ նվիրատվությամբ եւ ջանադիր նվիրումով մեծ նպաստ բերեցին Մյու-ռոնի օրհնության սրբազան արարողության ու միջոցառումների կազ-մակերպման աշխատանքներին:

Մեր օրհնությունը եւ բարեմաղթանքներն ենք բերում բարձրա-պատիվ դեսպանին բարեկամ Հունաստանի եւ հավատակից հույն ժո-ղովրդի՝ այստեղ ներկա բարեպաշտ զավակներին, ովքեր մեծ սիրով եւ հոժարությամբ Մյուռոնօրհնության համար ձիթայուղի մեծաքանակ նվիրաբերություն կատարեցին:

Մեր գնահատանքն ու օրհնությունը՝ մեր Սուրբ Եկեղեցու հո-գեւոր դասին եւ պաշտոնեությանը, մասնավորաբար՝ կազմակերպիչ հանձնախմբի անդամներին եւ ենթահանձնախմբերում ընդգրկված անձանց, ովքեր անդուլ ջանքեր ներդրեցին ի խնդիր Մյուռոնօրհնութ-յան պատշաճ կազմակերպման եւ հանդիսավոր անցկացման:

Մյուռոնօրհնության սքանչելախորհուրդ այս առիթով Մեր չնոր-հավորանքները եւ բարեմաղթանքներն ենք բերում՝ Ձեզ, հյուրասի-րությանը մասնակից հավատավոր զավակներիդ մեր Սուրբ Եկեղեցու: Աղոթում ենք, որ «Հաղթության Մյուռոնի» կնիքով ու չնորհաբաշ-խությամբ առատանան մեր ժողովրդի հաղթանակներն ու ձեռքբե-րումները ազգային-եկեղեցական մեր կյանքի անդաստանում, եւ ստվարանան շարքերը Քրիստոսի նվիրյալ հետեւորդների՝ Մյուռոնով օծված հայ զավակներով: Հայցում ենք մեր նահատակ սուրբ վկաների բարեխոսությունը Քրիստոսի Սուրբ Եկեղեցու պայծառության հա-

մար եւ աշխարհում խաղաղութեան, արդարութեան ու համերաշխութեան ամրապնդման համար: Թող Աստված չեն պահի մեր հայրենիքը, հավատքով ամուր, սիրով ու միասնական՝ աշխարհասփյուռ մեր ժողովրդին:

Մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի սերն ու խաղաղությունը թող լինեն ամենքիս հետ, այսօր եւ հավիտյանս.ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԱՍԻՍԻ ՍՈՒՐԲ ԹԱԴԵՈՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(4 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ., ՄԱՍԻՍ)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եկայք շինեսցուք սուրբ վիտրանն լուսոյ,
քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս»
(Շարական Սուրբ Էջմիածնի):

Սիրելի՛ հավատավոր հայորդիներ:

Հոգեւոր ուրախության զգացումներով ենք այսօր համակված ամենքս: Առ Բարձրյալն Աստված փառաբանությամբ, ձեզ հետ միասնական աղոթակցությամբ կատարեցինք օծումը Մասիս քաղաքի Սուրբ Թադեոս եկեղեցու:

Սուրբ Էջմիածնի տոնին նվիրված գեղեցիկ չարականն արտահայտում է Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Հայոց առաջին Հայրապետի կոչը. «Եկայք շինեսցուք սուրբ վիտրանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս»: Նոր եկեղեցիների կառուցումը իրագործումն է այս կոչի՝ զառնալով ոգեւորություն եւ խրախույս մեր կյանքում՝ վառ պահելու հավատքի լույսը, ապրելու բարեպաշտությամբ, գործելու Աստծո կամքի համաձայն: Նորակառույց եւ գեղեցկակերտ այս եկեղեցին կրում է Սուրբ Թադեոս առաքյալի անունը, որին չարականագիրը կոչում է «Հայրատունկ այգու հրեղեն պարիսպ, ոսկեղեն բաժակ, ժիր մատուռակ եւ Հայաստանյայց հոգեւոր հայր»: Թադեոս եւ Բարդուղիմեոս առաքյալները քրիստոնեության լույսը բերեցին Հայաստան եւ Տիրոջ կենարար չնորհներին արժանի դարձրեցին մեր ժողովրդին: Օրեր առաջ Սուրբ Մյուռոնի օրհնության արարողությանը Մենք հիշատակեցինք,

[1] «Էջմիածին», 2015, ԺԴ, էջ 13:

որ Թադեոս առաքյալի ձեռամբ է Հայաստան բերվել Քրիստոսի կողմից օրհնված յուղը, որի զորությունը հաղորդվում է մեր սրբալույս մյուռոնին եւ որով այժմ կատարեցինք օծումը այս եկեղեցու: Թադեոս առաքյալի՝ մեր ժողովրդին մատուցած սպասավորության հիշատակները, հիրավի, մշտարթուն կլինեն նաեւ Քրիստոսի հավատարիմ աշակերտի անունը կրող եկեղեցում եւ այս եկեղեցի այցելող հավատացյալների սրտերում:

Սիրելինե՛ր, հավատքը կենդանի եւ զորավոր է Բարձրյալն Աստծո հետ աղոթական հաղորդակցությամբ: Իր ամենակարողությամբ Աստված ամենուր է՝ երկնքում եւ երկրի վրա, եւ աստվածային հոգեպարար ներկայությունը գգալի է հատկապես Տիրոջը նվիրված սրբագործյալ տաճարներում: Այս իրողությունն է ուսուցանում Դավիթ մարգարեն սաղմոսի միջոցով, ասելով. «Տէր ի տաճար սո՛ւրբ իւրում. Տէր յերկինս յաթոռ իւրում – Տէրն իր սուրբ տաճարում է, Տէրը երկնքում է՝ իր գահի վրայ» (Սաղմ. 10.5): Եկեղեցին Աստծո տունն է, պաշտամունքի սրբազան վայր, որտեղ հանդիպում են երկինքն ու երկիրը, ժամանակավորն ու հավիտենականը, եւ որտեղ մարդը ներթափանցում է հավերժության խորհրդի մեջ, ստանում նաեւ պարգեւը հավիտենական կյանքի: Մեր Տիրոջ եւ Փրկչի չնորհները հեղվում են հավատացելոց վրա եկեղեցիների օրհնյալ հարկից ներս Սուրբ եւ Անմահ Պատարագի, սրբազան արարողությունների մատուցմամբ: Եվ եկեղեցու Սուրբ Սեղանից բաչխվող հոգեւոր պարգեւներով զորանալով՝ մեր ժողովրդի զավակները երկնային աջակցությամբ արդյունազարդում են իրենց կյանքի ընթացքը աստվածահաճո գործերով: Գովելի է, որ եկեղեցաչեն բարերարները, ընդառաջ մեր ժողովրդի հոգեւոր պահանջի, կյանքի են կոչում նոր աղոթավայրերի, օրհնության նվիրական հարկերի, լուսո սուրբ խորաններ կառուցումը:

Այսօր Սուրբ Թադեոս եկեղեցու օծման առիթով Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք բերում Վարդանյան ընտանիքի անդամներին, որոնց սրտերում արձագանքեց եւ իրականություն դարձավ Լուսավորչի կոչը. «Եկայք չինեսցուք սուրբ զխորանն լուսոյ, քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս»: Սուրբ Թադեոս առաքյալի անունը կրող այս եկեղեցու հիմքերը մենք օրհնել ենք տարիներ առաջ: Հիմնօրհնեքի արարողությանը ներկա էր նաեւ եկեղեցու բարերարը՝ հոգելույս Հրանտ Վարդանյանը, ում կենդանության օրոք իրականացվեցին եկեղեցու չինարարական հիմնական աշխատանքները, եւ Մասիս քաղաքում վեր հառնեց հոյակերտ այս եկեղեցին: Լուսահոգի

բարերարի սկսած գործը բարեհաջող ավարտին հասցրեցին նրա զավակները՝ տիարք Միքայել եւ Կարեն Վարդանյանները, որոնց հետեւողականության եւ նախանձախնդրության շնորհիվ Սուրբ Թադեոս եկեղեցին այսօր իր դռներն է բացում հավատավոր մեր զավակների առջեւ եւ հրավիրում աղոթքի: Այս եկեղեցում հավատացյալ հայորդիները իրենց աղոթքներով մշտապես պիտի հիշեն նաեւ բարեհիշատակ Հրանտ Վարդանյանին՝ հայցելով Տիրոջից խաղաղություն ու հանգստություն նրա լուսյա հոգուն: Այս պահին Մենք եւս աղոթելով բարեբար հայորդու հոգու հանգստության համար, մաղթում ենք, որ Տերը միշտ հաջողություններ շնորհի բարեպաշտ Վարդանյան ընտանիքի ազգօգուտ, հայրենասեր գործերին:

Այս ուրախալի օրը Մենք ցանկանում ենք Մեր գնահատանքը հայտնել նաեւ Արարատյան Հայրապետական թեմի հոգեւոր դասին՝ գլխավորությամբ առաջնորդական փոխանորդ գերաշնորհ Տ. Նավասարդ արքեպիսկոպոս Կճոյանի, գովելի սպասավորության իրականացման, թեմում հոգեւոր-եկեղեցական կյանքը աշխույժ պահելու եւ նման եկեղեցաչեն ձեռնարկներն ու բարերարությունները խրախուսելու համար:

Սիրելինե՛ր, ողջունելով բոլորիդ աղոթական մասնակցությունը այս սրբազան արարողությանը՝ Մեր ուրախությունն ենք հայտնում, որ Սուրբ Թադեոս եկեղեցու օծման առիթով այստեղ ներկա են Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանը, պաշտոնատար անձինք, մեր Սուրբ Եկեղեցու բազում հավատացյալներ: Մեր բարեմաղթանքներն ենք բերում մեծարգո նախագահին՝ հայցելով Աստծո զորակցությունը հայրենանվեր ու ազգասեր բարձր առաքելության մեջ, եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ ամենքիդ:

Մեր աղոթքն է, որ Աստված խաղաղության մեջ նոր առաջընթաց ու չինություն պարգեւի հայրենի մեր երկրին, պահի ու պահպանի մեր ժողովրդին՝ առաջնորդելով դեպի նոր ձեռքբերումներ: Թող Տերը Սուրբ Թադեոս առաքյալի բարեխոսությամբ իր օրհնության ներքո պահի մեր այս եկեղեցին, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու զավակներին՝ նորանոր հաջողություններ շնորհելով բոլոր ազգանվեր ու եկեղեցանվեր գործերին ու նախաձեռնություններին, ի պայծառություն ազգային-եկեղեցական մեր կյանքի, ի վայելումն համայն աշխարհասփյուռ հայության:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն Աստուծոյ եւ Փրկչին մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:

Այսօր գոհունակ սրտով գնահատելով Վարդանյան ընտանիքի եկեղեցանվեր նպաստը՝ ի չինութիւն եւ ի պայծառութիւն հոգեւոր-եկեղեցական կյանքի, մեծարգո Միքայել եւ Կարեն Վարդանյաններին չնորհում ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» պատվո բարձրագույն չքանչանը:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԴԻԼԻՋԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՀՈՂՕՐՀՆԵՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Հայրապետական սիրով ողջունում եւ Մեր օրհնությունն ենք բերում բարեպաշտ Մեր զավակներին, հողօրհնեքի այս արարողության բոլոր մասնակիցներին:

Հոգու բերկրանոք այսօր կատարեցինք հողօրհնեքի արարողությունը Դիլիջանում կառուցվելիք եկեղեցու, որի շինությունն իրականացվելու է Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ տիար Ռուբեն Վարդանյանի սրտաբուխ բարերարությամբ:

Դարեր շարունակ Հայաստանի բոլոր բնակավայրերում եկեղեցական կառույցներ, աղոթավայրեր են հիմնվել մեր բարեպաշտ հայրերի ջանքերով՝ հավատացյալ հայորդիներին հոգատարություն եւ հոգեւոր խնամք ցուցաբերելու, Աստծո հետ հաղորդակցությունը մշտարթուն ու կենդանի պահելու համար:

Խորհրդային եկեղեցահալած քաղաքականության տարիներին բազում եկեղեցիներ եւ եկեղեցապատկան կառույցներ քայքայվեցին ու ավերվեցին, Հայաստանի շատ բնակավայրեր զրկվեցին աղոթավայրերից ու սրբավայրերից, ինչպես Դիլիջան քաղաքը: Այսօր մեր Հայրենիքի տարբեր շրջաններում հայ եկեղեցական ճարտարապետական ավանդույթների պահպանությամբ նոր եկեղեցիներ են կառուցվում, նոր աղոթավայրեր են հառնում, որոնցից պիտի լինի նաեւ Դիլիջան քաղաքի եկեղեցին: Դիլիջան քաղաքը Հայաստանի վերջին տասնամյակների պատմության մեջ ճանաչում է ստացել՝ որպես հանգստի ու զբոսաշրջության նշանակալի կենտրոն: Ուրախ ենք, որ այս տարիներին Դիլիջանում շարունակվել են արձանագրվել նոր հաջողություններ կրթական ու զբոսաշրջային եւ տարաբնույթ այլ կառույցների

[1] «Էջմիածին», 2015, ժ, էջ 21:

հիմնումով: Մենք հավատում ենք, որ եկեղեցու կառուցումը պիտի ամբողջացնի զարգացող Դիլիջանի ընդհանուր պատկերը եւ աստվածային երկնառաք նոր օրհնություն պիտի բերի այստեղ բնակվող Մեր զավակների հոգեւոր-եկեղեցական կյանքում:

Եկեղեցին սոսկ ճարտարապետական կառույց չէ, այլ սրբազան ու նվիրագործված այն վայրն է, որտեղ հաղորդակցվում են մարդ եւ Աստված, բաշխվում են երկնային չնորհները, զորանում են հավատացելոց հոգիները, ամրապնդվում է վճռականությունը՝ աստվածաչնորհ կյանքը զարդարելու բարի եւ ազգանպաստ գործերով: Եկեղեցին հուշարարն է նաեւ մեր առաքելության՝ ապրելու Բարձրյալի կամքի ու պատվիրանների համաձայն, հեռու մնալու մեղքից ու չարիքից, ազգային-եկեղեցական մեր անդաստանում առատացնելու հայրենաշեն ու ազգաշեն աստվածահաճո ձեռնարկումները:

Աստծո եւ Եկեղեցու հանդեպ հավատքի ամրությունը գրավականն է եղել եւ չարունակելու է լինել մեր ժողովրդի գոյատեւման ու առաջընթացի, նոր ձեռքբերումների ամրագրման եւ հայոց լուսավոր, նոր գալիքի կերտման: Եվ Դիլիջանում կառուցվելիք եկեղեցին հոգեւորականների սպասավորությամբ, իր կարեւոր առաքելության արդյունավորմամբ նշանակալի ներդրում է բերելու մեր ժողովրդի լուսյա հավատքի զորացմանը, հայորդյաց հոգեւոր գիտելիքների ամրապնդմանը, նոր սերնդի քրիստոնեական դաստիարակության իրականացմանը:

Հայրապետական Մեր օրհնությունն ու բարձր գնահատանք ենք բերում կառուցվող եկեղեցու բարերարին՝ տիար Ռուբեն Վարդանյանին, ով ազգասեր ու եկեղեցանվեր ոգով մշտապես բարի ձեռնարկումներով աջակից է մեր Սուրբ Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության արգասավորմանը: Արժանավոր հայորդու անվան հետ են կապված ազգանվեր ու եկեղեցաշեն մի շարք ձեռնարկումներ, ինչպես Դիլիջանի միջազգային դպրոցի հիմնումը, Վրաստանի Սուրբ Գեւորգ եկեղեցու նորոգումը, Տաթեւի բարեկարգումը, Ցեղասպանության 100-ամյակի տարում մեկնարկած «100 կյանք ծրագիրը»՝ կոչված երախտագիտություն արտահայտելու այն անհատներին ու կազմակերպություններին, որոնց հերոսական ջանքերի չնորհիվ Հայոց ցեղասպանության ժամանակ փրկվեցին բազմաթիվ հայեր, ինչպես եւ այլ ծրագրեր, որոնք կոչված են զորացնելու մեր ժողովրդի հոգեւոր ու ազգային կյանքը:

Մեր օրհնութիւնն ու գնահատանքն ենք բերում Տավուշի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանին եւ տիրախնամ թեմի հոգեւոր դասին՝ հավատավոր Մեր ժողովրդին իրենց նվիրյալ ծառայությունը մատուցելու եւ հավատքի լույսը, ազգանվիրումն ու հայրենասիրությունը բարեպաշտ հայորդյաց հոգիներում վառ պահելու համար:

Մեր գնահատանքը նաեւ մարզային իշխանություններին, մարզպետին, Դիլիջանի քաղաքապետին՝ մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանը ըստ ամենայնի աջակցելու եւ զորակցելու համար:

Հայրապետական Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում ձեզ, սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր, եւ հայցում Բարձրյալի պահպանությունն ու հովանին ձեր կյանքին: Մաղթում ենք, որ Տերը աջակից լինի բոլորին, ովքեր նախանձախնդիր իրենց ջանքերն են ներդնելու եկեղեցու շինության աստվածահաճո ձեռնարկին, բարեհաջող իրականացնելու նվիրական աղոթավայրի կառուցման սրբազան գործը:

Ի խորոց սրտի աղոթում ենք առ Աստված, որ խաղաղության ու ապահովության մեջ պահպանի Հայրենի մեր երկիրը ամենախնամ Իր Սուրբ Աջով, հաջողություններով պսակի եկեղեցաշեն ու ազգանպաստ կարեւոր իրագործումները եւ երկնառաք բյուր պարգեւներ չնորհի հավատավոր ազգիս հայոց ի Հայրենիս եւ ի Սփյուռս աշխարհի:

«Շնո՛րհք, ողորմութիւն, խաղաղութիւն յԱստուծոյ ի Հօրէ, եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ Որդւոյն Հօր, ճշմարտութեամբ եւ սիրով եղիցի ընդ ձեզ» (Բ Հովհ. 1.3). ամէն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԹԲԻԼԻՍԻԻ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(31 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ., ԹԲԻԼԻՍԻ)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Գոհանամք կ՚Ըն Հայր Ամենակալ, որ պատրաստեցէր մեզ նաւահանգիստ սուրբ կեկեղեցի, տաճար սրբութեան, ուր փառաբանի Սուրբ Երրորդութիւնդ, ալէլուիա:
(Պատարագամատոյց)

Հայաստանի Հանրապետութեան մեծարգո՛ նախագահ, տիար Սերժ Սարգսյան,

Հարգարժա՛ն պետական այրեր Վրաստանի եւ Հայաստանի Հանրապետության,

Սիրելի՛ հոգեւոր եղբայրներ եւ բարեպաշտ հավատավոր ժողովուրդ:

Մեր սուրբ հայրերի փառաբանական աղոթքով գոհություն ենք մատուցում Տիրոջը, որ չնորհը պարգեւեց Մեզ կատարելու Թբիլիսիի Ս. Գեւորգ եկեղեցու վերաօծման արարողությունը: Նվիրական արարողության այս պահին վերապրեցինք Ս. Գեւորգ եկեղեցու ուղղափառ առաքելության հիշատակները, որոնք խոսուն վկայություններն են Վրաստանի օրհնյալ հողում հայության հոգեւոր ու ազգային կյանքի զարթոնքի՝ միաժամանակ խորհրդանշելով հայ եւ վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությունը:

Ս. Գեւորգ զորավարը Քրիստոսի մեծագույն վկաներից է, ուստի անունը անխզելիորեն կապված է նաեւ հայ եւ վրացի եղբայր ժողովուրդների քրիստոնեական անցյալի հետ: Ս. Գեւորգը արդարության

[1] «Էջմիածին», 2015, Ժ, էջ 24:

մարտիկ է՝ Քրիստոսի գինվոր, ով իր անձը ամբողջապես նվիրաբերեց քրիստոնեական հավատքի զորացմանը, Տիրոջ Ավետարանի լույս պատգամների տարածմանը: Շարականագիրը Ս. Գեւորգ զորավարին կոչում է «քաջամարտիկ զորավար» եւ «մարդկային ազգի պարծանք»: Եկեղեցական պատկերագրության մեջ Ս. Գեւորգը ներկայացված է որպես հեծյալ՝ վիշապին խորտակելիս, ինչը հոգեւոր խորհրդաբանությամբ բարու հաղթանակն է ընդդեմ չարի, լույսի հաղթանակը՝ ընդդեմ խավարի, ճշմարտության հաղթանակը՝ ընդդեմ կեղծիքի: Եկեղեցու պատմությունն ուսուցանում է, որ մեծահռչակ զորավարի նման անընկճելի նվիրյալների չնորհիվ է քրիստոնեությունը հաստատվել աշխարհում եւ գրավել մարդկանց սրտերը ու հոգիները: Ս. Գեւորգ զորավարի հանդեպ ակնածանքով ու հարգանքով է, որ հայ եւ վրաց ժողովուրդների զավակները Սուրբ Գեւորգին նվիրված հոգեւոր ու մշակութային նվիրական արժեքներ են ստեղծել եւ իրենց որդիներին անվանակոչել եւ անվանակոչում են «Գեւորգ» անունով: Զորավար Սուրբի հանդեպ սերն է նաեւ վրաց ժողովրդին մղել՝ նրան հռչակելու Վրաստանի հովանավոր Սուրբը:

Ս. Գեւորգ եկեղեցու վերաօծման հոգենորոգ այս առիթով մենք հիշում ենք մեր մեծանուն նախնիներին՝ հոգեւոր կյանքի, արվեստի, մշակույթի, գիր-գրականության հայազգի մշակներին՝ Ներսես Աշտարակեցի Հայրապետին, Նաղաշ Հովնաթանին, Սայաթ-Նովային, Մակար Եկմալյանին, Հովհաննես Թումանյանին, Րաֆֆուն, Մուրացանին, Գաբրիել Սունդուկյանին, նշանավոր բազում հայ նվիրյալներին, ովքեր աղոթել ու գործել են, ապրել ու ստեղծագործել են Վրաստանի հյուրընկալ հողում:

Վրացահայությունը Վրաստանը չի տարբերել պատմական իր հայրենիքից եւ գործել է ի սեր Վրաստանի բարօրության ու առաջընթացի, վրաց եղբայրական ժողովրդի հետ կրել է թե՛ զրկանքները եւ թե՛ տոնել հաջողությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ լծվել վրաց սահմանների պաշտպանությանը թշնամիներից: Այսպես է, որ հայության համար Վրաստանը հարազատ աշխարհ է, սիրելի երկիր՝ քրիստոնեական կյանքի օրինակելի վկայություններով, ավանդական իր հյուրընկալությամբ, կյանքի ու կենցաղի գունագեղությամբ եւ ազգային յուրօրինակ արվեստով ու մշակույթով: Ուրախ ենք, որ այսօր եւս կենսունակ է վրացահայ համայնքը եւ, նվիրված հոգեւոր իր կյանքի չինությանը՝ շարունակում է ջանքեր բերել Վրաստանի պայծառ ապագայի կերտմանը:

Մենք հավատում ենք, որ վերաօծված Ս. Գեւորգ եկեղեցին հոգեւոր կյանքի նոր չունչ պիտի հաղորդի մեր ժողովրդի զավակներին եւ պիտի առավել ամրացնի հայ եւ վրաց ժողովուրդների բարեկամությունը: Հայերը եւ վրացիները, որպես քրիստոնյա հինավուրց ազգեր, անսասան հավատքն ունեն հանդեպ Քրիստոսի Եկեղեցու սրբազան ու փրկարար առաքելությունը: Եկեղեցին երկնային ապաստարանն է երկրի վրա, ուր բնակվում են սերը, հաշտությունն ու խաղաղությունը, եւ ուր հանգչում են առօրյա հոգսերից բեկված հոգիները: Եկեղեցում է արձագանքում մեր Տիրոջ քաղցրաբարբառ կոչը. «Եկա՛յք առ իս ամենայն վաստակեալք եւ բեռնաւորք եւ ես հանգուցից զձեզ» (Մատթ. ԺԱ 28): Եկեղեցում վերանում են թե՛ ազգային, թե՛ ռասսայական, թե՛ սոցիալական եւ թե՛ մշակութային խտրականությունները. «Ձիք խտիր ո՛չ հրեայի եւ ո՛չ հեթանոսի, ո՛չ ազատի եւ ո՛չ ծառայի, ո՛չ արուի եւ ո՛չ էգի, զի ամենեքեանդ դուք մի էք ի Քրիստոս Յիսուս»,- ասում է առաքյալը (Գաղ. Գ 28): Եկեղեցում մենք դառնում ենք մեկ ի Քրիստոս Հիսուս, կոչված՝ լինելու հոգեւոր քույրեր ու եղբայրներ, Քրիստոսի սիրով ապրելու, Քրիստոսի լույսը սփռելու ամբողջ աշխարհում:

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ, Ս. Գեւորգ եկեղեցու վերաօծման արարողությունը Մեր հայացքներն ուղղում է նաեւ Վրաց օրհնյալ երկրում կառուցված մեր սրբավայրերին՝ վանքերին ու եկեղեցիներին, որոնք աստվածմերժության տարիներից մնացել են աղոթազուրկ ու անխնամ եւ երբեմն նաեւ այսօր ցավալիորեն փլուզվում են ու ավերակ դառնում, քանզի հնարավորություն չի ընձեռվում հոգածություն ցուցաբերելու: Այսօրվա արարողությունը Մեզ վստահություն է ներշնչում, որ վրաց իշխանությունների աջակցությամբ եւ Վիրահայոց թեմի եւ բարեպաշտ հավատացյալների ջանքերով վերստին պիտի բարեկարգվեն ու պայծառանան նվիրական մեր աղոթավայրերը:

Այս պատեհ առիթով Մեր չնորհակալությունն ու օրհնությունն ենք բերում վրաց իշխանություններին Ս. Գեւորգ եկեղեցու նորոգության գործում դրսեւորած սատարումի, ինչպես եւ՝ Վիրահայոց թեմին ցուցաբերված աջակցության համար՝ վերացնելու խորհրդային չրջանում Եկեղեցու կրած ավերների հետեւանքները:

Վրաց Ուղղափառ Սուրբ Եկեղեցին ներկայացնող սիրելի Մեր հոգեւոր եղբայրների միջոցով ի Քրիստոս եղբայրական Մեր ողջույն ենք հղում Համայն Վրաստանի պատրիարք Իլյա Երկրորդին՝ հայցելով Տի-

րոյ զորակցությունն ու օգնականությունը՝ ի պայծառություն Վրաց Ուղղափառ Եկեղեցու եւ ի բարօրություն աստվածասեր վրաց ժողովրդի:

Մեր ուրախությունն ենք հայտնում սրբազան այս արարողությանը Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանի ներկայության առիթով, ով մնայուն կերպով աջակցություն է բերում մեր Սուրբ Եկեղեցու առաքելությանը ինչպես Հայաստանում, այնպես էլ աշխարհասփյուռ հայության տարբեր համայնքներում: Մաղթում ենք Բարձրյալն Աստծո զորակցությունը մեծարգո նախագահին՝ իր բարձր առաքելության իրականացման մեջ:

Բարձր գնահատանքով ու օրհնությամբ ենք հիշատակում մեր Եկեղեցու նվիրյալ զավակ տիար Ռուբեն Վարդանյանի անունը, ով «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» հիմնադրամի միջոցով իրականացրեց Ս. Գեւորգ Եկեղեցու նորոգության աստվածահաճո ձեռնարկումը:

Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում այս նախաձեռնությանը միացած բարերար անձանց՝ Ալբերտ Ավդոլյանին, Բիձինա Իվանաշվիլիին, Դանիլ Խաչատուրովին, Սերգեյ Սարկիսովին, Կոստանտին Մարգարյանին, Անդրեյ Մկրտչյանին, Բորիս Նահապետյանին, ովքեր իրենց ազնիվ նվիրաբերությամբ աջակցեցին հինավուրց այս աղթամայրի նորոգությանը:

Մեր աղոթքն է, որ Տերը եկեղեցաչեն բարերարներին եւ նրանց ընտանյաց անդամներին պարգեւի քաջառողջ ու երկար կյանք եւ մշտամնա հաջողություններ աստվածահաճո իրենց գործերում:

Հոգեպարար այս օրը Մեր բարձր գնահատանքն ու Հայրապետական օրհնությունն ենք բերում Վիրահայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանին եւ հոգեւոր բարեջան սպասավորներին, ովքեր ջանադիր ծառայասիրությամբ ու նախանձախնդիր ոգով սպասավորություն են մատուցում վիրահայ Մեր սիրեցյալ զավակներին:

Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքն ենք բերում նաեւ թեմական վարչության անդամներին, կրթական ու ազգային հաստատությունների նվիրյալներին եւ ձեզ բոլորիդ՝ հավատավոր ու հարազատ զավակներ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու:

Այլեւ Մեր օրհնությունն ու գնահատանքը՝ Ս. Գեւորգ Եկեղեցու վերանորոգմանը ջանքեր ներդրած հայ եւ վրացի ճարտարապետներին, վարպետներին, շինարարարներին եւ աշխատավորներին:

Ի խորոց սրտի աղօթում ենք, որ Երկնավոր Տերը արդյունաչատ դարձնի Վիրահայոց թեմի առաքելութիւնը՝ ի նպաստ Վրաստանի հայութեան հոգեւոր կեանքի զորացման: Թող Բարձրեալն Աստված Սուրբ Գեւորգ զորավարի բարեխոսութեամբ Իր օրհնութեան ներքո չեն ու պայծառ պահի Վրաց երկիրը, բարօրութեան մէջ՝ վրաց եղբայրական ժողովրդին եւ հանապազ օրհնի մեր երկրների ու ժողովուրդների եղբայրութիւնն ու բարեկամութիւնը:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի չնորհները, սերը եւ ողորմութիւնը թող լինեն մեզ հետ եւ ամենքի այսօր եւ միշտ. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի հայրենիս եւ ի սփյուռս,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից տարեմուտի սեմին բերում ենք ձեզ Հայրապետական Մեր սերն ու օրհնությունը:

Գոհաբանական մաղթանքով, նոր հույսերով ու ակնկալիքներով հրաժեշտ ենք տալիս 2015 թվականին: Անցնող տարին մեզ համար նվիրական եղավ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչումով: Հայրենի պետության, մեր Եկեղեցու եւ ժողովրդի ջանքերով աշխարհի բոլոր կողմերում կազմակերպվեցին հիշատակի միջոցառումներ: Ծիծեռնակաբերդում հրապարակվեց մեր արդար դատին հետամուտ լինելու եւ հաղթանակի առաջնորդելու «Համահայկական հռչակագիրը»: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կատարեցինք հավատքի եւ հայրենիքի համար մարտիրոսության պսակն ընդունած մեր նահատակների սրբադասումը եւ սրբալույս Մյուռոնի օրհնությունը: Հիշատակի միջոցառումները հոգեւոր նոր ուժ ու կորով բերեցին մեր կյանքին՝ առիթ դառնալով ազգային համախմբման, մեր սրտերում հավատքի ու հայրենյաց սիրո զորացման, ամրապնդելով արդարության հասնելու վստահությունը մեր ժողովրդի:

Անցնող տարում արձանագրած հաջողությունների ու ձեռքբերումների հետ ունեցանք եւ դժվարություններ ու հոգսեր, նաեւ անհանգստություններ ու ցավալի կորուստներ: Մեր ժողովուրդն արժանապատվորեն, արիասիրտ, միավորյալ ջանքերով դիմակայեց բոլոր մարտահրավերներին, պաշտպանեց հայրենի երկրի սահմանները, մեր կյանքի խաղաղությունը եւ թանկ գնով ձեռք բերված նվաճումները: Միասնության այս ոգով, սիրելինե՛ր, եւ լավատեսությամբ դիմավորենք նոր տարին: 2016 թվականին Հայաստանում եւ Արցախում տո-

[1] «Էջմիածին», 2016, Ա, էջ 9:

Նախմբելու ենք մեր անկախ պետականության վերականգնման 25-րդ տարեդարձը: Ագգի եւ մեր պետության հզորության նախանձախնդրությամբ Հայրենիքում եւ Սփյուռքում միմյանց աջակից՝ ամեն կարելիությունն ներդնենք չենացնելու մեր երկիրը, բարօր դարձնելու մեր կյանքը եւ լուսավոր՝ մեր ապագան:

Տարեմուտի այս պահին՝ Սուրբ Ծննդյան նախասեմին, առատացնենք մեր աղոթքը աշխարհի, մեր երկրի ու ժողովրդի խաղաղ եւ ապահով կյանքի համար: Հիշենք կարոտյալներին, նեղյալներին, հիվանդներին եւ վշտացյալներին, Մերձավոր Արեւելքում պատերազմական փորձությունները կրող մեր եղբայրներին ու քույրերին եւ մեր երկրի սահմանամերձ չրջաններում ապրող մեր ժողովրդի զավակներին՝ մեկնելով նրանց սատարումի ու աջակցության մեր ձեռքը: Աղոթք բարձրացնենք մարտերում հերոսաբար զոհված մեր որդիների, մեր երկրի սահմանները անձնվիրումով պաշտպանող քաջարի մեր բանակի զինվորների եւ հրամանատարների համար:

Տարեմուտի աղոթքով առ Աստված հայցում ենք նոր ձեռքբերումներ հայրենի իշխանություններին, մեր Եկեղեցու սպասավորներին, մեր ժողովրդի բոլոր զավակներին: Ապահովություն՝ ընտանիքներին, պանծալի եւ բարի ծառայություն՝ մեր բանակի մարտիկներին, աստվածային Սուրբ Աջի պահպանություն, չնորհ եւ սեր՝ մեր մանուկ ու երիտասարդ զավակներին, օրհնություն՝ համայն հայոց կյանքին:

Շնորհավոր Նոր տարի: Բարի եւ օրհնյալ տարի:



ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 6 ՀՈՒՆՎԱՐԻ, 2016 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»
(Ղուկ. 2:14):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Սուրբ Ծննդեան աւետիսն այսօր առաջնորդել է մեզ դէպի մեր եկեղեցիները, որպէսզի խնդութեամբ եւ հոգու երկիւղածութեամբ խոնարհուենք Մանուկ Յիսուսի՝ աշխարհի Փրկչի սնարի առջեւ:

Բեթղեհէմի մսուրում ծնուեց Քրիստոս, եւ Փրկչի աշխարհ գալով սկսուեց ճանապարհը Աստուծոյ հետ հաշտութեան, մեղքի պատճառով Նրանից հեռացած մարդկութեան դարձի եւ փրկութեան: Իր Որդու մարդեղութեան խորհրդով Աստուած մարդկանց ժառանգորդ դարձրեց երկնից արքայութեան եւ Նրա միջոցով ցոյց տուեց այդ փառքին արժանանալու ուղին՝ ըստ հրեշտակների օրհնաճայն փառաբանութեան՝«յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»:

Մարդեղացեալ Աստուածորդին իր փրկչական առաքելութեամբ չրջափոխեց պատմութեան ընթացքը՝ կոչելով մարդկանց սիրոյ եւ խաղաղութեան սկզբունքի վրայ հաստատելու կեանքը: Քրիստոս մարդկանց պարգեւում է այս աշխարհում մեծագոյն բարիքը՝ իր խաղաղութիւնը. «Խաղաղութիւն եմ թողնում ձեզ, իմ խաղաղութիւնն

[1] «Էջմիածին», 2016, Ա, էջ 11:

եմ տալիս ձեզ, ձեզ չեմ տալիս, ինչպէս այս աշխարհն է տալիս, ձեր սրտերը թող չխռովուեն եւ չվախենաք» (Յովհ. 14:27),- ասում է Տէրը:

Փրկչի խաղաղութեան կոչին ու հրաւէրին յանդիման՝ մեր ժամանակի մեծագոյն մարտահրաւէրներից է անհատի, հասարակութեանց ու պետութեանց կեանքում խաղաղութեան խաթարումը: Մարդկութիւնը 21-րդ դար թեւակոխել է մեծ տագնապներով: Հակամարտութիւններ, աշխարհաքաղաքական շահերի բախում, ճգնաժամեր, հումանիտար աղէտներ չարունակում են յուզել աշխարհը, սերմանել անհանդուրժողութիւն ու անվստահութիւն, սփռել աւերածութիւն, աղքատութիւն, տառապանքներ: Հասարակութիւններում խաթարուում են բարքերը, խեղաթիւրուում հոգեւոր-բարոյական արժէքները, առաւել տարածում են գտնում կեղծիք, մոլութիւններ, սպանութիւններ, սասանուում են ընկերային կեանքի, ընտանիքի հիմքերը: Ծայրահեղական գաղափարներ քարոզող ահաբեկչական խմբաւորումները հաւատքի անունով մահ ու աւեր են սփռում յատկապէս Մերձաւոր Արեւելքում, որտեղ այլ ժողովուրդների կողքին տառապում եւ զրկանքներ են կրում նաեւ մեր ժողովրդի զաւակները:

Կործանարար ու կորստաբեր այս իրավիճակներից մարդկութիւնը ելք եւ կարգաւորման ուղիներ է փնտրում, որոնց անորոշութեան մէջ, բարձրացող հարցականների առջեւ այսօր քաղցրօրէն հնչում է մեր հոգիներին Բեթղեհէմում աշխարհ եկած Փրկչի յուսադրող խօսքը. «Խաղաղութիւն եմ թողնում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ, ձեզ չեմ տալիս ինչպէս այս աշխարհն է տալիս»: Քրիստոսի պարգեւածը այս աշխարհի խաղաղութիւնը չէ, որն անհաստատ է եւ անկայուն: Քրիստոսի խաղաղութիւնը հոգու խաղաղութիւնն է, որ խարսխուած առ Աստուած հաւատքի, Աստուծոյ խօսքի ու պատուիրանների վրայ՝ վերափոխում է կեանքը: Այն բնակուում է անչար սրտում, ճշմարտութեան, արդարութեան մէջ, զօրանում է յաւիտենական կեանքի յոյսով ապրող հոգիներում: Այս իմաստով առաքեալն ասում է. «Եւ Աստուծոյ խաղաղութիւնը, որ վեր է քան ամենայն միտք, պիտի պահի ձեր սրտերը եւ մտածումները Յիսուս Քրիստոսով» (Փիլ. 4:7): Արդարեւ, կեանքը կանգուն է Աստուծոյ սիրով լեցուն հոգու խաղաղութեամբ: Ամեն բան անհաստատ է, երբ մարդկանց մէջ տարանում է Աստուծոյ ներկայութեան զգացումը, երբ մարդկային առնչութիւններից մինչ ազգերի ու պետութիւնների յարաբերութիւններ կառուցուում են սոսկ սեփական շահերի ու ձգտումների կամ՝ պարտադրանքի վրայ: Գտնել Քրիստոսի խաղաղութիւնը, նշանակում է՝

ունենալ սէր եւ երջանկութիւն ընտանիքներում, համերաշխութիւն ու բարօրութիւն հասարակութեանց ու պետութեանց մէջ: Մարդեղացեալ Աստուածորդին բոլոր դարերում եւ բոլոր ժողովուրդների կեանքում պարգեւում է զօրութիւնը՝ իրագործելու Աստուծոյ հետ հաշտութեան եւ մարդկանց մէջ հաճութեան պատգամը, պարգեւում է զօրութիւնը՝ ընդունելու երկնային փրկարար չնորհները, որոնք բնակուում են մեր մէջ, երբ համախմբուած ենք խաղաղութիւն, արդարութիւն հաստատելու, աջակցութիւն եւ մխիթարութիւն բերելու: «Արդարութեան պտուղը խաղաղութեամբ է սերմանուում նրանց համար, ովքեր խաղաղութիւն են անում» (Յակ. 3:17):

Սիրելի՛ բարեպաշտ զաւակներ Մեր, հայրենական մեր կեանքում եւս ծառացած է խաղաղութեան պահպանման հրամայականը: Տարիներ շարունակ մեր երկիրը գտնուում է շրջափակման մէջ Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից: Վերջինս մեր սահմաններում սադրանքների է դիմում՝ ձգտելով ոտնահարել Արցախի ժողովրդի ազատ ապրելու իրաւունքը: Հաւատում ենք, որ խաղաղութեան նախանձախնդրութեամբ եւ առ Քրիստոս հաւատքով զօրացեալ՝ մեր ժողովուրդը իր հոգու խաղաղութիւնը պիտի պատուար դարձնի ընդդէմ թշնամեաց յարձակումների, անխորտակելի վահան՝ ընդդէմ հայրենեաց սահմանների ոտնձգութիւնների՝ հերոսաբար պաշտպանելով մեր երկիրն ու սրբազան արժէքները եւ կուռ ու միասնական ոգով ներդնելով իր ջանքերը դժուարութիւնները յաղթահարելու, չէնացնելու մեր հայրենիքը, աշխարհասփիւռ մեր կեանքը: Սիրելինե՛ր, Քրիստոս է մեր զօրութիւնը: Աներկմիտ, անվարան հաւատքով հետեւենք մեր Տիրոջ պատգամներին: Մեր Փրկչի քաջալերող խօսքի համաձայն՝ թող մեր սրտերը չխռովուեն եւ չվախենանք: Ապաւինենք ոչ միայն մարդկային մեր տկար ուժերին, այլեւ՝ Աստուծոյ օրհնութեանը, որը կարող է մեզ համար անհնարինը հնարաւոր դարձնել: Պարտաւորուածութիւնից առաւել թող մեզ առաջնորդեն ծառայութեան, սիրոյ ու նուիրումի ոգին, որով ծնունդ առած մեր գործերը հանապազօրեայ անհրաժեշտութիւն են՝ իրականացնելու համար ազգային զարթօնքի, լուսաւոր գալիքի մեր տեսիլքները:

Մեր Փրկչի Ծննդեան այս սուրբ օրը բերկրութեամբ լեցուն մեր հոգիներից միասնաբար աղօթք բարձրացնենք երկինք, որ Քրիստոս մեր Տէրը երկնային չնորհներով, հաւատքով, յոյսով ու սիրով զօրացնի մարդկանց հոգիները՝ կերտելու ապահով, խաղաղ ու բարօր աշխարհ,

խաղաղ պահի նաեւ մեր երկիրն ու ժողովրդին, օրհնի մեր կեանքն այս աշխարհում եւ առաջնորդի դէպի յաւիտենական կեանքի լոյսը:

Քրիստոսի Սուրբ Եկեղեցու հանապազ աղօթքն ու մաղթանքն ենք, իբրեւ պատգամ, կրկին հնչեցնում՝ խաղաղութիւն ամենեցուն:

Սուրբ Ծննդեան մեծասքանչ աւետիսով ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրադեանին, քոյր եկեղեցիների հոգեւոր պետերին եւ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին: Հայրապետական օրհնութեամբ ողջունում ենք Սուրբ Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին եւ առաջին տիկնոջը, ողջոյն ենք յղում Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեանին, հայոց պետական աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներին: Հայրապետական Մեր օրհութիւնն ենք բերում աշխարհասփիւռ համայն մեր ժողովրդին՝ հոգու բերկրութեամբ ողջունելով.

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Ձեզ եւ մեզ մեծ աւետիս:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(28 ՀՈՒՆՎԱՐԻ, 2016 Թ.)[1]

Համայն հայության նվիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց բանակի օրվա առիթով բերում ենք հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ չնորհավորանքը մեր ժողովրդին, մեր հաղթական բանակի սպաներին ու զինվորներին:

Նորանկախ մեր պետականության ամենաթանկ ու նվիրական ձեռքբերումն է Հայոց բանակի կազմավորումը, որն արդյունքն է քաջարի մեր զավակների պայքարի եւ առ Հայրենին նվիրումի ու սիրո: Այսօր Հայոց բանակի արիասիրտ մեր զինվորների ու հրամանատարների սխրանքով, երբեմն նաեւ կյանքի զոհաբերումով, անխաթար ու պաշտպանված են մեր երկրի սահմանները: Հայ զինվորի անվեհեր ոգին քաջալերություն է բաշխում մեր ողջ ժողովրդին՝ առաջնորդելով ամենքիս ամբողջական նվիրումով, նախանձախնդրությամբ ու միմյանց նկատմամբ սիրով ծառայելու մեր Հայրենիքին եւ իրագործելու մեր երկրի պայծառ գալիքի լուսավոր տեսիլքներն ու հույսերը:

Միածնաէջ Սուրբ Խորանի առջեւ աղոթում ենք, որ երկնավոր մեր Տերը օրհնի եւ զորացյալ ու հաղթական պահպանի մեր Հայրենիքի սահմանները հսկող բոլոր զինվորներին ու զորավարներին, այլեւ խաղաղության մեջ արդյունավորի աստվածասեր մեր ժողովրդի ձեռաց գործերը՝ հանուն անվրդով ու բարեչեն մեր կյանքի:

Թող Տիրոջ չնորհը, սերը եւ խաղաղությունը լինեն ամենքիս հետ այսօր եւ հավիտյան:

---

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2016, հունվար Բ, թիվ 2 (454), էջ 1:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ,
27 ՄԱՐՏԻ, 2016 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Յարեար ի մեռելոց Քրիստոս,
Այսօր կոչտիա աւերեալ,
Եւ կենդանութիւն պարգեւեցեր
Արարածոց Քոյով Յարութեամբդ»
(Շարական):

Սիրելի՛ հաւատաւոր զաւակներ Մեր ի Հայաստան, Արցախ եւ ի Սփիւռս:

Այսօր՝ Սուրբ Յարութեան բերկրալի տօնին, չարականագրի խօսքերով փառաբանում ենք մեր Տիրոջն ու Փրկչին, որ յարութիւն առաւ մեռեալներից, աւերեց դժոխքը եւ Իր Յարութեամբ արարածներին կենդանութիւն պարգեւեց:

Քրիստոսի Յարութիւնը մահուան խաւարի մէջ ծագեցրեց լոյսը յաւիտենականութեան, մարդկանց պարգեւեց երկնքի արքայութեան երանութիւնը, չնորհը՝ յարուցեալ կեանքի այս աշխարհում եւ հանդերձեալում: Քրիստոսի Յարութեամբ նոր արարչութիւն է, նոր մարդկութիւն, որը մեղքի եւ մահուան նզովքից ազատ՝ չնորհի մէջ է Աստուծով ապրելու եւ յաւիտենական կեանքին արժանանալու: Առաքեալի խօսքի համաձայն՝ «Հինն անցաւ, եւ հիմա ամէն ինչ նոր եղաւ» (Բ Կոր. ե 17), քանզի Աստուծոյ Միածին Որդին՝ Փրկիչ մեր Տէրը, «կործանեց

[1] «Էջմիածին», 2016, Գ, էջ 7:

մահը եւ լուսաւոր դարձրեց կեանքն ու անմահութիւնը Աւետարանի միջոցով» (Բ Տիմ. Ա 17): Քրիստոսի Աւետարանը յարութեան Աւետարանն է, յաւիտենութեան Աւետարանն է, կեանքի Աւետարանն է, որի միջոցով է մեզ հասու Աստուծոյ անսահման սիրոյ իմացութիւնը, հոգիները կենդանացնող տէրունական ձայնը, Քրիստոսի Յարութեան ճշմարտութիւնը:

Այսօր Տիրոջ հրաշափառ Յարութեան խորհրդի առջեւ բնականից բարձրանում է հարցը՝ որքանո՞վ ենք ապրում Քրիստոսով նորոգուած կեանքով, ընթանում Փրկչի խօսքի եւ պատուիրանների համաձայն: Ի՞նչն ենք կարեւորում մեր կեանքում՝ յարութեան Աւետարա՞նը, թէ՞ մոլար վարդապետութիւնները եւ խաբեպատիր գաղափարախօսութիւնները, Տիրոջ կամքին հետեւե՞լը, թէ՞ մեղսակորոյս, կենսակործան ճանապարհները, երկնքում գանձեր դիզե՞լը, թէ՞ չահատենչութիւնը, հոգեւոր ազատութի՞ւնը, թէ՞ սանձարձակութիւնը, ազնուութի՞ւնն ու ուղղամտութի՞ւնը, թէ՞ պիղատոսեան թուացեալ արդարութիւնը, նախընտրում ենք Յիսուսի՞ն, թէ՞ աւազակ Բարաբբային:

Գիտութեան, կրթութեան անօրինակ առաջընթացի հետ մեր ժամանակներում ականատեսն ենք նաեւ աւանդական արժեհամակարգի փլուզման, մարդու բարոյական անկման եւ հոգեւոր սնանկացման երեւոյթների: Կեանքի յարմարաւէտութեան, արագահասութեան հնարաւորութիւնների պայմաններում մարդիկ, անգամ՝ ընտանիքի անդամներ, օտարանում են միմեանցից: Բարիքների առատութեան մէջ ոչ թէ կարիքն ու թշուառութիւնն են վերանում, այլ խորանում է հասարակութեան բեւեռացումը: Տեխնոլոգիաների առաջընթացը կեանքի դիւրութիւններ ստեղծելու հետ հանգեցնում է նաեւ նոր հնարանքներով ընթացող պատերազմների եւ ահաբեկչութիւնների, որոնք չարունակաբար ցնցում են աշխարհը՝ դառնալով համընդհանուր սպառնալիք մարդկութեան համար: Նման իրողութիւնների առջեւ եւ մշտապէս հարկ է անդրադառնալ եւ բարձրաձայնել աստուածային արդարութեան ու հատուցման մասին այս աշխարհում եւ հանդերձեալում, որը վերահաս է բոլոր անհատներին ու ժողովուրդներին: Արդարեւ, քրիստոսաչնորհ յարութիւնը միայն պարգեւ չէ, այլեւ՝ դատաստան, ինչպէս ասում է Աւետարանը. «Գալ ժամանակ, երբ բոլոր նրանք, որ գերեզմաններում են, կլսեն Նրա ձայնը եւ դուրս կգան. ովքեր բարի գործեր են արել՝ կեանքի յարութեան համար, իսկ ովքեր չար գործեր են արել՝ դատաստանի յարութեան համար» (Յովհ. Ե 28-29): Յարու-

թեան, կեանքի ճանապարհը հրաժարումն է այն ամենից, ինչը դարձնում է գերի մեղքին, քանզի «մեղքի վարձը մահն է, իսկ Աստուծոյ շնորհը՝ յաւիտենական կեանք» (Հռոմ. Զ 23): Այս իմաստով է առաքեալը կարեւորում երկնայինը հագնելը, «որպէսզի ինչ-որ մահկանացու է, կլանուի կեանքից» (Բ Կոր. Ե 4): Մահը կլանող կեանքը դա կեանքն է հոգեւոր լիութեան, ճգտումն ու ջանքը՝ մտքով, սրտով, հոգու ողջ զօրութեամբ Աստուծով ապրելու, ապրելու Աւետարանի պատգամներով, որոնք յարուցեալ կեանքի ուժն են ներարկում Քրիստոսին ապաւինած անճանց ու ժողովուրդներին:

Տագնապներով ու ցնցումներով լի աշխարհը, նաեւ մեր իրականութիւնը, որ նոյնպէս բազմահոգ է դժուարութիւններով ու խնդիրներով, կարող են վերափոխուել քրիստոսաշնորհ հոգեւոր լիութեան կեանքով՝ յաղթահարելով մարդկային ցաւերն ու ողբերգութիւնները եւ ամենուր հաստատելով հիմքերը ապահովութեան ու բարօրութեան: Քրիստոսի Յարութիւնը մշտահունչ հրաւէր է, որ աշխարհը վեր յառնի մեղքից դէպի շնորհ, եւ ամենայն մահասփիւռ, աւերիչ իրողութիւն կլանուի Աստուծով ապրող եւ առաջնորդուող կեանքից: Քրիստոսի Յարութիւնը հիմքն ու հաստատութիւնն է հաւատքի, որ լուսաւորում է մարդկանց սրտերը, նեղութիւնների յորձանուտում շնորհում յոյս ու մխիթարութիւն, տառապանքների գողգոթաներում՝ յառնելու ուժ եւ զօրութիւն, պարգեւում խրոխտ ու արիասիրտ ոգի՝ արդար մարտնչումներում, նուիրումի ոգեշնչում, բերկրանք ու խնդութիւն՝ ապրելու եւ արարելու: Այս ոգին ու ընթացքը հարազատ են եւ բնորոշ մեր ժողովրդին, մեր կեանքին ու պատմութեանը եւ լուսաւորում են մեր ներկան ու ապագան: Վեր յառնելու, դժուարութիւնների առջեւ չընկրկելու, նոր կեանք կերտելու վկայութիւնը մեր ժողովուրդը բերեց՝ վերահաստատելով մեր անկախ պետականութիւնը, որի 25-ամեայ տարեդարձն է այս տարի: Մեր հայրենիքի զօրացմանը, համազգային մեր կեանքի չինութեանն ու պայծառութեանն ուղղուած մեր ջանքերում եւ այսօր ծառացած մարտահրաւէրների առջեւ, սիրելինե՛ր, Քրիստոսի Յարութեան հաւատքն ու լոյսն ունենք մեզ առաջնորդող, արդ, մեր կեանքը լցնենք մեր Տիրոջ սիրով, միմեանց զօրակցութեամբ, աւետիսներով բարի գործերի: Ջատկական խորհրդով այսօր մեր հոգիներին չողում է քրիստոսապարգեւ յարութեան երկնային շնորհը, որը դրոշմուում է մեր կեանքին, երբ ապրում ենք հաւատքով ու քրիստոնէական արժէքներով, մեր մերձաւորների, մեր ժողովրդի, հայրենի-

քի ու մեր Սուրբ Եկեղեցու համար: Միածնաէջ այս Սուրբ Տաճարում աղօթում եւ մաղթում ենք, որ մեր ժողովրդի ամէն գաւակ Քրիստոսի Յարութեան աւետիսն ընդունի նորոգուած հաւատքով, եւ մենք՝ իբրեւ ազգ, առ Քրիստոս մեր Տէրը սիրով, մեր արդար ու արժանաւոր գործերով միշտ ընթանանք առաջընթացի ուղիով՝ մեր չուրթերին ունենալով մշտահունչ փառաբանութիւնը.

«Յարեար ի մեռելոց Քրիստոս,
Այսօր զդժոխս աւերեալ,
Եւ կենդանութիւն պարգեւեցեր
Արարածոց Քոյով Յարութեամբդ»:


Այս մաղթանքով ու Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնի ուրախութեամբ ողջոյն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին եւ մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին: Ի Քրիստոս սիրով ողջունում ենք քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին՝ յարուցեալ Քրիստոսի երկնահեղ բիւր չնորհները հայցելով տիրախնամ նրանց հօտին:

Սուրբ Յարութեան աւետիսով Մեր ողջոյնն ենք բերում Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեանին, հայոց պետական ողջ աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին: Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում համայն մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփիւռս աշխարհի:

Ջատկական այս յուսառատ եւ չնորհաբեր օրը Մեր հայցն է, որ յարուցեալ Քրիստոսի չնորհները տարածեալ լինեն համայն աշխարհում եւ հայրենի մեր երկրում, ամենուր տիրի խաղաղութիւն, եւ մարդկութիւնը, վեր յառնած ողբերգութիւնների, վշտերի ու նեղութիւնների անձաւներից, յոյսով ու հաւատով կերտի իր կեանքը՝ լի սիրով, եղբայրութեամբ ու համերաշխութեամբ:

Թող սէրը մեր Տէր Յիսուս Քրիստոսի եւ ողորմութիւնն Աստուծոյ լինեն մեզ հետ եւ ամէնքի, այսօր եւ միշտ եւ յաւիտեանս, ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(8 ՄԱՐՏԻ, 2016 Թ.)[1]

Լուսո Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում տիկնանց եւ օրիորդաց՝ մարտի 8-ի տոնական առիթով:

Բազմադարյա մեր պատմությամբ է վկայված հայ կնոջ առաքելությունը մեր ժողովրդի կյանքի առաջընթացի, հոգեւոր արժեքների պահպանման, կրթության ու մշակույթի զարգացման գործում, այլեւ՝ հայրենիքի պաշտպանության, դժվարությունների ու մարտահրավերների դիմագրավման մաքառումներում: Հայ կանայք աստվածսիրության եւ ազգասիրության մեծագործություններով, քաջության ու խիզախումի պանծալի օրինակներով չարունակ ներշնչանք ու զորություն են պարգեւում մեր ժողովրդի զավակներին:

Մեր գնահատանքն ենք բերում ձեզ, սիրելի՛ կանայք, որ հավատքով ու սիրով այսօր էլ ձեր ջանքերն ու նվիրումն եք բերում պետական ու հասարակական մեր կյանքի բոլոր ասպարեզներում, որպեսզի միշտ ծաղկուն լինի հայ կյանքը, զորացյալ՝ հայ ընտանիքը, եւ բարօր ու շեն՝ հայրենի մեր երկիրը:

Մեր մաղթանքն է, որ Երկնավոր Տիրոջ օրհնությամբ միշտ լինեք խինդով լեցուն ու երջանիկ, միշտ գեղեցիկ՝ օրհնված առաքինություններով ու բարեգործությամբ:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահպանի բոլոր կանանց, պարգեւի երջանկությամբ լի արեւառատ տարիներ եւ երկնառաք բյուր բարիք:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերն ու խաղաղությունը թող լինեն ձեզ՝ ամենքիդ հետ. Ամեն:

---

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2016, մարտ Ա, թիվ 5 (457), էջ 1:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԵՎ ՀԱՅՐԵՆՅԱՑ ՊԱՇՏՊԱՆ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՂՈԹՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(ԵՐԵՎԱՆ, ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ, 4 ԱՊՐԻԼԻ, 2016 Թ.)[1]

Մեծարգո՛ Նախագահ Հայաստանի Հանրապետության,

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ:

Այսօր համախմբվել ենք միասնաբար աղոթք բարձրացնելու մեր երկրի ու մեր ժողովրդի խաղաղ ու ապահով կյանքի, հայրենյաց սահմանները պաշտպանող հայոց բանակի հրամանատարների եւ զինվորների անվտանգ ու հաղթական ծառայության համար:

Ադրբեջանի կողմից այս օրերին սանձազերծված ռազմական գործողություններին մեր բանակի քաջարի զինվորները դիմակայեցին անձնուրաց կերպով՝ ծանր մարտերում ետ մղելով հակառակորդին եւ պատճառելով զգալի կորուստներ: Մեր ողջ ժողովուրդը հայրենասիրության ու ազգասիրության զորեղ զգացումով ինքնաբուխ զորաշարժ սկսեց: Կամավորական խմբերը ելան մեր բանակի արիասիրտ զինվորների հետ վճռականորեն եւ ամենայն հանձնառությամբ պաշտպանելու հայրենի երկիրն ու սրբությունները, ազատ կյանքի արդար իրավունքը Արցախի մեր ժողովրդի: Թեպետ իրավիճակը Արցախի սահմաններում մնում է լարված, բայց հայրենյաց պաշտպան մեր զավակները շարունակում են արժանի հակահարված տալ հակառակորդին: Այսօր քաջալեր են մեր հոգիները՝ տեսնելով մեր բանակի մարտունակությունը, ազգիս զավակների ազնվասիրտ նվիրումն ու խիզախությունը:

Ադրբեջանի կողմից հրադադարի անընդմեջ խախտումները, դիվերսիոն գործողությունները, սահմանամերձ բնակավայրերի պարբերական գնդակոծությունները, որոնց հավելվեց եւ այս օրերի ոճրա-

[1] «Էջմիածին», 2016, Դ, էջ 6:

գործությունը, վկայում եւ փաստում են, որ Ադրբեջանը ցանկանում է ղարաբաղյան խնդիրը լուծել ռազմական ճանապարհով: Թշնամու սանձազերծած պատերազմական գործողությունների հիմնական զսպիչ ուժը, արդարեւ, մեր բանակի հզոր պաշտպանությունն է, նաեւ միջազգային հանրության արդար եւ օբյեկտիվ գնահատականը Ադրբեջանի ռազմատենչ, անընդունելի եւ դատապարտելի վարքագծին, որը մեր ժողովրդի իրավացի սպասումն է:

Մենք քրիստոնյա ժողովուրդ ենք, սիրելինե՛ր, հետեւորդ աստվածապատվեր խաղաղության ու համերաշխության, նախանձախնդիր՝ աստվածաշնորհ ազատության: Հայրենիքի խաղաղությունը, ազգի ազատ կյանքի պաշտպանությունը սրբազան առաքելություն է մեզ համար: Մեր ժողովուրդը, ով իր պատմության ընթացքում օրհասական վտանգների դեմ համախումբ, իր հավատքի ուժով եւ ոգու արիությամբ բազում հաղթանակներ է կերտել, այսօր եւս նույն հանձնառությամբ հերոսաբար կանգնած է ընդդեմ վայրագությունների ու բռնությունների, ընդդեմ պարտադրված պատերազմի՝ վերահաստատելու համար խաղաղությունը մեր սահմաններում: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հոգեւորականները նույնպես մարտնչող մեր զինվորների կողքին են՝ հավատքով զորացնելով ու քաջալերելով մեր հայրենյաց պաշտպաններին եւ աղոթելով, որ միշտ հաղթական լինի բազուկը հայ զինվորի:

Մեր աղոթքը, օրհնությունը եւ զորակցությունն ենք բերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության եւ ՀՀ իշխանություններին, մեր քաջարի հրամանատարներին ու զինվորներին, ովքեր նախանձախնդիր ջանքեր են ներդնում հայրենի մեր երկրի ապահովությունն ու անվտանգությունը պահպանելու, Հայրենիքը պաշտպանելու, խաղաղությունը վերահաստատելու համար:

Աղոթք ենք բարձրացնում մարտերում եւ սահմանամերձ բնակավայրերում զոհված մեր ժողովրդի զավակների՝ զինվորների եւ խաղաղ բնակիչների հոգիների հանգստության եւ երկնային լուսեղեն օթեւաններում բնակության համար՝ Մեր վշտակցությունը բերելով զոհվածների ընտանիքներին եւ հարազատներին: Աղոթում ենք վիրավորների չուտափույթ ապաքինման համար:

Աղոթք ենք վերառաքում առ Աստված աշխարհի եւ մեր հայրենիքի խաղաղության համար՝ հայցելով, որ մեր ժողովուրդը հավատքով եւ արի ոգով հաղթահարի նաեւ այս դժվարություններն ու մարտահ-

բավերները՝ չարունակելով հզորացնել մեր հայրենիքը, չենացնել ազգային մեր կյանքը ի սփյուռս աշխարհի:

Թող Տիրոջ Ամենազոր Սուրբ Աջը ամենայն ժամ զորակից ու պահապան լինի մեր ժողովրդին, հայրենյաց պաշտպան մեր խիզախ զինվորներին: Հավետ կեցցեն մեր քաջ զինվորները, փառք ու պատիվ հայոց բանակին:

Ամենազոր Աստված եւ Թագավոր Հավիտենից
անսասան եւ անպարտելի պահիր Քո ժողովրդին եւ հայոց աշխարհը:

Կյանքի աղբյուր, խաղաղության պարգեւիչ եւ Քո ծառաների զորացուցիչ,
խաղաղ կյանք պարգեւիր հայրենի մեր երկրին
եւ զորացրու թշնամիների դեմ պատերազմում
ի փառս Քո Սուրբ անվան այսօր եւ հավիտյան. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԱՎԵՏՄԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(7 ԱՊՐԻԼԻ, 2016 Թ.)[1]

Սուրբ Աստվածածնի ավետման տոնի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում համայն մեր ժողովրդին, չնորհավորում բոլոր տիկնանց եւ օրիորդաց մայրության ու գեղեցկության օրվա կապակցությամբ:

Այս օրերին, երբ Արցախի սահմաններում սանձազերծված ռազմական գործողությունների հետեւանքով խաթարված է մեր կյանքի խաղաղությունը, մեր սուրբ տաճարներում առանձնակի ջերմեռանդությամբ է հնչում մեր հայրերի՝ Տիրամորն ուղղված բարեխոսական աղոթքը, որպեսզի «լռեն պատերազմները, դադարեն թշնամու հարձակումները, եւ երկրի վրա հաստատվեն սերն ու արդարությունը» (Ժամագիրք):

Դարեր ի վեր մեր մայրերի խնամքի ու սիրասուն հայացքի ներքո են դաստիարակվել ազնվասիրտ մեր զավակները՝ գիտնականն ու մանկավարժը, զինվորն ու զորականը, հոգեւորականն ու չինականը, որոնք չենացրել են մեր հայրենիքը, խաղաղ պահել մեր երկրի սահմանները եւ պաշտպանել ազատ ապրելու աստվածաշնորհ մեր իրավունքը:

Հայրենիքի առաջ ծառացած պատերազմի վտանգն այսօր առավել ուժականություն է հաղորդում մեր մայրերի՝ քաջարի հայ զինվոր կերտելու առաքելությանը եւ նորովի բացահայտում նրանց՝ դժվարությանց առաջ չընկրկելու խիզախությունն ու ոգին:

Միածնաէջ Սուրբ Խորանի առջեւ աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ Տերը խաղաղություն չնորհի հայրենի մեր երկրին ու ժո-

[1] «Էջմիածին», 2016, Դ, էջ 11:

ղովրդին եւ Սուրբ Աստվածածնի բարեխոսութեամբ երջանկութեուն ու քաջառողջ կեանքի արեւշատ տարիներ պարգեւի մեր մայրերին ու քույրերին:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԱՆՁԱՍԱՐԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(ԳԱՆՁԱՍԱՐ, 13 ԱՊՐԻԼԻ, 2016 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության,
Սիրելի՛ հավատավոր զավակներ Մեր,

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի լույսն ու օհնությունը, Հայրապետական Մեր սերն ու աղոթքը եւ աչխարհասփյուռ ձեր եղբայրների ու քույրերի զորակցությունն ենք բերում ձեզ: Այսօր Մեր սիրելի հոգեւոր եղբոր՝ Մեծի Տանն Կիլիկո կաթողիկոս Արամ Ա-ի հետ եկել ենք նվիրական այս եկեղեցու կամարների ներքո ձեզ հետ միասին աղոթք բարձրացնելու Արցախ աչխարհի խաղաղ կյանքի համար: Եկել ենք աղոթելու մեր զինվորների անվտանգ ու ապահով ծառայության համար: Եկել ենք զորակցություն բերելու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իչխանություններին, ողջ արցախահայ մեր ժողովրդին՝ Արցախի խաղաղ, լուսավոր կյանքը կերտելու իրենց ջանքերում: Եկել ենք՝ գոտեպնդելու Արցախի մեր ժողովրդին, գոտեպնդելով՝ նաեւ գոտեպնդվելու արցախահայության անկոտրում կամքով եւ քաջարի ոգով մեր զինվորների: Փառք քեզ, արցախահայությո՛ւն, փառք քեզ, Հայո՛ց բանակ: Հպարտ ենք ձեզանով, ձեր սխրանքներով, ձեր խիզախ պահվածքով:

Գոհություն Աստծո, Հայոց բանակի արիասիրտ զինվորները հերոսաբար դիմակայեցին Ադրբեջանի սանձազերծած ռազմական գործողություններին: Խափանեցին ղարաբաղյան հարցը ռազմական ճանապարհով լուծելու նենգ ծրագիրը: Հակառակորդի մարտական զենքերը, որքան էլ ժամանակակից, անկարող եղան հաղթանակ ապահովելու: Ավետարանական պատումի նմանությամբ թչնամու զորքերը հողմերի պես բախվեցին ազատության եւ անկախության ապառաժի

[1] «Էջմիածին», 2016, Դ, էջ 12:

վրա հաստատված Արցախին: Հակառակորդի դեմ ելավ անկախության սերունդը, ելավ՝ հավատքով խրոխտ պաշտպանելու իր հայրերի քաջագործությամբ կերտված ազատությունը Արցախի: Նրանց մեջ ոգին էր իրենց հայրերի, նրանց մեջ ոգին էր Ավարայրի ու Սարդարապատի: Նրանք «կտրիճներ եղան պատերազմի մեջ,- ըստ առաքելական խոսքի, - եւ հաղթեցին ...» (Եբր. 11.34), քանզի «ամեն ոք, որ Աստծուց է ծնված, հաղթում է աշխարհին» (Ա Հովհ. 5.4): Քաջաբար կանգնած ընդդեմ մահու՝ նրանցից ոմանք ընկան մարտերում: Արյան վկայությունը Մեր զավակների բարձրացավ դեպի Աստված: Եվ տեսավ Բարձրյալը, որ անմեղ է քաջերի արյունը, տեսավ, որ ադար է հայրենյաց մեր հերոս պաշտպանների գործը: Եվ Իր զորությունը հեղեց արցախահայության պայքարին: Հակառակորդը ետ չպրտվեց՝ թողնելով ավերված չինություններ, անմեղ զոհեր, այդ թվում՝ երեխա ու կանայք, սպանված ու վայրագորեն խոշտանգված ծերեր, անդամահատված հայ զինվորների մարմիններ: Այդ ոճրագործությունները ադրբեջանական կողմը հպարտությամբ ցուցադրում եւ տարածում էր համացանցով՝ ներկայացնելով որպես քաջագործություն՝ ցրելու վախը իր զինվորների, իր բնակչության պահելու ռազմատենչության ու հայատյացության մեջ եւ փորձելով սքողել իր պարտության իրողությունը:

Արցախի սահմաններից հայրենասիրությունն ու ազգանվիրումը ալիքվեց ու տարածվեց եւ համախմբեց ի սփյուռս աշխարհի Մեր զավակներին, որոնք դարձան բռունցք՝ ամուր պահելու հաղթանակի դրոշն ու իրավանց պաշտպանությունը Արցախի: Բազում հայորդիներ կամավոր մեկնեցին Արցախ եւ այսօր էլ նորեր համալրում են շարքերը հայոց բանակի՝ զորակցելու Հայրենիքի պաշտպանության սուրբ գործին: Մեր Սուրբ Եկեղեցու հոգեւորականները եւս աղոթքով, խաչով ու Ավետարանով օրհնեցին ու քաջալերեցին հայրենյաց պաշտպաններին եւ այսօր էլ նրանց կողքին շարունակում են իրենց ծառայությունը, որ մեր մարտիկները հոգով զորանան, միշտ արիասիրտ մնան ընդդեմ հակառակորդի ռազմական արկածախնդրության:

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, հայրենյաց սահմանին իրավիճակը դեռ մնում է լարված: Մշտապատրաստ լինենք զսպելու մեր դեմ ամեն ոտնձգություն եւ կանխելու ծրագրվող ամեն ոճրագործություն: Հայրենիքի սահմանների պաշտպանության պայքարի հետ մենք պիտի շարունակենք ավելիով ջանքեր բերել միջազգային տեղեկատվական եւ քաղաքական հարթակներում: Արցախյան իրադարձությունների

մասին ի լուր աշխարհի ճշմարտութեան բարձրաձայնումը կարեւոր է ինչպես միջազգային հանրութեան կողմից Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման, այնպես եւ՝ Ադրբեջանին հովանավորող ցեղասպան Թուրքիայի ապակայունացնող քաղաքականութեան զսպման եւ տարածաշրջանում խաղաղութեան պահպանման համար: Հավատում ենք՝ առաջադեմ աշխարհը, որ ջատագովն է մարդու իրավունքների պաշտպանութեան, ահաբեկչութեան դեմ պայքարի, մարդկութեան դեմ գործվող ոճիրների կանխարգելման, պիտի աջակից լինի ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը:

Աղոթենք եւ հայցենք, սիրելինե՛ր, որ Բարձրյալն Աստված զորակից լինի եւ արդյունավորում չնորհի Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան ճանաչման բոլոր բարի ջանքերին: Թող Տերը զորութեամբ պարգեւի մեր ժողովրդին՝ կյանքի կոչելու հզոր Հայրենիքի, անվտանգ ու բարօր կյանքի մեր տեսիլքները, որի համար նահատակվեցին մեր զավակները: Աղոթենք մեր նահատակների հոգիների հանգստութեան համար, որդեկորույս ու սգացյալ մեր մայրերի համար, որ հայրենասիրութեան զգացումով պարուրեցին իրենց սրտերի տրտմութիւնը: Հայցենք, որ խաղաղութիւն լինի հայրենի մեր երկրում եւ համայն մարդկութեան կյանքում:

Աստվա՛ծ, Փրկի՛չ մեր, պահիր եւ պահպանիր Քեզ ապավինած եւ հուսացած Քո ժողովրդին, չնորհիր սեր, հաստատութիւն եւ ըղձալի խաղաղութիւն Քո սուրբ եւ պատվական խաչի հովանու ներքո այսօր եւ հավիտյան. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՇՈՒՇԻԻ ՍՈՒՐԲ ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒՄ

(ՇՈՒՇԻ, 14 ԱՊՐԻԼԻ, 2016 Թ.)[1]

«Եւ կիտրիուրդն կոր խորհիք խափանէ Տէր,
կի Աստուած ընդ մեզ է»
(Ժամագիրք):

Մեծարգո՛ նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության,
Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, քաջարի՛, հաղթո՛ղ ժողովուրդ:

Այսօր Արցախի օրհնյալ հողում, Շուշիի Ղազանչեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում գոհաբանական աղոթք բարձրացրեցինք առ Աստված, որ հաղթանակով պսակեց հայրենյաց պաշտպան մեր զավակների պայքարը Արցախ ներխուժած թշնամու դեմ՝ խափանելով մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքին բռնանալու դավադիր խորհուրդները:

Այս դժվարին օրերին, երբ լարվածությունն ու պատերազմի սպառնալիքը դեռ չեն փարատվել, Մենք մեր հոգեւոր եղբոր՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի հետ ցանկացանք այցելել Արցախի մեր ժողովրդին, Հայրապետական Մեր օրհնությունը եւ գնահատանքը բերել ձեզ, որ առ Աստված հավատքով ու արի ոգով հաստատուն կանգնած եք հայրենի հողին, անձնվիրաբար պաշտպանում եք հայրենիքի սահմանները: Արդարեւ, չկա ավելի մեծ չնորհ ու մխիթարություն Հայրապետիս համար, քան լինել հարազատ ժողովրդի կողքին իր պայքարի այս նվիրական պահին, քաջալերել նրան իր հավատարմությունը պահելու հայրենիքին, քրիստոնեական իր հոգուն, ազգի իղձերին ու լուսավոր գալիքի տեսիլքին: Ազգը գոյություն ունի այնքան ժամանակ, քանի դեռ տեսիլք ունի եւ պայքարում է հանուն դրա իրագործման:

[1] «Էջմիածին», 2016, Դ, էջ 15:

Ասվածի լավագույն ապացույցը Արցախի Հանրապետությունն է, որը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր ժողովրդի ազատ ապրելու դարավոր երազանքի մարմնացումը:

Մեր հոգին լի է արդար հպարտությամբ, քանզի մեր բանակի սահմանապահ միավորումները, ինչպես եւ՝ Արցախի մեր ժողովուրդը աներկյուղ դիմակայեցին ադրբեջանական զորքերի հարձակմանը, ետ մղեցին սպառազինությամբ գերազանցող հակառակորդին, որի մեջքին անսքող կանգնած է ցեղասպան Թուրքիան: Առաջին իսկ օրից դրսեւորվեց մեր բանակի մարտունակությունն ու քաջարի ոգին, մեր զինվոր զավակները ցուցաբերեցին հերոսության բացառիկ օրինակներ: Նրանցից ոմանք իրենց ծաղկուն կյանքը, պայծառ երազները նվիրեցին հայրենիքին, մեզ՝ ապրողներիս, գալիք սերունդներին:

Սիրելինե՛ր, հայրենյաց սիրո ոգին, Արցախից տարածվելով, այսօր համախմբում եւ միավորում է մեր ողջ ժողովրդին ի սփյուռս աշխարհի: Հայաստանից, աշխարհի բոլոր կողմերից կամավորներ են ժամանում Արցախ, շարունակվում են հանգանակությունները ի խնդիր հրետանակոծված մեր բնակավայրերի վերակառուցման, տուժած մեր զավակների աջակցության, մեր բանակի զորացման եւ սահմանների պաշտպանության: Անկախ հեռավորությունից՝ ամեն հայորդի իր նյութական թե բարոյական սատարումով, մեր ժողովրդի իրավունքների պաշտպանության ջանքերով չտապում է լինել Արցախի կողքին, Արցախի զինվոր: Առ հայրենին սիրո, հանճնառության ու զոհողության այս ոգին է զորավոր այն ուժը, որ մեր ժողովրդին դարձնում է աննկուն ամեն տեսակ փորձությունների առաջ: Այս ոգին ինքնաբուխ է. մարդկային որեւէ ջանք ի զորու չէ նման ոգեւորություն ստեղծել: Միայն հավատքից ծնված նվիրումը կարող է այսպիսի ներշնչում առաջացնել հոգիների մեջ: Այս ոգին մեր ժողովրդի ինքնության նկարագիրն է, դիմագիծը, որի շնորհիվ դարերի հողմերին հանդիման գոյատեւել է, գտել վերածնվելու ուժ եւ ստեղծելու, արարելու եռանդ:

Անկախության 25 տարիներին մենք ականատես ենք Արցախի իրական վերածննդին: Ականատես ենք, թե ինչպես Արցախի հայությունը իր աշխատանքով ու վաստակով չենացնում է հայրենի երկիրը, կառուցում է իր ազատ նոր կյանքը, բարձրացնում է իր եկեղեցիները, իր դարավոր սրբավայրերը, ապրում քրիստոնեական արժեքներով, մարտնչում խաղաղության ու արդարության համար:

Արդար է մեր պայքարը, սիրելինե՛ր: Մեր ժողովուրդը գենք է բարձրացնում իր հայրենիքի, իր ազատ եւ խաղաղ կյանքի համար: Այս գիտակցությամբ են հայ մայրերը պատերազմ ճանապարհում իրենց որդիներին, կինը՝ ամուսնուն, քույրը՝ եղբորը: Աստծո ողորմությամբ մենք 25-ամյա ազատության սերունդ ունենք այսօր, երիտասարդություն, ովքեր անձնվիրումով միանում են մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքի պաշտպանության պայքարին, մեր ժողովրդի խաղաղ ու բարօր կյանք կերտելու ջանքերին: Ազատ ապրելու իր արդարությունը Արցախը եւ նրա հետ մեր ողջ ժողովուրդը պիտի չարունակի պաշտպանել մինչեւ հաղթական ավարտ, մինչեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչում: Եվ թող Աստված չուտով արժանացնի այդ օրվան՝ նայելով մեր ժողովրդի հավատքին, նվիրումին, ազգաշեն ու հայրենանվեր գործերին, քանզի, ինչպես սաղմոսերգուն է ասում. «Արդար է Տէրը, արդարութիւն է սիրում, ճշմարտութեանն է նայում երեսը նրա» (Սղմ. 10. 8):

Արդարություն եւ ճշմարտություն է Արցախի ազատությունը: Արդարություն եւ ճշմարտություն է Արցախի հաղթանակը:

Արդ, ամուր ու անսասան մնանք հավատքի մեջ. հավատքի մեջ, որ Աստված մեզ հետ է: Պահպանենք մեր միաբանությունը, պահենք մեր զգոնությունը: Սիրենք միմյանց. մեր ուժը մեր եղբայրության ու միասնության մեջ է: Մեր հույսը նախ մենք ենք եւ մեր Աստված: Ամենքս՝ ի զոհողություն ի սեր հայրենիքի, զոհողություն՝ ի սեր հայ ընտանիքների, զոհողություն՝ ի սեր մեր անկախության եւ, ամենակարեւորը, զոհողություն՝ ի սեր Աստծո: Այսպես կարող պիտի լինենք պաշտպանել եւ միջազգային ճանաչման առաջնորդել Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու արդար իրավունքը:

Վերստին Մեր գնահատանքը եւ օրհնությունն ենք բերում ձեզ, սիրելի՛ բարեպաշտ զավակներ, Հայոց բանակի քա՛ջ մարտիկներ, մեր զորակցությունը՝ Արցախի բարեխնամ իշխանություններին՝ ի գլուխ նախագահ տիար Բակո Սահակյանի, մեր խրախույսն ու քաջալերանքը՝ մեր Եկեղեցու բարեջան սպասավորներին, սիրելի առաջնորդ Պարգեւ Սրբազանին: Տոկունություն եւ հաղթություն ձեզ, քա՛ջ արցախցիներ:

Ի խորոց սրտի Հայրապետիս աղոթքն է, որ Բարերար Աստված չուտափույթ ապաքինում պարգեւի վիրավոր մեր զավակներին, երկնային լուսեղեն հարկերում ընդունի հոգիները մարտերում զոհված

մեր զինվորների եւ խաղաղ բնակիչների, ոգու արիութիւն եւ սփոփանք չնորհի նրանց ընտանիքներին եւ հարազատներին: Թող Ամենակարողն Աստված խաղաղութիւն պարգեւի Արցախ աշխարհին եւ համայն մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ օրհնի հայրենաշեն ջանքերը ազգիս, որ միշտ «հայրենյաց չողա արեւ»:

Թող Տիրոջ խաղաղութիւնը, ողորմութիւնն ու չնորհները լինեն մեզ հետ եւ համայն աշխարհի, այսօր եւ միշտ. ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2016 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում դպրոցահասակ եւ ուսանող Մեր բոլոր զավակներին, մանկավարժներին, դասախոսներին, կրթության բնագավառի բոլոր պատասխանատուներին:

Օրվա խորհուրդն արտահայտում է մեր ժողովրդի ձգտումն ու սերը գիտության ու լուսավորության հանդեպ, որը դարձել է գրավականը ազգային մեր հարատեւության: Ուսումնական ամեն տարեմուտ մեր ժողովուրդը տոնում է բարի հույսերով ու սպասումով, որ կրթական հաստատություններից սփռվող գիտության լույսով պիտի ամրանան ու զորանան հոգին ու միտքը մեր զավակների: Կրթությունն ու իմացությունը Աստծուց տրված բարիք են, որպեսզի մարդը, ճանաչելով իր Արարչին ու աշխարհը, ապահով ու երջանիկ դարձնի իր կյանքի ընթացքը:

Աղոթում ենք, որ Տերը քաջարթուն միտք ու պայծառ հոգի պարգեւի Մեր սիրելի զավակներին եւ պահի հաստատուն աստվածային պատգամների չավիղներում, ուժ ու եռանդ չնորհի մանկավարժ-դասախոսներին եւ կրթության գործի բոլոր նվիրյալներին՝ կրթելու եւ դաստիարակելու ազգի արժանավոր ու չնորհաչատ զավակներ:

Թող Տիրոջ օրհնությամբ նոր ուսումնական տարին արգասավոր լինի առատ վաստակով՝ հանուն մեր հայրենիքի զորացման եւ մեր ժողովրդի առաջընթացի:

---

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2016, սեպտեմբեր Ա, թիվ 17 (469) էջ 1:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ԸՆԾԱՅԱՐԱՆԻ ՆՈՐ ՀԱՄԱԼԻՐԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(ԱՄՆ, ՆՅՈՒ ՅՈՐՔ, 2016 Թ.)[1]

Սիրելինե՛ր:

Սրտի անհուն բերկրանքով ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ամենքիդ Սուրբ Ներսես ընծայարանի նորակառույց չենքի բացման առիթով: Ուրախ ենք, որ այս արարողությանը ներկա են մեր Եկեղեցու հոգեւոր սպասավորներ, մեծաքնիվ բարեբարներ, ընծայարանի դասախոսներ ու սաներ, հավատացյալ զավակներ մեր ժողովրդի: Ազգային-եկեղեցական կյանքի հանդեպ նախանձախնդրությունը վառ պահելու ձգտումով 55 տարի առաջ Տ. Տիրան արքեպիսկոպոս Ներսոյանի նախաձեռնությամբ եւ մեծաքնիվ տիկին Սաթենիկ Ուզունյանի բարերարությամբ ԱՄՆ Արեւելյան եւ Արեւմտյան թեմերի հովանու ներքո հիմնվեց Սուրբ Ներսես ընծայարանը: Իր անունն ընծայարանը ստացավ ի պատիվ մեր Եկեղեցու երախտավոր Հայրապետերից մեկի՝ մեծ աստվածաբան եւ շարականագիր Սուրբ Ներսես Շնորհալու: Կրթօջախը հիմնադրվեց պատրաստելու համար հոգեւորականաց սերունդ, որպեսզի նրանց ծառայությամբ Միացյալ Նահանգների կյանքի բազմազանության մեջ ամուր մնա մեր ժողովրդի հոգեւոր եւ ազգային ինքնությունը, հայ զավակաց հոգիներում անշեջ լինեն հավատքի լույսը, սերն ու հավատարմությունը՝ մեր մշակույթին եւ սրբազան արժեքներին:Այս անհրաժեշտության գգացումով ամերիկահայ երիտասարդներին ուղղված իր խոսքում Տիրան Սրբազանն ասել է. «Մենք պետք է սովորենք հայոց լեզուն, որը դուռն է դեպի վաղնջական ժողովրդի դարավոր նվաճումների ու մտքերի ընկալման համար: Մենք պետք է ընթերցենք հայ գրական ստեղծագործություններ: Մենք պետք է ամերիկյան երգերի կողքին երգենք հա-

[1] «Էջմիածին», 2016, ԺԱ, էջ 8:

յերեն երգեր, մենք պետք է ամերիկյան երաժշտության կողքին լսենք ու կատարենք հայերեն երաժշտություն...մենք պետք է պահենք հայկական գեղեցիկ ու իմաստալից ավանդույթներն ու սովորույթները: Բազմաթիվ մարդիկ սովորում են տարբեր ազգերի ու ժողովուրդների մասին, մենք բոլոր հիմքերը ունենք սովորելու մեր անցյալի ու ներկա մշակույթի մասին» (Տիրան արք. Ներսոյան, Քահանայության 25-ամյա հոբելյանին առիթով, Նյու Յորք, 1954թ.):

Այսօր գոհունակությամբ ենք անդրադառնում Սուրբ Ներսես Ընծայարանի տարիների վաստակին: Հատկապես խորհրդային տարիներին՝ երկաթյա վարագույրի առկայության պայմաններում, երբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը կարելիություն չուներ հոգեւոր սպասավորներ առաքելու Սփյուռք, Ս. Ներսես ընծայարանի հարկի ներքո կրթություն ստացան Միացյալ Նահագներում ցայսօր իրենց ծառայությունն իրականացնող հոգեւորականներ: Լիահույս ենք, որ այսօր, ուսումնական նոր չենքի առավել բարեկեցիկ պայմաններում, Ընծայարանը պիտի առավել արդյունավոր կերպով իրականացնի նվիրյալ եկեղեցականների պատրաստությունը, ովքեր, հավատարիմ մեր եկեղեցու ավանդությանը, հոգեւոր խնամատարություն պիտի իրականացնեն մեր ժողովրդի զավակների համար: Այսօր եւս հայրենյաց կյանքի բարօրության եւ մեր ժողովրդի պայծառ գալիքի համար անգնահատելի է ուսյալ եւ գրագետ, մեր Եկեղեցու ավանդությանը, ծեսին ու կարգին հավատարիմ հոգեւորականի դերը, հատկապես սփյուռքյան իրականության մեջ:

Այս ուրախալի օրվա առիթով վերստին հայրական Մեր սերն ու օրհնությունները բերելով ձեզ, սիրելինե՛ր, Մեր գնահատանքն ենք հայտնում մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակներ տեր եւ տիկին Հայկ եւ Էլզա Տիտիզյաններին, ովքեր առանձնահատուկ նախանձախնդրությամբ եւ ջանասիրությամբ մեծ ներդրում են բերում մեր Եկեղեցու եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելության արգասավորման համար: Բարեպաշտ Տիտիզյան ամոլի հովանավորությամբ կյանքի կոչված եկեղեցաշեն իրագործումներին այսօր հավելվում են նորակառույց Սուրբ Հակոբ մատուռը եւ Գարեգին Ա Ամենայն Հայոց Հայրապետին, որի լույս

հիշատակը նրանք միշտ վառ են պահել նաեւ Գարեգին Ա Հայրապետի գրքերի հրատարակմամբ եւ Գարեգին Ա կրթական կենտրոնի կառուցմամբ Սուրբ Էջմիածնում: Լուսահոգի Գարեգին Ա կաթողիկոսը երկնքից իր բարի օրհնանք է բերում ձեզ՝ իր հոգեզավակներին, սիրելի՛ Հայկ եւ Էլզա, ձեր եկեղեցասեր ու ազգօգուտ գործոց համար: Մեր գնահատանքն ենք բերում ամերիկաբնակ տասնյակ եկեղեցասեր Մեր զավակներին, ովքեր Տիտիզյան ամոլի հետ իրենց բարերարութիւններով կյանքի են կոչել Սուրբ Ներսես ընծայարանի համալիրը, որի գեղեցիկ եւ հարմարավետ հարկի ներքո ուսում առնող հայորդիք մշտապես խորին երախտագիտութեամբ հիշելու են ազնիվ բարերարների անուննները:

Գոհունակ սրտով Մեր գնահատանքն ենք բերում ԱՄՆ Արեւելեան Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Խաժակ արքեպիսկոպոս Պարսամյանին՝ ընծայարանի գործունեութեան արգասավորմանը հոգածութեամբ հետամուտ լինելու համար, դասախոսներին՝ իրենց երախտարժան աշխատանքի համար, որ բարի ծառայութիւն է մեր ազգին ու եկեղեցուն: Աստծո ամենառատ չնորհների հայցով՝ օրհնում ենք ընծայարանի սիրելի սաներին՝ նրանց մաղթելով ծառայասիրութեան զորեղ ոգի, պայծառ հավատք, անսպառ սեր ու նվիրում առ Երկնավոր մեր Տերը, սեր ու նվիրում՝ մեր ժողովրդի հանդեպ:

Մաղթում ենք, որ Սուրբ Ներսես ընծայարանը նոր հաջողութիւններ հավելի նոր հոգեւորականներ կրթելու եւ դաստիարակելու իր առաքելութեանը: Հայցում ենք, որ Տերը հաջողութեամբ պսակի մեր ժողովրդի բարերար զավակների ազգաշահ եւ եկեղեցաշէն ձեռնարկները եւ Իր չնորհներով եւ ամենայն բարիքով օրհնի նրանց կյանքը: Աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որպեսզի մշտապես օրհնի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, եւ բեղուն արդյունքներ պարգեւի հոգեւոր-կրթական մեր բոլոր հաստատութիւններին:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ մեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԶՈՀԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՈՒ ԱՐԺԱՆԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅԴ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(9 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2016 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ ՀՀ Սահմանադրական դատարանի,

Հարգարժա՛ն ներկայացուցիչներ պետական իշխանությանց եւ դիվանագիտական առաքելությունների,

Սիրելի՛ ներկաներ:

Ողջունում եւ Հայրապետական մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ամենքիդ, որ ընդառաջ Մեր հրավերին՝ եկել եք մասնակցելու հիշատակի այս արարողությանը: Այսօր մենք նշում ենք Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի ու արժանապատվության եւ այդ հանցագործության կանխարգելման միջազգային օրը:

Ցեղասպանությունը ծանրագույն հանցանք է՝ուղղված մարդկության դեմ, որը, ցավոք, չարունակվում է եւ մեր օրերում: Մեր ժողովուրդը, դժբախտաբար, սահմանումներով չէ, որ ծանոթ է ցեղասպանությանը ու նաեւ այդ հանցագործության ժխտողականության դառնությանը: Ցեղասպանության վիշտը կրում են նույնպես հույն, ասորի, հրեա, եզդի մեր եղբայր ժողովուրդները, որոնց ներկայացուցիչները մասնակից են հիշատակի այս արարողությանը:

Քսաներորդ դարի առաջին կեսին հայերի եւ ապա հրեաների ցեղասպանությունները ահազանգ եղան ազգերի համար՝ ընդունելու Ցեղասպանության մասին կոնվենցիան: Կոնվենցիայի ընդունումից տասնամյակներ անց ականատես եղանք ցեղասպանությունների Կամբոջայում, Ռուանդայում, Դարֆուրում եւ այլուր: Այսօր Մերձա-

[1] «Էջմիածին», 2016, ԺԲ, էջ 7:

վոր Արեւելքում պատերազմական իրավիճակներում բռնութիւնների եւ ցեղասպան գործողութիւնների են ենթարկվում ազգային եւ կրոնական փոքրամասնութիւններ՝ եզդիներ, քրիստոնյաներ, ինչպես եւ մահմեդականներ:

Մենք՝ որպես ժողովուրդ, որը վերապրել է 20-րդ դարի առաջին ցեղասպանութիւնը, նախանձախնդիր ենք աջակցելու միջազգային հանրութեան ջանքերին՝ ուղղված մարդկութեան դեմ գործվող հանցագործութիւնների կանխմանը: Նման ոճիրների պատճառները գտնվում են նաեւ համընդհանուր դատապարտման բացակայութեան եւ անպատժելիութեան մեջ: Համընդհանուր ընդվզում եւ ջանքեր են պետք արմատախիլ անելու համար այսօր հաճախադեպ դարձող ազգայնամոլութեան դրսեւորումները, կրոնական պատկանելիութեամբ պայմանավորված ատելութիւնը, որոնք ծնունդ են տալիս իրավունքների ոտնահարման, բռնութիւնների եւ ոճիրների: Ցեղասպանութիւնների եւ նման հանցագործութիւնների կանխարգելումը պահանջում է միջազգային հանրութեան կամքը, պետութիւնների հստակ դիրքորոշումն ու հանձնառութիւնը՝ բացառելով քաղաքական նպատակահարմարութիւնները:

«Խաղաղութիւն եմ թողնում ձեզ, իմ խաղաղութիւնն եմ տալիս ձեզ. ձեզ չեմ տալիս ինչպէս այս աշխարհն է տալիս. ձեր սրտերը թող չխռովուեն, եւ չվախենաք» (Յովհ. 14:27): Ս. Հովհաննես ավետարանիչը փոխանցում է մեր Տիրոջ պատգամը, որով Տերը սփոփում է բոլոր նրանց, ում սրտերը խռովված են եւ ովքեր տանջվում են ամեն տեսակ փորձութիւններից՝ թե՛ հոգեւոր եւ թե՛ ֆիզիկական: Նրա պատգամը իրական հրավեր է մեզ բոլորիս՝ մասնակցելու սիրո եւ խաղաղութեան սփոման Իր առաքելութեանը: Ավելին, մենք կոչված ենք կարեկցանք եւ աջակցութիւն դրսեւորելու մեր եղբայրների ու քույրերի հանդեպ, քանզի ամեն անգամ, երբ մարդկութիւնը լցվում է ատելութեամբ, ցասումով եւ նախանձով՝ փոխանակ սիրո եւ հանդուրժողութեան, դառնում է անտարբեր ուրիշի ցավի եւ կորստի նկատմամբ, ուստի եւ՝ անուղղակիորեն աջակցում է ցեղասպանութիւնների իրագործմանը:

Մենք աղոթում ենք, հայցելով մեր սուրբ նահատակների բարեխոսութիւնը, որ աշխարհում խաղաղութիւն հաստատվի, հատկապես այնտեղ, որտեղ այժմ խաթարված է բնականոն կյանքը, ընթանում են պատերազմներ, տեղ գտնում բռնութիւններ: Մենք աղոթում ենք

նաեւ մարդկութեան թշնամիների համար, որ իրենց եւս չնորհվի սիրո եւ կարեկցանքի զգացում այլոց հանդեպ:

Այսօր աշխարհի բազում անկյուններում մարդիկ հավաքվում են՝ վկայակոչելու ցեղասպանութիւնների զոհերի հիշատակը: Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մենք միավորում ենք մեր աղոթքները աշխարհի բոլոր կողմերում տարբեր ազգութեան մեր հազարավոր քույրերի ու եղբայրների ձայնին, հուսալով, որ այդ ձայնները, վերառաքվելով առ Բարձրյալ Տերը, իրենց արձագանքը պիտի գտնեն մարդկանց սրտերում՝ հանուն մարդկութեան դեմ գործված բոլոր ոճիրների ճանաչման եւ դատապարտման՝ ի խնդիր ցեղասպանութեան ահավոր ոճրի կանխարգելման եւ խաղաղ ու ապահով կյանքի կերտման:

Թող մեր Տիրոջ սերը, խաղաղութիւնն ու ողորմութիւնը լինեն մեզ հետ եւ ամենքի՝ այսօր եւ միշտ եւ հավիտյանս. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2016 Թ.)[1]

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Տարեմուտի սեմին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից աղոթքով եւ Ողորմած Աստծո չնորհների հայցով Հայրական Մեր սերը եւ օրհնությունն ենք բերում ենք ձեզ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս:

Հույսով ու բարի ակնկալիքներով դիմավորում ենք 2017 թվականը՝ հրաժեշտ տալով մեր ժողովրդի համար հուզումներով դժվարին տարվա: Մեկ անգամ եւս ապրեցինք պատերազմի, ռազմական սադրիչ գործողությունների տագնապները եւ կորուստների ցավը, նաեւ ամավերջի այս օրերին: Ականատես եղանք եւ սխրանքներին մեր զավակների, ովքեր անառիկ պահպանեցին մեր երկրի սահմանները: Զգացինք քաջալերությունը հայրենիքը պաշտպանելու պատրաստ մեր ժողովրդի միասնականության: Անցնող տարում հաղթահարեցինք նաեւ ներքին անկայունության սպառնալիքը՝ հաստատելով օրինականությամբ խնդիրները վճռելու մեր ուղին:

Այս մարտահրավերներով ու հայրենական մեր կյանքի բոլոր դժվարություններով հանդերձ՝ մեր ժողովուրդը Աստծո օրհնությամբ արարեց, բարիք ստեղծեց, ի սփյուռս աշխարհի տոնեց անկախ մեր պետականության 25-րդ տարեդարձը, զորավիգ կանգնեց ու սատարեց պատերազմական նեղությունները կրող սիրիահայությանը: Հայրենիքում եւ Սփյուռքում մեր ժողովուրդն ապրեց առ հայրենին սիրով, հույսով լավատես, որ նորոգյալ կյանքով, իր աշխատանքով, տաղանդով ու ձեռքբերումներով կերտելու է իր բարօր, լուսավոր ներկան ու ապագան: Գոհություն ենք հայտնում Երկնավորին, որ մեր ժողովրդի զավակները կարեւորեցին իրենց հոգեւոր աճը, զորացրեցին իրենց հավատքն ու քրիստոնեական ճանաչողությունը, որին ուղղված է մեր

[1] «Էջմիածին», 2017, Ա, էջ 10:

եկեղեցու ընդարձակվող գործունեությունը: Քրիստոնեական մեր հավատքի լիուլի դրսեւորումը այն ժայռեղեն հիմքն է, որի վրա չարունակ պիտի բարձրանա մեր կյանքը եւ ունենա ներուժը՝ հաղթանակներ կերտելու:

Տարեմուտը հրավեր է նորոգության, վերափոխվելու, հրաժարվելու անցյալի սխալներից ու բացթողումներից: Մեր հորդորն է, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, որ քրիստոնեական սիրով, հայրենաշեն ջանքերով, մեր երկրում կայունության պահպանման եւ օրինականության ամրապնդման նախանձախնդրությամբ մասնակցություն բերենք մեր պետական ու հասարակական կյանքի զորացմանը եւ ի սփյուռս աշխարհի մեր ազգային եւ եկեղեցական անդաստանի չենացմանը: Ծառայենք միմյանց, ծառայենք մեր հայրենիքին, որի օրհնյալ կյանքը պիտի կերտենք, ծառայենք մեր ազգին, որ բազում հույսեր ունի իրագործելու: Օգնական լինենք նեղյալներին եւ կարոտյալներին: Միմյանց հանդեպ սերը, բարի նպատակն ու գործը Աստված անտես չի անում: Հանճնառության այս ոգով դիմավորենք 2017 թվականը:

Համայն հայոց հոգեւոր նվիրական կենտրոն Սուրբ Էջմիածնից Մեր աղոթքն ենք բարձրացնում, որ Աստված օրհնի մեր հայրենիքը, օրհնի մեր ժողովրդի կյանքը ի սփյուռս աշխարհի, անվտանգ ու անհաղթ պահպանի մեր բանակի զինվորներին ու սպաներին, օրհնի հիշատակը հայրենիքի համար զոհված Մեր քաջարի զավակների եւ ամուր ու անխաթար պահի խաղաղությունը մեր երկրի սահմաններին: Խաղաղություն ենք մաղթում ողջ աշխարհին, խաղաղություն՝ Մերձավոր Արեւելքին, Սիրիային, Իրաքին: Թող մեր Փրկչի առատ չնորհները, ուրախություն, երջանկություն, բյուր բարիքներ հեղվեն ձեր կյանքից եւ ձեր ընտանիքներից ներս, սիրելինե՛ր: Պահպանե՛ք ձեր հավատքը, պահպանե՛ք ձեր հայրենասեր, ազգանվեր ոգին, հոգ տարե՛ք միմյանց, հոգացե՛ք հավիտենական կյանքի համար, որ ունենք Հիսուս Քրիստոսով: Մաղթում ենք բարի, օրհնյալ տարի բոլորիդ:

Շնորհավոր Նոր տարի:



Ն. Ս. Օ. Տ . Տ . ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԻՐՈՋ՝ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 6 ՀՈՒՆՎԱՐԻ, 2017 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ մի՛ կերպարանիք կերպարանասք աշխարհիս այսորիկ. այլ նորոգեցարուք ի նորոգութիւն մտաց ձերոց, առ ի քննել ձեզ կալն եւ եթէ կին են կամքն Աստուծոյ, բարին եւ հաճոյն եւ կատարեալ»
(Հռոմ. ԺԲ 2):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Մեր Տիրոջ Սուրբ Ծննդեան բերկրանքով այսօր գոհաբանութիւն ենք բարձրացնում առ Աստուած: Փառաբանում ենք Բեթղեհեմում ծնուած Յիսուս Մանկանը, Ով աշխարհ եկաւ փրկելու կորստեան մատնուած մարդկութեանը:

Աստուծոյ կողմից արարուած աշխարհում առաջին մարդը՝ Ադամը, աստուածային պատուիրանը խախտելով, ընթացաւ Աստուծոյ կամքին հակառակ, զրկուեց չնորհներից ու պարգեւներից Արարչի: Ադամով մեղքը սկիզբ առաւ մարդկային կեանքում, եւ մահը մուտք գործեց աշխարհ: Աստուած, սակայն, Իր արարչական սիրով ու ողորմածութեամբ նոր իրականութիւն կերտեց մարդկութեան համար: Ի լրումն ժամանակի՝ աշխարհ առաքեց Իր Միածին Որդուն՝ քաւելու մարդկութեան մեղքը եւ պարգեւելու յաւիտենական կեանք: Քրիստոսով նորոգուեց մեղքերով փոթորկուող աշխարհը, մարդկանց տրուեց նոր արարած լինելու չնորհը, աշխարհում խաղաղութիւն, սէր եւ հաճութիւն հաստատելու պատգամը: Տիրոջ փրկագործութեան իրողութեան առջեւ Պօղոս առաքեալը յորդորում է. «Այս աշխարհի կերպարանքով մի՛ կերպարանուէք, այլ նորոգուեցէ՛ք ձեր մտքի նորո-

[1] «Էջմիածին», 2017, Ա, էջ 12:

գումեամբ, որպէսզի դուք քննէք լաւը, եւ թէ՝ ի՛նչ է Աստծու կամքը՝ բարին եւ հաճելին եւ կատարեալը»:

Առաքեալի այս խօսքերը արտայայտում են ոգին Աւետարանի, որի քարոզութիւնը աշխարհում արգասաւորեց Քրիստոսով նորոգութեան ուղին՝ փոխակերպելով մարդկային կեանքեր, փոխակերպելով հասարակութիւններ, արմատաւորելով մտածողութիւնը համընդհանուր բարօրութեան եւ աշխարհում արդարութեան ու խաղաղութեան հաստատման: Ցաւալիօրէն, սակայն, Աստծուն հակառակ՝ մեղսագործ ընթացքները չարունակուում են: Ջեն դադարում պատերազմները, հակամարտութիւնները ու ահաբեկչութիւնները, ոտնահարուում են մարդկային իրաւունքները, արդար դատապարտութիւն չեն գտնում ցեղասպանութիւնները ու մշակութային եղեռնագործութիւնները: Ընչաքաղցութիւնը, հարստանալու մարմաջը մղում են խաբէութեան ու չարաշահումների, պատճառ դառնում մարդկային ողբերգութիւնների, առաջնորդում հասարակութեան բեւեռացման, սոցիալական անարդարութեան: Դիմասրտութեան եւ ապնուութեան կողքին ականատես ենք աւելութեան եւ նենգադաւութեան, խոնարհութեան եւ ծառայանուիրումի յանդիման՝ փառասիրութեան եւ իշխանատենչութեան մոլուցքների: Այս բոլոր վէրքերի վրայ Քրիստոսի մարդեղութեան խորհուրդը պարզում է յոյսը նորոգութեան, որպէսզի, Պօղոս առաքեալի խօսքի համաձայն, մարդիկ քննեն լաւը «եւ թէ ի՛նչ է Աստծու կամքը՝ բարին եւ հաճելին եւ կատարեալը» եւ ապրեն աստուածահաճոյ իրագործումներով:

Աստուածային կամքին համաձայն ընթացքն է կանգուն պահում աշխարհը եւ կեանքը զարդարում սիրով, խաղաղութեամբ, արդարութեամբ, ճշմարտութեամբ, որոնք Աստուած չարունակ աճեցնում է հաւատաւոր հոգիներում: Մենք՝ իբրեւ քրիստոնեաներ, Քրիստոսով նորոգութեան վկայութիւնն է, որ պիտի բերենք աշխարհում: Քրիստոնեայի կեանքը ներգործուն առաքելութիւն է մարդկանց եւ աշխարհի հանդէպ: Քրիստոսի փրկագործութիւնը օրինակ է համամարդկային եւ ազգային բարիքի հաստատման մէջ՛ տեսնելու սեփական առաքելութիւնը եւ միասնութեան մէջ կերտելու երջանկութեան, առաջընթացի, ձեռքբերումների ուղիները: Այսպէս կեանքը ինքնանպատակ լինելուց դառնում է նուիրում, աշխատանքը՝ արարում, գիտութիւնը, տաղանդը՝ համընդհանուր բարիք, իշխանութիւնը՝ ծառայութիւն ժողովրդին, իսկ մարդու երկրաւոր, անցողիկ կեցութիւնը՝ բաղձանք ու ձգտում դէպի յաւիտենութիւն:

Նորոգութեան աւետարանական պատգամը եւ առաքելական յորդորը մշտահունչ եւ կենսունակ են մեր ժողովրդի համար: Աւետարանով նորոգեալ կեանքը դարեր շարունակ մեր ազգին պարգեւել է հաւատքի զօրութիւն, հոգու ամրութիւն ու արիութիւն՝ դիմակայելու փորձութիւնների, համբերելու նեղութիւնների եւ արարելու գրոյ յիշատակի արժանի գործեր: Նոյն ոգով այսօր դիմագրաւում ենք հայրենի մեր երկրի անօրինական շրջափակմանը, կեանքեր խլող սադրիչ ռազմական գործողութիւններին, յաղթահարում մեր առջեւ ծառացած դժուարութիւնները, դիմակայում մարտահրաւէրներին եւ ջանքեր բերում՝ կերտելու խաղաղ ու բարօր կեանքը մեր ժողովրդի, սատար կանգնելու Մերձաւոր Արեւելքում պատերազմական դժուարութիւնները կրող մեր քոյրերին ու եղբայրներին: Ներկայ հիմնախնդիրների, նեղութիւնների յանդիման Քրիստոսի Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տոնը կեանքի նոր արշալոյս է բացում, ջերմացնում մեր հոգիները եւ յաւելում յոյս ու լաւատեսութիւն:

Փրկչի Ծննդեան ու Աստուածայայտնութեան խորհրդի առջեւ այսօր առաքելական նոյն յորդորն ենք բերում, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Աստուծոյ կամքին հետեւելու, բարին ընտրելու, դէպի կատարեալը ընթանալու, տոգորուելու կեանքը բարեփոխելու վճռականութեամբ ու նախանձախնդրութեամբ: Պահպանենք մեր սրտերը որպէս բեթղեհեմեան գողտրիկ անճաւներ աստուածային ներկայութեան՝ լինելու Փրկչին ճշմարտապէս երկրպագողներ, ողորմած, արդարամիտ ու եղբայրասէր: Զօրանանք Տիրոջով, որ կարող լինենք իրականութիւն դարձնել մեր յոյսերը, իրագործել ազգային մեր նպատակները: Մեր հոգիներում վառ պահենք հաւատքը՝ որպէս առ Տէրն առաջնորդող բեթղեհեմեան աստղալոյս եւ իմաստուն մոգերի պէս մեր կեանքի ճանապարհը միշտ դարձնենք հաւատարմութիւն ու նուիրում առ Տէրը մեր Յիսուս Քրիստոս: Մեր կեանքի ճանապարհը դարձնենք հաւատարմութիւն ու նուիրում առ հոգեւոր մայրը մեր՝ Առաքելական Սուրբ Եկեղեցին եւ սրբազան մեր Հայրենին:

Քրիստոսի Սուրբ Ծննդեան բերկրալի աւետիսով եղբայրական ողջոյն ենք յղում եւ Մեր բարեմաղթանքները բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մութաֆեանին եւ մեր Եկեղեցու ողջ հոգեւոր

դասին: Մեր ջերմ ողջոյնն ենք յղում եւ Մանուկ Յիսուսի փրկարար չնորհները հայցում քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին եւ նրանց հաւատաւոր հօտին:

Մեր ողջոյնն ենք յղում եւ Տիրոջ զօրակցութիւնը մաղթում Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեանին, Մեր օրհնութիւնն ու բարեմաղթանքներն ենք բերում Սուրբ Պատարագի արարողութեանը ներկայ հայոց պետական աւագանուն եւ Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներին: Հայրական Մեր սէրն ու օրհնութիւնը՝ հաւատաւոր համայն Մեր զաւակներին ի Հայրենիս եւ ի Սփիւռս:

Սուրբ Ծննդեան տօնի այս նուիրական օրը աղօթք ենք բարձրացնում առ մարդացեալ Աստուածորդին ողջ աշխարհի խաղաղութեան, աշխարհասփիւռ մեր ժողովրդի բարօրութեան ու առաջընթացի համար: Հայցում ենք, որ Բարին Աստուած մարդկանց սրտերից հեռացնի բռնութեան եւ ատելութեան որոմները եւ սերմանի սիրոյ եւ համերաշխութեան չնորհները՝ իրագործելու Աստուծոյ կամքը՝ «բարին եւ հաճելին եւ կատարեալը»: Թող Տէրը Իր օրհնութեան եւ Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքոյ պահպանի մեր երկիրը, պայծառ պահի մեր Սուրբ Եկեղեցին եւ հաւատքի ու հաւատոյ գործոց չաւիղներում առաջնորդի մեր կեանքը՝ փառաբանելու Իր Սուրբ Անունը այսօր եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Ձեզ եւ մեզ մեծ աւետիս

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(8 ՄԱՐՏԻ, 2017 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունը, սերն ու գնահատանքն ենք բերում մեր սիրելի մայրերին, քույրերին եւ դուստրերին՝ շնորհավորելով մարտի 8-ի տոնական առիթով:

Դարեր շարունակ Հայոց աշխարհի փափկասուն տիկնայք ազգային մեր կյանքից ներս առանձնակի նվիրական առաքելություն են իրականացրել՝ կրթելով հավատավոր, հայրենիքի նվիրյալ արիասիրտ որդիներ եւ առաքինազարդ դուստրեր: Նրանք իրենց անձերը ոսկուց եւ արծաթից առավել զարդարել են պարկեշտությամբ եւ պատկառանքով, մայրական սիրով սերունդներին են փոխանցել հայրենի ավանդները՝ չեն եւ ամուր պահելով հայ ընտանիքը:

Սիրելի՛ տիկնայք եւ օրիորդներ, ուրախ ենք, որ այսօր բարեպաշտ նույն ոգով ու նվիրվածությամբ շարունակում եք աստվածապարգեւ ձեր չնորհներով ջանքեր ներդնել՝ հանուն երիտասարդ սերնդի դաստիարակության, մեր երկրի զորացման եւ մեր ժողովրդի կենաց հարատեւության:

Մեր մաղթանքն է, որ Երկնավոր Տերը Ամենօրհնյալ Սրբուհի Աստվածածնի բարեխոսությամբ բաշխի ձեզ կանացի եւ մայրական բերկրալի անսպառ երջանկություն, քաջառողջություն, լիախնդություն եւ անսասանություն՝ ձեր կյանքի եւ առաքելության ընթացքին:

Աղոթում ենք առ Բարձրյալն Աստված, որ Իր Ամենազոր Աջի հովանու ներքո պահի, պահպանի ձեզ եւ ձեր ընտանյաց անդամներին, ամրապնդի ամենքիդ՝ հույսի, հավատի եւ սիրո աստվածային առաքինությունների մեջ:

«Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ, ընդ ամենեսեանդ. ամէն»:

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2017, մարտ Ա, թիվ 5 (481), էջ 2:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՀԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 16 ԱՊՐԻԼԻ, 2017 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Զի կեանս յաւիտենական ետ մեզ Աստուած, եւ այս են կեանքն, որ յՈրդին Նորա են»
(Ա Յովհ. Ե 11):

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Մեծ Պահքի օրերի խոկումներով ու խորհրդով, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի չարչարանքների ու խաչելութեան իրադարձութիւնների ապրումներով այսօր հասել ենք Փրկչի հրաշափառ Յարութեան լուսափայլ օրուան, որը տօնում ենք հոգու բերկրանքով ու խնդութեամբ: Արդարեւ, անսահման է ուրախութիւնը այսօր մեր հոգիներում, քանզի Քրիստոսի Յարութեամբ մահը խորտակուեց, եւ մարդկանց տրուեց պարգեւը յաւիտենական կեանքի, երկնքի արքայութեան: «Աստուած յաւիտենական կեանք տուեց մեզ. եւ այդ այն կեանքն է, որ Նրա Որդու մէջ է»: Յովհաննէս առաքեալի այս խօսքերով Մեր պատգամն ենք բերում ձեզ, սիրելի՛ հաւատացեալներ, որ հաւաքուած էք Մայր Տաճարում եւ համայն մեր ժողովրդին՝ ի հայրենիս եւ ի սփիւռս:

Արդէն բացուած են մեր եկեղեցիների սուրբ խորանների վարագոյրները, խորհրդանշելով, որ բաց են յաւիտենութեան դռները: Հնչում է աւետիսը Փրկչի Յարութեան՝ ազդարարելով, թէ ամեն ոք, ով ունի փափագը, քաղցն ու ծարաւը երկնքի արքայութեան, կարող է ժառանգել՝ ընդունելով այն կեանքը, որ Քրիստոսի մէջ է:

Քրիստոսի Յարութեամբ մարդուն տրուել է զօրութիւնը յարուցեալ կեանքի, մեղքն ու չարիքը վանելու, իր նմանի հանդէպ սիրով ու

[1] «Էջմիածին», 2017, Դ, էջ 9:

ողորմածութեամբ երկրային կեանքը լցնելու երկնային օրհնութեամբ ու շնորհներով, երկնային արքայութեան պատկերը հաստատելու աշխարհում, որտեղ թագաւորում են արդարութիւնն ու ճշմարտութիւնը, առատանում խաղաղութիւնն ու խնդութիւնը: Քրիստոսի պարգեւած յարուցեալ կեանքի մէջ չկան տագնապներ, չկան բռնութիւն ու պատերազմներ, աղքատութիւն ու թշուառութիւններ, չկան տարաբնոյթ մոլութիւններ, որոնք ցաւ ու տառապանք են պատճառում մարդկանց, օտարացնում միմեանցից, բեւեռացնում հասարակութիւնները, ծնում աղէտներ: Այս ամենը, սակայն, շարունակում են մնալ աշխարհի կեանքում, քանզի մարդկային սրտերը, յաճախ սիրուց պարպուած, չահամոլութիւնից կարծրացած ու անձնակենտրոն՝ անարձագանք են մնում յարուցեալ Նոր կեանքի կոչին: Մինչդեռ խաչելութիւնները յարութեամբ պսակելու, դժուարութիւններից ու նեղութիւններից, վշտերից ու չարչարանքներից յառնելու ուղին քրիստոսակենտրոն կեանքն է, որը խաղաղարար ոգով, բարի գործերով, բարեպաշտ ընթացքով, առաքեալի խօսքի համաձայն՝ առաջնորդում է դէպի յաւիտենութիւն. «Աստուած յաւիտենական կեանք տուեց մեզ. եւ այդ այն կեանքն է, որ Նրա Որդու մէջ է»:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, երկրային այս կեանքը տրուած է մեզ որպէս ժամանակ Աստուծոյ փրկարար կամքի վկայութիւնը բերելու, Աստուծոյ պատուիրաններն ու պատգամները իրագործելու մեր իրականութեան մէջ, մեր ընտանիքներում, մեր երկրում, մեզ շրջապատող աշխարհում: Մեր կեանքը արժէք ու բովանդակութիւն է ստանում Քրիստոսի մահուան ու Յարութեան խորհրդի լոյսի ներքոյ: Պօղոս առաքեալն ուսուցանում է, ասելով. «Եւ նա մեռաւ բոլորի համար, որպէսզի նրանք, որ կենդանի են, միայն իրենց համար կենդանի չլինեն, այլեւ Նրա համար, ով մեռաւ եւ յարութիւն առաւ իրենց համար» (Բ Կորնթ. ե 15): Ապրել Քրիստոսով եւ Քրիստոսի համար. ահա այս է փրկարար ուղին մեր կեանքի, հիմքը, պայմանն ու երաշխիքը՝ թէ՛ որպէս անհատ եւ թէ՛ որպէս հաւաքականութիւն, մեր հոգեւոր աճի ու զօրացման, նաեւ մեր հայրենիքի առաջընթացի ու զարգացման, աշխարհասփիւռ մեր ժողովրդի բարօրութեան ու լուսաւոր գալիքի:

Այսօր բազմաթիւ խնդիրների առջեւ է կանգնած մեր երկիրը. մեր սահմաններում անկայուն է խաղաղութիւնը, տակաւին յաղթահարուած չեն աղքատութիւնն ու գործազրկութիւնը, հրամայական է բազմազաւակութիւնը մեր ընտանիքների, արտագաղթի կանխումը եւ մեր ժողովրդի զաւակների դարձը դէպի հայրենիք: Յանդիման այս մար-

տահրաւէրների՝ մեր ժողովուրդն ունի վսեմ յատկանիշները հայրենանուիրումի, ազգասիրութեան, ընտանիքի նուիրականութեան, ծնողի հանդէպ սիրոյ, ունի յանձնառութիւն զոհողութիւնների՝ յանուն իր սրբազան արժէքների, եւ մենք ի զօրու ենք անառիկ պահելու հայրենի սահմանները, բարօր ու բարգաւաճ դարձնելու մեր երկիրը, բացառելու ազգային մեր կեանքից բոլոր տագնապներն ու ցնցումները: Մեր կեանքի ընթացքը, մեր կենսակերպը մեզ ոչ թէ պիտի ջլատի, պառակտի, այլ՝ միաւորի եւ դարձնի համախումբ՝ դիմագրաւելու համար մեր կեանքի մարտահրաւէրներն ու փորձութիւնները եւ լաւատեսութեամբ իրականութիւն դարձնելու ազգային մեր տեսիլքները: Մենք Քրիստոսի ժողովուրդ ենք, մեր հաւատը, որ Քրիստոս յարութիւն է առել, անյուսութիւնը փոխում է յոյսի, տկարութիւնը՝ ուժի, անտարբերութիւնը՝ նախանձախնդրութեան, արծաթսիրութիւնը՝ բարեգործութեան եւ ծառայութեանն ու աշխատանքին միախառնում է նուիրումի ու յանձնառութեան ոգին: Այս փոխակերպութեանն ենք կոչուած, որով միայն կարող ենք անկորուստ պահել մեր երկիրն ու ազգային կեանքը եւ յաղթանակներ արձանագրել մեր ժողովրդի ու հայրենիքի բարօրութեան ու առաջընթացի պայքարում: Արդ, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, բոլորս՝ պաշտօնեայ, աշխատաւոր, զինուոր, ձեռնարկատէր, մտաւորական, հոգեւորական, նորոգած մեր մէջ քրիստոնէական ոգին՝ ամրապնդուած յոյսով քայլենք այն ճանապարհով, ապրենք այն ճշմարտութեամբ, ընդունենք այն կեանքը, որ Քրիստոսն է՝ յարուցեալ մեր Տէրը, որպէսզի գրոյ յիշատակի արժանի գործերով պայծառակերպուի ազգիս կեանքը ի սփիւռս աշխարհի եւ լցուի աստուածային պարգեւներով եւ երկնային օրհնութեամբ: Եւ մենք, քաջալերմեր Տիրոջ պարգեւած փրկութեան հաւատով եւ տոգորուած բարի գործոց ջերմ եռանդով՝ առաքեալի հետ վստահութեամբ ասենք. «Եւ մենք ճշմարտի՝ Նրա Որդու՝ Յիսուս Քրիստոսի մէջ ենք. որովհետեւ Նա՛ է ճշմարիտ Աստուած եւ յաւիտենական կեանք» (Ա Յովհ. ե 20):

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան բերկրալի աւետիսով մեր ողջոյնն ենք բերում մեր հոգեւոր եղբայրներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեկչեանին, քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին եւ մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին:

Հայրապետական օրհնութեամբ ողջունում ենք Սրբազան Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին՝առաջին տիկնոջ հետ, ողջոյն ենք յղում Արցախի Հանրապետութեան նախագահ տիար Բակո Սահակեանին, հայոց պետական աւագանուն, նորընտիր Ազգային Ժողովի պատգամաւորներին եւ մաղթում, որ Տէրը զօրացեալ պահի առ ազգն ու հայրենին սիրոյ մէջ՝ հայրենաշէն ձեռքբերումներով արդիւնաւորելու բարձր ու պատասխանատու իրենց առաքելութիւնը: Օրհնութեամբ ու բարեմաղթանքներով ողջունում ենք Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ղեկավարներին ու ներկայացուցիչներին: Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում հաւատաւոր մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփիւռս:

Աղօթում ենք եւ հայց բարձրացնում առ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, որ հրաշափառ Իր Յարութեան շնորհները լուսաւորեն մարդկութեան կեանքը, խաղաղութիւն տիրի ողջ աշխարհում, խաղաղութիւն հաստատուի մեր հայրենի սահմաններում: Աղօթում ենք, որ մեր ժողովրդի հաւատաւոր գործերի բարի արդիւնքներով հզօրանայ մեր հայրենիքը, միշտ պայծառ լինի մեր Սուրբ Եկեղեցին, եւ աշխարհասփիւռ ազգս հաստատուն ընթացքով առաջնորդուի դէպի փրկութիւն ու յաւիտենութիւն՝ այսօր եւ միշտ. ամէն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

ՄԱՂԹԱՆՔՆԵՐ,
ԽՈՍՔԵՐ, ՔԱՐՈԶՆԵՐ,
ՈՒՂԵՐՁՆԵՐ,
ՊԱՏԳԱՄՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ՝ ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ, ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԵՎ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(1 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2017 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում ԲՈՒՀ-երի եւ դպրոցների պատասխանատուներին, դասախոսներին եւ մանկավարժներին, ուսանող եւ դպրոցական Մեր զավակներին՝ գիտելիքի, գրի, դպրութեան օրվա եւ նոր ուսումնական տարվա առիթով:

Սքանչելի եւ մեծ խորհուրդ ունի գիտելիքին ու դպրութեանը նվիրված օրը: Մեր ժողովուրդը դարերի մէջ՝ անգամ աղետալի ժամանակներում, արժեւորել է ուսումը, վառ պահել իմացութեան սերը եւ իր կրթօջախների լուսը: Արդարեւ, ուսյալ եւ կիրթ հասարակութիւնն է ընդունակ բարեփոխելու կյանքը, բարվոք վճիռներ գտնելու իր առջեւ կանգնած խնդիրներին եւ իրականութիւն դարձնելու առաջընթացի իր տեսիլքները:

Մաղթում ենք, որ այսօր մեր ուսումնական հաստատութիւնները հայրենիքում եւ սփյուռքում օրեցօր զորանան եւ առավել արդյունաւորեն իրենց առաքելութիւնը՝ կրթելով մեր զավակներին համակողմանի իմացութեամբ, հավատավոր ու հայրենասեր հոգով, որպեսզի կարող լինեն նորարարութիւնների, ստեղծագործական սլացքների եւ չարունակեն քրիստոնյա մեր ժողովրդի ներկայութիւնը աշխարհում, որ թեպետ փոքրաթիվ« բայց իր ստեղծածով միշտ համեմատվել է մեծերի հետ:

Մեր գնահատանքն ենք բերում կրթութեան գործի պատասխանատուներին, դասախոսներին ու մանկավարժներին՝ բարեջան ու նախանձախնդիր գործունեութեան համար: Հայրական հորդոր ենք բերում Մեր զավակներին, որ սիրեն ուսումը, լինեն ուշիմ ու ջանադիր,

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2017, սեպտեմբեր Ա, թիվ 17 (493), էջ 1:

չթերանան իրենց պարտականութիւններուն, որ ամուր հիմքերով սկզբնավորվի իրենց կեանքի ուղին« որն ապագան է մեր հայրենիքի ու ժողովրդի:

Աղոթք ենք բարձրացնում, որ Աստված օրհնի ջանքերը կրթուԹյան նվիրյալների եւ քաջարթուն միտք ու հոգի չնորհի մեր զավակներին: Օրհնյալ ուսումնական տարի, առատ արդյունքներ ու բարի վաստակ: Ամեն:

Օրհնութեյամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ՀԱՅԱՍՏԱՆ-ՍՓՅՈՒՌՔ» ՎԵՑԵՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2017 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Մեծարգո՛ նախագահ Արցախի Հանրապետության,

Հոգեւոր եղբա՛յր Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս,

Հարգարժա՛ն մասնակիցներ «Հայաստան-Սփյուռք» վեցերորդ համաժողովի,

Ողջունում ենք ձեզ համաժողովի գումարման առիթով եւ հայրապետական Մեր սերն ու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը բերում ամենքիդ: Ուրախ ենք, որ ազգային համախմբման միասնական տեսիլքով մեր ժողովրդի աշխարհասփյուռ զավակներն այսօր կրկին մեկտեղվել են Մայր հայրենիքում, Հայոց պետության հովանու ներքո՝ քննարկելու ազգային մեր կյանքը հուզող հարցեր ու խնդիրներ:

«Հայաստան-Սփյուռք» համաժողովները կարեւոր հարթակ են դարձել Հայաստանի, Արցախի եւ Սփյուռքի միասնության զորացման, գործակցության խթանման եւ մեր ժողովրդի տարբեր հատվածների փոխճանաչման եւ առնչությունների ընդլայնման համար: Այսօր մեզ հայրենիքում համախմբել են մեր ընդհանուր պատասխանատվությունն ու մտահոգությունը մեր ժողովրդի ներկայի եւ ապագայի նկատմամբ: Աշխարհաքաղաքական զարգացումները եւ այդ համատեքստում մեր ազգային ինքնության առջեւ ծառացած մարտահրավերները, սոցիալ-տնտեսական կյանքի դժվարությունները, մեր հայրենիքի հզորացումն ու ապահովությունը ներկա մեր սերնդին վիճակված առաջնահերթ մտահոգություններն են:

---

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2017, սեպտեմբեր Բ, թիվ 18 (494), էջ 3:

Հայրենիք-Սփյուռք գործակցության շրջանակներում, իրավ է, զգալի ձեռքբերումներ ենք արձանագրել՝ զորացնելով Հայաստանն ու Արցախը եւ Սփյուռքում ազգային կյանքը: Նշանակալի է եղել սփյուռքահայերի մասնակցությունը հայրենական կյանքին՝ սկսած Արցախյան ազատամարտին անմիջական ու անձնվեր մասնակցությունից ու նորաստեղծ մեր երկրի կյանքում ներդրված միջոցներից մինչեւ այլ երկրներում ի նպաստ Հայաստանի ու Արցախի ծավալած քարոզչական աշխատանքները: Միաժամանակ հայրենի պետության կողմից ջանքեր են ներդրվել ամրապնդելու հայրենիքի եւ Սփյուռքի կապերն ու համագործակցությունը, աջակցելու Սփյուռքում գործող ազգային կազմակերպություններին եւ Սփյուռքի տարբեր հատվածների համախմբմանն ու առկա հնարավորություններն առավել նպատակային օգտագործմանը, սատարելու պատերազմական իրավիճակում հայտնված մեր ժողովրդի զավակներին, ինչպես Սիրիայում եւ Իրաքում:

Այսուհանդերձ՝ կատարված աշխատանքները չեն սպառել ծառացած մարտահրավերները: Մեզ շարունակում են մտահոգել Արցախի հիմնախնդիրը, Հայոց ցեղասպանության արդար պահանջատիրության հանդեպ շարունակվող ժխտողականությունը, արտագաղթը, սոցիալ-տնտեսական դժվարությունները հայրենիքում, խաղաղության ապահովումը մեր սահմաններում:

Մեր պետությունը՝ թեեւ բազում դժվարությունների առջեւ, համայն հայության պատվարն է եւ մեր ժողովրդի գոյատեւման երաշխավորը: Այսօր ժամանակն է, որ դառը փորձությունների ծանրությունը կրած մեր երկիրն ու ժողովուրդը կարողանան ամուր քայլերով ընթանալ վերելքի ուղիով, որը պահանջում է ուժերի ու կարողությունների ամբողջական կենտրոնացում ու համախմբում: Ազգային համախմբման հարցում ամենքս միակարծիք ենք ու հաստատակամ: Համախմբումը, սակայն, զերծ պիտի լինի հատվածական հետաքրքրություններից ու ժամանակավոր նպատակահարմարություններից: Պաշտոնը, հասարակական դիրքը, նյութական ու մտավոր կարողությունները, որոնցով օժտված են մեր ժողովրդի զավակները, պիտի ծառայեցվեն մեր երկրի պայծառացմանը եւ ամենուր մեր ժողովրդի առաջընթացին ու ազգային կյանքի զարթոնքին: Հայրենաբնակ թե սփյուռքահայ՝ հայրենիքի եւ ազգի հանդեպ կրում ենք նույն պատասխանատվությունը: Հայրենիքից չի կարելի երես դարձնել ձախողած գործի եւ կամ տեղ գտած անարդարության պատճառով: Հայրենիքից չի կարելի երես դարձնել,


եթե այն նեղությունների, փորձութիւնների ու մարտահրավերների առջեւ է կամ նվազ հարուստ ու հարմարավետ է: Զինվորն ու ծառան ենք հայրենիքի: Այս պիտի լինի մեր նշանաբանը: Հայրենիքը մենք պիտի սիրենք այն պարզ պատճառով, որ մերն է, մեր հայրերի արյամբ ու քրտինքով նվիրագործված եւ մեզ ավանդված: Հայրենիքով է զորեղ յուրաքանչյուրը՝ իբրեւ ազգի զավակ, իբրեւ կրողն ու շարունակողը հայրենյաց ժառանգութեան, իսկ զորութիւնը հայրենիքի մեր ժողովուրդն է՝ ի հայրենիս եւ ի սփյուռս միասնաբար:

Եկող տարի նշելու ենք Հայաստանի առաջին հանրապետութեան 100-ամյա տարեդարձը, որը կոչ ու խրախուսյս է ազգային համախմբման: Մեկ դար առաջ այդ օրինակը բերեց մեր ժողովուրդը՝ միահամուռ կամքով պաշտպանելով հայրենիքը եւ վերակերտելով պետականութիւնը: Այսօր մեր երկրի պաշտպանունակութեան ամրապնդումը պահանջում է միասնական առավել ջանքեր, ինչպես եւ պատերազմի վտանգի ներքո գտնվող ժողովրդի զգոն ու սթափ գիտակցութիւն եւ առավել պատասխանատվութիւն: Մեր երկիրը հեռու պիտի պահենք ցնցումներից եւ ամեն ջանք պիտի գործադրենք՝ խաղաղութիւնը ամրագրելու եւ հասնելու Արցախի ճանաչման հաղթանակին:

Այս տեսլականով Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Աստված, որ օրհնի մեր այս համաժողովը, արդյունավորի ջանքերը համաժողովի կազմակերպիչների ու մասնակիցների եւ լուսավորի մեր մտքերը՝ գտնելու լավագույն ուղին մեր հայրենիքի ու ժողովրդի զորացման եւ առաջընթացի:

Թող Աստված խաղաղ պահի աշխարհը, մեր երկիրն ու համայն ժողովրդին:

Մեր Տիրոջ շնորհները, սերն ու ողորմութիւնը թող լինեն մեզ հետ եւ բոլորի, այսօր եւ միշտ: Ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿԻՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԱՐԵԳԻՆ Ա ՀՈՎՍԵՓՅԱՆ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ ԵՎ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԱՌԻԹՈՎ

(20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017 Թ., ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ)[1]

Ձե՛րդ Սրբություն, սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս,

Սիրելի՛ հոգեւոր հայրեր եւ ներկաներ:

Հայրապետական սիրով ողջունում ենք ձեզ Գարեգին Ա Հովսեփյան Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի վավերագրերի եւ արխիվային նյութերի ժողովածուների շնորհանդեսի առիթով: Համախմբվել ենք՝ երախտագիտության հոգով սիրո, հարգանքի եւ խոնարհումի վկայություն բերելու երջանկահիշատակ Գարեգին Ա Հովսեփյան կաթողիկոսի պայծառ հիշատակի առջեւ:

Մեր Սուրբ Եկեղեցին, որ դարերի հոլովույթում հաճախ է դիմագրավել նեղություններ, գործել պատմական ու քաղաքական դժվարին պայմաններում, շնորհիվ առաքինազարդ Հայրապետերի՝ փառքով է վերհառնել փորձություններից ու շարունակել տերունապատվեր իր առաքելությունը: Ահա այսպիսի մեծանուն կաթողիկոսներից է Գարեգին Ա Հովսեփյանը, ում անունն արձանագրված է մեր նոր ժամանակների պատմության կարեւոր իրադարձությունների բարձրակետում:

«Այր՝ լի շնորհօք եւ զօրութեամբ» (Գործք Ձ. 8): Նոր Կտակարանի այս խոսքերը ճշմարտապես բնորոշում են Գարեգին Հովսեփյան կաթողիկոսին: Նա Քրիստոսի հավատարիմ ու քաջ զինվոր էր հոգեւոր անդաստանում, միության ջատագովն ու իրագործողն էր ներեկեղեցական ասպարեզում, փայլուն միտք էր գիտական աշխարհում, ոգի ու սիրանք էր մարտի դաշտում, մեծ հայ եւ ականավոր գործիչ՝ ազգա-

[1] «Էջմիածին», 2017, Թ, էջ 16:

յին կյանքում: Նա իր հովվական ու առաջնորդական գործունեության բոլոր տարիներին հայրական խնամքով, սիրով ու հոգատարությամբ հովվեց մեր ժողովրդի զավակներին, պայծառացրեց հավատքը, հավելեց ազգասիրությունն ու հայրենանվիրումը: Տիրոջ անճնվեր սպասավորի առաջնորդության ներքո վերելք ու զարթոնք ապրեց ազգային-եկեղեցական կյանքը Ղրիմի եւ Նոր Նախիջեւանի, Ամերիկայի Միացյալ Նահանգների Հայոց թեմերի:

Մեր ժողովրդի համար օրհասական պահին Քրիստոսի նվիրյալ սպասավորը դարձավ ազգի ու հայրենյաց պաշտպանության զինվոր, «հովիւ քաջ, որ զանձն իւր դնէ ի վերայ ոչխարաց» (Հովհ. Ժ. 11): Սարդարապատում նա հառնեց որպես նոր Ղեւոնդ Երեց եւ մահապարտների գնդի ու հայոց աչխարհազորի հետ իր ավանդը բերեց հայրենիքի պաշտպանության նվիրական գործին եւ հաղթանակի կերտմանը, որը դարձավ հիմքը մեր անկախ պետականության հաստատման:

Երջանկահիշատակ Գարեգին Հովսեփյանը առաքելության ծանրաբեռն վաստակով ընտրվեց Մեծի Տանն Կիլիկո կաթողիկոս, եւ, ինչպես վկայեց Մեր հոգեւոր եղբայր Արամ Ա կաթողիկոսը, առավել շեշնացրեց Տանն Կիլիկո կաթողիկոսությունը, նվիրական տեսլականներ կյանքի կոչեց, եկեղեցանպաստ ու ազգօգուտ ծրագրեր իրագործեց: Նա նորովի ցոլացրեց Լուսավորչի տեսիլքի լույսը Անթիլիասում, միաբանության լույսը՝ տարաձայնությունները հարթելու, երկպառակության տանող ընթացքները կանխելու, մեր Սուրբ Եկեղեցու եւ ազգի միասնությունը հաստատուն պահելու: Եվ խորհրդանշական է, որ այսօր Գարեգին Ա Հովսեփյանի վավերագրերի ու արխիվային նյութերի ժողովածուների շնորհանդեսին մասնակցում ենք Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի հետ միասնաբար՝ ի նշան հոգեւոր-եկեղեցական մեր անդաստանում Քրիստոսապատվեր սիրո եւ միաբանության, որի ավանդույթների ջատագովն ու պաշտպանն է եղել մեծանուն հայորդին:

Երջանկահիշատակ Գարեգին Ա Հովսեփյան կաթողիկոսը, եկեղեցական անդաստանում բեղուն ծառայություններից զատ, մեր ժողովրդին պարգեւեց նաեւ իր գիտական ու գրական գործունեության արդյունքները: Նրա աշխատություններն ընդգրկեցին հայագիտության գրեթե բոլոր բնագավառները՝ պատմություն, բանասիրություն, բանահյուսություն, գրչություն ու մանրանկարչություն, արվեստ, եկեղեցագիտություն, հնագիտություն, ձեռագրագիտություն: Ահա այսպես է այսօր մեր առջեւ պատկերվում պայծառ կերպարը Գարե-

գին Ա Հովսեփյան կաթողիկոսի՝ մեծ մարդ, ազգի արժանավոր զավակ, Քրիստոսի հավատարիմ ծառա:

Մենք Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ենք հայտնում մեծանուն կաթողիկոսի վավերագրերի եւ արխիվային նյութերի ժողովածուների հրատարակության գործում իրենց աղնիվ ջանքերը ներդրած բոլոր անձանց՝ ի մասնավորի Հայաստանի ազգային արխիվի աշխատակից Գոհար Ավագյանին եւ տնօրեն Ամատունի Վիրաբյանին: Վստահ ենք, որ այս հրատարակությունները, որ արժանի տուրք են Գարեգին Ա Հովսեփյան կաթողիկոսի ծննդյան 150-ամյակի եւ վախճանման 65-րդ տարելիցի ոգեկոչման առիթով, մեծապես նպաստելու են ազգային-եկեղեցական մեծ գործչի առաքելության վերարժեւորմանը՝ դառնալով նոր ոգեշնչման աղբյուր:

Մեր գնահատանքն ենք բերում նաեւ հատորների հրատարակության եւ չնորհանդեսի կազմակերպման գործում իրենց ջանքերը ներդրած բոլոր անձանց:

«Մշակն արժանի է իր վարձին» (Ղուկ. Ժ. 7): Ավետարանական այս պատգամի համաձայն՝ մեր սրտերում պայծառ պահենք մշտավառ հիշատակը Գարեգին Ա Հովսեփյան կաթողիկոսի: Աղոթք եւ օրհնություն մեծանուն կաթողիկոսի լույս հոգուն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ԵԿՄԱԼՅԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԵՎ ԺԱՄԱԳՐՔԻ ՎԵՐԱՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍԻ ԱՌԻԹՈՎ

(26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017 Թ., ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Սիրելի՛ հոգեւոր հայրեր եւ ներկաներ:

Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում այս հանդիսության բոլոր մասնակիցներիդ: Ուրախ ենք այս շնորհանդեսին Հայաստանի Հանրապետության նախագահի մասնակցության համար, որը մեծ քաջալերություն է նման նախաձեռնություններ իրագործելու՝ ի նպաստ մեր մշակույթի պահպանման եւ զարգացման:

Այսօր՝ հաղորդակցության մեծ հնարավորությունների մեր օրերում, հիրավի, անհրաժեշտություն կա մեր ազգային մշակույթի դարավոր ձեռքբերումները վերարժեւորելու, ճաշակով ու բարձր մակարդակով ներկայացնելու եւ դրանցով կրթելու մեր ժողովրդին՝ մեր արժեքները դարձնելով կյանքի, առօրյայի մաս: Ուրախությամբ ենք արձանագրում, որ «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի կողմից այս ուղղությամբ նվիրյալ ջանքեր են ներդրվում՝ ժողովրդական ու հոգեւոր երաժշտության բացառիկ նմուշները ուսումնասիրելու, նոտագրելու, թվայնացնելու, համապատասխան նոր հրատարակություններ պատրաստելու համար: Հիմնադրամի հովանավորությամբ կյանքի կոչվող ծրագրերը նպաստում են մեր ժողովրդական ու հոգեւոր երաժշտական ժառանգության պահպանմանը, խրախուսում հավատարմությունն ու նախանձախնդրությունը մեր մշակույթի, ի մասնավորի երաժշտարվեստի դարավոր ավանդների հանդեպ՝ պատշաճո-

[1] «Էջմիածին», 2017, Թ, էջ 22:

րեն դրանք մատուցելով մեր ժողովրդին, ինչպես նաեւ միջազգային հանրությանը: Այս իմաստով ուշագրավ է եւ գնահատանքի արժանի նաեւ Նոյյան տապանի տեսքով պատրաստված երաժշտական գանձատուփը, որի մեջ զետեղված են «Հայկական ազգային երաժշտական գանձարան» ծրագրի շրջանակներում ձայնագրված նմուշները: Հիշյալ ձեռնարկումները կարեւոր ազդակ են նաեւ նոր սերնդին մեր մշակութային հարուստ ժառանգությանը հաղորդակից դարձնելու գործում:

Այս նախաձեռնությունների շրջանակներում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությամբ, «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի ջանքերով հրատարակվել են Մակար Եկմալյանի հեղինակած Պատարագի՝ երգչախմբի համար նախատեսված բաժինը, ինչպես եւ երաժշտագիտական վերլուծություններով ու ժամանակակից նոտագրության չափանիշներով՝ երաժշտագետ Նիկողայոս Թաշչյանի կողմից գրի առնված ժամագիրքը:

Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի հիմնադիր Արթուր Ջանիբեկյանին, հիմնադրամի տնօրինությանն ու աշխատակիցներին մեր մշակութային արժեքների պահպանության գործում ստանձնած հանձնառությունների համար: Մեր գնահատանքն ենք բերում Կոմիտասի անվան պետական կոնսերվատորիայի ժողովրդական երաժշտության ամբիոնի վարչությանը, ինչպես եւ տարբեր տարիներին կոնսերվատորիայում սովորող ուսանողներին, ովքեր իրագործել են նշյալ ժամագրքի վերծանման աշխատանքները:

Մշտանորոգ հաջողություններ ու արդյունավորում «Մշակութային վերածնունդ» հիմնադրամի ազգանվեր ու մշակութասեր բարի գործերին:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը եւ օրհնությունը միշտ հովանի լինեն մեր հայրենիքին ու ժողովրդին այսօր եւ հավիտյանս. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ ՍՈՒՐԲ ԽԱՉԻ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՌՈՒՍԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(7 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 Թ.)[1]

Գերաշնորհ՛ Լեոնիդ եպիսկոպոս,

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Փառք եւ գոհություն ենք բարձրացնում առ Աստված Երեւանում Ս. Խաչի բարձրացման ռուսական եկեղեցու օծման այս գեղեցիկ առիթով: Դեռեւս վառ է մեր հիշողության մեջ 2010 թվականի մարտի 18-ը, երբ այս վայրում մեր հոգեւոր եղբայր ի Քրիստոս Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ պատրիարքի հետ միասնական աղոթքով կատարեցինք այս գողտրիկ եկեղեցու հիմնարկեքի արարողությունը:

Այսօր, ահավասիկ, հայոց հողի վրա վեր խոյացած այս ռուսական եկեղեցին իր առաջին ղողանջն է հնչեցնում՝ Աստծո դուռը հրավիրելով իր զավակներին՝ նրանց կյանքի ընթացքին չարունակ բաշխելու Աստծո սերն ու օրհնությունը:

Գոհունակության զգացումով է լցվում Հայրապետիս հոգին՝ տեսնելով այս բերկրալի առիթով հայաստանաբնակ մեր ռուս հավատավոր զավակների հուզմունքը եւ ցնծությունը: Դեպի երկինք իր գմբեթները պարզած այս տաճարը արտահայտությունն է Հայաստան աշխարհում հոգեւոր կյանքի վերազարթոնքի, դրսեւորումը հոգեւոր-բարոյական արժեքների հանդեպ հավատարմության եւ վկան հոգեւոր կարիքների նկատմամբ հայրենի իշխանությունների ուշադրության:

Յուրաքանչյուր նորակառույց սրբազան տաճար իբրեւ տուն աղոթքի, իր շուրջը համախմբելով հավատացելոց եւ կազմակերպելով նրանց ծխական կյանքը, դառնում է նախ եւ առաջ ջինջ ակունք աստվածային շնորհի եւ ողորմության, դեպի հավիտենական կյանք եւ Աստծո արքայություն առաջնորդող մի տերունապարգեւ ճանապարհ:

---

[1] «Էջմիածին», 2017, Ժ, էջ 4:

Եվ որքան առատանում են սրբազան տաճարները մեր կյանքում, այնքան բազմանում է Աստծո ներկայությունը մեզանում՝ երկնառաք օրհնությամբ, հավատի բարի գործերով եւ սիրո, համերաշխության ու հանդուրժողականության մշտահունչ պատգամով:

Սիրելինե՛ր, այս եկեղեցին վկայությունն է հայ եւ ռուս ժողովուրդների բազմադարյա եղբայրության, դավանած ընդհանրական արժեքների, պատմության մեջ համատեղ արձանագրած փառավոր ու դժվարին էջերի եւ այսօրվա գործակցության: Այն քարակերտ արտահայտությունն է Հայաստանյայց Առաքելական եւ Ռուս Ուղղափառ քույր եկեղեցիների սերտ բարեկամության, որի պտուղն են նաեւ խաղաղության պայմաններում հայոց հողում եւ Ռուսաստանի տարբեր քաղաքներում բարձրացած այլ եկեղեցիներ եւ մատուռներ:

Այս պահին մեր չնորհավորանքներն ենք հղում մեր հոգեւոր եղբորը՝ Նորին Սրբություն Կիրիլ պատրիարքին՝ մեր եկեղեցիների բարեկամության տարեգրքում արժանի տեղ գրաված այս օգտաշատ իրագործման առիթով: Մեր չնորհավորանքն ենք բերում նաեւ Հայաստանում Ռուս Ուղղափառ Եկեղեցու համայնքների կառավարիչ, Վլադիկովկասի եւ Ալանիայի գերաշնորհ Լեոնիդ եպիսկոպոսին, ում առիթ ունեցանք ճանաչելու անցնող ամիսներին իբրեւ Քրիստոսի Եկեղեցու ազնիվ ու նվիրյալ սպասավորի:

Սիրելի՛ Սրբազան, մեծապես գնահատում ենք Հայ եւ Ռուս Եկեղեցիների հարաբերությունների առավել սերտացմանը եւ ամրապնդմանն ուղղված Ձեր ջանքերն ու ծրագրերը եւ մաղթում բեղուն ծառայություն Հայաստանում:


Հայրապետական Մեր օրհնությունն ենք փոխանցում Հայաստանի Հանրապետությունում Ռուսաստանի Դաշնության արտակարգ եւ լիազոր դեսպան Իվան Վոլինկինին՝ մեր երկրների եւ Եկեղեցիների մերձեցման եւ հարաբերությունների սերտացման, ինչպես նաեւ այս եկեղեցու կառուցման գործում իր ներդրումի համար:

Արեւշատ կյանքի մաղթանքով Մեր հայրական օրհնությունն ու գնահատանքն ենք բերում նաեւ եկեղեցու բարերար, ռուսաստանաբնակ հավատավոր հայորդի տիար Արա Աբրահամյանին:

Քույր Եկեղեցու սիրելի՛ բարեպաշտ զավակներ, վերստին չնորհավորելով ամենքիդ եկեղեցու բացման առիթով, մաղթում ենք չեն ու պայծառ պահել ձեր Ս. Եկեղեցին եւ ձեր ընթացքը՝ հաստատուն առ Տեր մեր Հիսուս Քրիստոս առաջնորդող օրհնյալ ճանապարհների վրա:

Մեր աղոթքն ենք բարձացնում առ Աստված՝ հայցելով Ամենողորմ Աստծո հովանին հավատակից մեր երկու բարեկամ ժողովուրդներին, Հայաստանի Հանրապետությանը եւ Ռուսաստանի Դաշնությանը: Թող մեր Տիրոջ առատ չնորհներով ու օրհնությամբ միշտ պտղաբերի Ռուս Ուղղափառ եւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցիների գործակցությունը՝ ի փառս Աստծո եւ ի մխիթարություն մեր բարեպաշտ հավատացելոց:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեսեանդ. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ԶՈՐԱՏԵՍԱԿՆԵՐԻՆ ԸՆԾԱՅՎՈՂ ԽԱՉՎԱՌՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ՈՒ ԲԱՇԽՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 Թ.)[1]

Մեծարգո՛ Պաշտպանության նախարար Հայաստանի Հանրապետության,

Պատվարժա՛ն զինվորներ ու զորավարներ Հայոց բանակի եւ հյուր զինվորականներ,

Սիրելի՛ ներկաներ:

Հայրապետական Մեր ողջույնն ու օրհնությունն ենք բերում ձեզ, որ նվիրական զգացումներով այս պահին հավաքված եք Հայոց բանակի զորատեսակներին ընծայվող խաչվառների օրհնության ու բաշխման նշանակալի արարողությանը: Հայրենիքի անվտանգության, խաղաղության եւ մեր ժողովրդի արդար իրավունքների պաշտպանության համար ձեր ծառայությունը համահունչ է քրիստոնեական մեր հավատքի կոչին ու հրավերին՝ պայքարելու Աստծո կամքին հակառակ կործանարար ընթացքների, բռնության, մարդու եւ ժողովուրդների իրավունքների ոտնահարման դեմ: Քրիստոնեությունը հաղթության ու զորության կրոն է, որը բացահայտում է առ Աստված հավատքի մեծագույն ուժը՝ առ Բարձրյալն ապավինությամբ ու Բարձրյալի զորակցությամբ աննկուն մաքառելու բարու հաստատման համար: Այդ հիանալի իրողությունը մենք տեսնում ենք մեր Փրկչի երկրային կյանքում: Տերը պայքար մղեց մեղքի ու չարի դեմ, հաղթանակ տարավ ու հաղթության հավատը չնորհեց Իր հետեւորդներին, ասելով. «Քաջալերվեցե՛ք, որովհետեւ Ես հաղթեցի աշխարհին» (Հովհ. ԺԶ 33): Դարերի ընթացքում մեր ժողովուրդը հաճախ ստիպված է եղել ելնել իր ինքնության ու անկախության պաշտպանության եւ իր գոյապայ-

[1] «Էջմիածին», 2017, Ժ, էջ 7:

քարը վերածել է ազատամարտերի ու հերոսամարտերի, իր հավատքով զորացել ու անպարտելի դարձել՝ ընդդեմ կործանման ու ավերի: Հավատքով հզորացած մեր ժողովուրդը հայության բնաջնջման փորձերը պատմության հոլովույթներում վերածել է վերհառնումի, հարության ու հարատեւության: Աստծո զորակցությունը մենք զգացել ենք Ավարայրից մինչեւ Սարդարապատ ու Արցախ՝ գիտակցելով, որ զինվորն ենք Քրիստոսի, զինվորը արդարության, խաղաղության ու ամեն բարի գործի:

Քրիստոսի Եկեղեցին այս աշխարհի վրա կոչվում է զինվորյալ Եկեղեցի, որի հաղթության նշանն է խաչվառը: Խաչվառը դրոշ է, որով, որպես տեսանելի նշան, բարձր ենք պահում մեր հավատքը՝ մեզ առաջնորդող ու զորագլուխ ճանաչելով մեր Փրկչին ու Տիրոջը ու նրա փրկարար խաչը: Խաչվառի հայտնությունը մեր Տերն Ինքը տվեց, երբ 4-րդ դարում Հռոմեական արդարամիտ կայսր Կոստանդիանոսին վճռական ճակատամարտից առաջ օրը ցերեկով երկնքում ցույց տվեց փայլատակող աստղազարդ խաչ եւ գրություն՝ «սրանով կհաղթես»: Խաչն իրենց դրոշներին պատկերած Կոստանդիանոսի զորքը հաղթանակ տարավ եւ կայսրը հռչակեց քրիստոնեական հավատքի ազատ դավանությունը: Մարտերից առաջ մեր բանակը նույնպես օրհնել են հայոց հայրապետերը եւ ուղեկցել բանակին խաչով ու խաչվառով: Խաչվառ դրոշը, որը տերունի եւ սրբերի պատկերներն է կրում, հիշեցնում է Աստծո ներկայության ու մշտական զորակցության մասին՝ փորձությունների ու հարվածների առջեւ անպարտելի մնացած քրիստոնյա զորավարների օրինակներով, սրբերի բարեխոսություններով: Խաչվառները, որոնք զետեղվելու են մարտական դրոշի մոտ, մեր զինվորների համար լինելու են քաջալերություն՝ առ Աստված հավատքով, սրբոց բարեխոսությամբ ամուր եւ ուժեղ լինելու ծառայության մեջ: Հավատքով զորեղ զինվորը ուժեղ է կյանքում ու մարտում, սրբությունների պաշտպանության իր բարձրագույն առաքելության մեջ: Հոգու զորություն է, որ ուժ է տալիս, պարգեւում արի սիրտ ու խիզախ ոգի, առաջնորդում սխրանքների, անօրինակ հերոսությունների: Առաքյալը, Աստծո հաղթանակաբեր աջակցության մասին հայտարարելով, բացականչում է. «Եթե Աստված մեր կողմն է, ո՞վ կլինի մեզ հակառակ» (Հռոմ. Ը 31): Գիտե՛ք, սիրելի՛ զորականներ, Աստված ձեզ հետ է օրհնված խաչվառների նշանով, մեր Սուրբ Եկեղեցու հայցով, մեր եկեղեցական սպասավորների աղոթքներով, ձեր հավատքով ու սրբերի բարեխոսության խնդրանքով: Տիրոջով հաղթական պիտի

լինեք, եւ ձեր սրբազան գործը փառքով ու պատվով իրագործեք, ձեր սրբազան ծառայութիւնը ձեռքբերումներով զարդարեք, հայրենիքի սահմանները աննահանջ պաշտպանեք՝ վաստակելով նաեւ Աստծո օրհնութիւնը ձեր կեանքին՝ ձեր ազգասիրութեան ու հայրենասիրութեան համար:

Մեր աղոթքն է առ Ամենազոր Տերը, որ Իր Սուրբ Աջով մշտապես օգնական ու զորակից լինի ձեզ, պահի ու պահպանի ամենքիդ երեւելի ու աներեեւութիթ թշնամիներից: Աղոթում ենք, որ Աստված հզոր ու հաղթական պահի Հայոց բանակը եւ պարգեւի աննվազ կորով, անպարտելի ոգի եւ ամուր բազուկ քաջարի ծառայութեան ճանապարհին: Այլեւ հայց ենք բարձրացնում աշխարհի խաղաղութեան, ժողովուրդների բարօր ու ապահով կեանքի համար: Թող մեր երկիրը մեր խիզախ զորաց պաշտպանութեամբ ապահով ընթանա դեպի նոր առաջընթաց եւ լուսավոր ապագա:

Փառք արդարութեան ու խաղաղութեան պաշտպան ու պահապան զորականներին, փառք հայոց պանծալի բանակին:

Մեր Տեր Հիսուս Քրիստոս ձեզ զորակից ու պահապան այսօր եւ միշտ. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ԵՎ ԱՍՏՎԱԾՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 6 ՀՈՒՆՎԱՐԻ 2018 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Զեզ եւ մեզ մեծ աւետիս»:

Սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ,

Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի հրաշազարդ այս օրը մեր հոգու հայեացքները բեթղեհեմեան աստղալոյսով ուղղւում են դէպի մսուրը, որտեղ Աստուծոյ Միածին Որդին ծնուեց եւ աշխարհ եկաւ մեր փրկութեան համար: Այսօր, համախմբուած եկեղեցիներում, օրհնաբանում ենք նորածին Փրկչին, փառաւորում երկնաւոր Արքային, ասելով. «Փառք հրաշափառ Ծննդեան Քո, Տէր»:

Ի լրումն ժամանակի Քրիստոս մուտք գործեց աշխարհ: Փրկչի Սուրբ Ծնունդով մենք մեր հանդէպ աստուածային մեծագոյն սիրոյ եւ խնամքի խորհուրդն ենք տեսնում: Փրկչի Ծննդեամբ Աստուած մարմին զգեցաւ, լինելով անսահման՝ կամաւորապէս յանձն առաւ սահմանաւորութիւնը, անչարչարելին խոնարհութեամբ ստանձնեց չարչարանքներն ու խաչելութիւնը, որպէսզի մարդիկ արժանանան փրկութեան չնորհին, դառնան Աստուծոյ որդեգիր զաւակները եւ ժառանգեն երկնքի արքայութիւնը: Աստուածորդին մարդացաւ, ապրեց ու գործեց մարդկանց մէջ՝ վկայելով, որ Աստուած իրենց երկնաւոր Հայրն է, Ով մարդկութեան հանդէպ Իր սերը, խնամքն ու հոգատարութիւնը արտայայտում է աներեւակայելի զոհողութեամբ, ինչպէս հաւաստում է Յիսուսի սիրելի աշակերտ Յովհաննէսը. «Աստուած

[1] «Էջմիածին», 2018, Ա, էջ 7:

այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր Միածին Որդուն տուեց, որպէսզի ով Նրան հաւատում է, չկորչի, այլ ընդունի յաւիտենական կեանքը» (Յով. Գ 16):

Սիրելինե՛ր, Աստծուն հակառակ ընթացքները, սակայն, չարունակում են ալեկոծել մարդկութեան կեանքը, ծանրաբեռնել հոգսերով ու մտահոգութիւններով: Գիտական ու տեխնոլոգիական հսկայական առաջընթացով հանդերձ՝ մարդկութիւնը երերում է բարու եւ չարի, կեանքի եւ մահուան ընտրութեան առջեւ: Տնտեսական աննախընթաց զարգացումների մեր դարում միլիոնաւոր մարդիկ տակաւին գտնւում են սովի ու աղքատութեանմէջ: Մարդու իրաւունքների պաշտպանութեան այս ժամանակաշրջանում խախտւում են ժողովուրդների եւ մարդկանց իրաւունքները: Երկխօսութիւնների մեր օրերում բազում մարդիկ զառնում են զոհ անհանդուրժողականութեան, կրօնական ատելութեան, ահաբեկչութեան, ենթարկւում տարատեսակ բռնութիւնների: Յանուն խաղաղութեան պայքարի այս ժամանակներում բիւրաւոր մարդիկ կեանքի գին են վճարում զէնքի գործադրմանը եւ սպառազինութեան մրցավազքին: Հասարակութիւնների եւ ընտանիքների համար չարիք են զառնում թմրադեղերի տարածումը, ալկոհոլի չարաշահումը եւ այլ մոլուցքներ, որոնց տրուելով մարդիկ անկարող են զառնում սեփական կեանքը կազմակերպելու, իսկ ոմանք ծայրայեղ յուսահատութեան մէջ դիմում ինքնասպանութեան:

Աշխարհի խաղաղ ընթացքը խաթարող փորձութիւնները յուզում են նաեւ մեր երկրի ու աշխարհասփիւռ ժողովրդի կեանքը: Հայրենիքում մեր ժողովուրդը չրջափակման մէջ եւ անկայուն խաղաղութեան պայմաններում մաքառում է բարօրութիւն կերտելու եւ իր իրաւունքները պաշտպանելու համար՝ իր զաւակների կեանքի թանկ գնով ապահովելով մեր երկրի անվտանգութիւնը: Մեր ժողովրդի աննկուն կամքով ու նուիրումով արձանագրուած ձեռքբերումներով հանդերձ՝ մեր երկրի առջեւ տակաւին ծառացած են գործազրկութեան, աղքատութեան խնդիրները, չարունակական ջանքեր են պահանջւում ամրապնդելու վստահութիւնը վաղուայ օրուայ հանդէպ, հաւատը՝ արդարութեան նկատմամբ, յաղթահարելու սոցիալական, տնտեսական եւ հայրենական ու ազգային կեանքում առկայ այլ մարտահրաւէրները:

Սիրելինե՛ր, աղքատիկ մսուրում, նեղութիւնների մէջ ծնուեց մեր Տէրը, որպէսզի մենք Նրան ապաւինութեամբ նեղութիւններն ու դժուարութիւնները յաղթահարենք: Մեծահարուստ մոգերից պատուեց, որպէսզի ունեւորներն իրենց ունեցուածքը բարի ու աստուածահա-

ճոյ գործերի ծառայեցնեն: Հովիւներից երկրպագուեց, որպէսզի բոլոր մարդիկ պարզասրտութեամբ Տիրոջ առաջ խոնարհուեն եւ Նրա բերած չնորհներին արժանի դառնան: Քրիստոսի մարդեղութեամբ վկայուած Աստուծոյ մշտական հոգատարութիւնը մեր հանդէպ վայելում ենք, երբ մեր հաւատքը կեանք է ու գործ, երբ Փրկչի Սուրբ Ծնունդը չի դառնում միայն պատմութիւն ու յիշատակութիւն, միայն տօնախմբութիւն կամ խրախճանք, այլ՝ ապրում, ներշնչանք, մեծագոյն խորհուրդ: Այս ընկալումով Սուրբ Ծնունդի տօնակատարումը, մեր աղօթքներն ու հայցը չնորհների անսպառ աղբիւր են բացում մեր առջեւ, բերում բերկրանքը երկնաւորների հետ առ Աստուած փառաբանութեան, կեանքը լցնում աստուածային ներկայութեամբ, ընտանիքները՝ երկնային սիրով ու չնորհներով, աշխարհն ու մարդկութիւնը՝ հրեշտակների աւետած խաղաղութեամբ ու հաճութեամբ:

Սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ, Աստուծոյ երկնառաք պարգեւներով լեցուն այս օրը Հայրապետիս մաղթանքն ու պատգամն է, որ Քրիստոսի Ծննդեամբ սկսուած նոր արարչութեան մէջ լինենք մեզքերից թօթափուած նոր արարածներ: Մանուկ Յիսուսին ընդունելով մեր սրտերում՝ամուր պահենք մեր հաւատքը, բարեպաշտ ընթացքը, որպէսզի միշտ կարողանանք վայելել Աստուծոյ հոգածութիւնն ու անսահման սէրը: Քրիստոսի պատուիրանների իմացութիւնն ու կատարումը, սրտի մաքրութիւնը, հոգու խոնարհութիւնը, եղբայրսիրութիւնն ու ողորմութիւնը այն կարեւոր ընծաներն են, որոնք այսօր Աստուած ուրախութեամբ պիտի ընդունի մոգերի բերած ոսկու, կնդրուկի եւ զմուռսի փոխարէն՝որպէս հաճելի նուէրներ մանուկ Յիսուսին: Այս ոգով ու հաւատով է նաեւ, որ իրապէս օգտակարութիւն կբերենք հայրենի մեր երկրին, կարիքի մէջ գտնուող մեր եղբայրներին ու քոյրերին, կկարողանանք անվեհեր պաշտպանել հայրենիքի սահմանները, զօրացնել Քրիստոսապաշտ մեր ժողովրդի միասնականութիւնը ու նպաստել ազգային մեր իղձերի իրականացմանը, մեր ժողովրդի արդար իրաւունքների յաղթանակին:

Այս մաղթանքով Մեր ողջոյնն ենք յղում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու նուիրապետական աթոռների գահակալներին՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքական տեղապահ գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեկչեանին, մեր Սուրբ Եկեղեցու հոգեւոր դասին: Սուրբ Ծննդեան բերկրալի աւետիսով Մեր ողջոյնն

ենք բերում քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին: Հայրապետական օրհնութեամբ ողջունում եւ Մեր բարեմաղթանքներն ենք բերում Սրբազան Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին՝առաջին տիկնոջ հետ, ողջոյն ենք յղում Արցախի Հանրապետութեան նախագահ տիար Բակօ Սահակեանին, հայոց պետական աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներին: Հայրապետական Մեր սէրը, օրհնութիւնն ու բարեմաղթանքները՝ համայն հաւատաւոր Մեր ժողովրդին:

Աղօթում ենք առ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, որ Իր հրաշափառ Ծննդեան չնորհները սփռուեն ողջ աշխարհում, ժողովուրդներն ընթանան խաղաղութեան ու համերաշխութեան Սուրբ Ծննդեան հրեշտակաճայն պատգամի համաճայն, եւ անվրդով խաղաղութիւն տիրի մեր հայրենիքում, չինութիւն, բարօրութիւն՝ աշխարհասփիւռ ազգիս կեանքում: Թող մեր հայրենանուէր ու ազգանուէր գործերի բարի արդիւնքներով հզօրանայ մեր հայրենիքը, պայծառ մնայ մեր Սուրբ Եկեղեցին, եւ մենք արժանի լինենք Տիրոջ կողմից մեզ տրուած փրկութեան ու յաւիտենական կեանքի պարգեւին՝ այսօր եւ միշտ եւ յաւիտեանս. ամէն:

Քրիստոս ծնաւ եւ յայտնեցաւ,
Զեզ եւ մեզ մեծ աւետիս:

ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕՇՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՄԵՐ ՏԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ՍՈՒՐԲ ՀԱՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 1 ԱՊՐԻԼԻ 2018 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Ես եմ յարութիւն եւ կեանք. որ հաւատայ ինձ, թէպէտ եւ մեռանի՝ կեց ցէ» (Յովհ.11. 25-26):

Սիրելի՛ բարեպաշտ հաւատացեալներ, Քրիստոսի Սուրբ Յարութեան հրաշազարդ տօնին ուրախութիւնն ու խնդութիւնը մեր հոգիներում՝ ձայնակից ենք հրեշտակներին՝ փոխանցելով միմեանց «Քրիստոս յարեաւ» կենարար աւետիսը: Թափուր է Տիրոջ գերեզմանը, յայտնուած է Նրա աստուածային զօրութիւնը, եւ իրական է մահուան պարտութիւնն ու կեանքի յաղթանակը: Այսօր յարութիւն առած Քրիստոս Իր բոլոր հետեւորդներին բերում է յաւիտենական կեանքի բերկրալի խոստումը. «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. ով հաւատում է Ինձ, թէպէտ եւ մեռնի, կապրի»:

Քրիստոսի Յարութեան ողջոյնը փոխանցելով, մենք, սիրելինե՛ր, հաստատում ենք մեր հաւատքը, որը հիմնուած է Յարութեան տիեզերանորոգ հրաշքի վրայ: Հաւատում ենք, որ Քրիստոսի Յարութեամբ անմահութեան ու յաւիտենական կեանքի արշալոյսը ցրել է կորստաբեր մեղքի խաւարը: Հաւատում ենք, որ մահուան առաջ անզօր մարդկային կեանքը վերափոխուում է երկնային զօրութեամբ, ժամանակաւորը վերածուում է յաւիտենական գոյութեան: Հաւատում ենք, որ Փրկչին ու Նրա անմահութեան չնորհին հաղորդակցումը նորոգում է կեանքը, խաչերը դարձնում ծաղկեալ, գողգոթաները՝ յաղթութեան բարձունքներ: Հաւատում ենք, այո՛, որ մարդկային մեր տկար ուժերին ընդառաջ եկող Աստուծոյ Սուրբ Հոգին լուսաւորում է մեր հոգե-

[1] «Էջմիածին», 2018, Դ, էջ 5:

ւոր տեսողութիւնը եւ զօրացնում մեզ՝ ընթանալու մեղքից դէպի առաքինութիւն, ընթանալու դէպի մեր Տէրը, որպէսզի Նրա հետ կեանք ունենանք եւ ժառանգակից լինենք երկնային արքայութեանը:

Հաւատալ Քրիստոսի Յարութեանը նշանակում է Սիմոն Կիւրենացու պէս անտրտունջ Քրիստոսի խաչը կրել կեանքի յաղթանակի աներկբայ վստահութեամբ, Յովսէփ Արիմաթացու նման բարեգործութիւններ կատարել, իւղաբեր կանանց նման հաւատքն ու հաւատարմութիւնը պահպանել եւ Քրիստոսի Յարութեան ուրախութիւնը սփռել, առաքեալների պէս աշխարհը Քրիստոսի Յարութեան լոյսով լուսաւորել: Այսպէս միայն կարելի է արժանանալ Փրկչի խոստմանը՝ հաւատքի զօրութեամբ մահուան իշխանութիւնը թօթափելու եւ յաւիտեան ապրելու:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, Քրիստոսի Յարութեան հրաշագարդ իրողութիւնը մարդու եւ աշխարհի փրկութեան միջոցն է, աստուածային անսահման սիրոյ ու հոգածութեան վկայութիւնը, նեղութիւնների ու դժուարութիւնների յաղթահարման զօրութիւնը: Թովմասի նման երկմտող աշխարհին յարուցեալ Քրիստոս ցոյց է տալիս իր վէրքերը, որպէսզի բուժուեն պատերազմների ու աղէտների պատճառած վէրքերն աշխարհի: Ցոյց է տալիս իր չարչարանքների հետքերը, որպէսզի դադարեն մարդկային հոգու տառապանքները, լռեն ատելութեան ձայները, մերժուեն կործանարար ուղիները, որպէսզի գալիքի հանդէպ վստահութիւն փնտրող մարդկութիւնը ընդունի Փրկչի Յարութեան զօրութիւնը՝ առաքեալի պէս բացականչելով՝ «Տէ՛ր իմ եւ Աստուա՛ծ իմ» (Յովհ. Ի 28):

Աստուածատուր այդ զօրութեամբ ու չնորհով է յարատեւել մեր ժողովուրդը՝ պատմութեան մէջ դիմակայելով դառը հարուածների ու կերտելով իր ձեռքբերումները: Քրիստոսով, յարութեան ու փրկութեան հաւատքով մենք վեր յառնեցինք մեր խաչելութիւններից, վերահաստատեցինք մեր պետականութիւնը, ձեռնամուխ եղանք նեղութիւնները թօթափելուն, մեր իրաւունքների պաշտպանութեանը եւ առաւել բարօր գալիքի կերտմանը: Մեր ժողովրդի առաջընթացը, մեր պետութեան հզօրացումը եւ ի սփիւռս աշխարհի մեր կեանքի պայծառութիւնը պայմանաւորուած են իւրաքանչիւրիս մէջ Քրիստոսի ներկայութեամբ, Նրա Յարութեան զօրութեան ներգործութեամբ եւ մեր արժանաւորութեամբ Փրկչի խոստմանը. «Ես իսկ եմ յարութիւն եւ կեանք. ով հաւատում է Ինձ, թէպէտ եւ մեռնի, կապրի»:

Սիրելի՛ հաւատաւոր զաւակներ Մեր, չարունակենք ապրել ու գործել Քրիստոսի հետ: Մեր ընտանիքներում խնամենք ու վառ պահենք

հաւատքի լոյսը, հասարակական ու ազգային մեր կեանքում հաստատուն պահենք միմեանց հանդէպ հոգածութիւնն ու զօրակցութիւնը, սէրն ու միասնութիւնը: Շարունակենք ապրել հաւատքով, որպէսզի այսօր հնչող «Քրիստոս յարեաւ» աւետիսը զօրացնի մեզ ապագայի հանդէպ լաւատեսութեամբ ու վստահութեամբ, կամքով ու կորովով՝ հակառակ ամեն արգելքի ու նեղութեան, ջանք թափելու, ստեղծելու, հոգալու, որ իրագործենք առաջընթացի մեր նպատակները, հայրենաչէն մեր ծրագրերն ու ազգային իղձերը: Թող մեր սրտերը քաջալերուեն այսօր մեզ յայտնուող յարուցեալ Տիրոջով՝ սիրով եւ միասնութեամբ ընթանալու ազատ նոր կեանքի մեր ուղին՝ միշտ հաւատարիմ մնալով մեր Տիրոջ պատուիրաններին եւ հաստատուն պահելով մեր ընթացքը դէպի յաւիտենութիւն:

Մեր Տէր Յիսուս Քրիստոսի Յարութեան բերկրալի աւետիսով ողջոյն ենք բերում Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսին, Երուսաղէմի Հայոց պատրիարք ամենապատիւ Տ. Նուրհան արքեպիսկոպոս Մանուկեանին: Աղօթում ենք հիւանդութեան մահճում գտնուող ամենապատիւ Տ. Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրթաֆեան պատրիարքի համար: Ի Քրիստոս սիրով ողջունում ենք քոյր Եկեղեցիների հոգեւոր պետերին եւ նրանց հաւատաւոր հօտին:

Հայրապետական օրհնութեամբ ողջունում ենք Սրբազան Պատարագի արարողութեանը ներկայ Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին՝առաջին տիկնոջ հետ, ընտրեալ նախագահ տիար Արմէն Սարգսեանին, ողջոյն ենք յղում Արցախի Հանրապետութեան նախագահ տիար Բակո Սահակեանին, հայոց պետական աւագանուն, Հայաստանում հաւատարմագրուած դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչներին: Հայրապետական Մեր սէրն ու օրհնութիւնն ենք բերում մեր Սուրբ Եկեղեցու ողջ հոգեւոր դասին եւ հաւատաւոր մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփիւռս:

Աղօթում ենք առ մեր Տէրը Յիսուս Քրիստոս, որ մեր հայրենիքում ու ողջ աշխարհում մշտապէս սփռուած մնան Իր Յարութեան կենարար պարգեւները, խաղաղութիւնը հաստատուի աշխարհում, մարդկանց սրտերում, մեր երկրի սահմաններում: Հայցում ենք, որ Փրկչի Յարութեան չնորհներով զօրացած՝ Մեր զաւակների ամեն գործ զարթօնք ու լուսաւորութիւն բերի ազգային մեր կեանքին, եւ աստուածաչնորհ պարգեւները հովանի լինեն մեր ժողովրդին՝ այսօր եւ միշտ ցնծութեամբ աւետելու.

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,

Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի:

Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՐԱՄ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ ԱՐՁԱՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(ԵՐԵՎԱՆ, 17 ՀՈՒԼԻՍԻ, 2018 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,
Մեծարգո՛ վարչապետ Հայաստանի Հանրապետության,
Սիրելի՛ ներկաներ:

Հայրապետական օրհնությամբ ողջունում ենք ձեզ Արամ Մանուկյանի արձանի բացման այս հիշարժան առիթով:

Այս հանդիսավոր արարողությամբ ոգեկոչվում է հիշատակը մեր ժողովրդի նվիրյալ ու վաստակյալ զավակի, պետական-հասարակական մեծ գործչի, որ մեր պատմության դժվարին ժամանակներում հերոսացավ հայրենյաց պաշտպանության մաքառումներում, Հայաստանի առաջին հանրապետության հիմնադրության գործում բերած իր անդուլ ջանքերով ու կորովով: Նա սերունդ դաստիարակող ուսուցիչ էր, որ դարձավ իր ժողովրդի իրավունքների պաշտպան, Վանի ինքնապաշտպանության ջահակիր ռազմիկ, Վանի նահանգապետ, մեր հայրենյաց արեւելյան փրկված հատվածում պետականության վերահաստատման առաջամարտիկ: Նրա անունը մեր ժողովրդի համար անբաժանելի է դարձել մեկ դար առաջ արձանագրված մայիսյան հերոսամարտերի փառապանծ հաղթանակներից, անկախ պետականության վերակերտման պատասխանատվությունից ու ամբողջանվեր ջանքերից: Եւ այսօր Արամ Մանուկյանի արձանի բացումը Հայաստանի առաջին հանրապետության եւ մայիսյան հերոսամարտերի հարյուրամյակի այս տարում խորհրդանշական է՝ որպես երախտիք մեր ժողովրդի մեծ զավակին, որպես ազգանվիրումի ու հայրենասիրության ոգեշնչում այսօր ապրողներիս եւ մեր հետագա սերունդներին:

Այս արարողությունը, սիրելինե՛ր, առիթ է ընծայում մեզ նաեւ անդրադառնալու եւ կարեւորելու, որ ցեղասպանության նախճիրի մի-

[1] «Էջմիածին», 2018, Է, էջ 5:

ջով անցած մեր ժողովուրդն առ Քրիստոս հավատքով, հարության անպարտելի հույսով կարողացավ վերագտնել իր քաջության ոգին եւ իր արի զավակների չնորհիվ, որոնցից մեկն էր Արամ Մանուկյանը, կերտեց իր նորագույն պատմության հաղթանակները: Մեր պատմության կարեւոր դրվագներից է Սարդարապատի հերոսամարտի նախօրեին Արամ Մանուկյանի հանդիպումը Գեւորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի հետ, երբ Մայր Հայրենիքի պաշտպանության վճռականությունն ստանձնած նվիրյալ հայորդին ականատես եղավ նաեւ աննահանջ հոգեւոր ուժին Հայ Եկեղեցու եւ Հայոց Հայրապետի: Միասնական կամքով պայքարի ելած մեր ժողովուրդը հաղթանակեց՝ պաշտպանելով իր գոյության, հայրենի հողի վրա ապրելու ու արարելու իր արդար իրավունքը: Արամ Մանուկյանը կարճ կյանք ունեցավ, բայց այն ամբողջությամբ ընծայեց պայծառ ու հզոր Հայաստանի, բարգավաճող իր ազգի, առաջընթաց հայ կյանքի վառ տեսլականի իրագործմանը:

Այսօր, սիրելի՛ ժողովուրդ հայոց, մենք կոչված ենք Արամ Մանուկյանի, Հայաստանի առաջին հանրապետությունը կերտած մեր հերոսների տեսիլքներն իրականություն դարձնելու, ընթանալու դեպի նորանոր իրագործումներ ու արարումներ՝ հանուն հայրենաբնակ ու աշխարհասփյուռ մեր ժողովրդի երջանկության, բարօրության ու բարգավաճման:

Այս հիշարժան առիթով Հայրապետական Մեր գնահատանքն ենք հայտնում Հայ Հեղափոխական Դաշնակցության կուսակցության երախտարժան ներկայացուցիչ Արամ Մանուկյանի արձանի ծրագրի նախաձեռնողներին եւ իրականացնողներին, ինչպես նաեւ բարերարներ Աշոտ Թունյանին եւ Գաբրիել Զեմբերջյանին, քանդակագործ Դավիթ Մինասյանին:

Թո՛ղ Արամ Մանուկյանի լուսավոր կերպարը քաջալերություն ու ոգեշնչում լինի մեզ ամենքիս, ազգիս բոլոր զավակներին՝ Տիրոջ զորակցությամբ, միասնական ջանադրությամբ կերտելու հզոր պետություն՝ որպես ամուր վեմ ու պատվար մեր ժողովրդի նոր հաջողությունների, մեր արդար հույսերի ու մեր պայծառ ապագայի՝ այսօր եւ միշտ. ամեն:



Ն.Ս.Օ.Տ.Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ԿՐՈՆԱՍԵՐ ՏԻԿՆԱՆՑ ՀԱՄԱԽՄԲՈՒՄԻՆ» ՆՎԻՐՎԱԾ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(ԵՐԵՎԱՆ, 7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2018 Թ.)[1]

Գերաչնորհ, հոգեչնորհ, արժանապատի՛վ հայրեր,

Մեծազնի՛վ անդամուհիներ Բեյրութի «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբումի»,

Սիրելի՛ զավակներ մեր Սուրբ Եկեղեցւոյ:

Ողջունում ենք ձեզ հայոց հոգեւոր նվիրական կենտրոնում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ բարեմաղթանքները բերում ամենքիդ: Ուրախութիւմբ այսօր համախմբվել ենք այս հանդիսութեանը: Այն նվիրվում է Բեյրութի «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբումին»՝ վերստին արժեւորելու համար ազգային-եկեղեցական մեր կյանքում նրանց որդիական սիրո եւ նվիրումի ոգին ու երախտարժան վաստակը:

Միութեան անդամուհիները ժամանել են հայրենիք եւ Մայր Աթոռ՝ նորոգելու մեր Սուրբ Եկեղեցւոյ հանդեպ ծառայանվիրումի իրենց ուխտը, որով առաջնորդվել եւ զորացել են տասնամյակների եկեղեցանպաստ իրենց գործունեութեան մեջ:

«Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբումը» հիմնվեց 1959 թվականին, երբ սառը պատերազմը իր ցավալի ներգործութիւնը ունեցավ եկեղեցական մեր կյանքում՝ տագնապներ ստեղծելով Ամենայն Հայոց Հայրապետութեան եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսութեան հարաբերութիւններում: Այդ դժվարին օրերին լիբանահայ մի խումբ քաջասիրտ հայուհիներ անմնացորդ սիրով ամուր պահեցին եւ վկայեցին իրենց հավատարմութիւնն ու նախանձախնդրութիւնը հանդեպ Քրիստոսահաստատ Սուրբ Էջմիածինը: Տասնամ-

[1] «Էջմիածին», 2018, Թ, էջ 7:

յակներ չարունակ ազնվահոգի հայուհիները իրենց առաքինի գործունեությամբ արժեւորել են ազգային-եկեղեցական մեր անդաստանում կանանց բարձրապատիվ դերն ու սպասավորությունը՝ նմանություն բերելով Սուրբ Եղիշե պատմիչի կողմից ներբողված հայոց աշխարհի փափկասուն տիկնանց: Բարեսիրական իրենց բեղուն գործունեությամբ նրանք անփոխարինելի ծառայություն են մատուցել եւ կարեւոր նպաստ բերել մեր Սրբություն Սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հավետ պայծառությանը:

Սիրելի՛ անդամուհիներ «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբումի», ուրախություն է Մեզ համար, որ նվիրյալ հայուհիներդ՝ չարունակելով միության հիմնադիր երանյալ անդամուհիների, ձեր երախտարժան մայրերի բարի ավանդը, այսօր էլ մեր Սուրբ Եկեղեցու առաքելությունն առավել արդյունավորելու ազնվագույն տեսլականով հարստացնում եք ձեր վաստակը նորանոր իրագործումներով: Ձեր ջանքերով ու միջոցներով ստեղծված եկեղեցական զգեստներն ու սպասքը եւ եկեղեցու հարդարանքի այլ գեղեցկակար պարագաները չուք ու վայելչություն են հաղորդում եկեղեցական արարողություններին ու ծիսակատարություններին եւ նպաստում հոգեւոր-եկեղեցական կյանքի բարեզարդությանը: Ձեր եռանդն ու նվիրումը քաջալերում են նաեւ ձեր ամուսիններին՝ իրենց ջանքերով սատար ու զորակից լինելու ձեր բարի առաքելությանը: Գովարժան է նաեւ, որ միության շարքերում ներգրավում եք ձեր դուստրերին եւ երիտասարդ օրիորդաց, որպեսզի նրանք եւս ձեր հավատքի, բարեպաշտության ու աստվածահաճո բարեգործությունների վառ օրինակով իրենց ջանքերը բերեն հոգեւոր-եկեղեցական մեր անդաստանի բարեզարդման համար: Հիրավի, Եկեղեցին զորեղ ու պայծառ է իր զավակների ամուր հավատքով ու նվիրյալ գործերով: Այսօր եւս, երբ ազգովի կանգնած ենք նոր մարտահրավերների առջեւ, մեր Եկեղեցին ու երկիրը առավել չափով կարիքն ունեն իրենց զավակների աջակցության: Քրիստոնյայի համար անկարելի է մնալ դիտորդ, երբ Եկեղեցին ու հայրենիքը իր զորակցության անհրաժեշտությունն ունեն, երբ փորձեր են արվում քարկոծելու եւ վնասելու Եկեղեցին, նսեմացնելու հոգեւոր-բարոյական արժեքները, խարխլելու մեր ինքնության հիմնասյունները՝ Եկեղեցին ու ընտանիքը: Եկեղեցու առջեւ ծառացող բոլոր մարտահրավերները հաղթահարելի են Եկեղեցու հետեւորդների՝ դավանված արժեքների հանդեպ հավատարմությամբ եւ հոգեւոր կյանքում ակտիվ ներգրավվածությամբ: Ձեզանից՝ ամեն մի հայ կնոջից է

նաեւ մեծապես կախված մեր Եկեղեցու, մեր ժողովրդի ու մեր երկրի ապագան, քանզի հավատավոր ու բարեպաշտ կանայք են հայ ընտանիքի այունը, հոգեւոր ու բարոյական արժեքների սնուցողը, զավակների նկարագրի կերտողը:

Սիրելինե՛ր, այս մտածումներով վերստին Հայրապետական Մեր բարձր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում մեր ժողովրդի երախտաբժան դուստրերիդ եւ հորդորում, որ նույն կորովով ու եռանդով շարունակեք ձեր կարեւոր առաքելությունը՝ ի շինություն մեր հայրենիքի եւ Սուրբ Եկեղեցու, ի պայծառություն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի եւ ի փառս Բարձրյալն Աստծո: Այս նվիրական պահին աղոթքով ենք հիշում «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբումի» լուսահոգի հիմնադիրներին, առենապետուհիներ Արշալույս Այվազյանին եւ Անգինե Տանճիկյանին: Առանձնակի գոհունակությամբ Մեր գնահատանքը, սերն ու օրհնությունն ենք բերում Տիկնանց համախմբումի պատվավոր առենապետուհի Միմի Հարությունյանին եւ գործող առենապետուհի Անահիտ Տանճիկյանին, ովքեր մեծ ավանդ ունեն Համախմբումի եկեղեցանպաստ ծառայության մեջ:

Մաղթում ենք ձեզ, սիրելի՛ անդամուհիներ, երջանկություն եւ եկեղեցաշահ գործոց նոր հաջողություններ: Հպարտ ենք ձեր հավատով եւ առ Եկեղեցին ձեր անխախտ սիրով: Թող Ամենակարող Աստծո օրհնությունն ու աջակցությունը միշտ ուղեկից լինեն ձեզ եւ համայն մեր ժողովրդին ի հայրենիս եւ ի սփյուռս:

«Թող մեր Տեր Հիսուս Քրիստոս եւ մեր Հայրը՝ Աստված... մխիթարի եւ հաստատ պահի ձեր սրտերը ամեն բարի խոսքի եւ գործի մեջ» (Բ Թեսաղ. Բ 15-16). ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՄԻԼԱՆԻ ՍՐԲՈՑ ՔԱՌԱՍՈՒՅՑ ՄԱՆԿԱՆՑ ԵԿԵՂԵՑՈՒ ՕԾՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(ՄԻԼԱՆ, 21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2018 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ աշակերտեալք ի սրբոց առաքելոցն՝ ուսաք փառաւորել Քեզ, Տէր, ի տաճարի սրբութեան Քո, վոր հիմնեցուցէր ի վերայ վիմի հաւատոյ. Տէր Աստուած հարցն մերոց»
(Շարականոց):

Սիրելի՛ բարեպաշտ զավակներ մեր Սուրբ Եկեղեցու:

Հոգու ջերմութեամբ ու խնդութեամբ ողջունում ենք ձեզ եւ փառաբանում Տիրոջը, որ պարգեւում է մեզ վերստին հանդիպման եւ միասնական հոգեպարար աղոթքի այս մեծ ուրախութիւնը: Սիրեցեալ Մեր զավակներիդ այցելել ենք Միլանի հայկական Սրբոց քառասուն մանկանց այս գեղեցկակերտ եկեղեցու 60-ամեայ առիթով՝ բերելով ձեզ օրհնութիւն Սուրբ Էջմիածնից եւ չնորհավորանքներ ու բարեմաղթանքներ հայրենաբնակ ձեր քոյրերից ու եղբայրներից:

Խորհրդանշական է, որ առաքելական ոտնահետքերը կրող այս քաղաքում հայկական եկեղեցու տարեդարձը նշում ենք Սուրբ Ավետարանիչների տոնի լուսի ներքո: Նրանց քարոզութեամբ տարածվեց Տիրոջ Ավետարանը ու հաստատվեցին եկեղեցիները: Այսօր այս սուրբ տաճարում Հայրապետ եւ հավատացյալ ժողովուրդ չարականագրի խոսքով օրհնաբանում ենք Տիրոջը, ասելով. «սուրբք առաքեալներին աշակերտածներս, սովորեցինք փառավորել Քեզ, Տեր, Քո սրբութեան տաճարում, որը, հիմնեցիր հավատքի վեմի վրա, Տեր Աստված մեր հայրերի»:

Քրիստոնեական մեր կյանքում, սիրելինե՛ր, մեծ խանդավառութիւն է եկեղեցու կառուցման հիշատակումը, քանզի եկեղեցու սուրբ ավազանից ծնվածներիս համար չկա նվիրական այլ վայր, քան եկե-

[1] «Էջմիածին», 2018, Ժ, էջ 5:

ղեցին: Տիրոջ սուրբ տաճարում երկնառաք բարիքներով լիանում են հավատացյալների հոգիները, լցվում մխիթարությամբ, առատանում Սուրբ Հոգու շնորհներով: Եկեղեցու կամարների ներքո մեր հոգիներում սերմանվում են հույսն ու սերը, զորանում՝ հավատքը եւ լույս տալիս մեր մտքի եւ հոգու տեսողությանը, որպեսզի եկեղեցիացած՝ մեր քայլերը հաստատուն պահենք Տիրոջ շավիղներում եւ արժանի դառնանք Քրիստոսի պարգեւած փրկության շնորհին՝ երկնային արքայության երանությանը:

Այս մեծագույն իղձով, որը նպատակն է քրիստոնեական կյանքի, մեր ժողովրդի զավակները որտեղ եւ ապրեցին՝ կառուցեցին իրենց եկեղեցիները, որ ապրեն աստվածային սրբության ու օրհնության մեջ եւ անխախտ հավատարմությամբ՝ առաքելահաստատ մեր Եկեղեցուն ու աստվածակառույց Սուրբ Էջմիածնին: Հավատքի եւ եկեղեցասիրության այս վկայությունը վառ կերպով բերում եք նաեւ դուք, սիրելի՛ներ, Իտալիայում ապրող հայորդիներդ: Ձեր բարեպաշտությունը, հավատարմությունը քրիստոնեական մեր ինքնությանն ու արժեքներին, հիմքն են այս օրհնյալ երկրում ձեր հանդեպ հարգանքի ու վստահության եւ ձեր հաջողությունների, որովհետեւ Աստված բարիք է պարգեւում խոնարհ սրտով եւ մաքուր հոգով Իր շնորհները ընդունողներին:

Իտալիայում ապրող հայերիդ միջոցով ամրանում են քրիստոնյա մեր երկու ժողովուրդների եղբայրական կապերը, եւ այսօր նաեւ բազմակողմանի զարգացող համագործակցությունը Իտալիայի եւ Հայաստանի միջեւ:

Մեր ժողովուրդն այսօր Հայաստանում վերափոխումների նոր հույսերով է լցված եւ հավատում է հայրենի երկրի զարգացման նոր ընթացքներին ու բարի ապագային, որը պիտի կերտենք առ մեր Տերն ապավինությամբ, միասնաբար ու միմյանց աջակցելով: Մեր նվիրումով ու ընդհանուր ջանքերով մեր հայրենիքը պիտի դարձնենք ազգային կյանքի եւ ազգային իղձերի ամուր պատվարը: Հայրենիքը մեր ժողովրդի կենսագրությունն է, պատմությունը, մեր սրբություններն ու արժեքներն են, քրիստոնեական նկարագիրը: Այս ճանաչողությունն ու հավատքի ոգին է, որ պիտի փոխանցենք մեր զավակներին: Նրանց համար նույնպես հասկանալի պիտի լինի, թե ինչո՛ւ իրենց նախնիները մեծ փորձությունների մեջ անգամ, աչխարհաչխարհ սփռվելով անգամ, չեն դադարել դպրոց ու եկեղեցի կառուցել, չեն ուրացել հավատքն ու հայրենին:

Քրիստոսով ենք ճանաչում, թե ի՛նչ է սերը, հավատարմությունը, նվիրվածությունը, զոհողությունը, թե ի՛նչ է իրական ազատությունն

ու արդարութիւնը, որ դիմադարձում են չարիքներին: Մեր զավակներին պիտի կրթենք առ Քրիստոս սիրով, որպեսզի կարող լինեն դիմադարձել մեր ժամանակների փորձութիւններին, մոլար գայթակղութիւններին եւ բարի հավատքով կարողանան ստեղծել իրենց կյանքի երջանկութիւնը, որպեսզի ապրեն ու գործեն եկեղեցասիրութեամբ, ազգային կյանքի, Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկրի հանդեպ պատասխանատուութեամբ:

Այսօր, սիրելինե՛ր, երբ նշում ենք Միլանի Սրբոց քառասնից մանկանց եկեղեցու 60-ամյակը, վերստին հիշում ենք եկեղեցու հիմնադիրներ Հովհաննես եւ Սարգիս Դիարբեքիրյաններին՝ աղոթելով նրանց հոգիների խաղաղութեան ու հանգստութեան համար: Եկեղեցու տոնի առիթով չնորհավորում եւ Մեր գնահատանքն ենք բերում համայնքի բարերար հայորդիներին, նվիրյալ վարչականներին, տասնամյակների ընթացքում պաշտոնավարած Արեւմտյան Եւրոպայի հայրապետական պատվիրակներին, այս եկեղեցու հոգեւոր բարեջան հովիվներին: Ձեր բարի հավատքով ու գործերով, միասնական հանձնառութեամբ է չեն ու պայծառ Սրբոց քառասնից մանկանց եկեղեցին եւ արդյունավոր՝ համայնքի հոգեւոր-եկեղեցական կյանքը: Աննվազ եռանդ ու կորով եւ նոր հաջողութիւններ ենք մաղթում ձեզ: Մեր գնահատանքն ու օրհնութիւնն ենք բերում բոլորիդ, սիրեցյա՛լ ժողովուրդ, եւ հորդորում, որ մնաք եւ որդոց որդի ձեր զավակներին ուսուցանեք լինելու աշակերտներ Սուրբ Ավետարանի, աշակերտներ մեր Տիրոջ առաքյալների ու մեր սուրբ հայրերի, ովքեր վկայեցին հավատարմութիւնը Քրիստոսին, ովքեր իրենց կյանքը նվիրեցին վասն հավատո եւ վասն հայրենյաց:

Տե՛ր Աստված մեր, աղաչում ենք, որ ունկնդիր լինես այս սուրբ եկեղեցուց բարձրացող մեր աղոթքին: Մեր ժողովրդին Իտալիայում եւ ամենուր պահպանես արի հավատքով՝ կերտելու իր կյանքը: Շեն պահես իր եկեղեցիները ու պայծառ՝ քրիստոնեական ոգին: Պարգեւես խաղաղութիւն աշխարհին, Քո օրհնութեան ներքո մեր ժողովրդին պահես անփորձանք ու անվտանգ, մեկ ու միասնական՝ իր Սուրբ Եկեղեցիով, իր Սուրբ Էջմիածնով եւ նվիրական իր հայրենիքով: Թող սուրբ առաքյալներին աշակերտածներս միշտ փառավորենք Քեզ Տեր, Քո սրբության տաճարում, հայցելով Քո չնորհները, սերը եւ ողորմությունը մեզ եւ բոլորին՝ այսօր եւ միշտ. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ԱՄԱՆՈՐԻ ԱՌԻԹՈՎ

(31 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2018 Թ.)[1]

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս:

Ամանորի բերկրալի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եւ Հայրապետական Մեր սերն ու օրհնությունն ենք բերում ամենքիդ: Ջերմ զգացումներով Մեր բարեմաղթանքներն ենք հղում այս պահին ծառայության վայրում իրենց պարտականություններն իրականացնողներին, հայրենյաց սահմանները անառիկ պահող մեր բանակի սպաներին ու զինվորներին, եկեղեցիներում աղոթքի համախմբվածներին, տոնական սեղանների չուրջ հավաքված Մեր բոլոր զավակներին:

Նոր տարվա սեմին գոհություն ենք հայտնում Աստծուն, որ անցնող 2018 թվականին խաղաղ պահեց մեր հայրենիքը եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին, օրհնեց բարիքով, արդար վաստակով եւ ձեռքբերումներով՝ ազգային ու եկեղեցական կյանքում: Գոհություն ենք առ Աստված բարձրացնում նաեւ, որ մեր ժողովրդի ազգասեր ոգու եւ ողջամտության չնորհիվ խաղաղ ընթացք ունեցան քաղաքական զարգացումները մեր երկրում, եւ մենք այսօր 2019 թվականը դիմավորում ենք դրական տեղաշարժերի սպասումներով:

Ամեն նոր տարի նոր սկիզբ է, որը լի է նորի ակնկալությամբ, ավելի լավի ու կատարյալի ձգտումով: Նոր տարվա հետ կապում ենք այն ամենը, ինչը կուզենայինք բարեփոխել, կարգավորել եւ չուտով տեսնել մեր նպատակների իրականացումը: Բարեփոխումների պահանջը եւ քաղաքացիական նախանձախնդրությունը, որ առկա են այսօր մեր կյանքում, անկասկած, բարի արդյունքներ պիտի բերեն, առավել խնամք, առավել ջանք ու ճգտում՝ ամրապնդելու հիմերը իրավական պետության, արդար, օրինահարգ հասարակության, չենացնելու մեր

[1] «Էջմիածին», 2019 Ա, էջ 7:

երկիրը եւ համայն ազգային կյանքը: Սա է մեր ուղին, որը հաստատուն պիտի պահենք՝ միշտ հիշելով, որ Հայաստանի զարգացումը եւ հզորությունը ազգային մեր իղձերի իրագործման առանցքն է եւ պայմանը Արցախի ապահովության եւ Սիւնիքի կենսունակության:

Սիրելինե՛ր, այս պահին, երբ բարի սպասումների հետ մեր մտահայացքը ուղղված է գալիքին, մեր ծրագրերին ու անելիքներին, հայրական հորդորով փոխանցում ենք ձեզ մեր Տիրոջ կենարար պատգամը. «Այս եմ պատվիրում ձեզ, որ սիրեք միմյանց» (Հովհ. ԺԵ 17): Մեր կյանքը իմաստավորվում է տերունապատվեր սիրո առկայությամբ: Որտեղ սերն է, այնտեղ հավատն է զորանում, այնտեղ հույսն է առատանում, համերաշխությունը արդարությամբ ու բարի գործերով պտղաբերում: «Սերը երբեք չի անհետանում» (Ա Կորնթ. ԺԳ 8),– ասում է առաքյալը: Այո՛, այն թթխմորի նման աճում է, զառնում կորով, անդուլ ջանք, հանձնառություն, որոնցով պիտի ապահովվի մեր կյանքի վերընթացը:

Այս մտորումներով եւ հոգու ուրախությամբ պատգամում ենք մեր բարեպաշտ ժողովրդին՝ սիրով ու լավատեսությամբ, միմյանց աջակից չարունակել ապրել ու գործել եւ նվիրյալ ջանքեր ներդնել ի զորացում հայրենի մեր երկրի եւ հոգեւոր ու ազգային մեր կյանքի:

Մաղթում ենք խաղաղություն աշխարհին, խաղաղություն՝ մեր հայրենիքին, անսասանություն՝ մեր պետականությանը, չնորհառատ օրհնություն՝ աշխարհասփյուռ ազգիս հայոց եւ բոլոր ժողովուրդներին: Թող 2019 թվականը ուրախություններ բերի մեր ընտանիքներին եւ առաջընթաց ու ձեռքբերումներ՝ մեր կյանքին:

Շնորհավոր Նոր տարի:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂԱՓԱՌ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՊԱՐԳԵՎԱԲԱԺԽՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(ՀՈՒՆՎԱՐ, 2010 Թ.)[1]

Ձե՛րդ Սրբութիւն, պատրիարք Մոսկվայի եւ համայն Ռուսիո,

Ձե՛րդ բարձրապատուութիւն, մեծարգո՛ նախագահ Ռուսաստանի Դաշնութեան,

Արժանապատի՛վ հայրեր, ի Քրիստոս սիրելի՛ եղբայրներ եւ քոյրեր:

Առ Աստված գոհաբանական աղոթքով ուղեւորվեցինք Մոսկվա՝ Ռուսիո պանծալի մայրաքաղաք՝ մասնակցելու պարգեւաբաշխութեան այս հանդիսութեանը, ի Քրիստոս Մեր սիրեցյալ եղբայր կիրիլ պատրիարքի ձեռքից ստանալու «Ուղղափառ ժողովուրդների միասնութեան հիմնադրամ»-ի պարգեւը, որը մեկ անգամ եւս վկայում է մեր հավատակից ժողովուրդների եւ մեր Եկեղեցիների ու պետութիւնների բարեկամական հարաբերութիւնների մասին: Այս բարձր պարգեւն ընդունում ենք որպես Ռուս Եկեղեցու կողմից Հայ Եկեղեցու առաքելութեան կարեւորում հայոց կյանքում եւ քրիստոնեական աշխարհում: Երախտագետ հոգով չնորհակալութեան Մեր խոսքն ենք ուղղում Ձեզ, Ձե՛րդ Սրբութիւն, եւ հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդի նախագահին ու անդամներին: Մեզ համար առանձնակի ուրախութիւն եւ պատիվ է, որ հիմնադրամի պարգեւը ստանում ենք Ռուսաստանի քաջեռանդ նախագահ մեծարգո տիար Դմիտրի Անատոլեւիչ Մեդվեդեւի հետ եւ թանկ՝ նաեւ այն պատճառով, որ հաստատված է

---

[1] «Էջմիածին», 2010 Ա, էջ 7:

լուսահոգի Ալեքսի Բ պատրիարքի անունով: Մեր հոգում պայծառ է հիշատակը Տիրոջ Սուրբ Սեղանի արժանավոր եւ վաստակյալ սպասավորի, ով մեծ ավանդ ունի Ռուսաստանում հոգեւոր կյանքի վերաթնության, ինչպես եւ՝ մեր Եկեղեցիների եղբայրական կապերն ու համագործակցությունը զորացնելու գործում:

Աստծո կամքով օրհնվել է Քրիստոսի հանդեպ սիրո վեմին հաստատված եղբայրությունը մեր Եկեղեցիների, օրհնվել է մեր ժողովուրդների բարեկամությունը, եւ նույնական են դարձել մեր երկրների չահերը: Հայ-ռուսական դարավոր բարեկամությունը կռվել ու թրծվել է մեր ժողովուրդների կողք կողքի պայքարով, կողք կողքի արարումով: Այն վկայված է հոգեւոր եւ մշակութային, քաղաքական եւ տնտեսական հաստատուն ու ամուր կապերով, մտավոր եւ գիտական ձեռքբերումներով, անշրջելի ու հարաճուն գործակցությամբ եւ ներթափանցել է ընտանեկան հարկերից ներս: Հիրավի, աշխարհագրական հեռավորությունը խոչընդոտ չեղավ եւ խոչընդոտ չէ մեր երկրների դաշնակցության, միմյանցով սկսվող մեր սահմանների անսասանության համար՝ հաստատված հավատակից մեր ժողովուրդների բարեկամության ամուր հիմնաքարի վրա:

Այսօր պատմական վերափոխումներ են ապրում մեր ժողովուրդները, լուսավոր գալիքի մեծ հույսով, վստահությամբ ու լավատեսությամբ նոր կյանք են կառուցում: Բարեկամության մեր հարուստ ավանդները պիտի օգնեն միավորելու մեր ջանքերը՝ հանուն մեր երկրների զորացման, կյանքի բարօրության եւ երջանկության: Մեր Եկեղեցիների եւ երկրների առջեւ ծառանում են նաեւ ընդհանուր խնդիրներ, որոնք առավել դյուրին պիտի լինի հարթելը համագործակցաբար: Մենք ավելի ու ավելի պիտի զորացնենք մեր Եկեղեցիների առաքելությունը եւ գործակցությունը, քանզի այսօր առավել քան կարեւոր է հոգեւոր կյանքի վերազարթոնքը: Առ Աստված հավատքի, հոգեւոր-բարոյական արժեքների զորությամբ է, որ մարդկային հոգում անշրջելի պիտի լինի ընդհանուր բարիքի ճգտումը եւ բարի արգասիքներ պարգեւեն խաղաղության, արդարության, ազատ ապրելու իրավունքի հիմնարար սկզբունքները: Արդարեւ, Աստծո կենդանարար Խոսքը եւ անանցանելի Օրենքը՝ գրված «կենդանի Աստծո հոգով, ոչ թե քարեղեն տախտակների վրա, այլ սրտի մարմնեղեն տախտակների վրա» (Բ Կորնթ. 3:3), դեպի խաղաղ ու ոռոգյալ ափեր եւ օրհնյալ հանգրվաններ պիտի առաջնորդեն ժողովուրդների կյանքը:

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, Մենք ողջունում ենք այն բոլոր ձեռնարկումները, որոնք Ձերդ Սրբութիւնը իրականացնում է հոգեւոր արժեքները հասարակական կյանքում ամրապնդելու համար, երիտասարդ սերնդի քրիստոնեական դաստիարակութեան, մեր ժամանակի մարդու կյանքը հուզող հարցերին քրիստոնեութեան պատասխանները ներկայացնելու ուղղութեամբ, ինչպես եւ՝ Ձեր ջանքերը միջտարածաշրջանային հարաբերութիւնների ամրապնդմանը՝ հանուն ժողովուրդների միջեւ խաղաղութեան եւ համերաշխութեան:

Վերստին չնորհակալութեան Մեր խոսքը բերելով պարգեւի համար, Սուրբ Ծննդյան հոգենորոգութեամբ լուսավոր ու ողջունաբեր այս օրը աղոթում ենք, որ Փրկիչ մեր Տերը իր չնորհի եւ օրհնութեան ներքո պարգեւի Ձեզ, Ձե՛րդ Սրբութիւն, սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, երկար օրեր եւ արգասավոր սպասավորութիւն՝ ի պայծառութիւն քրիստոնեական մեր հավատքի եւ Ռուս Ուղղափառ Սուրբ Եկեղեցու:

Մեր Տիրոջ օրհնութիւնն ու չնորհներն ենք հայցում Ձեզ, մեծարգո՛ Դմիտրի Անատոլեւիչ, եւ մաղթում կյանքի երկար օրեր, քաջարի գործեր ու հաղթանակներ՝ հանուն Ռուսաստանի Դաշնութեան եւ նրա աստվածասեր ժողովրդի:

Թող Բարձրյալի սերը եւ հանապազ առաջնորդութիւնը ուղեկից լինեն մեր ժողովուրդներին, մեր երկրների պետական այրերին, մեր Եկեղեցիների ուխտապահ հոգեւոր դասին, որպեսզի մեր կյանքով ու գործերով Աստված փառաբանվի եւ չենանան մեր Հայրենիքները եւ ամուր մնա ու հարատեւի մեր բարեկամութիւնը:

Մեր խոսքի վերջում ուրախ ենք հայտնելու, որ սկսվել է ռուսական ուղղափառ նոր եկեղեցու կառուցումը Երեւանում, որի հետ կապված խնդրում ենք հիմնադրամի Հոգաբարձուների խորհրդին Մեր դրամաչնորհը հատկացնել տաճարի կառուցման հիմնադրամին:

Թող չնորհը, սերն ու խաղաղութիւնը մեր Տիրոջ՝ Հիսուսի Քրիստոսի լինեն մեզ հետ այսօր եւ միշտ. ամեն:

ՊԱՐԳԵՒԱՔ-
ԲԱՆԽՈՒՄՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅ ԵԿԵՂԵՑՈՒ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(10 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2015 Թ., ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ)[1]

Գերաչնո՛րհ Սրբազան, հոգեւո՛ր հայրեր,

Սիրելի՛ ուսուցիչներ, կրթության բնագավառի պաշտոնյաներ ու պատասխանատուներ եւ բոլոր ներկաներ:

Հայրապետական սիրով ողջունում ենք ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ մեր նվիրական հոգեւոր կենտրոնում, որտեղից միշտ ուսման եւ կրթության լույսն է տարածվել եւ հատկապես հայ դպրոցն է սկզբնավորվել մեր ժողովրդի կյանքում:

Այսօր մենք համախմբվել ենք ուրախ առիթով, նաեւ կարեւոր առիթով՝ մրցանակներ հանձնելու լավագույն ուսուցիչներին: Մրցանակները չնորհվում են լավագույններին, բայց էական է, որ գնահատվում է ուսուցչի առաքելությունը: Մեզ համար այսօր հոգեւոր անհուն ուրախություն է գնահատանքի խոսք ուղղել ձեզ՝ կրթության գործի մշակներիդ եւ բերել ձեզ Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները՝ առ Աստված հայցով, որ բազմապատիկ արդյունավորվեն ձեր գործունեությունն ու ջանքերը:

Մեծ չնորհ եւ պատասխանատվություն է ձեր ուսերին՝ գիտելիք հաղորդելու, իմացության եւ ճանաչողության ուղիներով առաջնորդելու մեր զավակներին, ձեւավորելու նրանց որպես սկզբունքներ ունեցող անհատներ, որպես մեր երկրի հայրենասեր քաղաքացիներ ու մեր ժողովրդի ազգասեր որդիներ ու դուստրեր: Այս նպատակը ընդհանուր հասարակությանն է, անշուշտ, բայց առավել չափով իրականանում է ձեր ամենօրյա աշխատանքի ու գործունեության արդյունքում: Ձեր նվիրումով, առօրյա ջանքերով են կրթվում ու հասակ առնում մատաղ սերնդի միտքն ու հոգին, եւ այդ պատճառով երբեք

---

[1] «Էջմիածին», 2015, ԺԱ, էջ 7:

բարձրագոչ չէ ասելը, որ ձեր ձեռքերում մեր ժողովրդի ապագան է: Մենք կուզենայինք, որ այս գիտակցությունը ամեն օր ներշնչեր ձեր գործունեությունը:

Մենք գիտենք, որ ձեր աշխատանքը չի սկսվում եւ չի ավարտվում զանգի հնչումով, յուրաքանչյուր դասաժամի դուք նախապատրաստվում եք տրամադրելով ավելի ժամանակ, քան այդ դասաժամն է: Նախապատրաստվում եք ոչ միայն դասանյութի մատուցմանը, այլեւ՝ ձեր սաների հետ ընդհանուր աշխատանքին՝ իբրեւ մանկավարժներ, հոգեբաններ, իբրեւ երկրորդ ծնող: Մեր օրերում համացանցի միջոցով ավելի ու ավելի դյուրին է դառնում գիտելիքների ձեռքբերումը, բայց ուսուցիչը հեղինակություն է ոչ միայն գիտելիք փոխանցելով, այլեւ՝ օրինակ լինելով եւ վայելելով իր սաների վստահությունը, հարգանքն ու սերը:

Մենք գոհունակությամբ ենք անդրադառնում, որ մեր երկիրը, կրթության ու գիտության նախարարությունը ավելի մեծ հնարավորություններ է գտնում բարելավելու, արդիական պահանջներին համահունչ դարձնելու ուսումն ու կրթությունը եւ արժանիորեն գնահատելու մանկավարժների գործունեությունը: Գոհունակություն է Հայրապետիս համար, որ զորանում են նաեւ նախարարության եւ մեր Եկեղեցու համագործակցությունը եւ համատեղ ծրագրերը՝ ի նպաստ մատաղ սերնդի կրթության, հոգեւոր արժեքներով դաստիարակության: Մեր Եկեղեցին նույնպես ջանում է առավել մեծ հնարավորություններ ստեղծել, որպեսզի մեր զավակները սնվեն ու աճեն հավատքով, միմյանց հանդեպ սիրով, արդարության, ճշմարտության արժեքներով, լինեն հավատարիմ որդիները մեր ժողովրդի ու երկրի:

Կրթության գործի սիրելի՛ նվիրյալներ, այս բարեպատեհ առիթով Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ձեզ: Աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ Իր շնորհներով առատապես շնորհազարդի ձեզ եւ զորակից լինի՝ արգասավորելու ձեր մեծ առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Շնորհավորում ենք մրցանակակիրներին եւ հայցում Բարձրյալի օրհնությունը նրանց կյանքին ու գործունեությանը: Մաղթում ենք, որ ձեր սաները արդարացնեն ձեր եւ մեր ողջ ժողովրդի բոլոր բարի հույսերը:


Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Նավասարդյանին եւ նրա բարեխնամ ղեկավարությամբ գործող Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակիցներին, «Լավագույն ուսուցիչ» ծրագրի աղնիվ

բարերարներին՝ Իրմա եւ Սիլվիա Տեր-Ստեփանյաններին՝ մաղթելով գործոց հաջողություններ, նոր չնորհալի նախաձեռնություններ մեր հոգեւոր եւ կրթական անդաստանում:

Թող Ողորմած Աստված խաղաղ պահի հայրենի մեր երկիրն ու ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ օրհնի հոգեւոր ու ազգային կյանքի չենացման, լուսավոր գալիքի կերտման մեր ջանքերը:

Մեր Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի չնորհներն ու օրհնությունը թող լինեն ամենքիս հետ, այսօր եւ հավիտյանս. ամեն:

ՊԱՐԳԵՒԱԿԱՆ ՔԱՆԽՈՒՄՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՍՊԱՆԵՐԻ ԵՒ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(ԵՐԵՎԱՆ, 28 ՄԱՅԻՍԻ, 2016 Թ.)[1]

Մեծարգո նախագահ Հայաստանի Հանրապետութեան,

Պատուարժան պետական այրեր,

Սիրելի ծնողներ եւ հարազատներ մեր բանակի քաջարի զինվորներու, հարգարժան ներկաներ,

Հայրապետական Մեր օրհնութիւնն ու չնորհավորանքն ենք բերում ամենքիդ Հանրապետութեան տոնի եւ մեր նվիրյալ ու արժանավոր զավակների, հայրենյաց պաշտպան զինծառայողների՝ ձեր որդիների, ամուսինների, եղբայրների պետական պարգեւների հանձնման առիթով:

Խորհրդանշական է, որ հայրենիքի պաշտպան զինծառայողների պարգեւաբաշխութիւնը տեղի է ունենում Հանրապետութեան տոնին: Հայաստանի առաջին Հանրապետութիւնը ծնունդ առավ անցյալ դարասկզբին մեր համազգային պայքարի ու հաղթանակի՝ Սարդարապատի, Ղարաքիլիսայի, Բաշ Ապարանի հերոսամարտերի արդյունքում, որոնք փառապանծ դրվագներից են մեր պատմութեան եւ վկայութիւնը մեր ժողովրդի անսասան հայրենասիրութեան ու ազգասիրութեան: Նախնյաց նվիրյալ այս ոգով մեր ժողովրդի զավակները հաղթանակեցին Արցախյան ազատամարտում ու կերտեցին Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութիւնը:

Հերոսութեան բացառիկ դրսեւորումով մեր խրոխտ զինվորները ապրիլի սկզբին ետ մղեցին Արցախի սահմանների ողջ երկայնքով ռազմական գործողութիւններ սանձազերծած Ադրբեջանի հարձակումը: Նրանք մարտնչեցին հաղթանակելու եւ խաղաղութիւնը վե-

[1] «Էջմիածին», 2016, Ե, էջ 7:

բահաստատելու անվարան կամքով: Մարտերում նահատակված մեր հերոս զավակները իրենց ծաղկուն կյանքը, պայծառ երազները պարգեւեցին հայրենիքի, հարազատ ժողովրդի ազատ ու ապահով կյանքի պաշտպանությանը: Դժվարին այդ օրերին մեր ժողովուրդը առավել ամրապնդեց իր համախմբվածությունը եւ վճռականությունը հայրենիքը պաշտպանելու, մեր պետականությունը զորացնելու:


Այսօր ցավ է բոլորիս համար, որ հերոս զինծառայողները անձամբ չեն ստանում մարտերում ցուցաբերած արիության համար իրենց չնորհված պարգեւները: Անմահ է, սակայն, նրանց հոգին, նրանց սխրանքը: Նրանց փառքը նաեւ ձերն է, սիրելի ծնողներ եւ հարազատներ, ձեր կողքին են նրանք ամրապնդվել որպես հայրենիքի նվիրյալ զավակներ, անձեր՝ ազնվահոգի ու արիասիրտ: Աստծո մխիթարությունն ու սփոփանքը թող լինեն ձեզ հետ, սիրելիներ: Բարձրյալի օրհնությունն ենք հայցում ձեր կյանքին, հույս, հավատք, հոգու ամրություն՝ ձեր ընտանիքներին: Հայրենիքի ազատության եւ խաղաղության համար իրենց կյանքը զոհած մեր զավակների առջեւ պարտք ունենք առավել հզորացնելու մեր երկիրն ու պետականությունը, առավել արդյունավորելու մեր միասնական ջանքերը՝ հանուն մեր ժողովրդի առաջընթացի ու բարօրության, մեր իրավունքների պաշտպանության:

Ի խորոց սրտի հայցում ենք, որ Ամենակարող Աստված խաղաղ պահի աշխարը համայն, մեր հայրենիքն ու ժողովրդին եւ օրհնի մեր ջանքերը ի սեր մեր երկրի, մեր ապահով ու երջանիկ կյանքի:

Աղոթում ենք հերոսաբար զոհված մեր զինվորների հոգիների խաղաղության համար: Փառք եւ օրհնություն նրանց անմահ հիշատակին: Թող նոր ձեռքբերումներով առհավետ հզոր լինի մեր երկիրը, եւ միշտ չողա փառքն ու պարծանքը Հայոց բանակի՝ հանուն Տիրոջ Սուրբ Անվան, հանուն մեր նոր օրվա ու պայծառ գալիքի:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, չնորհներն ու խաղաղությունը թող լինեն մեզ հետ եւ ամենքի. ամեն:

ՊԱՐԳԵՒՔ-
ՔԱՆԽՈՒՄՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ «ԱՎՐՈՐԱ» ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(5 ՄԱՅԻՍԻ, 2017 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում «Աւրորա» մրցանակաբաշխութեան կազմակերպիչներին ու բոլոր մասնակիցներին:

Ուրախ ենք, որ «Աւրորա» մարդասիրական մրցանակաբաշխութիւնը հաստատուն քայլերով շարունակում է իր առաքելութիւնը՝ Հայոց ցեղասպանութիւնը վերապրողների անունից գնահատանքի արժանացնելով ու ալակցելով այն անձանց, ովքեր իրենց ապահովութիւնը վտանգելով՝ մեծ ու երախտարժան օգտակարութիւն են բերում դժուարութիւնների ու փորձութիւնների մէջ յայտնուած մարդկանց՝ նրանց հոգիներում յոյսի ու լաւատեսութեան չողեր ծագեցնելով ապագայի հանդէպ:

Յաւօք, 21-րդ դարում նոյնպէս շարունակուում են ցեղասպանութիւնները, աշխարհը ցնցուում է պատերազմների ու ահաբեկչութիւնների արհաւիրքներից: Այսօր էլ տարբեր ազգութիւնների ու կրօնների պատկանող բազմաթիւ անմեղ մարդիկ՝ կանայք, տարեցներ ու երեխաներ մահաբեր զէնքերի, սովի ու տարատեսակ համաճարակների զոհ են դառնում կամ հալածուում հայրենի բնօրրանից՝ անասելի դժուարութիւններ յաղթահարելով ապրելու ու գոյատեւելու համար: Այսպիսի ճանապարհ մեր ժողովուրդը անցաւ մէկ դար առաջ՝ Օսմանեան Թուրքիայում իրականացուած Հայոց ցեղասպանութեան տարիներին, երբ միլիոնաւոր հայորդիներ կոտորուեցին իրենց հայրենիքում ու տարագրուեցին աշխարհով մէկ՝ զրկուելով իրենց ստեղծած նիւթական, հոգեւոր ու մշակութային ժառանգութիւնից:

---

[1] «Էջմիածին», 2017, Ե, էջ 9:

«Աւրորա» մրցանակաբաշխութիւնը աւելի լաւ ու բարի աշխարհ կառուցելու իւրօրինակ կոչ ու հրաւէր է քաղաքակիրթ աշխարհին՝ հետեւողականօրէն պայքարելու ընդդէմ մարդկութեան դէմ իրագործուող հանցագործութիւնների, որոնք չունեն որեւէ արդարացում: Մարդասիրական արժէքների տարածումով է, որ պիտի արդիւնաւորուեն ջանքերը յանուն աշխարհի խաղաղութեան եւ ազգերի ու պետութիւնների միջեւ համերաշխ գոյակցութեան՝ աստուածային լոյսն ու չնորհներն առատացնելով մարդկային կեանքում: Վերստին Մեր գնահատանքն ենք բերում «Աւրորա» մրցանակաբաշխութեան կազմակերպիչներին ու աջակիցներին եւ մաղթում յաջողութիւններ իրենց մարդասիրական վեհ առաքելութեան մէջ:


Ի խորոց սրտի աղօթում ենք, որ Բարին Աստուած Իր օրհնութեան ներքոյ պահպանի աշխարհը համայն եւ խաղաղութիւն ու բարօրութիւն պարգեւի բոլոր ժողովուրդներին:

«Երանի՛ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստուծոյ որդիներ պիտի կոչուեն» (Մատթ. Ե 9):

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՊԱՐԳԵՒՔ-
ՔԱՆԽՈՒՄՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԷԴՈՒԱՐԴՈ ԷՕՐՆԵԿՅԱՆԻՆ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԵՐՈՍ»-Ի ԿՈՉՄԱՆ ՇՆՈՐՀՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

(12 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 2017 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Սիրելի՛ ներկաներ:

Գոհունակ սրտով ենք մասնակցում Հայաստանի Հանրապետության նախագահի կողմից մեր ժողովրդի ու մեր Սուրբ Եկեղեցու մեծագնիվ զավակ տիար Էդուարդո Էօրնեկյանին «Հայաստանի ազգային հերոս»-ի կոչման ու պարգեւի հանձնման այս հանդիսավոր արարողությանը: Պարգեւը արժանի գնահատանք է ազգային մեր կյանքում մեծ բարերարի ավանդի ու ծառայությունների, որոնք առատ արգասիքներն են նրա բարեպաշտ հոգու եւ ջերմ ազգասիրության ու հայրենասիրության:

Փառք եւ գոհություն Ամենակալին Աստծո, որ մեր ժողովրդին չնորհում է զավակներ, ովքեր իրենց կյանքը նվիրում ու ծառայություն են դարձնում հարազատ ժողովրդին ու հայրենիքին:

Սփյուռքում ծնված չատ հայորդիների նման տիար Էօրնեկյանը չէր կարող անտարբեր մնալ հայրենիքի առջեւ ծառացած խնդիրների ու մարտահրավերների հանդեպ եւ անկախ պետականության առաջին իսկ օրից ազնիվ հանձնառությամբ իր զորակցությունը բերեց Հայաստանին ու Արցախին: Նրա բարերարությամբ կյանքի կոչված մեծածավալ ծրագրերը կարեւոր նպաստ են մեր երկրի տնտեսության զարգացման գործում, ինչպես եւ նշանակալի աջակցություն՝ կրթությանն ու մշակույթին: Սրտի գոհունակությամբ ենք անդրադառնում նաեւ, որ տիար Էօրնեկյանը սատարում է մեր Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի առաքելությանը՝ իր մեծ ավանդը բերելով հոգեւոր

[1] «Էջմիածին», 2017, Ժ, էջ 10:

մեր կյանքի պայծառացմանը: Այդպիսի օրհնաբեր իրագործումներով, որոնք զորացնում ու բարօր են դարձնում մեր հայրենիքը, չենացնում ազգային-եկեղեցական կյանքը, գրվում են մեր ժողովրդի նորօրյա պատմության փառքի էջերը:

Այս պահին կցանկանայինք առանձնացնել նաեւ, որ մեր ժողովրդի բարերար զավակների նվիրումը, իրագործվող ազգանվեր ու հայրենաշեն ծրագրերը, բոլորիս համար մեծ քաջալերություն լինելով, միաժամանակ վառ օրինակ են պատանի եւ երիտասարդ հայորդիների եւ սերունդների համար: Թող այսպես լինի միշտ, թող Բարձրյալ Տերը մեր զավակներին հանապազ չնորհի բարեպաշտության, հայրենյաց սիրո, պատասխանատվության ու նախանձախնդրության ոգի, եւ մեր կյանքից անպակաս լինի պարծանքը ազնիվ գործերի:


Այս ուրախալի առիթով Մեր ջերմագին չնորհավորանքներն ենք բերում Ձեզ, սիրելի՛ Էդուարդո, եւ մաղթում արեւշատ կյանք եւ նոր հաջողություններ՝ Ձեր եւ Էօրնեկյան բարեգործ գերդաստանի ազնիվ նախաձեռնություններին ու գործերին:

Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Ձեզ, մեծարգո՛ նախագահ, ազգային անդաստանում բացառիկ ծառայություններ մատուցած երախտավոր հայորդիներին պետական բարձր պարգեւների արժանացնելու համար:

Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ խաղաղ պահի մեր հայրենիքը եւ օրհնի մեր ժողովրդի ջանքերը՝ հանուն աշխարհասփյուռ հայ կյանքի չենացման ու պայծառացման:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրհնությունը, չնորհն ու ողորմությունը այսօր եւ միշտ թող լինեն մեզ հետ. ամեն:

ՊԱՐԳԵՒՔ-
ՔԱՆԽՈՒՄՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ԼԱՎԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՑԻՉ» ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄՐՑՈՒՅԹԻ ՄՐՑԱՆԱԿԱԲԱՇԽՈՒԹՅԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹՅԱՆԸ

(12 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 2017 Թ.)[1]

Գերաչնո՛րհ, հոգեչնորհ եւ արժանապատիւ հայրեր,

Հայաստանի Հանրապետութեան կրթութեան եւ գիտութեան մեծարգո նախարար տիա՛ր Լեւոն Մկրտչեան,

Ազգային ժողովի հարգարժա՛ն պատգամաւոր տիկին Ռուզաննա Մուրադեան, վարչական պատասխանատու ներկայացուցիչներ,

Սիրելի՛ ուսուցիչներ, կրթութեան նվիրյալներ եւ հյուրեր:

Ուրախութեամբ ողջունում ենք ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի՝ հոգեւոր մեր տան նվիրական հարկի ներքո: Դարձյալ մեկտեղվել ենք մրցանակներ հանձնելու «Լավագույն ուսուցիչ» ամենամյա մրցույթի հաղթողներին: Այս գեղեցիկ հանդիսությունն արդեն դարձել է բարի ավանդույթ եւ բոլորիս համար հոգեւոր խանդավառության բերկրալի առիթ, քանզի մրցանակաբաշխությունը կոչված է վերարժեւորելու մեր մատաղ սերնդի կրթությանն ու դաստիարակությանը նվիրված ուսուցիչների աշխատանքը, նաեւ գնահատելու եւ քաջալերելու մեր ուսուցիչներին իրենց պատասխանատու եւ նվիրական առաքելության մեջ:

Աստվածաշնչյան Ժողովողն ասում է. «Մարդու իմաստությունը լոյս է տալիս նրա երեսին» (Ժող. 8.1): Սուրբգրային խոսքի չնորհընկալներն այսօր դուք եք, սիրելի՛ ուսուցիչներ, որ, հարստացած գիտելիքներով եւ հոգու իմաստությամբ, լույս եք տալիս ձեր սաներին, ձեր կողմից կրթվող ու դաստիարակվող սերունդներին, որպեսզի նրանք եւս լուսավորվեն, ճանաչեն կյանքի իմաստը, առաջնորդվեն հոգեւոր արժեքներով եւ կարողանան հաղթահարել իրենց առջեւ բարձրացող

---

[1] «Էջմիածին», 2017, ԺԲ, էջ 12:

խնդիրներն ու փորձությունները: Արագորեն զարգացող եւ փոփոխվող այսօրվա աշխարհում ուսումն ու կրթությունը, նկարագրի, անհատականության ձեւավորումը առաջնահերթ են ազգի եւ պետության համար: Արդ, դուք, խոնարհ ու պարզ սպասավորներդ գիտության ու կրթության, ձեր մտային ու հոգեւոր իմաստության լույսով ի զորու եք առողջ եւ զորավոր սերունդ պատրաստել, ովքեր պիտի չենացնեն մեր հայրենի երկիրն ու ազգային կյանքը, պիտի պահպանեն մեր սահմանները եւ պիտի պաշտպանեն մեր ժողովրդի իրավունքները: Մենք համոզված ենք, որ այս գիտակցությունը, այս տեսլականը ամեն օր ձեր աշխատանքում ներշնչում է ձեզ՝ հավելելով կորով ու նվիրում:

Մենք գոհունակությամբ ենք անդրադառնում, որ կրթության եւ գիտության նախարարությունը ջանում է արդիական դարձնել կրթությունը մեր երկրում, նաեւ արժանի կերպով գնահատել մանկավարժների աշխատանքը: Ուրախ ենք, որ ամրանում է մեր Եկեղեցու եւ նախարարության համագործակցությունը՝ ի նպաստ մեր զավակների հոգեւոր ճանաչողության, նրանց հոգում հավատքի սերմանման, որպեսզի ընթանան ճշմարիտ ուղիով, լինեն արժանավոր զավակները մեր երկրի ու ժողովրդի: Լինել երջանիկ ազգ՝ ծաղկուն պետությամբ եւ ազգային կյանքով. սա պիտի լինի նաեւ մեր կրթության նպատակը:

Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում ՀՀ կրթության եւ գիտության նախարարությանը եւ անձամբ նախարար տիար Լեւոն Մկրտչյանին, ով սիրով աջակցում է մեր Եկեղեցու նախաձեռնություններին: Մեր գնահատանքը՝ գերաշնորհ Տ. Վարդան եպիսկոպոս Նավասարդյանին եւ նրա բարեջան ղեկավարությամբ գործող Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի աշխատակիցներին եւ բոլոր պատասխանատուներին, ովքեր կազմակերպում են այս մրցանակաբաշխությունը:

Այս ուրախ առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք հայտնում մրցանակաբաշխության ազնիվ բարերարներ Իրմա եւ Սիլվիա Տեր-Ստեփանյաններին, որ ամենայն նվիրվածությամբ տարիներ շարունակ, հավատարիմ իրենց ծնողների պատգամին ու օրինակին եւ կարեւորելով ուսուցչի դերակատարությունը ազգային եւ հայրենական մեր կյանքում՝ աջակցում են այս ծրագրին: Մաղթում ենք, որ Ամենաբարին Աստված օրհնի մեծազնիվ բարերարներին եւ վարձահատույց լինի իրագործած եկեղեցանվեր եւ ազգանվեր գործերի համար:

Մեր օրհնութիւնն ու գնահատանքն ենք բերում ձեզ, սիրելի՛ մանկավարժներ եւ կրթութեան բնագաւառի պատասխանատուներ՝ հայցելով Աստծո ամենախնամ հովանին եւ առաջնորդութիւնը ձեր կեանքին եւ նախանձախնդիր ջանքերին, որ սիրով ու նվիրումով ներդնում եք մեր զավակների կրթութեան գործում:

Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ լուսավոր պահի միտքն ու հոգին մեր երեխաների եւ նոր կորով ու եռանդ պարգեւի ձեզ ու արդյունավոր ջանքեր՝ ի նպաստ ազգային մեր բոլոր կրթօջախների օրավուր բարգավաճման եւ պայծառացման:

Տիրոջ սերը, անսպառ օրհնութիւնները եւ չնորհները թող լինեն ձեզ հետ եւ համայն մեր ժողովրդի՝ այսօր եւ միշտ. ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(28 ՀՈՒՆՎԱՐԻ, 2010 Թ.)[1]


Հայոց բանակի օրվա առիթով ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում մեր հաղթական բանակի զինվորներին եւ զորահրամանատարներին:

Հայոց բանակի ծննդյան հետ կապված են մեր նորօրյա պատմության պանծալի հիշատակները, մեր ժողովրդի հավատավոր, հայրենասեր ու ազատասեր, արի հոգու հաղթանակները, որոնք պարծանքով են լցնում այս տոնական օրը եւ ոգեշնչում ու զորացնում մեզ: Արդարեւ, Արցախյան ազատամարտի եւ Հայաստանի սահմանների պաշտպանության հերոսական մարտերում կազմավորված եւ հասակ առած Հայոց բանակը հավատարիմ զավակն ու հպարտությունն է մեր ժողովրդի: Այսօր մեր բանակի քաջարի զինվորների եւ հրամանատարների պատվախնդիր ու նվիրյալ ծառայությամբ խաղաղ են մեր Հայրենիքի սահմանները, եւ մեր ժողովուրդը իր ազատ կյանքն է կառուցում Հայաստանում եւ Արցախում:

Աղոթում ենք, որ Աստված խաղաղ պահպանի մեր Հայրենիքը եւ իր օրհնության ու շնորհների ներքո հավատքով ամուր, Հայրենիքի սիրով զորացյալ պահի Հայոց բանակի զորաց եւ զորականաց՝ պարգեւելով քաջառողջություն, երկար օրեր, նոր ձեռքբերումներ, փառք ու պատիվ Հայրենիքի ծառայության մեջ:

---

[1] «Էջմիածին», 2010 Ա, էջ 9:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(8 ՄԱՐՏԻ 2010 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում բոլոր կանանց՝ մարտի 8-ի տոնական առիթով:

Մեր մաղթանքն է, որ ընտանեկան հարկից ներս եւ արդի ժամանակներում նաեւ պետական-հասարակական անդաստանում նշանակալի դերակատարություն ունեցող կանայք Աստծո օրհնությամբ արդար ու բարի արդասիքներով արդյունավորեն իրենց առաքելությունը, նոր ձեռքբերումներով եւ հաջողություններով զարդարեն իրենց, մեր Հայրենիքի ու ժողովրդի կյանքը:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահպանի բոլոր տիկնանց եւ օրիորդաց, նրանց սրտերում միշտ զորավոր պահի հավատքն առ Աստված, անմնացորդ նվիրումի ու հավատարմության ոգին առ Հայրենին եւ ընտանիքը:

Երկնային շնորհներ, երջանիկ ու օրհնյալ կյանք Ձեզ, սիրելի՛ մայրեր եւ քույրեր:

---

[1] «Էջմիածին», 2010 Գ, էջ 7:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(9 ՄԱՅԻՍԻ, 2010 Թ.)[1]

Սիրելի՛ ժողովուրդ հայոց:

Ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս ողջույն ենք հղում ձեզ բերկրաշատ հոգով եւ շնորհավորում լուսավոր ու պայծառ երկու տոների՝ Հաղթանակի եւ խաղաղության եւ Շուշիի ազատագրության օրվա կապակցությամբ:

Այս տարի տոնախմբում ենք 65-րդ Հոբելյանական տարեդարձը ժողովուրդների մեծ հաղթանակի, որով վերջ դրվեց երկրորդ համաշխարհային պատերազմին: Մայիսի 9-ին խաղաղության ավետիսը հնչեց աշխարհին՝ ուրախությամբ համակելով եւ լուսավորելով հոգիները նաեւ մեր ժողովրդի զավակների, ովքեր հերոսական մասնակցություն են ունեցել ֆաշիզմի ու բռնության դեմ պայքարում եւ հաղթանակի ձեռքբերման գործում: Աշխարհասփյուռ մեր ժողովուրդը այդ մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում, տարբեր երկրների ազատագրության համար մղվող պայքարում պաշտպանում էր նաեւ խաղաղությունն ու ազատությունը Հայաստանի՝ համայն հայության Հայրենիքի: Արդարեւ, հայրենական պատերազմ էր նաեւ համայն հայության համար:

Այսօր, վերստին անդրադառնալով մարդկությանը մեծագույն զոհեր ու զոհողություններ պատճառած պատերազմի դեպքերին ու իրադարձություններին, հիշում ենք նաեւ պանծալի ուղին հայկական դիվիզիաների, ռազմական տաղանդն ու հաղթանակները հայ զորահրամանատարների, քաջությունն ու սխրանքը հայ զինվորների, պարտիզանական ջոկատներում, դիմադրության շարժումներում ներգրավված հայազն անձնվեր դուստրերի եւ ուստրերի: Հիշում ենք

[1] «Էջմիածին», 2010 Ե, էջ 4:

գյուղերում եւ քաղաքներում մեր ժողովրդի հոգնաբեկ աշխատանքն ու նվիրումը, որոնց արդյունքներով հնարավոր դարձան ռազմական հաղթանակները: Դժվարին ու հերոսական այդ օրերի անմոռանալի հիշատակներից են սփյուռքահայության նախանձախնդիր արձագանքը Գեւորգ Զ Ամենայն Հայոց կաթողիկոսի կոչին եւ ղրամահավաքը, որով արագորեն կազմավորված տանկային զորասյուները մարտերի մեջ մտան ռազմաճակատների առաջին գծում: Փոքրաթիվ մեր ժողովուրդը իր բոլոր ուժերով մեծ մասնակցություն բերեց պատերազմին եւ մեծ կորուստներ կրեց՝ հանուն մեր Հայրենիքի ազատ կյանքի, հանուն խաղաղ ու բարօր աշխարհի:

Հայրենասիրության եւ անվեհեր ոգու այսպիսի օրինակներով ծնունդ առավ եւ հաղթանակեց Արցախի ազատամարտը: Արցախի ազատագրության հույսը երբեք չի մարել մեր ժողովրդի հոգում, նաեւ այն տարիներին, երբ արցախցի բազմահաղթ զորավարները, քաջարի սպաներն ու զինվորները մարտնչում էին Երկրորդ աշխարհամարտի ռազմադաշտերում: Աստվածօրհնյալ այդ հույսով լուսավորվեց Շուշիի ազատագրության առավոտը, եւ այսօր, գոհունություն Աստծուն, հավատավոր մեր ժողովուրդը իր խաղաղ կյանքի հաղթանակներն է կերտում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Մեր ժողովրդի միասնական ջանքերով վերակառուցվում է նաեւ Շուշին՝ Արցախի ավանդաշատ մայրաքաղաքը, միշտ նույն անխախտ հավատով, որ համընդհանուր ճանաչում պիտի գտնի արցախահայության ազատ ապրելու արդար իրավունքը:

Մենք աղոթում ենք, որ բոլոր երկրներն ու ժողովուրդները այսօր ամրանան կամքի մեջ՝ ջանքեր բերելու աշխարհում խաղաղության հաստատման, համագործակցության զորացման եւ բարօր կյանքի կերտման ուղղությամբ:

Բարձրյալի օրհնությունն ենք հայցում աշխարհին եւ մեր ժողովրդին, որպեսզի բարի արդյունավորմամբ իրագործվեն մեր նպատակները՝ ի սեր հայրենի երկրի բարգավաճումի, ամենուր ապահով ու բարօր կյանքի, հավատքով պայծառ, գիտությամբ ու մշակույթով ծաղկուն մեր ներկայի ու գալիքի:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(28 ՄԱՅԻՍԻ, 2010 Թ.)[1]

Սիրելի՛ ժողովուրդ հայոց:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ աստվածակառույց Սուրբ Էջմիածնից եւ շնորհավորում Հանրապետության օրվա տոնական առիթով:

Այսօր ոգեկոչում ենք հայրենի պետականության վերականգնման նվիրական հիշատակները: Հարյուրամյակների դադարից հետո մեր ժողովրդի մղած մայիսյան հերոսական մարտերում ծնունդ առավ Հայաստանի առաջին հանրապետությունը:

Հայկական պետականության վերականգնումը ձեռք բերվեց անվեհեր ու սխրալից մաքառումով մեր ժողովրդի զավակների: Զինվոր, գյուղացի, հոգեւորական օրհասական պահին ոտքի էին գնում մահն անտեսելով, անդադար հնչող զանգերի ներքո մեր եկեղեցիները եւ իրենց հավատավոր հոգիներում կոչը Գեւորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի՝ հայոց գոյամարտի նոր Ղեւոնդ երեցի: Փրկվեց հայրենի փոքրիկ հողակտորը, որի վրա ծածանվեց հայոց պետականության դրոշը: Առաջին հանրապետության հռչակումը պատմության շրջադարձային իրադարձություն էր, որ եղավ նաեւ վկայությունը մեր ժողովրդի ձգտումների՝ կառուցելու ժողովրդավարական, իրավական ու ընկերային պետություն, ազատ ու արդար հասարակական կյանք: Այս ավանդները, Հայրենիքի հանդեպ սերը այսօր պիտի առաջնորդեն մեր կյանքը, ոգի ու խրախույս դառնան մեր ջանքերի ու գործերի համար, որպեսզի կառուցենք ապահով, բարօր ու երջանիկ գալիքը մեր ազատ Հայրենիքի ու ժողովրդի:

---

[1] «Էջմիածին», 2010 Ե, էջ 5:

Աղոթում ենք առ Աստված, որ խաղաղության մեջ պահի Հայաստան ու Արցախ հայրենի մեր երկիրը, հավատքի մեջ հաստատուն, իր տեսիլքներին հավատարիմ պահպանի համայն մեր ժողովրդին: Թող Տերն ու պարգեւատուն ամենայն բարյաց չնորհազարդի եւ առատ բարիքներով օրհնի աշխարհասփյուռ հայ կյանքը:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀՒ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2010 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայաստանի Հանրապետության Անկախության տոնի առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքն ենք բերում համայն մեր ժողովրդին՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս:


Պարծանքով ու փառքով լեցուն ազգային մեր տոնի խորհրդով ուրախ են այսօր մեր հոգիները: 19 տարի առաջ նվիրական այս օրն էր, որ իրագործվեց ազատ եւ անկախ պետականություն ունենալու դարավոր մեր տեսիլքը: Տոնական խնդության հետ հույսերով ենք լեցուն, որ ազատ ու ինքնիշխան մեր երկիրը ազգիս միասնական ջանքերով պիտի զորանա ու բարգավաճի եւ համախմբած ի սփյուռս աշխարհի իր զավակներին, դառնա հայ կյանքի պատվարն ու հենարանը:

Գոհություն բարձրացնենք առ Աստված եւ բազմապատկենք մեր նվիրումն ու ջանքերը՝ շարունակելով աննվազ նախանձախնդրությամբ խնամք ու հոգածություն բերել՝ ի սեր հայրենի երկրի, հոգեւոր եւ ազգային մեր կյանքի առաջընթացի:

Միաձնաւէջ Սրբութիւն Սրբոց Մայր Տաճարից աղոթք բարձրացնելով առ Բարձրյալն Աստված՝ հայցում ենք, որ երկնային շնորհների ու օրհնության ներքո խաղաղ ու բարօր ապրի համայն մեր ժողովուրդը միշտ ուրախ ու հոգենորոգ իր ազատ կյանքի նոր հաղթանակների ու ձեռքբերումների պարծանքով:

---

[1] «Էջմիածին», 2010 Թ, էջ 3:



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ (9 ՄԱՅԻՍԻ, 2011 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք հղում համայն հավատավոր Մեր ժողովրդին՝ Հաղթանակի եւ խաղաղության տոնի առիթով:

Մայիսի 9-ը, որ մեր կյանքում նշանավորվում է Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան ազատամարտում մեր ժողովրդի հաղթանակներով, Հայրենիքի պաշտպանության պանծալի խորհուրդն ունի մեզ համար:

Երկրորդ համաշխարհային պատերազմին մասնակցած քաջարի հայորդիք՝ նշանավոր զորահրամանատարներ ու արիասիրտ զինվորներ, անձնվիրումով ու հերոսաբար պայքարեցին հանուն աշխարհում խաղաղության հաստատման: Հայրենասեր ու քաջարի նույն ոգով մեր ժողովրդի զավակները ազատագրեցին Շուշին՝ մեծ հաղթությամբ պսակելով արցախյան ազատամարտը եւ ազատ ու անկախ ապրելու մեր ժողովրդի արդար իրավունքը:

Միածնի Իջման Սուրբ Սեղանի առջեւ գոհություն եւ փառաբանություն ենք առաքում Բարձրյալն Աստծուն, որ խաղաղ երկնակամարի ներքո պահպանում է մեր Հայրենիքը եւ քրիստոսասեր մեր ժողովրդին ողջ աշխարհում: Հայցում ենք, որպեսզի Ամենախնամ Տերը երկնային զորակցությամբ արդյունավորի հանուր Հայության ջանքերը՝ ի խնդիր ազգային եկեղեցական կյանքում նորանոր ձեռքբերումների, Հայրենի երկրի բարգավաճման եւ հավատքով պայծառ, գիտությամբ ու մշակույթով ծաղկուն գալիքի:

Բյուր աղոթք եւ օրհնություն Հայրենի մեր երկրի պաշտպանության համար նահատակված հայորդիների լույս հիշատակին:

Թող Հայրենիքի պաշտպանության պարծանքը միշտ փայլի մեր ժողովրդի հոգում: Եւ թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը, օրհնությունն ու խաղաղությունը լինեն մեզ հետ եւ բոլորի, այսօր եւ միշտ. ամեն:

---

[1] «Էջմիածին», 2011, Ե, էջ 8:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(28 ՄԱՅԻՍԻ, 2011 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում հավատավոր մեր ժողովրդին եւ շնորհավորում Հանրապետության օրվա տոնական առիթով:


Հարյուրամյակների ընդմիջումից հետո, կոտորածներ ու ցեղասպանություն կրած հայ ժողովուրդը հերոսական մաքառումով, իր հարուցյալ կյանքի հավատով 1918 թվականին վերստին կերտեց հայոց պետականությունը: Անկախացյալ հայրենի հողի վրա դարերի ոգորումից հետո կրկին ծածանվեց մեր պետականության դրոշը:

Այսօր, գոհություն Աստծո, մեր Հայրենիքի ազատ ու խաղաղ եզերքներում մեր ժողովուրդը ջանքեր է բերում կյանքի կոչելու իր հույսերն ու ձեռքբերումները՝ կառուցելու չեն ու բարօր երկիր եւ վերածնված Հայրենիքի չուրջ համախմբված պահպանելու, զորացնելու եւ պայծառացնելու իր աշխարհասփյուռ ազգային կյանքը:

Աղոթում ենք առ Աստված, որ չարունակական հաջողություններով ուղեկցվեն Հայրենիքի բարգավաճման համար ներդրվող բարի ջանքերը, եւ աստվածասեր, ստեղծագործ Մեր ժողովուրդը խաղաղության մեջ կերտի իր լուսավոր ապագան:

---

[1] «Էջմիածին», 2011, Ե, էջ 8:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԸՆԴԼԱՅՆՎԱԾ ՆԻՍՏԻՆ

(30 ՄԱՅԻՍԻ, 2011 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ,

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս Արամ Ա կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկո,

Հանճնաժողովի հարգարժա՛ն անդամներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք բերում Ձեզ եւ ողջունում այս հավաքի առիթով: Ողջունում ենք հանճնաժողով կազմելու Հայաստանի Հանրապետության նախագահի կարեւոր այս նախաձեռնությունը, որը պիտի իրականացնի նախապատրաստական աշխատանքները՝ Հայրենիքում եւ Սփյուռքում արժանիորեն նշելու համար Հայոց ցեղասպանության 100-ամյակը:

Հանճնաժողովը իր կազմով ներկայացնում է այսօր վերածնված կյանքը աշխարհասփյուռ մեր ժողովրդի, որ գալիքին նայում է հույսերով, լավատեսությամբ, իրատեսական ծրագրերով, որոնք խարսխված են իր ձեռքբերումների, նպատակների, նախանձախնդրության ու հանճնառությունների պատրաստակամության հիմերի վրա:

Անցած 100 տարիների ընթացքում, հակառակ մարդկային եւ նյութական կորուստների, կրած զոհողությունների, որտեղ էլ հաստատվեց մեր ժողովուրդը, իր աշխատանքով, ջանք ու վաստակով նոր կյանք կառուցեց, հասավ հաջողությունների, դիրքի, գովարժան ճանաչման: Այս գնահատականն է նախ եւ առաջ վեր հառնում մեր առջեւ մեկ դար անց, որը պիտի հպարտություն եւ խրախույս դառնա մեր ժողովրդի համար ու նաեւ անդրադարձ՝ պահպանելու եւ զորացնելու

[1] «Էջմիածին», 2011, Ե, էջ 9:

այն հոգեւոր ուժը, որով ապրել ու արարել է այդչափ կորուստներից հետո, այդչափ դժվարություններուն առջեւ: Միայն Աստծուն է հայտնի, թե որքան ջանք, նվիրում, համբերություն է պահանջվել, որպեսզի այսօր մեր ժողովուրդը կարողանա հաստատել, որ նույն 20-րդ դարը, որ սկսվեց իր դեմ գործված Ցեղասպանությամբ, ավարտվեց իր անկախ պետականության վերահաստատմամբ եւ Արցախի ազատագրմամբ: Այս հուսառատ իրականությունը մեր ձեռքբերումների հաջորդ կարեւոր հանգրվանն է, որով թեւակոխել ենք 21-րդ դար եւ պիտի կարող եւ պատրաստ լինենք նոր հաղթանակների:


Այսօր, սիրելինե՛ր, աշխարհը մեծ վերափոխումներ է ապրում, նաեւ մարդու եւ ազգերի իրավունքների կարեւորման ուղղությամբ: Վերջին տասնամյակների ընթացքում բազում երկրներ, պետական կառույցներ եւ կրոնական ու հասարակական կազմակերպություններ ճանաչեցին Հայոց ցեղասպանությունը՝ համոզումով, որ հայ ժողովրդի նկատմամբ արդարության վերականգնումը նույնպես էական քայլ է ավելի արդար ու խաղաղ աշխարհի կառուցման ընթացքներում: Ցեղասպանության ճանաչման ու դատապարտման այս գործընթացում մեր ժողովուրդը նույնպես չատ ջանք է ներդրել ու պիտի չարունակի իր պայքարը, որ այն գտնի միջազգային համընդհանուր ճանաչում:

Մեզ բոլորիս քաջալերում է իրողությունը, որ ներկայիս Հայրենիք եւ Սփյուռք կապերի ամրապնդմամբ առավել արդյունավոր են Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման խնդիրները քննարկելու եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի ջանքերը համախմբելու քայլերն ու նախաձեռնությունները, որոնցից է այս Հանճնաժողովի կազմումն ու նրա գործունեությունը:

Կուզենայինք անդրադառնալ, որ Հայ Եկեղեցին իր նվիրապետական աթոռներով, իր բոլոր կառույցներով հետամուտ է մեր արդար դատի հաղթանակին,կարեւորելով, որ խաղաղ ու բարօր աշխարհի հույսը արդարության իրագործումն է: Դեռեւս 1920 թ. Գեւորգ Ե Սուրենյանց Ամենայն Հայոց կաթողիկոսը մտավորականության առաջարկով իր շրջաբերական գրությամբ հրահանգում է նշել ապրիլի 24-ը որպես Մեծ Եղեռնի զոհերի հիշատակի օր: Տարիներ անց Վազգեն Ա Հայրապետը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում կանգնեցնում է Ցեղասպանության զոհերին նվիրված առաջին հուշարձանը Հայաստանում: 2000 թ. հանձին Հռոմի Հովհաննես Պողոս Բ երանաշնորհ Սրբազան քահանայապետի՝ Վատիկանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Այս տարի եւս Եկեղեցիների Համաշխարհային Խորհուրդը

եւ Եվրոպական Եկեղեցիների Կոնֆերանսը, իրենց զորակցությունը հայտնելով Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն, հանդես եկան համատեղ հայտարարությամբ՝ կոչ անելով բոլոր անդամ Եկեղեցիներին Զատկական ուղերձներում վկայակոչելու Հայոց Մեծ Եղեռնի 1.5 միլիոն անմեղ զոհերի հիշատակը:

Հանճնաժողովի սիրելի՛ անդամներ, հաջողություն մաղթելով մեր աշխատանքներին, աղոթք ենք մատուցում Հայոց ցեղասպանության զոհերի անմար հիշատակին եւ հայցում, որ Տերը երկնային հավիտենական երանության մեջ պահի նրանց արդար, անմահ հոգիները: Թող Բարձրյալի օրհնությունը լինի աշխարհասփյուռ մեր ժողովրդի վրա ու խաղաղության երկնային չնորհները եւ սերը մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի բաշխվեն աշխարհին այսօր եւ միշտ. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ԵՐԵՎԱՆԻ Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ,
21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2011 Թ.)[1]

Լեր հաւատարիմ..., եւ տաց քեզ պսակն կենաց:
(Յայտ. Բ 10)

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ ի Հայաստան եւ ի Սփիւռս,

Հայաստանի Հանրապետութեան անկախութեան 20-րդ տարեդարձի տօնական խնդութեամբ այս սուրբ տաճարում այսօր Հայաստանի նախագահ տիար Սերժ Սարգսեանի եւ Արցախի նախագահ տիար Բակօ Սահակեանի, Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի, հայոց պետական աւագանու, հոգեւոր հայրերի, դիւանագիտական առաքելութիւնների ներկայացուցիչների եւ ձեզ հետ կատարեցինք Հանրապետական մաղթանք եւ միասնաբար աղօթք բարձրացրեցինք հայրենի մեր պետութեան ամրութեան ու հաստատունութեան, խաղաղութեան ու բարօրութեան համար:

Անկախ պետականութեան վերականգնումը մեր ազգային կեանքի ամենամեծ իրադարձութիւնն է, որը նոր յոյսեր է բերել մեզ եւ նոր հորիզոններ պարզել մեր առաջ: Այսօր առ Աստուած գոհութեան, հպարտութեան, երջանկութեան զգացումներն են մեր հոգիներում: Երջանիկ ենք, այո՛, քանզի հայոց պետականութեան վերականգնման այս օրհնեալ օրը շատ սերունդներ են երազել, այս օրուայ համար մեր ժողովրդի մեծանուն շատ զաւակներ են ջանք ու նուիրում ներդրել եւ շատերն իրենց կեանքը ընծայաբերել: Երջանիկ ենք նաեւ մեր պապերի ու հայրերի փոխարէն, ովքեր վառ պահեցին ու սերնդեսերունդ փոխանցեցին հայոց անկախ պետականութեան սէրն ու ձգտումը: Եր-

[1] «Էջմիածին», 2011, Թ, էջ 9:

ջանիկ ենք համոզումով, որ հայոց պետականութեան դրօշի ներքոյ մեր ժողովուրդը իր Հայրենիքը պիտի դարձնի երկնային օրհնութեամբ լի երկիր դրախտավայր, որը լինի միշտ սիւնն ու պատուարը աշխարհասփիւռ հայ կեանքի, մեր ինքնութեան արմատն ու ակունքը եւ ճգող ուժն ու առանցքը Արարատի շուրջ ազգիս վերախմբման:

Երկար ու դժուարին եղաւ մեր անկախ պետականութեան վերականգնման ուղին: Դարեր շարունակ զրկուած լինելով հայրենի պետականութիւնից՝ մեր ժողովուրդը կրել է հալածանք, տեսել աւեր ու կողոպուտ, ենթարկուել ցեղասպանութեան, հայրենազուրկ ու աշխարհասփիւռ եղել: Հայրենիքի փոքրիկ մի հատուածում, որը մաս կազմեց Խորհրդային Միութեան, մեր ժողովուրդը գտաւ փրկութիւն, իր կեանքը կառուցելու, իր մշակոյթը զարգացնելու ապահովութիւն, բայց նաեւ ապրեց մորմոքը փլուզուած ու փակուած եկեղեցիների, մոռացաւ աղօթքն ու շարականը, ապրեց անազատ եւ կրեց նեղութիւնները բռնութեան ու աքսորի: Այս փորձութիւններին դիմակայելու համար գերագոյն ջանքեր եւ ուժեր գործադրեց մեր ժողովուրդը, պահպանեց յոյսն ու լաւատեսութիւնը ապաւինելով Աստծուն, Ով պատգամում է՝ եղիր հաւատարիմ, եւ Ես քեզ կեանքի պսակը պիտի տամ:

Մեր ժողովրդի համար պետականութեան կորստից ի վեր միշտ առաջնային մնաց վերահաստատումը հայրենի պետութեան ազատ ու անկախ կեանքի, որի անվերապահ սիրով ծնունդ առան Արցախի ազատագրութեան եւ Հայաստանի անկախութեան յաղթանակները: Արցախահայութեան օրինական որոշումը՝ միանալու Հայաստանին, ինչպէս սպասուած կայծ, վերարթնացրեց արդարութիւնը վերականգնելու յոյսերը մեր ժողովրդի, որը ստիպուած եղանք պաշտպանել զէնքով: Ոչինչ չկարողացաւ ընկճել մեր ժողովրդին: Դիմագրաւեցինք մեզ պարտադրուած պատերազմի, շրջափակման, տնտեսական փլուզումների բոլոր դժուարութիւնները, որոնց համընթաց նորահաստատ մեր պետութեան կառոյցներն ամրացան, տնտեսութիւնն ու հասարակական կեանքը վերակառուցուեցին, մեծագոյն ջանքեր գործադրուեցին երկրի անվտանգութիւնն ու խաղաղութիւնն ամրապնդելու համար: Այդ պայքարում եւ պետականաշինութեան դժուարին ընթացքներում զօրացաւ մեր ժողովուրդը, հասունացաւ պատասխանատուութիւն ստանձնելու կամքի եւ փորձառութեան մէջ՝ արժանապատուօրէն ու արիաբար կրելով կորուստների ցաւը: Այո՛, դիւրին չտրուեցին յաղթանակները. ունեցանք նաեւ ներքին ցնցումներ: Այսօր էլ քիչ չեն մեր դժուարութիւնները,

քիչ չեն տնտեսական, քաղաքական, ընկերային կեանքի խնդիրները, որոնք մեր ժողովուրդը դիմագրաւում է հայրենի պետութեան հանդէպ պատասխանատուութեան, մեծ նուիրումի, հաւատի ու լաւատեսութեան նոյն ոգով: Սիրելինե՛ր, մենք կանգնած ենք մեր ժողովրդի համար մեծագոյն հրամայականների առջեւ. կայուն դարձնել մեր երկրի խաղաղութիւնը, յաղթանակի առաջնորդել Հայոց ցեղասպանութեան մեր արդար դատը եւ Արցախի ազատ ապրելու իրաւունքի միջազգայնօրէն ճանաչումը:

Նոր դար ենք մտել ազգային մեր այս իղձերը իրականութիւն դարձնելու հաւատով, որի հիմքը մեր հայրենի անկախ պետականութիւնն է: Ազատ ու անկախ Հայրենիքը մեծ փոփոխութիւն եւ տեղաշարժեր է բերել համազգային մեր կեանքում, միաւորել ու կենսաւորել է մեր ժողովրդի ուժերը, ջանքերն ու հնարաւորութիւնները: Անկախ պետականութեան պայմաններում կեանքի են կոչուել եւ իրագործուում են համազգային ծրագրեր: Հայրենիքով զօրացած Սփիւռքի մեր զաւակները աւելիով մասնակից են մեր երկրի չէնացմանն ու զօրացմանը: Հայրենի իշխանութեան եւ համայն մեր ժողովրդի ջանքերով մեր երկիրը իր տեղն ու հեղինակութիւնն է ձեռք բերում միջազգային ասպարէզում, մասնակից՝ պետութիւնների ու ազգերի ջանքերին աշխարհում խաղաղութեան ու բարօրութեան հաստատման համար: Խաղաղ են եւ պաշտպանուած մեր երկրի սահմանները քաջարի ու նուիրեալ ծառայութեամբ յաղթական, հզօր Հայոց բանակի: Կեանք է մտնում անկախութեան սերունդը՝ սնուած եւ հասունացած Հայոց պետականութեանը ծնունդ տուած այն արժէքներով ու այն հաւատով, որոնցով պիտի նոր յաղթանակներ պարգեւի Հայրենի մեր երկրին եւ համայն հայոց կեանքին: Յիրաւի, Հայրենիքով համախմբուած՝ իրական են մեր գալիքի լուսաւոր հեռանկարները:

Սիրելի՛ հաւատաւոր ժողովուրդ, մեր հայրերի Աստծուն, ինքներս մեզ, հերոսական մեր հոգուն, մեր տեսիլքին հաւատարիմ շարունակենք ապրել ու գործել: Հայրենի մեր պետականութեան արեւը բարձրացել է: Այն, ինչ պատմութիւնը յաճախ մերժել է մեզ՝ խաղաղութիւն, արդարութիւն, իրաւունք, կեանքի խնդութիւն, մեր հոգում պիտի ծաղկեն: Գոտեպնդուենք արիութեամբ, սիրով, միաբանութեամբ ու լաւատեսութեամբ, բարեխնամ երկիր կառուցենք, չէն ու զարգացող, հաւատքով պայծառ երկիր, որտեղ արգասաւորուեն մարդու հանդէպ հարգանքն ու խնամքը: Աստուածայաճոյ, մարդասէր, բարեսէր երկիր կառուցենք՝ իբրեւ քրիստոնեայ ժողովուրդ, իբրեւ հնագոյն պետու-

թիւն ու մշակոյթ կերտած ժողովուրդ, որի պատմութիւնը ընթացել է ազատութեան ու պետական անկախութեան վերականգնման համար մղուած պայքարում: Հզօրացնենք մեր Հայրենիքը՝ հայոց բնաշխարհիկ երկիրը, որ լինի ազգի հաւաքականութեան, ազգային մտածողութեան ու հոգեւոր ներուժի ակունքն ու հենարանը եւ ազգային իղձերի կենսագործողը: Այս տեսլականը, նպատակներն ու ձգտումները թող առաջնորդեն մեզ եւ ուղղորդեն մեր քայլերը, որպէսզի այսօր մենք եւ վաղը մեր զաւակները կարողանանք անվտանգ պահպանել հայրենի մեր երկիրը, զարթօնքով լեցուն հայ կեանքը եւ զօրաւոր՝ հայի աղօթքը, որ Աստուած պարգեւի մեզ յաղթութեան նորանոր պսակներ՝ համաձայն Իր խօսքի՝ եղիր հաւատարիմ, եւ Ես քեզ կեանքի պսակը պիտի տամ:

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, Անկախութեան պանծալի տօնի առիթով բերկրալի սրտով չնորհաւորում ենք ձեզ ի սփիւռս աշխարհի, հայոց պետական աւագանուն, Հայաստանի Հանրապետութեան նախագահ տիար Սերժ Սարգսեանին եւ բերում Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնութիւնը: Հայ Եկեղեցին պատմութեան ողջ ընթացքում, հաւատարիմ իր կոչման, զօրավիգ է եղել հայոց պետականութեանը, իր ամեն կարելիութեամբ զօրավիգ է նաեւ այսօր եւ լինելու է միշտ՝ ի սէր հայոց փառքի եւ յարատեւութեան:

Աղօթենք, սիրելինե՛ր, խոնարհում բերելով Հայրենիքի համար զոհուած հերոսների անմահ յիշատակի առջեւ եւ հայցենք, որ Աստուած Իր Սուրբ Աջի հովանու ներքոյ խաղաղ պահպանի մեր Հայրենիքը եւ անսասան՝ հայրենի մերպատականութիւնը, քաջարի ոգին եւ յաղթ բազուկը հայոց բանակի, օրհնի մեր ժողովրդին, հոգեւոր դասին եւ հայրենի իշխանաւորներին եւ առաջնորդի դէպի ոռոգեալ, բարեբեր ափեր ու մեր յոյսերի իրագործման առաւօտներ այսօր եւ յաւիտեանս. ամէն:

«Շնորհք ընդ ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ մերմէ եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ» (Ա Կորնթ. Ա 3):



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(9 ՄԱՅԻՍԻ, 2012 Թ.)[1]

Սիրելի՛ հավատավոր զավակներ մեր ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս:

Համայն հայության հոգեւոր օրրան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում Ձեզ մայիսի 9-ի՝ Հաղթանակի ու Խաղաղության օրվա բերկրալի առիթով:

Այսօր նշվում է ֆաշիզմի դեմ տարած հաղթանակի օրը, որը տոն է խաղաղության, չարիքի ու ատելության դեմ բարու եւ եղբայրսիրության հաղթանակի: Այս տոնը կրկնակի ուրախությամբ է լցնում սիրտը յուրաքանչյուր հայորդու, քանզի քսան տարիներ առաջ այս օրը՝ մայիսի 9-ին, ազատագրվեց հայրենի մեր Արցախ աշխարհի սիրտն հանդիսացող Շուշին: Շուշիի ազատագրումը դարձավ արցախաբնակ մեր հայորդիների ազատության եւ ինքնորոշման աստվածադիր իրավունքի պաշտպանության հաղթական պայքարի առանցքային հանգրվաններից մեկը՝ ոսկե տառերով գրվելով ազգային մեր արդի պատմության տարեգրության մեջ:

Հոբելյանական այս օրը խոնարհումով ենք հիշում Մեծ Հայրենականի եւ Արցախյան հերոսամարտի տարիներին անձնուրացորեն սեփական կյանքը Հայրենիքին զոհաբերած մեր քաջազուն զավակներին՝ հայցելով, որ Բարեգութ Տերը հանգստություն պարգեւի նրանց հոգիներին ու հանդչեցնի Իր լույս օթեւանների մեջ:


Քրիստոսահաստատ Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առաջ ի խորոց սրտի աղոթում ենք, որ Ամենակեցույցն Աստված հարատեւ ու անսասան պահի խաղաղությունն արարչաստեղծ աշխարհում, ամ-

---

[1] «Էջմիածին», 2012, Ե, էջ 8:

բացնի եղբայրութիւնը, սերն ու հանդուրժողականութիւնը մարդկանց սրտերում եւ մաղթում ենք, որ մարդկային միտքը, տաղանդն ու կարողութիւնները ծառայեն միայն բարի նպատակների ու հանուր մարդկութեան բարօր կեանքի ու առաջընթացի համար նպաստող ձեռնարկներին՝ իրականութիւն դարձնելով Եսայի մարգարեի կանխասացութիւնը, թե՝ Տերն այնպես պիտի փոխի մարդկանց սրտերը, որ «Նրանք իրենց սուսերներից խոփեր պիտի ձուլեն, եւ իրենց սվիններից՝ մանգաղներ. ազգ ազգի վրա սուր չպիտի բարձրացնի, եւ նրանք այլեւս չեն սովորելու պատերազմել» (Եսայի Բ. 4):

Թող Տերը երկնառաք օրհնութեամբ՝ Ամենախնամ Իր աջի հովանու ներքո պահի եւ պահպանի Հայաստան եւ Արցախ Հայրենի մեր երկիրը եւ աշխարհասփյուռ ազգս Հայոց:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(28 ՄԱՅԻՍԻ, 2012 Թ.)[1]

Քրիստոսահիմն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հանրապետության օրվա տոնական առիթով ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհավորանքներն ենք բերում մեր ժողովրդի զավակներին՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս:


Այսօր տոնում ենք նվիրական հիշատակը Հայոց պետականության վերականգնման, որն իրականություն դարձավ բազմադարյա դադարից հետո: Իննսունչորս տարիներ առաջ մայիսյան լուսավոր այս օրը մեր հայրերը հռչակեցին Հայաստանի առաջին հանրապետությունը, եւ հայրենի երկնակամարում ծածանվեց հայոց եռագույնը՝ որպես խորհրդանիշ ազատ եւ անկախ ապրելու մեր ժողովրդի երազանքի իրականացման:

Գոհություն Երկնավորին, Մայիսյան հերոսամարտերի եւ Հայաստանի առաջին հանրապետության հռչակման հիշատակներն այսօր ոգեշնչում են մեր ժողովրդին հայրենի պետականությունը զորացնելու եւ իր լուսավոր գալիքը կառուցելու հույսերով:

Մայր Տաճարի Իջման Սուրբ Սեղանի առաջ ի խորոց սրտի աղոթում ենք, որ Ամենակարող Աստված երկնառաք օրհնության եւ հարատեւ խաղաղության մեջ պահի Հայրենի մեր երկիրը եւ հավատավոր Մեր զավակներին՝ պարգեւելով կայուն եւ ապահով առաջընթաց:

---

[1] «Էջմիածին», 2012, Ե, էջ 7:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2012 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրական սիրով Մեր օրհնությունն ու չնորհավորանքներն ենք բերում հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ մեր զավակներին Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա առիթով:

Անկախության հռչակմամբ մեր ժողովուրդն ընտրեց ազատ ապրելու եւ բարեչեն իր կյանքը կառուցելու դժվարին, բայց եւ արժանապատիվ ճանապարհը: Անկախության պատմությունը նորագույն մեր տարեգրության հրաշապատումն է՝ հյուսված մեր ժողովրդի արիասիրտ զավակների հավատքով ու տեսիլքով:

Անկախությունը Աստծո պարգեւն է ի դիմաց այն զրկանքների ու կորուստների, որոնք մենք կրեցինք Ցեղասպանության եւ խորհրդային աստվածամերժության հալածանքների տարիներին:

Այսօր մենք գոհություն եւ փառք ենք մատուցում Աստծուն, որ անկախության քսանմեկ տարիների ընթացքին արձանագրել ենք բազում ձեռքբերումներ ու հաջողություններ՝ ունենալով նաեւ դժվարություններ ու ճախողումներ:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, հավատում ենք, որ չնայած առկա մարտահրավերներին, պիտի չարունակենք հետեւողական ջանքերով, աննահանջ ոգով զորացնել հայոց պետականությունը՝ հերոսական նոր էջեր հավելելով մեր ժողովրդի տարեգրությանը:

Աղոթում ենք, որ Աստված Իր Աջի հովանու ներքո ամուր ու անսասան պահի մեր պետականությունը, պահպանի աշխարհասփյուռ ազգս հայոց՝ արդյունավորելով ի սեր հայրենյաց մեր բոլոր ջանքերը:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍ

---

[1] «Էջմիածին», 2012, Թ, էջ 9:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ՏԻԱՐ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԵՐԴՄՆԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(ԱՊՐԻԼ, 2013 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Հարգարժա՛ն նախագահ Ազգային Ժողովի,

Բարձրաչնո՛րհ եւ գերաչնորհ հոգեւոր հայրեր,

Պատուարժա՛ն պետական այրեր, դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչներ,

Սիրելի՛ հյուրեր եւ ներկաներ:

Հայրենիքի լուսաճեմ կյանքի աղոթքն ու մաղթանքը մեր շուրթերին՝ ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Ձեզ Հայաստանի Հանրապետության նախագահի երդմնակալության առիթով:

Փառք եւ գոհություն ենք մատուցում Երկնավորին մեր ժողովրդին պարգեւած անպատում չնորհների համար, որոնցով ապրել, ստեղծել ու մաքառել է եւ այսօր աննկուն ու լավատես՝ հայրենյաց սիրով կերտում է իր ազատ կյանքի նոր օրը:

Անկախ պետականության վերականգնումից ի վեր մեր երկիրը ահռելի դժվարություններ է հաղթահարել, վերակառուցումների ու բարեփոխումների ոչ դյուրին ճանապարհ անցել: Այս պահին գնահատանքով եւ աղոթքով ենք հիշում հայրենի անկախ պետականության հաստատման եւ կայացման գործին իրենց նվիրյալ ծառայությունը բերած ազգի բոլոր զավակներին: Պետականաշինության ընթացքներում Դուք, Հայաստանի Հանրապետության մեծարգո՛ նախագահ, ծանրագին ավանդ եք բերել՝ լինելով կերտողներից մեկը մեր պատմության այս հուսաբեր ժամանակաշրջանի: Ձեր նվիրյալ ծառայությունը

---

[1] «Էջմիածին», 2013, Դ, էջ 5:


Հայրենիքին ու ժողովրդին առաջնորդեց Ձեզ պետական ամենաբարձր պատասխանատվության: Նախագահի պաշտոնը հինգ տարիներ առաջ Դուք ստանձնեցիք երկրում ներքին լարվածության բարդ պայմաններում եւ, սակայն, աներեր կամքով եւ հաստատուն քայլերով ամենայն ջանք գործադրեցիք, որպեսզի պահպանվի կայունությունը եւ շարունակվեն բարեփոխումներն ու բնականոն զարգացման ընթացքը մեր Հայրենիքի: Ձեր նախագահության շրջանը եղավ պայքար եւ ծառայություն դժվարությունների եւ մարտահրավերների դիմագրավման, Լեռնային Ղարաբաղի հիմնահարցի խաղաղ եւ արդար կարգավորման, արտաքին քաղաքականության ոլորտում այլ պետությունների հետ հարաբերությունների ամրապնդման եւ գործակցության արդյունավորման:

Այսօր Վեհամոր Ավետարանի եւ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության վրա երդվելով՝ Դուք նորոգեցիք ծառայական Ձեր ուխտը ազգին եւ Հայրենիքին: Նախագահական նոր շրջան է սկսվում՝ որոշակի նոր պահանջներով ու ակնկալիքներով: Մեր երկրում նախորդ տարիներին արձանագրված դրական տեղաշարժերով ու բարի արդյունքներով հանդերձ՝ տակավին կենսական նշանակություն ունեցող եւ վճիռների կարոտ բազում խնդիրներ ու հարցեր կան, որոնք այսօր եւս պահանջում են Հայրենի իշխանությունների եւ համայն մեր ժողովրդի հետեւողական ջանքերը՝ պահպանելու համար մեր խաղաղ ու ապահով կյանքը եւ առաջընթացի հույսն ու հեռանկարը: Ամենքիս տեսիլքն է, որ մեր անկախ պետականության ուղին պարգեւի արգասիքներ չեն ու ծաղկուն կյանքի՝ բարօրությամբ ու բարեկարգությամբ լեցուն, զարգացող տնտեսությամբ, գիտությամբ ու մշակույթով: Նախագահի բարձր առաքելությամբ Դուք կոչված եք իրագործման առաջնորդելու այս տեսլականը: Անտարակույս է, որ ժողովրդի բարօրությունը, օրենքի եւ իրավունքի գերակայությունը, հոգեւոր-բարոյական արժեքներով հասարակական կյանքի առաջընթացը առավել ամրություն պիտի բերեն մեր երկրին, հեղինակություն՝ մեր պետության վարկին եւ առավել զորություն՝ մեր ազգային կյանքին: Մեր Եկեղեցին ինչպես միշտ իր զորակցությունն է բերելու Հայրենի պետությանը եւ Ձեզ՝ հայրենասէն ու ազգանվեր առաքելության իրականացման գործում:

Երդմնակալության այս առիթով Մեր հորդորն ենք ուղղում մեր ժողովրդին ի Հայրենիս եւ ի Սփյուռս՝ հայրենի իշխանությունների հետ միասնական ջանքեր գործադրել հանուն մեր Հայրենիքի եւ ազ-

գային մեր կյանքի պայծառութեան, մեր հոյսերի մարմնավորման: Միակամ ու միախորհուրդ ձգտենք ավելիով իրագործել այն, ինչ ազգի եւ հայրենի երկրի հանդեպ մեր նվիրական պարտքն ու պարտականութիւնն է: Առաքյալի խոսքի համաձայն՝ «հոգ տանենք միմյանց՝ սիրո եւ բարի գործերի հորդորելով» (Եբր. Ժ 24), որպեսզի օր օրի չենանա ու բարգավաճի մեր Հայրենիքը՝ այսօր եւ միշտ մնալով ամուր պատվարն ու զորութեան ակունքը աշխարհասփյուռ հայութեան:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված մեր Հայրենիքի անսասանութեան, մեր ժողովրդի խաղաղ ու երջանիկ կյանքի հայցով: Աղոթում ենք Ձեզ համար, մեծարգո՛ նախագահ, թող Բարձրյալի օրհնութիւնը եւ Սուրբ Հոգու առաջնորդութիւնը միշտ լինեն Ձեզ հետ, զորացնեն Ձեզ, պահպանեն հաստատուն ու վճռակամ՝ կյանքի կոչելու Ձեր եւ մեր ժողովրդի բարի սպասումներն ու հոյսերը: Թող Տերը օրհնի ազգս աշխարհասփյուռ, միշտ պահպանի Իր չնորհների մեջ՝ հավատքով հայցելու. «Տե՛ր Աստված մեր, առաջնորդիր մեզ եւ ուսուցանիր մեզ արդարութեամբ գնալ Քո ճանապարհներով, պահիր մեր կյանքը խաղաղութեան մեջ եւ մեր ընթացքը՝ Քեզ հաճելի. Ամեն» (ժամագիրք):



ԹՈՒՐՔԻԱՅԻՑ ՊԱՀԱՆՋՈՒՄ ԵՆՔ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼ ԲՌՆԱԳՐԱՒՎԱԾ ՀԱՅԿԱԿԱՆ ԵԿԵՂԵՑԻՆԵՐՆ ՈՒ ԵԿԵՂԵՑԱՊԱՏԿԱՆ ԿԱԼՎԱԾՔՆԵՐԸ

(24 ԱՊՐԻԼԻ, 2013 Թ.)[1]

2015 թ. հայ ժողովուրդը Հայաստանի Հանրապետութիւնում, Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւնում եւ ի սփյուռս աշխարհի նշելու է 100-րդ տարելիցը Օսմանյան Թուրքիայի կողմից կազմակերպված Հայոց ցեղասպանութեան:

1915 թ. Ցեղասպանութեանը զոհ գնացին ավելի քան մեկուկես միլիոն հայեր, աքսորի ճանապարհներին վերապրած հայերը ապաստան գտան Արեւելեայն Հայաստանում՝ ներկայիս Հայաստանի Հանրապետութիւնում, Սիրիայում, Լիբանանում, արաբական այլ երկրներում ու աշխարհի տարբեր պետութիւններում:

Անհատական սեփական կալվածքների հետ Օսմանյան կայսրութեան ենթակայութեան ներքո գտնվող Արեւմտեան Հայաստանում եւ Կիլիկիայում, ինչպես եւ Թուրքիայի այլ շրջաններում ապրող հայութիւնը կորցրեց նաեւ եկեղեցապատկան կալվածքներ՝ եկեղեցիներ, սրբատեղիներ, վանքեր, կրոնական, կրթական ու բարեսիրական կենտրոններ, մշակութային ու կրոնական մեծ արժէք ունեցող իրեր՝ խաչքարեր, ձեռագրեր, սրբանկարներ եւ այլն: Ցեղասպանութեան ենթարկված ու բռնի միջոցներով տեղահանված հայ ժողովրդին պատկանող բոլոր կալվածքները սեփականացվեցին Թուրքիո պետութեան կողմից՝ «լքյալ կալվածքներ» անվան տակ:

Ցեղասպանութենից 98 տարիներ անց Թուրքիո ներկա պետութիւնը՝ որպես իրավահաջորդը Օսմանյան կայսրութեան, ոչ միայն մերժում է իր նախորդների ծրագրած ու իրագործած Ցեղասպանութիւնը, այլեւ շարունակում է իր հակահայ քաղաքականութիւնը՝ բռնագրավված պահելով հայ ժողովրդի կրոնական ու մշակութային արժէքները՝

---

[1] «Էջմիածին», 2013, Դ, էջ 7:

եկեղեցապատկան կալվածքներն ու իրերը: Հետեւաբար, կոչ ենք ուղղում Թուրքիո պետությանը եւ պահանջում.

1) ճանաչել Հայոց ցեղասպանությունը

2) ամբողջապես հատուցել հայ ժողովրդի կրած կորուստների եւ մարդկային ու ազգային ոտնահարված իրավունքների դիմաց

3) անհապաղ վերադարձնել հայ ժողովրդին՝ որպես իրավատիրոջ, հայկական եկեղեցիները, վանքերը, եկեղեցապատկան կալվածքները եւ հոգեւոր-մշակութային արժեքները:

Ազոթքով հիշելով Հայոց ցեղասպանության զոհերին՝ դատապարտում ենք ամեն բռնարարք՝ ուղղված աստվածապարգեւ կյանքի, մարդու արժանապատվության եւ մարդկության խաղաղ համակեցության դեմ, քանզի «Աստված խռովության Աստված չէ, այլ՝ խաղաղության» (Ա Կորնթ. ԺԴ 33), որ մարդկանց կոչել է սիրո, համերաշխության եւ գործակցության:


Երախտագիտությամբ ենք հիշում բոլոր ժողովուրդներին ու պետություններին, որոնք Ցեղասպանության օրերին ապաստան տվեցին տեղահանված հայերին եւ հոգատարություն ու եղբայրական սեր ցուցաբերեցին հայրենազրկված ու տարագրված հայերի հանդեպ:

Հայ ժողովուրդը հավետ երախտագետ է լինելու նաեւ այն բոլոր պետություններին, որոնք մարդասիրության եւ արդարության սկզբունքներով առաջնորդված՝ դատապարտել եւ պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը:

Հայոց ցեղասպանության հարյուրամյակի նախասեմին մեր բոլոր կարելիությունները ի գործ պիտի դնենք՝ միասնաբար իրականացնելու հայ ժողովրդի պահանջները՝ հանուն արդարության եւ հայության իրավունքների պաշտպանության:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ
ՀԱՅՈՑ

ԱՐԱՄ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ՄԵԾԻ ՏԱՆՆ
ԿԻԼԻԿԻՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(ՍԵՊՏԵՄԲԵՐ, 2013 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից համայն մեր ժողովրդին ի Հայաստան, Արցախ եւ ի Սփյուռս աշխարհի, ողջունում եւ մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում Հայաստանի Հանրապետության Անկախության օրվա տոնական առիթով:

Այսօր մեր պետականության վերականգնման պանծալի օրն է, որը խնդությամբ տոնախմբում ենք՝ հիշելով, որ այն ձեռք է բերվել սերունդների մաքառումի ու զոհողության գնով: Ապավինելով Աստծուն՝ մեր ժողովուրդը միշտ հուսաց անկախության այս նվիրական արշալույսը՝ իբրեւ պայման ու երաշխիք իր ազգային գարթոնքի:

Սիրելինե՛ր, մեր նոր պետականությունը դժվարին, բայց վերրնթաց ուղի է անցել: Այսօր էլ քիչ չեն հոգսերն ու մտահոգությունները, որոնք պիտի հաղթահարվեն մեր անխոնջ ջանքերով, նախանձախնդրությամբ, նվիրումով ու սիրով, որոնցով կերտել ենք մեր անկախ պետականությունը: Պիտի հոգանք ազատ Հայաստանի ամեն օրվա համար՝ հանուն մեր հայրենիքի կենսունակության եւ առաջընթացի, հանուն համայն հայության միացյալ եւ պայծառ ապագայի:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր Աջի ներքո խաղաղ պահպանի Հայաստանի Հանրապետությունը, օրհնի Մեր զավակներին՝ ապրելու եւ գործելու հանուն կայուն ու զարգացող մեր երկրի, հզոր ու պայծառ հայրենիքի:


Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 51:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(28 ՀՈՒՆՎԱՐԻ, 2014 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնէց, Քրիստոսահաստատ մեր նվիրական սրբավայրից, Հայոց բանակի օրվա առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու չնորհավորանքներն ենք բերում սիրեցյալ մեր ողջ ժողովրդին եւ քաջարի մեր բանակի զորաց ու զորականաց:

Մեր անկախ պետականության մեծ ձեռքբերումն է Հայոց բանակը, որն Աստծու օրհնությամբ մարտունակ ու զորեղ՝ արթուն պահպանում է ազատ, խաղաղ ու ստեղծարար կյանքը մեր Հայրենիքի: Հայոց բանակը մշտապես կրողն է եղել մեր ժողովրդի հավատավոր, ազատատենչ հոգու, որով մեր պատմության վճռական պահերին կերտել է իր հաղթանակները: Այսօր էլ մեր բանակի մարտիկները հերոսանում եւ իրենց կյանքն են ընծայում Հայրենիքին՝ դասվելով բոլոր ժամանակներում ի սեր Հայրենյաց մարտնչած ու նահատակված քաջերի կողքին: Այս տոնական օրը մենք հիշում ու մեծարում ենք հայ զենքի փառքը կերտած մեր պանծալի զինվորներին ու զորավարներին եւ անմահ մեր հերոսներին եւ բոլոր նրանց, ովքեր նվիրվեցին անկախ պետականության ստեղծման վեհ եւ նվիրական գործին:

Մաղթում ենք, որ Հայոց բանակի մարտիկները հոգու նվիրումով ու արիությամբ, նախանձախնդրորեն չարունակեն իրենց մշտարթուն ծառայությունը եւ բազմապատկեն Հայոց բանակի ձեռքբերումները՝ պաշտպանելով մեր երկիրը, մեր արժեքներն ու սրբություննները:


Թող Ամենակալ Տերը խաղաղություն չնորհի ողջ աշխարհին եւ Իր Ամենախնամ Աջի հովանին տարածյալ պահի Հայոց երկրի, զորաց ու զորականաց եւ ժողովրդի վրա:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի չնորհը, սերը եւ խաղաղությունը թող լինեն ամենքիս հետ: Ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

[1] «Էջմիածին», 2014, Ա, էջ 11:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ (9 ՄԱՅԻՍԻ, 2014 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք հղում բարեպաշտ Մեր ժողովրդին՝ մայիսի 9-ի պանծալի հաղթանակների առիթով: Մայիսի 9-ը, որ մեր կյանքում նշանավորվում է Հայրենական մեծ պատերազմում եւ Արցախյան ազատամարտում մեր ժողովրդի հաղթանակներով, մարդկանց եւ ազգերի խաղաղ ու ազատ ապրելու աստվածաշնորհ իրավունքի եւ Հայրենիքի պաշտպանության նվիրական խորհուրդն ունի մեզ համար:

Աչխարհասփյուռ մեր ժողովրդի զավակները Հայրենական մեծ պատերազմի բոլոր ռազմաճակատներում հերոսական մասնակցություն են ունեցել բռնության դեմ պայքարում եւ հաղթանակի ճեռքբերման գործում:

Հայրենասեր ու քաջարի նույն ոգով հայորդիք ազատագրեցին Շուշին՝ մեծ հաղթությամբ պսակելով Արցախյան ազատամարտը: Լի ենք հավատով՝ Աստծու զորակցությամբ հաղթանակով պիտի պսակվի նաեւ արցախահայության ազատ ու անկախ ապրելու արդար իրավունքը:

Մեր աղոթքն ենք վերառաքում առ Աստված, որ երկնային լուսեղեն հարկերում խաղաղություն շնորհի հանուն հայրենյաց նահատակված մեր ժողովրդի հերոս զավակների հոգիներին: Հայցում ենք, որ մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսի շնորհի ներքո զորանան խաղաղության ուղիներն աչխարհում:


Թող Տերը խաղաղ ու չեն պահի մեր Հայրենիքը, մեր ժողովրդին՝ ի սփյուռս աչխարհի:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

[1] «Էջմիածին», 2014, Ե, էջ 11:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՆ

(27 ՄԱՅԻՍԻ, 2014 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Մեծարգո՛ նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության,

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո,

Ամենապատի՛ւ պատրիարք Հայ Կաթողիկե Եկեղեցու,

Հանձնաժողովի հարգարժա՛ն անդամներ եւ սիրելի ներկաներ:

Գոհունակ սրտով ողջունում եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք բերում ձեզ այս համախմբումի առիթով: Մեկտեղվել ենք միավորելու մեր ջանքերը ի խնդիր Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցի ծրագրերի քննարկման եւ միջոցառումների կազմակերպման:

Նախախնամական է, որ այս համախմբումը տեղի է ունենում այն օրերին, երբ դեռ հնչում է մեր Տիրոջ Հարության հաղթական ավետիսը, երբ ի սփյուռս աշխարհի նշում ենք Սարդարապատի, Բաշ Ապարանի ու Ղարաքիլիսայի մարտերում մեր ժողովրդի հաղթանակները եւ Հայոց Առաջին հանրապետության հռչակումը: Այս առիթով չնորհավորում ենք ամենքիս եւ համայն մեր ժողովրդին՝ հիշելով Գեւորգ Ե Սուրենյանց մեր երանաշնորհ Հայրապետի անմահ խոսքը մայիսյան հերոսամարտերի նախօրեին. «Ես միշտ էլ հավատացել եմ իմ ժողովրդի ոգուն: Ես գիտեմ նրա անցած ճանապարհի դառնությունները: Ես համոզված եմ նաեւ, որ ազգն իմ Հայոց դեռ չի ասել իր վերջին խոսքը: Եվ խոսքն այդ պիտի լինի հաղթակա՛ն»:

Աստծո ողորմած կամքով Հայոց ցեղասպանության 100-ամյակը մեր ժողովուրդը դիմավորում է վերականգնված հայրենի պետակա-

[1] «Էջմիածին», 2014, Ե, էջ 12:

նուիրեալ, Հայաստանում եւ Արցախում իր ազատ, նոր կեանքի 20-ամեայ ձեռքբերումներով եւ իր իրաւունքները պաշտպանելու իրատեսական հեռանկարներով:

Մեր դատը դեռեւս չի հաղթանակել, սակայն անարդիւնք չմնացին մեր ջանքերը: Հայոց ցեղասպանութիւնը դատապարտած առանձին մարդասէր անձանց այսօր փոխարինում են պետութիւններ, եկեղեցիներ, միջազգային ու եկեղեցական կազմակերպութիւններ: Այսօր Հայոց ցեղասպանութեան ճանաչման մեր ժողովրդի արդար պահանջը թեեւ ոչ անհրաժեշտ հզորութեամբ, բայց բազմաձայն դառնալու ուժականութեամբ արձագանք է գտնում նաեւ Թուրքիայում: Այս ամենը մեր ժողովուրդը մեկդարեայ պայքարով է ձեռք բերել, միասնակ տոկացել, համբերել բազում նեղութիւնների, հանձն առել զոհողութիւններ, դրսեւորել նվիրում, հավատքի զերագոյն ուժ եւ գործադրել մեծագոյն ջանքեր՝ իր կեանքը վերընձյուղելու եւ բարձրացնելու, իր արդար դատը աշխարհին լսելի դարձնելու համար:

100-ամեայ տարելիցը պիտի դարձնենք արժեւորումը մեր ժողովրդի մեկդարեայ հերոսական ուղու, առիթ ու խրախուսյ՝ մեր ազգային ինքնութեան զորացման, մեր Հայրենիքի չուրջ համախմբման, միասնականութեան ոգու ամրապնդման, մեր կեանքը հավատքի, աստվածային պատվիրանների ուղիներում հավատարիմ պահպանելու:

Մենք ապրում ենք պատմական բարդ ժամանակահատվածում, երբ միջազգային հանրութեան մեջ ավելի է խորանում երկակի չափանիշների կիրառումը, որը շատ հաճախ պայմանավորված է ոչ թե արդարութեան բարձր գգացումով, այլ տնտեսական կամ աշխարհաքաղաքական շահերով ու նախապատվութիւններով: Այսպիսի իրավիճակում մեզանից պահանջվում է համախմբութիւն՝ ուժերի եւ միջոցների համադրմամբ ու միասնական տեսիլքով հասնելու մեր արդար դատի հաղթանակին, պահանջատիրութեան իրավունքի իրականացմանը, Ցեղասպանութեան հետեւանքների վերացմանը:


Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին նվիրապետական իր աթոռներով չարունակելու է բոլոր միջոցներով ու հնարավորութիւններով միջազգային եւ միջեկեղեցական հարթակներում իր ձայնը բարձրացնել ի խնդիր Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ ուրացման քաղաքականութեան դատապարտման, քաղաքականութիւն, որի հետեւանք է նաեւ Արցախի ժողովրդի ազատ եւ ինքնուրոյն ապրելու իրավունքի ժխտումը, ինչպես եւ՝ Հայաստանի Հանրապետութեան չրջափակումը, որը իրավամբ ընկալվում եւ բնորոշվում է որպես չհայ-

տարարված պատերազմ մեր երկրի ու ժողովրդի դեմ եւ որի հանդեպ լուռ է միջազգային հանրությունը:

Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին՝ 2015 թ., մեր եկեղեցին իրականացնելու է մեծ Եղեռնի նահատակների սրբադասումը՝ հռչակելով նաեւ նրանց հոգեւոր սխրանքի եւ հերոսության պատգամը, ինչպես նաեւ օրհնելու ենք սրբալույս մյուռոնը՝ որպես վկայություն Աստվածային չնորհի, մեր ժողովրդի վերածնյալ հարատեւ կյանքի, որպես հույս եւ լույս մեր ժողովրդին՝ ընթանալու դեպի նորանոր հաղթանակներ՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի սփյուռս աշխարհի:

Հայրապետիս աղոթքն է, որ Աստված օրհնի, օգնական եւ աջակից լինի մեր ժողովրդին՝ չարունակելու միասնական ջանքերը՝ հանուն Հայրենյաց զորացման ու առաջընթացի, մեր իրավունքների պաշտպանության, մեր հոգեւոր ու ազգային կյանքի պայծառության, կերտելու նոր լուսավոր ժամանակը մեր պատմության:

Թող մեր Տերը զորացնի եւ առաջնորդի մեզ՝ հաջողություններ պարգեւելով մեր հավաքի առաքելությանը:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ (28 ՄԱՅԻՍԻ, 2014 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրական սիրով Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ մեր զավակներին Հանրապետության օրվա առիթով:

1918 թվականին մեր ժողովուրդը մայիսյան հերոսամարտերում հոգին ի բուռն պաշտպանեց Հայրենի երկիրը եւ բարդ ու դժվարին իրավիճակի մեջ հաստատեց Հայաստանի առաջին հանրապետությունը: Պետականության վերականգնումն արգասիքն էր մեր ժողովրդի երկարամյա ազատագրական պայքարի, անկոտրում հավատքի եւ միասնականության ոգու:

Հանրապետության օրը հրավեր ու քաջալերություն է մեզ այսօր՝ ամենայն նախանձախնդրությամբ հոգալու մեր պետականության զորացման, մեր երկրի բարգավաճման, մեր ժողովրդի բարօրության եւ ազգային մեր իղձերի իրագործման համար:

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, հավատում ենք, որ, հակառակ առկա մարտահրավերներին, պիտի չարունակենք հետեւողական ջանքերով, աննահանջ ոգով կերտել Հայրենի պետականությամբ հիմնամուր մեր նոր կյանքը, երջանիկ ու պայծառ մեր գալիքը:

Աղոթում ենք, որ Աստված Իր Աջի հովանու ներքո անսասան պահի մեր պետականությունը, պահպանի աշխարհասփյուռ ազգս հայոց՝ արդյունավորելով ի սեր Հայրենյաց մեր բոլոր ջանքերը:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

---

[1] «Էջմիածին», 2014, Ե, էջ 14:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ, ՊԵՏԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՅԱՆԵՐԻ, ՀՀ ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՀԵՏ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՃԱՇԿԵՐՈՒԹԻ ԺԱՄԱՆԱԿ

(28 ՄԱՅԻՍԻ, 2014 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ,

Պատուարժա՛ն դեսպաններ եւ դիվանագիտական առաքելութեան ներկայացուցիչներ,

Պատուարժա՛ն պետական այրեր եւ սիրելի՛ ներկաներ:

Հանրապետութեան օրվա այս տոնական օրը ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք բերում ձեզ:

Այսօր մեր ժողովուրդը ոգեկոչում է 1918 թ., Առաջին համաշխարհային պատերազմի դժվարին ժամանակաշրջանում Արեւելեան Հայաստանի փոքրիկ մի հատուածի վրա Հայաստանի Հանրապետութեան հաստատման հիշատակները: Գերագոյն ջանքեր գործադրելով՝ մեր ժողովուրդը դիմակայեց ժամանակի քաղաքական թոհուբոհերին, մեր երկրում ստեղծված աղետալի իրավիճակներին եւ համախմբելով իր ուժերը՝ կարողացավ կանգնեցնել եւ ետ մղել թուրքական հարձակումը դեպի Երեւան ու Արեւելեան Հայաստանի շրջաններ:

Հայրենիքի համար անձնուրաց պայքարի եւ միասնութեան այդ օրինակը ծնունդ առավ յուրաքանչիւր հայի հոգուց: Ծանր իրավիճակի առջեւ հավատքով զինվելու, ոտքի կանգնելու, միաբանվելու կոչով ժողովրդին դիմեց Գեւորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսը՝ ինքը եւս մերժելով իր ապահովութիւնը եւ չլքելով Սուրբ Էջմիածինը: Ապավինած Աստծուն՝ մեր ժողովուրդը միայնակ պաշտպանեց վաղնջական իր Հայրենիքում ազատ ապրելու իր իրավունքը: Հաղթանակեց հավատքի, միասնութեան, հայրենասիրութեան, նվիրումի ազնվասիրտ ոգին,

---

[1] «Էջմիածին», 2014, Ե, էջ 15:

որն այսօր մենք կարեւորում ենք՝ նշելով Սարդարապատի, Ապարանի, Ղարաքիլիսայի հերոսամարտերի եւ Հանրապետության հաստատման հիշատակները: Այդ ոգին պիտի օգնի մեզ այսօր դիմակայելու մեր կյանքի դժվարությունները, հաղթահարելու մեր երկրի առջեւ ծառացած խնդիրներն ու հրամայականները:

Այսօր Մենք փառք ենք մատուցում Աստծուն, որ մեր ժողովուրդը միայնակ չէ արդար իր իրավունքների պաշտպանության գործում: Երկրներ ու ժողովուրդներ, միջազգային կառույցներ դատապարտում են Հայոց ցեղասպանությունը եւ ջանքեր բերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում մեր ժողովրդի ազատ ու անկախ ապրելու իրավունքի ճանաչման հարցում, որի համար, հանձին այստեղ ներկա դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների, Մենք վերստին գնահատանքի Մեր խոսքն ենք ուղղում մեր ժողովրդին աջակից երկրներին:


Այս տարի մարդկությունը պատերազմի չարիքը մերժելու եւ դատապարտելու զգացումներով հիշատակում է 100-ամյա տարելիցը Առաջին համաշխարհային պատերազմի: Յավոք, աշխարհում այսօր էլ հնչում են պատերազմի ձայներ, մեր ժողովուրդը նույնպես ապրում է փխրուն խաղաղության պայմաններում, նաեւ կրում է դժվարություններ պատերազմական իրավիճակում հայտնված երկրներում: Մեզ համար կարեւոր է, որ հակամարտություններն ու խնդիրները կարգավորվեն խաղաղությամբ, որի հաստատման եւ ամրության համար անհրաժեշտ է, որ զորանան արդարության, մարդկանց եւ ազգերի իրավունքների հարգման ճանապարհները:

Մենք աղոթում ենք աշխարհի խաղաղության, պատերազմական իրավիճակում գտնվող երկրների, հատկապես՝ Մերճավոր Արեւելքի ժողովուրդների համար, որպեսզի իրագործեն ապահովության, լուսավոր գալիքի իրենց ձգտումները: Աղոթում ենք Հայաստանի եւ մեր ժողովրդի խաղաղ կյանքի, Աստծո օրհնությամբ մեր ջանքերի արդյունավորման համար՝ հանուն մեր երկրի առաջընթացի, բարօրության ու հզորության:

Հայցում ենք, որ Աստված զորակից լինի բոլորիս մեր կոչման ու պատասխանատվության մեջ, լուսավորի եւ առաջնորդի Իր իմաստությամբ ու հաստատուն պահի խաղաղության, սիրո, բարության ճշմարիտ ուղիներում:

Մաղթում ենք, որ Տերը օրհնի Հայաստանը հզորացնելու Ձեր ծրագրերը, մեծարգո՛ նախագահ, հարգարժա՛ն պետական այրեր եւ Ձեր առաքելությունը, մեծարգո՛ դիվանագետներ՝ հանուն աշխարհում խաղաղության ամրապնդման, երկրների ու ժողովուրդների մեջ բարեկամության եւ համերաշխ գործակցության արգասավորման:

Թող ողորմությունն ու չնորհներն Աստծո միշտ մեզ հետ լինեն եւ համայն մարդկության:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀՒ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում մեր ժողովրդին՝ ի Հայրենիս եւ ի Սփյուռս՝ Անկախության տոնի առիթով:

Այսօր նվիրական օր է, մեր պետականության արժեւորման օր, մեր ձեռքբերումների գնահատման, մեր լուսավոր ձգտումների, ապագայի հեռանկարների հաստատման օր:

Անկախ պետականությունը ազգերին եւ ժողովուրդներին հնարավորություն է ընձեռում ապրելու իրենց արժեքներով, կերտելու իրենց իդեալները, ազատորեն դրսեւորելու իրենց հոգեւոր ներուժն ու կարողությունները: Ջորացնենք մեր հոգիներում այս գիտակցությունն ու համոզումը եւ դարձնենք ուժ մեր Հայրենիքի չուրջ համախմբված մնալու, ներկա դժվարությունները հաղթահարելու եւ մեր երկիրը չեզոքացնելու համար, նաեւ ամրագրելու այն քրիստոնեական արժեքներն ու սկզբունքները, որոնցով ապրել ենք եւ ուզում ենք ապրել իբրեւ ազգ եւ հասարակություն:

Աղոթք ենք բարձրացնում առ Աստված, որ օրհնի մեր Հայրենիքը, ամրացնի մեր պետականությունը, խաղաղ ու ապահով պահպանի մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի: Առ Աստված ապավինությամբ, մեր ջերմ սիրով եւ ամուր հավատքով կառուցենք մեր նոր կյանքը ազատ մեր Հայրենիքի հովանու ներքո:

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2014, սեպտեմբեր, Բ թիվ 18 (422), էջ 6:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(28 ՀՈՒՆՎԱՐԻ, 2015 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Բանակի օրվա առիթով Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք բերում ի սփյուռս աշխարհի համայն մեր ժողովրդին, հայոց բանակի քաջարի զորավարներին եւ զինվորներին:

Մեր ժողովրդի պարծանքն է պատերազմական հերոսամարտերում ձեւավորված ու ամրապնդված հայոց բանակը, որ մեր նոր պատմության վճռական պահին հայրենասեր սրտով եւ քաջակորով ոգով մեծ հաղթանակներ նվաճեց՝ հանուն Հայաստանում եւ Արցախում մեր ժողովրդի ազատ ու խաղաղ կյանքի:


Այսօր էլ հայոց բանակի մշտարթուն ծառայությամբ ապահով են մեր երկրի սահմանները: Շնորհիվ մեր զինվորների եւ զորավարների նվիրումի ու հավատավոր հոգու արիության՝ կանխվում են մեր ժողովրդի խաղաղ եւ բնականոն կյանքը խափանող ոտնձգություններն ու վտանգները:

Մեր մարտիկների փառապանծ ծառայության բարձր գնահատանքով Մեր աղոթքն ենք վերառաքում առ Ամենակալն Աստված, որ Իր խաղաղ օթեւաններում ընդունի հանուն հայրենյաց զոհված մեր հերոս զավակների հոգիները, ապավեն լինի եւ զորացնի հայոց բանակի արիասիրտ սպաներին ու զինվորներին՝ ի սեր հայրենյաց իրենց նվիրական կոչման մեջ:

Թող Փրկիչ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Իր հանապազ օրհնության ներքո խաղաղ ու անվրդով պահի Հայրենի մեր երկիրը, ապահով եւ բարօր կյանք պարգեւի բարեպաշտ մեր ժողովրդին:

---

[1] «Էջմիածին», 2015, Ա, էջ 9:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՆ

(29 ՀՈՒՆՎԱՐԻ, 2015 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Մեծարգո՛ նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության,

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս,

Ամենապատի՛ւ Հոգեւոր Տեր,

Մեծահա՛րգ Վերապատուելի,

Հանճնաժողովի հարգարժա՛ն անդամներ եւ սիրելի՛ ներկաներ:

Հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջույն եւ օրհնություն ենք բերում ձեզ: Այսօր մենք վերստին մեկտեղվել ենք քննարկելու Ցեղասպանության 100-ամյա տարելիցի ծրագրերի եւ նախանշված միջոցառումների կազմակերպչական հարցերը եւ համակարգման աշխատանքները:

2015 թվականը Հայոց ցեղասպանության զոհերի սրբադասման լուսավոր խորհրդով բացվեց մեր կյանքում: Ցեղասպանության 100-ամյա տարելիցի առիթով, ինչպես արդեն հայտնի է, Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին ապրիլի 23-ին հանդիսավոր արարողությամբ սրբոց կարգն է դասելու հանուն հավատքի եւ Հայրենիքի իրենց կյանքը զոհաբերած մեր նահատակներին: Սրբացյալ մեր նահատակների բարեխոսությունը նորոգելու է կյանքը մեր ժողովրդի, նրանց հոգեւոր սխրանքի ոգեկոչումը քաջալերելու է մեր ժողովրդի զավակներին՝ ապրելու աստվածասեր ու հայրենանվեր ոգով եւ զորացնելու մեր իրավունքների պաշտպանության, Հայրենի մեր երկրի հզորացման, ազգիս

[1] «Էջմիածին», 2015, Ա, էջ 10:

լուսավոր ապագայի կերտման կամքն ու վճռականությունը:

Ցեղասպանության 100-ամյակը մեր արդար դատի պաշտպանության գործում ունեցած ձեռքբերումներով հանդերձ՝ նոր հանգրվան է պահանջատիրության եւ հատուցման արդար մեր պայքարի ճանապարհին: Մեր ժողովուրդը, որն այսօր դիմակայում է բազում խնդիրների ու դժվարությունների, Հայրենիքի չրջափակման, պատերազմի սպառնալիքի, նաեւ միջազգային հարթակներում Թուրքիո կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը ձախողեցնելու փորձերի, վճռականորեն չարունակելու է արդարության իր պայքարը: Հայոց ցեղասպանությունից 100 տարիներ անց մեր նահատակների արյան, մեր կորուսյալ Հայրենիքի, մեր սրբավայրերի, մեր ոչնչացված մշակութային բազում արժեքների հանդեպ արդարությունը դեռեւս չի վերականգնված՝ չնայած Հայոց ցեղասպանությունը ճանաչվել ու դատապարտվել է շատ պետությունների ու հեղինակավոր կազմակերպությունների կողմից, որոնց երախտապարտ է մեր ժողովուրդը: Համայն ազգիս արդար սպասումն է, որ Թուրքիան եւս միանա Ցեղասպանությունը ճանաչած երկրներին՝ առերեսվելով սեփական պատմության հետ: Թուրքիո պետությանը պատասխանատվության կանչելու եւ Հայոց դատի պահանջատիրության մեջ մեր ժողովրդի մղիչ ուժը ոչ թե ատելությունն է ու թշնամանքը, այլ արդարությունը վերականգնված տեսնելու պահանջն ու ձգտումը: Թուրքիան առ այսօր տարբեր խարդավանքներով ու դավերով չարունակում է Հայոց ցեղասպանության իր ժխտողական քաղաքականությունը: Նույն գործելաոճի հերթական դրսեւորումն է Ցեղասպանության 100-ամյակի տարում Թուրքիայի իշխանությունների կողմից ապրիլի 24-ը Գալիպոլիի ճակատարտի 100-ամյակի օր հռչակելը, ինչն ակնհայտ է, նպատակ ունի չեղելու աչխարհի ուշադրությունը եւ նվազեցնելու Մեծ Եղեռնի մեկդարյա տարելիցի նշանակությունը: Հայրապետական Մեր հորդորն է աչխարհասփյուռ Մեր զավակներին՝ գործադրելու բոլոր ջանքերն ու միջոցները՝ հանրային, պետական ու միջազգային բոլոր հարթակներում ներկայացնելու Թուրքիայի ժխտողական քաղաքականությունից բխող նման քայլերի իրական բնույթը, ոգին ու նպատակը եւ հրատապ պահելու Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման ու դատապարտման եւ արդարության իրագործման պահանջը: Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցը կոչ է արդարության վերականգնման, հորդոր է դատապատելու ներկա աչխարհում գործված բոլոր ցեղասպանությունները, մոլեգնող ահաբեկչությունները, եւ ի

վերջո, խղճի ու մարդկայնության դեմ կատարվող ոճիրներն ու հանցագործությունները: Ցեղասպանության 100-ամյա տարելիցը նաեւ կոչ է աշխարհին՝ վերջ դնելու սեփական չահերի համար մարդկանց եւ ժողովուրդների կյանքի զոհաբերմանը, նրանց իրավունքների ոտնահարմանը: Աշխարհի եւ մարդկության ապահով ու բնականոն կյանքը խաթարող ոճրագործությունները որոշապես հետեւանք են նաեւ Հայոց ցեղասպանության համընդհանուր դատապարտման հապաղման:

Ողջունում ենք որդեգրումը հռչակագրի եւ Մեր գնահատանքը բերում խմբագրական կազմի անդամներին:

Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին համայն աշխարհասփյուռ հայության ներուժն ու միասնականությունը զորացնելով՝ չարունակելու է հայրենի պետության, ազգային կազմակերպությունների ու հաստատությունների հետ ջանքեր գործադրել հանուն մեր արդար դատի հաղթանակի, չարունակելու է ջանքերը միջազգային ու միջեկեղեցական ասպարեզներում՝ ի խնդիր Հայոց ցեղասպանության ճանաչման եւ Ցեղասպանության հետեւանքների վերացման:

Հայրապետիս աղոթքն է, որ Աստված խաղաղություն չնորհի ողջ աշխարհին, մարդկության կյանքում զորացնի համերաշխությունն ու սերը, որպեսզի բարի արգասիքներով արդյունավորվի ժողովուրդների համակեցությունը:

Թող Տերը հավատքով զորացյալ եւ միասնական պահի մեր ժողովրդին, խաղաղ երկնքի ներքո պահպանի մեր Հայրենիքը եւ զորակից լինի համայն հայությանը՝ հզոր դարձնելու մեր պետությունը եւ բարօրության ու առաջընթացի մեջ հաստատելու մեր ժողովրդի ընթացքը:

Շնորհք, սէր եւ ողորմութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(9 ՄԱՅԻՍԻ, 2015Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհավորանքներն ենք հղում բարեպաշտ մեր ժողովրդին՝ Հաղթանակի եւ խաղաղութեան տոնի եւ Շուշիի ազատագրման օրվա լուսաւոր առիթով:


Մայիսի 9-ի պանծալի խորհուրդն այսօր մենք դիմավորում ենք մեր հայրենիքի ու ողջ ժողովրդի նոր կեանքի հույսերով ու ազգային իղձերի իրականացման պայծառ ճգտումներով:

70 տարի առաջ՝ այս օրը, խաղաղութեան ավետիսը հնչեց աշխարհին՝ ուրախութեամբ համակելով եւ լուսաւորելով հոգիները նաեւ մեր ժողովրդի զաւակների, ովքեր հերոսական մասնակցութիւն ունեցան ֆաշիզմի դեմ պայքարում եւ հաղթանակի կերտման գործում: Հայրենասիրութեան նույն անվեհեր ոգով ծնունդ առավ եւ հաղթանակով պսակվեց նաեւ Արցախի ազատամարտը՝ դառնալով հերոսական ու փառապանծ հաղթանակի նոր էջը մեր պատմութեան:

Տոնական այս օրը Մեր աղոթքն է, որ Տերը խաղաղութեան Իր շնորհների ներքո անվրդով պահպանի հայրենի մեր երկիրը եւ օրհնի աստվածասեր մեր ժողովրդին՝ պարգեւելով ապահով ու բարօր կեանք:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհը եւ խաղաղութիւնը լինեն ամենքիս հետ: Ամեն:

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2015, մայիս Ա, թիվ 9, (437), էջ 1:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(28 ՄԱՅԻՍԻ, 2015)[1]

Մայր Աթոռ Ս. Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում համայն մեր ժողովրդին Հանրապետության օրվա առիթով:

Մեծ եղեռնին հաջորդած դժվարին օրերին մեր հայրենիքի մի մասում քաջարի մեր ժողովուրդը կենաց ու մահու գոյամարտ մղեց՝ թանկ զոհողություններով Մայիսյան հաղթական հերոսամարտերը պսակեց Հայաստանի Հանրապետության հիմնադրմամբ: Հայրենի պետականության վերականգնումով մարմնացավ մեր նախնիների դարավոր երազանքը, հույսով լցվեց մեր ժողովրդի հոգին, եւ նոր չունչ առավ ազգային կյանքը:

Մայիսի 28-ի խորհուրդով այսօր նորոգենք հայրենիքի հանդեպ մեր հավատարմության ուխտը, մեր ձեռաց աղնիվ գործերով, միմյանց նկատմամբ սիրով ու հոգատարությամբ հաղթահարենք բոլոր դժվարությունները՝ Տիրոջ առաջնորդությամբ չենացնելով մեր անկախ Հանրապետությունը:

Մեր հայցն է առ երկնավոր Տերը, որ Իր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղ պահի մեր հայրենիքը եւ օրհնի մեր ժողովրդի ջանքերը՝ հանուն հայրենի մեր երկրի զորացման ու աչխարհասփյուռ մեր զավակների բարօր, երջանիկ կյանքի:

---

[1] «Էջմիածին», 2015, Ե, էջ 12:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿԻՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՄԱԿԱՐԳՈՂ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻՆ

(26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետութեան,

Գերաչնո՛րհ Սրբազան,

Հոգեւո՛ր Տեր,

Մեծահա՛րգ Վերապատուելի,

Հանձնաժողովի հարգարժա՛ն անդամներ եւ սիրելի՛ ներկաներ:

Վերստին գոհութիւն ենք մատուցում Բարձրեալ Տիրոջը, որ ուժ եւ զորութիւն տուեց մեր ժողովրդին՝ հաղթահարելու Հայոց ցեղասպանութեան արհաւիրքները եւ անկախ պետականութեան հովանու ներքո վերածնված կեանքով, համազգային միասնականութեամբ ոգեկոչելու Ցեղասպանութեան 100-րդ տարելիցը եւ կրկին արդարութեան ղողանջ հնչեցնելու, բարձրաձայնելով, որ աշխարհում առանց արդարութեան չի կարող գոյութիւն ունենալ խաղաղութիւն, որ մարդկութեան դեմ գործված հանցագործութիւնները պետք է գտնեն համընդհանուր ճանաչում եւ դատապարտում:

Գնահատանքով ենք անդրադառնում, որ Հայաստանում եւ Սփիւռքում հայրենի պետութեան, մեր Սուրբ Եկեղեցու, ազգային կազմակերպութիւնների առաւելագոյն ջանքերով, հիւատակի արարողութիւններով ու միջոցառումներով արդարութեան մեր պահանջը արձագանք գտաւ աշխարհում նոր ուժականութեամբ: Նոր պետութիւններ ճանաչեցին եւ դատապարտեցին Հայոց ցեղասպանութիւնը: Տարբեր պետութիւնների ղեկավարներ, Եկեղեցիների, միջազգային ու եկեղեցական կազմակերպութիւնների ներկայացուցիչներ Հայաստանում իրենց խոնարհումը բերեցին մեր անմեղ նահատակների հիշա-

[1] «Էջմիածին», 2015, Թ, էջ 7:

տակի առջեւ, զորակցություն հայտնեցին մեր ժողովրդին, մեզ հետ միասին արդարության կոչեցին հանուր մարդկության:

Միջազգային հանրության շրջանակներում լայն արձագանք գտավ Վատիկանում Հռոմի Սրբազան Քահանայապետի կողմից ի հիշատակ Հայոց ցեղասպանության անմեղ նահատակների մատուցված Պատարագը եւ խոսքը Հայոց ցեղասպանության մասին՝ այն բնորոշելով որպես 20-րդ դարի առաջին ցեղասպանություն եւ մարդկության կյանքի մեծագույն ողբերգություններից մեկը: Արժանահիշատակ են նաեւ Վաշինգտոնում կազմակերպված ոգեկոչման արարողությունները:

Նշանակալի իրադարձություն էր ապրիլի 23-ին սրբադասումը հանուն հավատքի եւ հայրենյաց նահատակված Հայոց ցեղասպանության զոհերի, ովքեր, հավերժության լուսեպսակով զարդարված, բարեխոսական հայցով ընդմիշտ զորակից են լինելու մեր ժողովրդին, արդարության հասնելու մեր հույսերին ու ջանքերին եւ հայրենաշեն ու եկեղեցանվեր ծրագրերին:

Այսօր կարեւորությամբ կարող ենք արձանագրել, որ հիշատակի արարողություններն ու միջոցառումները՝ վեր պարզելով մեր կյանքի մեջ մեր սուրբ նահատակների հոգեւոր սխրանքը՝ հավատքի նախանձախնդրությունն ու հայրենյաց սիրո ոգին, ինչպես եւ՝ արժանի գնահատանքով ներկայացնելով մեր ժողովրդի մեկդարյա հերոսական ուղին, քաջալերություն են մեր ազգային ինքնության զորացման, Հայրենիքի շուրջ համախմբման, մեր նվիրական արժեքներին հավատարմության, նաեւ օրինակ եւ խրախույս՝ այսօր գոյության վտանգի մեջ գտնվող, ազատ ու խաղաղ ապրելու իրավունքի համար մաքառող ժողովուրդներին:

Մեր նահատակների սրբադասումը եւ հարյուրերորդ տարելիցի միջոցառումները առավել զգալի դարձրեցին շրջադարձը, որ մեր ժողովրդի ցավի ու կորստի տարեգրությունը վերափոխվում է ապրող ու զորացող ժողովրդի հաղթական երթի: Հարյուրամյակի համախմբող, մեր ուժերի հանդեպ վստահություն ներշնչող ոգին պիտի զորացնի մեր ժողովրդին դիմագրավելու դժվարությունները, թշնամյաց հարձակումներից պաշտպանելու մեր հայրենիքը եւ ամեն կարելիությամբ շարունակելու մեր ջանքերը մեր ժողովրդի ապահով ու բարօր կյանքի համար ի սփյուռս աշխարհի:


Այսօր, երբ մեր ժողովրդի բազում զավակներ Մերձավոր Արեւելքում՝ հատկապես Սիրիայում եւ Իրաքում, ծանր փորձությունների մեջ են եւ Ցեղասպանության օրերին հայորդիներին ձեռք մեկնած

ժողովուրդների հետ կրում են տառապանքներ ու կորուստներ, մեր կյանքի առաջնահերթ հրամայականներից է՝ օգնության ձեռք մեկնել մեր եղբայրներին ու քույրերին: Մենք հորդորում ենք մեր Եկեղեցու թեմական եւ համայնքային կառույցներին, ազգային, բարեսիրական հաստատություններին, մեր բարերար զավակներին՝ սատար լինել համակարտություններ գոտում նեղություններ մեջ գտնվող մեր ժողովրդի զավակներին, նաեւ Հայաստանում ու տարբեր երկրներում բնակություն հաստատած տարագիր հայորդիներին:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի պետական հանձնաժողովի այս նիստի առիթով գնահատանքի Մեր խոսքը եւ Հայրապետական օրհնությունն ենք բերում հայրենի իշխանություններին, միջոցառումները համակարգող հանձնախմբի անդամներին, միջոցառումների իրականացմանը մասնակցություն բերած մեր ժողովրդի զավակներին եւ դրանց իրագործումը հովանավորած բարերարներին՝ ստանձնած հանձնառություններ եւ ներդրած ջանքերի համար:

Սիրելինե՛ր, սեպտեմբերի 27-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում պիտի կատարենք օրհնությունը սրբալույս Մյուռոնի, որպեսզի աստվածային չնորհներով չարունակի զորանալ մեր ժողովրդի կյանքը, ամրանալ անսասան հույսով ու վճռականությամբ՝ ընթանալու դեպի նոր հաղթանակներ ի հայրենիս եւ ի սփյուռս աշխարհի:

Այս մտածումներով եւ մաղթանքով աղոթում ենք, որ Ամենողորմ Տերը իր չնորհների եւ օրհնության ներքո միասնական պահի հավատավոր մեր ժողովրդին, զորացյալ՝ մեր Հայրենիքը: Թող մեր սուրբ նահատակների բարեխոսությամբ խաղաղություն ու արդարություն թագավորեն մեր կյանքում, ամբողջ աշխարհում՝ ի փառս Աստծո եւ ի բարօրություն ազգիս հայոց եւ համայն մարդկության:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(28 ՀՈՒՆՎԱՐԻ, 2016 Թ.)[1]

Համայն հայութեան նվիրական սրբավայր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայոց բանակի օրվա առիթով բերում ենք Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ շնորհավորանքը մեր ժողովրդին, մեր հաղթական բանակի սպաներին ու զինվորներին:

Նորանկախ մեր պետականութեան ամենաթանկ ու նվիրական ձեռքբերումն է Հայոց բանակի կազմավորումը, որն արդյունքն է քաջարի մեր զավակների պայքարի եւ առ Հայրենին նվիրումի ու սիրո: Այսօր Հայոց բանակի արիասիրտ մեր զինվորների ու հրամանատարների սխրանքով, երբեմն նաեւ կյանքի զոհաբերումով, անխաթար ու պաշտպանված են մեր երկրի սահմանները: Հայ զինվորի անվեհեր ոգին քաջալերութիւն է բաշխում մեր ողջ ժողովրդին՝ առաջնորդելով ամենքիս ամբողջական նվիրումով, նախանձախնդրութեամբ ու միմյանց նկատմամբ սիրով ծառայելու մեր հայրենիքին եւ իրագործելու մեր երկրի պայծառ գալիքի լուսավոր տեսիլքներն ու հույսերը:

Միածնակէջ Սուրբ Խորանի առջեւ աղոթքում ենք, որ Երկնավոր մեր Տերն օրհնի եւ զորացյալ ու հաղթական պահպանի մեր Հայրենիքի սահմանները հսկող բոլոր զինվորներին ու զորավարներին, այլեւ խաղաղութեան մեջ արդյունավորի աստվածասեր մեր ժողովրդի ձեռաց գործերը՝ հանուն անվրդով ու բարեչեն մեր կյանքի:

Թող Տիրոջ շնորհը, սերը եւ խաղաղութիւնը լինեն ամենքիս հետ այսօր եւ հավիտյան:

---

[1] «Էջմիածին», 2016, Ա, էջ 15:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ԿԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(8 ՄԱՐՏԻ, 2016 Թ.)[1]

Լուսո Խորան Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում տիկնանց եւ օրիորդաց մարտի 8-ի տոնական առիթով:

Բազմադարյա մեր պատմութեամբ է վկայված հայ կնոջ առաքելութեյունը մեր ժողովրդի կյանքի առաջընթացի, հոգեւոր արժեքների պահպանման, կրթութեյան ու մշակութեյի զարգացման գործում, այլեւ հայրենիքի պաշտպանութեյան, դժվարութեյունների ու մարտահրավերների դիմագրավման մաքառումներում: Հայ կանայք աստվածսիրութեյան եւ ազգասիրութեյան մեծագործութեյուններով, քաջութեյան ու խիզախումի պանծալի օրինակներով չարունակ ներշնչանք ու զորութեյուն են պարգեւում մեր ժողովրդի զավակներին:

Մեր գնահատանքն ենք բերում Ձեզ, սիրելի՛ կանայք, որ հավատքով ու սիրով այսօր էլ Ձեր ջանքերն ու նվիրումն եք բերում պետական ու հասարակական մեր կյանքի բոլոր ասպարեզներում, որպեսզի միշտ ծաղկուն լինի հայ կյանքը, զորացյալ՝ հայ ընտանիքը եւ բարօր ու չեն՝ հայրենի մեր երկիրը:


Մեր մաղթանքն է, որ Երկնավոր Տիրոջ օրհնութեյամբ միշտ լինեք խինդով լեցուն ու երջանիկ, միշտ գեղեցիկ՝ օրհնված առաքինութեյուններով ու բարեգործութեյամբ:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր Սուրբ Աջի հովանու ներքո պահպանի բոլոր կանանց, պարգեւի երջանկութեյամբ լի արեւառատ տարիներ եւ երկնառաք բյուր բարիք:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի շնորհները, սերն ու խաղաղութեյունը թող լինեն Ձեզ ամենքիդ հետ. ամեն:

---

[1] «Էջմիածին», 2016, Գ, էջ 5:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՈՒ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

(9 ՄԱՅԻՍԻ, 2016 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ու շնորհավորանքներն ենք հղում համայն հայ ժողովրդին՝ Հաղթանակի եւ Խաղաղության պանծալի տոնի եւ Շուշիի ազատագրման օրվա առիթով:

Ազգերի ու պետությունների հետ տոնում ենք պանծալի հաղթանակը ֆաշիզմի ու բռնության դեմ պայքարում, որին մասնակցություն բերեցին մեր ժողովրդի բազմահազար զավակները՝ հայազգի փառապանծ զորավարներ ու զինվորներ: Տոնում ենք Շուշիի ազատագրումը եւ հաղթանակը Արցախյան ազատամարտում, որով պաշտպանեցինք արդար իրավունքը մեր ժողովրդի ազատ կյանքի:

Մայիսի 9-ի հաղթական խորհուրդն այսօր առանձնակի զգացումներով է լցնում մեր հոգիները, քանզի հայրենանվիրումի նույն ջերմ ոգով մեր զավակները ապրիլյան օրերին իրենց սխրանքներով դիմակայեցին Ադրբեջանի ռազմական հարձակմանը՝ անառիկ ու ապահով պահելով մեր սահմանները:

Աղոթք ենք բարձրացնում, որ Տերը խաղաղության Իր շնորհի ներքո պահպանի աշխարհը, մեր հայրենիքն ու ժողովրդին եւ Իր Աջի հովանին տարածյալ պահի մեր բանակի զորավարների ու մարտիկների վրա, ովքեր չարունակում են քաջաբար պաշտպանել ազատ ու խաղաղ կյանքը մեր ժողովրդի:

---

[1] «Էջմիածին», 2016, Ե, էջ 5:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(28 ՄԱՅԻՍԻ, 2016 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու ջերմ շնորհավորանքներն ենք բերում համայն մեր ժողովրդին Հանրապետութեան տոնի առիթով:


Այսօր տոնախմբում ենք Հայաստանի առաջին հանրապետութեան հիմնադրումը՝ արդար հպարտութեամբ հիշելով մայիսեան հերոսամարտերը Սարդարապատում, Ղարաքիլիսայում ու Բաշ Ապարանում, երբ միաբանված մեր ժողովուրդը կենաց ու մահու պայքարով դիմակայեց թուրքական բանակին եւ համազգային հաղթանակով ապահովեց հայրենի հողում ապրելու, իր երկիրը շենացնելու աստվածշնորհ իրաւունքը: Տիրոջ առաջնորդութեամբ հայրենասիրութեան նուէն ջերմ զգացումով եւ անվեհեր ոգով այսօր Մեր զաւակները պաշտպանում են Հայաստանի եւ Արցախի սահմանները՝ իրենց սխրանքներով հիշատակի արժանի նոր էջեր հաւելելով մեր պատմութեանը: Մեր հայրենիքի ազատութեան ու խաղաղութեան համար իրենց կեանքը զոհաբերած մեր հերոս զաւակների ու սերունդների առջեւ պարտք ունենք, եւ այն մեր երկրի հզորացումն է, մեր ժողովրդի բարօրութիւնը, մեր պետականութեան ամրապնդումն ու ապահովութիւնը:

Հանրապետութեան տոնի այս նշանակալի օրը առ Աստված աղօթքով Բարձրեալի հանապազ զորակցութիւնն ենք հայցում հաւատաւոր մեր ժողովրդին՝ անկոտրում ոգով ու պատրաստակամ հանճնառութիւններով կերտելու մեր Հայրենիքի պայծառ, շէն ու բարօր ապագան:

Թող Բարձրեալն Աստված անխաթար խաղաղութիւն պարգեւի մեր երկրին եւ առատապես օրհնի Քրիստոսասեր մեր ժողովրդին ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս:

---

[1] «Էջմիածին», 2016, Ե, էջ 6:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(ՇՈՒՇԻ, 5 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2016 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Եւ այս է այն յաղթությունը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հաւատքը»
(Ա Յովհ. Ե 4):

Մեծարգո՛ տիար Բակո Սահակյան, նախագահ ԼՂ Հանրապետության,

Գերագույն հոգեւոր խորհրդի անդամնե՛ր,

Գերաչնո՛րհ հայրեր եւ հարգարժա՛ն տիարք,

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Գոհունքյուն ու փառք ենք մատուցում Տիրոջը, որ առիթն ունենք Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների հետ գտնվելու օրհնյալ մեր Արցախ աշխարհում եւ ազատագրական մեր պայքարի խորհրդանիշը հանդիսացող Շուշիի Սուրբ Ամենափրկիչ Ղազանչեցոց եկեղեցում կատարելու Հանրապետական մաղթանք՝ հայցով առ Աստված, որ խաղաղ ու անվրդով պահի Արցախի եւ Հայաստանի սահմանները եւ իր արարչական սերն ու խնամքը հովանի դարձնի հերոսական արցախահայությանը:

Այս օրերին մեր ժողովուրդը տոնախմբում է Արցախի անկախության 25-րդ տարեդարձը՝ պանծալի հոբելյանը մեր նորօրյա պատմության ամենանշանակալի իրադարձության: Մենք վերստին արժեւորում ենք մեր հաղթանակներն ու ձեռքբերումները եւ խոնարհումով հիշում մեր բոլոր հերոսներին, ովքեր իրենց կյանքն ընծայեցին հանուն Արցախի ազատության եւ մեր հայրենիքի ապահովության:

---

[1] «Էջմիածին», 2016, Թ, էջ 10:

Նախորդ երկուսուկես տասնամյակները եղան Լեռնային Ղարաբաղի Հանրապետության անկախության զորացման եւ հաջողությունների աստիճանական ամրապնդման տարիներ: Ապրիլյան վերջին իրադարձությունները, սակայն, եկան հավաստելու, որ մենք տակավին մեծ անելիքներ ունենք Արցախի պետականության ամրապնդման եւ մեր հայրենքի սահմանների անվտանգության ապահովման գործում: Թշնամու անընդմեջ ոտնձգությունների պայմաններում Մենք պիտի շարունակենք միասնաբար զորացնել մեր բանակը, չենացնել ու հզորացնել Արցախը՝ ապավեն լինելով արցախահայությանը, որ, հակառակ ամեն դժվարությունների, շարունակում է հերոսաբար տոկալ եւ իր հարազատ հողի վրա կառուցել իր բարօր ապագան:

Արցախի այս սուրբ հողում երբեւէ չի տկարացել հայի հավատքն ու հայրենասիրությունը: Մեր երկրատեւ պատմության ընթացքին մեկ անգամ չէ, որ թշնամիները բախվել են արցախահայության աննկուն կամքին եւ ընկրկել նրանց խիզախության առջեւ: Այստեղ ապրող մեր ժողովուրդը երբեք չի համակերպվել եւ չի համակերպվելու անարդարության ու բռնությունների հետ: Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին աշխարհասփյուռ իր թեմերով ու եկեղեցական կառույցների ամեն հնարավորությամբ ձեր կողքին է, սիրելի՛ քաջարի արցախցիներ, մշտապես սատար ու աջակից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգայնորեն ճանաչման եւ Արցախում արժանապատիվ կյանքի կառուցման ջանքերին:

Անցնող 25 տարիներին Արցախը դարձել է ոգին մեր ժողովրդի, ոգին միասնականության եւ խորհրդանիշը մեր հաղթանակների, խորհրդանիշը՝ ազգային մեր զարթոնքի: Արցախի չուրջ համախմբվել է ջանքն ու ջիղը համայն հայության, թեւ առել հաղթանակների վստահությունն ու տեսիլքը: Արցախը սրտում է համայն հայության, որը նրա անկախության պաշտպանն ու երաշխավորն է:

Տարակույս չունենք, որ արցախյան հիմնախնդիրը մեր ժողովուրդը առ Աստված ապավինությամբ առաջնորդելու է բարվոք լուծման: Առաքյալի խոսքի համաձայն. «Եւ այս է այն յաղթությունը, որ յաղթում է աշխարհին՝ մեր հաւատքը»: Մեր կրած դառնությունների, զրկանքների ու չարչարանքների, մեր թանկ զոհողությունների դիմաց այս սուրբ հողում ընդմիշտ շարունակելու է ծաղկել հայոց հավատքը եւ այդ հավատքով շաղախյալ հայ կյանքը: Մեր վանքերում նորանոր ընտանիքներ են օրհնվելու եւ հայ մանուկներ են մկրտվելու մեր եկեղեցիների սուրբ ավազաններում՝ նոր չունչ բերելով մեր կյանքին,

չունչն ու ոգին վառ հավատքի, պայծառ մտքի, արարումի ու առաջադիմության:

Այս զգացումներով եւ Բարձրյալի զորակցության հայցով Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ տիար Բակո Սահակյանին, պետական ավագանուն՝ մաղթելով նոր ձեռքբերումներ իրենց հայրենաչեն գործերում: Հայրական սիրով Մեր օրհնությունն ու բարձր գնահատանքն ենք բերում մեր փառապանծ բանակի սպաներին ու մարտիկներին՝ աղոթքով, որ Տերը ամուր ոգով ու հաղթական բազկով պահպանի մեր հայրենյաց պաշտպաններին եւ Իր Աջի հովանու ներքո հեռու պահի վտանգներից ու փորձություններից: Մեր օրհնությունն ենք բերում Արցախի թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Պարգեւ արք. Մարտիրոսյանին եւ թեմի հոգեւոր դասին՝ հայցելով Տիրոջ շնորհները մեր ժողովրդի հոգեւոր կյանքի չենացման նվիրական առաքելության մեջ:

Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Արցախի հերոսական մեր ժողովրդին: Սիրելինե՛ր, չարունակեք ապրել սիրով առ Աստված, առ մեր Սուրբ Եկեղեցին եւ հայրենիքը, առաջ ընթացեք աներկբա հույսով, որ մեզ բաժին ընկած ցանկացած փորձության միջից, ինչպես առաքյալն է ասում, է՛լ ավելի հաղթական ենք դուրս գալու մեր Տիրոջ միջոցով, Ով սիրեց մեզ (հմմտ. Հռ. Ը 37):

Ի խորոց սրտի աղոթում ենք մեր հայրենիքի խաղաղության, մեր սահմանների ապահովության համար, վերստին Աստծո զորակցությունը հայցում մեր քաջարի սպաներին ու զինվորներին, Արցախի բնակավայրերում իրենց ստեղծարար կյանքով ապրող մեր ժողովրդին զավակներին:

Թող Ամենակալ Աստված օրհնի Հայաստանն ու Արցախը ու ապավեն լինի մեզ ամենքիս՝ ի կատար ածելու մեր ազգային իղձերն ու նպատակները. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԵՎ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ, ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՑԱԽԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ՕՐԵՐԻ ԱՌԻԹՈՎ

(9 ՄԱՅԻՍԻ, 2017 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ու շնորհավորանքներն ենք հղում համայն Մեր ժողովրդին՝ մայիսի 9-ի՝ Հաղթանակի եւ խաղաղության պանծալի տոնի, Շուշիի ազատագրման եւ Արցախի պաշտպանության բանակի հիմնադրման ցնծաբեր օրերի առիթով:

Մայիսյան այս եռատոն խորհուրդն ու տոնակատարությունները կրկին բերկրանքով են լցնում մեր հոգիները: Այսօր անդրադառնում եւ վերարժեւորում ենք մեր ժողովրդի ներդրած այն չոչափելի ջանքերը, որոնք նպաստեցին Մեծ հայրերանական պատերազմում հաղթանակի կերտմանը եւ աշխարհում խաղաղության հաստատմանը: Արցախյան ազատագրական պայքարում այս հաղթական օրը մեր հերոս զավակները անկոտրում կամքով ու քաջարի ոգով ազատագրեցին ռազմավարական կարեւոր նշանակություն ունեցող եւ ազգային մեր մշակույթի նշանավոր կենտրոն Շուշի քաղաքը: Այդ որոշիչ օրերին կազմավորվեց նաեւ Արցախի ապահովության եւ խաղաղության երաշխիք հանդիսացող Պաշտպանության բանակը:

Այսօր, հակառակ մեր ժողովրդի խաղաղասեր ոգու, չարունակում է առաջնային մնալ հարձակումներից մեր երկրի սահմանների պաշտպանությունը: Պատերազմական այս մարտահրավերների առջեւ մենք պարտավորված ենք ազգային համախմբվածության, մեզ համար հրամայական են հայրենիքի չենացումը ու մեր անվտանգության գրավական հանդիսացող Հայոց բանակի զորացումը:

---

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2017, մայիս Ա, թիվ 9 (485), էջ 3:

Մեր աղոթքն ու հայցն է առ Աստված, որ Բարձրյալ Տերը լուսեղեն երկնային հարկերում հանգստությունն չնորհի հայրենիքի համար զոհված մեր հերոս զավակների հոգիներին, խաղաղություն պարգեւի համայն աշխարհին, զորացնի եւ ապահովության մեջ պահի հայրենի մեր պետականությունը եւ մեր ժողովրդին այժմ եւ հավիտյանս. ամեն:

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ 6-ՐԴ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՆԻՍՏԻՆ

(18 ՄԱՅԻՍԻ, 2017 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ,
Հարգարժա՛ն պատգամավորներ,
Հարգելի՛ ներկաներ:

Հայրապետական Մեր ողջույնն ու օրհնությունն ենք բերում Ձեզ եւ չնորհավորում:

Ազգային Ժողովի նորընտիր պատգամավորներին 6-րդ գումարման այս առաջին նիստի առիթով:

Ազգային Ժողովի դերակատարությունը պետական կառավարման համակարգում այսուհետ էականորեն ընդլայնվում է՝ պայմանավորված սահմանադրական փոփոխությունների արդյունքում խորհրդարանական կառավարման անցնելու հանգամանքով: Որպես առավել մեծ լիազորություններով ու իրավասություններով օժտված բարձրագույն մարմին ՝ Ազգային Ժողովն ստանձնանում է նաեւ առավել մեծ պատասխանատվություն մեր երկրի ու ժողովրդի կյանքում, մեր ներկայի եւ ապագայի հանդեպ:

Մեր պետականության կայացման եւ մեր երկրում վերափոխումների իրականացման ճանապարհին Ազգային ժողովի կողմից կարեւոր քայլեր են ձեռնարկվել՝ ստեղծելու օրենսդրական հիմքերը իրավական պետության ու քաղաքացիական հասարակության ձեւավորման, մեր երկրում տնտեսության, դիտության, մշակույթի զարգացման համար: Այս տարիներին ջանքեր են ներդրվել նաեւ ապահովելու բարենպաստ միջավայր հոգեւոր եւ ազգային-եկեղեցական կյանքի զորացման համար:

---

[1] «Էջմիածին», 2017, Ե, էջ 11:

Բոլոր ձեռքբերումներով հանդերձ՝ մեր կյանքից, սակայն, դեռեւս թոթափված չեն խնդիրներն ու դժվարությունները: Ծանրակչիռ ջանքեր պահանջող ուղի պիտի անցնենք՝ կերտելու համար մեր ժողովրդի բարօր կյանքը, ապահովելու խաղաղությունը մեր սահմաններում, պաշտպանելու մեր ժողովրդի իրավունքները եւ իրագործելու համար ազգային մեր իղձերը:

Մեծարգո՛ պատգամավորներ, բարձրագույն օրենսդիր մարմնում դուք կոչված եք մեր երկրին ու հավատավոր ժողովրդին ծառայելու նվիրական, մեծ ու պատասխանատու առաքելության: Օրենքները, որոնք պիտի ընդունվեն այս բարձր մարմնում, պիտի ամրացնեն եւ առաջընթաց բերեն մեր հասարակական կյանքին, դառնան հարազատ հայելին մեր ինքնության, մեր արժեքների, արտահայտեն մեր ժողովրդի իղձերը, ամրապնդեն ազգային մեր համերաշխությունն ու միասնությունը: Խորհրդարանը նաեւ կարեւոր հարթակ է, որտեղ բազմակարծությունը, մտքերի ու նախաձեռնությունների բազմազանությունը՝ ծնունդ առած հայրենասեր ու նախանձախնդիր նույն ոգուց, առավել պիտի ընդլայնեն մեր երկրի զարգացման հեռանկարները: Հայացքների ու տեսակետների տարբերությունները, սակայն, երբեք չպիտի դառնան պատճառ հակառակությունների ու անհանդուրժողականության՝ խոչընդոտելով Ազգային Ժողովի արդյունավոր առաքելությունը: Ի դեպ է այսօր հիշել Ս. Ներսես Շնորհալու պատգամը. «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն ի երկբայականս եւ սէր՝ յամենայնի»: Հավատարմորեն հետեւեք հայրապետի հորդորին, պահպանեք միությունը կարեւոր գործերում, ազատությունը՝ երկրորդականներում եւ սերը՝ ամեն ինչում:

Մեր մաղթանքն է, որ համերաշխ գործակցությամբ միավորեք ձեր ջանքերն ու նվիրումը հանուն մեր հայրենիքի ու ժողովրդի խաղաղ, լուսավոր ու բարի կյանքի: Աղոթում ենք, որ Աստված զորացնի ձեզ հայրենասեր ոգով, պարգեւի եռանդ ու կորով՝ մնայուն ձեռքբերումներ արձանագրելու ձեր բարձր առաքելության մեջ: Հարուցյալ մեր Տիրոջ չնորհներն ու հաղթական սուրբ խաչի պահպանությունն ենք հայցում ձեզ ամենքիդ եւ Սուրբ Հոգու առաջնորդությունը:

Այժմ հոտնկայս, Տերունական աղոթքով հայցենք հաջողություններ ու բարի ընթացք Ազգային ժողովի աշխատանքներին:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ՀՀ ՌԱԶՄԱԿԱՆ ԿՐԹՕՋԱԽՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(24 ՕԳՈՍՏՈՍԻ, 2017 Թ., Ս. ԷՋՄԻԱԾԻՆ)[1]

«Ամէն ինչի կարող եմ Նրա՛ շնորհիւ,
Ով ինձ զօրացրեց» (Փիլիպ. Դ 13):

Մեծարգո՛ նախարար,
Պատուարժա՛ն զօրականներ,
Հարգարժա՛ն հիւրեր:

Ուրախ ենք մեծապես, որ Տիրոջ կամքով առիթն ունենք՝ Մեր շնորհավորանքն ու օրհնութիւնը բերելու Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան նախարարի առաջնորդութեամբ հայոց հոգեւոր կենտրոնում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբված ռազմական հաստատութիւնների սաներին, ովքեր ուսումնական չրջափուլը աւարտելով՝ ծառայութեան պիտի կոչվեն Հայոց բանակում:

Գոհութիւն եւ փառք ենք մատուցում առ Աստված, որ այս տարի եւս մեր ռազմական կրթօջախները տվեցին հերթական առատ հունճքը: Հայոց բանակի ստեղծման 25-րդ տարեդարձի խորհրդանշական այս տարում դուք, չանազիր ու տքնաջան ուսումնառութիւնից հետո, ահավասիկ, պիտի համալրեք Հայոց բանակի սպայական կազմը՝ կոչվելով պատասխանատու ծառայութեան: Դժվարին ու մարտահրաւէրներով լեցուն է հայ զինվորի եւ սպայի ծառայական ուղին: Հայկ Նահապետի ու Սասունցի Դավթի ոգուց ծնունդ առնող հայ զինվորի խրոխտ պատմութիւնն այսօր մեկ անգամ եւս հյուսվում է ձեր՝ դեռ նոր-նոր սկսվող մարտական ուղուն: Մեր պատմութեան էջերում հայոց բանակը եղել է ոչ միայն զենքի ու ռազմարվեստի, մարտական հմտութեան, ուժի խորհրդանիշ, այլ նաեւ ոգեկերտումի ու առաքի-

[1] «Էջմիածին», 2017, Թ, էջ 9:

նուիրեալ, քրիստոնեական նվիրական արժէքների եւ հերոսութեան խտացում:


Այս նվիրական օրը Մայր Տաճարի սրբազան կամարների ներքո Մեր հայրական պատգամը, սիրելի՛ չրջանավարտներ, ձեզ տալիս ենք առաքյալի խոսքերով. «Ամեն ինչի կարող եմ Նրա՛ չնորհիվ, Ով ինձ զորացրեց» (Փիլ. Դ 13): Հիրավի, ամեն ինչի, անգամ անհնարին ձեռքբերումների է ընդունակ այն գինվորը, որի հոգին ամրացած է ցանկացած դժվարութիւն, մարտահրավեր ու խոչընդոտ հաղթահարելու աննկուն վճռականութեամբ: Դուք ամենքդ հետնորդներն ու ժառանգներն եք քրիստոնեական հավատի ոգով զորացած հայ փառապանծ զորավարների ու գինվորների: Նրանք իրենց լուսյս հավատքին երբեք չեն խառնել վախն ու երկմտութիւնը: Նրանց ոգու արիութեան հիմքն էր առ հայրենին եւ առ Աստված ունեցած անսասան սերն ու վստահութիւնը: Սովի, հալածանքների, թշնամու հարձակումների ու դավերի դեմ նրանք կրկնում էին. «Աստված է մեր ապավենն ու զորութիւնը» (Սղմ. խե 1):

Սիրելինե՛ր, ձեզ զորացնողը Տեր Հիսուս Քրիստոս է՝ Զորագլուխը Սուրբ Եկեղեցու, եւ ձեր ապավենը՝ հարուցյալ ու հաղթական, Տիրոջ հավատարիմ հոտը՝ մեր ժողովուրդը: Ամեն ինչի կարող կլինեք դուք, եթե ունենաք անսասան վստահութիւն առ Քրկիչ Տերը եւ սերը՝ առ մեր ժողովուրդը, որոնք ձեր մարտական ծառայութիւնների մեջ ու դժվարութիւնների առջեւ ձեզ օգնական ու զորակից են լինելու: Շուտով ամենքդ պիտի կոչվեք մարտական ծառայութեան՝ մեծ պատասխանատվութիւն ստանձնելով մեր երկրի ու ժողովրդի առջեւ: Ձեր ամեն մի որոշումից ու ձեր գործերից է կախված լինելու Հայրենիքի ապահովութիւնը, Հայրենիք, որ սուրբ է ու նվիրական իր հազարամյակների անցյալով, հաղթական ներկայով ու առավել պայծառ ապագայով, որը մեր հանձնառութիւններով պիտի կերտենք մենք: Մաղթում ենք ձեզ խաղաղ ու անվտանգ ծառայութիւն՝ հանուն մեր երկրի զորացման ու հավատավոր մեր ժողովրդի բարգավաճման: Մաղթում ենք արթուն միտք ու հոգի, որ Աստծո օգնականութեամբ նախանձախնդիր ձեր ծառայութեամբ առավել հզորութիւն բերեք Հայոց բանակին, ապահովութիւն՝ մեր սահմաններին: Զորացե՛ք Հիսուս Քրիստոսով, աղոթե՛ք հայրենիքում խաղաղութեան հաստատման հույսով եւ ապրե՛ք ձեր հավատի ու հայրենիքի ազատութիւնը պաշտպանելու անկոտրում հաստատակամութեամբ: Թող Տիրոջ ամենազոր Աչն ու զորութիւնը հովանի լինեն ձեզ ամենքիդ Հայոց փառապանծ բանա-

կում ձեր գալիք ծառայությանց ընթացքին: Գիտցե՛ք՝ մեր բոլոր հաղթանակների ու ազգային կյանքի ձեռքբերումների անսպառ աղբյուրը մեր ժողովրդի հոգու անպարտելիությունն է, որն, Աստծով զորացած, կարողացավ իր պատմության բոլոր փորձությունները հաղթահարել, ցեղասպանությունը վերապրել, հոգեւոր ու մշակութային համաչխարհային մակարդակի ժառանգություն կերտել եւ թշնամական երկրնեբով չրջապատված լինելով՝ ազգային ինքնությունը անաղարտ պահպանել ու հայրենիք կերտել ու զորացնել:

Գոհունակ սրտով Հայրապետական Մեր օրհնությունն ու բարեմաղթանքներն ենք բերում Հայաստանի Հանրապետության ռազմական ղեկավարությանը՝ գլխավորությամբ Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանի, ի ղեմս այս արարողության ներկա Հայաստանի Հանրապետության Պաշտպանության նախարար տիար Վիգեն Սարգսյանի: Մեծապես գնահատելի է, որ մեր պետությունը ջանք ու կարողություն է ներդնում՝ Հայոց բանակը գիտելիքներով եւ հոգեւոր ու բարոյական բարձր արժեքներ կրող զինվորականներով համալրելու գործում:

Թող Բարին Աստված խաղաղության մեջ պահպանի Հայրենի մեր երկիրը, հզոր ու աննկուն՝ Հայոց հաղթական բանակը եւ միշտ աջակից լինի աչխարհասփյուռ Մեր ժողովրդին ազգային իղձերի ու նպատակների իրականացման ճանապարհին: Եվ թող Տիրոջ ամենախնամ Սուրբ Աջը մշտապես հովանի ու պահապան լինի մեր զորաց ու զորականաց եւ նորանոր հաջողություններ չնորհի հայրենյաց պաշտպաններին նվիրական առաքելության մեջ այսօր եւ հավիտյանս:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՀ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(21 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2017 Թ.)[1]

«Այլ դուք ազգ էք ընտիրք, թագաւորութիւն, քահանայութիւն, Ազգ սուրբ, ժողովուրդ սեպհական...» (Ա Պետ. Բ 9):

Հոգեւոր եղբա՛յր Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս,

Գերաչնորհ ու հոգեշնորհ հայրե՛ր,

ՀՀ իշխանութեանց պատուարժա՛ն ներկայացուցիչներ,

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ,

Գոհունակ սրտով եւ առ Աստված փառաբանութեամբ Միածնաէջ Մայր տաճարում Հայաստանի Հանրապետութեան 26-րդ տարեդարձի առիթով կատարեցինք հանրապետական մաղթանք՝ հայցելով խաղաղութիւն ու բարօրութիւն հայրենի մեր երկրին ու ժողովրդին եւ համայն աշխարհին:

Համազգային տոն է տարեդարձը մեր անկախ պետականութեան, որը պսակն է հազարամեայների պատմութիւն ունեցող մեր ժողովրդի, մեր հայրենիքի մաքառումների ու հաղթանակների, նաեւ՝ վկայութիւնը քրիստոնեական մեր ինքնութեան ու գոյութեան: Արդարեւ, մարդկային ուժերը չպիտի բավարարեին դիմակայելու դարերի ընթացքում մեր ժողովրդին բաժին ընկած հալածանքներին ու անարդարութիւններին, չպիտի բավարարեին պահպանելու հավատը ազատութեան ու արդարութեան հանդեպ եւ հույսն ու լավատեսութիւնը խաղաղ ու լուսավոր կյանքի: Մեր ժողովուրդը՝ Տիրոջ փոքրիկ հոտը, ապրեց ու հարատեւեց ոչ թե մարդկային իր հնարավորութիւններով, այլ՝ քրիստոնեական հավատքով եւ Աստծո խնամքով, որի համար

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2017, սեպտեմբեր Բ, թիվ 18 (494), էջ 4:

առաքյալն ասում է. «...դուք ազգ էք ընտիրք, թագաւորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ, Աստծու սեպհական ժողովուրդ...»:

Առաքյալի պատգամի լույսի ներքո մեր առջեւ հառնում են Քրիստոսի սիրով իրենց հոգու ազնվությունն ու սերը ազգին ծառայեցրած, մեր հայրենիքի ազատությանը« մեր պետականության ամրությանն ու պայծառությանը իրենց կյանքն ու ջանքերը նվիրած մեր բարեպաշտ թագավորներն ու իշխանները, լուսամիտ վարդապետներն ու հայրապետները, մեր ժողովրդի բյուրավոր վեհանձն ու արի զավակները, ովքեր հավատքով ու նվիրումով սրբագործել են մեր ժողովրդի աստվածընտիր առաքելության ճանապարհը: Արդարեւ, մեր ժողովուրդը երբեք իր առջեւ ընդամենը գոյատեւելու խնդիր չի դրել: Մեր ձգտումը միշտ եղել է ավելին՝ հասնել բաղձալի ազատության, պահպանել հավատքի սրբությունը, ապրել Աստծո փառքի համար՝ մեր ստեղծածը, մեր կյանքը ծառայեցնելով բարուն, արդարությանն ու ճշմարտությանը:

Դարավոր մեր հայրենիքում մենք մեր պետականությունը վերակերտեցինք, որպեսզի հայրենի մեր երկիրը համայն հայության տունը դարձնենք, մեր ինքնությունը անխախտ ու անվտանգ պահենք, աշխարհի հետ մեր լեզվով ու ոճով խոսենք, մեր մշակույթն ու դպրությունը զարգացնենք, մեր երկիրը մեր բազկի զորությամբ, մեր հոգու արիությամբ պաշտպանենք: Այսօր, երբ մենք ենք տնօրինողը մեր կյանքի եւ կերտողը մեր ապագայի, պիտի հիշենք եւ երբեք չպիտի մոռանանք, որ ազատության չարաչահումը նույնքան վտանգավոր է, որքան ազատություն չունենալը: Զգույշ եղեք,- հորդորում է առաքյալը,- չլինի թե ազատությունը դառնա չարիքի պատրվակ (Հմմտ. Ա Պետ. Բ 16): Ազատություն ունենալ նշանակում է պատասխանատվություն կրել մարդկանց, սեփական երկրի եւ ժողովրդի համար: Ազատությունն ու անկախությունը այսօր էլ իմաստ ու արժեք են ստանում, երբ քրիստոնեական մեր արժեքները, միմյանց հանդեպ սերը, ազգ, պետություն չենացնելը գերիշխող նպատակներ են մեր կյանքում: Թանկ ենք վճարել մեր անկախ պետականության համար: Պահենք Հայաստան մեր երկիրը, մեր հայրենիքը, որ լինի պատվարը ազգահավաքության, մեր աշխարհացրիվ ժողովրդի ապահովության եւ առաջընթացի, պահենք մեր երկիրը մեր զավակների եւ սերունդների լուսավոր կյանքի համար, պահենք մեր երկիրը Աստծո փառքի համար:

Գոհութեան մաղթանքով, սիրելինե՛ր, վերստին աղօթք բարձրացնենք առ Աստված եւ հայցենք, որ Տերը պահպանի մեր ժողովրդին միասնական ու համախումբ, արի ոգով, ամուր հավատքով, որպեսզի մշտապես զորանա լինելու ընտրյալ ազգ, թագավորութիւն, քահանայութիւն, ազգ սուրբ եւ Աստծո սեփական ժողովուրդ եւ իր հոգու առաքինութիւնները ծառայեցնի հայրենաշէն ու ազգանվեր իր նպատակներին:

Թող Աստված խաղաղութիւն ու բարօրութիւն պարգեւի աշխարհին, մեր հայրենիքին ու աշխարհասփյուռ ժողովրդին, որպեսզի խնդութիւնն ու բերկրանքը իր հոգում մեր ժողովուրդը միշտ տոնախմբի հայոց պետութեան անկախութիւնը եւ չնորհավորանքի ու բարեմաղթանքի ջերմ խոսքեր ուղղի միմյանց:

Թող Տիրոջ սերը, չնորհը եւ ողորմութիւնը հովանի լինեն մեր երկրին, Հայաստան եւ Արցախ աշխարհին, եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդին այսօր եւ հավիտյանս. ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

(ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 24 ԱՊՐԻԼԻ 2010 Թ.)[1]

«Արդար է Տերը, արդարություն է սիրում,
ճշմարտությանն է նայում երեսը Նրա»
(Սղմ. Ժ 8):

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ:

Այսօր Հայրենիքում եւ Սփյուռքում մեր եկեղեցիներում սրբազան պատարագի մատուցմամբ, հուշակոթողների մոտ խոնարհումով եւ աղոթքով հիշատակում ենք 95-րդ տարելիցը Հայոց ցեղասպանության:

Տասնամյակների ընթացքում մեր ժողովուրդը միայնակ է կրել 20-րդ դարի իր մեծագույն ողբերգության խորը վիշտը: Այսօր բյուրավոր մարդիկ մեզ հետ նշում են հիշատակը Ցեղասպանության, որ մարդկության կյանքում բացառվեն այդօրինակ ոճիրները, զորանան խաղաղությունը, արդարությունը եւ երջանկությունը աշխարհում: Տարիներ շարունակ մեր ժողովուրդը միայնակ է հետամուտ եղել արդար իր դատի պաշտպանությանը՝ մնալով «ամէն կողմից ճնշուած, բայց ոչ՝ ընկճուած, կարօտեալ, բայց ոչ՝ յուսահատ, հալածուած, բայց ոչ՝ լքուած» (Բ Կորնթ. Դ 8-9), այլ՝ ապավինած քրիստոնեական իր հավատքին, մարդկության համար խաչված եւ հարություն առած Փրկչին աշխարհի, ուժ եւ զորություն է գտել Հայրենիքում եւ Սփյուռքում նոր կյանքով հառնելու եւ իր իրավունքները պաշտպանելու: Այսօր Հայոց ցեղասպանությունը ճանաչված է չատ ժողովուրդների,

[1] «Էջմիածին», 2010 Դ, էջ 11:

պետությունների, պետական եւ հասարակական կառույցների կողմից՝ համոզումով, որ խաղաղ ապագայի հույսը արդարության իրագործումն է, որի ճշմարիտ դրսեւորումը երկրային այս կյանքի մեջ մարդկանց եւ ազգերի իրավունքների պաշտպանությունն է: Միաձնաւէջ այս Սուրբ Տաճարում Աստծո եւ մեր նահատակ բյուրավոր զոհերի հիշատակի առջեւ աղոթք բարձրացնելով, չնորհակալության Մեր խոսքն ենք հղում բոլոր պետություններին, հասարակական կառույցներին եւ անձանց, ովքեր ճանաչում եւ դատապարտում են Հայոց ցեղասպանությունը եւ այսօր մեր ժողովրդի հետ են իրենց աղոթքներով:

Սիրելի՛ ժողովուրդ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս, այսօր մեր արդար դատը ներկայացնում ենք վերականգնված մեր պետականությամբ եւ աշխարհի բազմաթիվ երկրներում հարգված ու վստահելի, հոգեւոր ու ազգային կյանքով ամուր մեր համայնքներով: Այո՛, մեր ժողովուրդը կարողացել է ոտքի կանգնել, բայց դեռ ամոքված չէ կրած կորուստների ցավը: Ցեղասպանության զոհեր են սփյուռքահայ տարագիր մեր զավակները, ովքեր տուն, ընտանիք կորցրած, Հայրենիքից զրկված՝ ապրեցին տարբեր երկրներում իրենց նոր կյանքը կառուցելով զրկանքներով ու դժվարություններով: Ցեղասպանության զոհեր են ստիպողաբար իսլամ ընդունած հայերը եւ նրանց սերունդները, ովքեր վախենում են խոսել իրենց ինքնության մասին: Ցեղասպանության զոհ է Հայոց Եկեղեցին՝ հարյուրավոր եկեղեցիների ու վանքերի ավերումով, հազարավոր եկեղեցականների կորուստով, մշակութային դարավոր գանձերի մոխրացումով ու ոչնչացմամբ:

Իննեւկես տասնամյակ մեր ժողովուրդը հավատացել եւ հավատում է իր հանդեպ գործված ոճիրի համընդհանուր դատապարտմանը եւ արդարության հաղթանակին: Մեր ժողովրդի ակնկալությունն է՝ տեսնել հաղթանակը արդարության՝ ի դիմաց իր հանդեպ գործված չարիքի, իր կրած կորուստների, վշտերի ու տառապանքների: Անցած տասնամյակներում աշխարհում էական տեղաշարժեր են կատարվել, ձեւավորված միջազգային օրենքները, քաղաքացիական եւ սոցիալական հասարակություններ կառուցելու ժողովուրդների ձգտումը բարեհույս են դարձնում ընթացքները դեպի ավելի բարօր ու խաղաղ աշխարհ: Բարեփոխված այս աշխարհում առատանում է եւ հույսը մեր, որ համընդհանուր ճանաչում ու դատապարտում պիտի գտնի մեր ժողովրդի հանդեպ գործված Ցեղասպանությունը եւ իսպառ պիտի բացառվեն իրավունքների ոտնահարման, հալածանքով, կեղծիքով հարցերը վճռելու մտածողության դրսեւորումները, որոնցից ծնունդ

են առնում միայն չարիք, բախումներ ու ողբերգություններ: Հայաստանը չրջափակված պահելը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ազատ ապրելու իրավունքը մերժելը, սպառնալիքով հնչող կոչերը համահունչ չեն տարածաշրջանում կայունության ու ապահովության հաստատման գործընթացներին ու ճգտումներին, չեն նպաստում խաղաղության եւ համագործակցության հեռանկարին: Այսօր ենք կրում պատասխանատվությունը վաղվա օրվա եւ գալիքի համար: Եվ այսօր պիտի հետամուտ լինենք արդարությանը, քանզի արդարությունը բարիքներով է զարդարում մարդկային կյանքը եւ ինչպես սաղմոսերգուն է ասում. «Արդար է Տերը, արդարություն է սիրում, ճշմարտությանն է նայում երեսը Նրա» (Սղմ. ԺԱ 8):

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, վերածնվա՛ծ ժողովուրդ, Հայրենիք եւ Սփյուռք միասնությամբ հետեւողականորեն չարունակենք պաշտպանել մեր իրավունքները, վստահությամբ, որ արդարություն պիտի լինի մեր ժողովրդի համար եւ բոլոր պետությունների, նաեւ Թուրքիայի կողմից պիտի ճանաչվի եւ դատապարտվի Ցեղասպանությունը: Նվիրված մնանք մեր Հայրենիքը չենացնելու, ամենուր մեր ժողովրդի հոգեւոր եւ ազգային կյանքը բարօր դարձնելու, ավելի ու ավելի պայծառացնելու լուսավոր մեր իղձերին ու նպատակներին: Հաստատուն ու աննկուն մնանք խաղաղության Ավետարանի հույսին ու մեր ջանքերը բերենք բռնությունից ազատ, արդար եւ համերաշխ աշխարհի կառուցման ընթացքներին: Հիշատակի այս օրը խունկ եւ աղոթք մատուցենք վերստին, որ Տերը երկնային հավիտենության երանության մեջ պահի հոգիները Հայոց ցեղասպանության բյուրավոր զոհերի: Եվ թող Բարձրյալի օրհնությունը լինի մեր եւ բոլոր ժողովուրդների վրա ու խաղաղության երկնային չնորհները եւ սերը մեր Տիրոջ Հիսուս Քրիստոսի բաշխվեն աշխարհին այսօր եւ միշտ, ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(2 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2011 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Արցախի Հանրապետության տիար Բակո Սահակյան,

Մեծարգո՛ վաստակյալ նախագահներ տիար Ռոբերտ Քոչարյան եւ տիա՛ր Արկադի Ղուկասյան,

Հարգարժա՛ն պետական այրեր,

Գերաչնո՛րհ եւ հոգեչնո՛րհ հոգեւոր հայրեր,

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ.

Լուսավոր ու պայծառ օր է այսօր, պարծանքով ու հպարտությամբ զգացումով, Հայրենյաց սիրով, նոր հույսերով ու տեսիլքներով լեցուն օր, որի խորհուրդը Արցախի ազատ երկնքի ներքո համախմբել է մեզ եւ միավորել է համայն մեր ժողովրդին: Այսօր տոնական խնդությամբ է համակված հայության հոգին՝ միավորված ու միասնական ինչպես Արցախի ազատագրության օրերին, այնպես եւ այս սուրբ ու նվիրական հողում ծնունդ առած Հանրապետության պաշտպանության ու զորացման հետագա տարիներին:

1988 թ. Արցախը արտահայտեց իր ազատ հողում ազատ ապրելու կամքը մեր ժողովրդի: Արցախյան պայքարով զարթնեց ու ամրապնդվեց հաղթանակելու եւ իր նոր կյանքը կառուցելու մեր ժողովրդի հավատը: Արցախում պարզված ազատության դրոշը առաջնորդեց մեր ժողովրդին դեպի ազգային պետականության նոր առավոտի լույսը, որպեսզի այլեւս երբեք չխամրի մեր ազատ կյանքի այգաբացը: Այս հավատով, սիրելինե՛ր, փառք ենք մատուցում առ Բարձրյալն Աստված, որ արժանացրեց մեզ այս բարի օրվան եւ ուրախությանը: Գոհություն ենք հայտնում Տիրոջը, որ պարգեւեց ազգիս հայոց

[1] «Էջմիածին», 2011, Թ, էջ 4:

արիությունն, կամք եւ զորությունն՝ հաղթահարելու փորձություններն ու դժվարությունները, պարգեւեց համբերություն՝ դիմանալու նեղություններին, կորուստներին ու ցավին, օրհնեց մեր ժողովրդի նվիրումն ու ջանքերը՝ հանուն իր երկրի ազատության, խաղաղության ու բարօրության: Փառք Ամենակալին, բյուր փառք եւ գոհություն, որ անհնարին թվացողը իրականություն դարձավ, անհավանականը՝ հավանական, եւ այսօր մեր ժողովուրդը տոնում է Արցախում եւ Հայաստանում իր վերածնված պետականության 20-ամյա տարեդարձը՝ հպարտ իր ձեռքբերումներով:

Սիրելի՛ հայորդիներ, սիրելի՛ բարեպաշտ զավակներ Մեր, այսօր մենք նորոգում ենք մեր ուխտը, մեր կամքն ու հավատքը՝ ամրագրելու, անշրջելի դարձնելու եւ բազմապատկելու այդ ձեռքբերումները՝ իրականություն դարձնելու համար այն հույսերը, որոնք միայն մեր սերունդը չէ, որ փայփայել է: Անցած 20 տարիները նույնպես վկայեցին, որ ազգի ուժն ու կարողությունը նրա հոգեւոր զորության մեջ է, նրա զավակների միասնականության: Արցախը դարձավ միասնության այն կիզակետը, որտեղ կենտրոնացան աշխարհասփյուռ մեր ժողովրդի սատարումն ու աջակցությունը, որտեղ թեւեր առան մեր ժողովրդի հայրենասիրությունն ու նվիրումը, զոհողությունների պատրաստ հանձնառությունը, որտեղ աշխարհասփյուռ ազգս հայոց բռունցքվեց, դարձավ արցախցի, եւ կերտեցինք ազատ անկախ, հզոր Արցախը: Միաբանության ու եղբայրասիրության ոգին, խաղաղասիրության, արդարության ու ճշմարտության արժեքները, սիրելինե՛ր, մեր հոգուն միշտ զորություն են տալու, մեր բազկին՝ ուժ եւ մտքին իմաստություն: Այդ արժեքներով պիտի չենացնենք մեր Հայրենիքը, պիտի բարօր ու առաջընթաց դարձնենք աշխարհասփյուռ մեր կյանքը եւ հակառակ բոլոր խոչընդոտների՝ ճանաչում պիտի գտնի Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը պետությունների ու միջազգային կառույցների կողմից:

Մեր բոլոր հույսերն ու ձգտումները նոր հաղթանակներով կյանքի կոչելու համար ամուր եւ միասնական մնանք առ Հայրենին սիրո մեջ եւ լինենք աննկուն մեր հավատքով ու աստվածապավինությամբ, որով երբեք չդադարեցինք պայքարել ազատ ապրելու մեր իրավունքի համար: Տիրոջից մեզ չնորհված հաղթությունը բազմապատկենք ու ամրապնդենք հայրենաշեն ու ազգանվեր մեր գործերով, մեր աշխատանքի ու ծառայության մեջ պատասխանատվությամբ, մեր երկրի հանդեպ հոգածությամբ: Հանուն մեր պատմության, մեր ներկայի, մեր

պապերի ու հայրերի, մեր որդիների ու սերունդների՝ կերտենք մեր երկիրը հզոր ու բարգավաճող, մեր գալիքը՝ խաղաղ ու երջանիկ:

Այս տոնական օրը Բարձրյալի աջակցությունն ենք հայցում Ձեզ՝ մեծարգո՛ նախագահ տիար Բակո Սահակյան, եւ մաղթում ենք նոր կորով ու եռանդ, նոր ձեռքբերումներ քաջարի Արցախին ծառայության Ձեր բարձր պաշտոնում:

Աղոթք ենք բարձրացնում, որ Ամենակարող Աստված խաղաղ պահի մեր Հայրենիքը եւ համայն մեր ժողովրդին, Իր Աջի հովանու ներքո առաջնորդի մեզ՝ հաջողությամբ պսակելու մեր հույսերը՝ ի սեր մեր երկրի եւ մեր ժողովրդի պայծառ գալիքի:

Թող միշտ հիշվի սխրանքը Հայրենիքի համար իրենց կյանքը զոհաբերած հերոսների եւ հանապազ աղոթք բարձրանա նրանց հոգիների համար:

Թող միշտ կեցցեն Հայրենիքը պաշտպանողների, չենացնողների, զորացնողների գործերն ու անունները:

Եվ հավերժ թող ապրի Արցախը ու նրա հերոս ժողովուրդը՝ աշխարհասփյուռ հայության հետ, հայոց պետականության հովանու ներքո:

Օրհնյալ ու հաղթական երթ դեպի նոր դարեր ու հազարամյակներ հավերժի ճամփորդ մեր ժողովրդին, ամեն::



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՂԹԱՆԱԿԻ ՏՈՆԻ, ԼՂՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԵՎ ՇՈՒՇԻԻ ԱԶԱՏԱԳՐՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(ԼՂՀ, 9 ՄԱՅԻՍԻ, 2012 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության տիար Սերժ Սարգսյան,

Մեծարգո՛ նախագահ Արցախի Հանրապետության տիար Բակո Սահակյան,

Վաստակյա՛լ նախագահներ տիար Ռոբերտ Քոչարյան եւ տիար Արկադի Ղուկասյան,

Գերաշնո՛րհ, հոգեշնորհ, արժանապատի՛վ հայրեր,

Հարգարժա՛ն պետական այրեր,

Սիրելի՛ հավատավոր ժողովուրդ եւ պատվակա՛ն հյուրեր:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից անհուն ուրախությամբ եկել ենք Հայրապետական Մեր օրհնությունը բերելու եւ խնդակից լինելու ձեզ Մայիսի 9-ի այս լուսավոր, բերկրանքով ու քաջալերությամբ լեցուն օրը, երբ տոնում ենք Երկրորդ համաշխարհային պատերազմի հաղթանակը, Շուշիի ազատագրության եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի 20-ամյա հոբելյանը: Եկել ենք շնորհավորելու եւ Մեր գնահատանքը բերելու ձեզ, մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության, մեծարգո՛ Նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության, հայո՛ց պետական այրեր, սիրելի՛ հաղթանակած ժողովուրդ՝ Մեր հավատավոր զավակներ Արցախի, Հայաստանի եւ Սփյուռքի: Մեր չուրթերին այս պահին սաղմոսերգուի օրհներգն է, որ, որպես աղոթք, բարձրացնում ենք առ Տերը, ասելով. «Քո երեսի լույսը ծագեց մեզ վրայ, եւ ուրախությիւն տուեցիր մեր սրտերին» (Սղմ. Դ 7-8):

---

[1] «Էջմիածին», 2012, Ե, էջ 9:

Շուշիի ազատագրումով Աստծո արդարության լույսը փայլեց մեր կյանքում՝ լիառատ ուրախությամբ համակելով սրտերը մեր ժողովրդի եւ առատացնելով հույսերը պատերազմի հաղթական ավարտի: Այսօր լռել են պատերազմի ճայները: Շուշիի Սուրբ Ամենափրկիչ նորոգված ու նորաշուք եկեղեցու զանգակատան բարձունքից հրեշտակները հնչեցնում են օրհներգության փողը հաղթանակի ու խաղաղության, հնչեցնում են չեփորն ազատ կյանքի եւ արդար իրավունքի, որը երբեք եւ ոչ մի ժամանակ չլռեց մեր ժողովրդի հոգում: Ազատ ապրելու այս ոգով է գրվել մեր դարավոր հերոսական պատմությունը: Այս ոգով մեր ժողովուրդը, այդ թվում՝ Արցախի քաջարի զավակները, իր արժանի մասնակցությունն ու մեծ ավանդն է բերել Երկրորդ աշխարհամարտում՝ պայքարելով ազգերի լիբերալ ու խաղաղ կյանքի համար: Այսօր ազգս հայոց, նույն ոգով հաղթանակած Արցախյան ազատամարտում, տերն է իր արդար իրավունքների:

Դժվարին, բայց հույսով, հավատքով ու տեսիլքով լեցուն ուղի ենք անցել, սիրելինե՛ր: Մենք հաղթեցինք պատերազմում, որը մենք չէինք սկսել: Այդ պանծալի հաղթանակը մեր ժողովուրդը կերտեց հերոսական մաքառումով, անհամար զոհողություններով, հավատավոր եւ հայրենանվեր հոգու արիությամբ: Արցախով զորացան սրտերը աշխարհասփյուռ մեր ժողովրդի, եւ համախմբվեց ազգս՝ մեկտեղելով իր ուժերն ու հնարավորությունները հանուն Արցախի պաշտպանության եւ հայրենի պետականության ազատ ու բարօր կյանքի: Արդարեւ, Արցախի այս հողն ու երկիրը, որ մի բուռ տարածքն է պատմական մեր Հայրենիքի, վերջին երկու տասնամյակի իր պատմությամբ վկայությունն է բերում մեր ժողովրդի հայրենասեր ու ազգանվեր հոգու, վճռական կամքի. հաղթական բազկի, միասնականության եւ համատեղ ջանքերի արդյունավորման:

Փառք եւ գոհություն Աստծո. այսօր Հայաստանի եւ Սփյուռքի կողքին օր օրի չենանում է Արցախը, լցվում բարեբեր ու խնդառատ կյանքով: Համայն մեր ժողովրդի աջակցությամբ, արդար վաստակով, արցախահայության ջանք ու նվիրումով բարձրանում են դարավոր վանքերն ու եկեղեցիները, նորոգվում ու պայծառանում հոգեւոր, դիտակրթական ու մշակութային կյանքը: Կառուցապատվում եւ նոր կյանքով է լցվում նաեւ Շուշին՝ պատմական ծաղկուն քաղաքն Արցախի: Ազատ Արցախում ծնված սերունդն այսօր կյանք է մտնում պայծառ գալիքի նոր տեսլականով: Այս ձեռքբերումներն ու արդար


հույսերը առավել պարտավորեցնում են մեզ հայրենակերտումի նոր սխրանքների:

Սիրելի՛ ժողովուրդ հայոց, Աստծո լույսն ու օրհնությունն են ծագել մեզ վրա, ունենք գլխավորը՝ մեր Հայրենիքի ազատությունը: Մեր հույսն առ Աստված, հավատքով զինված, քրիստոնեական արժեքներին, մեր Սուրբ Եկեղեցուն հավատարիմ՝ կառուցենք վաղվա լուսավոր օրը: Դեռեւս քիչ չեն դժվարություններն ու խնդիրները: Մեր կյանքի հրամայականներին պիտի դիմագրավենք եւ բոլոր խոչընդոտները պիտի հաղթահարենք Հայրենիքի հանդեպ նույն սիրով ու պատասխանատվությամբ, լավագույն ծառայությամբ ու հայրենանվեր ազնիվ գործերով, որոնցով եւ ձեռք են բերվել մեր հաղթանակները: Թող մեզ զորացնեն ազատության եւ հայրենի պետականության վերահաստատման մեր անցած ուղին, նաեւ հզոր եւ միասնական Հայրենիքի մեր իղձերն ու տեսիլքները, մեր զավակների, մեր ժողովրդի լուսավոր գալիքի հույսերը, որպեսզի ամեն ժամ ապրենք ու գործենք դրանք մարմնավորելու աներկբա կամքով՝ միասնական ջանքերով հաղթանակի առաջնորդելով նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչումը: Անվարան ու հաստատուն ընթանանք Տիրոջ ճանապարհներով, եւ «Նա այնպէս կանի,- ինչպես օրհներգում է սաղմոսերգուն,- որ արդարութիւնդ երեւայ, ինչպէս լոյս, եւ իրաւունքդ՝ ինչպէս ցերեկ» (Սղմ. Լ Զ 6):

Սիրելինե՛ր, Արցախի նվիրական հողից Հայրապետական Մեր աղոթքը առ Աստված բարձրացնելով, հայցում ենք, որ Իր Սուրբ Աջի հովանու ներքո խաղաղ պահպանի մեր Հայրենիքը, մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ հանապազ օրհնի ազգիս՝ մարմնավորելու մեր իղձերն ու մեր լուսավոր գալիքը:

Մեր աղոթքն ենք բարձրացնում երկինք՝ հոգիների համար Արցախյան ազատամարտում եւ երկրորդ աշխարհամարտում զոհված մեր զավակների եւ բոլոր նրանց համար, ովքեր իրենց կյանքով կերտեցին հաղթանակը:

Փառք, բյուր հազար փառք, աշխարհասփյուռ ազգիս հայոց: Փառք Արցախի հերոսական ժողովրդին, Պաշտպանության բանակին: Փառք ու կրկին փառք Հայրենիքը պաշտպանողներին, զորացնողներին եւ չենացնողներին: Թող միշտ ապրեն նրանց բարի գործերը եւ ներշնչեն նոր արարումների, թող սերնդեսերունդ հիշվեն նրանց պանծալի անունները:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՍՈՍ ՍԱՐԳՍՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(29 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Սիրելի՛ ներկաներ:

Աղոթասաց հոգով եւ սրտի խոր տխրությամբ այսօր հրաժեշտ ենք տալիս մեր ժողովրդի սիրեցյալ զավակին՝ հայ կինոյի ու թատրոնի նվիրյալ մշակ Սոս Սարգսյանին: Մեծանուն հայորդին բարի հիշատակ է թողնում մեր հոգիներում՝ ի Տեր ննջելով ստեղծագործական արգասավոր վաստակով եւ արժանավոր գործերով:

«Երանելի է մանաւանդ տալն, քան առնուլն». ավետարանական այս պատվիրանով Սոս Սարգսյանը ապրեց ու արարեց եւ մինչ կյանքի վերջին պահը ձգտեց Տիրոջից իրեն պարգեւված շնորհները, իր իմացությունն ու կարողությունները ծառայեցնել Մայր Հայրենիքին ու հարազատ ժողովրդին: Երիտասարդ տարիքում մուտք գործելով բեմարվեստի ասպարեզ՝ Սոս Սարգսյանն իր ուրույն անկեղծությամբ բնորոշ ոճով եւ պայծառ տաղանդով փայլեց ժամանակի անվանի մեծությունների կողքին: Մեր ժողովուրդը առաջին իսկ դերակատարումներից բարձորեն գնահատեց նրա խորազգաց ու մեծ արվեստը եւ զգաց նրա անձով վեր հառնող հոգեհարազատ ազգային նկարագիրը: Լուսավոր միտք, անխոնջ աշխատասիրություն, պատվախնդրություն գործի հանդեպ. այսպես ներկայացավ արվեստասեր հանրությանը լուսահոգի հանգուցյալը եւ անկրկնելի վարպետությամբ մարմնավորեց բազմաթիվ դերեր: Մեր ժողովուրդը հավետ երախտապարտ պիտի լինի Սոս Սարգսյանին եւ նրա տաղանդավոր սերնդակիցներին, ովքեր, պահպանելով ազգային մեր ավանդները, նոր չունչ ու ոգի հաղորդեցին հայ բեմարվեստի առաջընթացին: Հետպատերազմյան տարիներին, բազմաթիվ դժվարությունների ու խոչընդոտների մեջ նրանք

[1] «Էջմիածին», 2013, Թ, էջ 52:

կերտեցին հայ թատրոնի ու կինոյի ոսկեդարը՝ ստեղծելով մեծ կտավի գործեր, որոնք ազնվության, արդարության, մարդասիրության բարձր արժեքներով ու սկզբունքներով, մեր ժողովրդի եւ հայրենիքի հանդեպ ճշմարիտ սիրով, պարտքի գիտակցությամբ սերունդներ կրթեցին եւ շարունակում են հուզել եւ ուսուցանել երիտասարդներին:

Այս արժեքների կրողն էր մեծ վարպետը եւ նախանձախնդրորեն փոխանցում էր իր ուսանողներին՝ կինոյի եւ թատրոնի պետական ինստիտուտում, նաեւ իր իսկ հիմնած Համազգային թատրոնում դասավանդելով երկար տարիներ եւ մեծ ավանդ բերելով ապագա դերասանների պատրաստության գործին: Որպես իսկական մտավորական՝ հայրենասեր հայորդին ջերմ սիրով զորակցեց արցախյան ազատամարտին՝ քաղաքացիական բարձր գիտակցությամբ պայքարին մասնակցություն բերելով առաջին իսկ օրերից: Մեծանուն դերասանը ազնիվ ջանքեր բերեց մեր անկախ պետականության կայացմանը, մեր երկրի առջեւ ծառացած խնդիրների հաղթահարման ընթացքներին, միշտ ձգտեց կարելին ի սպաս բերել հանուն մեր երկրի ու ժողովրդի լուսավոր գալիքի: Լուսահոգի Սոս Սարգսյանը երանյալ կյանք ապրեց եւ հավիտենություն փոխադրվելով՝ իր պայծառ հիշատակը թողեց մեր սրտերում:


Այսօր մխիթարությամբ ենք անդրադառնում, որ բազմաթիվ պետական ու մշակութային պարգեւների ու մրցանակների կողքին լուսահոգի Սոս Սարգսյանի կուրծքը արժանիորեն զարդարված է նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Սուրբ Սահակ-Սուրբ Մեսրոպ պատվո բարձր շքանշանով:

Մեր հոգեբուխ աղոթքն է, որ Բազումողորմ Աստված երկնային երանավետ բարճունքներում խաղաղության մեջ ընդունի Իր ծառայի՝ Սոս Սարգսյանի լույս հոգին՝ դասելով «ընդ սուրբս եւ ընդ սիրելիս անուան Իւրոյ»: Թող Տերը Սուրբ Հոգու չնորհով մխիթարություն ու սփոփանք պարգեւի Սարգսյան ընտանիքի սգակիր անդամներին, գործընկերներին եւ մեր ողջ ժողովրդին:

Խունկ, աղոթք եւ օրհնություն հոգելույս Սոս Սարգսյանի բարի հիշատակին:

Վշտակցությամբ եւ օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԵՐՄԱՆԱ-ՀԱՅԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՅՈՒՐԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԱԿԱԴԵՄԻԱԿԱՆ ՍԻՄՊՈԶԻՈՒՄԻ ԱՌԻԹՈՎ

(18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

Գերմանա-հայկական ընկերության հարյուրամյակին նվիրված ակադեմիական սիմպոզիումի մեծարգո՛ մասնակիցներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական մեր սերն ու օրհնությունն ենք բերում հայ-գերմանական բարեկամությանը կարեւոր նպաստ բերած Գերմանա-հայկական ընկերության հոբելյանի տոնախմբման առիթով: Ուրախությամբ ու գոհունակությամբ ենք արձանագրում եղբայրական այդ ջերմ հարաբերությունների դարակազմիկ տարեդարձը: Եվ միաժամանակ անդրադառնում ենք, որ հարյուրամյա վաղեմիության ու պատմության խորքից դրանք համագործակցության ու եղբայրական վստահության նորանոր հորիզոններ են բացում երկու ժողովուրդների գիտամշակութային կյանքում:

Հայ-գերմանական բարեկամական հարաբերությունները իրենց սկզբնավորմամբ ունեցան դառը փորձության ու քննության ժամանակաշրջան, երբ նշանավոր դոկտոր Յոհաննես Լեփսիուսի կողմից 1914 թ. Գերմանա-հայկական ընկերության հիմնադրումից ընդամենը մի քանի ամիս անց մարդկության ցնցեց հայ ժողովրդի տեղահանության ու զանգվածային ոչնչացման՝ ցեղասպանության լուրը: Այն պահին, երբ միջազգային քաղաքական հանրությունը լռում էր, երբ նույնիսկ գերմանական քաղաքական վերնախավերում գիտակցված անտարբերության էր մատնվել հայերի ցեղասպանության փաստը, դոկտոր Յոհաննես Լեփսիուսն իր անձնական օրինակով ցույց տվեց քրիստոնեական ու մարդասիրական վերաբերմունքի բարձրագույն օրինակը: Զափազանցություն չի թվա թերեւս, եթե նշենք, որ Յոհաննես Լեփսիուսով սկիզբ առավ այն մեծ հայասերների շարքը, ովքեր ցե-

[1] «Էջմիածին», 2014, Թ, էջ 17:

դասպանությանը հաջորդած տարիներին հայ ժողովրդին ցուցաբերած անմնացորդ ու անշահախնդիր օգնության համար արժանացան հայոց պատմության ու հայ ժողովրդի անկեղծ սիրուն եւ համակրանքին:

Հայ-գերմանական բարեկամության առաջ հունձքը հատկապես զգալի դարձավ ԺԹ դարավերջին եւ Ի դարասկզբին, երբ տասնյակ հայ երիտասարդ հոգեւորականներ ու գիտնականներ, իրենց մասնագիտական կրթությունն ստանալով գերմանական առաջատար համալսարաններում եւ գիտական կենտրոններում, Սուրբ Էջմիածնում եւ Հայաստանի գիտական այլ կենտրոններում նոր բարձունքի հասցրեցին հայագիտությունն ու հայերենագիտությունը: Գիտամշակութային այս ծաղկուն համագործակցությունը հաստատուն հիմքերի վրա դրեց հայ-գերմանական բարեկամությունը, որի ջերմ ու եղբայրական շնչի ներքո այստեղ հավաքված եք դուք, սիմպոզիումի սիրելի՛ մասնակիցներ: Գերմանա-հայկական այդ համագործակցությանը նոր թափ հաղորդեցին հայ մեծանուն եկեղեցականներ ու հայագետներ Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը, Գարեգին Ա Հովսեփյանց Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսը, Արշակ վարդապետ Տեր-Միքելյանը, Կոմիտաս Վարդապետը եւ շատ ու շատ ուրիշներ: Նոր ժամանակներում Մենք հատկապես խոր ցավով ու անկեղծ գնահատանքով ենք հիշում գերմանա-հայկական բարեկամության նվիրյալ հայագետ, աստվածաբան Հ. Հոլցին, որի անժամանակ մահը մեծ ցավ ու տրտմություն պատճառեց ամենքիս: Նրա ու գերմանահայկական բարեկամության մնացած բոլոր նվիրյալների անունները պիտի հավերժորեն գրանցվեն հայ եւ գերմանացի ժողովուրդների պատմության ամենալուսավոր էջերին:

Սիրելի՛ ներկաներ ու հրավիրյալներ, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր մաղթանքն ու աղոթքն է, որ Ամենակալ Տերն իր իմաստության ու չնորհի հովանու ներքո պահի Ձեզ՝ գիտության ու մշակույթի նվիրյալներիդ, պարգեւի խաղաղ ու ստեղծագործ ընթացք գերմանա-հայկական ընկերության ապագա բոլոր ձեռնարկումներին ու ծրագրերին: Թող Ձեր տեսլականներն ու ազնիվ մտահղացումները հիմնվեն հավատի, սիրո ու նվիրումի անսասան հիմքի վրա, ինչպես աղոթում է սաղմոսերգուն. «Եթէ Տէրը տունը չչինի, իզուր են չարչարւում այն չինողները» (Սղմ. ՃԻՋ 1): Աստծո սերն ու իմաստությունը Ձեզ ամենքիդ՝ երկու եղբայր ժողովուրդների անկեղծ բարեկամության կերտման նվիրական ճանապարհին:

ԵԿԵՂԵՑԻ ԵՒ
ՊԵՏՈՒԹՅՈՒՆ
(ՊԵՏԱԿԱՆ ՏՈՆԵՐ)



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԼՂՀ ՌԱԶՄԱՕԴԱՅԻՆ ՈՒԺԵՐԻ ԿՈՐԾԱՆՎԱԾ ՈՒՂՂԱԹԻՌԻ ՁՈՒՎԱԾ ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(24 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)

Սիրելի՛ սգակիր ժողովուրդ,

Վչտով են համակված մեր հոգիները: Մեծ ցավ էր ամենքիս համար օրեր առաջ ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական զինուժի կողմից դավադրաբար խոցված հայկական ուղղաթիռի անձնակազմի կորուստը:

Բոլորս մեր խոնարհումն ենք բերում զոհված մեր անմեղ զավակների հիշատակին: Կորստի ծանր պահերին միմյանց զորակցությունը սփոփանք է վշտացյալների սրտերին, ինչպես ասում է Պողոս առաքյալը. «Հայրը գթությունների եւ Աստված ամենայն մխիթարության, որ մխիթարում է մեզ մեր բոլոր նեղություններում, որպեսզի կարող լինենք մխիթարել նրանց, ովքեր ամեն տեսակ նեղությունների մեջ են» (Բ Կորնթ. 1. 3-4): Մեր սրտակցությունն ու ցավակցությունն ենք հայտնում զոհվածների ընտանիքների անդամներին, հարազատներին, մերձավորիներին ու զինակից ընկերներին:

Խստորեն դատապարտում ենք Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի խաղաղ կարգավորման գործընթացը խաթարող Ադրբեջանի ռազմատենչ, սադրիչ գործողությունները, որոնց դրսեւորումը եղավ նաեւ այս ոճրագործությունը՝ հայկական ուղղաթիռի կործանումը եւ մեր օդաչուների ողբերգական մահը:

Խոցված ուղղաթիռի անձնակազմի աճյունների դուրս բերմանը բոլոր միջոցներով խոչընդոտելու Ադրբեջանի անմարդկային քայլերը, մարդասիրական եւ բարոյական համամարդկային նորմերի անտեսումը ստիպեցին Արցախի պաշտպանության բանակին դիմելու հատուկ գործողության: Այսօր մեր սրտերը համակված են ոչ միայն ցավով, այլեւ մխիթարության զգացումով, որ մեր քաջարի ու անվեհեր մարտիկ-


ները հերոսաբար կարողացան իրականացնել իրենց առաքելությունը՝ դուրս բերելով զոհված օդաչուների աճյունները:

Ադրբեջանի կողմից հրադադարի անընդմեջ խախտումները, դիվերսիոն գործողությունները, սահմանամերձ բնակավայրերի պարբերաբար գնդակոծությունները, որոնց հավելվեց այս ոճրագործությունը, լուրջ վտանգ եւ սպառնալիք են տարածաշրջանի փխրուն խաղաղության համար եւ անմեղ կյանքեր են խլում: Մեր ժողովուրդն աստվածապատվեր խաղաղության կողմնակից է եւ այսօր էլ չարունակում է ջանքեր ներդնել մեզ պարտադրված պատերազմից հետո պահպանելու թանկ գնով ձեռք բերված խաղաղությունը, քանզի աստվածապարգեւ կյանքը գերագույն արժեք է, սուրբ ու նվիրական, եւ աստվածային կամքին հակառակ են բռնություններն ու ոտնձգությունը՝ մարդկային կյանքի եւ ազատ ապրելու իրավունքի դեմ:

Սիրելի՛ սգակիր հայորդիներ, այսօր մենք միասնական աղոթակցությամբ հայց ենք բարձրացնում առ ամենակալն Աստված, որ չխաթարվի խաղաղությունը տարածաշրջանում, որ մեր ժողովուրդը հարկադրված չլինի զենքով եւ իր զավակի կյանքի թանկ գնով պաշտպանել իր ազատ ու անկախ ապրելու իրավունքը: Աղոթում ենք, որ Երկնավորի ամենախնամ Սուրբ Աչը հովանի ու պահապան լինի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկրին, մեր ժողովրդին՝ ի սփյուռս աշխարհի, պահապան լինի մեր բոլոր զինվորներին եւ միշտ աննկուն պահի քաջարի ոգին եւ հաղթական՝ բազուկը հայրենյաց հերոս պաշտպանների: Հայցում ենք ամենագութ Տիրոջից, որ երկնքի արքայության հավիտենական հանգրվաններում երանություն եւ հանգստություն պարգեւի լույս հոգիներին զոված հայոց արժանավոր զավակների՝ Սերգեյ Սահակյանի, Սարգիս Նազարյանի, Ազատ Սահակյանի, եւ Սուրբ Հոգու բյուր չնորհներով մխիթարի եւ սփոփի սգակիր սրտերը զոհվածների ընտանյաց անդամների, հարազատների եւ մերձավորների:

Աղոթք եւ օրհնություն մեր անմեղ հայորդիների լույս հիշատակին:

«Յիշեսցէ Տէր զհոգիս նորոգ ննջեցելոց եւ հանգուսցէ զնոսա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. Ամէն»:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ՏԱԹԵՎ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՂԱՐԻԲՅԱՆԻ ՀՈՒՂԱՐԿԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(ՆՈՅԵՄԲԵՐ, 2014 Թ.)[1]

Գերաչնո՛րհ Տ. Նարեկ եպիսկոպոս Բերբերյան, Բրազիլիայի Հայոց թեմի առաջնորդ,

Հարգարժա՛ն վարչականներ տիրախնամ թեմի,

Սիրեցյա՛լ հավատավոր զավակներ Մեր:

Խորը վշտով տեղեկացանք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու վաստակաշատ հոգեւորական գերաչնորհ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Ղարիբյանի վախճանման մասին:

Ցավ է Մեզ համար սիրելի Սրբազանի կորուստը: Այս դժվարին պահին ձեզ հետ ենք Մեր աղոթքներով եւ վերստին գնահատանքով ենք անդրադառնում մեր Սուրբ Եկեղեցու անդաստանում ծառայանվեր ոգով տքնած Տիրոջ հավատարիմ սպասավորի կեսդարյա քահանայագործությանը: Մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, Իրեն ծառայողներին խոստացավ հավիտենության մեջ Իր աստվածային ներկայության մշտական վայելքը, ասելով. «Եթե մեկն Ինձ ծառայի, Իմ հետեւից կգա. եւ ուր Ես եմ, այնտեղ կլինի եւ Իմ ծառան» (Հովհ. ԺԲ 26): Տերունական այս խոսքերը համահունչ են հանգուցյալ Տաթեւ Սրբազանի բարեպաշտ ու ծառայանվեր ընթացքին: Լուսահոգի Տաթեւ Սրբազանը մեր Սուրբ Եկեղեցու նախանձախնդիր, խոնարհ ու կորովի եկեղեցականներից էր, ով առ Աստված մեծ սիրով ստանձնեց կուսակրոն հոգեւորականի առաքելությունը եւ աստվածահաճո ընթացքով իր կյանքը դարձրեց նվիրում ու ծառայություն Ամենակալ Տիրոջը եւ Քրիստոսասեր մեր ժողովրդին: Արգենտինայում, ապա Բրազիլիայում հովվական սպասավորությամբ, այնուհետ նաեւ առաջնորդական բեղուն գործունեությամբ լուսահոգի Սրբազանը նոր առաջընթաց ու չինություն բերեց Բրազիլիայի Հայոց տիրախնամ թեմին՝ թեմական ու ծխական կառույցների ձեւավորմամբ, հոգեւոր-եկեղեցական կյանքի աշխուժացմամբ, եկեղեցիների, կրթական հաստատությունների նո-

[1] «Էջմիածին», 2014, ԺԱ, էջ 9:

րոգութեամբ, նոր սերնդի կրթութեան արդիւնավորմամբ: Լուսահոգի Սրբազանը նաեւ սիրով ու պատրաստակամութեամբ ջակից եղավ նորընտիր առաջնորդ գերաշնորհ Տ. Նարեկ եպիսկոպոս Բերբերեանին, որպեսզի մեր Եկեղեցին չարունակի արգասավորութեամբ պայծառացնել Բրազիլիայում բնակեալ հավատավոր հայորդիների հոգեւոր ու ազգային կեանքի անդաստանը:

Բրազիլիայի Հայոց թեմ Հովվապետական Մեր այցելութիւննեբի ընթացքում Մենք զգացել ենք Տաթեւ արքեպիսկոպոսի հանդեպ հավատացյալ հայորդիների ջերմ սերն ու հարգանքը, որին Սրբազան Հայրն արժանացել է հավատացյալների հանդեպ դրսեւորած հայրական խնամքի շնորհիվ:

Տակավին Վազգեն Ա երջանկահիշատակ Հայրապետի գահակալութեան տարիներից Հոգելույս Սրբազանը նաեւ կարեւոր ներդրում բերեց մեր Սուրբ Եկեղեցու առաքելութեան արդյունավորմանը՝ որպես անդամը Գերագույն Հոգեւոր խորհրդի:

Իր ծառայանվեր ընթացքով ու գովելի վաստակով մեր Սուրբ Եկեղեցու եւ հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հանդեպ որդիական անվերապահ հավատարմութեամբ լուսահոգի Սրբազանը օրինակ է մեր երիտասարդ եկեղեցականաց համար:

Հոգելույս Սրբազանը մեծապես գնահատված է եղել Հայոց Հայրապետների կողմից: Սիրելի Տաթեւ արքեպիսկոպոսի քահանայագործութեան հիսնամյա հոբելյանի առիթով Մենք Սրբազան Հոր կուրծքը զարդարել ենք Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Սուրբ Ներսես Շնորհալի պատվո բարձր չքանշանով՝ գնահատելով նրա ծանրաբեռն վաստակն ու գովարժան ծառայութիւնները:

Բարեհիշատակ Սրբազանը, ծառայական, երկրավոր իր ընթացքը ավարտելով՝ փոխադրվեց հավիտենութիւն՝ բարի եւ լուսավոր հիշատակ թողնելով բոլորիս սրտերում:


Ի խորոց սրտի Մեր աղոթքն է առ Ամենողորմ Տերը, որպեսզի Բարեգութն Աստված երկնից լուսեղեն օթեւաններում խաղաղութեան մեջ ընդունի իր հավատարիմ սպասավորի հոգին, շնորհի հանգստութիւն ու երանութիւն եւ Սուրբ Հոգու մխիթարութիւնը պարգեւի մեզ ամենքիս:

«Յիշեսցէ, Տէ՛ր, զհոգի ծառային Իւրոյ եւ հանգուսցէ զնա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. ամէն»:

Վշտակիր սիրով եւ օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ ՀՌՈՄԻ ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(12 ԱՊՐԻԼԻ, 2015 Թ., ՍՈՒՐԲ ՊԵՏՐՈՍԻ ՏԱՃԱՐ, ՀՌՈՄ)[1]

Ձե՛րդ Սրբութիւն, սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս,

Աստծո ողորմած կամքով վերստին այցելել ենք Հռոմ: Եկել ենք Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանի, Մեր հոգեւոր եղբոր՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի, Հայ Եկեղեցու եպիսկոպոսաց դասի եւ աշխարհասփյուռ հավատավոր Մեր զավակների ներկայացուցիչների հետ՝ Սուրբ Հարության խնդությունը մեր հոգում, Քրիստոսավանդ սիրով եղբայրական Մեր ողջույնն ու բարեմաղթանքները բերելու Ձերդ Սրբությանը եւ մեր աղոթքներով մասնակից լինելու Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ Ձեր կողմից մատուցված Սրբազան Պատարագին Սուրբ Պետրոսի տաճարում:

Մեր քույր Եկեղեցիների բարեկամությունը վկայող սրբազան այս արարողության ընթացքին, ի գոհունակություն Մեզ եւ մեր ժողովրդի, Հայ Եկեղեցու հայրերից սուրբ Գրիգոր Նարեկացին Ձերդ Սրբության կողմից հռչակվեց Կաթոլիկ Եկեղեցու սահմանումով՝ «Վարդապետ Եկեղեցու»: Աղոթասույց եւ տիեզերալույս սուրբ Նարեկացին 10-րդ դարում մարդկային բոլոր սերունդների ապաշխարության եւ խոստովանության աղերսը, որպես «ի խորոց սրտի խոսք ընդ Աստուծոյ», երկինք բուրվառեց: Սուրբ վանականը հայոց համար պաշտելի իր «չնչավոր մատյանով» Քրիստոսաշնորհ փրկության ուղին ցույց տվեց «մեղավորներին ու արդարներին, վեհերին ու փոքրերին, բարիներին ու եղեռնագործներին» (Բան Գ)՝ դեպի Աստված առաջնորդելով բոլոր ժամանակների հավատացյալներին:

---

[1] «Էջմիածին», 2015, Դ, էջ 20:

Նարեկացի ծնած մեր ժողովուրդը քրիստոնեական հավատքի եւ ազգային ինքնության համար իր պատմության ընթացքում բազում արհավիրքներ է տեսել, փորձություններուն դիմակայել: Մեկ դար առաջ Օսմանյան Թուրքիայում մեր ժողովրդի հանդեպ իրագործվեց ցեղասպանության ահռելի ոճիրը: Կանխամտածված ծրագրով, աննկարագրելի դաժանությամբ սպանվեցին մեկ եւ կես միլիոն հայեր: Հինավուրց մեր ժողովուրդը արմատախիլ արվեց իր նվիրական բնօրրանից՝ պատմական հայրենիքից եւ տարագիր սփռվեց տարբեր երկրներում: Ավերվեց, ոչնչացվեց, բռնազավթվեց քրիստոնեական մեր դարավոր ժառանգությունը: Ոչինչ, սակայն, ո՛չ տառապանք, ո՛չ հալածանք, ո՛չ անգամ մահ՝ չսասանեցին մեր ժողովրդին եւ չհեռացրեցին իր սուրբ հավատքից: Ազգովի նահատակության հոգեւոր սխրանքի ողջ մեծությունն է այսօր պատկերվում մեր առջեւ, որը դրսեւորեց մեր ժողովուրդը, կրկին հղչակելով դեռեւս 5-րդ դարում սահմանած իր ինքնության բանաձեւը, որ քրիստոնեությունն ունենք ոչ իբրեւ հանդերձ, այլ՝ իբրեւ մաշկի գույն (Եղիշե պատմիչ):

Աստծո զթառատ ողորմությամբ մեր ժողովուրդն ուղղել է եղեռնահար մեջքը, նոր կյանք վերընձյուղել Սիյուռքի համայնքներում եւ Հայաստանի արեւելյան հատվածում վերականգնված պետականության հովանու ներքո: Վերելքի իր ուղին մեր ժողովուրդը կերտել է՝ դիմակայելով բազում զրկանքների ու դժվարությունների: Այսօր էլ մեր ժողովուրդը ապրում է Թուրքիայի եւ Ադրբեջանի կողմից իրականացվող շրջափակման մեջ, պայքարում Լեռնային Ղարաբաղի մեր ժողովրդի ազատ կյանքի համար եւ արդարության հաղթանակի հավատով չարունակում ջանքերը հանուն իր իրավունքների, Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման եւ իր արդար պահանջատիրության:

Ժամանակին մարդկությունը չկարողացավ կանխել Հայոց ցեղասպանությունը, վերացնել դրա հետեւանքները եւ ականատեսը եղավ Հոլոքոստի, Կամբոջայի, Ռուանդայի, Դարֆուրի եւ այլ ցեղասպանությունների: Այսօր էլ հակամարտությունների, պատերազմների, ահաբեկչությունների պատճառով մարդիկ ու ազգեր նեղության ու կարոտության մեջ են, հալածվում ու իրենց կյանքով են վճարում հավատքի համար: Մենք հավատացած ենք, որ Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչումը՝ որպես արդարության իրագործման եւ իրավունքների հաստատման ազդեցիկ օրինակ, կնպաստի ապահով ու արդար աշխարհի կերտմանը: Այս իմաստով Հայոց ցեղասպանութ-

յան 100-րդ տարելիցը հրավեր է աշխարհին՝ անտարբեր չգտնվելու մարդկային տառապանքի ու նորօրյա նահատակությունների հանդեպ եւ գործադրելու առավել ջանքեր՝ դադարեցնելու եւ կանխելու համար մարդկության դեմ գործվող ոճիրները: Սա է այն պատուղը, որ պիտի աճի նահատակության արմատից:


Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով մատուցված այս Սրբազան Պատարագին, մեր նահատակների նվիրական հիշատակի առջեւ Մենք երախտագետ զգացումով ենք անդրադառնում, որ Ջերդ Սրբության երանաչնորհ նախորդներից Բենեդիկտոս 15-րդ Պապը բողոքի ձայն բարձրացրեց՝ ընդդեմ հայերի ցեղասպանության, իսկ սուրբ Հովհաննես Պողոս Բ Պապը Մեզ հետ համատեղ հայտարարությամբ 2001 թվականին ճանաչել եւ դատապարտել է Հայոց ցեղասպանությունը: Այս առումով կարեւոր նշանակություն ունի նաեւ Վատիկանի արխիվներում պահվող փաստաթղթերի հրապարակումը: Մեր ժողովուրդը չնորհակալությամբ է հիշում բոլոր նրանց, ովքեր ոչ միայն բարձրաձայնեցին Հայոց ցեղասպանության մասին եւ դատապարտեցին, այլ նաեւ մարդասիրական առաքելություններ իրականացրեցին՝ խնամելով որբերին, ապաստան տալով վերապրածներին, օգնելով հաղթահարել բազմատեսակ դժվարությունները:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ապրիլի 23-ին՝ աղոթական մասնակցությամբ քույր Եկեղեցիների, այդ թվում՝ Ջերդ Սրբության ներկայացուցիչների, բարձրաստիճան հյուրերի ու աշխարհասփյուռ մեր ժողովրդի բազմահազար զավակների, սրբադասվելու են վասն հավատո եւ վասն հայրենյաց մարտիրոսության պսակն ընդունած մեր բյուրավոր նահատակները: Երկնային զորքերին միացած սուրբ նահատակների բարեխոսությունն ենք հայցելու, որ Աստվածային խաղաղությունը հեղվի մարդկային կյանքին եւ աշխարհում տեղ չգտնեն ցեղասպանության ողբերգությունները:

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, միանգամայն կիսում ենք Ձեր միտքը, որ նահատակությունը հարանվանական տարբերություններ չի ճանաչում: Արդարեւ, նահատակները միավորում են մեզ որպես զավակներ ու ծառաներ մեկ Տիրոջ Հիսուս Քրիստոսի՝ համախմբվելու ու միասնական ջանքեր գործադրելու՝ հանուն աշխարհում սիրո, արդարության, խաղաղության հաստատման եւ քաղաքակրթությունների ու կրոնների երկխոսության, որին կոչում է մեզ սուրբգրային պատգամը. «Հոգ տարեք միմյանց սիրոյ եւ բարի գործերի յորդորելով» (Եբր. 10.24):

Թող Սուրբ Պետրոսի սրբազան այս տաճարում մեր սրտերից երկինք բարձրացող աղոթքն ու հայցը լսելի լինի երկնավոր մեր Հորը՝ օրհնելու եւ ճշմարիտ ուղիներով առաջնորդելու բոլոր ջանքերը, որոնք գործադրվում են հանուն երկրի վրա խաղաղության եւ մարդկության ապահով ու բարօր կյանքի: Աղոթում ենք Ջերդ Սրբության առողջության, Կաթոլիկ Եկեղեցու պայծառության համար եւ Աստծո հովանին ու բարիքները հայցում ամենքիս Ս. Գրիգոր Նարեկացի տիեզերալուսյս վարդապետի սրտաբուխ խոսքով.

«Իսկ Դո՛ւ, առ ամենայն հնարս զօրաւոր,
Մատո՛ ինձ ոգի փրկութեան,
Աչ պաշտպանութեան,
ձեռն այցելութեան,
Հրաման բարութեան,
լոյս ողորմութեան,
Բան նորոգութեան,
պատճառ քաւութեան,
Գաւազան կենաց օգնութեան:
Զի դու ես յոյս ապաւինութեան, Տէր Յիսուս Քրիստոս,
Օրհնեա՛լ ընդ Հօր, Հոգւովդ Սրբով
յաւիտեանս յաւիտենից: Ամէն»: (Բան ԾԹ)



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ (24 ԱՊՐԻԼԻ, 2015 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Բարեկամ պետությունների պատվարժա՛ն նախագահներ եւ պետական այրեր,

Քույր Եկեղեցիների հոգեւոր պետեր եւ բարեջա՛ն եկեղեցականներ,

Միջազգային եւ կրոնական կազմակերպությունների մեծարգո՛ ներկայացուցիչներ,

Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ եւ մեծապատի՛վ հյուրեր:

Նվիրական եւ պատմական օր է այսօր: 100-րդ տարելիցն է Հայոց ցեղասպանության: Միածեռնակաբերդի հուշահամալիրում վերստին համախմբվել ենք ոգեկոչելու մեր սուրբ նահատակների հիշատակը:

Հոգեւոր մխիթարություն է հայրենաբնակ եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի եւ Մեզ համար, որ բյուրավոր մեր նահատակների հիշատակի արարողությանը Ձեր ազնիվ մասնակցությունն եք բերում պատվարժան նախագահներ բարեկամ պետությունների, հոգեւոր Պետեր եւ սիրեցյալ եղբայրներ քույր Եկեղեցիների, կրոնական, պետական եւ հասարակական կառույցների բարձրապատիվ ներկայացուցիչներ: Մեր երախտագիտությունն ենք հայտնում Ձեզ եւ Ձեր երկրների ժողովուրդներին ու իշխանություններին՝ մեր ժողովրդի հանդեպ դրսեւորած հարգանքի համար:

Օսմանյան Թուրքիայի կողմից 20-րդ դարասկզբին իրագործված Հայոց ցեղասպանությունը մեր նորագույն պատմության մեծագույն ողբերգությունն է, որը համարժեք գնահատական եւ դատապարտություն չստանալով՝ նախադեպ դարձավ նոր ոճրագործությունների: Գոհություն Աստծո, ներկայիս Հայոց ցեղասպանությունը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է. գտնում է ճանաչում եւ դատապարտություն: Մեր ներկայությունն այստեղ ընդգծում է մեր պատասխանատվությունը սերունդներին ավանդելու բռնություններից ու եղեռնագործություններից զերծ խաղաղ ու ապահով աշխարհ:


[1] «Էջմիածին», 2015, Դ, էջ 36:

Աստծո օրհնությամբ երեկ կատարեցինք սրբադասումը Ցեղասպանության տարիներին վասն հավատո եւ վասն հայրենյաց իրենց կյանքը զոհաբերած զավակների մեր Սուրբ Եկեղեցու: Այսօր Արարատահայաց այս բարձունքից, ուր լուսազգեստ հոգիներն են մեր նահատակների, եւ սրբությունն է մեզ վրա հովանի, բարեխոսական աղոթք ենք վերառաքում երկինք՝ աղերսով աշխարհին խաղաղություն, մարդկանց մեջ՝ սեր եւ համերաշխություն: Մեր սուրբ նահատակները այսօր պատգամ են բերում մեզ եւ կոչում լինելու առաքյալներ, առաքյալներ՝ արդարության, դատապարտելու եղեռնագործությունները մարդկության դեմ՝ ցեղասպանությունները, ահաբեկչությունները, մարդու եւ ազգերի իրավունքների ոտնահարումները: Մարդասիրության, արդարության ու խաղաղության հովանավոր մեր սուրբ նահատակները կոչում են մեզ լինելու առաքյալներ ճշմարտության՝ ընդդեմ կեղծիքի քարոզչության ու տարածման, առաքյալներ՝ մերժելու ժխտողականությունը, հաղթահարելու անհանդուրժողականությունն ու անտարբերությունը:

Ցեղասպանության դառն հիշողությունները 100 տարիների ընթացքին չարությամբ ու ոխակալությամբ չեն մթագնել մեր ժողովրդի հոգին: Մեր վշտին ատելություն չի խառնվել, սակայն եղել ենք անհաշտ խարդավանքների, մեր պատմության խեղաթյուրման հանդեպ, եղել ենք աննահանջ՝ ճշմարտության պայքարի մեր ճանապարհին: Մեր ժողովուրդն այսօր չարունակում է ապրել չրջափակման եւ պատերազմի վտանգի պայմաններում, դիմակայում դժվարությունների եւ իր իրավունքները պաշտպանում մարդու եւ ազգերի իրավունքների գերակայության հավատով:

Մեր սուրբ նահատակների հիշատակի առջեւ վերստին երախտագիտություն ենք հայտնում Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած երկրներին, պետական, կրոնական ու հասարակական կառույցներին ու կազմակերպություններին, նաեւ բոլոր պետություններին, ժողովուրդներին ու անհատներին, ովքեր Ցեղասպանության դժնդակ տարիներին օգնության ձեռք մեկնեցին եւ ապաստան տվեցին մեր ժողովրդի զավակներին:

Հայրապետիս աղոթքն է, որ մեր ժողովուրդը զորավոր պահի հավատքն ու հայրենյաց սերը, անկասելի՝ իր իրավունքները վերականգնելու կամքը: Հայցում ենք, որ մեր սուրբ նահատակների բարեխոսությամբ խաղաղությունը, արդարությունը, սերն ու ողորմությունը հավերժ թագավորեն երկրի վրա՝ հանուն մարդկության չեն, ապահով ու բարօր կյանքի:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՔԸՐՔ ՔԸՐՔՈՐՅԱՆԻ ՀԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 24 ՀՈՒՆԻՍԻ, 2015 Թ.)[1]

Մեծարգո՛ նախագահ,

Սիրելի՛ հոգեւոր հայրեր,

Հարգարժա՛ն փոխդեսպան Ամերիկայի Միացյալ Նահանգների,

Սիրելի՛ ներկաներ:

Այսօր համախմբվել ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ մեր հարգանքի տուրքը մատուցելու մեր ժողովրդի արժանավոր զավակ, ազգային բարերար տիար Քըրք Քըրքորյանի հիշատակին:

Աղոթքով ենք հիշում մեծանուն հայորդուն, ով իր կյանքի տարիները արդյունագործեց իր համար երկրորդ հայրենիք դարձած Ամերիկայի Միացյալ Նահանգների հասարակական կյանքին բերած նպաստով եւ տնտեսական ոլորտում արձանագրած հաջողություններով, ինչպես եւ Մայր Հայրենիքին ու հարազատ ժողովրդին մատուցած մեծարժեք ծառայություններով:

Բարեհիշատակ Քըրք Քըրքորյանը ազգային ոգու, հայեցի դաստիարակության սնունդը նախ եւ առաջ ստացավ Խարբերդից գաղթած եւ Ամերիկայում հաստատված իր ընտանիքում: Բազում դժվարություններ հաղթահարելով՝ նա գործարարության բնագավառում իր ջանասեր ու անդուլ աշխատանքի չնորհիվ Աստծո օրհնությամբ կարողացավ հասնել մեծ արդյունքների:

Ազգասեր ու հայրենասեր հայորդին նաեւ օրհնված էր Աստծուց բարեգործության չնորհով: Բարեգործությամբ է մեծապես արժեւորվում հարստությունը, երբ գործածվում է մարդասիրության, միմյանց սատարումի եւ համընդհանուր բարիքի նպատակներով: Աստվա-

[1] «Էջմիածին», 2015, Զ, էջ 5:

ծաչնչյան իմաստունը այսպիսի ծառայանվիրումի, նեղութիւններն ու մարտահրավերները դիմագրավելուն ու հաղթահարելուն ուղղված նախանձախնդիր հանձնառութիւնների մասին է խոսում, ասելով. «Լիութեան ժամանակ յիշիր աղքատութեան ժամանակը եւ հարստութեան օրերին՝ աղքատութիւնն ու նեղութիւնը (Սիրաք 18.25)»: Հոգելույս Քըրք Քըրքորյանը իր բարերարութիւնները կատարում էր որպես կյանքի դառնութիւններն ու դժվարութիւնները դիմագրաված մարդ, ով գիտեր կարիքի ու նեղութեան մեջ գործակցության կարեւորութիւնը: Նա կյանքի իր ուղին սկսել էր նյութական մեծ դժվարութիւններով, երիտասարդ տարիքում մուտք գործել մարզական ասպարեզ, երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայել որպես օդաչու: Նեղութեան, թե լիութեան մեջ նա միշտ ջերմ զգացումով է կրել իր սրտում հայրենյաց սերը, ազգին ու հայրենի երկրին օգտակար լինելու աստվածահաճո նախանձախնդրութիւնը: Հոգելույս Քըրք Քըրքորյանը սրտաբուխ բարերարութիւններով իր ավանդն է բերել Սփյուռքի մեր գաղթօջախների բարգավաճմանը: Նա օգնութեան ձեռք մեկնեց երկրաշարժի աղետից տուժած մեր ժողովրդի զավակներին, այնուհետ հայոց անկախ պետականութեան վերահաստատումով խանդավառված՝ սատար եղավ Հայաստանի եւ Արցախի առաջընթացին, ներդրում բերեց մեր Հայրենիքի զարգացման ծրագրերին: Լուսահոգի բարերարը ավանդ է բերել նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պայծառութեանը: Հայրենիքին ու ժողովրդին մատուցած գովարժան ծառայութիւնների համար բարեհիշատակ Քըրք Քըրքորյանը արդարորեն արժանացել է Հայաստանի ազգային հերոսի բարձրագույն կոչմանը:

Բարեգործութեան պտուղներով լուսահոգի Քըրք Քըրքորյանը զարդարեց երկրավոր իր կյանքը եւ ծառայասեր իր ոգով, իր համեստ նկարագրով մեր ժողովրդի մեջ թողեց բարի անուն ու հիշատակ: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքի համաձայն՝ այսպիսի ընթացքով է նաեւ մարդը արժանի դառնում հավիտենական հարկերի տակ ընդունելի լինելու (Ղուկ. 16.9):

Այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Մայր Տաճարի նվիրական կամարների ներքո աղոթք ենք վերառաքելու առ Բարձրյալն Աստված, որ Իր ամենառատ գթութեամբ երկնքի լուսեղեն օթեւաններում հանգչեցնի նորոգ հանգուցյալ Քըրք Քըրքորյանի հոգին եւ պարգեւի երանութիւն ու խաղաղութիւն հավիտենութեան մեջ Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո: Այլեւ հայցում ենք, որ Տերը Սուրբ Հոգու

մխիթարութեան չնորհներով սփոփի Քրիքորեան ընտանիքի անդամներին եւ բոլոր վշտացեալներին: Աղոթում ենք նաեւ մեր Հայրենիքի խաղաղ, ապահով ու անվրդով կեանքի համար, որի նկատմամբ սիրով ապրեց եւ գործեց հոգելոյս Քրիք Քրիքորեանը:

Տիրոջ բարի եւ հավատարիմ ծառա, սիրելի՛ Քրիք Քրիքորեան, «մո՛ւտ յուրախութիւն Տեառն քոյ» (Հմմտ. Մատթ. 25.21):

Խունկ, աղոթք եւ օրհնութիւն լուսահոգի Քրիք Քրիքորեանի բարի հիշատակին:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(ԵՐԵՎԱՆ, ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ,
20 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2016 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետութեան,
Մեծարգո՛ նախագահ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան,
Սիրեցյա՛լ եղբայր, կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո,
Հոգեւո՛ր հայրեր, հարգելի՛ պետական այրեր,
Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Հայաստանի Հանրապետութեան 25-րդ տարեդարձի նվիրական առիթով ողջունում եւ Մեր չնորհավորանքներն ենք բերում ձեզ եւ հավատացյալ համայն մեր ժողովրդին: Այսօր սրբազան այս կամարների ներքո ձեզ հետ միասին գոհաբանական աղոթք բարձրացրեցինք առ Աստված հայրենի մեր երկրի խաղաղության ու բարօրության համար: Մեր երախտագիտությունը հայտնեցինք Երկնավորին, որ ազատ կյանքի պարգեւն է չնորհել մեզ: «Փառք Քեզ, Աստուած, փառք Քեզ, յաղագս ամենայնի, Տէ՛ր, փառք Քեզ» (Ժամագիրք):

Մեր ժողովուրդը երկար է մաքառել հայրենի հողում անկախ պետականության վերականգնման համար: Այսօր ունենք 25-ամյա նորատունկ մեր հանրապետությունը, որը հույսերի մարմնացումը, սերն ու հպարտությունն է մեր ժողովրդի: Երիտասարդ է մեր պետությունը, բայց նաեւ կայացած է այնքան, որպեսզի կարողանա իրականության առաջնորդել մեր ժողովրդի ձգտումները, ազգային զարթոնքի տեսիլքները:

---

[1] «Էջմիածին», 2016, Թ, էջ 13:

Պետականության կայացման ճանապարհը, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, հեշտ չտրվեց մեզ: Մեր ժողովուրդը դիմագրավեց բազում դժվարությունների ու նեղությունների, մինչ օրս չարունակվող չրջափակմանը, Արցախի ազատագրության պայքարում մեզ պարտադրված պատերազմին, ներքաղաքական կյանքի ցնցումներին: Ամենածանր իրավիճակներում, մեր պետականությանը սպառնացող բոլոր վտանգների ու փորձությունների առջեւ հաղթանակող եղան առ Հայրենին մեր ժողովրդի անմնացորդ սերն ու նվիրումը, իր ազատ, նոր կյանքը կերտելու տեսիլքը:

Փառք Քեզ, Տե՛ր, որ մեր սիրտը լցրեցիր Քո ամենաբավական ողորմության լիությունից եւ արժանի դարձրեցիր վերակերտելու անկախ մեր պետականությունը: Փառք Քեզ, Տե՛ր, որ անհաղթահարելի թվացող փորձությունների մեջ Քո Սուրբ Անվանը ապավինած մեր ժողովուրդը հերոսաբար պայքարեց ու ամրացրեց հիմերը մեր պետության, չարունակեց ապրել ու բարին արարել եւ իր արդար իրավունքները պաշտպանել:

Այսօր հպարտ ենք անկախ պետականության ձեռքբերումներով, մեր քաջարի բանակով ու անմահ հերոսներով, անկախության արժեքը իրենց հոգիներում կրող մեր նոր, լուսամիտ սերնդով: Այսօր, թոթափած անաստվածության լուծը,զորանում է եւ հոգեւոր կյանքը մեր ժողովրդի: Կառուցվում ու չենանում են մեր սրբատեղիները, քրիստոնյա կրթվում մեր զավակները: Հայրենի անկախ պետականությունը աչխարհասփյուռ մեր ժողովրդին հնարավորություն է ընձեռել դրսեւորելու իր միասնականությունը, հայրենաչեն ծրագրերի եւ ազգային խղճերի չուրջ համախմբվելու ներուժը: Բոլոր ժամանակներում, բայց մանավանդ անկախության տարիներին, Սփյուռքի սիրտը ջերմորեն բաբախել է հայրենիքի համար, որի վկայությունն են աչխարհի չորս ծագերում ապրող մեր զավակների հայրենանպաստ բազում գործերը: Մեր պետությունը, արդարեւ, ամուր հենարան է համազգային մեր խղճերի իրագործման, Արցախում մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքի եւ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու մեր արդար դատի հաղթանակի համար:

Այս ձեռքբերումներով հանդերձ՝ անցած 25 տարիները բավական չեղան պետականակենտրոն համապարփակ մտածողություն կերտելու, թերություններն ու բացթողումները լիովին սրբագրելու, ամբողջովին լուծելու ընկերային եւ տնտեսական խնդիրները, որոնք հանգեցնում են անվստահության, անհանդուրժողության կամ անտարբերության

դրսեւորումների, լարված իրավիճակների, երբեմն նաեւ մարդկային ցավալի կորուստների:

Սիրելինե՛ր, հակառակ բոլոր մարտահրավերների ու դժվարությունների՝ վերելքի բարի ու արժանավոր ուղի ենք անցել, եւ մեր առջեւ մեր երկրի հզորացման նույնքան պատասխանատու եւ պատվավոր պարտավորություններ է: Առաքյալը պատգամում է մեզ. «Գնա՛ արդարութեան, հաւատի, սիրոյ, խաղաղութեան եւ սրբութեան հետեւից» (Բ Տիմ. Բ 22): Այս արժեքներն են կերտում աստվածապատակեր նկարագիրը մարդու, բարձրացնում հասարակությունների կյանքը եւ անսասան պահում պետությունների հիմերը: Հայրենիքում եւ Սփյուռքում ամեն օր մեր կյանքով ու գործերով հաստատենք, որ կրողն ենք այս առաքինությունների, որ սիրում ենք մեր երկիրը եւ ունենք ներուժը դիմագրավելու բոլոր մարտահրավերներին՝ պահպանելով մեր կյանքը արդարության, խաղաղության, սիրո ու միասնության չավիղներում: Միշտ հիշենք՝ միայն համախմբվածությամբ է հնարավոր իրագործել հզոր հայրենիքի մեր տեսիլքը, միայն օրինահարգությամբ, արդարասիրությամբ, ծառայանվիրումով, հանճնառություններով ու զոհողություններով կարող ենք ծաղկեցնել մեր կյանքը եւ ամուր ու հաստատուն պահել մեր պետականությունը: Միայն հզոր պետություն ունենալով կարող ենք սատար կանգնել Սփյուռքի մեր համայնքներին, ազգային ինքնության պահպանության իրենց նվիրական ջանքերին եւ նեցուկ լինել նեղություններուն մեջ հայտնված մեր ազգի զավակներին:

Այս պահին, սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ, երբ մենք գոհաբանական աղոթք ենք բարձրացնում առ Աստված մեր հայրենի պետության 25-ամյակի առիթով, հոգու պարտք ունենք մեր խոնարհումը բերելու խնկելի հիշատակին մեր հերոս զավակների, ովքեր իրենց կյանքն ընծայեցին հայրենիքին, խոնարհում բերելու բոլոր նվիրյալներին, ովքեր ջանք ու եռանդ ներդրեցին, քաջություն ու կորով դրսեւորեցին մեր պետականության վերահաստատման ու կայացման համար:

Ուրախ ենք, որ այսօր Հանրապետական մաղթանքը կատարեցինք Մեր Հոգեւոր եղբոր՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի հետ՝ աղոթակցությամբ հավատավոր մեր զավակների, հոգեւոր հայրերի եւ պետական այրերի՝ ի գլուխ Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանի եւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության նախագահ տիար Բակո Սահակյանի: Մեր Եկեղեցին վասն հայրենյաց հանապազօրյա իր աղոթքով եւ իր ամեն կարելիությամբ

չարունակելու է սատար կանգնել մեր պետութեանը՝ հանուն մեր երկրի առաջընթացի ու բարօրութեան:

Աղօթում ենք, որ Ամենազօրն Աստված Իր Սուրբ Աջով պահապան լինի եւ անվրդով խաղաղութիւն ու բարի առաջընթաց պարգեւի մեր երկրին, ուժ եւ կորով՝ հայրենի իշխանութիւններին, չնորհ եւ օրհնութիւն՝ համայն աշխարհասփիւռ մեր ժողովրդին՝ զորացնելու մեր հայրենիքը եւ պայծառացնելու ազգային կյանքը:

«Կեցո՛, Տէր, զժողովուրդս Քո եւ օրհնեա՛ զժառանգութիւնս Քո, հովուեա՛ եւ բարձրացո՛ զսոսա յայսմհետէ մինչեւ յաւիտեան». ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ 110-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(ՆՈՅԵՄԲԵՐ, 2016 Թ.)[1]

Հայրապետական սիրով ողջունում ենք Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 110-ամյա հոբելյանի հանդիսավոր միջոցառման մասնակիցներիդ եւ բերում Մեր օրհնությունն ու բարեմաղթանքները:

Ուրախություն է Հայոց Հայրապետիս համար վերստին գնահատանքի խոսքով անդրադառնալ Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության ավելի քան մեկդարյա գործունեությանը, որը բարեզարդված է ազգաշահ ու եկեղեցանվեր արգասալի իրագործումներով: Միության հիմնադիր Պողոս Նուբար Փաշայի եւ երախտարժան անդամների նվիրումով ու ջանքերով զորացած ազգային այս հաստատությունն իր բարեգործություններն է սփռել հանուր հայ կյանքում եւ այսօր, հավատարիմ իր կոչմանը, չարունակում է կարեւոր իր առաքելությունը՝ 110-ամյա մեծ վաստակով:

Բարեգործականը միշտ եղել է ազգային մեր կյանքի հրամայականների կենտրոնում, ընդառաջ ելել ժամանակի պահանջներին՝ աշխարհի բոլոր կողմերում հաստատված իր կառույցների միջոցով սատարելով մեր ժողովրդի զավակներին, ծառայելով ի սփյուռս աշխարհի հայության համախմբմանը, նվիրվելով նոր սերնդի կրթությանը, հոգալով ազգային ու եկեղեցական մեր կյանքի չենացման համար: Իր գործունեությունը ծավալելով հիմնականում Սփյուռքում, Բարեգործականը միշտ եղել է Մայր հայրենիքի կողքին, սատարել մեր Եկեղեցում միության վերահաստատմանն ուղղված Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ջանքերին եւ զորավիգ եղել ու նպաստել նրա առաքելության արգասավորմանը: Խորհրդային տարիներին Հայկական Բարեգոր-

[1] «Էջմիածին», 2016, ԺԱ, էջ 5:

ծականը՝ հատկապես ի դեմս երախտարժան նախագահ հոգեկույս Ալեք Մանուկյանի, ջանացել է արթուն պահել կապը հայրենիքի եւ Սուրբ Էջմիածնի հետ: Անկախ պետականության վերականգնումից հետո նրա արժանավոր, մեծազնիվ դստեր՝ տիկին Լուիզ Մանուկյան Սիմոնի նախագահության շրջանում Միության կողմից ամեն ջանք գործադրվեց մեծ դժվարությունների առջեւ կանգնած մեր երկրին ու հայրենաբնակ մեր ժողովրդին աջակցելու համար: Բարօր ու ապահով հայրենիքի տեսիլքով Բարեգործականը մեծ աջակցություն է բերել Հայաստանի եւ Արցախի զորացմանն ու առաջընթացին, գնահատելի ավանդ՝ առողջապահական, կրթական, մշակութային, երիտասարդական ծավալուն ծրագրերի հովանավորության գործում: Ազգային եւ հայրենական մեր կյանքին Միությունն այսօր բարի արդյունքներ է պարգեւում քաջառանդ նախագահությամբ հարգարժան տիար Պերճ Սեդրակյանի: Մեր Եկեղեցու բարեպաշտ, եկեղեցասեր ու ազգասեր զավակին ճանաչում ենք որպես Բարեգործականի առաքելության նվիրյալի, որ տարիներ ի վեր իր ավանդն ու ջանքերն է բերում Բարեգործականի առաքելության արդյունավորմանը:


Մենք ուրախությամբ ենք հաստատում, որ Մեր հոգեւոր ծառայության ընթացքին ի մոտո ծանոթ ենք եղել Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության գործունեությանը: Արարատյան Հայրապետական թեմի փոխառաջնորդության տարիներին լինելով կենտրոնական վարչության անդամ՝ Մենք ականատես ենք եղել Միության անխոնջ մշակների նախանձախնդիր գործունեությանը, ազգային հոգսերին արձագանքելու պատրաստակամությանն ու նվիրումին: Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի բազում ձեռնարկներ, հատկապես կրթական եւ խնամատար նախաձեռնություններ, իրականացվել են Բարեգործական Ընդհանուր Միության աջակցության, նրա անդամների սիրահոժար հանձնառությունների շնորհիվ: Մենք բազմիցս առիթն ու ուրախությունն ենք ունեցել Հայրապետական Մեր կոնդակներով բարձրորեն գնահատելու Միության նվիրյալ անդամների եւ աշխատակիցների ազնիվ ավանդն ու կորովի ծառայությունները մեր ազգային եւ եկեղեցական անդաստանում:

Բարեգործականի սիրելի՛ նվիրյալներ, այսօր նույնպես հայրենիքն զգում է իր զավակների աջակցության կարիքը: Ապրիլյան դեպքերը վկայեցին մեր բանակի բարձր ոգին ու քաջությունը, բայց նաեւ ի հայտ բերեցին հայրենի մեր երկրի պաշտպանունակության ամրապնդման հրամայականը: Անհրաժեշտ է, որ զորավիգ լինենք մեր

Հայրենյաց պաշտպաններին, ովքեր անառիկ կանգնած են Հայաստանի եւ Արցախի սահմաններում, օժանդակենք մեր բանակի զորացմանը, ձեռք մեկնենք բժշկական աջակցության եւ այլ կարիքներ ունեցող զինվորներին ու սպաներին: Ամեն կարելիություն չարունակեք բերել մեր հայրենիքում առկա դժվարությունների հաղթահարման եւ մեր երկրի հզորացման գործին: Ազգային մեր կյանքում ծառացող բոլոր հրամայականներին դիմակայելու համար, սիրելինե՛ր, արթուն պիտի պահենք բարեգործության ոգին:

Աստծո չնորհն ու օրհնությունն ենք հայցում ձեր կյանքին ու գործերին: Աղոթում ենք, որ Տերը առատապես օրհնի առաքելության Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության եւ խաղաղ երկնքի ներքո բարօրություն պարգեւի մեր ժողովրդին, բարգավաճում՝ մեր հայրենիքին եւ հավետ պայծառություն՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

«Աստուած յուսոյ լի արասցէ զձեզ ամենայն խնդութեամբ եւ խաղաղութեամբ, առաւելուլ Ձեզ յուսով՝ զօրութեամբ Հոգւոյն Սրբոյ» (Հռոմ. 15:13). ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՊՐԻԼՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԶՈՒՎԱԾ ՉԻՆՎՈՐՆԵՐԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 2 ԱՊՐԻԼԻ, 2017 Թ.)[1]

Մեծարգո՛ վարչապետ,

Սիրելի՛ բարեպաշտ հայորդիներ:

Այսօր Աստվածահիմն այս սուրբ տաճարում համախմբված ենք՝ մեր աղոթքները առ Աստված բարձրացնելու քաջարի մեր զինվորների հոգիների խաղաղության ու հանգստության համար, ովքեր հերոսաբար զոհվեցին Ապրիլյան պատերազմի ընթացքում՝ իրենց կյանքը տալով հանուն հայրենիքի եւ մեր ժողովրդի պաշտպանության:

Մեկ տարի առաջ մեր խիզախ զինվորները կասեցրեցին Արցախի մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքին բռնացող ռազմական գործողությունները, նաեւ արյան գնով ետ մղեցին դավադիր հակառակորդին, վկայելով հանուն անկախության ու հայրենի երկրի՝ մեր ժողովրդի նախանձախնդրությունը, ուժն ու կորովը եւ անպարտելի ոգին:

Մեծ Պահքի այս օրը Գալստյան կիրակին է, որը հիշեցնում է մեր Տիրոջ գալուստը եւ Փրկչի խոստումը՝ իր հավատարիմ հետեւորդներին հավիտենական կյանքի չնորհին արժանացնելու: Մեր զոհված հերոսները, անձնազոհության մեծագույն առաքինությունը իրագործելով, փոխադրվեցին հանդերձյալ կյանքի հանգրվան՝ մուտք գործելու հավիտենություն եւ անանց երանությունը ժառանգելու՝ ըստ տերունական խոստման. «Եվ այս է այն խոստումը, որը Նա խոստացավ մեզ, այն է՝ հավիտենական կյանքը» (Ա Հովհ. 2.25):

Հայոց բանակի մարտունակությունը, մեր զինվոր զավակների սխրանքը ծնեցին հերոսության նոր, բացառիկ օրինակներ, որոնք հավելվեցին մեր պատմության էջերում արձանագրված մեր փառապանծ հայրերի սխրանքին ու քաջագործություններին: Մեր զոհված զավակ-

[1] «Էջմիածին», 2017, Դ, էջ 7:

ներն իրենց մատաղ կյանքը բաշխեցին ազգին ու Մայր Հայրենիքին, մեզ ամենքիս, որպեսզի մենք նրանց դրսեւորած վճռականությամբ ու նախանձախնդրությամբ պահպանենք մեր խաղաղությունն ու արժանապատվությունը, լինենք միասնական, կերտենք հզոր ու ապահով, առաջադեմ ու անհաղթ Հայաստան: Եվ մենք նրանց մշտավառ հիշատակի ու անձնազոհության առջեւ առավել վճռականորեն պիտի ջանքեր բերենք մեր հայրենիքի նոր կյանքի կերտմանը՝ նախանձախնդիր մասնակցություն ցուցաբերելով մեր պետության առաջընթացին ուղղված գործընթացներին: Բազում փորձություններ առաջ մեր ժողովուրդը միասնականությամբ, առ Հայրենին սիրո, հանձնառության ու զոհողության մղումով է ամուր բազուկ դարձել եւ խորտակել թշնամիների հարվածները, դիմագրավել ավերներն ու կորուստները, հարուցյալ կյանք կերտել: Եվ այսօր նույն ոգով մեր ժողովուրդը ի զորու է առատացնել հայրենանվեր գործերը, արդյունազարդել ազգային կյանքը, չենացնել իր հայրենին, որը իրապես կլինի արժեւորումը հանուն հայրենիքի ու ազգի իրենց կյանքը նվիրած հայորդիների պայծառ հիշատակի:

Սիրելինե՛ր, այսօր միասնական աղոթք ենք բարձրացնում առ Ամենակալն Աստված, որպեսզի պահպանվի խաղաղությունը մեր հայրենիքի սահմաններում եւ այլեւս անհրաժեշտություն չլինի կյանքի թանկ գին վճարելու ազատ ու անկախ ապրելու արդար իրավունքի պաշտպանության համար: Աղոթում ենք, որ Երկնավոր Տերը Իր Սուրբ Աջի ամենախնամ հովանու ներքո պահպանի Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, աշխարհասփյուռ մեր ժողովրդին, պահպանի մեր բոլոր զինվորներին եւ միշտ պարգեւի զորություն ու հաղթություն: Հայցում ենք, որ Ողորմածն Աստված Երկնքի արքայության հանգրվաններում հանգստություն եւ երանություն պարգեւի զոհված մեր զավակների լույս հոգիներին եւ Սուրբ Հոգու բյուր շնորհներով մխիթարի եւ սփոփի սգակիր սրտերը զոհվածների ընտանիքների, հարազատների, զինակից ընկերների եւ բոլոր վշտացյալների:

Փառք Հայոց հաղթական ու քաջարի բանակին:

Աղոթք եւ օրհնություն մեր խիզախ հայորդիների լույս հիշատակին:

Յիշեսցէ Տէր զհոգիս նորոգ ննջեցելոց եւ հանգուսցէ զնոսա ի լոյս երեսաց Աստուածութեան Իւրոյ. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀՀ ԶՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ 20-ԱՄՅԱ ՀՈԲԵԼՅԱՆԻ ԱՌԻԹՈՎ

(8 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2017 Թ.)[1]

«Առէք կապառապինութիւնն Աստուծոյ,
սի կարող լինիջիք ի դիմի հարկանել չարին յաւուրն չարութեան»
(Եփես. Զ 13):

Հայաստանի Հանրապետության Պաշտպանության մեծարգո՛ նախարար,

Գերաչնո՛րհ, հոգեշնոր, արժանապատիվ հայրեր,

Պատվարժա՛ն զինվորականներ,

Սիրելի՛ հավատավոր զավակներ:

Հայրապետական սիրով ողջունում ենք Հայոց բանակում Հոգեւոր առաջնորդության կազմավորման 20-ամյակի հոբելյանին նվիրված այս հանդիսության մասնակիցներիդ եւ բերում ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունը, ինչպես եւ զգոնության ու քաջության պատգամը առաքելական. «Առե՛ք Աստծո սպառազինությունը, որպեսզի կարողանաք չար օրում դեմ կանգնել չարին»:

Փառք եւ գոհություն ենք մատուցում Աստծուն, որ անսասան եւ հաղթական է Հայոց բանակը, որն այսօր հուսալի գրավականն է մեր ժողովրդի ապահով, խաղաղ ու ստեղծագործ կյանքի:

Մեր բանակը ձեւավորվեց անկախ պետականության հաստատման եւ Արցախի ազատագրության հերոսական օրերում եւ կայացավ ու զորացավ մեր պետականության ամրապնդման հետ: Մեր ժողովուրդը ամեն դժվարություն հանճն առավ հայրենի հողը պաշտպանելու եւ իր ազատ կյանքը կառուցելու համար: Հայրենիքի պաշտպանության նվիրական պայքարում, նաեւ մարտի դաշտում, Առաքելական մեր

[1] «Էջմիածին», 2017, ԺԲ, էջ 9:

Սուրբ Եկեղեցին իր զավակների կողքին էր՝ զորացնելով նրանց Աստծո խոսքով ու հավատքով, որն իբրեւ հոգեւոր սուսեր՝ բարձրանում է ընդդեմ բռնության, կեղծիքի, իրավունքի ոտնահարման եւ ամեն չարիքի:

Հայոց բանակում հովվական ծառայության սկիզբը դրվեց հայրենի պետության անկախության առաջին տարիներին երջանկահիշատակ Մեր նախորդ Գարեգին Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից: Լուսավորչի գահին բազմելով՝ Մենք կարեւոր նկատեցինք բանակում հոգեւոր ծառայության կարգավիճակի ամրագրումը, որն իրականացավ հատուկ հուշագրի ստորագրությամբ Պաշտպանության նախարար եւ ներկայիս ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանի հետ: Այնուհետ հովվական ծառայությունը բանակում բարձրացրեցինք Հոգեւոր առաջնորդության աստիճանի: Այսօր գոհունակությամբ ենք անդրադառնում նաեւ, որ Հայոց մեծ արքա Աշոտ Երկաթի խաչը, որը կրում է մեր Տեր Հիսուս Քրիստոսի խաչափայտի մասունքը, հաստատեցինք որպես պահապան խաչ սիրեցյալ մեր բանակին եւ ընծայեցինք բանակային զորատեսակներին օրհնված խաչվառ դրոշներ:

Ազգային-եկեղեցական մեր կյանքում տերունապատվեր առաքելությունն ստանձնելու հետ մեկտեղ եկեղեցականները, Գեւորգյան Հոգեւոր ճեմարանի չրջանավարտ սարկավագները անպայմանորեն իրենց ծառայությունն են իրականացնում բանակում՝ հոգեւոր մխիթարություն, քաջալերություն փոխանցելով մեր զինվորներին, զորացնելով նրանց հավատքը, բարձր պահելով մարտական ոգին եւ նրանց աջակիցն ու զորակիցը լինելով հայրենիքի պաշտպանության նվիրական գործում: Ուրախություն է Հայրապետիս համար արձանագրել, որ մինչ այսօր Հայոց բանակում ծառայել են ավելի քան երեք հարյուր հոգեւոր սպասավորներ: Արդարեւ, մեր անկախ պետականության քառորդդարյա ընթացքին հոգեւոր սպասավորությունը բանակում ամենակարեւոր ու արգասաբեր անդաստաններից մեկը եղավ, որտեղ ազգային իշխանությանց եւ Հայ Եկեղեցու համագործակցությունը առատ հունձք ապահովեց՝ մեկի դիմաց երեսուն, վաթսուն եւ հարյուր (Համմտ. Մարկ. Դ 8):

Սիրելի՛ գնդերեցներ, եկեղեցականների ծառայական կյանքը զինվորություն է, Պողոս առաքյալի խոսքով՝ զինվորություն «Աստծո սպառազինությամբ..., մեր մեջքը գոտեպնդած ճշմարտության Ավետարանով, հագած արդարության զրահը, մեր ոտքերը ամրացրած խաղաղության Ավետարանի պատրաստությամբ, ...հավատի վահանով,

փրկության սաղավարտով ու Հոգու սուսերով, որ Աստծո Խոսքն է, որպեսզի կարողանանք չար օրում դեմ կանգնել չարին...» (Հմմտ. Եփես. Զ 13-17): Հայ եկեղեցականը չի սպասում հրավերի՝ չարի դեմ պայքարելու, չի տատանվում հայրենիքի ու հավատի համար իր կյանքը զոհելու, չի նահանջում, երբ չարն իր նենգ մտադրությամբ անցնում է հայրենյաց սահմանը՝ ավերելու մեր տունը, ոչնչացնելու հայրենական մեր նվիրական սրբություններ: Հայ եկեղեցականը խաչով ու սրով միշտ եղել է հայրենյաց պաշտպանության դիրքերում: Սա է մեր Եկեղեցու սրբազան ու դարավոր առաքելության մեծագույն պատգամը՝ ապրել եւ ծառայել մեր ժողովրդի հոգեւոր ու ֆիզիկական փրկության համար՝ Ավարայրից մինչեւ Արցախ եւ մինչեւ վախճանը ժամանակների: Այդ գիտակցությամբ նաեւ Սարդարապատի ճակատամարտում, 1918 թ. մայիսյան հերոսամարտերում, որոնց 100-ամյակը պիտի տոնենք հաջորդ տարի, Գեւորգ Ե Ամենայն Հայոց երանաշնորհ կաթողիկոսը իր խրոխտ կեցվածքով ու ոգեշնչումով զորացրեց մեր ողջ ժողովրդին, եւ հայ եկեղեցականները հայոց Հայրապետի օրհնակով մեր զորաց հետ աննահանջ պայքարեցին մեր հայրենիքի, հավատքի, մեր ժողովրդի ազատ կյանքի եւ իրավունքների պաշտպանության համար: Այսօր դուք, սիրելի՛ գնդերեցներ եւ հոգեւոր սպասավորներ, յուրաքանչյուր հայ եկեղեցականի հետ կոչված եք հոգի ու սիրտ ներդնելով կենսագործելու մեր սուրբ նախնիներից ավանդված առաքելությունը՝ հոգեւոր սպառազինության պաշտպանությունը կերտելու մեր բանակում եւ ամենուր մեր ժողովրդի կյանքում:

Հոբելյանական այս առիթով Հայրապետական Մեր գնահատանքն ենք հայտնում Հայաստանի Զինված ուժերի գերագույն գլխավոր հրամանատար, ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանին, պետական ավագանուն եւ բանակի ողջ հրամկազմին՝ Հայ Եկեղեցու առաքելությունը Զինված ուժերում նվիրական գիտակցումով ու համագործակցության բարձր ոգով արժեւորելու համար: Մեր գնահատանքը՝ ՀՀ Պաշտպանության նախարար մեծարգո տիար Վիգեն Սարգսյանին, բանակում հոգեւորականների ծառայության հանդեպ առանձնակի ուշադրության, Հոգեւոր առաջնորդության գործունեությանը ըստ ամենայնի աջակցելու եւ հատկապես՝ մեր բանակի մարտունակության ու ոգին բարձր պահելու նախանձախնդրության համար: Այդ նախանձախնդրության վկայությունն է նաեւ հոբելյանական այս հանդիսությանը եւ նման միջոցառումներին մեծարգո նախարարի մասնակցությունը: Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում

ՀՀ Զինված Ուժերի Հոգեւոր առաջնորդին՝ գերաշնորհ Տ. Վրթանես եպիսկոպոս Աբրահամյանին, Հոգեւոր առաջնորդության գնդերեցներին՝ մաղթելով իրենց նվիրական առաքելության մեջ նորանոր հաջողություններ: Նոր ձեռքբերումներ ենք մաղթում մեր քաջարի բանակին, պանծալի ծառայություն՝ բոլոր սպաներին ու մարտիկներին: Աղոթում ենք, որ Աստված Իր Աջի ներքո պահպանի ձեզ եւ օրհնի ձեր եւ ձեր ընտանիքների կյանքը:

Թող խաղաղությունը ամուր ու հաստատուն լինի հայրենի մեր սահմաններում: Թող երկնավոր Տերը պահպանի մեր ժողովրդին եւ զորացնի ու բարօր դարձնի հայրենի մեր երկիրը: Թող արգասաբեր ու պտղաբեր լինի մեր Եկեղեցու առաքելությունը՝ ի փառս Աստծո եւ ի պայծառություն ազգիս:

Շնորհք, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԱՅԻՍՅԱՆ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԵՐԻ 100-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 28 ՄԱՅԻՍԻ, 2018 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Գոհություն Աստծու, որ տվեց մեզ հաղթությունը
մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով»
(Ա Կորնթ. 15.57):

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,
Մեծարգո՛ նախագահ Արցախի Հանրապետության,
Սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Միածնաէջ այս նվիրական սրբավայրում համախմբվել ենք 100-րդ տարեդարձի առիթով Հայաստանի Հանրապետության եւ մայիսյան հերոսամարտերի, որոնք մեր ժողովուրդը մղեց՝ միահամուռ պաշտպանելով նվիրական մեր հայրենիքը: Մենք միասնական մեր աղոթքը բարձրացրեցինք՝ գոհություն հայտնելով Աստծուն, որ մեզ հաղթություն տվեց մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով, եւ հայցեցինք երկնավորից խաղաղություն մեր երկրին, անսասանություն մեր պետությանը, բարօրություն մեր ժողովրդին: Խնդրեցինք Տիրոջ օգնությունը՝ համերաշխության ու եղբայրսիրության ոգով հաղթահարելու մեր կյանքում հառնած խնդիրներն ու հրամայականները:

Այսօր, սիրելինե՛ր, ոգեկոչում ենք հիշատակները մայիսյան հերոսամարտերի եւ Հայաստանի առաջին հանրապետության հաստատման՝ արժեւորելով, թե առ Աստված հավատքի եւ առ հայրենին սիրո ինչպիսի ուժ ու զորությամբ մեր ժողովուրդը փրկեց իր երկիրը՝

[1] «Էջմիածին», 2018, Ե, էջ 10:

իր բնօրրանում ազատ ու ապահով կյանք կերտելու բաղձանքով: Մեր ժողովուրդը պատմության հազարամյակներում բազում հողմեր ու փոթորիկներ է տեսել: Բազում նվիրական հիշատակներ ունենք՝ ծանր փորձություններից ու հարվածներից մեր հայրենիքը հերոսաբար պաշտպանելու: Օրհասական պահերին մեր ժողովրդի դրսեւորած վառ հայրենասիրության, կենաց ու մահու մարտերում ձեռք բերված հաղթանակների հիշատակներն այսօր զորացնում են մեզ մեր պետականությունը ամրապնդելու եւ հայրենիքը չենացնելու հանձնառության մեջ:

Անկախ պետականության հովանու ներքո ազատ կյանք կերտելու տեսլականով անցնող տասնամյակներում մենք դիմակայել ենք մեծ դժվարությունների, ներքաղաքական ցնցումների, մեզ պարտադրված պատերազմի: Իրականացնելով պետական ու հասարակական կյանքի վերափոխումներ՝ հաղթահարել ենք հաճախ անհաղթահարելի թվացող իրավիճակներ: Այս բոլոր զոհողությունները մեր ժողովուրդը հանձն է առել եւ իր ձեռքբերումները կերտել՝ Քրիստոսի հանդեպ սերը զարձնելով սեր ազգի ու հայրենիքի, սեր՝ միմյանց հանդեպ:

Հայրենասիրության եւ ազգասիրության նվիրական զգացումները, հայրենի պետականության շահերով առաջնորդվելու ձգտումը մեր ժողովրդի զավակները ամուր պահեցին նաեւ այս օրերին, քաղաքական ու հասարակական կյանքի նոր զարգացումների մեջ: Ահա խնդիրների հանդիման՝ մեր ժողովուրդն այսօր համակված է բարեփոխումներ իրականացնելու աննվազ վճռականությամբ ու նաեւ ձգտումով՝ շարունակելու հաստատել մեր երկրի ընթացքը խաղաղության, օրինահարգության, առաջադիմության չավիղներում: Մենք զոհություն ենք հայտնում Աստծուն, որ քաղաքական փոփոխությունները մեր երկրում իրականացվեցին խաղաղ եւ օրինական ճանապարհով: Արդարեւ, առաջին քրիստոնյա պետությանը վայել է բերել օրինակը համերաշխության, եղբայրասիրության, որն առավել համախմբում է հասարակությանը՝ ի շահ առաջընթաց նպատակների իրագործման:

Առ Աստված Մեր հայցն ու մաղթանք է, որ մեր ժողովուրդը ամուր պահի քրիստոնեական արժեքները եւ իր բոլոր քայլերը կատարի Քրիստոսով, իր կյանքում ապրեցնի Նրա Ավետարանի ոգին: Աստծո խոսքը մեզ հաստատում է արդարության, իրավունքի, եղբայրսիրության, խաղաղության մեջ, որպեսզի մեր հոգիներից բխելով՝ այդ արժեքները մարմնավորվեն կյանքում: Ստիպողաբար դրանք իրականություն չեն դառնում, այլ բարի կամքով պողավորվում են որպես

արդյունքներ հոգու, որը երկնային չնորհներով լիացնողը Քրիստոս է՝ մեր Տերը: Առաքյալն ասում է. «Յուրաքանչյուր ոք թող զգուշ լինի, թե ինչպես է կառուցում, որովհետեւ ոչ ոք չի կարող դնել ուրիշ հիմք, քան դրված այն հիմքը, որ Հիսուս Քրիստոսն է» (Ա Կորնթ. Գ 10-11): Քրիստոս է հիմքը, քանի որ ամեն ինչ Նրանով է ստեղծված, եւ Նրանով է արարչությունը փրկության չնորհի ներքո, եւ ամեն բան Նրա իշխանությանն է հանձնված: Քրիստոսով կառուցվածը կանգուն է, ինչպես ժայռի վրա կառուցված տունը, որին հողմերը եւ հորդացող ջրերը հարվածեցին, բայց չկործանվեց (հմմտ. Մատթ. է 24-27):

Սիրելինե՛ր, մայիսյան պանծալի իրադարձությանց խորհրդով ոգեշնչված՝ միասնաբար հայցենք, որ մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի միջոցով մեզ պարգեւված հաղթությունները, զորությունն ու չնորհները բազմապատկվեն մեր կյանքում: Ի խորոց սրտի մեր աղոթքը բարձրացնենք՝ խոնարհում բերելով լուսավոր հիշատակին մեր նորօրյա Ղեւոնդ Երեցի՝ Գեւորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի, մայիսյան մարտերի հերոս հայորդիների՝ Արամ Մանուկյանի, Գարեգին վարդապետ Հովսեփյանի, քաջարի զորականներ Թովմաս Նազարբեկյանի, Մովսես Սիլիկյանի, Դանիել եւ Պողոս Բեկ-Փիրումյանների, Դրոյի եւ այլոց ու բազում հոգեւորականների: Մայիսյան հերոսամարտերի օրերին հնչող զանգերի ղողանջը թող մշտապես արձագանքի հայոց հոգիներում: Թող ղողանջեն զանգերը՝ վառ պահելով խնկելի հիշատակը հայոց քաջերի: Թող ղողանջեն զանգերը՝ ի ծագս աշխարհի հյուսելով պանծանքը Սարդարապատի, Ապարանի եւ Ղարաքիլիսայի հերոսամարտերի: Թող ղողանջեն, հար ղողանջեն զանգերը՝ աշխարհասփյուռ ազգիս զավակց մեջ ամրապնդելով խիզախումի ու անճնվիրումի ոգին, որպեսզի մեր ժողովուրդը նոր կորովով ու եռանդով շարունակի ծառայել մեր հայրենիքի առաջընթացին, մեր կյանքի ապահովությանն ու բարօրությանը, ազգային մեր իղձերի իրագործմանը:

Տիրոջ սերը, ողորմությունն ու չնորհները այսօր եւ հավիտյան թող լինեն մեզ հետ եւ ամենքի. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՅՈՒՐԻ ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՀՈԳԵՀԱՆԳՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆԸ

(13 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2018 Թ.)[1]

Սիրելի՛ ազակիր ժողովուրդ,

Այսօր աղոթքով եւ տխուր սրտով հրաժեշտ ենք տալիս Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանավոր զավակ, աշխարհահռչակ ծանրորդ, ի Տեր հանգուցյալ Յուրի Վարդանյանին:

Լուսավոր ու ջերմ զգացումներով ենք անդրադառնում նրա երկրավոր կյանքի անցած ուղուն, ազգային մեր անդաստանում նրա գովարժան ավանդին, մարզաչխարհում ունեցած մեծ հռչակին ու բացառիկ ներդրումին եւ բազմաթիվ հայորդյաց ու տարբեր ազգերի մարզասերներին նրա փոխանցած ոգեշնչումին:

Բարեհիշատակ Յուրի Վարդանյանն իր մեջ կրում էր մեր ժողովրդի անկոտրում կամքի ու մաքառումների վկայությունը, հաղթանակներ կերտելու աննկուն ոգին: Ծանրամարտի մրցասպարեզում բացառիկ ելույթներով նա միշտ նոր նվաճումներ արձանագրեց՝ դառնալով Եւրոպայի եւ աշխարհի բազմակի չեմպիոն, օլիմպիական չեմպիոն: Աշխարհի առաջնություններում տասնյակ ռեկորդներ սահմանելով նա հավելեց փառքն ու հեղինակությունը մեր ժողովրդի: Մարզական իր փայլուն ուղիով, անձնական օրինակով, նաեւ մարզչական աշխատանքով մեծանուն հայորդին քաջալերել ու ոգեշնչել է նոր սերնդի մարզիկներին:

Լուսահոգի Յուրի Վարդանյանին ուժ էր տալիս եւ սնում նրա անպարտելի կամքն ու ոգին հայրենի երկիրը հզոր ու առաջընթացի մեջ տեսնելու երազանքը: Այդ ոգին դրսեւորվում էր ոչ միայն ծանրամարտի հարթակում, այլեւ հայրենի մեր պետության նորոգ առաջընթացին ու մեր ժողովրդի բարօր գալիքի կերտմանը ծառայելու ձգտումի

---

[1] «Էջմիածին», 2018, ԺԱ, էջ 7:

ու նվիրումի մեջ, որով նա ստանձնեց սպորտի եւ երիտասարդության հարցերի նախարարի եւ Վրաստանում ՀՀ դեսպանի պաշտոնները:

Հրաժեշտի այս պահին Հոգելույս Յուրի Վարդանյանի պայծառ կերպարը՝ իր դյուցազնական ոգով, իր հայկյան ուժով, իր փառքի ու հռչակի մեջ, մեր առջեւ հառնում է նաեւ իր պարզահոգությամբ, բարի ու վեհանձն նկարագրով:

Ամենքիս համար ցավ է արժանավոր հայորդու անժամանակ մահը: Հանուն Գերագույն Հոգեւոր Խորհրդի եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միաբանության՝ բերում ենք Մեր վշտակցությունը ննջեցյալի ընտանիքին եւ բոլոր սգացյալներին:

«Եկե՛ք, Իմ Հոր օրհնյալնե՛ր, ժառանգեցե՛ք աշխարհի սկզբից ձեզ համար պատրաստված արքայությունը» (Մատթ. 25.34),-ասում է Քրիստոս աստվածահաճո եւ հավատավոր կյանքով ապրած Իր հետեւորդներին: Ներունական այս կոչի համաձայն՝ Հոգելույս Յուրի Վարդանյանը ժամանակավոր այս կյանքից անցնում է հանգրվանելու աստվածաշնորհ հավիտենական երանության, խաղաղության ու հանգստության մեջ:

Ի խորոց սրտի աղոթքով առ Բարեգութն Աստված հայցում ենք Սուրբ Հոգու մխիթարությունը բարեհիշատակ Յուրի Վարդանյանի ընտանիքին, հարազատներին, գործընկերներին եւ բոլոր վշտացյալներին: Թող նրա պանծալի անունը հավերժ ապրի հայորդյաց սրտերում:

Խունկ, աղոթք եւ օրհնություն մեծանուն հայորդու լույս հիշատակին:

Վշտակից սիրով եւ օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 75-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(30 ՆՈՅԵՄԲԵՐԻ, 2018 Թ.)[1]

Գիտությունների Ազգային Ակադեմիայի Մանուկ Աբեղյանի անվան Գրականության ինստիտուտի 75-ամյակի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում եւ չնորհավորում ինստիտուտի տնօրինությանն ու աշխատակազմին եւ հոբելյանին նվիրված հանդիսավոր միջոցառման բոլոր մասնակիցներին:

Այսօր գնահատանքով ենք անդրադառնում, որ Ազգային Ակադեմիայի հաստատման օրից գրականության ինստիտուտը համախմբել է գրական աշխարհի նվիրյալներին, ովքեր իրենց անխոնջ աշխատանքով, գիտական նախանձախնդրությամբ մեծ ավանդ են բերել հայագիտության զարգացմանը: Այս տարիներին Գրականության ինստիտուտը անցել է գործունեության բազմակողմ ու արգասավոր ուղի: Ինստիտուտի աշխատակիցների ջանադիր ու ներշնչված գործունեությամբ հրատարակվել են հայ գրականության նշանավոր երկեր, գրականության պատմությանը եւ զարգացմանը նվիրված գրքեր, որոնց միջոցով նաեւ քարոզվել եւ ուսուցանվել է հայերենը՝ ի նպաստ մեր ոսկեղենիկ լեզվի անաղարտ պահպանման ու տարածման:

Մեր գրական հարուստ ժառանգության մեջ արտահայտված են մեր ժողովրդի հոգին, ճգտումներն ու ապրումները, անցած պատմական ուղին: Մեր գրականությունը ներշաղախ ու ներշնչված է քրիստոնեական արժեքներով, որոնցով ապրել ու ստեղծագործել է մեր ժողովուրդը եւ հաղորդ դարձել այլոց ստեղծածին: Մեր կյանքում այսօր նույնպես հրամայական է մեր գրականության առաջընթացն ու

[1] «Էջմիածին», 2018, ԺԱ, էջ 9:

տարածումը, մայրենի լեզվի հանդեպ սիրո դաստիարակումը, որին իր նպաստը պիտի չարունակի բերել Գրականության ինստիտուտը: Հոգու դարբնոց լինելու առաքելությամբ մեր գրականությունը պիտի չարունակի կրթել մեր ժողովրդի զավակներին՝ լինելով նաեւ պատվար ազգային ինքնության պահպանության:

Մեր գնահատանքն ենք բերում Գրականության ինստիտուտի տնօրեն տիար Վարդան Դեւրիկյանին, ինստիտուտի աշխատակազմին եւ բոլոր գրականագետներին, ովքեր իրենց նպաստն են բերել ինստիտուտի առաքելությանը: Հայ գրականության նվիրյալներին մաղթում ենք եռանդ ու կորով, գիտական ու ստեղծագործական բեղուն գործունեություն, նոր ձեռքբերումներ, որպեսզի հայերեն խոսքն ու գրականությունը չարունակեն կրթել մեր ժողովրդի հոգին, որպեսզի հայերենը ապրի ու հարատեւի մեր ժողովրդի շուրթերին՝ անաղարտ ու գեղեցիկ:

Աստծու շնորհները եւ օրհնությունը թող ուղեկից լինեն ձեզ եւ աշխարհասփյուռ մեր ողջ ժողովրդին այսօր եւ միշտ. ամեն:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ «ԸՆՏԱՆԻՔ, ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԵԿԵՂԵՑԻ» ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

(12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

Հայրապետական սիրով ողջունում եւ Մեր օրհնութիւնն ենք բերում «Ընտանիք, հասարակութիւն եւ եկեղեցի» համաժողովի մասնակիցներիդ: Գնահատանքով ենք անդրադառնում, որ ժողովը նպատակ ունի եւս մեկ անգամ կարեւորութեամբ անդրադարձ կատարելու եւ վեր հանելու ընտանիքի դերն ու նշանակութիւնը հասարակական մեր կեանքում, ինչպես նաեւ որոշակի չեչտադրումներ կատարելու այսօր ընտանեկան կեանքում առկա անցանկալի երեւոյթներին:

Հայ եկեղեցին մշտապես բարձր է գնահատել ընտանիքի ամբողջականութիւնը, սրբութիւնը եւ անքննարկելի կարեւորութիւնը մեր ժողովրդի կեանքում՝ դիտելով որպես հոգեւոր եւ բարոյական արժէքների պահպանման հիմնասյուն եւ անփոխարինելի հաստատութիւն հանրային առողջ դիտակցութեան ճեւավորման ու զարգացման համար: Ընտանիքի այսպիսի հասկացողութեան հիմքը Սուրբ Ընտանիքն է, որը հիմնված է սիրո, բարութեան, ազատութեան, խնամքի, գթասրտութեան, հարգանքի անփոխարինելի արժէքների վրա:

Մեր օրերում՝ արագընթաց փոփոխութիւնների, նաեւ արժէքների անտեսման պայմաններում, ընտանիքի ավանդական ընկալմանը հակադրվում են ծնունդ առնող տարաբնոյթ գաղափարախոսական եւ հասարակական հոսանքները, կենսատեխնոլոգիական միջոցների առաջադրած մարտահրավերները, որոնք թափանցում են մարդու կեանքի նվիրական ոլորտը՝ հատկապես որդեծնութեան հարցերում:

---


[1] «Էջմիածին», 2014, Թ, էջ 7:

երեւելի եւ աներեւոյթ զանազան հարձակումներից, ցավոք, անմասն չի մնացել եւ չի մնում նաեւ հայ ընտանիքը: Այս առումով մտահոգիչ են ամուսնալուծությունների, հղիության, ոչ քիչ դեպքերում, սեռով պայմանավորված արհեստական ընդհատումների աճը, ծնելիության նվազումը, կանխատեսվող ժողովրդագրական անցանկալի փոփոխությունները, որոնք մասնավորաբար պետք է քննարկվեն համաժողովում:

Այսօր անհրաժեշտ է դարձել բոլոր մակարդակներում եւ հարթակներում, նմանատիպ համաժողովներով, եկեղեցական քարոզչությամբ, մեծ եւ փոքր քննարկումներով, ընտանիքի աջակցության ծրագրերով, հանրային կյանքի իրազեկման հնարավոր եղանակներով, պետական-օրենսդրական նախաձեռնություններով նպաստել ընտանիքի առողջությանը, բարձրացնել հանրային գիտակցությունը:

Այս առումով մեկ անգամ եւս կարեւորելով համաժողովի նախաձեռնությունը՝ Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Մայր Աթոռի Հայեցակարգային հարցերի գրասենյակի տնօրեն գերաշնորհ Տ. Բագրատ եպիսկոպոս Գալստանյանին համաժողովի կազմակերպման համար, ինչպես նաեւ բարձրորեն գնահատում ենք համագործակցության եւ աջակցության ջանքերը ԱԺ Առողջապահության, մայրության եւ մանկության հարցերի հանձնաժողովի, ՀՀ Առողջապահության նախարարության, «World Vision» հայաստանյան գրասենյակի, ՄԱԿ-ի Բնակչության եւ ԵՀՄ «Կյոր սեղան» հիմնադրամների: Մեր գնահատանքն ենք բերում համաժողովի բոլոր մասնակիցներին, զեկուցողներին, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին՝ մաղթելով արդյունավետ քննարկումներ, որոնք, լիահույս ենք, պիտի նպաստեն ընտանիքների ամրապնդմանը եւ բարոյական արժեքների ամրակայմանը մեր կյանքից ներս:

Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, խաղաղությունն ու չնորհները թող լինեն մեզ եւ ամենքի հետ. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 18 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

Սիրելի՛ հոգեւոր հայրեր,

Սիրեցյա՛լ հավատավոր զավակներ Մեր:

Հոգու բերկրությամբ ողջունում ենք ձեզ ազգիս նվիրական հոգեւոր կենտրոնում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որի օրհնաբաչխ հովանու ներքո Աստծո կամոք վերստին համախմբվել ենք եկեղեցական-ներկայացուցչական ժողովի՝ այս նոր, ընդլայնված կազմով: Ողջունում ենք ներկայությունը նվիրապետական մեր աթոռների ներկայացուցիչների՝ Երուսաղեմի Հայոց պատրիարքության ներկայացուցիչ գերաշնորհ Տ. Արիս արքեպիսկոպոս Շիրվանյանին, Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքությունը ներկայացնող պատրիարքական ընդհանուր փոխանորդ գերաշնորհ Տ. Արամ արքեպիսկոպոս Աթեշյանին:

Մենք մեծապես կարեւորում ենք մեր Եկեղեցու նվիրապետական աթոռները եւ աչխարհասփյուռ մեր թեմերը ներկայացնող այս ժողովի գործունեությունը, որը պիտի զբաղվի Հայ Եկեղեցու ժողովական կառույցների կանոնադրությունների մշակման, ներեկեղեցական կյանքի կազմակերպման եւ եկեղեցական հոգեխնամ առաքելության լավագույնս արդյունավորման հարցերով: Այս առումով կարեւորում ենք նաեւ նախորդ տարի մեր Եկեղեցու՝ Ամենայն Հայոց կաթողիկոսության եւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության եպիսկոպոսաց աննախադեպ ժողովի գումարումը, որը նույնպես պիտի դառնա պարբերական՝ զորացնելով տիրավանդ մեր առաքելությունը: Արդի ժամանակների նոր պայմանները եւ մարտահրավերները բերում են եկեղեցական ոլորտում առավել կազմակերպված ու հետեւողական գործունեության

[1] «Էջմիածին», 2014, Թ, էջ 13:

հրամայականը: Այսօր մեր ժողովրդի հոգեւոր-եկեղեցական կյանքում հառնած խնդիրները կարիքն ունեն հրատապ լուծման եւ միասնական առավել քաջեռանդ գործունեութեան եւ գործակցութեան:

Սիրելինե՛ր, Եկեղեցու կենսունակութեան եւ զորութեան ակունքները բխում են անխորտակ վեմից քրիստոսապատվեր սիրո, որը միմյանց է չաղկապում ու միավորում Եկեղեցու յուրաքանչյուր զավակի, համայնքի յուրաքանչյուր անդամի սիրտը, կյանքն ու գործերը: Այսպես եւ եկեղեցական մեր կառույցների գործունեությունը, ինչպես եւ՝ դժվարությունները ու մարտահրավերները հաղթահարելու ջանքերը չարունակ պիտի իրագործվեն միմյանց հանդեպ սիրո եւ ծառայության ոգով, որի վերաբերյալ մեր Տերը հանճնարարեց. «Ձեզնից ով կամենա մեծ լինել, թող լինի ձեր սպասավորը. եւ ձեզնից ով կամենա առաջին լինել, բոլորին ծառա թող լինի. որովհետեւ մարդու Որդին էլ չեկավ ծառայություն ընդունելու, այլ՝ ծառայելու» (Մարկ. 10.43-45): Եղբայրական սիրո եւ միմյանց հանդեպ նախանձախնդրության այս ոգին պիտի դարձնենք ուժն ու լծակը հոգեւոր-եկեղեցական եւ ազգային մեր կյանքի բարեփոխման ու զորացման, որին կոչված է նաեւ այս ժողովը:

Ժողովի գործունեությունն առավել կազմակերպված եւ արդյունավետ իրականացնելու նպատակով օրակարգում ներառնված է Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կանոնադրության նախագծի քննարկումը: Ժողովի օրակարգում է չարունակում մնալ նաեւ Թեմական կանոնադրության ուղենշային փաստաթղթի ներդրման գործընթացին վերաբերող հարցը: Գնահատանքով անդրադառնալով այս ուղղությամբ կատարված աշխատանքներին՝ պիտի արձանագրենք, որ տակավին ավարտին չեն հասել թեմական կանոնադրություններ-ի բարեփոխման աշխատանքները՝ համաձայն Թեմական-ներկայացուցչական ժողովի կողմից հաստատված կանոնադրության ուղենիշի: Եկեղեցական կյանքի կանոնակարգման հապաղումները տկարացնում են Եկեղեցու առաքելությունը՝ չարունակելով տեղիք տալ կամայական դրսեւորումների: Վերստին ընդգծենք, որ կանոնադրության ուղենիշը հիմնված է մեր եկեղեցական իրավունքի ու կանոնների վրա եւ երբեք չի սահմանափակում թեմերի իրավասությունները ու լիազորությունները: Նախորդ տարիներին այս առումով հնչել են թյուր մեկնաբանություններ, դրսեւորվել անհարկի կասկածամտություն, որոնք արդյունք են մեր Եկեղեցու կանոնական դրույթներին, ինչպես եւ առաջարկվող ուղենիշի սկզբունքներին անտեղյակության, նաեւ

հարմարվողականության հոգեբանության եւ ամրագրված կարծրատիպերի: Մինչ օրս իրականացվել են բացատրական եւ տեղեկատվական ընդգրկուն աշխատանքներ: Ներկայիս այլեւս անհասկանալի եւ անընդունելի է որոշ թեմերում Թեմական կանոնադրության ուղենիշի որդեգրման գործընթացի անավարտ վիճակը: Հարկ է պատշաճ նախանձախնդրություն դրսեւորելով՝ մոտ ժամանակներում ավարտին հասցնել աշխատանքները:

Անհրաժեշտ ուշադրություն պետք է դարձվի նաեւ այն իրողությանը, որ թեմական-համայնքային մեր կյանքը մեծ ազդեցություն է կրում մեր ժողովրդի տեղաշարժերից: Համայնքները համալրվում են նոր անդամներով, սակայն տարիներ շարունակ ընթացող այս փոփոխությունները չեն արտացոլվում թեմական կառույցների գործունեությունից ներս: Ահա է համայնքի անդամների անհամաչափ ներգրավվածություն թեմական գործընթացներում: Հաճախ թեմի տարածքում բնակվող հայորդյաց թվի համեմատ բավական նվազ է հոգեւոր-եկեղեցական կյանքին, միջոցառումներին ու ձեռնարկներին նրանց մասնակցությունը: Այս խնդիրների առջեւ անհրաժեշտ է առավել զորացնել քարոզչությունը, հոգեխնամ առավել ընդգրկուն գործունեություն ծավալել, եկեղեցու գործուն անդամների շարքերում ներգրավել թեմի հոգեւոր իրավասության ներքո ապրող եւ դեռեւս եկեղեցական կյանքին միայն մասնակիորեն հաղորդակցվող հայորդյաց: Կարեւորությամբ ցանկանում ենք անդրադառնալ, որ Սփյուռքում շարունակում են մտահոգող մնալ նոր սերնդի ազգային գիտակցության պահպանման, մայրենի լեզվի իմացության ու գործածության, խառն ամուսնությունների մարտահրավերները: Անհրաժեշտ է նոր ծրագրեր իրագործել՝ երիտասարդներին ազգայինի ծիրից ներս պահելու, հոգեւոր եւ ազգային արժեքներով դաստիարակելու եւ կրթելու ուղղությամբ:

Մեր օրերի աշխարհայնացման ընթացքները, բարոյական ընկալումների հաճախակի աղավաղումը, հասարակության կյանքում քրիստոնեության ունեցած կարեւոր դերի գիտակցման նվազումը ավերիչ ներգործություն են ունենում նոր սերնդի աշխարհընկալման ու հավատքի հարցերում: Արդարեւ, յուրաքանչյուր թեմում ունենք եկեղեցասեր երիտասասարդաց կազմակերպություններ, Մայր Աթոռի հովանու ներքո ստեղծվել է բոլոր թեմերից երիտասարդներ ընդգրկող Հայ եկեղեցասեր երիտասարդաց կազմակերպությունը, գործում են կիրակնօրյա դպրոցներ, Հայորդյաց տներ: Կատարված աշխատանք-

ներով հանդերձ՝ հարկ է մեծ ջանքեր ներդնել Հայաստանում եւ Սփյուռքում մեր Սուրբ Եկեղեցու առաքելության մեջ երիտասարդներին լայնորեն ներգրավելու, նրանց հոգեւոր-կրոնական գիտելիքները, հավատքն ու նախանձախնդրությունը զորացնելու համար:

Առաջիկա տարի ազգովի նշելու ենք Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցը: Խնկարկելու ենք մեր նահատակների հիշատակի առջեւ՝ ամրանալով մեր կամքի ու հավատի մեջ՝ արդար ավարտի հասցնելու մեր դատը: Մեծ տարելիցը ջանալու ենք դարձնել ազգային մեր կյանքի զորացման եւ Հայոց ցեղասպանության համընդհանուր ճանաչման ազդակ ու հանգրվան: Այս առիթով մեր Եկեղեցին պիտի կատարի մեր անմեղ զոհերի սրբադասումը: 2015 թ. Սուրբ Էջմիածնում կատարելու ենք նաեւ սրբազան մյուռոնի օրհնություն՝ ի մխիթարություն մեր ժողովրդի եւ ի զորացում մեր հավատքի ու քրիստոնեական արժեքների, մեր ժողովրդի միասնականության եւ Մայր Աթոռի ու Մայր Հայրենիքի շուրջ համախմբման:


Սիրելինե՛ր, քաջ գիտեք, որ մեր Սուրբ Եկեղեցու փրկարար առաքելության անբաժան մասն է հայապահպան եւ հայրենաշեն գործունեությունը, որի իրականացմանը Աստծո օրհնությամբ իրենց նպաստն են բերում աշխարհասփյուռ մեր թեմերի բազում հավատավոր հայորդիներ: Մեր ժողովրդի հոգում անքակտելիորեն կապված են հավատքի եռանդը եւ հայրենիքի սերը, որոնք միշտ արթուն ու վառ պիտի պահպանենք: Անտարակույս է, որ մեր լուսավոր ապագան պիտի կերտենք հայրենի պետականության ամուր հիմքերի վրա: Ազգային պետականությունն է այն բարեբեր հողը, որի վրա ժողովուրդները բացահայտում եւ դրսեւորում են իրենց հոգեւոր ներուժը, կայանում իրենց ինքնությամբ, կյանքի կոչում իրենց իդեալները: Ներկայիս մեր հայրենիքը անկախության երկու տասնամյակների ձեռքբերումներով հանդերձ՝ կանգնած է նաեւ տնտեսական, սոցիալական խնդիրների ու դժվարությունների, քաղաքական մարտահրավերների առջեւ: Վերջին ամիսներին Արցախի եւ Հայաստանի սահմաններում հրադադարի խախտման բազմաթիվ դեպքերը վկայեցին, թե որքան անկայուն է խաղաղությունը: Մեր ժողովրդին հուզում են արցախյան հակամարտության խաղաղ կարգավորման ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչման, Հայաստանի անօրինական շրջափակման վերացման, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման հիմնախնդիրները, Մերձավոր Արեւելքում, Սիրիայում, Իրաքում եւ Ուկրաինայում հակամարտության մեջ հայտնված մեր

համայնքների, հայորդիների խնդիրներն ու դժվարությունները, որոնց մասին մեր Եկեղեցին բարձրաձայնում է միջեկեղեցական ատյաններում, դրանց միջոցով իր ձայնը լսելի դարձնում պետությունների, միջազգային կազմակերպությունների պատասխանատու այրերին, ինչպես եւ մշտահունչ հորդորում ու քաջալերում է համայն հայությանը՝ միասնական ուժերով լուծելու ազգային հիմնախնդիրները: Ներկայացուցչական այս ժողովը կոչված է նաեւ խորհելու եւ քննարկելու Հայրենիքին սատարելու, համազգային կյանքում առկա խնդիրները լուծելու վերաբերյալ այն ծրագրերն ու առաջարկները, որոնք կարող ենք իրականացնել մեր Սուրբ Եկեղեցու եւ եկեղեցական կառույցների միջոցով:

Հավատում ենք, որ Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի գործունեությունը նպաստելու է մեր Սուրբ Եկեղեցու առաքելության արգասավորմանը: Մեր ժողովրդին հուզող հարցերին հրատապ անդրադառնալով, առաջարկներ ու ծրագրեր ներկայացնելով եւ համապատասխան որոշումներ կայացնելով՝ ժողովը աջակցելու է միասնական առաքելությամբ նոր ձեռքբերումների արձանագրմանը ազգային-եկեղեցական մեր կյանքում:

Աղոթում ենք ի խորոց սրտի, որ Սուրբ Հոգու առաջնորդությամբ բազմարդյուն լինի ընթացքը այս ժողովի, եւ Բարձրյալն Աստծո զորակցությունն ու աջակցությունը ուղեկից լինեն մեզ հավատավոր մեր ժողովրդին սպասավորության ճանապարհին: Հայցում ենք, որ Ամենակալ Տերը խաղաղություն ու առաջընթաց չնորհի համայն հայությանը եւ մեր Մայր Հայրենիքին եւ Իր ամենախնամ Սուրբ Աջով միշտ անսասան ու պայծառ պահի Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին:

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղեցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՌՈՒՄԻՆԱՀԱՅՈՑ ԹԵՄԻ ԵՎ ՌՈՒՄԻՆԻԱՅԻ ԿՐՈՆԻՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ «ԱՌԱՋԻՆ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՍՓՅՈՒՌՔԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ» ԽՈՐԱԳՐՈՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԸՆԹԱՑՔԻՆ

(ԲՈՒԽԱՐԵՍՏ, ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 26-28, 2014 Թ.)[1]

Գերաչնո՛րհ, հոգեշնորհ եւ արժանապատիվ հայրեր,

Ռումինիայի Հանրապետության կառավարության մեծարգո՛ անդամներ,

Ռումինիայում ՀՀ մեծահա՛րգ դեսպան, պատվարժա՛ն գիտնականներ եւ միջազգային գիտաժողովի հրավիրյալնե՛ր:

Հայրապետական սիրով ու օրհնությամբ ողջունում ենք հայ հնագույն գաղթօջախներից մեկում՝ Ռումեն օրհնյալ հողի վրա միջազգային գիտաժողովի կազմակերպիչներիդ ու մասնակիցներիդ: Հայոց ցեղասպանության հարյուրամյա տարելիցին ընդառաջ կազմակերպվող խորհրդանշական խորագրով այս գիտաժողովը հրաշալի առիթ է՝ եւս մեկ անգամ անդրադառնալու մարդկության պատմության մեջ անջնջելի բիծ թողած Առաջին համաշխարհային պատերազմին, նրա աղետներին ու դրանց ծնունդ մեծագույն չարիքին՝ հայ ժողովրդի հանդեպ իրագործված ցեղասպանությանը:

Անհերքելի իրողություն է, որ Առաջին համաշխարհային պատերազմից հազիվ մի քանի տարի անց արդեն մարդկության առաջատար լուսավոր մտքերն անդրադարձան այդ ահավոր աղետներին ու մասնավորապես՝ հայ ժողովրդի ցեղասպանությանը, որի անմիջական ծրագրողն ու գործադրողն էր Առաջին համաշխարհային պատերազմի գործուն մասնակիցներից Օսմանյան կայսրությունը: Արեւմտյան

[1] «Էջմիածին», 2014, Թ, էջ 22:

Եվրոպայից մինչեւ հեռավոր Ատլանտյանի ափերը տարածվեց այդ ահավոր աղետը դատապարտող ձայնը. «մենք այստեղ նրանց հետ ենք, մեր եղբայրների հետ, որոնց արյունը դեռ աղաղակում է» (Ջորջ Հոբսոն): Մշակույթի, արվեստի, գրականության ու քաղաքականության մեջ արտահայտված դատապարտության ամենատարբեր դրսեւորումները կարծես արթնացրին Աստծո պատկերով ստեղծված մարդու խղճի ձայնը՝ փորձելով պատմությունը մաքրել արատավոր բծերից ու դրանով կանխարգելել հետագա նմանատիպ եղեռնագործությունները: Բայց արդարության պահանջով տոգորված այդ ձայներն այդպես էլ լսելի չեղան միջազգային քաղաքական հանրության կողմից: Ութ տասնամյակից ավելի տեւած կեղծ հակահայկական քարոզչությունը, վավերագրերի ու փաստաթղթերի ոչնչացումը դարձավ, արդի ցեղասպանագետներից մեկի բնորոշմամբ. «ժամանակակից աշխարհում համընդհանուր անգիտության ու մոռացության ամենահաջողված օրինակ» (Ս. Կոհեն, Երուսաղեմի եբրայական համալսարան): Եվ այսօր էլ՝ Հայոց Մեծ Եղեռնից չուրջ հարյուր տարի անց, դեռեւս առկա են արդարության ու սեփական մեղքի գիտակցության զգացումները խեղդող սուտ ու մտացածին պատճառաբանությունները: Մեկուկես միլիոն անմեղ զոհերի հիշատակը, որոնց աքսորի քստմնելի տեսարանից զարհուրել էր նույնիսկ երիտթուրք պարագլուխներից Ջեմալ փաշան, շարունակում է մնալ քաղաքական շահարկությանց եւ սին երկխոսությանց առարկա՝ հաչս միջազգային ժողովրդավարական հանրության: Թուրքիայի Հանրապետության ղեկավարների եւ նույնիսկ քաղաքացիական հասարակության ականջները հարատեւ փակ են նույն այդ Ջեմալ փաշայի՝ գերմանացի սպային խոստովանած մարգարեական խոսքերի առջեւ՝ «Ես ամաչում եմ իմ ազգի համար» (Ich schame mich f□r meine Nation): Հայոց Մեծ եղեռնն ու Հայ սփյուռքի ձեւավորումը հենց այս՝ տարիներ տեւած մոռացության եւ գիտակցված անտարբերության ծնունդը դարձան: Միլիոնավոր հայորդիներ, զրկվելով իրենց պատմական տարածքներից ու բնակավայրերից, ստիպված եղան ապաստան գտնել ամենատարբեր երկրներում՝ որակվելով իբրեւ «հայրենազուրկ» եւ կրելով աքսորի ու գաղթի ճանապարհի դառը պայմանները: Եվ իբրեւ այս ամենի տրամաբանական ողբալի հետեւանք՝ պատերազմի ու արյան ձայներն այդպես էլ չլռեցին աշխարհում: Երկրորդ համաշխարհային պատերազմի ու դրանից հետո ընդհուպ մինչեւ ի դարավերջ հասնող ցեղասպանություններն ու նախճիրները չարունակեցին արատավորել մարդկային աստվածա-

տուր մտքի լուսավոր ձեռքբերումներով պսակված համաշխարհային պատմության ճակատը: Աուշվից, Ռուանդա, Սոմալի....ահա ոչ լրիվ ցանկն այն՝ արդեն խորհրդանշական դարձած աշխարհագրական վայրերի, որոնց արտասանությունն իսկ մեր մտքերում արթնացնում է սարսուռ ծնող հակակրանք ու ցավ:

Պատերազմի լավագույն կանխարգելիչ միջոցը դրա պատճառների ու աղետավոր հետեւանքների վերհանումը եւ դատապարտումն է: Գիտության ու մարդասիրության նվիրական լույսով լուսավորված պատմական ամեն փաստ դառնում է հետագա խավարի ու մոռացության չարիքից ապահովագրված իրողություն, ինչպես հաստատում է Ս. Հովհաննես ավետարանիչը. «Եւ լոյսը խաւարի մէջ լուսաւորում է, եւ խաւարը նրան չնուաճեց» (Յովհ. Ա 5):


Այսօր, միջազգային գիտաժողովի մեծարգո՛ մասնակիցներ, դուք նվիրական առաքելությունն ունեք ճշմարտության լույսի եւս մի չող ավելացնելու Հայոց ցեղասպանության հետեւանքների վերհանմանն ու դատապարտմանը: Պատմությունը միայն սերտելու եւ փաստագրելու համար չէ. այն ողջ մարդկության մեծագույն ուսուցիչն է, եթե մենք խոնարհումով ու ճշմարտությունն ընդունելու ազնիվ ցանկությամբ ենք մտնում նրա սրահներից ներս: Այս առիթով համայն հայության սրբությունն սրբոց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Մեր սերն ու գորակցությունն ենք հայտնում Ձեզ ամենքիդ՝ եռօրյա գիտաժողովին մաղթելով արդյունավոր ու ստեղծագործ ընթացք: Հայոց ցեղասպանության հարյուրամյա ոգեկոչմանն ընդառաջ՝ թող Ձեր նվիրական ջանքերն ու քննական անաչառությունը դառնան հերթական վկայությունը, որ աշխարհը միասնական է Աստծո պատկերով ու նմանությամբ ստեղծված մարդու զանգվածային ոչնչացումը դատապարտելու հարցում: Թող հայ ժողովրդի մարտիրոսական փորձառությունը, իբրեւ չարչարանաց դառն օրինակ, եւ դրա դատապարտումն իբրեւ արդար անդրադարձ, պարզվեն լուսավորյալ բոլոր մարդկանց առաջ:

Այս առումով Մենք Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում Ռումինիայի Կառավարությանն ու ռումեն եղբայր ժողովրդին, որի հյուրընկալ հարկի տակ մի քանի դար շարունակ ապրում ու ստեղծագործ արարումով զարգանում է այստեղ ապաստան գտած հայորդին: Մեր առանձնահատուկ գնահատանքը Ռումինիայի կրոնից նախարարությանը, մասնավորապես մեծարգո տիար նախարարին եւ Ռումինահայոց թեմին՝ հանձին թեմակալ առաջնորդի, ովքեր հղացան այս կարեւոր գիտաժողովը կազմակերպելու նվիրական

ծրագիրը: Հայրապետական մեր սերն ու օրհնութիւնը Ձեզ՝գիտաժողովի սիրելի՛ մասնակիցներ, որ մեծաւ մասամբ ներկայացնում եք Մեծ Եղեռնից մազապուրծ եւ աշխարհի տարբեր երկրներում Հայ սփյուռքը ձեւավորած ձեր նախնիներին: Նրանց լուսաւոր ու անբասիր վարքը վկայակոչվել է աչխարհով մեկ՝ իբրեւ հավատարիմ ու անշահախնդիր քաղաքացի իր պետութեան եւ իր ազգի: Այս լուսավոր հիշատակի վրա է, որ Մենք այսօր հույսով առլեցուն դիմում ենք միջազգային հանրութեանը՝ գեթ մի պահ անդրադառնալու այն գիտակցված թմբիրին ու մոռացութեանը, որով արդեն մեկ դար պարուրված է պատմութեան սրտի մեջ երկսայր դաշույնի պես խոր մխրճված դառը պատմական փաստը՝ Հայոց Մեծ Եղեռնը:

Մեր աղոթքն է, որ Տերը ճշմարտութեան չնորհ ու իմաստութիւն պարգեւի հանուր մարդկութեանը՝ այլեւս երբեք իր պատկերակցին ու նմանին չսպանելու եւ կատարված բոլոր եղեռնագործութիւնները դատապարտելու համար: Հավատացած ենք, որ մարդկային խղճին նույնիսկ մի պահ անդրադարձը կարող է փոխել այն անտարբերութիւնն ու չահարկվող վերաբերմունքը, որն այսօր առկա է կատարված ու դեռ չարունակվող ցեղասպանութիւնների եւ զանգվածային սպանութիւնների հանդեպ:

Թող մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, խաղաղութիւնն ու չնորհները լինեն ձեզ հետ եւ բոլորի. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ

(ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, 6 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

Գերաչնո՛րհ Սրբազան հայրեր,
Հոգեչնո՛րհ եւ արժանապատիւ հայրեր,
ՀՀ մշակույթի մեծազնի՛վ նախարար,
Համաժողովի հարգարժա՛ն մասնակիցներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում ձեզ՝ հայկական գրադարանների միջազգային երրորդ համաժողովի մասնակիցներիդ:

Ուրախ ենք, որ 2009 թվականին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հովանու ներքո ԱՄՆ Արեւելյան Հայոց թեմի նախաձեռնությամբ գումարված համաժողովն ունեցավ շարունակություն, եւ այսօր դուք կրկին համախմբվել եք՝ ի խնդիր հայկական գրադարանների գործունեության արդիականացման ու լիարժեք կազմակերպման եւ արդյունավորման:

Գիրքը մարդկային մշակույթի հնագույն ձեռքբերումներից է, քանզի «ո՛չ հացիւ միայն կեցցէ մարդ, այլ ամենայն բանիւ, որ ելանէ ի բերանոյ Աստուծոյ»: Գրավոր մշակույթ մեր ժողովուրդն ունեցել է վաղնջական ժամանակներից: Աստվածատուր շնորհով ունեցանք նաեւ Մեսրոպյան աքանչելագործ մեր գիրը, որը Աստծո հրեղեն խոսքով սրբեց, լուսավորեց եւ իմաստացրեց մեր ժողովրդի հոգին: Մեր իրականության մեջ, ինչպես հոգեւոր առատաբուխ ակունքից, սկիզբ առան հայախոս գրքերը, ստեղծվեցին բազում վանական գրադարաններ, որոնք, հակառակ դարերի փորձությունների, պահպանեցին մեր գրավոր ժառանգությունը եւ նրա առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Կրթալուսավորչական նշանակությունից բացի՝ մեր գրա-

[1] «Էջմիածին», 2014, Ժ, էջ 7:

վոր մշակույթը, որպես հոգեւոր հզոր ուժ, պահպանել է նաեւ հայ կյանքի սահմանները: Արդարեւ, սուրբգրային խոսքի համաձայն՝ ոչ միայն հացով կյանք ունեցավ մեր ժողովուրդը, այլեւ՝ իր հոգեւոր արժեքներով՝ գրավոր բարձր մշակույթով ու հարուստ ժառանգությամբ: Նրանցում մեր հայրենիքն է, մեր սրբություններն են, խաղաղ կյանքի մեր ճգտումները եւ մեր անսասան հավատքը Աստծո կենարար խոսքի հանդեպ, որը պիտի չարունակի ապրեցնել մեր ժողովրդին ու պահպանել աստվածախնամ ճանապարհներում:

Առաջին հայերեն գրավոր կոթողների պահոց եղավ Սուրբ Էջմիածնի Մատենադարանը, որն այսօր այս գեղեցիկ եւ արդիական հարկի ներքո համախմբել է ձեզ՝ մեր գրավոր մշակույթի պահպանման, ներկայացման, ուսումնասիրման անխոնջ նվիրյալներիդ: Մենք վստահ ենք, որ գրադարանային գործի մշակներիդ, հայ գրքի հետազոտողներիդ պարբերաբար Մայր Հայրենիքում մեկտեղումը լավագույնս պիտի օգնի մեր գրավոր ժառանգության արժեւորմանը եւ նրա՝ հոգեխնամ ու ազգապահպան առաքելության զորացմանը: Մեր հոգեւոր կենտրոնի, հայրենի եւ օտար այլ քաղաքների գրադարաններից, մատենադարաններից ու գրապահոցներից այսօր նոր չնչով պետք է չարունակվի մեր գրավոր ժառանգության առաքելությունը:


Աղոթքով առ Աստված վերստին բերում ենք Ձեզ Հայրապետական Մեր օրհնությունը եւ գնահատանքը՝ մեր ժողովրդին Ձեր մատուցած ազնիվ ծառայության, անձանձիր նվիրումի եւ նախանձախնդրության համար եւ հաջողություն մաղթում համաժողովի աշխատանքներին:

Հայրապետական մեր գնահատանքն ենք բերում ՀՀ մշակույթի նախարարությանը՝ համագումարի կայացմանը բերած ջանքերի եւ աջակցության համար:

Հայրապետական օրհնությամբ Մեր գնահատանքն ենք բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի «Վաչէ եւ Թամար Մանուկյան» Մատենադարանի եւ ՀՀ Ազգային գրադարանի տնօրինություններին՝ համաժողովի կազմակերպչական աշխատանքները բոլորանվեր հանճառությամբ եւ մեծ նախանձախնդրությամբ իրականացնելու համար:

Աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված Իր Զորավոր Աջի ներքո պահի մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ առատ դարձնի հոգեւոր լույսի արգասիքները մեր կյանքում:

Շնորհ եւ խաղաղություն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ «ՀԱՅ ԿԱՆԱՆՑ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՄԱՆ» 7-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻՆ (10 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2014 Թ.)[1]

Մեծարգո՛ պրն. նախագահ,
Ազնվափա՛յլ Վալերի Բուայե,
Մեծազնի՛վ տիկին նախարար,

«Հայ կանանց միջազգային միավորման» սիրելի՛ անդամներ եւ ներկաներ:Հայրական սիրով ու ջերմ բարեմաղթանքներով ողջունում եւ շնորհավորում ենք ամենքիդ «Հայ կանանց միջազգային միավորման» 7-րդ համաժողովի գումարման առթիվ: Ուրախ ենք տեսնել, որ միավորումն իր արգասավոր աշխատանքներն է շարունակում՝ նպաստելով ողջ աշխարհում հայ կանանց միջեւ գործնական եւ բարեկամական կապերի ստեղծմանն ու ամրապնդմանը եւ համախմբելով նրանց ազնիվ ջանքերը՝ ի խնդիր Հայրենիքում եւ Սփյուռքում ազգային մեր կյանքի զորացման ու առաջընթացի:

Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ չուրջ 25-ամյա գործունեության ընթացքում միավորման կողմից իրականացվել են կրթական, առողջապահական, մշակութային, բարեգործական ծրագրեր ու միջոցառումներ, որոնք վկայությունն են միավորման անդամների քրիստոնեական նախանձավոր ոգու եւ նրանց ազգասեր ու հայրենասեր ձգտումների:

Աստծո պատկերը տեսնելով մարդու մեջ եւ կարեւորելով նրա արժէքն ու արժանապատվությունը՝ քրիստոնեությունը փոխեց նաեւ աշխարհի վերաբերմունքը կնոջ հանդեպ: Քրիստոնեությունը բարձրացրեց կնոջ դերը ազգերի եւ հասարակությունների կյանքում: Մարդկության համար տիպար եղավ Ս. Աստվածածինը՝ վկայելով, որ կնոջ փխրուն ու նրբին հոգու մեջ թաքնված են առ Աստված հավատքի

[1] «Էջմիածին», 2014, Ժ, էջ 9:

եւ ամբողջանվեր ծառայության ուժն ու գիտակցական զոհաբերության պատրաստակամությունը: Հավատավոր այդ հոգով մեր բազմադարյա եւ բազմաչարչար պատմության մեջ հայ տղամարդու կողքին մշտապես կանգնած է եղել խոնարհ, նվիրյալ եւ քաջարի հայ կինը՝ զավակներ կրթելով, ընտանիքի համար հոգալով, հարկ եղած դեպքում՝ հայրենի տունն ու երկիրը պաշտպանելով: Մեր ժողովուրդը, հիրավի, հարուստ է մեծանուն կանանցով՝ բարեգործ թագուհիներ, իշխանուհիներ, կրթության ու գիտության, արվեստի ու մշակույթի գործիչներ: Կանայք մշտապես կարեւոր տեղ են ունեցել եւ գնահատվել նաեւ եկեղեցական-համայնքային մեր կյանքում: Այսօր անկարելի է պատկերացնել որեւէ եկեղեցու ծխական առօրյան՝ առանց ջանասեր, ազնիվ եւ հավատավոր հայ կնոջ: Մեր ժամանակի հրամայականներից ելնելով՝ կինը ոչ միայն հոգատար մայր է, ընտանիքի դաստիարակ, նվիրված կողակից, այլեւ գործարար, ստեղծող ու արարող: Մեր մաղթանքն է, մեծազնի՛վ տիկնայք, որ Տերը բազմապատկի եւ առատորեն արգասավորի աստվածատուր ձեր կարողություններն ու շնորհները, որպեսզի չարունակեք հավատավոր եւ նախանձախնդիր ոգով ի սպաս դնել մեր ժողովրդի եւ հայրենիքի առջեւ ծառացած մարտահրավերների վճռմանը եւ ազգային մեր իղձերի իրագործմանը:

Հայրապետական Մեր օրհնությունն ու գնահատանքն ենք բերում «Հայ կանանց միջազգային միավորման» 7-րդ միջազգային համաժողովի կազմակերպիչներիդ ու բոլոր մասնակիցներիդ: Աղոթում ենք, որ Տերը հաջողությամբ պսակի ձեր մեծ եռանդն ու ջանքերը՝ ի նպաստ համաժողովի արգասավոր աշխատանքի: Հայցում ենք, որ Ամենակարողն Աստված զորացնի եւ ծաղկյալ պահի «Հայ կանանց միջազգային միավորումը» եւ սիրասուն մեր դուստրերիդ պարգեւի քաջառողջություն, ոգու տոկունություն եւ երջանիկ կյանքի արեւշատ օրեր:

Թող Բարձրյալի ամենախնամ շնորհն ու օրհնությունը լինեն ձեզ հետ եւ աշխարհասփյուռ մեր ժողովրդի՝ այսօր եւ միշտ. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԵՎ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԱՌԻԹՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՎԱԾ «ԸՆԴԴԵՄ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ» ԳԼՈԲԱԼ ՖՈՐՈՒՄԻՆ

(22 ԱՊՐԻԼԻ, 2015 Թ., ԵՐԵՎԱՆ)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Սիրելի՛ հոգեւոր եղբայրներ,

Համաժողովի պատվարժա՛ն մասնակիցներ եւ հյուրեր:

Ողջունում ենք Ձեզ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումների շրջանակներում կազմակերպված այս համաժողովի առիթով եւ բերում օրհնություն համայն հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից:

Բազմաթիվ փորձություններ տեսած մեր ժողովրդի նորագույն պատմության ամենամռայլ եւ ողբերգական էջը 20-րդ դարասկզբին Օսմանյան Թուրքիայում ծրագրված եւ իրագործված Հայոց ցեղասպանությունն է, որին զոհ գնացին չուրջ մեկ ու կես միլիոն հայորդիներ: Այսօր՝ 100 տարի անց, այդ ոճրագործությունը միջազգային հանրության ուշադրության կենտրոնում է: Մի շարք պետությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումն ու դատապարտումը՝ իրրեւ մարդկության դեմ գործված ծանրագույն հանցագործություն, վստահություն է ներշնչում Մեզ, որ այն պիտի ստանա համընդհանուր ճանաչում ու արդար գնահատական:

Քիչ են դեպքերը, երբ մի պետություն, որ ցեղասպանություն է կազմակերպել, ճանաչում եւ ընդունում է իր հանցանքը: Այս առումով Գերմանիան կարող է օրինակ հանդիսանալ Թուրքիայի ներկա իշխանությունների եւ ցեղասպան այլ պետությունների համար:

---

[1] «Էջմիածին», 2015, Դ, էջ 23:

Ցեղասպանության ժխտումը ոչ միայն ցեղասպանության ենթարկված ժողովրդի իրավունքների, արժանապատվության ու արդարության ոտնահարում է, այլեւ խարխլում է միջազգային իրավունքի եւ համընդհանուր բարոյականության հիմերը եւ ծանր հարված հասցնում ազգերի եւ ժողովուրդների հարաբերություններին ու խաղաղ համակեցությանը:

Ժամանակին միջազգային հանրության կողմից ցեղասպանության հանցագործությունների անտեսումը, անդատապարտելի ու անպատիժ թողնելը, ինչպես եւ ժխտողականությունը պատճառ դարձան, որ չարունակվի եղերագործությունների շղթան: Նույն չարահնար մտածողությամբ, որով կազմակերպվեցին հայերի սոսկալի, վայրագ ջարդերը, ծնունդ առան Հոլոքոստը, Ռուանդայի, Դարֆուրի ցեղասպանությունները:

Ցեղասպանության ոճրագործության ժխտման եւ այն անպատիժ թողնելու համար մարդկությունը չափազանց մեծ գին է վճարում: Ժխտողականության հանդուրժումը անտարբեր է դարձնում մարդուն իր նմանի տառապանքի հանդեպ եւ հանրության կյանքում լռեցնում բարոյական պատասխանատվության ձայնը՝ զրկելով նման սարսափի կրկնությունը կանխելու հանճառությունից:

Մարդկությունը բարոյական պարտավորություն ունի պայքարելու ընդդեմ ցեղասպանության հանցագործությունների: Բարոյականությունը, որ պիտի լինի հիմնամուր այունը հասարակական կյանքի եւ պետությունների քաղաքականության, դժբախտաբար, այսօր հաճախ զոհաբերվում է աշխարհաքաղաքական չահերին: Նման հանցավոր դիրքորոշման ու վերաբերմունքի հետեւանքները ողբերգական են բազմաթիվ ժողովուրդների համար: Մեզ՝ հայերիս համար դա մեկ ու կես միլիոն մեր հայրերի կյանքն էր, կորուսյալ մեր հայրենիքը, մասամբ ոչնչացված եւ մասամբ ոչնչացման վտանգին ենթակա մշակութային ժառանգությունը:

Այսօր մարդկությունն ականատես է նոր ողբերգությունների աշխարհի տարբեր կողմերում: Հազարավոր մարդիկ զոհ են դառնում ազգային-կրոնական անհանդուրժողականությանն ու ծայրահեղականությանը, մասնավորապես՝ Մերձավոր Արեւելքի երկրներում, ինչպես վերջերս Լիբիայում՝ Ղպտի եւ Եթովպիական Եկեղեցիների հավատացյալներ: Անմեղ կյանքեր խլող եղեռնագործությունները անկախ դրսեւորման ձեւերից ու եղանակներից՝ հանցագործություն են մարդկության դեմ եւ խստագույնս՝ դատապարտելի: Դրանց դեմ

պայքարը՝ իբրեւ դարի մարտահրավեր, պարտքն է յուրաքանչյուր ժողովրդի, պետության, միջազգային հանրության եւ կառույցի:

Առաքյալն ուսուցանում է, որ եթե մարմնի մի անդամը տառապում է, մյուս անդամները եւս տառապում են նրա հետ (հմմտ. Ա Կորնթ. 12. 26): Հիրավի, այս վերջին հարյուր տարիների ընթացքին բազում պետություններ, ազգեր, Եկեղեցիներ, կրոնական ու միջազգային կազմակերպություններ եւ անհատներ կիսել են հայ ժողովրդի ցավը եւ իրենց դիրքորոշմամբ նպաստել, որ արդարությունը հաղթանակի:

Մենք վերստին երախտագիտություն ենք հայտնում բոլոր այն անձանց, ազգերին, Եկեղեցիներին եւ պետություններին, ովքեր ապաստան են տվել եւ սատարել մեր ժողովրդի տարագիր զավակներին՝ վերակերտելու ազգային եւ հոգեւոր իրենց կյանքը, ինչպես եւ նրանց, ովքեր ճանաչել եւ դատապարտել են Հայոց ցեղասպանությունը: Մեր երախտագիտությունն ենք հայտնում համաժողովի մասնակիցներիդ՝ քույր Եկեղեցիների հոգեւոր պետերիդ եւ ներկայացուցիչներիդ, բարեկամ երկրների պետական այրերիդ, գիտության եւ մշակույթի գործիչներիդ եւ բոլորին, ովքեր այս օրերին մեր ժողովրդի հետ են եւ գովարժան նպաստ են բերում Հայոց ցեղասպանության եւ մարդկության դեմ գործված բոլոր հանցագործությունների դատապարտմանը:

Աղոթում ենք, որ Ամենակալ Աստված խաղաղության եւ բարօրության մեջ պահպանի համայն աշխարհը, որ ոչ մի ժողովուրդ այլեւս չապրի ցեղասպանության ողբերգությունը: Թող Տերը օրհնի մարդկանց եւ ազգերի միջեւ եղբայրության ու արդարության ճանապարհները: Ամեն:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ,
ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ,
ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ «ՀԱՅՈՑ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՒՆ 100. ճԱՆԱՉՈՒՄԻՑ ՀԱՏՈՒՑՈՒՄ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

(15 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում ենք ՀՀ գիտությունների ազգային ակադեմիայի եւ Երեւանի պետական համալսարանի համատեղ նախաձեռնությամբ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված՝ «Հայոց ցեղասպանություն 100. ճանաչումից-հատուցում» միջազգային գիտաժողովի կազմակերպումը եւ Հայրապետական Մեր օրհնությունը հղում գիտաժողովի բոլոր մասնակիցներին:

1915 թվականը հազարամյակների մեր պատմության ամենաողբերգական էջն է, որը հայրենազրկումի, մարդկային ու նյութական մեծ կորուստների անամոքելի ցավի դառը հիշողություններ է թողել մեր ժողովրդի հոգում: Ի դարասկզբին ավելի քան մեկ ու կես միլիոն անմեղ հայորդիներ իրենց հավատի ու ազգային պատկանելության համար զոհ գնացին Օսմանյան կայսրության իրագործած անմարդկային ոճրագործությանը՝ Հայոց ցեղասպանությանը: Ավերվեցին մեր չեներն ու բնակավայրերը, թալանվեցին եւ քանդվեցին մեր վանքերն ու եկեղեցիները, ոչնչացվեց մեր հայրերի ստեղծած մշակութային ժառանգությունը:

Պատմական իր հայրենիքի մեծագույն մասը կորցրած, մեծ զոհաբերությունների գնով իր կյանքը վերակառուցած մեր ժողովուրդը Ցեղասպանության դաժան հետեւանքները զգում է առ այսօր: Որպես Ցեղասպանություն վերապրած ժողովուրդ՝ մեր պայքարը, մեր ջանքերը նպատակաուղղված են ցեղասպանությունների ու բռնություն-

[1] «Էջմիածին», 2015, Ժ, էջ 16:

ների դատապարտմանը, որպեսզի աշխարհում երբեք չվտանգվի ժողովուրդների ազատ եւ խաղաղ ապրելու աստվածաշնորհ իրավունքը:

Ցավալի է, որ մարդկության դեմ իրագործվող այսօրինակ հանցագործությունները տակավին տեղ ունեն մեր կյանքում: Այսօր միջազգային տարբեր հարթակներից լսում ենք կոչեր ու հորդորներ խաղաղ եւ ապահով աշխարհի կառուցման մասին, մինչդեռ աշխարհի տարբեր կողմերում, հատկապես՝ Մերձավոր Արեւելքում, դաժանորեն խոշտանգվում ուսպանվում են հազարավոր մարդիկ, շատերը ստիպված լքում են իրենց բնակավայրերը, անխնա ոչնչացվում են պատմամշակութային հնադարյա արժեքները: Արդյոք հնարավոր է խաղաղության կառուցումը առանց արդարության, առանց նախկինում կատարված հանցագործությունների դատապարտման ու հատուցման: Փաստերով վկայված իրողություն է, որ չդատապարտված հանցագործությունը ծնում է նոր՝ ավելի մեծ հանցագործություն: Երկրորդ աշխարհամարտի ընթացքին որքան զոհեր խլեց ֆաշիզմը, որի առաջնորդները քաջալերված էին Հայոց ցեղասպանության հանդեպ համընդհանուր մոռացությամբ: Որքան անմեղ մարդիկ են մեր օրերում տառապում ահաբեկչությունների պատճառով, որոնց կազմակերպիչները վստահ են իրենց անպատժելիության վրա:

Մեր ժողովուրդը, ով վշտակից է մերօրյա պատերազմներից ու բռնություններից տուժած ժողովուրդներին, աննվազ նախանձախնդրությամբ պայքարելու է արդարության հաստատման համար, քանզի արդարության եւ համընդհանուր դատապարտման ճանապարհն է միայն, որ աշխարհը զերծ պիտի պահի նոր ցեղասպանություններից ու ոճրագործություններից:

«Հայոց ցեղասպանություն 100. Ճանաչումից հատուցում» միջազգային գիտաժողովը կարեւոր քայլ է՝ քննարկումների միջոցով բարձրաձայնելու եւ առավել հանրայնացնելու մարդկության դեմ իրագործված հանցագործությունների հիմնախնդիրները: Վերստին Մեր գնահատանքն ու բարեմաղթանքներն ենք յղում գիտաժողովի կազմակերպիչներին եւ բոլոր մասնակիցներիդ՝ կարեւորելով ձեր առաքելությունն ի նպաստ խաղաղ ու բարօր աշխարհի կառուցման:

Առ Աստված աղոթքով հաջողություններ ենք մաղթում գիտաժողովի աշխատանքներին եւ հայցում, որ Տերն ամենակալ խաղաղություն եւ բարօրություն պարգեւի բոլոր ազգերին ու ժողովուրդներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐԻ ՉՈՐՐՈՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 17 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2016 Թ.)[1]

Սիրելինե՛ր:

Ուրախ ենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում համախմբված տեսնել հայկական գրադարանների եւ մշակույթի պատասխանատուներիդ ու պաշտոնյաներիդ:

Մեր օրհնությունն ենք բերում ձեզ եւ Մեր գնահատանքը՝ ձեր նախանձախնդիր մասնակցության համար Մայր Աթոռի Մատենադարանի, ՀՀ մշակույթի նախարարության եւ Ազգային գրադարանի կողմից հրավիրված համաժողովին, որ նվիրվում է Աստվածաշունչ մատյանի տպագրության 350-ամյակին:

Սուրբ Գրքի տպագրության հոբելյանը մեր ժողովրդի համար նշանակալի առիթ է մեկ անգամ եւս արժեւորելու իր գրավոր ժառանգությունը եւ այն անխոնջ ջանքերն ու նվիրումը, որ մեր երախտավորների կողմից գործադրվել են հարուստ այդ ժառանգությունը ստեղծելու համար:

Տպագրությունը մարդկության մեծ ձեռքբերումներից մեկն է: Այն հնարավորություն տվեց, որ գիտելիքը, մարդկային մտքի նվաճումները արագորեն տարածվեն, լուսավորությունը հասնի հասարակության բոլոր շերտերին: Նույնիսկ կարելի է ասել, որ տպագրությունը արդի քաղաքակրթությունը ձեւավորող նպաստավոր պայմաններից մեկն է: Այս ընթացքի մեջ բոլորովին պատահական չէ, որ մեր ժողովուրդը աշխարհում առաջիններից մեկը ձեռնամուխ եղավ տպագրության գործին: Բնական ուղին էր դա մի ժողովրդի, որ մինչ տպագրության դարը մեկ հազարամյակ մայրենի լեզվով ձեռագիր

[1] «Էջմիածին», 2016, Ժ, էջ 11:

մատյաններ էր ստեղծում՝ չատ հաճախ չունենալով խաղաղություն ու ապահովություն եւ ապրելով զրկանքների մեջ: Հոգեւոր կերակուրից, սակայն, ոչ ոք չկարողացավ զրկել մեր ժողովրդին, որ հավատարիմ քրիստոնեական իր ոգուն՝ հավատաց հոգեւոր զորության բարեփոխող ուժին եւ ապրեց ու ստեղծեց ի սեր խաղաղ ու արդար աշխարհի:

Դուք, սիրելինե՛ր, պահպանում, վերականգնում, ուսումնասիրում եւ ներկայացնում եք գրավոր ժառանգությունը, որին մեր ժողովուրդը պահ է տվել իր հոգին ու միտքը, իր պատմությունը, իր աշխարհճանաչողությունը, գիտելիքն ու հույզերը, իր բնաշխարհի բույրն ու գույները, որոնք պիտի փոխանցենք սերունդներին: Այսօր մենք ապրում ենք էլեկտրոնային գրքի դարում, որը նոր հնարավորություններ է ստեղծում, որպեսզի գրապահոցներում եղած ժառանգությունը հասու լինի հասարակությանը: Այս ուղղությամբ մեծապես գնահատում ենք վերջին տարիների ձեր ջանքերը, էլեկտրոնային գրադարանների ստեղծման ուղղությամբ իրականացված ծրագրերը: Ինչպիսի ձեւի մեջ էլ ներկայացվի, գիրքը պիտի շարունակի հոգեւոր սնունդ մատուցել մեր ժողովրդին, հաստատուն պահել աստվածօրհնյալ ճանապարհներում եւ առաջնորդել իր բարօր ու լուսավոր կյանքի կերտմանը:

Հայրապետական Մեր օրհնությունն ենք վերստին բերում ձեզ, սիրելինե՛ր, եւ մեր բարձր գնահատանքը՝ ձեր նվիրումի ու ծառայության համար, մեր մշակույթին, ազգային կյանքին բերած ձեր ավանդի համար: Ողջունում ենք այստեղ ներկայությունը ՀՀ մշակույթի նորանշանակ նախարար մեծարգո տիար Արմեն Ամիրյանի: Մեր գնահատանքն ենք բերում համաժողովի կազմակերպիչներին եւ բոլոր աջակիցներին:

Աղոթում ենք առ Աստված, որ խաղաղ պահի մեր հայրենիքը, պահպանի մեր ժողովրդին ի սփյուռս աշխարհի եւ օրհնի մեր ջանքերը՝ հանուն հոգեւոր եւ ազգային մեր կյանքի պայծառության եւ մեր ժողովրդի արդար իղձերի իրագործման:

Բարի ընթացք եւ հաջողություն ենք մաղթում համագումարի աշխատանքներին:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ-ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

(ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, ՀՈՒՆԻՍ, 2017 Թ.)[1]

Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքական տեղապահ գերաշնո՛րհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Բեկչյան,

Գերաշնո՛րհ, հոգեշնորհ, արժանապատիվ հայրեր եւ պատվարժա՛ն աչխարհական պատգամավորներ:

Ողջունում եւ բարի գալուստ ենք մաղթում ձեզ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում ամենքիդ եկեղեցական-ներկայացուցչական ժողովին ձեր մասնակցության համար: Մեծապես գնահատում ենք ձեր ազնիվ հանձնառությունը եւ մանավանդ՝ եկեղեցական մեր կյանքը պայծառացնելու ձեր նախանձախնդրությունը, որով ձեր նվիրյալ ջանքերն եք բերում ի նպաստ մեր Սուրբ եկեղեցու առաքելության արդյունավորման:

Եկեղեցական-ներկայացուցչական ժողովը կյանքի է կոչվել Ազգային-եկեղեցական ժողովի գումարումների միջանկյալ ժամանակահատվածում քննարկելու եկեղեցական եւ ազգային մեր կյանքը հուզող խնդիրները: Գոհունակությամբ ենք արձանագրում, որ եկեղեցական-ներկայացուցչական նախորդ՝ 2014 թվականի ժողովում մենք միասնաբար հաստատեցինք այս ժողովի կանոնադրությունը, որում սահմանված են նրա իրավասության շրջանակը, կազմը եւ կարեւոր մյուս հարցերը: Կանոնադրությունը գործադրության մեջ, բնականաբար, կարող է ենթարկվել ընթացիկ փոփոխությունների՝ թեմերից արդեն իսկ ստացվող առաջարկները նկատի առնելով: Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կանոնադրության ընդունումը էական քայլ է մեր Եկեղեցու ամբողջական կանոնադրությունը ստեղծելու եւ կյանքի կոչելու ճանապարհին: Այս ուղղությամբ կարեւոր ձեռքբե-

[1] «Էջմիածին», 2017, Զ, էջ 5:

րում է նաեւ թեմական կանոնադրության ուղենչային փաստաթղթի կազմումը, որը հանձնարարված է կիրառության 2009 թվականին գումարված եկեղեցական-ներկայացուցչական ժողովի կողմից:

Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի նախորդ գումարումներին Մենք քանիցս անդրադարձել ենք այն դանդաղաշարժությանը, որը դրսեւորվում է թեմական ուղենչային կանոնադրության ներդրման գործընթացում: Որոշ թեմերում զանազան պատրվակներով տակավին ձգձգվում է ուղենիչի սկզբունքներով կանոնադրությունների բարեփոխումը: Երբեմն չրջանառվում է այն անհիմն մտածումը՝ իբր Մայր Աթոռը հեռահար նպատակ է հետապնդում թեմերի ունեցվածքի առնչությամբ: Մերժելի է նաեւ երեւույթը, երբ թեմի Թեմական-պատգամավորական ժողովը իրեն իրավունք է վերապահում մերժել Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի որոշումները: Թեմերը իրենց պատվիրակների միջոցով մասնակցելով ժողովներին, ապա ներկայացնելով իրենց առաջարկներն ու տեսակետները, պարտավոր են անվերապահորեն ընդունել եւ կիրառել ղեկավարման ավելի բարձր ատյանի որոշումները: Թեմերի պատասխանատու եկեղեցական մարմիններն այլեւս վերջնական հանգրվանի պիտի հասցնեն ուղենիչին համաձայն թեմական եւ ծխական կանոնադրությունների կազմումը՝ այն գիտակցությամբ, որ հոգեւոր-եկեղեցական կյանքի կանոնակարգման ցանկացած հապաղում կասեցնում է մեր Եկեղեցու առաջընթացը եւ խաթարում մեր ժողովրդի կյանքում Եկեղեցու տերունապատվեր առաքելության առավել արդյունավորումը: Անընդունելի այս երեւույթների առնչությամբ Եկեղեցական-ներկայացուցչական ժողովը պետք է վերաբերմունք արտահայտի եւ համապատասխան քայլերի վերաբերյալ որոշում կայացնի:

Այսօր Ձեր քննարկմանը պիտի ներկայացվի Ազգային-եկեղեցական ժողովի բարեփոխյալ կանոնադրության նախագիծը: Սույն կանոնադրության որդեգրումով Հայ Եկեղեցու բարձրագույն ատյանի գործունեությունը իր լիազորություններով կարեւոր նշանակություն է ունենալու եկեղեցական եւ համազգային հիմնախնդիրների լուծման եւ մեր ժողովրդի բարօր ապագան կերտելու օրհնյալ գործում: Կամոքն Աստծո առաջիկային պիտի ձեռնամուխ լինենք Եկեղեցու կանոնադրության մյուս գլուխների մշակման աշխատանքներին: Մենք վստահ ենք, որ Տիրոջ կամոք կարող պիտի լինենք կարգավորել կանոնադրական դաշտում մեր Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերները՝ վերջնական նպատակ ունենալով մեր Եկեղեցին օժտել ամբող-

ջական կանոնադրությամբ: Եկեղեցական մեր կյանքի հաստատումը կանոնադրական հիմքերի վրա արդյունավորություն է հաղորդելու մեր Եկեղեցու գործունեությանը, քաջալերելու է մեր ժողովրդի ներգրավվածությունը եկեղեցական կյանքում, ավելացնելու է վստահությունը եկեղեցական կառույցների նկատմամբ եւ ամրապնդելու է լավատեսությունը մեր վաղվա օրվա հանդեպ:

Կանոնադրություննները, որոնցով պիտի կարգավորվի եկեղեցական մեր կյանքը, ի մասնավորի՝ մեր Եկեղեցու վարչա-կառավարման ոլորտը, խարսխվում են Ավետարանական պատվիրանների, սուրբ Հայրերի հաստատած կանոնների, եկեղեցական մեր դարավոր ավանդույթի վրա՝ թելադրելով արդի պահանջներին համարժեք գործունեություն եւ ընթացքներ:

Եկեղեցական կյանքում կառավարման արդյունավետությունը բարձրացնելու համար Մեր կողմից նախաձեռնվել է նաեւ խորհրդատվական աջակցության ծրագիր: Այն քանիցս քննարկվել է Գերագույն հոգեւոր խորհրդում եւ հավանության արժանացել: Ներկայումս ծրագրի ուղղությամբ աշխատում են հոգեւորական եւ աշխարհական 20 անձեր ինչպես Հայաստանից, այնպես եւ Սփյուռքից, ովքեր ձեռնամուխ են բանաձեւելու առաջադրանքը եւ այն հարցերը, որոնցով պիտի կատարվեն խորհրդատվության համար անհրաժեշտ ուսումնասիրությունները: Ծրագրի աշխատանքները համակարգվում է մեր անվանի ու բազմափորձ հայորդիներից ամերիկաբնակ տիար Ասո Դավիդյանի կողմից:

Մեր Եկեղեցու առջեւ ծառացած մարտահրավերների հաղթահարումը անկարելի է պատկերացնել առանց եկեղեցական կառույցների սերտ ու ամուր գործակցության: Այս առումով մեծապես կարեւոր է նվիրապետական աթոռների, թեմերի եւ եկեղեցական մյուս կառույցների սերտ ու ջերմ հարաբերությունների խորացումը: Գոհունակությամբ ենք արձանագրում, որ բարվոք են Մայր Աթոռի հարաբերությունները նվիրապետական աթոռների հետ: Տեւական ժամանակ չարունակում են գործել միասնական հանձնախմբերը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության հետ: Եղբայրական այս հարաբերությունների՝ հնարավոր եղավ դումարել Եպիսկոպոսաց միասնական ժողովները, որոնց արդյունքում կատարեցինք նաեւ Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասումը: Ուրախ ենք, որ տարեցտարի մեր Եկեղեցու թեմերից ավելանում են Սուրբ Երկիր ուխտագնացությունները հավատավոր Մեր զավակների, որով զորակցություն է բերվում

Երուսաղեմի Հայոց պատրիարքութեանը: Ընթացիկ տարում բարի ավարտ ունեցավ Տիրոջ Սուրբ գերեզմանի նորոգութեան օրհնյալ աշխատանքը, որին, ընդառաջ Երուսաղեմի Հայոց պատրիարքի դիմումի՝ կարեւոր մասնակցութիւն բերեց նաեւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը աշխարհասփյուռ իր թեմերով:

Վերջին ամիսների ընթացքում ամենքս մտահոգութիւն ունեցանք կապված Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքութեան կյանքում տեղ գտած անցանկալի զարգացումների հետ: Փառք Տիրոջ, որ, ընդառաջ Մեր հորդորի եւ հավատավոր մեր ժողովրդի սպասումների, Պատրիարքութեան հոգեւոր հայրերի եւ ազգայինների համատեղ ջանքերով հնարավոր եղավ վերականգնել բնականոն վիճակը Պատրիարքութեան կյանքում եւ պատրիարքական ընտրյալ տեղապահը կարողացավ ստանձնել իր պարտականութիւնները: Մենք վերստին Մեր գորակցութիւնն ենք բերում Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքական տեղապահ գերաշնորհ Գարեգին արքեպիսկոպոս Բեկէյանին եւ հորդորում աննվազ նախանձախնդրութեամբ իրականացնել Պատրիարքութեան ընթացիկ աշխատանքերը եւ մեր Եկեղեցու կարգաց ու կանոնաց համաձայն կազմակերպել Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքի ընտրութիւնը:

Սիրելի՛ հոգեւոր հայրեր, մեծահա՛րգ աշխարհական պատգամավորներ, Քրիստոսավանդ սպասավորութեան հետ Մեր Եկեղեցու առաքելութիւնն է ազգային ինքնութեան պահպանումը: Այս ծիրից ներս մեր Եկեղեցու առանձնակի խնամքը պիտի շարունակվի նոր սերնդի կրթութեան գործում, որպեսզի Սահակ-Մեսրոպյան դպրոցը հավատքի, մայրենի լեզվի եւ հայրենյաց ավանդներով հար ապրի մեր ժողովրդի կյանքում: Եկեղեցական մեր կառույցների, եկեղեցականների ու աշխարհականների ողջ ներուժը հարկ է կենտրոնացնել՝ համախմբելու համար մեր ժողովրդի բոլոր զավակներին քրիստոնեական սիրո, եղբայրութեան եւ ազգային արժեքներով հարազատութեան մթնոլորտի մեջ, որ մեր Սուրբ Եկեղեցու օրհնութեան ներքո միշտ պայծառանա եւ հարատեւի մեր ժողովրդի կյանքը: Ինչպես սաղմոսերգուն է ասում. «Երանի այն ազգին, որի օգնականը Տեր Աստվածն է, երանի այն ժողովրդին, որին Իր համար Նա ժառանգութիւն ընտրեց» (Սաղմ. ԼԲ 12):

Եկեղեցու առաքելութեան արդյունավետութեան առանցքային գործոններից մեկը եկեղեցականի անձն է: Պատրաստված, հավատավոր ու նախանձախնդիր եկեղեցականները միայն կարող են, Պողոս

առաքյալի խոսքով, որպես հայելի իրենց մեջ արտացոլել Քրիստոսի պատկերը, սեր, հավատ սերմանել հայ օջախներում եւ լավատեսություն՝ հայ կյանքից ներս: Եկեղեցականների պատրաստության առաքելությանն են ծառայում Մայր Աթոռի հոգեւոր-կրթական հաստատությունները, որոնցում այսօր կրթվում են շուրջ 250 սաներ: Յուրաքանչյուր տարի ձեռնադրվում եւ ծառայության են կոչվում շուրջ 30 եկեղեցականներ: Հոգեւորականներ են պատրաստվում նաեւ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության դպրեվանքում, Երուսաղեմի ժառանգավորաց վարժարանում եւ ընծայարանում, ԱՄՆ Արեւելյան Հայոց թեմի «Սուրբ Ներսես» ընծայարանում: Այսօր Մայր Աթոռում եւ թեմերում ծառայում են շուրջ 800 եկեղեցականներ: Հոգեւորականները ներկա են դպրոցներում եւ բուհերում, Զինված ուժերում, խնամատար հաստատություններում, հիվանդանոցներում: Հոգեւոր խնամք է տարվում քրեակատարողական հիմնարկներում գտնվող անձանց եւ նրանց ընտանիքների հանդեպ: Մայր Աթոռը իրականացնում է սոցիալական ծրագրեր բարեգործական ճաշարանների, Գարեգին Երկրորդ տնաշինական ծրագրի, ծնողազուրկ երեխաների հովանավորության եւ այլ նախաձեռնությունների միջոցով: Մայր Աթոռի Սոցիալական գրասենյակի կողմից աջակցություն է ցուցաբերվում ազգաբնակչության առավել կարիքավոր, խոցելի խմբերին, որոնց միայն անցած տարվա ընթացքում տրամադրվել է ընդհանուր 820 մլն. դրամի աջակցություն: Մայր Աթոռը մեծ ուշադրություն է դարձնում նաեւ Սիրիայից տեղահան եղած մեր զավակներին, ովքեր հաստատվել են Հայաստանում:

Մեր Եկեղեցու գործունեության ընդլայնումը եւ արդյունավորումը հնարավոր է դառնում մեր անկախ պետականության պայմաններում եւ պետական կառույցների ըստ ամենայնի զորակցությամբ, որի համար պատեհ ենք համարում, հանուն Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի մասնակիցներիդ, Մեր գոհունակությունն ու երախտագիտությունը հայտնել հայրենի իշխանություններին:

Հայաստանի Հանրապետությունը՝ անկախ պետականությամբ, ամուր խարիսխ է ողջ հայության համար: Ամենքիս սրբազան պարտքն է՝ պաշտպանել Հայաստան եւ Արցախ հայրենի մեր երկիրը, բազմադարյա ու նվիրական մեր սրբությունները, ամեն ջանք ու եռանդ ծառայեցնել հայրենի մեր պետականության ամրացմանը եւ զորացմանը, մեր երկրի առջեւ ծառացած տնտեսական, սոցիալական, ժողովրդագրական եւ այլ բազում խնդիրների դիմագրավմանը: Մեր նվիրական

պարտավորությունն է աջակցության ցուցաբերումը Հայոց բանակին, խաղաղության ապահովմանը մեր սահմաններում, ջանքերի մեկտեղումը հանուն Արցախի Հանրապետության զորացման ու միջազգային ճանաչման եւ մեր արդար դատի հաղթանակի:

2018 թվականին մեր ժողովուրդը նշելու է Սարդարապատի հերոսամարտի եւ Հայաստանի առաջին հանրապետության ստեղծման 100-րդ տարեդարձը, որն առիթ պիտի դարձնենք արժեւորելու մեր անկախ պետականությունը, նորոգելու մեր սերն ու պատասխանատվությունը մեր հայրենիքի հանդեպ:

Սիրելի՛ ժողովականներ, վերստին մեր ուրախությունն ենք հայտնում Եկեղեցական-ներկայացուցչական ժողովի գումարման առիթով: Նոր ժամանակների բարենպաստ պայմաններում չնորհ եւ պատիվ է ամենքիս համար մեր Սուրբ Եկեղեցու կանոնադրության մշակման աշխատանքների իրականացումը, որը նոր հորիզոններ է բացելու մեր Եկեղեցու առաքելության օրհնյալ ճանապարհին:

Գոհունակ սրտով գնահատանքի Մեր խոսքն ենք ուղղում Մեր Եկեղեցու ուխտապահ ողջ հոգեւոր դասին, թեմական եւ համայնքային վարչական անդամներին, բարերար ու բարեգործ մեր զավակներին, ձեզ բոլորիդ, սիրելի՛ ժողովականներ, որ, ընդառաջ Մեր հորդորներին, մշտապես պատրաստակամությամբ աջակցություն ու օժանդակություն եք ցուցաբերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին, մեր ժողովրդի կարիքներին Հայաստանում, Արցախում եւ Սփյուռքում:

Մեր աղոթքն է առ Բարձրյալ Տերը, որ բարի արդյունավորման առաջնորդենք այս ժողովը՝ ի նպաստ քրիստոսասեր մեր ժողովրդի հոգեւոր եւ ազգային կյանքի չինության: Հայցում ենք, որ Աստված զորակից լինի մեզ եւ Սուրբ Հոգով առաջնորդի մեր քայլերն ու ծառայությունները՝ հանուն մեր Սուրբ Եկեղեցու հավետ պայծառության եւ ազգային-եկեղեցական կյանքի առաջընթացի: Թող Տերն Իր Սուրբ Աջի հովանին տարածյալ պահի մեր Հայրենիքի եւ աշխարհասփյուռ ազգիս վրա այժմ եւ հավիտյանս. ամեն:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ ՆՈՐ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(12 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2017 Թ., ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ)[1]

Գերաչնո՛րհ, հոգեչնորհ, արժանապատիվ հայրեր,

Հարգարժա՛ն դասախոսներ, սիրելի՛ սաներ եւ ներկաներ:

Մեր ողջույն ու օրհնությունն ենք բերում ձեզ ամենքիդ, որ համախմբված եք այս հանդիսությանը:

Ուրախություն է մեր սրտերում Գեւորգյան հոգեւոր ճեմարանի 2017-2018 ուսումնական տարվա բացման առիթով: Այս իրադարձությունն ամեն անգամ նոր հույսեր ու տեսլականներ է ձեւավորում, որոնք աղոթքով ու գործով պիտի իրականություն դառնան եւ արդյունքներ պարգեւեն մեր ազգին ու Սուրբ Եկեղեցուն: Ճեմարանի տեսչական եւ դասախոսական կազմը, նրանց փորձառությունն ու նվիրումը, ինչպես նաեւ մեր այս կրթական հաստատության արդեն պետականորեն ճանաչված բարձր կարգավիճակն ու ներառված առարկաների խորը ուսուցումը վստահություն են ներշնչում հոգեւորականների պատրաստության առաքելության արդյունավետ իրականացման:

Մեր Եկեղեցին մեծապես կարեւորել է եւ մեր ժողովուրդը մեծարել ազգային կյանքում հավատքով զորեղ, գիտելիքներով զինված, սիրո ու անձնվիրումի ոգով գործող հոգեւորականի սպասավորությունը, ինչպես պատմիչ Փավստոս Բուզանդն է տալիս բնութագիրը նվիրյալ հոգեւորականի. «Սուրբ եւ պայծառ հոգւով իբրեւ զքաջ սպառազէն Քրիստոսի»: Տիրոջ այդպիսի սպասավորն է դառնում մեր մեծագույն սրբերի ոգու կրողը, հավատացյալին դեպի փրկություն ու հավիտենական կյանք առաջնորդողը, Սուրբ Հոգու շնորհները բաշխողը: Քրիստոսի հավատարիմ սպասավորը չի բնորոշվում սոսկ իր կրած սքեմով, այլ ինքն է արժեւորում իր կոչումն ու համազգեստը, արգա-

[1] «Էջմիածին», 2017, Թ, էջ 12:


սավորում իր ստանձնած առաքելությունը, ի սեր Աստծո եւ ժողովրդի հաղթահարում փորձություններ, համբերությամբ ու ըմբռնումով տանում նաեւ զրկանքներ, Տիրոջ սերն ու խաղաղությունը սփռում իր հավատավոր հոտի, իր ժողովրդի կյանքում:

Այսպիսի ընկալումով մեր հարգարժան դասախոսները, տեսչության գլխավորությամբ, պիտի իրականացնեն հոգեւորական կրթելու եւ դաստիարակելու առաքելությունը: Այս գիտակցությամբ նաեւ Մեր սիրելի սանները պիտի չարունակեն իրենց ընթացքը ճեմարանի օրհնյալ հարկից ներս՝ Սուրբ Եկեղեցու արժանավոր մշակ դառնալու՝ օրինակ ունենալով մեր լուսավորիչներին, թարգմանիչ վարդապետներին, Նարեկացուն, Շնորհալուն, Կոմիտասին եւ այլոց, որոնց փառքն ու գործը չողարձակել են մեր պատմության դարավոր ընթացքում եւ մշտալույս են մեր կյանքում: Ճեմարանի մեր սանները նաեւ օրինակ պիտի ունենան այն պարզհոգի եւ իմաստուն հովվին, որ գիտե հավատք կերտել, աստվածսիրության, ազգանվիրումի ու հայրենասիրության ոգին մշտարթուն պահել, որով զորացած հավատավոր հայորդիք ստանձնում են ամեն հանձնառություն ի սեր ազգի ու հայրենյաց, հանձնառություն անգամ նահատակությամբ մեր սրբությունները, հավատքն ու հայրենիքը պաշտպանելու:

Մեր հորդորն ու մաղթանքն է, որ, այսպիսի ընկալումով առաջնորդվելով, ճեմարանի հարկից ներս տրվող գիտելիքները, փորձառությունը հիմնված լինեն աղոթքի, հոգեւոր ապրումների, մշտավառ հավատքի վրա՝ որպես ամուր վեմի, այլապես, մեր Տեր Հիսուս Քրիստոսի պատմած առակի նմանությամբ, հողմերը կկործանեն ավազի վրա չինվածն ու հաստատվածը (Համմտ. Մատթ. Է 24-27):

Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում տեսչությանը եւ դասախոսներին իրենց գովելի ծառայությունների, հանձնառությունների եւ աշխատանքի համար: Մեր գնահատանքը նաեւ սիրելի սաներին ուսումնառության մեջ հաջողությունների, Սուրբ Եկեղեցուն սպասավորելու ճգտումի համար:

Աղոթում ենք առ Տերն ամենակալ, որ Աստծո Աջը հովանի լինի ամենքիդ եւ առաջնորդի ուսումնական կյանքի ճանապարհով՝ ապահովելով բարի արդյունքներ «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն եւ ընդ միոյ հարեւր»:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՈՐ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ 300-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻՆ

(15-16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2017 Թ., ՄՈՍԿՎԱ)[1]

Գերաչնո՛րհ Սրբազան, առաջնորդ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի,

Հոգեշնո՛րհ եւ արժանապատիւ հայրեր,

Գիտաժողովի մեծարգո՛ մասնակիցներ:

Հայրապետական Մեր ողջույնը եւ հայոց հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի օրհնությունն ենք բերում Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի ստեղծման 300-ամյակին նվիրված գիտաժողովի կազմակերպիչներին ու մասնակիցներիդ:

Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ մեր ժողովրդի կյանքում անգնահատելի դերակատարություն ունեցած Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի պատմական թեմը բոլորել է իր հոբելյանական 3-րդ հարյուրամյակը: Ստեղծվելով մեր Եկեղեցու եւ ժողովրդի համար պատմականորեն ու քաղաքականապես բարդ ու դժվարին պայմաններում, տիրախնամ թեմը հարաճուն մասնակցություն է ունեցել Հայ Եկեղեցու առաքելությանը՝ հոգեւոր խնամքի ներքո համախմբելով ու պահպանելով ռուսաստանաբնակ մեր ժողովրդին: Թեմի գործունեությունը բազմարդյուն է եղել մեր ազգային-եկեղեցական, գիտական, գրական ու մշակութային կյանքում: Մեր ժողովրդի հավատավոր եւ ազգասեր զավակների ջանքերով այստեղ կառուցվել են հայկական եկեղեցիներ, ստեղծվել մեր ազգային դպրության ու լուսավորության, գիտության ու մշակույթի նշանավոր կենտրոններ ու հաստատություններ, որոնք վառ են պահել հավատքը մեր ժողովրդի, սերն առ հայրենին ու ազգս հայոց եւ տեսլականը հայրենի պետականության վերակերտման՝ աջակցության


[1] «Էջմիածին», 2017, Թ, էջ 14:

հույսեր կապելով նաեւ Ռուսաց բարեպաշտ պետության հետ: Ռուսիո օրհնյալ տերության հովանու ներքո ապրող մեր ժողովրդի զավակները, հասնելով մեծ հաջողությունների, նաեւ իրենց բարի ավանդն են բերել երկրի պետական, հասարակական ու տնտեսական կյանքին, ռազմական փառքին, գիտության ու մշակույթի զարգացմանն ու առաջընթացին՝ զորացնելով եղբայրական սերը հավատակից հայ եւ ռուս ժողովուրդների:

Երեքհարյուրամյա պատկառելի պատմության հետագծին նայելով՝ այսօր էլ ուրախությամբ ենք արձանագրում Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի եկեղեցաշեն ու ազգանպաստ առաքելության զարգացումը: Զորավոր հիմքի վրա դրված ավանդությանը նոր չունչ հաղորդելով՝ նվիրյալ հոգեւոր սպասավորներն ու բարեպաշտ հայորդիները, գլխավորությամբ բարեխնամ առաջնորդ Տ. Եղրաս արքեպիսկոպոս Ներսիսյանի, չարունակում են արդյունավորել Ռուսիո օրհնյալ երկրում մեր Սուրբ Եկեղեցու առաքելությունը: Նորանոր ձեռքբերումներով ու հաջողություններով է պսակվում մեր ժողովրդին հավատքի ու փրկության ճանապարհով առաջնորդելու, Մայր Եկեղեցու շուրջ համախմբված մեր հավատացելոց հոգեւոր եւ հայեցի դաստիարակությունն ու կրթությունը կենսունակ պահելու սպասավորությունը: Այդ սրբազան առաքելության վերարժեւորման մի կարեւոր փաստ է նաեւ հոբելյանական այս գիտաժողովը, որը լավագույն առիթ է ամենքիս համար՝ նոր ժամանակների հրամայականներին ընդառաջ վերանայելու եւ վերարծարծելու թեմում Հայոց Եկեղեցու գործունեության անցյալի ձեռքբերումները եւ ապագայի տեսլականները:

Սիրելինե՛ր, վերստին Մեր օրհնությունն ենք բերում ձեզ եւ այս համագումարի կազմակերպիչներին՝ մաղթելով երկնապարգեւ հաջողություններ նվիրական ծառայության մեջ:

Աղոթում ենք առ Տերն Ամենակալ Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի առաքելության մշտանորոգ արդյունավորման, հայ եւ ռուս եղբայր ժողովուրդների բարեկամության ամրապնդման, Հայաստանի Հանրապետության եւ Ռուսաստանի Դաշնության փոխհարաբերությունների ու գործակցության արգասավորման, այլեւ մեր հայրենիքի խաղաղության, Ռուսիո հայ համայնքի եւ աշխարհասփյուռ հայության առաջընթացի ու լուսավոր ապագայի համար: Թող Աստված ամենախնամ Իր Սուրբ Աչով օրհնի ազգիս զավակների եկեղեցանվեր, հայրենաշեն ու ազգանպաստ բոլոր բարի ջանքերն ու գործերը. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ՎԱՐՊԵՏԱՑ ԴՊՐՈՑ» ՀԱՅՈՐԴՅԱՑ ՏԱՆ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(24 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2017 Թ., ԵՐԵՎԱՆ)[1]

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,
Գերաշնո՛րհ, հոգեշնորհ եւ արժանապատիվ հայրեր,
Մեծարգո՛ բարերարներ ու ներկաներ:

Գոհունությունն ենք բարձրացնում առ Աստված, որ այսօր ականատեսն ենք եւս մի նոր հայրենաշեն ձեռնարկի իրագործման: Մեր ուրախությանն այս պահին խառնվում են նաեւ հաճելի հիշողություններ դեռեւս Մեր՝ Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդության ժամանակաշրջանից, երբ ձեռք բերեցինք առաջնորդարանի մերձակայքում գտնվող այս շենքը՝ ծրագրելով վերակառուցել այն՝ իբրեւ մի նոր Հայորդյաց տուն: Փառք երկնավորին, որ շուրջ 20 տարի անց Մեր ծրագիրն այլեւս իրականություն է դարձել «Երեւան իմ սեր» ծրագրի նախագահ տիար Արմեն Սարգսյանի ջանքերի շնորհիվ: Այսուհետ այս գեղեցիկ ու հարմարավետ հաստատության հարկի ներքո նվիրյալ մանկավարժների առաջնորդությամբ գիտելիքներ եւ հմտություններ պիտի ձեռք բերեն ու կրթվեն հազարավոր մանուկներ եւ պատանիներ:

Հիմնադրման օրվանից Հայաստանյայց Եկեղեցու առաքելության կարեւորագույն մասը կազմել են լուսավորության կրթական նվիրական գործն ու մանկանց դաստիարակությունը՝ հավատարիմ տերունական պատգամին. «Ով մանուկներին ընդունում է իմ անունով, ինձ է ընդունում» (Մարկ. Թ 36): Հայ Եկեղեցին առանձնակի ջանքեր է գործադրել մատաղ սերնդին լավագույն կրթություն ապահովելու համար: Քրիստոնեական դաստիարակությունն ու հայեցի կրթությունը, որը խնամեց մեր Եկեղեցին, այուներն են մեր ժողովրդի հարատեւութ-


[1] «Էջմիածին», 2017, Թ, էջ 19:

յան ու առաջընթացի: Այս տեսլականով են ազգային-եկեղեցական մեր կյանքում ստեղծվել հայ մանկավարժության ու դաստիարակության պսակը հանդիսացող դպրոցներն ու վարժարանները, որտեղ մեր զավակունք հաղորդ են դարձել մեր հոգեւոր-ազգային անանց արժեքներին ու հայոց պատմության փառավոր էջերին: Նոր սերնդի կրթության ու դաստիարակության աստվածահաճո այս առաքելությանն իր մասնակցությունը բերելու ազնիվ զգացումով է, որ դեռեւս երկու տարի առաջ մեր եկեղեցու նվիրյալ զավակ ու բարերար, Մեծ Բրիտանիայում ՀՀ դեսպան տիար Արմեն Սարգսյանն առաջարկ ներկայացրեց «Երեւան իմ սեր» ծրագրի շրջանակներում վերակառուցելու եւ ավարտին հասցնելու այս չինությունը՝ որպես ֆիզիկական սահմանափակ կարողություններ ունեցող երեխաների համար նախատեսված սոցիալ-մշակութային կենտրոն: Նույն ազնիվ մղումով նա, իր խակ կողմից կառուցած Մայր Աթոռի Ս. Վարդան-Ս. Հովհաննես Մկրտիչ մկրտարանի հարեւանությամբ, բարեկարգում է Սուրբ Էջմիածնի այգին՝ այնտեղ ստեղծելով երեխաների համար եւս մի կրթական-մշակութային կենտրոն: Մեկ այլ կրթական կենտրոնի կառուցում տիար Սարգսյանը ծրագրում է Երեւանի Կոնդի Ս. Հովհաննես եկեղեցու հարակից տարածքում: Կրթական այս հաստատության բացման առիթով Մեր բարձր գնահատանքն ենք բերում Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի նվիրյալ բարերարներ տեր եւ տիկին Արմեն եւ Նունե Սարգսյաններին, ինչպես նաեւ կարեւոր այս կրթօջախի հիմնական բարերարներ, Հայ Եկեղեցու բարեգործ զավակներ տեր եւ տիկին Հայկ եւ Էլզա Տիտիզյաններին: Ազնիվ ու հավատավոր Տիտիզյան ամոլի կենսագրության մեջ սա առաջին ազգօգուտ եւ հայրենանպաստ նախաձեռնությունը չէ: Նրանց ազնիվ հանձնառությամբ կրթական հաստատություններ եւ կենտրոններ են կառուցվել Ամերիկայի Հայոց Արեւելյան ու Արեւմտահայոց թեմերում եւ «Գարեգին Ա» կրթական կենտրոնը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Ի գնահատումն Տիտիզյան ընտանիքի՝ այս ծրագիրը կյանքի կոչելու գործում կարեւոր ներդրման՝ նորակառույց «Վարպետաց դպրոց» հայորդյաց տունը այսուհետ կրելու է Հայկ եւ Էլզա Տիտիզյան ամոլի անունը: Թող Տիրոջ առատ սերն ու չնորհները հեղվեն մեր սիրելի բարերարների ընտանեկան հարկերից ներս:

Բերկրալի այս առիթով հայրապետական Մեր սերն ու ողջույնն ենք բերում բացման արարողության բոլոր մասնակիցներին: Առանձնակի ուրախությամբ ողջունում ենք ներկայությունը ՀՀ նախագահ տիար Սերժ Սարգսյանի եւ Մեր չնորհակալությունը հայտնում հայրե-

նի իշխանութիւնների կողմից Հայ Եկեղեցու առաքելութեանը ցուցաբերվող մշտական զորակցութեան համար: Հայրապետական գնահատանքի Մեր խոսքն ենք հղում նաեւ բացման արարողութեանը մասնակից բարերար հայորդիներին եւ կենտրոնի բացմանն իրենց ներդրումն ունեցած բոլոր անհատներին եւ կազմակերպութիւններին:

Չկա ավելի երախտալից ու չնորհակալ գործ, քան մեր ապագայի հուսալի տեսլականի իրագործումը՝ ի դեմս մեր մատաղ սերնդի արժանավայել կրթութեան: Հայրենաչինութեան, ազգային ոգու մշտանորոգման եւ պահպանման լավագույն գրավականն են կրթական կենտրոններն ու դպրոցները: Արդ, մնանք հավատարիմ լուսավորութեան եւ մանկանց կրթութեան հուսալի առաքելութեանը, որը դարեր շարունակ առաջնորդել է քրիստոսասեր մեր ժողովրդին: Աղոթքով առ Աստված հայցում ենք, որ Տերն Իր չնորհներն առատացնի մեր զավակների կյանքից ներս եւ լուսավոր ու պայծառ պահի հայրենի մեր կրթօջախները: Թող Աստված Իր օրհնութեան ներքո խաղաղ պահի մեր հայրենիքն ու աշխարհասփյուռ ժողովրդին, այսօր եւ հավիտյանս. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ «ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԸ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(20 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2017 Թ.)[1]

«Սրանք նրանք են, որ գալիս են մեծ նեղութիւններից եւ իրենց զգեստները լուացին ու սպիտակեցրին Գառան արիւնով: Այդ պատճառով են նրանք կանգնած Աստծու աթոռի առաջ եւ օր ու գիշեր պաշտում են նրան իր տաճարի մէջ: Եւ նա, որ նստում է աթոռի վրայ, բնակւում է նրանց մէջ» (Յայտ. Ե 15-17):

Հոգեւո՛ր եղբայրներ ի Քրիստոս,

Գերաչնո՛րհ եւ հոգեշնորհ հայրեր,

Դիվանագիտական առաքելութեանց մեծարգո՛ ներկայացուցիչներ ու աշխատակիցներ,

Սիրելի՛ ներկաներ:

Եվրոպայում Ռեֆորմացիայի 500-ամյա հոբելյանի հիշատակութեան շրջագծում հրավիրված եւ Մերձավոր Արեւելքի քրիստոնեական Եկեղեցիների անցյալին ու ներկային նվիրված այս կարեւոր համաժողովը լավագույն առիթ է ամենքիս համար՝ եւս մեկ անգամ անդրադառնալու արդեն մի քանի տարի շարունակվող այն խնդրին, որն այսօր միջազգային հանրութեան գիտակցութեան մեջ կարծես ամրագրվում է իբրեւ «Մերձավոր Արեւելքի քրիստոնյաների վիճակ»: Այս առումով Մեր խոսքում կկամենայինք ընդգծել երկու կարեւոր իրողութեուն, որոնք Մերձավոր Արեւելքի քրիստոնյա համայնքների համար դարձել են այլեւս առօրյա փորձառութեուն՝ նահատակութեուն եւ բռնագաղթ: Հասկացութեուններ, որոնք վտանգում են քրիստոնեութեան ծագման սկզբից իսկ բնօրրան դարձած աշխարհագրական այդ տարածքում քրիստոնեական եկեղեցիների ու համայնքների գոյութեունը եւ պատմամշակութային արժեքների պահպանութեունը:

[1] «Էջմիածին», 2017, Ժ, էջ 12:

Հայտնության գրքից մեջբերված խոսքերը, ըստ էության, մեր առջեւ բացում են հալածանքների ու նահատակության վաղքրիստոնեական վկայությունը, որով այսօր էլ շարունակում են ապրել Մերձավոր Արեւելքի հարյուր հազարավոր քրիստոնյա քույրեր եւ եղբայրներ, ովքեր իրենց կյանքն են ընծայել հայրենի երկրների առաջընթացի ու զարգացման համար:

Մերձավոր Արեւելքն ընդհանրապես քաղաքական-աշխարհագրական այն սրբազան տարածքն է, որտեղ մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանի սերմերն առավել չափով արդյունք ապահովեցին, վկան՝ աստվածաբանական, մշակութային, վանական, հասարակական այն բոլոր առաջընթացներն ու ձեռքբերումներն են, որ դարերի ընթացքում ունեցան այստեղ ապրող քրիստոնյաները՝ անկախ իրենց հարանվանական տարբերություններից ու վեճերից: Օտար տիրապետության, ի մասնավորի Օսմանյան կայսրության իշխանության տակ գտնվելով՝ Մերձավոր Արեւելքի քրիստոնյաները հավատի իրենց տերունավանդ ճանապարհն անցան Գողգոթայի խաչի ու նահատակության հերոսական վկայությամբ: Բայց այս իրողությունը մերձավորարեւելյան քրիստոնյաներին չմղեց ինքնակղզիացման ու հուսահատության, այլ, ընդհակառակը, Սուրբ Հոգու ներշնչումով եւ ուժով նրանք հոգեւոր իրենց կյանքի ու մշակույթի անբաժանելի մաս դարձրին վերականգնումի եւ վերակենդանության, նորոգության ու հարության գաղափարները:

Իբրեւ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու հովվապետ՝ Մենք Մերձավոր Արեւելքի քրիստոնյա մեր եղբայրներին ու քույրերին աղոթակից ու ցավակից ենք ըստ այն դառը փորձառության, որ առօրյայում ճաշակում են նաեւ Հայ Եկեղեցու զավակները՝ Ի դարասկզբին Օսմանյան կայսրության մեջ առաջին ցեղասպանությանը զոհ դարձած նահատակների սերունդները, որոնց մեծ մասն ապաստան էր գտել Մերձավոր Արեւելքի արաբական հյուրընկալ երկրներում: Նրանք այսօր եւս կանգնած են նոր ցեղասպանության ու բռնագաղթի չեմին:

Գերմանիայում գտնվելով միջազգային համաժողովի այս առիթով՝ Մեր երախտագիտության խոսքն ենք ուղղում Գերմանիայի իշխանություններին եւ ժողովրդին՝ Բունդեսթագում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու համար՝ նման բռնություններ կանխելու նպատակով:

Մեր քույր՝ Ասորի Ուղղափառ, Ղպտի Ուղղափառ եւ Եթովպական Թեւահեդո Եկեղեցիների նվիրյալ սպասավորների ու հավատացյալների կրած նեղությունների, բռնի արտագաղթի ամենօրյա փորձա-

ռութիւնը, տասնյակ եւ հաճախ հարյուրավոր սուրբ նահատակների վկայութիւնն ապացույցն են այն անհանդուրժողութեան ու կրոնի սրբազան արժէքների եղծման, որոնք այսօր առկա է Մերձավոր Արեւելքի մուսուլմանական տարբեր ծայրահեղականների խոսքերում եւ գործերում: Մտահոգութիւնների տեղիք են նաեւ Մերձավոր Արեւելքից քրիստոնյաների բռնի արտագաղթի արդյունքում ծնունդ առնող դժվարութիւնները, մերձավորարեւելյան սփյուռքի աճը տարբեր երկրներում: Այսօր կարեւոր է մեկտեղել մեր ջանքերը՝ պահպանելու համար քրիստոնեական պատմական ներկայութիւնը Մերձավոր Արեւելքում եւ կասեցնելու բռնի արտագաղթը, պաշտպանելու իրավունքները քրիստոնեական փոքրամասնութիւնների ու համայնքների, անհրաժեշտ հոգատարութիւն դրսեւորելու տարբեր երկրներում հետզհետե ստվարացող մերձավորարեւելյան քրիստոնյա փախստականների հանդեպ:

«Մերձավոր Արեւելքի քրիստոնյաները» միջազգային պատկառելի համաժողովի գումարման եւ այսօր այստեղ միասին գտնվելու համար Մեր գնահատանքն ու օրհնութիւն ենք բերում համաժողովի կազմակերպիչներին, բոլոր նրանց, ովքեր եռանդուն կերպով միջազգային ամենատարբեր հարթակներից հնչեցնում են Միջին Արեւելքում քրիստոնյաների վիճակի ու հալածանքների օրեցօր բարդացող խնդիրը: Լիահույս ենք, որ նմանատիպ համաժողովների կազմակերպումը միջազգային հանրութեան առաջ վերստին կպարզի Մերձավորարեւելյան տարածաշրջանում տիրող իրական պատկերը՝ նպաստելով այնտեղ ապրող մեր քույրերի ու եղբայրների անվտանգ եւ բարեկեցիկ կյանքի ապահովմանը:

Մենք աղոթում ենք մեր Եկեղեցու՝ Մերձավոր Արեւելքում ապրող զավակների, Արեւելյան մեր քույր Եկեղեցիների հավատացելոց, հոգեւորականաց ու նվիրապետների համար՝ երկնավոր Տիրոջից հայցելով խաղաղութիւն ու շենութիւն հնագույն եւ պատմական եկեղեցական համայնքներին: Նահատակութիւնը գրեթե հասակակից է Արեւելյան ուղղափառ քրիստոնեութեանը. մեր մաղթանքն է, որ դարավոր այդ պատմական չղթային ավելանան նաեւ արդարութիւնն ու խաղաղութիւնը:

Աղոթքով եւ հայցով բարի ընթացք ենք մաղթում համաժողովի աշխատանքներին:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ՀՈՎՀԱՆ ՕԶՆԵՑԻ ԻՄԱՍՏԱՍԵՐ ԿԱԹՈՂԻԿՈՍԸ ԵՎ ՆՐԱ ԺԱՄԱՆԱԿԸ» ԽՈՐԱԳՐՈՎ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(ԳԵՎՈՐԳՅԱՆ ՀՈԳԵՎՈՐ ճԵՄԱՐԱՆ, 5 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2017 Թ.)[1]

Հոգեւո՛ր հայրեր, գիտաժողովի պատվարժա՛ն մասնակիցներ, սիրելի՛ ներկաներ:

Ողջունում ենք ամենքիդ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Սուրբ Հովհաննես Օձնեցի Հայրապետին նվիրված գիտաժողովի գումարման առիթով, որը կազմակերպված է երանելի Հայրապետի գահակալության 1300-ամյակի կապակցությամբ:

Գիտաժողովը եւս մեկ առիթ է՝ գնահատելու Հովհաննես Օձնեցի սուրբ Հայրապետի վաստակը մեր Եկեղեցու եւ ժողովրդի պատմության մեջ, արժեւորելու նրա հարուստ ժառանգությունը, քրիստոնեական հավատքի անաղարտության պահպանման համար նրա կողմից ներդրված նվիրական ջանքերը եւ իր ժողովրդին անկորուստ պահպանելու խնամքն ու հոգածությունը: Գիտաժողովը նաեւ առիթ է՝ նորոգվելու բազմաչնորհ Հայրապետի եկեղեցանվեր ու հայրենանվեր ոգով:

Մեր ժողովուրդը սրբացրել է Հովհաննես Օձնեցի կաթողիկոսին եւ իր երեւելի հովվապետին մեծարել «Իմաստասեր» անվամբ: Իմացության եւ գիտության հանդեպ սերը, ինչպես նաեւ առաքինությամբ եւ հոգեւոր սխրանքներով լեցուն կյանքը լավագույնս նկարագրում են նրա կերպարը: Նրա անձի մեջ ի մի են եկել քաջիմաց աստվածաբանի, չնորհաշատ քարոզչի ու հռետորի, խոհեմ առաջնորդի ու դիվանագետի հատկանիշները: Նա հիշվում է որպես «երկրորդ Ոսկեբերան»,

[1] «Էջմիածին», 2017, ԺԲ, էջ 6:

Թադեոս ու Բարդուղիմեոս առաքյալների, Գրիգոր Լուսավորչի գործը շարունակող մեծ իմաստասեր եւ նոր առաքյալ:

Երանաչնորհ Հայրապետը մեծ բարեկորոգիչ էր: Մեր Եկեղեցու փառավոր էջերից է նրա ընդամենը տասնամյա գահակալությունը, որի ողջ ընթացքում Հովհաննես Օձնեցին հետեւողական պայքար մղեց Հայաստանում քրիստոնեության անաղարտ պահպանման, մեր Եկեղեցու դավանանքն ու ծեսը տեսականորեն հիմնավորելու եւ այդ ծիրում մեր Եկեղեցու քրիստոսաբանական նկարագիրն ամբողջացնելու համար: Իր ճառերով, ծիսական կանոններով եւ դրանց մեկնաբանությամբ, Կանոնագրքի կազմումով, անգամ անզուգական չարականներով ու հոգեւոր երգերով, որ կրում են նրա աստվածաբանական մտքի դրոշմը եւ հավատքի երկնաթռիչ չունչը, Հովհաննես Օձնեցի Հայրապետը ամենայն իրավամբ համարվում է մեր ուղղափառ հավատքի հիմնասյուներից մեկը:

Հայկական պետականության բացակայության պայմաններում Հովհան Օձնեցին նաեւ խոհուն եւ քաջ առաջնորդ եղավ: Իր իմաստությամբ ու հոգեւոր նկարագրով նա կարողացավ շահել արաբ խալիֆայի վստահությունը եւ մեծ պատերազմներով լի ժամանակում իր ժողովրդին հեռու պահել նոր փորձություններից ու համախմբել մեր Եկեղեցու հովանու ներքո: Մեր ժողովրդի ապահովության, նրա հավատքի անսասանության եւ քրիստոնեական կյանքի ամրության համար մեծ Հայրապետի հոգածությունն ու արդյունավոր ջանքերը առ այսօր հիասքանչ օրինակ են մեզ եւ հետագա սերունդների համար: Արդարեւ, այսօր էլ, երբ օրվա հրամայական է դիմագրավումը զանազան գաղափարախոսություններ, որոնք միտված են մեր Եկեղեցու դավանանքից, ծեսից իր զավակներին հեռացնելուն, ազգային միասնությունը քայքայելուն, Հովհաննես Օձնեցու գործունեությունը վերիմաստավորման եւ վերարժեւորման մի նոր ու կարեւոր խորհուրդ է ստանում:

Մեծագործ Հայրապետի 1300-ամյակը հրավեր է՝ վառ պահելու նրա սուրբ հիշատակը եւ ավելի վառ՝ այն սերը, որով Հայոց հոգելույս Հայրապետը պայծառ է պահել Հայ Եկեղեցու լույսը եւ իր կյանքով ավելացրել պայծառությունը հոգեւոր մեր տան: Սա է նրա մեծագույն պատգամը, հայրական հորդորն ու խրատը մեզ: Եվ չկա ավելի մեծ գնահատական նրա կյանքին ու գործին, քան մեր հավատարմությունը նրա թողած անգնահատելի ժառանգությանը եւ առաքելաշավիղ ընթացքին:

Հայրապետական Մեր գնահատանքն ու օրհնութիւնն ենք բերում գիտաժողովի կազմակերպիչներին՝ Գուգարաց թեմի առաջնորդ գերաչնորհ Տ. Սեպուհ արքեպիսկոպոս Զուլչյանին, Գեւորգյան հոգեւոր ճեմարանի տեսուչ հոգեշնորհ Տ. Գարեգին վարդապետ Համբարձումյանին, «Վաչե եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրեն արժանապատիվ Տ. Արարատ քահանա Պողոսյանին եւ նախանձախնդրութեամբ այս գիտաժողովին համախմբված բոլոր մասնակիցներիդ: Բարձրյալի օրհնութիւնն ենք հայցում ամենքիդ եւ արդյունավոր ընթացք ու հաջողութիւններ մաղթում գիտաժողովի աշխատանքներին:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԽՈՍՔԸ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԻԼԻԿԻՈ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔՈՒՄ ՀՐԱՎԻՐՎԱԾ ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ՝ ՆՎԻՐՎԱԾ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՄԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԴԱՐՁԻՆ

(ԱՆԹԻԼԻԱՍԻ ՄԱՅՐԱՎԱՆՔ, 21 ՄԱՐՏԻ, 2018 Թ.)[1]

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս,

Մեծարգո՛ նախագահ Արցախի Հանրապետության,

Համագումարի հարգարժա՛ն մասնակիցներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից սիրով ողջունում ենք ամենքիդ Մայիսյան հերոսամարտերի եւ Հայաստանի Հանրապետության 100-րդ տարեդարձին նվիրված համաժողովի գումարման առիթով:

Առանձնակի գոհունակությամբ ենք անդրադառնում, որ մեր հոգեւոր եղբոր՝ Արամ Ա Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի նախանձախնդրությամբ այսօր մեկտեղվել եք Անթիլիասի մայրավանքում՝ քննարկելու եւ արժեւորելու հայրենի պետականության վերակերտման պատմական հիշատակները: Մայր հայրենիքում եւ Սփյուռքում այս նշանակալի իրադարձության 100-ամյակին նվիրված բոլոր տոնախմբությունները գալիս են մեզ հիշեցնելու, որ, հակառակ դժվարին պատմական անցյալի, մեր ժողովուրդը երբեք չի դադարել պայքարել ազատության համար, որը մարդկանց տրված աստվածային չնորհ է:

100-ամյակ առաջ մեր անկախ պետականությունը վերահաստատվեց այնպիսի դժվարին մի ժամանակահատվածում, երբ աշխարհը փոթորկած Առաջին աշխարհամարտի պայմաններում Օսմանյան Թուրքիայում իրականացվում էր Հայոց ցեղասպանությունը, իսկ Արեւելյան Հայաստան ներխուժած թուրքական զորքերը սպառնում էին

---

[1] «Էջմիածին», 2018, Գ, էջ 5:

մեր ժողովրդի գոյությանը: Օրհասական պահին ոտքի կանգնեց ժողովուրդը, զինվորական, գյուղացի, հոգեւորական, մահն անտեսելով, մարտի դաշտ էին գնում անդադար հնչող զանգերի ներքո եկեղեցիների եւ իրենց հավատավոր հոգիներում հայրենիքը պաշտպանելու կոչը Գեւորգ Ե Սուրենյանց կաթողիկոսի: Մայիսյան հերոսամարտերը վկայությունը եղան մեր ժողովրդի քաջարի ոգու եւ միասնության, որ, մի կողմ դնելով կուսակցական ու քաղաքական տարաձայնությունները, բռունցքվեց հանուն նոր ծնվելիք Հայաստանի անկախ Հանրապետության: Ազգային պետականությունը իբրեւ մեր ժողովրդի նվիրական ձգտումների իրագործում, օրհնվեց Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Հանրապետության դրոշի եւ բանակի օրհնությամբ, որն աղոթալի խոսքով այսպես է բնորոշել Գեւորգ Ե Հայրապետը. «ի սրտե փափագող իմ սիրեցյալ ազգիս երջանկության եւ իմ պանծալի հայրենիքի եւ պետության բարգավաճման եւ հարատեւության համար... Հայոց Մայր Աթոռի հնադարյան Ս. Էջմիածնի տաճարում անձամբ մատուցեցի Ս. Պատարագ, օրհնեցի եւ սրբագործեցի Անկախ, Միացյալ եւ Մեծ Հայաստանի տոնը...»:

Պետականության վերականգնումը դարձավ մղիչ ու ոգեւորիչ ուժ, վստահություն ներշնչեց մեր ժողովրդին իր գալիքի հանդեպ: Այն եղավ նաեւ վկայություն մեր ժողովրդի նվիրական ու վեհ ձգտումների՝ կառուցելու ժողովրդավարական, իրավական ու ընկերային պետություն, ազատ ու արդար հասարակական կյանք: Այս ավանդները, հայրենիքի հանդեպ սերը առաջնորդեցին մեր ժողովրդին 1991 թվականին հռչակելու ազգային պետականության անկախությունը, սատարելու արցախահայության ազատ ապրելու իրավունքի իրացմանը, պաշտպանելու մեր հայրենիքի սահմանները թշնամյաց ոտնձգություններից:

Մայիսյան հերոսամարտերի եւ Հայաստանի առաջին հանրապետության հռչակման հոբելյաններն այսօր ոգեշնչման առիթ ու հրավեր են աչխարհասփյուռ մեր ժողովրդին՝ միասնական ջանքեր բերելու հայրենի մեր պետականության զորացման, Արցախյան խնդրի խաղաղ ու արդարացի կարգավորման, մեր Արդար Դատի պաշտպանության նվիրական գործին: Ինչպես անցյալում, այնպես եւ այսօր եւ վաղը, բազմաթիվ խնդիրների լուծումը առավել դյուրին պիտի լինի մեր ժողովրդի հնարավորությունների մեկտեղման չնորհիվ: Մեր միասնության առանցքը հայրենի մեր երկիրն ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցին են, որոնց շուրջ համախմբված, մեր զավակների համար պիտի

կառուցենք ապահով, բարօր ու երջանիկ երկիր, պիտի զորացնենք Սփյուռքի համայնքները, հետամուտ լինենք ազգային մեր իղձերի իրականացմանը:

Աղօթում ենք առ Աստված, որ Երկնավոր Տերը խաղաղութեան մէջ պահի մեր երկիրը եւ անսասան՝ հայրենի մեր պետականութիւնը, հաւատքի մէջ հաստատուն եւ իր տեսիլքներին հավատարիմ պահպանի մեր ժողովրդին՝ ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփյուռս:

Շնորհ, սէր եւ խաղաղութիւն Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան. ամէն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ «ԱՐԱՐԱՏ» ԱՄՍԱԳՐԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ 150-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎԻՆ

(19 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ, 2018 Թ., ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ)[1]

Սիրելինե՛ր,

Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում «Արարատ» ամսագրի հիմնադրման 150-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցներիդ: Այսօր դուք համախմբվել եք՝ ձեր զեկույցներով ու քննարկումներով վերարժեւորելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի պաշտոնական ամսագրի նշանակալի վաստակն ու ժառանգությունը:

Երջանկահիշատակ Գեւորգ Դ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրոք եւ նրա խրախուսմամբ հիմնադրված «Արարատ» ամսագիրը հարյուր հիսուն տարի առաջ կարեւոր առաքելության լծվեց ազգային-եկեղեցական մեր անդաստանում: Ինչպես նշվում է ամսագրի առաջին համարի նախաբանում՝ «Արարատ»-ի հանձնառությունն էր կրոնական գիտելիքների մատուցմամբ, ներկայացվող ուսումնասիրություններով եւ հոդվածներով նպաստել ազգի բարոյական ու հոգեւոր դաստիարակությանը: Ամսագիրը կարեւոր ներդրում ունեցավ հայ աստվածաբանական մտքի, հայագիտության ու պատմաբանության զարգացման գործում: Մեծանուն հոգեւորականներից Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյանի գլխավորությամբ նոր սերնդի հոգեւորականները, Եւրոպայում կրթություն ստացած երիտասարդ եկեղեցականները հանդես եկան դավանաբանության, ինչպես նաեւ ընդհանուր աստվածաբանության վերաբերյալ գիտական լուրջ հոդվածներով, նշանավոր աստվածաբանների աշխատությունների թարգմանություններով: «Արարատ»-ի էջերում հիշարժան վաստակ թողեցին նաեւ նշանավոր հայագետները: Ամսագրի մեծարժեք նյութերի ցանկը հարստացրել են ձեռագրագիտության, մանրանկարչության, համեմատական բնագրերի,

[1] «Էջմիածին», 2018, ԺԲ, էջ 7:

արվեստի ու մշակույթի վերաբերյալ հրապարակումները: Դեռեւս այդ շրջանում, երբ Մայր Աթոռի պաշտոնական գրություններում գլխավորապես գրաբարի գործածումն էր սահմանված, «Արարատ» ամսագրի համար նախընտրելի համարվեց գրաբարին մերձ աշխարհաբարի գործածումը, որպեսզի այն ընթերցողների ավելի լայն շրջանակին հասու լինի: Հատկանշական է նաեւ, որ «Արարատ» ամսագիրը լույս էր տեսնում այնպիսի մեծանուն հոգեւորականների խմբագրությամբ, որպիսիք էին Աբել արքեպիսկոպոս Մխիթարյանը, Խորեն վարդապետ Ստեփանեն, Կարապետ վարդապետ Տեր-Մկրտչյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը, Գարեգին վարդապետ Հովսեփյանը եւ ուրիշներ: Մեր խորին հարգանքն ու խոնարհումն ենք բերում երանաշնորհ Գեւորգ Դ Ամենայն Հայոց կաթողիկոսի, ամսագրի վաստակաշատ խմբագիրների եւ «Արարատ»-ի բոլոր երախտավորների լույս հիշատակի առջեւ: Գոհունակությամբ ենք անդրադառնում, որ հրատարակվող նյութերի հատուկ ընտրությամբ «Արարատ» ամսագիրը դարձավ այդ ժամանակաշրջանում Կովկասում առաջին գիտական լուրջ հանդեսը, որի շուրջ համախմբված հայ աստվածաբան հոգեւորականները, գիտնականները, գրողները կարեւոր ավանդ բերեցին գիտության ճյուղերի զարգացմանը: Այսօր էլ «Արարատ» ամսագրի գիտական հարուստ նյութերը, նաեւ կաթողիկոսական կոնդակների ու կարգադրությունների, Սինոդի գրագրությունների, թեմերի, գաղթավայրերի, ազգագրության վերաբերյալ տեղեկությունները օգտաշատ գիտելիքների աղբյուր են ընթերցողների եւ ուսումնասիրողների համար: Սիրելինե՛ր, Հայրապետական Մեր գնահատանքն ենք հայտնում ձեզ բոլորիդ, մասնավորապես «Վաչէ եւ Թամար Մանուկյան» մատենադարանի տնօրենությանը եւ այս ձեռնարկի իրականացմանը բարի նպաստ բերած բոլոր անձանց: Մաղթում ենք, որ նման միջոցառումները առատ արգասիքներով արդյունավորվեն հոգեւոր-եկեղեցական մեր կյանքի անդաստանում, գիտության եւ իմացության կաճառում: Վերստին Հայրապետական Մեր օրհնությունը բերելով ՝ հայցում ենք Տիրոջ օգնականությունը ձեզ գիտական բեղուն աշխատանքով նորանոր հաջողություններ կերտելու ճանապարհին: Մեր Տեր Հիսուս Քրիստոսի սերը, չնորհներն ու ողորմությունը թող միշտ լինեն ձեզ եւ ամենքի հետ. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՈՒՂՂԱՓԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋԽՈՐՀՐԴԱՐԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ 17-ՐԴ ՎԵՀԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

(ԵՐԵՎԱՆ, 28 ՀՈՒՆԻՍԻ, 2010 Թ.)[1]

Հարգելի՛ խորհրդարանականներ:

Մենք ուրախ ենք ողջունելու ձեզ Հայոց հինավուրց հողում, առաջին քրիստոնական երկրում, որը Տիրոջ խաչի առջեւ խոնարհվել է դեռեւս 301 թ.: Ուրախության հետ քաջալերությամբ է համակված Մեր հոգին այն գիտակցումով, որ տեղի է ունենում կարեւոր իրադարձություն՝ հանդիպում ի Քրիստոս եղբայրների եւ արդիականության շատ հարցերում համախոհների: Մենք հավատում ենք, որ այս հանդիպումը ի չարս նախորդ ժողովների Աթենքում, Սոֆիայում, Երուսաղեմում, Պատմոս կղզում կնպաստի այսօր մարդկության համար վճռորոշ եւ հրատապ հարցերին պատասխաններ փնտրելու ընթացքներին:

Արդիականության կարեւոր հարցերից մեկը այն է, որ աշխարհիկ պետության գաղափարը այսօր երբեմն ընկալվում է իբրեւ սկզբունք պետական կառույցների եւ պետական ու քաղաքական գործիչների օտարացման եկեղեցուց եւ այն խնդիրներից, որոնք Եկեղեցին փորձում է վճռել: Պետք չէ մոռանալ, որ ամեն քայլափոխի ծագող հոգեւոր հարցերը հանդիսանում են կողմերից մեկը մյուս բոլոր հիմնախնդիրների, որոնք փորձում է վճռել պետությունը: Մենք համոզված ենք, որ անհնար է աշխարհիկ հարցերի լիարժեք վճռումը պետության ու նրա ծառայողների բաժանված վիճակով այն կրոնական հիմքից, որը ձե-

[1] «Էջմիածին», 2010 Ձ, էջ 7:

ւավորել է հոգեւոր աշխարհն ու նկարագիրը ժողովրդի, որի կյանքի ուղին նրանք կոչված են որոշելու եւ որի ճգտումները նրանք պետք է իրագործեն: Այդ պատճառով Մեզ համար հատկապես արժեքավոր է, որ Համաժողովը միավորել է այն քաղաքական գործիչներին, ովքեր անտարբեր չեն կենսական այդ խնդիրների հանդեպ ոչ միայն պետության համար ավանդական եղող քաղաքական, տնտեսական, ընկերային եւ այլ համարժեք ասպարեզներում, այլեւ՝ հոգեւոր ասպարեզում: Գնահատելի է, որ Համաժողովը միավորել է խորհրդարանականների, ովքեր մեկտեղում են քաղաքականությունը եւ հավատքը, օրենսդրական գործունեությունը եւ աստվածահաճո ջանքը՝ ուղղափառության ամրապնդման ուղղությամբ եւ ուղղափառ աշխարհընկալման ներդրման համար իրենց երկրների գերագույն օրենսդիր մարմիններում:

Անգնահատելի է Համաժողովի գործունեությունը ուղղափառ ժողովուրդների միավորման հարցում: Տարբեր երկրների ուղղափառ խորհրդարանականների հաղորդակցումը Համաժողովի շրջանակներում, արդեն նախադրյալ է, գուցե եւ՝ նույնիսկ երաշխիք խաղաղության եւ եղբայրության համար այդ երկրների միջեւ, ուրեմն եւ՝ նշանակալի ու գերակշիռ հատվածում ողջ մարդկության՝ վիթխարի հոգեւոր տարածության մեջ: Կարծում ենք, մասնավոր, բայց մեզ բոլորիս, ինչպես եւ համոզված ենք, մեր հույն եղբայրներին հուզող խնդիրներից է Հույն եւ Հայ Առաքելական Եկեղեցիների միջեւ երուսաղեմում պարբերաբար ծագող հակադրության իրավիճակը, որի թուլացմանը եւ վերացմանը պիտի նպաստի եւ այս հանդիպումը Երեւանում:

Համաժողովին հուզող խնդիրները հուզում են եւ մեզ՝ Հայ Առաքելական Եկեղեցուն եւ նրա ողջ հոտին: Դրանք են՝ ուղղափառության դերի բարձրացումը, ուղղափառ հգործոնի՝ աշխարհում, ուղղափառության ներմուծումը առօրյայում, մշակույթում եւ կյանքի այլ ոլորտներում, հաղթահարումը արդի աշխարհի հիվանդություններից մեկի՝ կրոնական մոլեռանդության, հաղթահարումը հոգեւոր խնդիրների՝ կապված համաշխարհայնացման ընթացքների հետ, հստակ արտահայտված դիրքորոշումը կրոնական եւ ազգային փոքրամասնությունների պաշտպանության հարցում, որն արտահայտված է Սերբիայի, Կիպրոսի եւ այլ պարագաներում Համաժողովի պաշտոնական փաստաթղթերում: Այսպիսի դիրքորոշման հետ է կապված իրողությունը, որը մեզ համար դժվար է չրջանցել եւ չնշել առանձնակի հաճույքով, այն է, որ 1996 թ., երբ դեռ ոչ մի միջազգային կազմակերպություն չէր համարձակվում տեսնել Ղարաբաղը ինքնուրույն միավոր, Համա-

ժողովը առաջինն էր, որ Աթենքի կոնֆերանսի մասնակիցների թվում ներառավ նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պատգամավորությանը:

Անհնար է թերագնահատել Համաժողովի որոշումը՝ դուրս գալ Եվրոպայի աշխարհագրական սահմաններից եւ ներառնել իր կազմում Ասիայից, Ավստրալիայից, Աֆրիկայից պատգամավորություններ, որոնք մասնակցում են Համաժողովի աշխատանքներին 2001 թվականից: Այդ որոշումը թելադրված է գիտակցությամբ, որ Համաժողովի համար առաջնահերթ խնդիրները համամարդկային են, եւ որ դրանց լիարժեք վճռման համար անհրաժեշտ է ներառնել նաեւ այդ չքրջանների քրիստոնեական եկեղեցիները, ինչպիսիք՝ Ասորական, Եթովպիական, Ղպտի, Մալաբար Եկեղեցիները, որոնք միավորված են Հայ Առաքելական Եկեղեցու հետ Հին կամ Արեւելյան ուղղափառության ընտանիքում: Մեր նպատակների նույնության մասին վկայում է եւ այն, որ Մեր եւ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ պատրիարքի կողմից այս տարվա մարտին ստորագրված Համատեղ հռչակագրում հատկապես ընդգծված է կարեւորությունը քրիստոնեական հավատքի եւ նրա վրա հիմնված արժեքների տարածման, կարեւորությունը աշխարհի համար վճռորոշ միջքրիստոնեական եւ միջկրոնական համագործակցության զարգացման, անհրաժեշտությունը ջանքերի համատեղման՝ դիմակայելու ավանդաբար ուղղափառ երկրներում կեղծ կրոնական ներխուժմանը, կանխելու համար վնասաբեր եւ քայքայող գործունեությունը տարբեր աղանդների եւ կեղծ կրոնական կազմակերպությունների, որոնք հատկապես ակտիվ են պետական կառույցների՝ իրենց ժողովուրդների հավատքի ու դավանության հարցերում ապակենտրոնացման պայմաններում:

Այս ամենը կարեւորագույն պատճառ է ողջունելու Համաժողովի որոշումը՝ անցկացնել իր հերթական 17-րդ կոնֆերանսը Հայաստանում: Վերստին արտահայտելով Մեր ուրախությունը այսօրվա հանդիպման առիթով՝մաղթում ենք աշխատանքների հաջող ընթացք: Եվ թող Աստված աջակից լինի՝ պսակելու այդ աշխատանքները նոր ձեռքբերումներով եւ առաջընթացով բոլոր վերոհիշյալ խնդիրներում: Մեր աղոթքներն ենք առաքում առ Բարձրյալը հայցով՝ հուշելու ուղիներ եւ առաջնորդելու այդ աշխատանքները Իրեն հաճելի, ուրեմն եւ՝ միակ ճշմարիտ ուղղությամբ:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ԵՒ 10-ՐԴ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ԲԱՑՄԱՆ ԱՂՈԹՔԻՆ

(ԲՈՒՍԱՆ, ՀԱՐԱՎԱՅԻՆ ԿՈՐԵԱ, 30 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2013 Թ.)[1]

Եւ Նա ասաց նրանց. «Ո՛վ անմիտ եւ թուլասիրտ մարդիկ, որ դժուարանում էք հաւատալ այն ամենին, որ ասացին մարգարէները: Չէ՞ որ Քրիստոս պէտք է նոյն այդ չարչարանքները կրէր եւ այնպէս մտնէր Իր փառքի մէջ»: (Ղուկաս 24:25-26)

Բարձրաստիճա՛ն պետական այրեր,
Եւ Ձ-ի՛ առաջնորդներ,
Հարգելի՛ քոյրեր եւ եղբայրներ:

Հոգեւոր անհուն ուրախութեամբ ողջունում ենք ձեզ՝ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի 10-րդ համաժողովի մասնակիցներիդ: Մենք այստեղ ենք եկել Բիբլիական Արարատի հովանու ներքո գտնվող հինավուրց Հայաստան աշխարհից: Մեր ժողովուրդը առաջինն էր, որ ընդունեց քրիստոնեութիւնը որպես պետական կրոն եւ հիմնադրեց առաջին քրիստոնյա թագավորութիւնը երկրի վրա: Մենք բերում ենք այստեղ հավաքվածներիդ՝ մեր քոյրերին եւ եղբայրներին, մեր բարեկամներին եւ գործընկերներին, հնամենի Մայր Աթոռ Ս. Էջմիածնի 1700-ամյա օրհնութիւնները ձեր առաքելութեան մեջ՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի լույսով լուսավորելու աշխարհի յուրաքանչյուր անկյուն:

Առանձնահատուկ կերպով Մեր օրհնութիւններն ենք հղում Մեզ հյուրընկալող Կորեայի երկրին եւ ժողովրդին: Որպես հայ՝ մենք ընդհանրութիւններ ունենք կորեացի ժողովրդի հետ: Մեր ժողովրդի նման Կորեայի ժողովուրդը իր բազմադարյա եւ հարուստ պատմութեան ընթացքում նույնպես տեսել է ցավ, օտարի տիրապետութիւն եւ

[1] «Էջմիածին», 2013, Ժ, էջ 12:

բաժանում, բայց թույլ չի տվել, որ այդ ամենը խամրեցնի իր ստեղծագործ ոգին եւ ճգտումն ազատության: Քրիստոսի լույսն այսօր պայծառ փայլում է կորեացի ժողովրդի կյանքում Ավետարանի նախանձախնդրությամբ, եւ գոհունակություն է Մեզ համար, որ ականատեսն ենք նրանց հիասքանչ քրիստոնյա համայնքի աճին եւ զորացմանը:

Մենք Մեր գնահատանք ենք արտահայտում նաեւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդին, բոլոր աշխատակիցներին եւ Եկեղեցիների Համաշխարհային Խորհրդի գլխավոր քարտուղար Պատվելի դր. Օլավ Թվեյթին, ով վերջին տարիներին սպասված հյուր է եղել Մայր Աթոռ Ս. Էջմիածնում: Հայ Առաքելական Եկեղեցին հպարտ է ավելի քան 50 տարի այս կառույցի անդամը լինելու:

Էկումենիկ ոգին հայ քաղաքակրթության մեջ խոր արմատներ ունի, որ ձգվում է մինչեւ Հայ Առաքելական Եկեղեցու երանելի հայրեր Սուրբ Ներսես Շնորհալին, Ներսես Լամբրոնացին եւ նրանց ժառանգորդները: Միջին դարերում նրանք համարձակ կերպով նախաձեռնեցին երկխոսություններ Կաթոլիկ եւ Բյուզանդական եկեղեցիների հետ «Միութիւն ի կարեւորս, ազատութիւն յերկբայականս եւ սէր յամենայնի» վեհ կարգախոսով: Հայ Առաքելական Եկեղեցին այսօր եւս անկեղծորեն ողջունում է ծավալվող երկխոսությունը, ճգտումը ընդհանուր հասկացողության եւ փոխադարձության՝ հանուն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու փառքի, աշխարհի խաղաղության եւ մարդկության բարօրության:

* * *

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

Մենք փառք ենք տալիս Տիրոջը, ով Իր ներկայությամբ լույս է սփռում մարդկանց սրտերում:

Քիչ առաջ մենք լսեցինք ավետարանական պատմությունը Էմմաուսի ճանապարհին կատարված հրաշքի մասին: Այն պատմում է, թե ինչպես մեր Տեր Հիսուս Իր Հարությունից ժամեր անց հայտնվեց Իր աշակերտներին եւ խոսեց նրանց հետ: Ճամփորդներն այնքան ընկճված էին, որ նույնիսկ չճանաչեցին իրենց Վարդապետին: Բայց Տերն Իր խոսքերով եւ ներկայությամբ փարատեց նրանց կասկածները՝ փոխանցելով նրանց հույսի եւ հավատքի ավելի խորը զգացումը եւ գիտակցումը Աստծո փրկարար զորության:

Նրանք վերադարձան Երուսաղեմ եւ կիսեցին իրենց ուրախությունը Քրիստոսի հետեւորդների հետ՝ այդպես փարատելով անհավա-

տուժյունը եւ վհատուժյունը այն փոքրիկ խմբի, որը չուտով պիտի դառնար Եկեղեցին: Վերնատունը Երուսաղեմում եւ համախմբված աշակերտերը ներկայացնում են Քրիստոսի Սուրբ Եկեղեցին իր ամբողջական ու փառավոր միության մեջ: Դա իրականացումն է հարուցյալ Տիրոջ խոսքերի. «Ոչ թէ դուք Ինձ ընտրեցիք, այլ Ես ձեզ ընտրեցի եւ ձեզ կարգեցի, որ դուք գնաք եւ պտղաբեր լինէք, եւ ձեր պտուղը մնայ, եւ ինչ էլ որ Իմ անունով Հօրից խնդրէք, ձեզ տայ: ... Այս եմ ձեզ պատուիրում. որ սիրէք միմեանց» (Հովհ. 15:16-17):

2000 տարի հետո մենք նույնպես յուրաքանչյուրս ուրույն ճանապարհով չարունակում ենք այդ առաքելությունը: Մեր Տիրոջ այս խոսքերը՝ հիշված Սուրբ Հովհաննես Ավետարանչի կողմից, անտարակույս, նույն հնչողությունն ունեն այս հավաքի համար: Այսօր մենք նմանապես միատեղ եւ միասիրտ ենք՝ հավաքված որպես ճշմարիտ Որթատունկի ճյուղեր: Մեզանից յուրաքանչյուրը տարբեր է եւ յուրահատուկ, բայց մենք չիվերն ենք միեւնույն արմատի: Մեզ միավորում են մեր ընդհանուր հավատքը առ Քրիստոս, մեր իրական սերը Աստծո հանդեպ: Միության այս օրինակն է, որ էկումենիկ շարժման բոլոր մասնակիցները նախ եւ առաջ կոչված են ցուցաբերելու: Մենք պետք է ձգտենք հոգեւոր միության, հավատքի եւ ծառայության միության, ողջ աշխարհում վկայության միության՝ հանուն Հիսուս Քրիստոսի եւ Նրա Սուրբ Եկեղեցու:

Այդ վկայությունը նշանակում է խոսել Քրիստոսի անունով եւ գործել Նրա ներկայությամբ՝ պարզասրտությամբ եւ առանց երկմտության: Անշուշտ, մեր խոսքն ու գործը պետք է լինեն կշռադատված, սթափ եւ պատասխանատու, նույնիսկ՝ որոշ պարագաներում նրբազգաց: Այսուհանդերձ, սահմանափակել կամ ստվերել մեր միության Սկզբնաղբյուրին, նշանակում է «բարձունքի լույսը գրվանի տակ դնել»: Դա նշանակում է թաքցնել լուսավորության միակ աղբյուրը, որը կարող է ճեղքել աշխարհի խավարը եւ հստակություն հաղորդել մարդկության տեսիլքին:

Ճշմարտություն է, որ նախաաստվածաշնչյան հեթանոս մշակութներն այնքան էլ չէին հոգում աշխարհի աղքատների մասին: Սակայն ժամանակակից հասարակությունը նույնպես շատ քիչ ուշադրություն է հատկացնում մեզ շրջապատող աղքատությանը՝ լինի դա նյութական, թե հոգեւոր:

Հակառակ այս իրողությանը՝ Հիսուսն օրհնեց աղքատներին: Հիսուսն Իր կարճատեւ կյանքն ու ծառայությունն ընծայեց, որպեսզի

սփոփի հոգով աղքատներին եւ կանխի մարդկության նյութական եւ հոգեւոր աղքատացումը: Հիսուս էր, որ, լինելով լրումն օրինաց եւ մարգարեից, առանցքային մտահոգություն դարձրեց այս արժեքները մարդկության համար եւ դարձրեց չափորոշիչ մեր մարդկայնության:

Մեր Տերը նույնպես հստակեցրեց, որ աղքատության խնդրի եւ մարդկային բոլոր ախտերի ապաքինումը պետք է բխի հենց Քրիստոսի անձից, Քրիստոսի իշխանության մեր ճանաչումից, Նրա զոհաբերության եւ Հարության երախտապարտ ընդունումից եւ Նրա «հետեւիր Ինձ» սիրալիր հրավերին՝ մեր ողջ սրտով արձագանքումից:

Այս հասկացությամբ մեր Տերը հաստատեց Եկեղեցին՝ լինելու միջոցը Քրիստոսի մերձավորության այս աշխարհում: Եվ այդ առումով համաժողովի թեման առավել արդիական է այսօր, քան երբեւէ.

«Կյանքի Աստված, առաջնորդիր մեզ արդարության եւ խաղաղության՝ նախ եւ առաջ զորացնելով Քրիստոսի Սուրբ Եկեղեցու առաքելությունը»:

Այսօր աշխարհի ամենամեծ խնդիրներից գերագույնը նախ եւ առաջ մարդու հեռանալն է Աստծուց՝ հաճախ կամավոր հեռանալը, հպարտ դիմադրությունը սիրող եւ արդար Գերագույն էակի գաղափարի հանդեպ: Այս դիմադրությունը եւ հեռացումն Աստծուց ոչ այլ ինչ է, քան թողտվություն՝ արհամարհելու մարդու իրավունքը եւ ընդունելի համարելու նպատակին հասնելու ցանկացած միջոց:

Քրիստոնեությունը մեզ այլ ուղի է ուսուցանում. առաջնորդում է մեզ այլ ճանապարհով, Էմմավուսի ճանապարհով: Այդ հրաշքը հիշեցնում է մեզ, որ նույնիսկ ակնհայտ պարտության ժամանակ Քրիստոս մեզ հետ է: Նա հեռու չէ, այլ հավերժորեն մոտ է: Նա մեզ հետ է նույնիսկ այն ժամանակ, երբ մենք չենք ճանաչում Նրան: Նա սատարում է մեզ, սնուցում է մեր հոգիները եւ բացում մեր միտքը: Եվ այսպես գործելով՝ Քրիստոս ոգեշնչում է մեզ այլոց հետ կիսելու մեր ունեցածը մեծահոգությամբ, եղբայրության ոգով եւ հույսով:

Քրիստոսի միջոցով մենք քաջալերվում ենք հոգալու այլոց մասին, հարգելու մեր նմանին առանց բացառության՝ արժանապատվորեն եւ սրբությամբ: Սա է Քրիստոսի Սուրբ Եկեղեցու բացառիկ առաքելությունը, որը չի կարող իրագործվել որեւէ վարչական կառույցի կողմից կամ փոխարինվել տեխնոլոգիայով: Ինչպես որ այս հավաքի խորագիրն է առաջարկում, այդ առաքելությունը զորացնելն առաջին եւ ամենագլխավոր քայլն է այն ճամփորդության, որը տանում է դեպի աշխարհ, որտեղ խաղաղությունն ու արդարությունն են իշխում:

Եվ այնտեղ հասնելու համար մենք պետք է ամենայն խոնարհությամբ կամք դրսեւորենք՝ առաջնորդվելու կենարար Աստծո կողմից:

Նա մեզ առաջնորդում է դեպի բազմաշերտ աշխարհ՝ «բազմաթիվ օթեւաններով հարկ», որտեղ կյանքի տարբեր ուղիներ ընտրած մարդիկ կարող են գտնել իրենց իրական օթեւանը: Այդ տան հիմքը եւ հիմնարար արժեքները հստակ են:

Հիմնարար արժեքների մեջ առաջինը բարոյականությունն է: Բարոյականության մասին շատ կարելի է խոսել, բայց ամենակարեւորն այն է, որ այն ուսուցանվում է օրինակով, եւ այդ օրինակը պետք է գա Եկեղեցուց: Մենք, որպես Եկեղեցու առաջնորդներ, պետք է բարոյական արժեքների օրինակ տանք, որոնք մենք ցանկանում ենք տեսնել աշխարհում եւ մեր չուրջը:

Որպես Եկեղեցի՝ մեր քարոզչությունը պետք է լինի Քրիստոսի սիրո եւ կարեկցանքի դրսեւորման օրինակը: Այն խտրականություն կամ պայմաններ չպետք է դնի, այլ պետք է ողջունի բոլորին սիրո ոգով: Մենք չենք կարող երաշխավորել արդյունքը, որ այն ամբողջությամբ կբուժի մեր հասարակությունների վերքերը, բայց այն մեր հասարակություններին կօժտի այդ վերքերը բժշկելու հոգեւոր միջոցներով:

Երկրորդ հիմնարար արժեքը կրթությունն է: Կրթությունը ջամբում է հարգանք մարդու նկատմամբ, սերմանում մարդկանց մեջ փոխըմբռնում եւ փոխգործակցություն: Այն ապահովում է նախապես անհասանելի հնարավորություններ եւ դրանով վերացնում բաժանումը դասերի, էթնիկ խմբերի, կրոնական եւ սոցիալական խավերի միջեւ: Ճշմարիտ կրթությունը թույլ է տալիս մարդկանց դուրս գալու մարդկության բարգավաճ կյանքի հավերժական թշնամիների՝ անհավատության, դաժանության, ատելության, նախապաշարմունքի մութ քարանձավից:

Ժամանակին կրթությունը հասու էր քչերին: Բայց 20-րդ դարը համընդհանուր կրթությամբ վերափոխում բերեց աշխարհի մեծ մասում: Սա իրապես նշանակալի չրջադարձ էր, որն արտահայտում է մարդկանց հավասարության քրիստոնեական բարոյական ըմբռնումը եւ ճշմարտությունը գիտակցելու նրանց աստվածատուր կարողությունը:

Այսօր մենք չպետք է թույլ տանք, որ Եկեղեցին հեռու լինի ժամանակակից կրթական հաստատություններից: Մենք պետք է բարձր պահենք Եկեղեցու ինքնությունը՝ որպես ամենամեծ կրթական հաստատություն մարդկության պատմության զարգացման ընթացքում:

Մենք պետք է ներկա գտնվենք կրթության բոլոր հարթակներում, իրազեկ լինենք մարդկային հարցադրումների մեծ դաշտում: Մենք պետք է ուղղորդենք գիտության, հատկապես բարձր տեխնոլոգիաների բոլոր ձեռքբերումները դեպի մարդու բարօրություն, ինչը կբարձրացնի եւ կհարստացնի մարդային կյանքը եւ ոչ թե կվնասի կամ կքանդի այն:

Երրորդ արժեքը, որը սերտորեն կապված է բարոյականության եւ կրթության, ընտանիքի հիմնարար հաստատություն է: Այսօր մենք անհանգստացած ենք ոչ միայն տեսնելով, որ ընտանիքը զրկված է հասարակական աջակցությունից, այլ նաեւ ընտանիքի գաղափարի աղավաղումով: Աստվածաշնչյան ժառանգության եւ 2000 տարվա քրիստոնեական քաղաքակրթության ըմբռնումը չատ պարզ է: Կնոջ եւ տղամարդու միությունը, սերունդների փոխշաղկապվածությունը, որ ներառում է երեխաներին, ծնողներին եւ ավագ ծնողներին. այս է մարդկության մեջ ճշմարիտ բազմազանության արտահայտությունը: Ընտանիքը խորն իմաստով իրականացնում է մեր այն հույսը, որ իրենց զանազանությամբ մարդիկ կարող են միանալ սիրո բեղմնավոր միությամբ:

Մեր հավատքը ընտանիքը որպես «դպրոց» է հռչակում, որն ուսուցանում է մարդու ամբողջականության մասին: Կուզեինք ավելացնել նաեւ, որ այս ընկալումը համահունչ է տարբեր քաղաքակրթություններում եւ ավանդական կրոններում ընդունված պատկերացումներին:

Իհարկե, որպես քրիստոնյաներ, մենք բացառիկ դեր ունենք ընտանեկան կյանքի զորացման մեջ, քանզի դա մեզ դնում է Աստծո հետ երկխոսության խորը հարաբերության մեջ: Ի՞նչ է Սուրբ Ընտանիքը այն մարդու համար, ով երբեք ականատես չի եղել ավանդական ընտանիքին: Ինչպե՞ս մենք կհասկանանք Մանուկ Հիսուսի հրաշքը, եթե երեխայի ծնունդը ավելի բեռ է համարվում, քան՝ օրհնություն հույսի: Ո՞րն է «Հայր մեր» աղոթքի իմաստը հասարակության մեջ, որտեղ հայրությունն արժեզրկվում է:

Զոհաբերության այս տեսակը, որը հաճախ ընտանեկան կյանքի մի մասն է, ամբողջապես համապատասխանում է քրիստոնեության կոչին՝ զոհաբերվել դիմացինի համար եւ հոգ տանել թուլների մասին: Երբ ընտանիքն անկում է ապրում, եկեղեցին նույնպես թուլանում է: Հետեւաբար, մենք կենսական կարեւոր դեր ունենք ուժեղ, բարի եւ սիրող ընտանիքներ ձեւավորելու եւ պաշտպանելու գործում:

Եվ վերջինը՝ ի՞նչ կարող ենք ասել խաղաղության արժեքի մասին: Խաղաղությունը մեր աշխարհում դեռ մնում է որպես երեւակայական

իրողություն: Մենք հավատում ենք, որ այս իրողությունը 21-րդ դարի ամենաահավոր եւ ապաբարոյական անակնկալն է: Քրիստոնեական 3-րդ հազարամյակի համար մենք բոլորս ունեցել ենք ավելի դրական, ավելի հուսալի ակնկալիքներ աշխարհից, քան այն, ինչ մենք հիմա տեսնում ենք մեր չուրջը:

Հատկապես ցավալի են քաղաքացիական խռովությունները, աճող բռնությունները եւ չարունակվող պատերազմները Մերձավոր Արեւելքում, հատկապես՝Սիրիայում եւ Եգիպտոսում: Վստահաբար մեր սրտերը բոլոր այն մարդկանց հետ են, ովքեր տուժում են անօրինականություններից եւ բռնություններից: Մենք աղոթում ենք բոլոր ընտանիքների համար՝ անկախ նրանց էթնիկ, կրոնական եւ ռասսայական պատկանելիությունից եւ աղոթում ենք Աստծուն ռազմական հակամարտությունների չուտափույթ դադարի համար, որպեսզի գերիշխեն բանականությունն ու երկխոսությունը:

Որպես Եկեղեցու անդամներ՝ մենք խորապես ազդվում ենք մեր եղբայրների եւ քույրերի անասելի տառապանքներից: Վերջին տարիներին մենք ավելի հաճախ ենք տեսնում, թե ինչպես ծայրահեղականների կողմից, երբեմն նաեւ իշխանությունների անտարբերությամբ՝ դավանանքի պատճառով բռնություններ են կիրառվում քրիստոնյաների նկատմամբ: Առաքյալների ժամանակներից սկսած՝ այս քրիստոնյա համայնքները, նրանց մեջ՝ նաեւ հայերը, ապրել են ստեղծագործ կյանքով եւ խաղաղության մեջ ողջ Մերձավոր Արեւելքում՝ նպաստելով տարածաշրջանի երկրների զարգացմանը: Քրիստոնյաները պատմականորեն խաղաղություն կերտողի դեր են ստանձնել ողջ տարածաշրջանում: Եվ այսօր նրանց հանդեպ վերաբերմունքը արդարության քննություն է իրենց երկրներում, ցուցանիշ, թե արդյո՞ք մարդու հիմնարար իրավունքները հարգվում են տեղական իշխանությունների եւ բնակչության մեծամասնության կողմից: Բռնություններին զոհ գնացող քրիստոնյաները ողջ Մերձավոր Արեւելքում մեր օրերի մարտիրոսության վկաներն են: Դա մեր եւ մեր երկրների, ինչպես նաեւ այս համագումարի համընդհանուր խնդիրն է՝ միավորել մեր խոսքն ու գործը՝ կանխելու նման բռնությունները եւ նպաստելու տարածաշրջանում խաղաղության հաստատմանը:

Այս իրականությունը առանձնակի ուժգնությամբ է առնչվում մեզ՝ որպես հայ քրիստոնյայի: Մեր քրիստոնյա եղբայրների տառապանքները չատ ծանոթ են մեր ժողովրդին: 2015 թ. Հայաստանում, Լեռնային Ղարաբաղում եւ աշխարհի տարբեր երկրներում մեր ժողո-

վուրդը հիշատակելու է իր պատմության ամենամեծ ողբերգության՝ Հայոց ցեղասպանության 100-ամյակը, որը ոճրագործվել է Օսմանյան Թուրքիայի կողմից: 1915 թվականից չորս սերունդներ են անցել, սակայն այդ արհավիրքի հիշողությունը մնում է կենդանի, եւ արդարության փնտրտուքը, թեկուզեւ միայն պաշտոնական ճանաչման պարզ գործողության միջոցով, չի դադարելու:

Սա պիտի հիշեցում լինի, որ այսօր աշխարհում տեղ գտնող դաժանությունը եւ դժբախտությունը սովոր են գցելու 22-րդ դարի վրա եւ դրանից հետո: Մենք երախտապարտությամբ ենք նշում, որ ԵՀԽ-ն, մեր քույր Եկեղեցիները եւ ավելի քան 20 երկրներ պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպությունը: Բայց պատկերացրեք՝ ինչպիսի ցավից եւ դժբախտությունից կարող էին խուսափել ոչ միայն մեր ժողովուրդը, այլ նաեւ Եվրոպայում, Ափրիկայում եւ այլ մայրցամաքներում ավելի ուշ տեղի ունեցած ցեղասպանությունների զոհերը, եթե աշխարհը ձեռնարկեր կանխելու մեկ դար առաջ՝ 1915 թ., իրականացված ոճրագործությունը:

Որպես Եկեղեցիներ՝ մենք պետք է բողոքենք այն բոլոր հանցագործությունների դեմ, որոնք այսօր տեղի են ունենում աշխարհի աչքի առաջ: Եվ մենք պետք է համարձակ խոսենք մարդու իրավունքների համընդհանուր ուսմունքի մասին՝ անկախ այն բանից, թե այն նեբառում է կյանքի համար պայքարը Սիրայում եւ Եգիպտոսում, թե՞ այն պայքար է ինքնորոշման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում: Մենք պետք է հաստատենք միաձայն, որ այս հիմնական իրավունքների խախտումը չի հանդուրժվելու աշխարհի ոչ մի ծայրում, քանի որ, առանց արդարության եւ մարդու իրավունքների հաստատման, այն խաղաղությունը, որը մենք փնտրում ենք, կլինի ժամանակավոր եւ փխրուն:

Մնայուն արժեքները, որոնք Մենք ընդգծել ենք այստեղ, քրիստոնեության 2000 տարվա պատմության պտուղներն են: Նրանք այն ժառանգության մասն են, որը մենք, որպես Եկեղեցի, ժառանգել ենք: Դրանց խթանումը մարդկային հասարակության մեջ այն առաքելության մասն է, որին մենք կոչված ենք: Մենք պետք է իրականացնենք այդ առաքելությունը մեծագույն խոնարհությամբ: Բայց մենք նաեւ պետք է մեծապես վստահ լինենք, որ մարդկային այդ արժեքները միշտ գտել են իրենց ամենաբարձր դրսեւորումները ի Քրիստոս Հիսուս եւ Նրա հիմնադրած շարժման մեջ:

Այսօր աշխարհում ամենուր ականատես ենք լինում խառնաշփոթի եւ ցավի տարբեր դրսեւորումների: Հատկապես դժվարին պահերին ենք պատկերացնում, որ հազիվ ենք տեսնում Քրիստոսին: Բայց այստեղ նորից Էմմավուսի հրաշքը ուսուցանում եւ մխիթարում է մեզ: Էմմավուսի ճամփորդները եւս չփոթված եւ հուսալքված էին: Նրանք եւս չճանաչեցին Տիրոջը: Բայց երբ հարուցյալ Փրկիչը մոտեցավ նրանց, նրանց ուղեկիցը դարձավ ու փարատեց նրանց մտահոգությունները, Նրա բառերն ու ներկայությունը աշխարհը իմաստավորեցին:

Սա մի պատգամ է, որ մենք պետք է ընդունենք որպես Եկեղեցի, որպես Քրիստոսի մարմին երկրի վրա: Մեր ճգտումը՝ նպաստելու խաղաղությանը եւ արդարությանը եւ յուրաքանչյուր մարդկային բարիքի, սկսվում է մեր ժողովուրդների՝ Քրիստոսի հետ իր ճանապարհին հանդիպումով: Մենք պետք է մոտենանք նրանց կարեկցությամբ, ուղեկից դառնանք նրանց, օգնենք նրանց տանելու իրենց բեռը: Այս վեհ նպատակը հետապնդելիս մենք պետք է մեր ոտքերը ամուր դնենք գետնին՝ նայելով մեր ժողովրդի աչքերի մեջ, խոսելով նրանց հետ Հիսուս Քրիստոսի անունից, գործելով նրանց մեջ Հիսուս Քրիստոսի ներկայության համոզումով:

Այսօր Մեր սիրտը ուրախությամբ եւ մխիթարությամբ է լցվում, որ միացել ենք այս համաժողովի աղոթքին՝ խնդրելով Աստծուն, որ զորացնի Քրիստոսի Ս. Եկեղեցու այս հուսալի առաքելությունը: Թող այս ոգին միշտ պարուրի մեր սրտերը եւ թող այն առաջնորդի մեզ դեպի ճշմարիտ խաղաղություն եւ արդարություն մեր Տեր եւ աշխարհի Փրկիչ Հիսուս Քրիստոսի միջոցով:

Շնորհակալությունն եւս մեկ անգամ՝ այս համաժողովին դիմելու հրավերի համար, ի Քրիստոս եղբայրական սիրո ջերմ մթնոլորտում:

Թող Տիրոջ շնորհը, սերը եւ խաղաղությունը ձեզ հետ, մեր ժողովուրդների հետ լինեն: Ամեն:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ԳԻՐԸ ԱՍՈՐԻ ՈՒՂՂԱՓԱՌ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ԻԳՆԱՏԻՈՍ ԵՓՐԵՄ Բ – ԻՆ

(1 ԱՊՐԻԼԻ, 2014 Թ., ԴԱՄԱՍԿՈՍ, ՍԻՐԻԱ)[1]

1 ապրիլ, 2014թ.
Սիրիա, Դամասկոս

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս:

Հոգեւոր մեծ ուրախությամբ չնորհավորում ենք Ձեզ համայն հայության հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից՝ Ասորի Ուղղափառ մեր քույր Եկեղեցու 123-րդ գահակալ ընտրվելու երջանիկ առիթով: Ձեր ընտրությունը վկայությունն է Ասորի Ուղղափառ եկեղեցուն Ձեր նվիրյալ եւ ակներեւ սպասավորության: ԱՄՆ կատարած մեր այցերի եւ Հայաստանում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի միջեկեղեցական հանդիպումների ընթացքին մենք առիթ ենք ունեցել ճանաչելու Ձեզ՝ որպես բարի եւ անձնդիր հոգեւոր հովվի, ով իր անձնական օրինակով փաստում է եղբայրության եւ բարեկամության կարեւորությունը, խրախուսում տարբեր եկեղեցիների ներկայացուցիչների միջեւ համագործակցությունը:

Լիահույս ենք, որ Ձեր գահակալության ընթացքում Դուք՝ որպես արժանավոր առաջնորդ Քրիստոսի Սուրբ եկեղեցու, Ձեզ վստահված հոտը կառաջնորդեք դեպի անվտանգ եւ խաղաղ նավահանգիստ: Հայ Առաքելական եւ Ուղղափառ Եկեղեցիների եղբայրական հարաբերությունները ամուր ու խոր արմատներ ունեն: Մեր երկու եկեղեցիները, քրիստոնեության վաղ շրջանից սկսած, ոչ միայն միասին ծառայել են քրիստոնեական աշխարհին՝ պարգեւելով հարուստ հայրաբանական, ծիսական եւ հոգեւոր ժառանգություն, այլեւ ճակատագրակից են

[1] «Էջմիածին», 2014, Դ, էջ 3:

եղել՝ պայքարելով մեր ժողովուրդների արդար դատի եւ իրավունքների համար՝ մասնավորապես Առաջին համաշխարհային պատերազմի, մեր ժողովուրդների դեմ Օսմանյան Թուրքիայի կողմից իրականացրած ցեղասպանության հետ կապված:

Մեր երկկողմ համագործակցությունն ավելի բեղմնավոր է դարձել վերջին տասնամյակներին՝ մեր եկեղեցիների առաջնորդների փոխայցելությունների, աստվածաբանների միջեւ երկխոսության եւ էկումենիկ ջանքերի մեջ մեր ընդհանուր ներգրավվածության շնորհիվ: Այսօր մեր մտքերն ուղղված են Սիրիայում խաղաղության վերականգնմանը. մի երկիր, որտեղ Հայ Եկեղեցու զավակները դարեր շարունակ խաղաղ ու արդյունավոր կյանք են ապրել Ձեր հոտի եւ այլ կրոնների ներկայացուցիչների հետ: Լիահույս ենք, որ Ձերդ Սրբությունն իր հայրապետական խնամքը կտարածի մեր Եկեղեցու զավակների վրա, եւ համատեղ ջանքերի շնորհիվ մենք կկարողանանք օգնել հաղթահարելու այս ճգնաժամը, վերջ դնելու բռնությանը եւ վերականգնելու խաղաղությունը տարածաշրջանում:

Մեր աղոթքն է, որ ամենակարող Աստված Ձերդ Սրբությանը պարգեւի երկար տարիների արդյունաշատ ծառայություն, պարզ ու անամպ երկինք Սիրիայի ժողովրդին եւ Ձեր նվիրական խղճերի իրականացում՝ ի փառս Աստուծո եւ ի չինություն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԸՆԹԱՑՍ ԿԱԹՈԼԻԿ ԵԿԵՂԵՑՈՒ ՍՐԲԱՁԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ, ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ՀԵՏ ՀԱՆԴԻՊՄԱՆ

(ՍՈՒՐԲ ԱԹՈՌ, ՎԱՏԻԿԱՆ, 8 ՄԱՅԻՍԻ, 2014 Թ.)[1]

Ձե՛րդ Սրբություն եւ սիրեցյալ եղբայր ի Քրիստոս:

Գոհություն ենք մատուցում Երկնավորին, որ Իր ողորմած կամքով եւ Ձերդ Սրբության սիրալիր հյուրընկալությամբ վերստին առիթն ունենք քրիստոնեական սիրո ողջագուրումով նորոգելու աստվածախնամ սերը մեր Եկեղեցիների ու մեր եղբայրության եւ ժամանակների հրամայականների առջեւ՝ զորացնելու գործակցությունը մեր Եկեղեցիների: Այսօր սրտի խնդությամբ ողջունում ենք Ձեզ սաղմոսերգուի խոսքով. «Զի բարի, զի վայելուչ է, զի եղբայրք բնակեն միասին» (Սաղմ. 132.1):

Տակավին թարմ են Մեր հուշերը՝ կապված Ձերդ Սրբության գահակալության արարողության հետ, որին Մենք ներկա գտնվեցինք Հայաստանի Հանրապետության նախագահի, մեր քույր Եկեղեցիների ներկայացուցիչների հետ միասին եւ առիթ ունեցանք աղոթել Ձերդ Սրբության արեւշատության եւ արդյունալի գահակալության համար: Բովանդակալից ժամանակ է անցել հիշարժան այդ օրից: Ուրախությամբ ենք հետեւել բազմերես գործունեությանը Ձերդ Սրբության, ով աստվածպարգեւ առույգությամբ, որպես քաջ հովվապետ, անձանձրույթ նվիրումով է իր առաքելությունն իրականացնում եւ գործունեություն ծավալում ի շահ Կաթոլիկ Եկեղեցու պայծառության, բարօրության ու բարեկարգության, այլեւ մեծ նպաստ բերում ողջ աշխարհում քրիստոնեական հավատքի, հոգեւոր-բարոյական արժեքների ամրապնդմանը, մարդու իրավունքների պաշտպանությանը, աշխարհում խաղաղության եւ համերաշխության հաստատմանը: Ձերդ

[1] «Էջմիածին», 2014, Ե, էջ 7:

Սրբութեան առանձնահատուկ ուշադրութիւնը երիտասարդութեան հանդէպ, Ձեր հոգատարութիւնը աղքատների ու նեղեալների նկատմամբ մեծ արձագանք է գտնում մարդկանց հոգիներում եւ զորացնում սերը Ձեր անձի եւ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու հանդէպ: Առաքելահաստատ եւ հինաւուրց մեր Եկեղեցին եւս, թոթափած խորհրդային աստուածամերժ տարիները, նոր եռանդով լծված է տերունապատուէր առաքելութեան իրականացմանը Հայաստանում՝ Բիբլիական Արարատի երկրում, ազատ ու անկախ ապրելու իր իրաւունքի ճանաչման համար պայքարող Արցախում՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեունում եւ աշխարհի տարբեր երկրներում սփռված մեր ժողովրդի կեանքում: Հայ Եկեղեցին մեծ կարեւորութիւն եւ ուշադրութիւն է դարձնում երիտասարդութեան հետ աշխատանքին, մատաղ սերնդի հոգեւոր-բարոյական դաստիարակութեանը, աղքատներին օժանդակութեանը, մարդկութեան առջեւ ծառացած արդի մարտահրաւէրների դիմագրաւմանը՝ մեր հայրերի սուրբ ժառանգութեան եւ Աւետարանի սուրբ պատգամների համաձայն:

Գոհունակութիւն է Մեզ համար անդրադառնալ, որ Եկեղեցու առջեւ ծառացած չատ մարտահրաւէրներ հաղթահարելիս Մենք կարողացել ենք համագործակցութեան լաւ օրինակներ արձանագրել Կաթոլիկ Եկեղեցու հետ: Արդարեւ, Հայ եւ Կաթոլիկ Եկեղեցիների հարաբերութիւնները ունեն իրենց պատմական արմատները: Մեր երկկողմ հարաբերութիւնները առավել արդիւնաւորվել են Հայ Եկեղեցու լուսաւոր հայրապետեր Գրիգոր 3-րդ Պահլաւունու եւ Ներսես Շնորհալու, ինչպես նաեւ Հռոմի Ինոկենտիոս 2-րդ եւ Անաստասիոս 4-րդ պապերի ժամանակներից եւ այսօր էլ, գոհունակութեան Աստծո, համակողմանի նոր զարգացում են ապրում: Մեր հարաբերութիւնները արգասաւորվում են Եկեղեցիների պետերի փոխայցերով, թեմական եւ ծխական մակարդակներում միջեկեղեցական գործակցութեամբ, համատեղ կրթական ու բարեսիրական ծրագրերի իրականացմամբ: Հայ երիտասարդ հոգեւորականներ, ովքեր իրենց կրթութիւնը չարունակել են Կաթոլիկ Եկեղեցու կրթական հաստատութիւններում, այսօր իրենց անձնվեր ծառայութիւնն են բերում Հայ Եկեղեցում: Մենք կարեւորում ենք աստուածաբանական երկխոսութիւնը Հին Արեւելեան Ուղղափառ Եկեղեցիների եւ Կաթոլիկ Եկեղեցու միջեւ, որի նպատակը մեր ընդհանրութիւնների վերհանումն ու երկկողմ հարաբերութիւնների ամրապնդումն է:

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, Մեր հանդիպումն այսօր խորհրդանշական է, քանզի մայիսի 8-ին եւ մայիսի 9-ին շատ ազգեր ու պետութիւնները տոնախմբում են համաշխարհային չարիքի՝ ֆաշիզմի դեմ տարած հաղթանակը: 20-րդ դարում երկու համաշխարհային պատերազմների ավերներն ու բռնութիւնները տեսած մարդկութիւնը դեռ չի կարողացել ձերբազատվել պատերազմների, հումանիտար ու բնապահպանական աղետների, քաղաքական ու տնտեսական ճգնաժամերի արհավիրքներից: Այսօր աշխարհի տարբեր անկյուններում բռնկված են հակամարտութիւններ, որոնք վիշտ ու տառապանքներ են բերում մարդկանց, սփռում ավեր, կորուստ, հավելում կարիք եւ աղքատութիւն: Մեր հանապազ աղոթքներում են հակամարտության մեջ հայտնված երկրների ժողովուրդները, ի մասնավորի՝ Ուկրաինայի, Մերձավոր Արեւելքի, Սիրիայի, որ քրիստոնեության օրրաններից է եւ դարեր ի վեր եղել է բնակավայր մուսուլման եւ քրիստոնյա ժողովուրդների խաղաղ գոյակցության: Սիրիայում տեղ գտնող արհավիրքներին վերջերս հավելվեց նաեւ Թուրքիայի աջակցությամբ ծայրահեղական զինյալների կողմից ավերումն ու հայաթափումը գեղաքանցապես հայորդիներով բնակեցված Քեսաբի: Մենք խստորեն դատապարտում ենք աշխարհի խաղաղութիւնը խաթարող հակամարտութիւնները, ահաբեկչութիւնները, որոնք ամբողջականորեն հակառակ են Աստծո կամքին, ինչպես առաքյալն է ասում. «Աստուած խռովութեան Աստուածը չէ, այլ՝ խաղաղութեան» (Ա Կորնթ. 14. 33):

Սիրիայում, Դեր Զորի անապատներում հանգչում են հազարավոր հայորդիներ, որոնք զոհ գնացին 20-րդ դարում մարդկության դեմ գործված առաջին ոճրագործության՝ Հայոց ցեղասպանության: Սիրիան ապաստան տվեց արհավիրքներից մազապուրծ հայ ժողովրդի զավակներին: Ճշմարիտ է ասված, թե ով դասեր չի առնում պատմությունից, ստիպված է այն վերապրել: Յավոք, ժամանակին չդատապարտելով Հայոց ցեղասպանութիւնը, աշխարհն ականատես եղավ մեկ այլ ոճրագործության, որը երկրորդ համաշխարհային պատերազմի ընթացքում իրագործվեց հրեա ժողովրդի նկատմամբ: Տակավին թարմ են հիշողութիւնները նաեւ Ռուանդայում եւ Դարֆուրում տեղի ունեցած ցեղասպանութիւնների:

Մենք քաջատեղյակ ենք, որ Ձերդ Սրբութիւնն ինչպես Արգենտինայում իր պաշտոնավարության տարիներին, այնպես էլ որպես Կաթոլիկ Եկեղեցու քահանայապետ՝ իր հստակ դիրքորոշումն է ներկայացրել Հայոց ցեղասպանության վերաբերյալ: Հաջորդ տարի հայ

ժողովուրդն ի Հայաստան եւ ի սփյուռս աշխարհի հիշատակելու է Հայոց ցեղասպանութեան հարյուրերորդ տարելիցը: Ի Քրիստոս սիրեցյա՛լ եղբայր, հրավիրում ենք Ձերդ Սրբութեանը՝ 2015 թվականին այցելելու Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Հավատավոր Մեր ժողովրդի համար հոգեւոր մխիթարություն պիտի լինի Ձերդ Սրբութեան եւ Մեր զավակաց միասնական աղոթակցությամբ Միածնաէջ Մայր Տաճարից աղոթք վերառաքել առ Բարձրյալն Աստված՝ Հայոց ցեղասպանության անմեղ զոհերի, աշխարհի խաղաղության եւ մարդկության բարօրության համար:

Անհուն մխիթարության գգացումով տեղեկացնում ենք նաեւ, որ մեր Սուրբ Եկեղեցին ձեռնարկել է Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման գործընթացը, եւ Աստծո ողորմած կամքով 2015 թվականին պիտի կատարվի սրբադասումը:

Աղոթում ենք առ Աստված, որ արեւշատ գահակալության երկար օրեր պարգեւի Ձերդ Սրբությանը՝ ի պայծառություն Կաթոլիկ Եկեղեցու եւ ի բարօրություն հավատավոր Ձեր հոտի: Թող Տերն Իր բյուր շնորհներով զորացյալ պահի Իր Սուրբ Եկեղեցին, ամուր՝ եղբայրությունը մեր Եկեղեցիների եւ անամպ ու անխռով երկինք պարգեւի ամբողջ աշխարհին եւ համայն մարդկությանը:

«Առաջնորդիր մեզ, Տեր Աստված մեր, եւ սովորեցրու մեզ արդարությամբ գնալ Քո ճանապարհով, պահիր մեր կյանքը խաղաղության մեջ եւ մեր ընթացքը՝ Քո կամքի համաձայն», ամեն (Ժամագիրք):

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՎԱՇԻՆԳՏՈՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(ՎԱՇԻՆԳՏՈՆ, ԱԶԳԱՅԻՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ, 7 ՄԱՅԻՍԻ, 2015 Թ.)[1]

«Երանի որ քաղցեալ եւ ծարաւի իցեն արդարութեան, վի նոքա յագեսցին»
(Մատթ. Ե 6):

Մեծարգո՛ նախագահ Ամերիկայի Միացյալ Նահանգների,
Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,
Ի Քրիստոս հոգեւո՛ր եղբայր, Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս,
Շնորհազա՛րդ եղբայրներ,
Բարձրապատի՛վ այրեր,
Սիրելի՛ բարեպաշտ զավակներ մեր Եկեղեցու:

Քրիստոսավանդ սիրով եւ «Քրիստոս յարեաւ ի մեռելոց» մշտանորոգ եւ կենարար ավետիսով, որ մեր չուրթերին է հինանց այս օրերին, ողջունում ենք ձեզ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման էկումենիկ արարողությանը Վաշինգտոնի Ազգային նվիրական այս տաճարում:

Փրկչի հարության իսկության հանդեպ անսասան մեր հավատքը հաստատուն է պահում մեր հույսը, որ, Տիրոջ խոսքի համաձայն, հաղենալու են բոլոր նրանք, ովքեր արդարության քաղցն ու ծարավն ունեն:

Քրիստոսի հարության եւ ավանդած այս խոսքերի հավատով մեր ժողովրդի զավակները նույն երկրում ապրող այլազգի իրենց եղբայրների ու քույրերի հետ այս օրերին աշխարհի բոլոր ծագերում ի մի եկան՝ մեկ անգամ եւս հիշելու Հայոց ցեղասպանության մեկ ու կես միլիոն անմեղ նահատակներին, բայց նաեւ քաջալերվելու եւ ցնծալու

[1] «Էջմիածին», 2015, Ե, էջ 5:

ազգն ու հավատքը չուրանալու, Քրիստոսի համար նահատակվելու նրանց հոգեւոր սխրանքով:

Հայոց ցեղասպանության ոճրի ահռելիության եւ ահավորության հանդիման նսեմացան պատմության ընթացքում մեր ժողովրդին բաժին ընկած տառապանքի ու կորուստների մյուս դրվագները: Եղեռնի տարողության եւ աշխարհի անտարբերության անհամատեղելի իրողության առջեւ՝ մեր ժողովուրդն անցնող 100 տարիների ընթացքում ամենից առավել քաղցն ու ծարավն ունեցավ արդարության:

Ինչպես առաջին դարերում աշխարհի հզորները մերժեցին ընդունել Հիսուսի հարության ճշմարտությունը, այնպես էլ 100 տարիների ընթացքում եղան Հայոց ցեղասպանության իսկության անժխտելիությունը ժխտողներ, անուրանալիությունը ուրացողներ: Պետությունների մասնավոր շահերի եւ քաղաքականության զոհասեղանին բազմիս ողջակիզվեց մեր ժողովրդի արդարության պահանջը, իսկ ժխտողականությունն ու անպատժելիությունը խրախուս եղան ցեղասպանության նոր ողբերգությունների: Մեր հոգեւոր եղբայր Հռոմի սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապը՝ չեչտելով Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման կարեւորությունը, Վատիկանի Սուրբ Պետրոս տաճարում մեր նահատակների համար մատուցված պատարագի ընթացքին ասաց. «Զարիքը թաքցնելը կամ մերժելը նույնն է, թե թույլ տալ, որ վերքն արյունահոսի առանց վիրակապելու»: Մեր ժողովուրդը, որ վեր է հառնել Ցեղասպանության գողգոթայից, անդուլ ջանքերով կերտել նոր կյանք, պետականություն՝ իր հայրենիքի փրկված հատվածում եւ այսօր դիմակայում է չրջափակման եւ անկայուն խաղաղության դժվարություններին, որ ականատես է նաեւ չատերի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը, հավատում է, որ միջազգային հանրության կողմից Ցեղասպանության վերքը պիտի վիրակապվի արդարության վիրակապով: Այդ վերքը միայն հայ ժողովրդինը չէ, դա համայն մարդկության վերքն է: Այս առումով Հայոց ցեղասպանության նկատմամբ արդարության իրագործումը հրամայական է եւ պարտավորություն սերունդների առջեւ, որպեսզի նրանց փոխանցենք առավել բարվոք աշխարհ, եւ նոր ցեղասպանություններ չմթագնեն մարդկության կյանքը:

Այսօր հիշելով Օսմանյան Թուրքիայում իրագործված Հայոց ցեղասպանության սուրբ նահատակներին՝ մենք հիշում ենք նաեւ նույն ոճրագործի կողմից մահվան ենթարկված հարյուր հազարավոր ասորի եւ հույն քրիստոնյաներին: Հիշում ենք 20-րդ դարում մարդկության

դեմ իրագործված մյուս ոճրագործությունները՝ հրեական Հոլոքոստը, Կամբոջայի, Ռուանդայի եւ մյուս ցեղասպանությունները:

Աշխարհի տարբեր ծագերում չարունակում ենք ականատես լինել բռնության, մարդու իրավունքների ոտնահարման, զանգվածային սպանությունների ու էթնիկ զտումների: Մարդիկ տառապում են քաղաքական, տնտեսական, ազգամիջյան եւ կրոնական հակամարտություններից: Մերձավոր Արեւելքում, մասնավորապես՝ Սիրիայում եւ Իրաքում, տեղի են ունենում անասելի ողբերգություններ: Իրենց հավատքի համար նահատակվում են նաեւ քրիստոնյաներ, ավերվում են սրբություններ: Այդ ավերներին օրեր առաջ հավելվեց նաեւ դիտավորությամբ կործանված Հալեպի Սրբոց Քառասուն մանկանց 15-րդ դարի հայկական եկեղեցին:

Զղաղարող եւ տագնապահարույց այս ցավալի իրավիճակները, Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների եւ մյուս ցեղասպանությունների ու ոճիրների զոհերի հիշատակը պարտավորեցնում է մեզ միջազգային իրավունքի ընձեռած բոլոր հնարավորություններով, այլեւ միջկրոնական ու միջեկեղեցական համագործակցությամբ քայլեր ձեռնարկել՝ կանխելու համար մարդկության եւ մարդկային կյանքի ու արժանապատվության դեմ գործվող չարիքներն ու եղեռնագործությունները: Ընդհանուր այս մտահոգության առջեւ ամենքս՝ պետություն, եկեղեցի, հասարակություն, պետք է հոգանք, որ 21-րդ դարի գիտատեխնիկական առաջընթացին ներդաշնակ՝ բարձրության վրա պահպանվի հոգեւոր-բարոյական արժեհամակարգը: Քանզի այս ընթացքները մեծ չափով հետեւանք են հասարակական ներկայիս կյանքում բարոյական արժեքների նահանջի:


Սիրելի՛ եղբայրներ եւ քույրեր:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման նշանակալի այս տարում Մենք գալիս ենք մեր ժողովրդի անունից երախտագետ սրտով մեր խոնարհումը բերելու բոլոր պետություններին, աշխարհիկ եւ կրոնական կազմակերպություններին ու կառույցներին, անհատներին՝ քրիստոնյա կամ այլակրոն, Հայոց ցեղասպանությունը ճանաչելու եւ դատապարտելու, մեր ժողովրդի արդարության պահանջին աջակցելու համար: Մեր խոնարհումը բոլոր-բոլորին՝ Ցեղասպանության աղետալի օրերին մեր ժողովրդին օգնության ձեռք մեկնելու, ապաստան տալու եւ զորակից լինելու համար, որոնց մեջ առանձնակի է Ամերիկայի Միացյալ Նահանգների ժողովրդի անմոռանալի երախ-

տիքը՝ Նախագահ Վիլսոնից, մինչեւ դեսպան Մորգենթաու, նպաստամատույց կառույցներ եւ պարզ աշխատավոր:

Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման այս առիթով, մեր սուրբ նահատակների եւ զոհերի հիշատակի առջեւ Մեր Հորդորն ու կոչն է, որ պետություններն ու պետության ղեկավարները չհապաղեն իրերն անվանել իրենց անունով եւ ճանաչեն ու դատապարտեն Հայոց ցեղասպանությունը:

Աղոթում ենք, որ աշխարհում վերջ գտնեն մարդկության դեմ իրագործվող հանցագործությունները, ցավն ու տառապանքը, ժողովուրդների ու պետությունների կյանքում հաստատվի ճշմարտապես եղբայրություն, եւ խաղաղության ու համերաշխության մեջ հագենան արդարության քաղցն ու ծարավն ունեցող բոլոր հոգիները: Ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԷԿՈՒՄԵՆԻԿ ՀԱՆԴԻՊՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾԻՆ, ԳՅՈՒ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՐԱՀ, 26 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ.)[1]

Սիրելի՛ հոգեւոր եղբայրներ ի Քրիստոս:

Մեզ համար մեծ գոհունակություն է ողջունել Ձեզ ամենքիդ՝ քույր եկեղեցիների հովվապետերիդ եւ ներկայացուցիչներիդ, մեր եկեղեցու առաջնորդներիդ համայն հայության հոգեւոր սրբազան կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում: Սրբալույս Մյուռոնի օրհնության համազգային մեծ տոնին Ձեր աղոթակցությունը զորակցություն է մեր Սուրբ եկեղեցուն եւ քրիստոսասեր մեր ժողովրդին, որ առ Բարձրյալն Աստված գոհաբանական իր աղոթքն է երկինք բարձրացնում սաղմոսերգուի խոսքերով. «Զի բարի կամ զի վայելուչ, զի բնակեն եղբարք ի միասին» (Սաղմ. ՃԼԲ 1): Այս հոգեպարար առիթով ի Քրիստոս մեր եղբայրական ջերմ սերն ու բարեմաղթանքներն ենք հղում քրիստոնեական եկեղեցիների մեծ ընտանիքի բոլոր հովվապետերին՝ աղոթելով Քրիստոսի Սուրբ Եկեղեցու հավետ պայծառության համար:

Սիրելին՛եր, Հայաստանյայց Սուրբ Եկեղեցին, իբրեւ Քրիստոսի ընդհանրական ու խորհրդավոր մարմնի մի անդամ, վաղը եւս մեկ անգամ կատարելու է քրիստոնեական մեր հավատքի մեծագույն խորհուրդներից մեկը՝ օրհնելու է սրբալույս Մյուռոնը: Իբրեւ Հայաստանյայց եկեղեցու միասնականության ու անբաժանելիության խորհրդանիշ՝ սրբալույս Մյուռոնն օրհնվելուց հետո տարածվելու է աշխարհի բոլոր կողմերում, ուր մասնավորապես Հայոց ցեղասպանության հետեւանքով տարագրության ճանապարհը բռնած մեր ժողովուրդը, անդորր ափերի փնտրտուքով, հանգրվան է գտել եւ հաճախ աղոթել ու իր հոգու սնունդն ստացել արդեն իր երկրորդ հայրենիքը դարձած երկրի քրիստոնյա իր եղբայրների ու քույրերի հետ՝ անսասան պահելով իր հավատքը եւ քրիստոնեական ինքնությունը՝ իբրեւ Հայաս-

[1] «Էջմիածին», 2015, Թ, էջ 10:

տանյայց Եկեղեցու Հավատարիմ զավակ: Հայ Եկեղեցին այդ դառն ու դժնդակ տարիներին ապավինել է Քրիստոսի միասնական եւ խորհրդական մարմնի անսպառ ուժին ու զորութեանը:

Այս նվիրական օրերին էլ Մենք աղոթում ենք մեր քրիստոնյա եղբայրների ու քույրերի հետ, որ Սուրբ Հոգու չնորհները, անսպառաբար հեղվելով սրբալույս Մյուռոնի մեջ, զարդարեն ամենքիս՝ քրիստոնեական հավատի ու առաքինութեանց նվիրական չնորհներով: Աչխարհում մարդկային կյանքի, աստվածատուր պատվիրանների ու քրիստոնեական արժեքների պահպանման դժվարին ճանապարհին այսօր, առավել քան երբեւէ, անհրաժեշտ է մի նոր Հոգեգալուստ, սրբազան առաքյալների օրինակով՝ համախմբման մի նոր Վերնատուն: Մենք գոհունակութեյուն ու փառք ենք տալիս Աստծուն, որ ներկա դարաշրջանում քրիստոնյաները գիտակցում եւ խոր ըմբռնումով են ընկալում քրիստոնեական եղբայրութեյան ու փոխադարձ սիրո աստվածատուր պատվիրանը:

Սրբալույս Մյուռոնի օրհնութեյունը եւս մի առիթ ու օրինակ է, որով թանձրացյալ կերպով արտահայտվում է Ձեր եղբայրական սերը հանդեպ հայ ժողովուրդն ու Հայ Եկեղեցին: Ցեղասպանութեյան հարյուրամյակի հիշատակութեյանց շարքում սրբալույս Մյուռոնի օրհնութեյունը կարեւորագույն նշանակութեյուն ունի. այն հիշեցնում է մեզ հոգեւոր վերածննդի անհրաժեշտութեյան մասին: Վերածնունդ, որտեղ խառնվում եւ միավորվում են մեր հայրերից եկող սրբազան ավանդութեյունն ու նոր սերունդների քրիստոնեական հավատքի տեսլականը, Եկեղեցու պատմութեյան փառավոր էջերը եւ ապագայի քրիստոնեական առաքելութեյան ճանապարհը՝ ի փառս Քրիստոսի Սուրբ Եկեղեցու:

Հիրավի, չկա ավելի մեծ եւ իրական, չոչափելի իրողութեյուն, քան եկեղեցական տարբեր ավանդութեյանց կրողների միասնական աղոթքն ու համախմբումը Տիրոջ սուրբ Սեղանի չուրջ: Մեր աղոթքն է առ ամենաբարձրյալն Աստված, որ Տերը զորացնի Իր Սուրբ Եկեղեցին, պարգեւի մեզ ճանաչելու սիրո, միութեյան ճշմարիտ ոգին, ինչպես որ իր խաչելութեյունից առաջ Նա պատգամեց մեզ. «Որպէս սիրեաց զիս Հայր, եւ ես սիրեցի ձեզ. հաստատուն կացէք ի սէր իմ» (Յովհ. ԺԵ 10):

Թող մեր Տիրոջ սերն ու չնորհը լինեն ամենքիս հետ, թող Սուրբ Հոգին Իր առատաբուխ չնորհներով օրհնի ամենքիս կատարելու Նրա ամենասուրբ կամքը ի փառս Սուրբ Երրորդութեյան եւ ի չինութեյուն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 100-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ՈԳԵԿՈՉՄԱՆ ԱՌԻԹՈՎ ԷԿՈՒՄԵՆԻԿ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(28 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2015 Թ., ԼՈՆԴՈՆ)[1]

Ջե՛րդ Գերազանցություն ՀՀ նախագահ,

Ջե՛րդ արքայական մեծություն,

Սիրելի՛ բարեպաշտ եղբայրներ եւ քույրեր:

Փառք եւ գոհություն ենք մատուցում առ Բարձրյալն Աստված, որ չնորհն ունենք հոգեւոր ավանդույթներով հարուստ Վեստմինստերյան աբբայությունում մասնակցություն բերելու Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակներին նվիրված էկումենիկ այս արարողությանը՝ Հայաստանի Հանրապետության մեծարգո Նախագահ տիար Սերժ Սարգսյանի, Հայ Եկեղեցու հոգեւոր դասի ներկայացուցիչների եւ հավատավոր զավակների հետ:

Շնորհակալությամբ ողջունում ենք ներկայությունն այստեղ Նորին Մեծություն Ուելսի արքայազն Չարլզի, ում սերն ու համակրանքը մեր ժողովրդի եւ մեր երկրի հանդեպ զգացել ենք տարբեր առիթներով, ինչպես վերջերս՝ Հայաստան իր այցելության ընթացքին:

Եղբայրական Մեր սերն ենք փոխանցում Քենթերբերիի արքեպիսկոպոս Նորին Սրբազնություն Ջասթին Ուելբիին, ում հետ կոչված ենք Տիրոջ Ավետարանի լույսը տարածելու եւ քրիստոսավանդ պատգամները իրագործելու մեր ժողովուրդների կյանքում:

Մխիթարություն ենք ապրում, որ միջեկեղեցական համատեղ այս աղոթքով Անգլիկան Եկեղեցին եւ Միացյալ Թագավորության ժողովուրդն իր եղբայրական համերաշխությունն է հայտնում մեր ժողովրդին՝ արտահայտելով իր հարգանքը Հայոց ցեղասպանության զոհերի եւ սրբադասված նահատակների նկատմամբ:

---

[1] «Էջմիածին», 2015, Ժ, էջ 18:

Սիրելի՛ հավատակից եղբայրներ եւ քույրեր:

Մեր ժողովրդի սրտում դեռ չի սպիացել վերքը քսաներորդ դարասկզբին Օսմանյան Կայսրության կողմից իրականացված ոճրի, որին իրենց ազգային պատականելության եւ քրիստոնեական հավատքի համար զոհ գնացին մեկ եւ կես միլիոն հայորդիներ: Մենք կորցրեցինք պատմական, հինավուրց մեր հայրենիքի մեծագույն մասը, հազարավոր հայեր տարագիր սփռվեցին ողջ աշխարհով: Մեր ժողովրդի նահատակ զավակները մարտիրոսության պսակն ընդունեցին՝ հավատարիմ առաքելական պատգամին. «Եթէ արդարութեան համար չարչարուէք էլ, երանի՛ է ձեզ: Բայց ... մի՛ վախեցէք եւ մի՛ խռովուէք, այլ Տիրոջը՝ նոյն ինքը Քրիստոսին սո՛ւրբ պահեցէք ձեր սրտերում» (Ա Պետ. 3.14):

Այսօր, երբ մենք ոգեկոչում ենք 100-ամյա տարելիցը Հայոց ցեղասպանության, Մենք վերստին մեր երախտագիտություն ենք հայտնում Ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած, ինչպես եւ՝ Եղեռնից մազապուրծ հայորդիներին ապաստան տված բոլոր պետություններին, այլեւ քույր Եկեղեցիներին՝ դատապարտության իրենց խոսքը աշխարհում բարձրաձայն հնչեցնելու համար: Այս շարքում Մենք խորը զգացվածությամբ ենք հիշում, որ Բրիտանական կառավարությունը Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին դաշնակից պետությունների հետ հայ ժողովրդի հանդեպ իրականացված եղեռնագործությունը որակեց հանցանք մարդկության դեմ: Համաշխարհային քաղաքակրթության մեջ Մեծ Բրիտանիայի ունեցած ներդրումը եւ մարդասիրական արժեքներին նվիրվածությունը վստահություն են ներշնչում, որ Միացյալ Թագավորությունն իր եղբայրական զորակցությունն ու նպաստը պիտի չարունակի բերել մեր ժողովրդի հանդեպ պատմական արդարության վերականգնման գործում:

Սիրելի՛ բարեպաշտ եղբայրներ եւ քույրեր:

Հայոց ցեղասպանության ճանաչումը ոչ միայն պատմական մի իրողության, մեկ ժողովրդի հանդեպ կատարված եղեռնագործության դատապարտում է, այլեւ առավելաբար մերժումն ու բացառումն է մարդկության դեմ գործված եւ գործվող բոլոր տեսակի բռնությունների եւ ոճիրների, որոնց այսօր էլ զոհ են դառնում հազարավոր անմեղ մարդիկ՝ հատկապես Մերձավոր Արեւելքի երկրներում: Ցեղասպանության ժխտողականությունը կամ աջակցությունը ժխտողականությանը եւ կամ եղեռնագործ երկրների նկատմամբ զգուշավորության ու սիրաշահման քաղաքականությունը նոր խթան են ցեղասպանության հանցագործությունների կրկնության համար: Առաքելավանդ պատվի-

բանն ասում է. «Լուսոյ պտուղներն են բարութիւնը, արդարութիւնը եւ ճշմարտութիւնը: Ստուգեցէ՛ք, թէ ո՛րն է հաճելի Տիրոջը. եւ խաւարի անպտուղ գործերին մասնակից մի՛ եղէք, այլ մանաւանդ մերկացրէ՛ք դրանք» (Եփ. 5.9-11):

Մեզ համար հոգեւոր խորը գոհունակություն է, որ Վեստմինստերյան աբբայությունում մեր համատեղ աղոթքով ոգեկոչեցինք հիշատակը Հայոց ցեղասպանության զոհերի եւ հայցեցինք բարեխոսությունը սրբադասված նահատակների՝ հանուն մարդկության խաղաղ ու ապահով կյանքի: Հիշատակի արարողության կազմակերպման աշխատանքներում ներդրած ջանքերի համար Մեր գնահատանքն ու օրհնությունն ենք բերում Վեստմինստերյան աբբայության վանահայր հոգեշնորհ դոկտոր Ջոն Հոլին, Լոնդոնի եպիսկոպոս լորդ Ռիչարդ Ջարթրեսին, Մեծ Բրիտանիայի Հայոց թեմի առաջնորդ գերաշնորհ Տ. Հովակիմ եպիսկոպոս Մանուկյանին:

Մեր գնահատանքն ենք հայտնում Միացյալ Թագավորությունում ՀՀ արտակարգ եւ լիազոր դեսպան տիար Արմեն Սարգսյանին՝ արարողության նախաձեռնության եւ նշանակալի ներդրումի համար:

Այս նվիրական պահին աղոթում ենք, որ Բարձրյալն Աստված զորացնի մեր Եկեղեցիները՝ Քրիստոսի սիրով մեզ վստահված հոտին ծառայելու, հոգեւոր միությամբ միմյանց զորավիգ լինելու եւ միասնաբար գործելու՝ հանուն բռնություններից ազատ, արդար եւ համերաշխ աշխարհի կառուցման:

Մեր աղոթքն է նաեւ, որ Տերը օրհնի եւ պահպանի Մեծ Բրիտանիո Միացյալ Թագավորությունը, նրա գահակալին՝ Նորին Արքայական Մեծություն Եղիսաբեթ Երկրորդ Թագուհուն, կառավարության անդամներին, Անգլիկան Եկեղեցուն ու բարեպաշտ ժողովրդին եւ Իր երկնառաք խաղաղությունը չնորհի համայն մարդկությանը:

Թող Տիրոջ օրհնության ներքո առավել զորանան եւ արգասավորվեն բարի հարաբերություններն ու համագործակցությունը մեր երկրների եւ ժողովուրդների:

Եվ թող մեր Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի սերն ու չնորհները լինեն մեզ հետ եւ ամենքի՝ այսօր եւ միշտ. ամեն:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻՆ՝ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՀՐԱՇԱՓԱՌԻ ԲԱՐԻԳԱԼՍՏՅԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 24 ՀՈՒՆԻՍԻ, 2016 Թ.)[1]

Ձե՛րդ Սրբութիւն, սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս:

Գոհութիւն եւ փառք ենք մատուցում Աստծուն, որ այսօր Միածնակէզ այս Սուրբ Տաճարում եղբայրական սիրով ու աղոթքով ողջունում ենք Ձերդ Սրբութիւնը եւ Ձեզ ուղեկցող պատվիրակութիւնը: Խորապես զգացված ենք, որ, Մեր հրավերին ընդառաջ, այցելեցիք Հայաստան, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին: Հինավուրց այս տաճարը Աստծո հետ մեր ժողովրդի կնքած սրբազան ուխտի խորախորհուրդ վկայութիւնն է: Նվիրական այս սրբավայրում իջավ Հիսուս Քրիստոս եւ Իր Սուրբ Աչով հաստատեց Սուրբ Էջմիածինը՝ սրբութիւն սրբոցը համայն հայութեան: Աստվածային նախախնամութեամբ հայոց երկրորդ Լուսավորիչ, առաքելապատիվ սուրբ Գրիգոր Հայրապետի տեսիլքով ու անխոնջ ջանքերով նորոգվեցին սուրբ Թադեոս եւ սուրբ Բարդուղիմեոս առաքյալների քարոզութեամբ մեր ժողովրդի սրտում վառված հավատքի կանթեղները: Այդ օրից ի վեր Սուրբ Էջմիածնից ճառագող լույսը միավորում է մեր ժողովրդին տապանակիր Արարատի չուրջ սփռված իր հայրենիքով, իր սրբութիւններով, իր պատմութեամբ: Անչափ ուրախ ենք, որ այսօր Միածնակէզ այս Սուրբ Տաճարում ի փառս Աստծո միավորվում են սուրբ Պետրոս եւ սուրբ Թադեոս ու սուրբ Բարդուղիմեոս առաքյալների Աթոռների գահակալներիս աղոթքները՝ հայցելով մեր հավատացելոց եւ ողջ աշխարհի

[1] «Էջմիածին», 2016, Զ, էջ 5:

համար խաղաղություն, սիրո ու եղբայրության ամուր ոգի եւ համագործակցության արգասավորում:

Այս պահին ջերմ զգացումներով ենք հիշում 2001 թվականին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով սուրբ Հովհաննես Պողոս Բ Պապի այցը Հայաստան: Այն սուրբ Պետրոսի Աթոռի գահակալի առաջին այցելությունն էր մեր երկիր, որը մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերություններում գործակցության նոր խթան հանդիսացավ: Մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերությունների առավել սերտացման գործում նշանակալի ավանդ եք բերել նաեւ Դուք՝ Ձեր ծառայագործության հանգրվաններում առանձնակի ջերմություն դրսեւորելով Հայ Եկեղեցու եւ մեր ժողովրդի նկատմամբ: Ձերդ Սրբության այցելությունը նոր վկայություն է մեր Եկեղեցիների եղբայրության եւ գործակցության, որը երկուստեք զորացնում է հայ առաքելական ու կաթոլիկ հավատացյալներին եւ տոգորում լավատեսությամբ, որ մեր կյանքում առավել զգալի պիտի լինեն քրիստոնեական սիրով չաղախյալ մեր հավատքի վկայությունները:

Մեր ժողովրդի զավակները երախտագիտությամբ են հիշում Սուրբ Պետրոս Մայր Տաճարում Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին մատուցած Ձեր հանդիսավոր պատարագը՝ ցեղասպանությունը դատապարտող պատմական ճառով: Գոհություն ենք հայտնում Աստծուն, որ այսօր այստեղ Ձերդ Սրբության, կաթոլիկ Եկեղեցու զավակների, Ձեր այցի առիթով տարբեր երկրներից Հայաստան ժամանած բազմաթիվ հայորդյաց ու հայրենաբնակ մեր ժողովրդի հետ միասնաբար կարող ենք աղոթել եւ հայցել Հայոց ցեղասպանության սրբադասված նահատակների բարեխոսությունը, որոնց արյան վկայությունը ոչ միայն հայոց, այլ նաեւ քրիստոնեական ընդհանուր հավատքի հաղթանակի հավաստիքն է: Ինչպես առաքյալն է ասում՝ չատերի գոհությամբ առատացած չնորհը ավելանում է ի փառս Աստծո (Հմմտ. Բ Կորնթ. Դ 15):

Հայոց ցեղասպանության եւ խորհրդային աստվածմերժության տարիների ավերներից հետո այսօր հայրենի անկախ պետականության պայմաններում մեր Եկեղեցին հոգեւոր նոր զարթոնք է ապրում՝ ազատորեն իրականացնելով տերունավանդ իր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում: Մեր Եկեղեցին նաեւ առավել մասնակցություն է բերում համաքրիստոնեական կյանքին՝ խորին համոզումով, որ աշխարհում առկա հոգեւոր, քաղաքական, տնտեսական ու մարդասիրա-

կան ճգնաժամերի խորացման այս ժամանակաշրջանում առավել քան կարեւորվում է քույր Եկեղեցիների միասնական աղոթքն ու գործակցությունը հանուն Քրիստոսի Սուրբ Եկեղեցու առաքելության արգասավորման, աշխարհում հոգեւոր-բարոյական արժեքների պահպանման ու արժեւորման, մերձավորի հանդեպ սիրո զորացման, որոնցով կյանքում կարող են մարմնավորվել ապահովության եւ բարօրության իրական արդյունքները:

Աղոթք ենք բարձրացնում Քրիստոսի Սուրբ Եկեղեցու հաստատունության եւ պայծառության, մեր Տիրոջ պարգեւած սիրո ու հաճության ոգու տարածման եւ աշխարհում խաղաղության ու համերաշխ կյանքի ամրապնդման համար: Հայցում ենք Ջերդ Սրբությանը Տիրոջ զորակցությունը եւ մաղթում ընդ երկայն աւուրս քաջառողջ, արդյունազարդ գահակալություն՝ ի պայծառություն Հռոմեական Կաթոլիկ Եկեղեցու եւ ի մխիթարություն հավատացելոց:

Բարի եք եկել աստվածաշնչյան երկիր Հայաստան եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին:

Մեր Տիրոջ եւ Փրկչի Հիսուս Քրիստոսի ողորմությունը, չնորհներն ու օրհնությունը թող լինեն մեզ հետ եւ ամենքի. ամեն:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ԿՈՂՄԻՑ ԳՅՈՒՄՐԻԻ ՍՐԲՈՑ ՎԱՐԴԱՆԱՆՑ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(ԳՅՈՒՄՐԻ, 25 ՀՈՒՆԻՍԻ, 2016 Թ.)[1]

«Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեանց սիրեցէք» (Յովհ. ԺԳ 34):

Ջե՛րդ Սրբութիւն,

Սիրեցյա՛լ հոգեւոր եղբայրներ եւ բարեպաշտ հավատացյալներ:

Այսօր, երբ մեր Եկեղեցին հիշատակում է Տիրոջ սուրբ առաքյալների տոնը, որքան քաղցրահունչ ու առավել ուժգնությամբ է հնչում մեր հոգիներին այս պատգամը, որը մեր Տերն ուղղեց Իր աշակերտներին: Տերունապատվեր սիրո այս ջերմ զգացումով հանուն տարածաշրջանի ողջ հավատացելոց՝ բարի գալուստ ենք մաղթում Ձեզ, սիրեցյա՞լ եղբայր ի Քրիստոս, Գյումրի քաղաք: Ուրախություն է Մեզ համար աղոթակից լինել Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի մեծ բարեկամիդ մատուցած Պատարագին:

Գյումրին Հայաստանի պատմական այն քաղաքներից է, որտեղ ծաղկում են ապրել հայ քրիստոնեական դարավոր արժեքները, ներդաշնակությամբ ձուլվել մեր ժողովրդի պատմությունն ու մշակույթը եւ հյուրընկալության սիրառատ ոգին: Գյումրիի ժողովուրդը առանձնանում է խորին հավատքով եւ եկեղեցասիրությամբ, կրողն է նաեւ քրիստոնեական եղբայրական համակեցության գեղեցիկ ավանդույթի, որի վկայությունն է այսօր այստեղ աղոթքի կանգնած Հայ Առաքելական եւ Կաթոլիկ Եկեղեցիների եւ քրիստոնեական այլ հարանվա-

[1] «Էջմիածին», 2016, Զ, էջ 11:

նուիրյունների հավատացյալ զավակների ներկայությունը: Խորհրդային աստվածմերժության տարիներին, երբ Հայաստանում կործանվում եւ փակվում էին եկեղեցիները, եւ միայն հավատացյալ մեր ժողովրդի անտեղիտալի դիմադրության շնորհիվ բաց էին մնացել Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը եւ սակավ եկեղեցիներ, Գյումրիի Սուրբ Աստվածածին (Յոթվերք) եկեղեցին իր մայրական գիրկը բացեց եւ հովանի ու աղոթավայր դարձավ Հայաստանի հյուսիսային շրջանների եւ Վրաստանի սահմանամերձ հայաբնակ քաղաքների ու գյուղերի բոլոր քրիստոնյաների համար՝ անկախ ազգային ու դավանական պատկանելությունից, լինեին նրանք հայ առաքելական, կաթոլիկ, թե օրթոդոքս: Եկեղեցու հյուսիսային նախամուտքը վերածվեց կաթոլիկ հավատացյալների աղոթավայրի, որտեղ տեղադրվեց եւ առ այսօր պահպանվում է կաթոլիկ ավանդույթին բնորոշ Տիրոջ խաչելության արձանը՝ բերված Արեւիկ գյուղի կաթոլիկ եկեղեցուց, իսկ հարավային նախամուտքը տրամադրվեց ուղղափառներին, որտեղ ամենապատվավոր տեղում բարձրացվեց Սուրբ Նիկոլայոս Սքանչելագործի ռուսական սրբապատկերը: Այսպես Գյումրին եւ Սուրբ Աստվածածին (Յոթվերք) եկեղեցին էկումենիզմի ժամանակակից սահմանումից տարիներ առաջ դարձան գործնական էկումենիզմի մատակարարն ու քարոզիչը:

Սիրեցյա՛լ եղբայր ի Քհստոս, քաղաքը, որտեղ մենք այսօր գտնվում ենք, հյուրընկալ ու ջերմ իր սրտի վրա կրում է նաեւ կնիքը տառապանքի: Քսաներորդ դարասկզբին, երբ մեր ժողովուրդը ցեղասպանության էր ենթարկվում, Գյումրին նույնպես զգաց Օսմանյան կայսրության ջարդարար եւ զավթողական քաղաքականության ծանր հարվածները եւ այսօր էլ կանգնած է փակ սահմանի դիմաց՝ իբրեւ հարյուր տարի առաջ Թուրքիայի կողմից իրագործված ցեղասպանության եւ չարունակվող ժխտողական քաղաքականության վկա:

Մեր ժողովրդի զավակները Գյումրիում հավատքով ու քաջարի ոգով դիմագրավեցին նաեւ երկրաշարժի աղետը: Այս առիթով ի դեմս Ձերդ Սրբության՝ երախտագիտության Մեր խոսքն ենք ուղղում Կաթոլիկ Եկեղեցուն, որը ծանր այդ օրերին նույնպես եղբայրսիրությամբ օգնության ձեռք մեկնեց երկրաշարժից տուժածներին՝ համաձայն առաքյալի խոսքի. «Հոգ տանենք միմեանց՝ սիրոյ եւ բարի գործերի յորդորելով» (Եբր. Ժ 23-24): Այսօր էլ գյումրեցի մեր զավակները չարունակում են հաղթահարել դժվարությունները եւ նվիրյալ ջանքեր բերում՝ բարօր ու զարգացող կյանքով բարեչեն դարձնելու Գյումրին, որի վկայությունն են վերջին տարիներին կառուցված կաթոլիկ եկեղե-

ցին, այս հրապարակին հովանի պատմական երկու նորոգված եկեղեցիները՝ իբրեւ Գյումրիի հառնող կյանքի խորհրդանիշերը:

Գոհունթյուն հայտնելով Տիրոջը Գյումրիում Մեր սիրեցյալ եղբոր՝ Ֆրանցիսկոս Պապի հետ միասնական աղոթքի այս չնորհառատ օրվա համար՝ Մեր հորդորն ու մաղթանքն ենք բերում ձեզ, սիրելի՛ հավատացյալներ, հավատքի, եղբայրսիրութթյան ու հույսի աներեր քայլերով վկայելու այս աշխարհում Քրիստոսի պատգամը. «Նոր պատուիրան եմ տալիս ձեզ, որ սիրէք միմեանց. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք էլ միմեանց սիրեցէք»:

Այս մաղթանքով նաեւ ողջունում եւ Մեր գնահատանքն ու օրհնութթյունն ենք բերում Գյումրիի եւ մարզի իշխանավորներին, Շիրակի հավատավոր Մեր զավակներին: Մեր գնահատանքն ու օրհնութթյունն ենք բերում Շիրակի թեմի առաջնորդ Միքայել եպիսկոպոս Աջապահյանին, նրան լծակից հոգեւորականներին եւ հայ կաթոլիկ համայնքի եկեղեցականներին՝ առաջնորդ Ռաֆայել արքեպիսկոպոս Մինասյանի գլխավորութթյամբ: Մաղթում ենք, որ Տիրոջ զորակցութթյամբ նրանք չարունակեն արդյունավորել իրենց հավատավոր հոտի խնամքն ու հովվութթյունը եւ եղբայրասիրութթյամբ գործակցութթյունը:

Սուրբ առաքյալների եւ Տիրոջ բոլոր վկաների բարեխոսութթյան հայցով աղոթք ենք բարձրացնում առ Ամենակալն Աստված աշխարհի խաղաղութթյան, մարդկութթյան բարօր ու ապահով կյանքի եւ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու պայծառութթյան համար:

Ձե՛րդ Սրբութթյուն, սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, Ձեր այցելութթյունը Գյումրի հոգեւոր նորոգութթյուն է Շիրակի տարածաշրջանի հավատացյալներին եւ միշտ պիտի հիշվի սիրով ու ջերմութթյամբ: Ուրախ սրտով վերստին հաստատում ենք, որ Ձեր այցը նոր վկայութթյուն է մեր Եկեղեցիների բարի հարաբերութթյունների: Թող Աստված ամուր պահի եղբայրութթյունը եւ արգասավորի գործակցութթյունը մեր Եկեղեցիների այսօր եւ միշտ, ամեն:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ՀԵՏ ՄԱՏՈՒՑՎԱԾ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ԱՂՈԹՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(ԵՐԵՎԱՆ, ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿ,
25 ՀՈՒՆԻՍԻ, 2016 Թ.)[1]

«Երանի՛ խաղաղարարներին, որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչվեն» (Մատթ. Ե. 9):

Ձե՛րդ Սրբություն, սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս,

Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետության,

Շնորհազա՛րդ հոգեւոր եղբայրներ եւ սիրելի՛ բարեպաշտ ժողովուրդ:

Բարձրյալն Աստծո սուրբ անվան փառաբանությունը մեր չուրթերին՝այսօր քաղաքամայր Երեւանի կենտրոնում, Բիբլիական Արարատի օրհնաբեր հայացքի ներքո համախմբվել ենք միասնական աղոթքի: Նոյի երկրից, որտեղ Աստված ծագեցրեց խաղաղության ծիածանը, մեր հայցը բարձրացրինք երկինք ի Քրիստոս սիրեցյալ Մեր եղբոր՝ Ֆրանցիսկոս Պապի հետ՝ հանուն աշխարհում խաղաղության հաստատման եւ մարդկության ապահով ու բարօր կյանքի: Հուզումով ենք անդրադառնում, որ այս հրապարակում մեզ աղոթակից են նաեւ պատերազմներից, ահաբեկչություններից ու բռնություններից տուժածներ, փախստականներ Ադրբեջանից, փախստականներ Սիրիայից, Իրաքից, ովքեր առ Աստված հույսով սպասում են խաղաղության օրերին իրենց հայրենի բնակավայրերում:

Արդարեւ, մեկ եւ կես տասնամյակ առաջ երրորդ հազարամյակը դիմավորում էինք հույսով, որ այն մարդկության կյանքում սկիզբ պիտի առնի ազգերի համերաշխ գոյակցությամբ եւ պետություն-

[1] «Էջմիածին», 2016, Ձ, էջ 14:

ների բարի գործակցությամբ՝ հանուն խաղաղ ու արդար աշխարհի կառուցման: Մինչդեռ ամենօրյա իրականությունը հաճախ գուժում է պատերազմական եւ ահաբեկչական նորանոր գործողությունների, մարդկային անասելի տառապանքների, անդառնալի կորուստների մասին: Աշխարհի տարբեր կողմերում տարբեր ազգերի, կրոնների ու դավանանքների պատկանող մանուկներ ու պատանիներ, կանայք ու տարեցներ մահասփյուռ զենքերի եւ վայրագ բռնարարքների զոհ են դառնում կամ բռնում գաղթականության ուղին՝ ահռելի դժվարություններ հաղթահարելով կյանքի ապահովություն գտնելու համար:

Ճիշտ մեկ դար առաջ այս նույն ճանապարհն էր անցում մեր ժողովուրդը՝ հայտնվելով ծանրագույն իրավիճակի առջեւ, երբ Ցեղասպանության հետեւանքով կորցրել էր հայրենիքի մեծագույն մասը եւ, ունենալով մեկ ու կես միլիոն անմեղ նահատակներ՝ պայքարում էր իր գոյության իրավունքի համար: Այսօր էլ մեր ժողովուրդն ապրում է չհայտարարված պատերազմի դժվարին պայմաններում՝ թանկ գնով պաշտպանելով խաղաղությունը մեր երկրի սահմաններում, Լեռնային Ղարաբաղի մեր ժողովրդի ազատ ապրելու իրավունքը՝ իր բնօրրան հայրենիքում: Մեր ժողովրդի խաղաղասիրական ճգտումներին ի պատասխան՝ Ադրբեջանը, խախտելով հրադադարը, ապրիլ ամսին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմաններին սանձազերծեց ռազմական գործողություններ: Հրետակոծվեցին եւ ավերվեցին հայկական բնակավայրեր, զոհվեցին ու վիրավորվեցին խաղաղության պաշտպան զինվորներ, դպրոցահասակ երեխաներ, խոշտանգվեցին խաղաղ, անզեն բնակիչներ:

Այս դժվարություններին հանդիման՝ մեր ժողովուրդը ցավ է ապրում նաեւ այն ավերածությունների եւ կորուստների համար, որ շարունակվում են Մերձավոր Արեւելքում, սոսկալի ահաբեկչություններ համար, որ իրագործվեցին եվրոպական խոշոր քաղաքներում, Ռուսաստանում, Միացյալ Նահանգներում, Ասիայի եւ Աֆրիկայի երկրներում, հոգեւոր ու մշակութային այն արժեքների համար, որ անխնա կերպով ոչնչացվում են հակամարտությունների տարածաշրջաններում: Որքա՜ն սրբավայրեր պղծվեցին եւ արժեքավոր կոթողներ կործանվեցին Սիրիայում, Իրաքում, Արեւելքի եւ Աֆրիկայի երկրներում, որքա՜ն խաչքարեր ոչնչացվեցին Ադրբեջանում: Փլատակների, կորստի ցավի ու կարիքի մեջ փլուզվում են նաեւ մարդկային հոգու արժեքներն ու զգացումները:

Ստեղծված իրավիճակներում քրիստոնեական Եկեղեցիների եւ կրոնական առաջնորդների առաքելությունը չի կարող սահմանափակվել միայն տուժածներին աջակցելով, մխիթարելով եւ հովվական հոգատարություն ցուցաբերելով: Խաղաղության փնտրտուքի ճանապարհին առավել գործուն քայլեր պիտի ձեռնարկվեն՝ համատեղ ջանքերով կանխարգելելու համար չարիքը, միջեկեղեցական ու միկրոնական գործակցությամբ հասարակությունների մեջ զորացնելու սիրո, համերաշխության ու համագործակցության ոգին՝ ըստ Աստծո կոչի. «Երանի՛ խաղաղարարներին, - ասում է մեր Տերը, - որովհետեւ նրանք Աստծու որդիներ պիտի կոչուեն»:

Զե՛րդ Սրբություն, հովվական Ձեր ծառայությունն ակնհայտորեն արտահայտում է աշխարհի խաղաղության ու ազգերի միջեւ հաշտության տերունավանդ պատգամին Ձեր ամբողջական նվիրվածությունը, որի վկայություններից մեկը եղավ նաեւ Հայոց ցեղասպանության 100 - րդ տարելիցի առիթով անցյալ տարի Վատիկանի Սուրբ Պետրոս Մայր տաճարում մատուցված պատարագը՝ ի հիշատակ մեր անմեղ նահատակների, երբ Դուք Ձեր պատգամում բարձրաձայնեցիք արդարության վերականգնման անհրաժեշտության մասին՝ նշելով. «Չարիքը թաքցնելը կամ ուրանալը նման է թույլ տալուն, որ վերքն արյունահոսի՝ առանց վիրակապվելու»:

Այս նույն սկզբունքով առաջնորդված՝ վերջին մեկ տարում Հայոց ցեղասպանությունը վճռականորեն դատապարտեցին նաեւ նոր պետություններ ու կազմակերպություններ, օրերս՝ նաեւ Գերմանիան, որն Առաջին համաշխարհային պատերազմում Թուրքիայի դաշնակիցն էր: Մեր ժողովուրդը երախտագետ է Ձերդ Սրբությանը եւ բոլորին, ովքեր բարձրաձայնում ու պաշտպանում են արդարությունը եւ ակնկալում է, որ Թուրքիան՝ ունկնդիր Ձեր պատգամին եւ բազում պետությունների ու միջազգային կառույցների կոչին, քաջություն դրսեւորի առերեսվելու պատմությանը, վերացնի Հայաստանի անօրինական շրջափակումը, դադարեցնի նաեւ զորակցությունը Ադրբեջանի ռազմական խարդավանքներին՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ազատ ու խաղաղ ապրելու իրավունքի դեմ: Արդարեւ, խաղաղությունը չի կարող կենսագործվել առանց արդարության, մարդկային կյանքերը չեն կարող դառնալ չհարկումների առարկա, չեն կարող անտեսվել: «Աստծու կողմից աչառություն չկայ, - ասում է առաքյալը, - այլ՝ բոլոր ազգերի մէջ ով երկնչում է Նրանից եւ արդարություն է գործում, ընդունելի է Նրան» (Գործք ժ 34-35): Միայն արդարությունը, որի


վրա հիմնված է մարդկանց եւ ժողովուրդների իրավունքների պաշտպանությունը, կարող է դառնալ ամուր հիմքը մարդկության դեմ հանցագործությունների կանխարգելման եւ ամենաիրական ուղին հակամարտությունների համապարփակ լուծման:

Այս նպատակի իրագործման համար ջերմեռանդ սրտով աղաչում ենք Աստծուն, որպեսզի ունկնդիր լինի մեր աղոթքներին եւ Սուրբ Հոգու շնորհների առատ հեղմամբ բարի արդյունքներով արգասավորի եղբայրական սերն ու գործակցությունը Եկեղեցիների: Թող Ողորմած մեր Տերը մաքրի աշխարհը չարի ողբերգություններից եւ պարգեւի խաղաղություն ու ապահովություն: Եվ թող մարգարեական խոսքի համաձայն՝ սուսերներից խոփեր ձուլվեն, սվիններից՝ մանգաղներ, ազգ ազգի դեմ սուր չբարձրացնի, եւ մարդիկ չսովորեն պատերազմել (Հմմտ. Եսայի Բ 4):

Բարերար Աստծո մեզ պարգեւած հանդիպման հոգեւոր ուրախությունը Մեր սրտում, մեր Տիրոջ եւ Փրկչի շնորհը եւ խաղաղությունը հայցելով բոլորիս՝ հրավիրում ենք Ձեզ, սիրեցյա՛լ եղբայր, Ձեր պատգամը եւ սիրառատ օրհնությունը բերելու այստեղ համախմբված բազմահազար հավատացյալներին:

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՀՌՈՄԻ ՍՐԲԱԶԱՆ ՔԱՀԱՆԱՅԱՊԵՏ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ԱՅՑԻ ԱՌԻԹՈՎ ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ ՄԱՏՈՒՑՎԱԾ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԱՐԱԳԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ, 26 ՀՈՒՆԻՍԻ, 2016 Թ.)[1]

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ, ամէն:

«Եւ երբ Նա ցամաք ելաւ, տեսաւ բազում ժողովուրդ,
գթաց նրանց եւ բժշկեց նրանց հիւանդներին...»
(Մտթ. ԺԴ 14):

Ձե՛րդ Սրբութիւն՝ սիրեցեալ եղբայր ի Քրիստոս,
Մեծարգո՛ նախագահ Հայաստանի Հանրապետութեան,
Հոգեւո՛ր եղբայրներ եւ բարեպա՛շտ ժողովուրդ:

Առ Աստված փառաբանութեան օրեր են Սուրբ Էջմիածնում՝ հոգեւոր բերկրանքի եւ համատեղ աղօթքի առատութեամբ: Այսօր սուրբ Պատարագի արարողութեան ենք համախմբվել՝ աղօթակցութեամբ Հռոմի Սրբազան Քահանայապետ, Մեր սիրեցեալ եղբայր Ֆրանցիսկոս Պապի:

Խորհրդանշական է, որ սուրբ եւ անմահ այս Պատարագին որպես ընթերցված հնչեց հացի բազմացման սուրբգրային պատմութիւնը: Ավետարանիչը պատմում է, որ երբ Հիսուս առանձնացավ, ժողովրդի բազմութիւնը, իմանալով այս մասին, գնաց Նրա հետեւից: Եվ երբ Տերը տեսավ հավաքված բազմութեանը, գթաց նրանց եւ բժշկեց հիվանդներին: Երեկոյան դեմ աշակերտները խնդրեցին Տիրոջից ժողովրդին ազատ արձակել, որպեսզի ուտելիք գտնեն: Քրիստոս նրանց պատվիրեց մարդկանց կերակրել: Սակավ էր, սակայն, ուտելիքը, եւ Տերը օրհնեց այն, ու հրաշքով առատացած հացը բավարար դարձավ, որպեսզի առաքյալները կերակրեն հավաքված ողջ բազմութեանը:

[1] «Էջմիածին», 2016, Զ, էջ 23:

Այս հրաշագործությունը աստվածային չնորհներով, տերունավանդ ուսուցումներով քաղցյալ հոգիները հագեցնելու, նաեւ գթասրտությամբ կարիքավորներին օգնելու խորհուրդն ունի, որը դարձավ կարեւոր ծառայություններից Քրիստոսի Սուրբ Եկեղեցու առաքելության: Տերը հորդորում է իր հետեւորդներին՝ հավատքը կենդանի դարձնել գործերով, աղոթքին ու պաշտամունքին զուգակցել ողորմությունն ու գթասրտությունը, կարիքի ու նեղությունների ամոքումը, որոնցով, առաքյալի խոսքի համաձայն՝ գործակից ենք Աստծուն (Ա Կորնթ. Գ 9): Այս տեսիլքով Եկեղեցու բազում մարգարեաշունչ հայրեր ու երանաչնորհ հայրապետներ, քաջ ու բարի հովիվներ, հավատքի անթիվ վկաներ ու բարեպաշտ հավատացյալներ դարեր շարունակ Քրիստոսի Եկեղեցու պատմության էջերը պատկերագրել են Աստծո խոսքի նվիրյալ քարոզությամբ եւ ողորմածության ու խնամատարության մեծագործություններով, որպեսզի մարդիկ զորանան հավատքով եւ հավատքի գործերով վկայեն Աստծո ներկայությունը մարդկության կյանքում:

Այսօր առ Աստված հավատքը փորձության է ենթարկվում, եւ մարդկային հոգիները կարծրանում են ինչպես նեղությունների եւ դժվարությունների մեջ, այնպես եւ հարստության ու չքեղության, երբ անհաղորդ են հանապազօրյա հացին կարոտյալ, ցավի ու տառապանքի մեջ ապրող մարդկանց հոգսերին: Հավատքը փորձության է ենթարկվում ծայրահեղական եւ այլ գաղափարախոսություններով, այլատյացությամբ, մոլուցքներով, գայթակղություններով, անձնակենտրոն չահերով: Ուժգնանում են աչխարհիկացման ընթացքները, խաթարվում են հոգեւոր-բարոյական ընկալումներն ու արժեքները, վտանգվում է ընտանիքի աստվածահաստատ կառույցը: Փորձել կառուցել աչխարհ առանց Աստծո, աղավաղել աստվածադիր օրենքն ու պատվիրանները, այս է ժամանակակից կյանքի չարիքի արմատը, որն առաջ է բերում տնտեսական, քաղաքական, սոցիալական, բնապահպանական ու տարաբնույթ խնդիրներ, որոնք օրեցօր խորանում են՝ սպառնալով մարդկության բնականոն կյանքին:

Այսուհանդերձ, աչխարհը չի դադարում լինել կենտրոնը աստվածային սիրո եւ խնամատարության: Տերը շարունակում է ձայնել. «Ես եմ կենաց հացը, ով դէպի Ինձ գայ, քաղց չի զգայ, եւ ով Ինձ հաւատայ, երբեք չի ծարաւի» (Յովհ. Զ 35): Տիրոջ քաղցր վարդապետությունը ճաչակածը խոնարհվում է ընկածին բարձրացնելու, մարդկանց սրտերում հույսն ու հավատքը առատացնելու, հացի բազմացման հրաչքը կրկնելու՝ աջակցելով ու մխիթարելով կարիքավորներին, հիվանդնե-

րին ու վչտացյալներին: Տերունապատվեր այս ընթացքներով, հոգեւոր եւ բարոյական արժեքները կենսագործելով է, որ բարին պիտի գորանա աշխարհում եւ հաղթահարվեն արդի մարտահրավերները: Բոլոր բարի գործերը արտահայտում են աստվածային խնամքը մարդկության ու աշխարհի հանդեպ՝ ըստ Տիրոջ խոսքի. «արքայութիւնը ներսում, ձեր մէջ է» (Ղուկ. ԺԷ 21), որի հաստատման համար Եկեղեցիներն իրենց սպասավությունն են բերում աշխարհում:

Սիրելինե՛ր, այս օրերին Մեր հոգեւոր եղբոր՝ Ֆրանցիսկոս Պապի հետ միասնական այցերով ու աղոթքներով վերստին հաստատեցինք, որ Քրիստոսի Սուրբ Եկեղեցին մեկ է աշխարհում Քրիստոսի Ավետարանի տարածման, արարչագործության հանդեպ խնամքի, համընդհանուր խնդիրներին դիմագրավելու, Աստծո ստեղծագործության փառքն ու պսակը հանդիսացող մարդու փրկության կենսական առաքելությամբ: Քրիստոսի Եկեղեցու առաքելության անբաժանելի մասն է ազգերի եւ ժողովուրդների միջեւ ամրապնդումը համերաշխության, եղբայրության ու գործակցության, որի վկայությունն է այսօր սրբազան այս Պատարագին մասնակցությունը Հայաստանում ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների՝ ասորիների, ռուսների, բելառուսների, հույների, վրացիների, հրեաների, եզդիների, քրդերի, գերմանացիների, լեհերի, ուկրաինացիների, ովքեր մեր ժողովրդի հետ եղբայրական համակեցության մեջ իրենց նպաստն են բերում մեր երկրի զորացմանն ու հասարակական կյանքի առաջընթացին:

Շնորհաչատ այս օրը գոհունակություն է Մեզ համար՝ վերստին հայտնել Մեր չնորհակալությունը Ֆրանցիսկոս Պապին եղբայրական իր այցի առիթով: Մենք եւ մեր ժողովուրդը միշտ պիտի աղոթենք Ձեզ համար, սիրեցյա՛լ եղբայր, եւ ի սեր մարդկության բարօրության ու խաղաղ կյանքի եւ Քրիստոսի Սուրբ Եկեղեցու պայծառության Ձեր ջանքերի համար: Թող Տերը պահի Ձեզ կորովաչատ, օրհնի ու հաստատուն պահպանի մեր Եկեղեցիները սիրո միության եւ գործակցության մեջ եւ պարգեւի եղբայրության վկայության նորանոր առիթներ: Ձեր ամենօրյա աղոթքներում հիշեք հայ ժողովրդին, հայոց երկիրն ու Հայ Եկեղեցին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը:

Աղոթական հոգով հայցում ենք Բարձրյալն Աստծո ամենախնամ Սուրբ Աջի պահպանությունն ու զորակցությունը պատերազմներից ու ահաբեկչություններից տուժածներին, սովի, աղքատության եւ փորձությունների մեջ գտնվողներին: Հայցում ենք մեր Տիրոջ ամենառատ չնորհները մեր կյանքին եւ համայն աշխարհին, ամեն:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՏՈՒՐԿՈՒԻ ԵՎ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԿԱՐԻ ՄԵԿԿԻՆԵՆԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(ՖԻՆԼԱՆԴԻԱ, ՀԵԼՍԻՆԿԻ, ԱՎԵՏԱՐԱՆԱԿԱՆ-ԼՅՈՒԹԵՐԱԿԱՆ ՄԱՅՐ ՏԱՃԱՐ, 20 ՄԱՐՏԻ, 2017 Թ.)[1]

«Քանպի ամենեքին որդիք Աստուծոյ էք հաւատովք ի Յիսուս Քրիստոս»
(Գաղ. Գ 26-27):

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, Ֆինլանդիայի եկեղեցու արքեպիսկոպոս Կարի Մեկկինեն,

Սիրելի՛ քույրեր ու եղբայրներ:

Քրիստոսի մեծ առաքյալներից Ս. Պողոսի այս խոսքերն արտացոլում են եղբայրական այն ջերմ եւ հյուրընկալ մթնոլորտը, որով ամենքս այսօր հաղորդակից ենք դառնում միմյանց՝ համատեղ աղոթքով: Քրիստոնեությունն իր ձեւավորման առաջին իսկ օրերից Քրիստոսին հավատացողներին ու համայն մարդկությանը կապեց եղբայրասիրության եւ միմյանց հարգելու սրբազան պատգամով՝ իբրեւ Աստծո եւ Նրա Որդու՝ Հիսուս Քրիստոսի հավատով ու սիրով միացած հոգեւոր եղբայրներ:

Այսօր փառք եւ գոհություն ենք մատուցում առ Բարձրյալ Տերը, որ կրկին առիթ ընծայեց Մեզ՝ այցելելու ձեր գեղեցիկ երկիրը՝ հրավերով Ձեր եւ Ֆինլանդիայի Օրթոդոքս եկեղեցու առաջնորդ, Կարելիայի եւ համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեոյի՝ իբրեւ մեր եկեղեցիների միջեւ հաստատված սիրո եւ եղբայրական հարաբերությունների վկայություն: Մենք խորին գոհունակությամբ ենք վերհիշում տասնե-

---

[1] «Էջմիածին», 2017, Գ, էջ 7:

րեք տարի առաջ կատարած մեր այցը Ֆինլանդիա եւ փառք ենք բարձրացնում առ Բարեգութն Աստված, որ մեր Եկեղեցիների եղբայրական հարաբերությունները չարունակում են զորանալ ու ամրապնդվել: Ի Քրիստոս սիրով Մեր օրհնությունն ու Մեր ժողովրդի ջերմ ողջույնն ենք բերում այս սուրբ տաճարում աղոթքի կանգնած բարեպաշտ հավատացյալներին, քույր Եկեղեցիների ներկայացուցիչներին, այստեղ ապրող մեր Եկեղեցու զավակներին:

Սիրելինե՛ր, Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական եւ Հայ Առաքելական Եկեղեցիները վերջին ժամանակներում են արձանագրել իրենց բարեկամական հարաբերությունները, որոնց ջերմության վկայությունն են գերաշնորհ արքեպիսկոպոս Յուկկա Պարմայի եւ Տուրկուի ներկայիս արքեպիսկոպոս Կարի Մեկկինենի այցելությունները Սուրբ Էջմիածին: Մենք հավատում ենք, որ մեր Եկեղեցիների սերտացող հարաբերությունները նոր հեռանկարներ ու հնարավորություններ են բացելու՝ միասնաբար գործելու եւ աշխարհում վկայելու մեր Տեր Հիսուս Քրիստոսի Ավետարանը, ամրապնդելու մեր երկրների ու ժողովուրդների եղբայրական հարաբերությունները, նպաստելու մարդկության խաղաղ ու բարօր գալիքի կերտմանը: Հիրավի, մի ենք մեզ ստեղծող ու նախախնամող Հայր Աստծով, մեր փրկության համար մարդեղացած, խաչված եւ հարության առած մեր Փրկիչ Հիսուս Քրիստոսով եւ մեր բոլոր մարտահրավերների ու դժվարությունների մեջ մեզ մխիթարող եւ առաջնորդող Սուրբ Հոգով:

Այսօր, երբ աշխարհը կանգնած է տնտեսական, մարդասիրական ու բնապահպանական ճգնաժամերի, ազգային-կրոնական հակամարտությունների եւ օրեցօր ավելացող անհանդուրժողականության, ահաբեկչությունների, եղեռնական ոճիրների ցավալի փաստերի առաջ, Մենք խորապես մտահոգված ենք մարդկության կյանքին սպառնացող վտանգներով, հրատապ լուծման կարոտ մարտահրավերներով, ինչպես եւ Մերձավոր Արեւելքում տիրող ծանր իրավիճակով: Այդ տարածաշրջանում իսլամական ծայրահեղական խմբավորումների կողմից սանձազերծած պատերազմական գործողությունների պատճառով նվազում է քրիստոնյաների պատմական ներկայությունը, որոնց թվում են նաեւ հայկական համայնքներն Իրաքում եւ Սիրիայում:

Հայ Եկեղեցին միջեկեղեցական եւ միջկրոնական երկխոսության ճանապարհով իր կարելին է ներդնում հակամարտությունների օջախներում խաղաղության ու կայունության ամրապնդման, մարդասիրական արժեքները հարգելու եւ ապահով ու ստեղծարար կյանքն ան-

խաթար պահելու կամքի զորացման համար, ինչպես եւ հնարավորինս օգնություն հասցնում պատերազմական իրավիճակներից տուժածներին, փախստականներին: Մեր Եկեղեցու խաղաղարար գործունեությունը ծավալվում է նաեւ Ղարաբաղյան հիմնախնդրի կարգավորման գործում: Այսօր Ղարաբաղի Մեր ժողովուրդը Ադրբեջանի կողմից հրահրվող ամենօրյա պատերազմի վտանգի ներքո, չրջափակման պայմաններում հաճախ իր զավակների արյան գնով է պաշտպանում իր ազատ կյանքը եւ անկախությունը պատմական իր հայրենիքի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության: Այս հիմնախնդրի կարգավորման գործում գնահատելի են Ֆինլանդիայի ջանքերը, որը եղել է ԵԱՀԿ Մինսկի խմբի առաջին համանախագահներից մեկը, ինչպես նաեւ այս գործընթացում ներգավված Ֆիննն դիվանագետների գործունեությունը:

Սիրելինե՛ր, Մենք մեծապես կարեւորում ենք Ֆիննն եւ Հայ Եկեղեցիների համագործակցությունը, ըստ առաքյալի խոսքի. «Եւ գլուխ ամենայնի՝ զի համամիտք իցէք, համակարիք, եղբայրասէրք...» (Ա Պետ. Գ 8): Եղբայրական այս հավատով ու սիրով է, որ այցի ենք եկել ձեզ՝ բերելով Մեր եւ հավատացյալ մեր ժողովրդի աղոթքները, մեր սրբավայրերի օրհնությունն ու մեր նահատակների բարեխոսությունը Ֆինլանդիայի հողին ու աստվածասեր ժողովրդին: Հայցում ենք, որ Աստված բարգավաճ ու բարօր պահի ձեզ, Իր չնորհի ներքո՝ Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու հոգեւոր դասը, նրա բարեջան առաջնորդներին՝ ի դեմս Ֆինլանդիայի եւ Տուրկուի արքեպիսկոպոս գերաշնորհ Կարի Մեկկինենի՝ պարգեւելով արեւշատ կյանքի երկար օրեր եւ արդյունավետ ծառայություն Տիրոջ Խոսքի անդաստանում:

Մեր հանդիպման եւ միասնական աղոթքի առիթով գնահատանքի եւ չնորհակալության Մեր խոսքն ենք ուղղում Ֆինլանդիայի Լյութերական եւ Ուղղափառ քույր Եկեղեցիներին՝ հանձինս Ձեր, սիրեցյա՛լ եղբայր, եւ Ֆինլանդիայի Ուղղափառ Եկեղեցու առաջնորդ Լեո արքեպիսկոպոսի, Ֆինլանդիայի բարեխնամ իշխանություններին մեր ժողովրդի զավակների հանդեպ դրսեւորվող բարյացակամության ու բարեկամության համար, որ արտահայտություն է մերձավորի հանդեպ տերունապատվեր սիրո պատգամի՝ վկայված Ֆիննն բարեպաշտ ժողովրդի ողջ պատմության ընթացքին եւ մարդասիրության, որն առաջնորդել է Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցուն միսիոներական առաքելության՝ աշխարհի տարբեր երկրներ:

Այս հոգենորոգ պահին Մենք աղոթք ենք բարձրացնում քաղաքական ու տնտեսական խնդիրներից ու հակամարտություններից ալեկոծվող աշխարհի խաղաղության համար, որպեսզի մարդկությունը կարողանա կառուցել իր բարօր ու ապահով ապագան: Թող Երկնավոր Տերն ամրապնդի ու զորացնի եղբայրական ազնիվ զգացումներն ու սերն Իր Սուրբ Եկեղեցում, չնորհ եւ օրհնություն բաշխի Իր Անվանը հավատացող բոլոր քրիստոնյաներին՝ ի պայծառություն Ընդհանրական մեկ եւ միասնական Սուրբ Եկեղեցու, այժմ եւ հավիտյանս. ամեն:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԿԱՐԵԼԻԱՅԻ ԵՎ ՀԱՄԱՅՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԼԵՈՅԻ ՀԵՏ ՀԱՄԱՏԵՂ ԱՂՈԹՔԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(ՖԻՆԼԱՆԴԻԱ, ՆՈՐ ՎԱԼԱԱՄԻ ՎԱՆՔ, 21 ՄԱՐՏԻ, 2017 Թ.)[1]

«Փութալ պահել միմիաբանութիւն հոգւոյն յօդիւ խաղաղութեան, մի մարմին եւ մի հոգի, որպէս եւ կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ»
(Եփես. Դ. 3-4):

Սիրեցյա՛լ եղբայր ի Քրիստոս, Կարելիայի եւ համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեո,

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ:

Քրիստոնեական միության մասին աստվածաշնչյան այս պատգամով այսօր ողջունում ենք ձեզ բոլորիդ՝ բերելով ձեզ օրհնություն Բիբլիական Արարատի լանջերին աստվածային տեսիլքով 1700 տարի առաջ հաստատված Հայոց Եկեղեցու հոգեւոր կենտրոնից՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից: Ա՛ռ Աստված գոհաբանությամբ է լցված Մեր հոգին՝ եւս մեկ անգամ, 13 տարի անց, այցելել Ֆինլանդիայի օրհնյալ երկիր եւ աղոթք բարձրացնել երկինք մեր հոգեւոր եղբոր՝ Կարելիայի եւ համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեոյի եւ նրա հավատացյալ հոտի հետ: Քաղցրությամբ ենք հիշում Ձեր այցը, սիրեցյա՛լ եղբայր, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին 2006 թվականին: Մենք, ինչպես եւ այսօր, միասնաբար աղոթեցինք հանուն մեր Եկեղեցիների պայծառության, մեր ժողովուրդների բարօրության, աշխարհի խաղաղության եւ մարդկության ապահով կյանքի:

Սիրելի՛ հավատակից քույրեր եւ եղբայրներ, այս օրերին Քրիստոսի Եկեղեցին, Մեծ Պահքի ընթացքում, նախապատրաստվում է մեր Տիրոջ հրաշափառ ու հաղթական Հարությանը: Եվ ահա դեպի Ս. Զա-

[1] «Էջմիածին», 2017, Գ, էջ 11:

տիկ այս ճամփորդութեան ընթացքին մենք եւս մեկ անգամ առիթ ունենք Ֆինլանդիայի աստվածօրհնյալ հողի վրա աղոթքով միասնաբար խորհելու քրիստոնեական միութեան ու սիրո վկայութեան մասին՝ իբրեւ պատգամ առնելով Պողոս առաքյալի՝ Եփեսացիներին ուղղված խոսքերը. « Փութալ պահել զմիաբանութիւն հոգւոյն յօղիւ խաղաղութեան, մի մարմին եւ մի հոգի, որպէս եւ կոչեցարուք ի մի յոյս կոչման ձերոյ»: Փորձութիւններով ու նահատակութիւններով լեցուն իր պատմութեան ողջ ընթացքում Հայ Եկեղեցին մշտապես իրագործել է քրիստոնեական միութեան եւ եղբայրսիրութեան պատգամը՝ չեշտելով «միութիւն ի կարեւորս եւ սէր յամենայնի» քրիստոնեական սկզբունքը:

Աշխարհն այսօր կքած է բազմաթիվ խնդիրների եւ մարտահրավերների ծանրութենից, դրանց լուծման հրամայականների առաջ նորանոր քայլեր են գործադրվում՝ համատեղելու տարբեր պետութիւնների, ժողովուրդների եւ միջազգային կառույցների ջանքերը՝ հանուն համերաշխ, արդար եւ ապահով աշխարհի: Այսօր նահանջ են ապրում հոգեւոր-բարոյական արժեքները, անտեսվում՝ քրիստոնեական ավանդական ընկալումները, որոնց պահպանման համար հրամայական է միավորումը Եկեղեցիների ջանքերի՝ Ավետարանի ճշմարտութեամբ շաղախելու մարդկանց կյանքը: Մենք ամենքս, իբրեւ քրիստոնյաներ, կոչված ենք մեկ հույսի, որ է Քրիստոսի բերած փրկութիւնը, եւ միայն այս միասնական հույսի, հավատի եւ սիրո մեջ կարող ենք զգալ մեկս մյուսի ցավն ու դժվարութիւնները, միայն այս կերպ կարող ենք հարատեւել Հիսուս Քրիստոսի պարգեւած հաղթական հարութեան մեջ: Մեր օրերում, ինչպես Մերձավոր Արեւելքում, այնպես եւ աշխարհի տարբեր կողմերում ծայրահեղական ուժերի կողմից սանձազերծված պատերազմական գործողութիւնները ու ահաբեկչութիւնները աշխարհը կանգնեցրել են հումանիտար աղետի եւ բազում խնդիրների առաջ: Նման ցավալի իրողութիւնները պահանջում են բոլոր հավատացյալների ջանքերի եւ աղոթքների համատեղում, միասնական մոտեցում՝ փոխըմբռնման ոգին ու համագործակցութեան ուղիները զորացնելու եւ կրոնական քողով սքողված հակամարտութիւններն ու դրանցից ծնվող հասարակական աղետները կանխարգելելու համար:

Հայ Եկեղեցին պատմութեան ընթացքում մշտապես իր առաքելութեան կարեւորագույն մասն է համարել ժողովուրդների միջեւ խաղաղ համակեցութեան, փոխհանդուրժողականութեան ու փոխըմբռնման հաստատմանն ուղղված գործընթացներին իր մասնակցութիւնը:

Տասնամյակներ ի վեր անհանգիստ է նաեւ մեր տարածաշրջանը: Լեռնային Ղարաբաղում մեր ժողովուրդը չարունակ ենթարկվում է Ադրբեջանի ռազմական հարձակումներին: Պաշտպանելով հայրենի երկրում ազատ ապրելու իր իրավունքը՝ մեր ժողովուրդը ձգտում է ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահների միջնորդական ջանքերով հասնել Ղարաբաղյան հարցի խաղաղ կարգավորմանը: Ցավոք, Ադրբեջանը ռազմատենչ հայտարարություններով, զինուժի սադրիչ գործողություններով չի թաքցնում խնդիրը ռազմական ճանապարհով լուծելու իր ցանկությունը: Հակամարտության առաջին օրվանից Հայ Եկեղեցին, հավատարիմ իր խաղաղասիրական առաքելությանը, երկխոսություն է սկսել Ադրբեջանի հոգեւոր առաջնորդների հետ: Իբրեւ պատերազմի եւ արհավիրքի ցավը կրող ժողովուրդ՝ Մեր ցանկությունն է, որ չուտափույթ խաղաղություն հաստատվի ողջ աշխարհում, եւ չլինեն սգացող այրիներ, որբացած զավակներ եւ որդեկորույս մայրեր, որպեսզի ամենքն ապրեն ապահով, խաղաղ եւ երջանիկ կյանքով:

Այս մտածումներով եւ մաղթանքով Մեր ջերմեռանդ աղոթքն ենք վերառաքում առ Բարձրյալն Աստված՝ խնդրելով, որ օրհնի Ֆինլանդիայի Հանրապետությունը եւ այս հյուրընկալ երկրի բարեսիրտ ժողովրդին՝ չնորհելով հարատեւ առաջընթաց եւ բարօրություն:

Մեր այցը, սիրեցյա՛լ եղբայր, գեղեցիկ առիթ է ընծայում Մեզ Մեր սրտի ջերմ զգացումները եւ չնորհակալությունը հայտնելու Ձեզ եւ հավատավոր Ձեր հոտին՝ Ֆինլանդիայում ապրող մեր ժողովրդի զավակների հանդեպ դրսեւորած ազնիվ ու բարյացակամ վերաբերմունքի համար:

Թող Տերն օժտի մեզ Իր սիրո չնորհով ու զորացնի ճշմարտության Իր Հոգով եւ միության մեջ հույսով ամուր պահպանի ու առաջնորդի Իր Սուրբ Եկեղեցին:

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՖԻՆԼԱՆԴԻԱՅԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՕՐԹՈԴՈՔՍ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԴՊՐՈՑՈՒՄ

(ՖԻՆԼԱՆԴԻԱ, ՅՈՒՅՆՍՈՒ, 22 ՄԱՐՏԻ, 2017 Թ.)[1]

Սիրեցյա՛լ հոգեւոր եղբայր ի Քրիստոս, արքեպիսկոպոս Լեո,
Բարձրաշնո՛րհ, գերաշնորհ եւ հոգեշնորհ հայրեր,
Սիրելի՛ ուսանողներ ու ներկաներ:

Մեծ ուրախություն է Մեզ համար՝ հանդես գալ Արեւելյան Ֆինլանդիայի համալսարանի Օրթոդոքս աստվածաբանական այս դպրոցի պատկառելի լսարանի առաջ: Ֆինլանդիայի քույր Եկեղեցիներին մեր այցելության այս վերջին օրն ահավասիկ եզրափակվում է աստվածաբանական մտքի ու կրթության այս օջախում, որտեղ կերտվում են Քրիստոսի խոսքի ու Ավետարանի սպասավորները:

Ա. Մեր զեկույցի թեման խորագրված է՝ «Կա՞ արդյոք իսլամական աշխարհի վերաբերյալ հայկական մասնավոր ընկալում». Հայ Եկեղեցու եւ հայ ժողովրդի ողջ պատմությունը, ըստ էության, հավատի համար վկայության մի օրինակ է: Դեռեւս քրիստոնեությունն ընդունելուց տասներկու տարի անց՝ 313 թ., ըստ քրիստոնեական պատմագրության հայր Եվսեբիոս Կեսարացու, հայերը մարտնչեցին ու պայքարեցին իրենց քրիստոնեական հավատի համար ընդդեմ Արեւելյան Բյուզանդական կայսրության համագահակալ Մաքսիմիանոս Դաժայի: Այնուհետեւ, ողջ Դ ու Ե դարերն անցան հավատի վկայության ու քրիստոնեական արժեքների պաշտպանության համար պայքարի հունով: Եվ այդ իմաստով վճռորոշ եղավ 451 թվականը, երբ Հայ Եկեղեցին ու ժողովուրդը, իբրեւ մեկ հոգի ու մեկ մարմին, ճակատամարտ տվեցին կրոնափոխություն պարտադրող զրադաշտական պարսից զորքի դեմ Ավարայրի դաշտում: Պատմական այս իրադարձությունը

[1] «Էջմիածին», 2017, Գ, էջ 14:

հատկորոշվեց նաեւ նույն այդ պայքարի արձանագրող պատմիչ Եղիշեի բանաձեւով. «քրիստոնեությունը մեր մաշկի գույնն է»:

Բ. Ահա քրիստոնեական հավատի համար այսպիսի պատմությամբ եւ փորձառությամբ է, որ հայ ժողովուրդն առաջին անգամ առերեսվեց է դարում դեռ նոր-նոր ձեւավորված իսլամական աշխարհի հետ: Կարեւոր է նշել, որ հենց առաջին տարիներից Հայ Եկեղեցու գահակալներն ու իշխանները կարողացան հանդուրժողականության եւ փոխճանաչման համաձայնագիր կնքել արաբների հետ՝ այդպիսով Քրիստոնյա Արեւելքում տալով իսլամական աշխարհի հետ համակեցության առաջին օրինակներից մեկը: Կարեւոր է հատկապես պատմական այն փաստը, որ, իսլամի հիմնադիր Մուհամեդ մարգարեից սկսած, Երուսաղեմի Հայոց պատրիարքությանը արաբ խալիֆաները պարբերաբար տրամադրել են կրոնական ազատ պաշտամունքի եւ կալվածքների տնօրինման առանձնաշնորհումներ եւ հրովարտակներ: Մեր ժողովուրդը պատմության ընթացքում դարավոր փոխհարաբերություններ է ունեցել իսլամական հարեւան պետությունների հետ եւ երբեմն եղել նաեւ իսլամական տերությունների գերիշխանության ներքո: Այդ ժամանակաշրջանում համակեցությունը ոչ միշտ է անցել անվրդով ընթացքով: Այն դեպքում, երբ իսլամի բուն ոգին խեղաթյուրվել է եւ քաղաքականացվել՝ ծառայելով չահադիտական նպատակների, հայ ժողովուրդն ապստամբել է՝ նույն Ե. դարի քրիստոնեական պայքարի «վասն հավատոյ եւ վասն հայրենեաց» կարգախոսի համաձայն: Եվ այստեղ է, որ մենք կարեւոր ենք համարում անելու առաջին ամփոփումը: Իսլամի հետ երկխոսության ու համակեցության խախտման եւ վտանգման առաջին կարեւոր պատճառը իսլամի քաղաքականացումն է, նրա կրոնական բուն ոգու եւ խաղաղասիրական դրսեւորման աղավաղումը: Ինչպես քրիստոնեությունը, այնպես էլ իսլամը միատարր չէ՝ ներառելով բազմաթիվ հարանվանություններ ու շարժումներ՝ երբեմն հոգեւորի ու կրոնականի մասին բավական տարբեր մոտեցումներով ու մեկնաբանություններով: Եվ շատ հաճախ, ցավոք, նմանատիպ բազմազանությունը բերում է իսլամի մասին սխալ պատկերացումների եւ կարծրատիպերի առաջացման: Քաղաքական ու պատմական զարգացումների հետեւանքով իսլամի հետ առնչությունները բավականին տեւական են եղել հայ ժողովրդի կյանքում: Այդ հարաբերություններ ընթացքում առաջ են եկել նաեւ իսլամ-քրիստոնյա երկխոսության առանձին երեւույթներ, երբ հայ եւ իսլամ աստվածաբանների կողմից կազմակերպվում էին աստվածաբանական բանավեճեր ու քննարկում-

ներ: Այդ երեւույթն արդեն սկիզբ առավ ԺԱ դարից, երբ հայ նշանավոր իշխան, աստվածաբան ու մատենագիր Գրիգոր Մագիստրոսն ու մուսուլման գիտնական Մանուչեն իրենց բանավեճի արդյունքում միջնադարյան Հայաստանում ստեղծեցին քրիստոնեության եւ իսլամի միջեւ կրոնական բանավեճի ու երկխոսության մշակույթը: Այս ամենը, իհարկե, ուներ խիստ չեշտված ջատագովական բնույթ, սակայն, իբրեւ միջնադարյան իսլամական հասարակարգում առաջացած իրողություն, առաջատար երեւույթ էր: Դրան նպաստում էր նաեւ հայ քրիստոնյա եւ իսլամ բնակչության դարավոր համակեցության գործոնը: Այսպես, օրինակ, մի շարք խոշոր քաղաքներում՝ մայրաքաղաքներ Դվինում եւ Անիում, Սպահանում եւ Հալեպում եկեղեցիներն ու իսլամական մզկիթները գործել են կողք կողքի, նույնիսկ՝ միեւնույն թաղամասում: Այսօր էլ հայաստանի մայրաքաղաք Երեւանի կենտրոնական մասում գտնվում է Կապույտ մզկիթը, որը վերջին տարիներին կրկին նորոգվել է եւ Հայաստանում բնակվող մուսուլմանների համար ծառայում է որպես աղոթատեղի, պաշտամունքի վայր: Նաեւ իսլամական բարեկամ պետություններում իշխանությունները բարեհոժարությամբ արտոնում են հայկական եկեղեցիների, հայ համայնքների գործունեությունը, հողատարածք եւ օժանդակություն են տրամադրում նոր եկեղեցիների կառուցման համար: Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ իսլամի կրոնական-աստվածաբանական ճիշտ ընկալումը, պատմական փորձառության ծիրից ներս, կարող է նպաստավոր հող ստեղծել՝ առողջ, հանդուրժողական կրոնական երկխոսության ու համագործակցության համար՝ քրիստոնեության եւ իսլամի միջեւ:

Գ. Մեր այս զեկույցի շրջանակներում մենք կամենում ենք անդրադառնալ մի կարեւոր իրողության եւս, որ է՝ պատմության ընթացքում իսլամի ազգայնացման գործընթացը: Ջեզ ծանոթ են այն ցավալի ու աղետալի հալածանքները, որ հայ ժողովուրդն ու Հայոց Եկեղեցին կրեցին Օսմանյան կայսրության մեջ հատկապես ԺԹ դարավերջին եւ Ի դարասկզբին: 1908 թ. երիտթուրքական հեղաշրջումից հետո Օսմանյան Թուրքիայում հաստատվեցին, այսպես կոչված, հանրապետական կարգեր: Իսլամի կրոնական բովանդակությունն այս ժամանակաշրջանում ամբողջությամբ ազգայնացվեց՝ ծառայելով իբրեւ կրոնա-քաղաքական ենթահող երիտթուրքական իշխանությունների համար՝ Մեծ Թուրան կամ Թյուրքալեզու բոլոր ազգերին մեկ տերության մեջ համախմբելու զավթողական ծրագրի շրջանակներում: Կրոնն իբրեւ քաղաքական շղարշ օգտագործելու այս արատավոր մոտեցման անմի-

ջական հետեւանք դարձավ Ի դարի առաջին ցեղասպանությունը՝ հայ ազգաբնակչության կոտորածը Թուրքիայում՝ առաջին աշխարհամարտի տարիներին ու դեռ դրանից հետո էլ՝ 1915- 1923 թթ.: Հայերը կոտորվում էին քրիստոնյա եւ հայ լինելու պատճառով: Այս երեւույթին ուղիղ համեմատական էր քաղաքականացված կրոնական այն մոտեցմանը, որով իրենց ծածուկ հաշվարկներն էին իրականացնում երիտթուրքական իշխանությունները: Եվ իր հերթին, ուղղակի հակասության մեջ էր իսլամական այն երկրների, մասնավորապես Մերձավոր Արեւելքում, եղբայրական մոտեցման հետ, որի արդյունքում Ցեղասպանությունից հետո տասնյակ հազարավոր գաղթական հայեր ապաստան գտան Սիրիայի, Պարսկաստանի, Լիբանանի, Իրաքի, Եգիպտոսի եւ իսլամական աշխարհի այլ երկրների ժողովուրդների եւ իշխանությունների կողմից: Կարող ենք վստահաբար նշել, որ պատմական այս օրինակներն իրար հակադրում են իսլամի սխալ, քաղաքականացված ընկալումը դրա մյուս՝ կրոնական բարեպաշտությամբ ու Ղուրանի պատվիրանների գործադրմամբ ապրված իսլամական մշակույթին: Այս եղբայրական ջերմ վերաբերմունքի արդյունքում ձեւավորվեցին եւ առ այսօր խաղաղ ու բարօր կյանք ունեն Մերձավոր Արեւելքի մեր համայնքները, որոնցից Սիրիայինը եւ Իրաքինը ներկայում դիմագրավում են իսլամական կրոնականծայրահեղական խմբավորումների կողմից սանձազերծած պատերազմի արհավիրքները: Արաբական շատ երկրների հյուրընկալ հողում հայորդիները կարողացան իրենց նպաստը բերել տեղի հասարակական-քաղաքական, մշակութային, տնտեսական ու գիտական կյանքի զարգացմանը՝ շատ հաճախ ղեկավարել պատասխանատու պետական ու քաղաքական պաշտոններ: Այսօր էլ Մերձավոր Արեւելքում հայ ժողովրդի զավակները շարունակում են ապրել նույն եղբայրական մթնոլորտում՝ իրենց մուսուլման հայրենակիցների հետ օրավուր զորացնելով այդ երկրներում կրոնական հանդուրժողականության եւ երկխոսության ոգին: Եվ այս առումով, անշուշտ, դատապարտելի են քրիստոնեական ու իսլամական կրոնների դարավոր խաղաղ համակեցությունը վտանգող քաղաքականացված ծայրահեղ իսլամական ռազմական խմբավորումների ու միավորումների գործողությունները Մերձավոր Արեւելքում, որոնք սպառնում են իսպառ ոչնչացնել թե՛ քրիստոնյա-մուսուլման համայնքների համակեցության դարավոր ավանդույթը եւ թե՛ քրիստոնեական պատմական ներկայությունը տարածաշրջանում:

Դ. Ժամանակակից աշխարհում, երբ ակտիվ կերպով զարգանում ու զորանում են միջեկեղեցական ու միջկրոնական երկխոսությունները, տարբեր կրոնների ու կրոնական մշակույթների միջեւ առավել կարեւորվում են համընդհանուր գործակցության եզրերը, ի հակակշիռ առկա աստվածաբանական տարբերությունների, Իսլամի հետ երկխոսության ու համակեցության հայ քրիստոնեական պատմական փորձառությունը կարող է մեծ նպաստ բերել: Պատմության նորագույն ժամանակաշրջանում Հայ Եկեղեցին, իսլամական աշխարհում սփռված իր տարբեր համայնքներով ու գաղութներով, միշտ էլ ակտիվ մասնակցություն է ունեցել միջկրոնական, հատկապես իսլամ-քրիստոնեություն երկխոսության զարգացմանը: Հատկանշական են Մեր-ձավոր Արեւելքի մի շարք երկրների իսլամ կրոնական առաջնորդների ու ղեկավարների այցերը Հայաստան՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, Հայոց Եկեղեցու նվիրապետների փոխադարձ այցելություններն իսլամական աշխարհի տարբեր կրոնապետերին ու ղեկավարներին: Կարեւոր է այս առումով նաեւ այն, որ ներկայումս Արցախա-Ադրբեջանական զինված հակամարտության չրջանակներում մեր կողմից, մեր գահակալության առաջին իսկ օրերից սկսած (2000 թ., 24 նոյեմբեր), ԱՊՀ միջկրոնական խորհրդի չրջանակներում, ինչպես նաեւ Ռուս Ուղղափառ Եկեղեցու նվիրապետների միջնորդությամբ պարբերաբար կազմակերպվել են եռակողմ հանդիպումներ Կովասի մուսուլմանների հոգեւոր առաջնորդի հետ: Այդ հանդիպումներում ընդգծվել է, որ հակամարտությունը կրոնական բնույթ չի կրում, եւ հորդոր է ուղղվել հակամարտող կողմերին՝ զերծ մնալու կրոնական թշնամանքի որեւէ դրսեւորումից ու խաղաղ բանակցությունների ճանապարհով հասնել դրա լուծմանը:

Ե. Վերոբերյալ պատմական օրինակներն ու վերլուծությունները մեզ թույլ են տալիս իսլամի ընկալման համայնապատկերի մեջ կատարելու հետեւյալ եզրափակիչ դիտարկումները.

1. Կրոնական-բարեպաշտական ճշմարիտ ապրումն է այն միակ ենթահողը, որի վրա կարող է հաստատվել առողջ ու կառուցողական երկխոսությունը քրիստոնեության եւ իսլամի միջեւ:

2. Ներկա ժամանակաշրջանում կրոնական տարբեր հակամարտությունները, որոնց կենտրոնում իսլամի վերաբերյալ ծայրահեղ մեկնություններն է, արդյունք են իսլամական կրոնական մշակույթի եւ սկզբունքների կեղծ ու քաղաքականացված մոտեցումների:

3. Իսլամական եւ քրիստոնեական աչխարհների համակեցության արդի խնդիրը պահանջում է տարբեր քրիստոնյա ժողովուրդների, մասնավորապես Մերձավոր Արեւելքում ապրող քրիստոնեական եկեղեցիների՝ իսլամի հետ ունեցած համակեցության եւ երկխոսության պատմության մանրակրկիտ ուսումնասիրություն: Միայն այդ կերպ է հնարավոր առանձին, մասնավոր պատկերացումներից գնալու դեպի իսլամի հետ համակեցության միասնական եւ ընդհանուր պատկերի:

4. Վերջին տասնամյակներում Մերձավոր Արեւելքի եւ աֆրիկյան երկրներից միլիոնավոր ներգաղթյալների ներկայությունը եվրոպական պետություններում կենսական անհրաժեշտություն է դարձնում ներհասարակական երկխոսությունը հյուրընկալ ժողովրդի եւ տվյալ երկրում ձեւավորված մուսուլման համայնքների միջեւ՝ ապահովելու համար փոխըմբռնումն ու համերաշխ համակեցությունը եւ իսլամական համայնքների՝ օրինահարգությամբ ու օրինապահությամբ կեցությունը հյուրընկալ երկրներում՝ հիմնված քաղաքացիական իրավունքի եւ խղճի ազատության սկզբունքի վրա:

5. Արդի տեղեկատվության եւ լրատվության անընդհատ զարգացող պայմաններում անհրաժեշտ է իսլամի մասին ունենալ իրական, մասնագիտական ու ճշգրիտ պատկերացում՝ խուսափելու համար շատ հաճախ մակերեսային տեղեկատվության ստեղծած կարծրատիպերից ու մոտեցումներից:

Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՊԱՏԳԱՄԸ ԲԵՌԼԻՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԱՐԱՐՈՂՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

(21 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ, 2017 Թ.)[1]

Հոգեւո՛ր եղբայրներ ի Քրիստոս,

Գերմանիո իշխանութեանց մեծարգո՛ ներկայացուցիչներ,

Սիրելի՛ քոյրեր եւ եղբայրներ:

Աղոթքի այս պահին Մենք գոհունակ սրտով փառք ենք տալիս Աստծուն, որ առիթը չնորհեց մեզ Բեռլինի պատմական այս Մայր Տաճարում համախմբվելու եւ համատեղ աղոթքի ներշնչումով խորհրդածելու աշխարհում քրիստոնեութեան, ի մասնավորի՝ Մերձավոր Արեւելքում մեր քրիստոնյա եղբայրների ու քոյրերի վիճակի մասին՝ իբրեւ բնաբան ունենալով Տեր Հիսուս Քրիստոսի կողմից մեզ տրված Նոր Օրենքը՝ «երանիները» (Մտթ. ե 2-12): Արդի աշխարհում, մարդկային թշվառութեանց ու տառապանքների, հալածանքների ու հասարակական աղետների պայմաններում որքա՜ն ավելի կարեւոր ու կենսական են հնչում Լեռան բարձունքից արտասանված Տիրոջ անանց այս խոսքերը…

Քրիստոնեութեան տարածման առաջին իսկ օրերից երանիներն ընկալվել են իբրեւ Քրիստոսի ու քրիստոնյայի նմանութեան, Հիսուս Քրիստոսին օրինակելու եւ Նրա գծած ճանապարհով ընթանալու ուղեցույց: Արդի մտածողութեամբ՝ երանիներն, ասես, յուրաքանչյուր քրիստոնյայի անձնագիրն են, փաստաթուղթը, որով քրիստոնյան իր կյանքում ու գործերի մեջ ճանաչվում է, նույնացվում՝ իբրեւ Քրիստոսի հետեւորդ: Արեւելյան Ուղղափառ Եկեղեցիները, եւ, ընդհանրապես քրիստոնեական ողջ աշխարհը, հենց այս հետեւողութեամբ, երանիների տված պատգամի լույսի ներքո են կառուցել հավատի

[1] «Էջմիածին», 2017, ԺԷ, էջ 15:

իրենց հոգեւոր տունը՝ նմանվել ու օրինակել երկնավոր Վարդապետին՝ իբրեւ հոգով աղքատ, իբրեւ սգավոր, իբրեւ արդարության քաղցն ու ծարավն ունեցող, իբրեւ ողորմած, իբրեւ սրտով մաքուր, իբրեւ խաղաղարար, եւ վերջապես՝ իբրեւ արդարության ու Տիրոջ անվան համար հալածվող: Մեր Եկեղեցիների պատմությունը, մարտիրոսագրության ու հավատի՝ երբեմն աներեւակայելի սխրանքների առկայությամբ, փաստել է Հիսուսի կողմից տրված այս խոստման ու պատգամի հանդեպ անմնացորդ հավատարմությունը: Մենք աղքատացել ենք հոգով՝ ապաշխարության ու աղոթքի միջոցով չարունակ փորձելով հարստանալ երկնքի արքայության գանձերով, սգացել ենք՝ անմռունչ աղոթելով աշխարհի վերափոխման ու չարիքի վերացման համար, մեզ պատճառված վշտերի ու տառապանքների համար, մշտապես բարձրաձայնել ենք արդարության վերահաստատման պահանջը ու մաքառել հանուն արդարության վերականգնման՝ արդարության ու Տիրոջ անվան համար հալածվելիս անգամ չդադարելով խաղաղության հաստատմանն ուղղված աղոթական ու գործնական քայլերը:

Սիրելի՛ քույրեր եւ եղբայրներ, Եվրոպայում Ռեֆորմացիայի 500-ամյա հոբելյանի տոնախմբությանց չրջագծում մեր հոգեւոր մեկտեղման այս պահին, եկեք նախ հոգու աղոթական զգացողությամբ ելնենք Գալիլիայի ծովակին մերձակա Լեռան բարձունքին, ծնկենք Տեր Հիսուսի ոտքերի առաջ, եկեք մրմունջով ու աղոթքի՛ն հատուկ լեզվով այսօրվա մեր եղբայրների ու քույրերի համար նորովի կրկնենք Երանիների պատգամը.

Երանի՛ բոլոր նրանց, ովքեր նյութական ու մարմնական աղքատության մեջ չեն մոռանում հոգեւոր հարստության մասին՝ մշտապես ձգտելով երկնաքաղաքացիության:

Երանի՛ բոլոր նրանց, որ չեն մոռանում տառապյալներին ու հալածվողներին՝ իրենց սրտով կարեկցելով եւ իրենց ձեռքերով բարձրացնելով նրանց իրենց դժվարություններից:

Երանի՛ բոլոր նրանց, ովքեր ամեն անձի՛ մեջ են գտնում Աստծուն՝ մոտենալով Նրան ու իրականություն դարձնելով Տիրոջ պատգամը. «Այս է իմ պատուէրը, որ սիրէք միմեանց, ինչպէս որ ես սիրեցի ձեզ» (Հովհ. ԺԵ 12):

Երանի՛ բոլոր նրանց, ովքեր խաղաղություն են հաստատում աշխարհում՝ ի խնդիր մարդկային հասարակության մեջ աստվածապարգեւ արժեքների տարածման ու պահպանման:

Երանի՛ բոլոր նրանց, ովքեր անդադրում աղոթում ու տքնում են քրիստոնյաների միջեւ միութեան հաստատման ու աշխարհում կրոնական հանդուրժողականութեան ամրապնդման համար:

Երանի՛ նրանց, որովհետեւ նրանք բոլորն էլ Տիրոջ առաքյալներն ու աշակերտներն են, օրինակողները երկնավոր Վարդապետի կյանքի եւ գործերի:

Երանիների պատգամը, երբեւէ եւ առավել եւս մեր օրերում, չի փոխվել. այն միշտ մեր առաջ բացում է սիրո ու աստվածանմանութեան ուղին: Մեր օրերում, երբ Մերձավոր Արեւելքում, կրոնական անհանդուրժողականութեան ու բախումների փաստերը դարձել են այնտեղ ապրող անմեղ մարդկանց կյանքի ու առօրյայի անբաժան մաս, երբ կրոնական ատելութեան հողի վրա սպանութիւններն ու հալածանքները դարձել են կրոնական ծայրահեղականների գաղափարախոսութիւն, երբ հազարամյակների կրոնամշակութային արժէքների ոչնչացումն ու քրիստոնեութեան բնօրաններ հանդիսացող տեղավայրերից իրենց բնիկների բռնի արտագաղթն իրականացվում է կրոնի պատգամների խեղաթիւրված ու եղծված հիմնավորմամբ, երանիները կրկին ու կրկին մեզ առիթ են տալիս ամենքիս, անկախ կրոնադավանական պատկանելութիւնից ու քաղաքական հայացքների տարբերութիւնից, վերանորոգելու մեր պատրաստակամութիւնը՝ Տեր Հիսուս Քրիստոսի մատնանշած երանութեան ու սրբութեան ուղին համատեղ անցնելու համար:

Սիրելինե՛ր, աղոթենք միասին՝ Տիրոջ հրավերն արժանավայել ընդունելու եւ նրա մատնանշած սրբութեան ուղին անցնելու համար: Այն ուղղված է մեզ ամենքիս՝ Մերձավոր Արեւելքում, թե՛ Եվրոպայում, Ամերիկյան մայրցամաքում, թե՛ Հեռավոր Արեւելքում. ամենքս անձնապես կոչված ենք տարածողներն ու ամրապնդողները լինելու Տիրոջ այս նոր օրենքի, օրենք, որ արձանագրված է ոչ թե քարեղեն, այլ հոգեւոր տախտակների վրա՝ մարդկանց հոգիներում: Թող Տիրոջ չնորհները մարդկանց սրտերում արգասավորվեն Իր խոսքի համաձայն՝ մեկին երեսուն, մեկին վաթսուն եւ հարյուր այսօր եւ միշտ. ամեն:



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԵՎ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՖՐԱՆՑԻՍԿՈՍ ՊԱՊԻ ՀԱՄԱՏԵՂ ՀՈԳԱԿԱԳԻՐԸ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆՈՒՄ

(26 ՀՈՒՆԻՍԻ, 2016 Թ.)[1]

Այսօր համայն հայության հոգեւոր կենտրոն Սուրբ Էջմիածնում, մենք՝ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ Ֆրանցիսկոս Պապը, ընծայում ենք մեր մտքերը եւ սրտերը որպես չնորհակալության տուրք Ամենակարողին՝ պայքարով քայքայված եւ սփոփանքի ու հույսի ծարավով լեցուն աշխարհում չարունակելու եւ մեծացնելու հավատի ու սիրո սերտ կապերը Հայոց Եկեղեցու եւ Կաթոլիկ Եկեղեցու միջեւ՝ փրկության ավետարանական ուղերձի իրենց համընդհանուր վկայությամբ:

Մենք փառաբանում ենք ամենասուրբ Երրորդությանը՝ Հորը, Որդուն եւ Սուրբ Հոգուն, Բիբլիական Արարատի երկրում մեկտեղվելու հնարավորությունը մեզ ընձեռելու համար, որը կանգուն է որպես վկայություն, որ Աստված է միշտ մեր պաշտպանությունն ու փրկությունը:

Գոհունակությամբ ու հոգեւոր ուրախությամբ ենք անդրադառնում, որ 2001 թվականին քրիստոնեությունը Հայաստանում պետական կրոն հռչակման 1700-ամյակի առիթով Հայաստան այցելեց Սուրբ Հովհաննես-Պողոս Բ Պապը՝ որպես Հայ եւ Կաթոլիկ եկեղեցիների եղբայրական ջերմ հարաբերությունների պատմության նոր էջի վկայություն: Մենք երախտապարտ ենք, որ չնորհն ենք ունեցել միասին լինելու Հռոմի Սուրբ Պետրոսի Մայր տաճարում, հանդիսավոր պատարագի ժամանակ՝ 2015 թ., ապրիլի 12-ին, որտեղ մենք մեր հանձնառությունն արտահայտեցինք հակադարձելու բռնության ու անհանդուրժողականության ցանկացած դրսեւորում՝ վերակոչելով այն, ինչ արդեն հաս-

[1] «Էջմիածին», 2016, Զ, էջ 31:

տատվել էր Հովհաննես - Պողոս Բ-ի եւ Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի կողմից ստորագրված համատեղ հայտարարութեան մեջ, որ «մեկուկես միլիոն հայ քրիստոնյաների բնաջնջումն ընդհանրապես ընկալվում է իբրեւ Ի դարի առաջին ցեղասպանութիւն» (Համատեղ հայտարարութիւն, Գարեգին Բ եւ Հովհաննես - Պողոս Բ, 27 սեպտեմբերի, 2001 թ.):

Փառք Բարձրյալին, որ այսօր քրիստոնեական հավատը կենսունակ իրականութիւն է Հայաստանում, եւ Հայոց Եկեղեցին իր լիարժեք առաքելութիւնն է իրականացնում՝ եկեղեցիների միջեւ տիրող համագործակցութեան եղբայրական ոգով նեցուկ լինելով հավատացյալներին՝ զորակից, արդար եւ խաղաղ աշխարհի կերտման գործում: Ցավոք, մենք վկաներ ենք մեր աչքերի առաջ տեղի ունեցող մի մեծ ողբերգութեան՝ անթիվ- անհամար անմեղ մարդկանց սպանութիւնների, Մերձավոր Արեւելքում եւ աշխարհի այլ ծագերում էթնիկ, տնտեսական, քաղաքական եւ կրոնական հիմքերի վրա զարգացող չարունակական բնույթի հակամարտութիւններով թելադրված տեղահանումների կամ պարտադրված ցավալի ու անորոշ աքսորների: Այդ ամենի արդյունքում կրոնական եւ էթնիկ փոքրամասնութիւնները դարձել են հալածանքների եւ դաժան վերաբերմունքի թիրախ՝ այն առումով, որ սեփական կրոնական համոզմունքի համար տառապելը դարձել է ամենօրյա իրականութիւն: Նահատակները պատկանում են բոլոր եկեղեցիներին, եւ նրանց տառապանքը «արյան էկումենիզմ» է, որը անդրանցնում է քրիստոնյաների միջեւ առկա պատմական բաժանումները՝ մեզ բոլորիս կոչելով նպաստելու Քրիստոսի առաքյալների տեսանելի միասնականութեան: Մենք Սուրբ Առաքյալների՝ Պետրոսի եւ Պողոսի, Թադեոսի եւ Բարդուղիմեոսի բարեխոսութեամբ, միասնաբար աղոթում ենք, որպեսզի սրտերի փոփոխութիւն տեղի ունենա բոլորի մեջ, նրանց, ովքեր գործում են այսպիսի հանցանքներ եւ նրանց, ովքեր իրենց դիրքի չնորհիվ կարող են կանգնեցնել բռնութիւնները: Մենք հորդորում ենք ազգերի առաջնորդներին՝ ունկնդրելու միլիոնավոր մարդկային արարածների կոչին, ովքեր խաղաղութիւն եւ արդարութիւն են տենչում աշխարհում, ովքեր հարգանք են պահանջում իրենց աստվածատուր իրավունքների նկատմամբ, ովքեր անհապաղ կարիք ունեն հացի, այլ ոչ թե զենքերի:

Ցավոք, մենք ականատես ենք կրոնի եւ կրոնական արժեքների արմատական ըմբռնումների, որոնք կիրառվում են՝ ատելութեան, խտրականութեան ու բռնութեան տարածումն արդարացնելու համար:

Նմանատիպ հանցանքների՝ կրոնական գաղափարներով արդարացումն անընդունելի է, քանի որ «Աստված խռովության Աստվածը չէ, այլ՝ խաղաղության» (Ա Կոր. ԺԴ 33): Ավելին, կրոնական տարբերությունների հանդեպ հարգանքն անհրաժեշտ պայման է էթնիկ ու կրոնական տարբեր համայնքների խաղաղ համակեցության համար: Եվ հենց քրիստոնյա լինելով է, որ մենք կոչված ենք խաղաղության ու հաշտության ուղիներ փնտրելու եւ իրագործելու: Այս իմաստով մենք հուսով ենք, որ Լեռնային Ղարաբաղին վերաբերող հարցերը կգտնեն խաղաղ լուծում:

Հիշելով այն ամենը, ինչ Հիսուս սովորեցրեց Իր աշակերտներին, երբ Նա ասաց. «Ես սոված էի, եւ դուք ինձ հաց տվեցիք, Ես ծարավ էի եւ դուք ինձ խմելու մի բան տվեցիք, Ես օտարական էի, եւ դուք ինձ ընդունեցիք, Ես մերկ էի, եւ դուք ինձ հագցրեցիք, Ես հիվանդ էի, դուք ինձ այցելեցիք, Ես բանտում էի, եւ դուք եկաք ինձ տեսության» (Մատթ. Իե. 35-36), մենք խնդրում ենք մեր եկեղեցիների հավատացյալներին՝ բացելու իրենց սրտերն ու ձեռքերը՝ օգնելու պատերազմի եւ ահաբեկչության զոհերին, փախստականներին եւ նրանց ընտանիքներին: Կարեւորվում է մեր մարդասիրության զգացումը, մեր զորակցությունը, կարեկցանքը եւ մեծահոգությունը, որոնք կարող են ճիշտ արտահայտվել միայն առկա նյութական պաշարների անհապաղ եւ գործնական նվիրատվությամբ:

Մենք ընդունում ենք այն, ինչն արդեն իսկ արվում է, բայց պնդում ենք, որ ավելին պետք է արվի քաղաքական առաջնորդների եւ միջազգային կառույցների կողմից, որպեսզի ապահովված լինի բոլորի՝ խաղաղության եւ անվտանգության մեջ ապրելու իրավունքը, պաշտպանված լինի օրենքի գերակայությունը, կրոնական եւ էթնիկ փոքրամասնությունների պաշտպանությունը, կանխված լինեն մարդկային թրաֆիքինգը եւ մաքսանենգությունը:

Հասարակության ստվար հատվածների աչխարհիկացումը, օտարումը հոգեւորից ու աստվածայինից, անխուսափելիորեն հանգեցնում են մարդու եւ մարդկային ընտանիքի ապասրբացմանն ու նյութապաշտական ընկալմանը: Այս առումով մենք մտահոգ ենք չատ երկրներում ընտանեկան կյանքի ճգնաժամով: Հայ եւ Կաթոլիկ եկեղեցիներն ընտանիքի մասին նույն ընկալումն ունեն, որը հիմնված է ազատ կամքով ու հավատարմությամբ ծնված սիրո արդյունք հանդիսացող տղամարդու եւ կնոջ ամուսնության վրա:

Մենք ուրախությամբ արձանագրում ենք, որ, չնայած քրիստոնյաների միջեւ առկա բաժանումներին, այն, ինչ մեզ միավորում է, ավե-

լին է, քան այն, ինչ մեզ բաժանում է, որի վրա էլ պետք է կառուցել Քրիստոսի եկեղեցու միությունը, ըստ Տիրոջ խոսքի, որ բոլորը մեկ լինեն (հմմտ. Հովհ. ԺԷ 21): Վերջին տասնամյակներում մեր եկեղեցիների հարաբերությունները թեւակոխել են որակապես նոր փուլ՝ ամրապնդված լինելով համատեղ աղոթքներով եւ ժամանակակից մարտահրավերներին դիմագրավելու միասնական ջանքերով: Մենք այսօր համոզված ենք այս հարաբերությունների չարունակականության խիստ կարեւորության մեջ՝ երկուստեք առավել խորը եւ վճռական հանձնառությամբ ոչ միայն աստվածաբանական մարզում, այլեւ աղոթական եւ գործնական համագործակցությամբ տեղական համայնքներում՝ լիարժեք հաղորդակցություն եւ միության հստակ արտահայտություններ կիսելու տեսլականով: Մենք հորդորում ենք մեր հավատացյալներին՝ ներդաշնակ կերպով աշխատելու հասարակության մեջ քրիստոնեական արժեքների զորացման համար, որոնք արդյունավոր կերպով նպաստում են արդարության, խաղաղության եւ մարդկային համերաշխության քաղաքակրթության կառուցմանը: Հաշտության եւ եղբայրության ուղին բաց է մեր առջեւ: Թող Սուրբ Հոգին, ով առաջնորդում է մեզ ամենայն ճշմարտության (հմմտ. Հովհ. ԺԶ 13), զորացնի ամեն ազնիվ ջանք, որ ուղղված է մեր մեջ սիրո եւ հաղորդության կամուրջների կառուցմանը:


Սուրբ Էջմիածնից մենք կոչ ենք անում մեր բոլոր հավատացյալներին՝ միանալու մեզ աղոթքով, Սուրբ Ներսես Շնորհալու խոսքերով. «Փառավորյալ Տեր, ընդունիր ծառաներիդ աղաչանքները եւ ի բարին կատարիր մեր խնդրանքները՝ բարեխոսությամբ Սուրբ Աստվածածնի, եւ Հովհաննես Մկրտչի, եւ Սուրբ Ստեփանոս Նախավկայի, եւ մեր Սուրբ Գրիգոր Լուսավորչի, եւ սուրբ առաքյալների, մարգարեների, վարդապետների, մարտիրոսների, հայրապետների, ճգնավորների, կույսերի եւ Քո բոլոր երկնային ու երկրային սրբերի: Եվ Քեզ՝ անբաժանելի Սուրբ Երրորդությանդ, փառք եւ երկրպագություն, հավիտյանս հավիտենից, ամեն.»:

Ս. Էջմիածին, 26 հունիսի, 2016 թ.

Նորին Սրբություն
Գարեգին Բ

Նորին Սրբություն
Ֆրանցիսկոս

ՀԱՄԱՏԵՂ
ՀՈԳԱԿԱՊԱՐԵՐ,
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՄԱՆԸ

(7 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ, 2017 Թ.)[1]

Ջե՛րդ Սրբութիւն Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Ա Պատրիարք

Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ Հարգարժան շեյխ ալ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադե,

Ողջունում ենք Ձեզ տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների հերթական այս հանդիպմանը, որը հնարավոր դարձավ մեր հոգեւոր եղբայր ի Քրիստոս Կիրիլ Պատրիարքի միջնորդական հետեւողական ջանքերի շնորհիվ: Վեց տարի է անցել այս ձեւաչափով մեր վերջին հանդիպումից որը տեղի ունեցավ Երեւանում 2011 թ. նոյեմբերին՝ ԱՊՀ Միջկրոնական խորհրդի նախագահության ժողովի առիթով:

Այս հանդիպումներին մեր ժողովուրդների կյանքում բաղձալի խաղաղության հաստատման հույսով ենք քայլերն անում՝ քննարկելու ուղիները, որոնցով հոգեւոր առաջնորդներս կարող ենք նպաստել ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորմանը:

Այսօր, ցավոք, գգալի չեն ներդրվող ջանքերի արդյունքները, սակայն շատ ավելի մեծ եւ առարկայական են մեր ժողովուրդների սպասումները՝ խաղաղ համակեցության այս փնտրտուքի մեջ:

Այս առումով դրական արդյունքներ ենք ակնկալում ժամանակ առ ժամանակ կազմակերպվող Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների եւ ԱԳՆ նախարարների հանդիպումներից ու բանակցային ողջ գործընթացից:

Հակառակ Հայաստանի եւ Ադրբեջանի նախագահների հանդիպումների արդյունքում կատարվող հայտարարություններ, հոգեւոր առաջնորդներիս կոչերի եւ պատգամների, այսօր Հրադադարի պայմաններում չարունակում է լարված մնալ իրավիճակը սահմանագ-

1 «Քրիստոնյա Հայաստան» երկշաբաթաթերթ, 2017, սեպտեմբեր Ա, թիվ 17, էջ 3:

ծում, չարունակում են զոհվել զինվորներ եւ երբեմն նաեւ սահմանամերձ բնակավայրերի խաղաղ բնակիչներ: Հատկապես մտահոգիչ ենք համարում քաղաքացիական բնակչութեան թիկունքում պատսպարվելու եւ այն միտումնաւոր թիրախի վերածելու դեպքերը:

Սահմանից անդին չեն դադարում ռազմատենչ կոչերը, աճող սպառազինութեան վերաբերեալ հայտարարութիւնները: Այս ամենը մեծապես վտանգում է փոխվստահութեան եւ փոխըմբռնողութեան ոգու մթնոլորտի ձեւաւորմանն ուղղված ջանքերը եւ, սասանելով արդեն իսկ փխրուն հրադադարը« վերափոխում հակամարտութեան ուժգնացման մի նոր իրողութեան« որին ականատես դարձանք 2016 թվականի ապրիլին, երբ ադրբեջանական զինված ուժերի կողմից սանձազերծվեցին լայնամասշտաբ ռազմական գործողութիւններ: Ամենքիս հայտնի է այդ օրերի ժամանակագրութիւնը՝ փաստագրված նաեւ միջազգային հանրութեան կողմից, մարտի դաշտում զոհված զինվորների, ինչպես նաեւ խաղաղ բնակչութեան նկատմամբ կատարված խոշտանգումները, վայրագութիւնները ու բռնութիւնները, պատճառված կորուստները ու աւերները:

Մտաբերելով այս դեպքերը՝ բնական հարց է ծագում. ինչպե՞ս կարող են պահպանվել իրավիճակի կայունութիւնը ու խաղաղութիւնը, երբ այդ ուղղութեամբ գործադրվող ջանքերը միակողմանի են: Ինչպե՞ս կարող ենք հասնել խաղաղութեան, երբ ջանք եւ միջոց չի խնայվում բոլոր հնարաւոր եւ անհնարին ճանապարհներով սեփական բնակչութեան մեջ ատելութիւն ու թշնամանք սերմանելու հարեւան հայ ժողովրդի նկատմամբ, իսկ հայկական կողմի եւ միջազգային հանրութեան արդարացի եւ օբյեկտիվ գնահատականները հակադարձելու անհիմն մեղադրանքների համար:

Մեր տարածաշրջանում խաղաղութիւնն այլընտրանք չունի, ինչպես եւ ղարաբաղյան հակամարտութեան կարգավորումը՝ բացառապես բանակցութիւնների միջոցով: Այլընտրանք չունի նաեւ Արցախի մեր հավատավոր ժողովրդի ազատ եւ անկախ կյանքը:

Այսօր հրամայական է, որ կամք եւ հանձնառութիւն դրսեւորվի՝ հիմնախնդրի լուծումը փնտրելու միմիայն բանակցային հարթութեան մեջ եւ կասեցնելու հրադադարի խախտման դրսեւորումները, սահմաններից հեռացնելու դիպուկահարներին, դադարեցնելու անդադար գնդակոծումները եւ այլեւս պատճառ չդառնալու հրադադարի պայմաններում ընտանիքների դժբախտացման՝ անվտանգ պահելով մեր զինվորագրված զավակների կյանքը: Յուրաքանչյուր փամփուշտ, որ արձակվում է Աստծո արարածի դեմ, նաեւ Աստծո դեմ է:

Հենց այստեղ ենք տեսնում մեր՝ հոգեւոր առաջնորդներիս, առաքելությունը՝ հորդորելու եւ պատգամելու, մեր լծակիցների հետ մեկտեղ ձեւավորելու այն գիտակցությունը եւ փոխըմբռնման ու հանդուրժողականության մթնոլորտը, որոնց պայմաններում հնարավոր պիտի դառնա հակամարտության խաղաղ կարգավորման գործընթացի առաջխաղացումը: Միեւնույն ժամանակ մեր հանապազ հորդորը պետք է բերենք զինվորականներին՝ պահպանելու հրադադարը եւ խուսափելու սադրանքներից:

Մենք մեծապես կարեւորում ենք միջազգային հանրության դերակատարությունը« մասնավորապես՝ ԵԱՀԿ Մինսկի խմբի առաքելությունը, հակամարտության չփման գծում վերահսկողական մեխանիզմների կիրառման եւ սահմանային միջադեպերի հետաքննության հարցում: Մեր երախտագիտությունն ենք հայտնում Կիրիլ Ա Պատրիարքին եւ Ռուս Ուղղափառ Եկեղեցուն՝ հակամարտության առաջին իսկ օրվանից դրսեւորած սրտացավության եւ միջնորդական ջանքերի համար:

Աստծուն հաճելի են արդարության եւ խաղաղության ճանապարհներով ընթացողները, որովհետեւ այդտեղ են Նրա սերն ու օրհնությունը, հովանին ու ողորմությունը, ինչպես Սուրբ Գիրքն է ասում. «Արդարության պտուղը խաղաղությամբ է սերմանվում նրանց համար« ովքեր խաղաղություն են անում» (Հակ. Գ 18): Ուստի մեկտեղենք մեր ջանքերը ու միասնաբար ընթանանք այդ ճանապարհներով: Այս գործընթացի մեջ պատասխանատվություն ունենք ամենքս:

Մեր աղոթքն ենք բարձրացնում առ Բարձրյալն Աստված եւ հայցում, որ օրհնի եւ արդյունավորի բոլոր անհատների, հասարակական կառույցների ու կազմակերպությունների այն նախաձեռնությունները, որոնք ուղղված են ազգամիջյան հարաբերությունների վերականգնմանը, համերաշխության զորացմանը եւ փոխվստահության մթնոլորտի ձեւավորմանը: Թող Բարձրյալի օրհնությամբ աշխարհում եւ մեր ժողովուրդների կյանքում միշտ գերակայի հաշտության ոգին, եւ պղաբերեն փոխըմբռնումն ու բարի կամեցողությունը:

Շնորհակալություն այս հանդիպման համար:

Հանդիպման արդյունքում Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսը, Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքը եւ Կովկասի մուսուլմանների վարչության նախագահ շեյխ ալ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն հանդես եկան հետեւյալ հայտարարությամբ.

ԱԴՐԲԵՋԱՆԻ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀՈԳԵՎՈՐ ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԵՌԱԿՈՂՄ ՀԱՆԴԻՊՄԱՆ ՀԱՅՑԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

Այսօր մենք՝ ադրբեջանցի եւ հայ ժողովուրդների հոգեւոր առաջնորդներս, կրկին հանդիպեցինք Մոսկվայում՝ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Կիրիլ Պատրիարքի հրավերով՝ քննարկելու ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման ուղիները, առանց որոնց հնարավոր չէ հասնել Կովկասում հաշտության եւ անվտանգության:

Մենք հատուկ նշանակություն ենք ընծայում խաղաղարարական երկխոսության հետեւողական զարգացմանը, բանակցությունների չարունակմանը եւ միջազգային հանրության միջնորդական ջանքերին, որոնք կօգնեն հասնել հակամարտության համապարփակ կարգավորմանը:

Համոզված ենք, որ տարաձայնությունները կարելի է հաղթահարել՝ հենվելով բարիդրացիության սկզբունքների եւ ավանդական կրոնների կողմից քարոզվող բարոյական արժեքների՝ բարության, մերձավորի նկատմամբ սիրո, փոխադարձ ներողամտության եւ բարեգթության վրա:

Հայ եւ ադրբեջանցի ժողովուրդները մշտապես ապրելու են կողք կողքի, այդ իսկ պատճառով չկա այլընտրանք, քան խաղաղությունն ու համագործակցությունը: Բազմաթիվ մարտահրավերների առջեւ մենք՝ մեր ժողովուրդների հոգեւոր առաջնորդներս, պարտավոր ենք փնտրել համատեղ պատասխաններ:

Աղոթում ենք խաղաղության պահպանման եւ հակամարտության հետ առնչված բոլոր հումանիտար խնդիրների չուտափույթ լուծման համար եւ առ այդ հորդորում մեր ժողովուրդների քաղաքական եւ հասարակական գործիչներին:

Մենք կոչված ենք միասին հոգ տանելու տառապյալների եւ ընչազուրկների համար, վկայելու հոգեւոր եւ բարոյական անանց արժեքների մասին, փնտրելու հակասությունների հանգուցալուծման խաղաղ եւ արդար ուղիներ: Խիստ կարեւոր է հրաժարվել ռազմատենչ եւ թշնամական հռետորաբանությունից:

Կոչ ենք ուղղում համապատասխան անձանց՝ նպաստելու բոլոր այն խաղաղ բանկիչների ազատ արձակմանը, ովքեր չեն մասնակցել ռազմական գործողություններին եւ հայտնվել են գերության մեջ:

Իբրեւ հոգեւոր առաջնորդներ՝ մենք կոչված ենք պաշտպանելու եկեղեցիները, մզկիթներն ու այլ սրբավայրերը: Հետեւաբար, խիստ կարեւոր է ապահովել կրոնական նշանակության հուշարձանների ան-

ձեռնմխելիությունն ու հարգալից վերաբերմունքը դրանց նկատմամբ:

Կոչ ենք ուղղում մեր ժողովուրդներին՝ երիտասարդությանը դաստիարակել բարյացակամության եւ փոխադարձ հարգանքի, խաղաղասիրության եւ ավանդական բարոյականության ոգով:

Մենք՝ որպես հոգեւոր առաջնորդներ, մեր կողմից պատրաստակամություն ենք հայտնում պաշտպանելու զարաբաղյան հակամարտության հանգուցալուծմանն ուղղված խաղաղարարական նախաձեռնությունները: Հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպումների պատմությունը վկայում է նման չփումների դրական ներգործության մասին հակամարտության կարգավորման գործընթացի վրա, որը երբեք չպետք է վերաճի կրոնական հակամարտության: Մենք մեծ հույսեր ենք կապում բանակցային գործընթացի հետ: Մեր ժողովուրդների առջեւ պատասխանատվությունն ու պարտքը մղում են մեզ՝ հոգեւոր առաջնորդներիս, անխոնջ եւ հետեւողական ջանքեր գործադրել հանուն խաղաղության եւ բարու իդեալների երկար սպասված հաղթության: Մենք պատրաստ ենք գործադրել բոլոր առկա հնարավորությունները՝ տարածաշրջանում խաղաղության հաստատման համար:

Մեր համայնքների բոլոր զավակներին ուղղում ենք խաղաղության, բարօրության եւ բարի ձեռնարկումներում հաջողությունների բարեմաղթանքներ: Աղոթում ենք Բարձրյալին՝ տարաձայնությունների հաղթահարման եւ չարիքից ու մեղքից մեր ժողովուրդներին պահպանելու համար: Թող Կովկասի հինավուրց եւ սուրբ հողի վրա հաստատվի օրհնյալ խաղաղությունը, իսկ մեր երկրների ժողովուրդներն ապրեն հաշտ եւ խաղաղ, աստվածատուր բարոյական օրենքներով:

Հայաստանյայց Առաքելական Եկեղեցու պատվիրակությունը՝ Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի գլխավորությամբ, եւ Կովկասի մուսուլմանների վարչության պատվիրակությունը՝ շեյխ ալ-իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեի գլխավորությամբ, հատուկ շնորհակալություն են հայտնում Ռուս Ուղղափառ Եկեղեցուն եւ նրա գահակալ Մոսկվայի եւ Համայն Ռուսիո Նորին Սրբությունն Կիրիլ Պատրիարքին՝ տվյալ եռակողմ հանդիպման կազմակերպման, Կովկասում խաղաղության հաստատման գործում կարեւորագույն ներդրման համար եւ Նորին Սրբությանը մաղթում Բարձրյալի օգնականություն՝ աստվածահաճո այդ բարձր առաքելությունը շարունակելու գործում:

ՑԱՆԿ

ԿՈՆԴԱԿՆԵՐ

1. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարքության 550 - ամյակի առիթով (25 մայիսի, 2011 թ.) 9
2. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը Հայոց բանակի 20-ամյակի առիթով (28 հունվարի, 2012 թ.)..... 12
3. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը հայ գրատպության 500-ամյակի առիթով (11 փետրվարի, 2012 թ.)..... 16
4. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը Արթիկի տարածաշրջանի համայնքները Շիրակի թեմի կազմից հանելու եւ Արթիկի թեմ ստեղծելու մասին (24 հոկտեմբերի, 2012 թ.) 20
5. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը Մեքսիկայի Հայկական համայնքը ԱՄՆ Արեւելյան թեմի կազմից հանելու եւ ԱՄՆ Արեւմտյան թեմի մեջ ներառնելու մասին (21 նոյեմբերի, 2014 թ.)..... 23
6. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը Սուրբ Թադեոս եւ Սուրբ Բարդուղիմեոս առաքեալների տոնի օրը Սուրբ Գեղարդը Մայր Տաճարում հավատացյալների երկրպագության համար դնելու մասին (28 նոյեմբերի, 2014 թ.)..... 26
7. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը Հայոց ցեղասպանության 100-ամյակի առիթով (28 դեկտեմբերի, 2014 թ.)..... 29
8. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը Աստվածաշունչ մատյանի հայերեն տպագրության 350-րդ տարեդարձի առիթով (28 հուլիսի, 2016 թ.)..... 33
9. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը Հայոց բանակի 25-ամյակի առիթով (28 հունվարի, 2017 թ.)..... 36
10. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը Հաղթանակի եւ խաղաղության օրվա, Շուշիի ազատագրության եւ Արցախի պաշտպանության բանակի 25-ամյակի առիթով (7 մայիսի, 2017 թ.)..... 40
11. Ամենայն Հայոց կաթողիկոսի կոնդակը Հայաստանի առաջին հանրապետության 100-ամյակի առիթով (8 հունվարի, 2018 թ.)..... 44

ՕՐՀՆՈՒԹՅԱՆ ԳՐԵՐ

12. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Տ. Տիրայր արքեպիսկոպոս Մարտիկյանի ծննդյան 80 – ամյակի եւ որպես Ռումինիայի Հայոց թեմի առաջնորդի պաշտոնավարության 50 – ամյակի առիթով. Բուխարեստ, Ռումինիա (22 փետրվարի, 2010 թ.)..... 48
13. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Հովհաննես Սեմերջյանի 90 – ամյակի առիթով. Փարիզ, Ֆրանսիա (3 մարտի, 2010 թ.)..... 50
14. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Տ. Հովնան արքեպիսկոպոս Տերտերյանին քահանայական ձեռնադրության 30 – րդ եւ եպիսկոպոսական օծման 20 – րդ հոբելյանի առիթով. Բըրբենկ, ԱՄՆ (26 մայիսի, 2010 թ.)..... 52
15. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Սանկտ Պետերբուրգի հայ համայնքի անդամներին համայնքի 300 – ամյա հոբելյանի առիթով. Սանկտ Պետերբուրգ, ՌԴ (18 հունիսի, 2010 թ.)..... 54
16. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Լոնդոնի մասնաճյուղի հիմնադրման 100 – րդ տարեդարձի առիթով. Լոնդոն, Մեծ Բրիտանիա (10 նոյեմբերի, 2010 թ.)..... 57
17. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Ռիչարդ Հովհաննիսյանի 80 – ամյակի առիթով. Կալիֆոռնիա, ԱՄՆ (15 փետրվարի, 2012 թ.)..... 59
18. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Բուլղարիայի Հայոց թեմի անդամներին թեմի 145 – ամյա հոբելյանի առիթով (25 սեպտեմբերի, 2012 թ.)..... 61
19. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը «Հայաստան» համահայկական հիմնադրամին հաստատման 25 – ամյակի առիթով. Երեւան (6 փետրվարի, 2017 թ.)..... 63

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՇՔԱՆՇԱՆ

20. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Նորին Սրբություն Կիրիլ Ա Մոսկվա-
յի եւ Համայն Ռուսիո Պատրիարքին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման
առիթով. Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն (17 մարտի, 2010 թ.).....65
21. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Սարո Խուդավերդյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Միլան, Իտալիա
(1 հունիսի, 2010 թ.).....67
22. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Մարկո Զարիկյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Կարակաս, Վենեսուելա
(15 նոյեմբերի, 2010 թ.).....69
23. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Կարեն Հովհաննիսյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(19 նոյեմբերի, 2010 թ.).....71
24. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Սուրեն Սարդարյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Օդեսա, Ուկրաինա
(25 նոյեմբերի, 2010 թ.).....73
25. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Սահակ Կարապետյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Դոնի Ռոստով, ՌԴ
(29 մայիսի, 2011 թ.).....75
26. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Բորիս Սատակովին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Նովոսիբիրսկ, ՌԴ
(6 հունիսի, 2011 թ.).....77
27. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տեր եւ տիկին Բարսեղ եւ
Թերեզա-Սիլվիա Գրզրյաններին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման
առիթով. Կահիրե, Եգիպտոս (20 օգոստոսի, 2011 թ.).....79
28. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Վահան Ավագյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(3 ապրիլի, 2012թ.) 81
29. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիկին Էմմա Սողոյանին Ս. Գրիգոր
Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Դետրոյթ, ԱՄՆ
(20 օգոստոսի, 2012 թ.).....83
30. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Հովհաննես Չիլինգարյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Նիս, Ֆրանսիա
(6 սեպտեմբերի, 2012 թ.).....85
31. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Հակոբ Հակոբյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Երեւան (19 սեպտեմբերի,
2012 թ.).....87
32. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տեր եւ տիկին Զավեն եւ Սոնյա
Ագեաններին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Կալիֆոռնիա,
ԱՄՆ (5 հոկտեմբերի, 2012 թ.).....89
33. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Խաչատուր Խաչատրյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Կիեւ, Ուկրաինա
(26 մարտի, 2013 թ.).....91
34. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Հայկ Մաղաքելյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով Մոսկվա, ՌԴ
(12 սեպտեմբերի, 2013 թ.).....93
35. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Վարդան Վարդանովին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(12 սեպտեմբերի, 2013 թ.).....95
36. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Գագիկ Ադիբեկյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.).....97
37. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Էդգար Արամյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.).....99

38. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Վարդգես Արծրունուն
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 101
39. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Կարեն Բաղդասարովին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 103
40. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Գերման Գրեֆին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 105
41. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Ռուբեն Գրիգորյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 107
42. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Գագիկ Գեւորգյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 109
43. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Գագիկ Ձաքարյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 111
44. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Հովնան Լալայանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 113
45. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Սամվել Կարապետյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 115
46. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Սերգեյ Համբարձումյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 118
47. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Կոնստանտին Մանուկյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 120
48. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Գեւորգ Մեհրաբյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Պերմ, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 122
49. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Արմեն Շահազիզյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 124
50. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Ռուբեն Վարդանյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 126
51. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Ալեքսանդր Տեր – Ավանեսովին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 128
52. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Նորիկ Պետրոսյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 130
53. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Կամո Ավագումյանին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 132
54. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Դավիթ Դավիդյանցին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 134
55. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Դանիլ Խոչատուրովին
Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ
(17 սեպտեմբերի, 2013 թ.) 136

56. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Աշոտ Խաչատրյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.)....138
57. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Ահարոն Մելքոնյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.)....140
58. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Հակոբ Մուրադյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով Մոսկվա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.)....142
59. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Ստեփան Հակոբյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.)....144
60. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Կարեն Հարությունյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.)....146
61. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Նորիկ Պետրոսյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.)....148
62. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Արթուր Ջանիբեկյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.)....150
63. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Էմիլ Սարգսյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.) 152
64. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Համբարձում Սաֆարյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.)....154
65. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Գենադի Ստեփանյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.)....156
66. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Արթուր Վարժապետյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.)....158
67. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Մասիս Նազարյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Եկատերինբուրգ, ՌԴ (12 հոկտեմբերի, 2013 թ.)....160
68. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիկին Շաքե Պաթմանյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Սիդնեյ, Ավստրալիա (23 հոկտեմբերի, 2013 թ.)....162
69. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Գրիգոր Պաթմանյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Սիդնեյ, Ավստրալիա (24 հոկտեմբերի, 2013 թ.)....164
70. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Վարուժան սարկավագ Ալթըպարմաքյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Ֆրեզնո, ԱՄՆ (26 նոյեմբերի, 2013 թ.)....166
71. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Արթուր Կարապետյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Դոնի Ռոստով (25 ապրիլի, 2014 թ.)....169
72. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Հովիկ Աբովյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով (26 մայիսի, 2014 թ.)....171
73. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Կարեն Մկրտչյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Սանկտ Պետերբուրգ, ՌԴ (29 մայիսի, 2014 թ.)....173
74. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տեր եւ տիկին Կոլյա եւ Ռոզա Ծառուկյաններին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Առինջ (22 հուլիսի, 2015 թ.)....175

75. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Գագիկ Պետրոսյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Սոչի, ՌԴ (14 հոկտեմբերի, 2015 թ.) 177
76. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Սերգեյ Սարկիսովին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (30 հոկտեմբերի, 2015 թ.) 179
77. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Բիձինա Իվանիշվիլուն Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Թբիլիսի, Վրաստան (30 հոկտեմբերի, 2015 թ.) 181
78. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Ալբերտ Ավդոյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Մոսկվա, ՌԴ (30 հոկտեմբերի, 2015 թ.) 183
79. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Սինան Սինանյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Կալիֆոռնիա, ԱՄՆ (27 նոյեմբերի, 2015 թ.) 185
80. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տեր եւ տիկին Վրեժ եւ Իմաստուհի Նիկողոսյաններին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Կանադա (15 դեկտեմբերի, 2015թ.) 187
81. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տեր եւ տիկին Էդուարդ եւ Ժանեթ Մարտիկյաններին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Դետրոյթ, ԱՄՆ (23 սեպտեմբեր, 2016 թ.) 189
82. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տեր եւ տիկին Սամսոն Աբովյանին եւ Սաթենիկ Նասիբյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Կողբ, Տավուշ (19 հոկտեմբերի, 2016 թ.) 191
83. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Ռազմիկ Բլիկյանին Ս. Գրիգոր Լուսավորիչ շքանշանի հանձնման առիթով. Վլադիմիր, ՌԴ (7 օգոստոսի, 2017 թ.) 193

ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ – ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ ՇՔԱՆՇԱՆ

84. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Էդուարդ Տեր – Ղազարյանին Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ շքանշանի հանձնման առիթով. Երեւան (12 ապրիլի, 2010 թ.) 195
85. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Զորի Բալայանին Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ շքանշանի հանձնման առիթով. Արցախ (21 ապրիլի, 2010 թ.) 197
86. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Սուրեն Զոհրաբյանին Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ շքանշանի հանձնման առիթով. Երեւան (1 նոյեմբերի, 2010 թ.) 199
87. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Ռազմիկ Դավոյանին Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ շքանշանի հանձնման առիթով. Երեւան (24 նոյեմբերի, 2010 թ.) 201
88. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Արամայիս Սահակյանին Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ շքանշանի հանձնման առիթով. Երեւան (6 դեկտեմբերի, 2011 թ.) 203
89. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Ալբերտ Մկրտչյանին Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ շքանշանի հանձնման առիթով. Երեւան (1 ապրիլի, 2012 թ.) 205
90. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիկին Սվետլանա Նավասարդյանին Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ շքանշանի հանձնման առիթով. Երեւան (14 հունիսի, 2013 թ.) 207
91. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Արտեմ Սարգսյանին Սուրբ Սահակ – Սուրբ Մեսրոպ շքանշանի հանձնման առիթով. Լոս Անջելես, ԱՄՆ (17 հունիսի, 2013 թ.) 209

ՍՈՒՐԲ ՆԵՐՍԵՍ ՇՆՈՐՀԱԼԻ ՇՔԱՆՇԱՆ

92. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը տիար Վիլեն Հակոբյանին Սուրբ Ներսես Շնորհալի շքանշանի հանձնման առիթով. Երեւան (12 հուլիսի, 2013 թ.)....211
93. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Ղարիբյանին Սուրբ Ներսես Շնորհալի շքանշանի հանձնման առիթով. Սան Պաուլո, Բրազիլիա (21 օգոստոսի, 2013 թ.)....213

ԱՐՔՈՒԹՅԱՆ ՊԱՏԻՎ

94. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Տ. Սեպուհ եպիսկոպոս Չուլջյանին արքության պատվի շնորհման առիթով. Վանաձոր (15 մայիսի, 2012 թ.)....215
95. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Տ. Նաթան եպիսկոպոս Հովհաննիսյանին արքության պատվի շնորհման առիթով. Սուրբ Էջմիածին (16 մայիսի, 2012 թ.)....217
96. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Տ. Առաքել եպիսկոպոս Քարամյանին արքության պատվի շնորհման առիթով. Կոտայք (14 մայիսի, 2013 թ.)....219
97. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Տ. Աբրահամ եպիսկոպոս Մկրտչյանին արքության պատվի շնորհման առիթով. Սուրբ Էջմիածին (10 սեպտեմբերի, 2013 թ.)....221
98. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Տ. Փառեն եպիսկոպոս Ավետիքյանին արքության պատվի շնորհման առիթով. Սուրբ Էջմիածին (10 սեպտեմբերի, 2013 թ.)....223
99. Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության գիրը Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսյանին արքության պատվի շնորհման առիթով. Մոսկուա, ՌԴ (17 սեպտեմբերի, 2013 թ.)....225

ՄԱՂԹԱՆՔՆԵՐ, ԽՈՍՔԵՐ, ՔԱՐՈԶՆԵՐ, ՈՒՂԵՐՁՆԵՐ, ՊԱՏԳԱՄՆԵՐ

100. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առիթով (6 հունվարի, 2010 թ.)....228
101. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնի առիթով (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 4 ապրիլի 2010 թ.)....233
102. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ ծայրագոյն պատրիարք եւ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհաւորական ուղերձը Աւետման տօնի առիթով (ապրիլ 2010 թ.)....238
103. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով (մայիս, 2010 թ.)....239
104. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Տաթեւի վանք տանող ճոպանուղու բացման առիթով (Տաթեւի վանք, 16 հոկտեմբերի, 2010 թ.)....240
105. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով (31 դեկտեմբերի, 2010 թ.)....243
106. Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի առիթով (Սուրբ Էջմիածին, 6 յունուարի, 2011 թ.)....245
107. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Ս. Վարդանանց տոնի առիթով (մարտ, 2011 թ.)....249
108. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ավետման տոնի առիթով (ապրիլ, 2011 թ.)....253
109. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարութեան տոնի առիթով (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ապրիլի 24, 2011 թ.)....254

110. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական մաղթանքը նոր ուսումնական տարվա առիթով (1 սեպտեմբերի, 2011 թ.) 259
111. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Սփյուռքի կազմակերպությունների ղեկավարների եւ ներկայացուցիչների համահայկական համաժողովին (19 սեպտեմբերի, 2011թ.) 260
112. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Մոսկվայի առաջնորդանիստ եկեղեցու խաչերի օծման առիթով (Մոսկվա, 23 հոկտեմբերի, 2011 թ.) 264
113. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Սուրբ Վարդանանց տոնի առիթով (փետրվար, 2012 թ.) 268
114. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Սուրբ Հարության տոնի առիթով (ապրիլ, 2012 թ.) 272
115. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը շրջանավարտների օրհնության օրվա առիթով (25 մայիսի, 2012 թ.) 276
116. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով (հունվար, 2013 թ.) 277
117. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի առիթով (Ս. Էջմիածին, 6 յունուարի, 2013 թ.) 279
118. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնի առիթով (Ս. Էջմիածին, մարտի 31, 2013 թ.) 283
119. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը գիտելիքի օրվա առիթով (սեպտեմբեր, 2013 թ.). 287
120. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Մոսկվայի Սուրբ Պայծառակերպություն նորակառույց եկեղեցու օծման առիթով (17 սեպտեմբերի, 2013 թ.) 288
121. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Իզմիրլյան բժշկական կենտրոնի բացման առիթով (15 հոկտեմբերի, 2013 թ.) 292
122. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով (31 դեկտեմբերի, 2013 թ.) 296
123. Հայրապետական օրհնութեան գիր սիրիահայութեանը Ամանորի եւ Սուրբ Ծննդեան տօների առիթով 298
124. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Սուրբ Ծննդյանեւ Աստվածհայտնության տոնի առիթով (հունվար, 2014 թ.) 300
125. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը կանանց տոնի առիթով (8 մարտի, 2014 թ.) 304
126. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ավետման տոնի առիթով (ապրիլ, 2014 թ.) 305
127. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի Ավագ շաբաթվա ուղերձը (ապրիլ, 2014 թ.) 306
128. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնի առիթով (Ս. Էջմիածին, ապրիլ 20, 2014 թ.)... 308
129. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը կրթության մշակների օրհնության օրվա առիթով (31 օգոստոսի, 2014 թ.) 314
130. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը գիտելիքի օրվա առիթով (1 սեպտեմբերի, 2014թ.) 316
131. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Բերդի Սուրբ Հովհաննես եկեղեցու օծման առիթով (13 սեպտեմբերի, 2014 թ.) 318
132. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը «Հայաստան-Սփյուռք» հինգերորդ համաժողովին (19 սեպտեմբերի, 2014 թ.) 322
133. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը եպիսկոպոսական ձեռնադրության առիթով (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 16 նոյեմբերի, 2014 թ.). 326
134. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով (31 դեկտեմբերի, 2014 թ.) 330

135. Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը մեր Տիրոջ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով (Սուրբ Էջմիածին, 6 հունվարի, 2015 թ.)....332
136. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը կանանց տոնի առիթով (8 մարտի, 2015թ.)....333
137. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը ՅԲԸՄ Երեւանյան կենտրոնի բացման առիթով (4 ապրիլի, 2015 թ., Երեւան)....338
138. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Տեր Յիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնի առիթով (5 ապրիլի, 2015 թ., Սուրբ Էջմիածին)....341
139. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձն Ավետման տոնի առիթով (7 ապրիլի, 2015 թ.)....345
140. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Նեապոլի Ս. Գրիգոր լուսավորիչ մատրան վերաբացման եւ Հայոց ցեղասպանության 346
141. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Երեւանի քաղաքային պանթեոնում եկեղեցու հողօրհնեքի առիթով (22 ապրիլ, 2015 թ., Երեւան)....349
142. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը հսկման արարողության ժամանակ (22 ապրիլի, 2015 թ.)....352
143. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության նահատակների սրբադասման արարողության ընթացքում (23 ապրիլի, 2015 թ., Սուրբ Էջմիածին)....354
144. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը հընթացս Սուրբ Պատարագի արարողության (Վաշինգտոն, 9 մայիսի, 2015 թ.)....358
145. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի քարոզը՝ խոսված Սեւանի Սուրբ Հրեշտակապետաց եկեղեցու օծման առիթով (31 մայիսի, 2015 թ.)....361
146. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Արտաշատի Սուրբ Հովհաննես եկեղեցու օծման առիթով (31 մայիսի, 2015 թ.)....364
147. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը՝ Անթիլիասում Մյուռոնօրհնության արարողության առիթով (18 հուլիսի, 2015 թ.)....368
148. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի քարոզը Նոր Հաճընի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցու օծման առիթով (22 հուլիսի, 2015 թ.)....371
149. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի շնորհավորական ուղերձը գիտելիքի օրվա առիթով (1 սեպտեմբերի, 2015թ.)....375
150. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խօսքը Սրբալոյս Միւռոնի օրհնութեան առիթով (Սուրբ Էջմիածին, 27 սեպտեմբերի, 2015 թ.)....377
151. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Մյուռոնօրհնության առիթով տրված պաշտոնական ճաշկերույթին (Սուրբ Էջմիածին, 27 սեպտեմբերի, 2015 թ.)....380
152. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Մասիսի Սուրբ Թադեոս եկեղեցու օծման առիթով (4 հոկտեմբերի, 2015 թ., Մասիս)....384
153. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Դիլիջանի եկեղեցու հողօրհնեքի արարողության առիթով (30 հոկտեմբերի, 2015 թ.)....388
154. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Թբիլիսիի Սուրբ Գեւորգ եկեղեցու վերաօծման առիթով (31 հոկտեմբերի, 2015 թ., Թբիլիսի)....391
155. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով (31 դեկտեմբերի, 2015 թ.)....396
156. Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդեան եւ Աստուածայայտնութեան տօնի առիթով (Սուրբ Էջմիածին, 6 հունվարի, 2016 թ.)....398
157. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը հայոց բանակի օրվա առիթով (28 հունվարի, 2016 թ.)....402
158. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը մեր Տեր Յիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնի առիթով (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 27 մարտի, 2016 թ.)....403
159. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը կանանց տոնի առիթով (8 մարտի, 2016 թ.)....408

160. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը հայրենիքի եւ հայրենյաց պաշտպան զինվորների համար աղոթքի արարողության ընթացքում (Երեւան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ, 4 ապրիլի, 2016 թ.)....409
161. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Ավետման տոնի առիթով (7 ապրիլի, 2016 թ.)....412
162. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Գանձասարի Սուրբ Հովհաննես եկեղեցում (Գանձասար, 13 ապրիլի, 2016 թ.)....414
163. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Շուշիի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում (Շուշի, 14 ապրիլի, 2016 թ.)....417
164. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով (սեպտեմբեր, 2016 թ.)....421
165. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Սուրբ Ներսես ընծայարանի նոր համալիրի բացման առիթով (ԱՄՆ, Նյու Ցորք, 2016 թ.)....422
166. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Ցեղասպանության հանցագործության զոհերի հիշատակի ու արժանապատվության եւ այդ հանցագործության կանխարգելման միջազգային օրվա առիթով (9 դեկտեմբերի, 2016 թ.) ..425
167. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը Ամանորի առիթով (31 դեկտեմբերի, 2016 թ.)....428
168. Ն. Ս. Օ. Տ . Տ . Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը մեր Տիրոջ՝ Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով (Սուրբ Էջմիածին, 6 հունվարի, 2017 թ.)....430
169. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը կանանց տոնի առիթով (8 մարտի, 2017 թ.)....434
170. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Հարության տոնի առիթով (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 16 ապրիլի, 2017 թ.)....435
171. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը՝ գիտելիքի, գրի, դպրության օրվա եւ նոր ուսումնական տարվա առիթով (1 սեպտեմբերի, 2017 թ.)....439
172. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը «Հայաստան-Սփյուռք» վեցերորդ համաժողովի բացման ժամանակ (18 սեպտեմբերի, 2017 թ.) 441
173. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկիոսի խոսքը Գարեգին Ա Հովսեփյան Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսի վավերագրերի եւ արխիվային նյութերի ժողովածուների շնորհանդեսի առիթով (20 սեպտեմբերի 2017 թ., Սուրբ Էջմիածին)..444
174. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը Եկմալյան պատարագի եւ Ժամագրքի վերահրատարակությունների շնորհանդեսի առիթով (26 սեպտեմբերի 2017 թ., Սուրբ Էջմիածին) 447
175. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Երեւանում Սուրբ Խաչի բարձրացման ռուսական եկեղեցու օծման առիթով (7 հոկտեմբերի 2017 թ.)....449
176. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայոց բանակի զորատեսակներին ընծայվող խաչվառների օրհնության ու բաշխման արարողության առիթով (10 հոկտեմբերի 2017 թ.)....452
177. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը մեր Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Ծննդյան եւ Աստվածհայտնության տոնի առիթով (Սուրբ Էջմիածին, 6 հունվարի 2018 թ.)....455
178. Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը մեր Տէր Յիսուս Քրիստոսի Սուրբ Յարութեան տօնի առիթով (Սուրբ Էջմիածին, 1 ապրիլի 2018 թ.)....459
179. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Արամ Մանուկյանի արձանի բացման արարողության առիթով (Երեւան, 17 հուլիսի, 2018 թ.)....462
180. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը «Սուրբ Էջմիածնի կրոնասեր տիկնանց համախմբումին» նվիրված հանդիսության առիթով (Երեւան, 7 սեպտեմբերի, 2018 թ.)....464

181. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Միլանի Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցու օծման 60-ամյակի առիթով (Միլան, 21 հոկտեմբերի, 2018 թ.) 467
182. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը ամանորի առիթով (31 դեկտեմբերի, 2018 թ.) 470

ՊԱՐԳԵՎԱԲԱՇԽՈՒՄՆԵՐ

183. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Ուղղափառ ժողովուրդների միասնության միջազգային հիմնադրամի պարգեւաբաշխության հանդիսության առիթով (հունվար, 2010 թ.) 472
184. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայ Եկեղեցու «Լավագույն ուսուցիչ» մրցանակաբաշխության առիթով (10 նոյեմբերի, 2015 թ., Մայր Աթոռ Ս. Էջմիածին) 475
185. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայոց բանակի սպաների եւ զինվորների պարգեւատրության հանդիսության առիթով (Երեւան, 28 մայիսի, 2016 թ.) 478
186. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը «Ավրորա» մրցանակաբաշխության առիթով (5 մայիսի, 2017 թ.) 480
187. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Էդուարդո Էօրնեկյանին «Հայաստանի ազգային հերոս»-ի կոչման շնորհման արարողությանը (12 հոկտեմբերի 2017 թ.) 482
188. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը «Լավագույն ուսուցիչ» հանրապետական մրցույթի մրցանակաբաշխության հանդիսությանը (12 դեկտեմբերի 2017 թ.) 484

ԵԿԵՂԵՑԻ ԵՎ ՊԵՏՈՒԹՅՈՒՆ (ՊԵՏԱԿԱՆ ՏՈՆԵՐ)

189. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը Հայոց բանակի օրվա առիթով (28 հունվարի, 2010 թ.) 487
190. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը կանանց տոնի առիթով (8 մարտի 2010 թ.) 488
191. Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը հաղթանակի ու խաղաղության տոնի եւ Շուշիի ազատագրության օրվա առիթով (9 մայիսի, 2010 թ.) 489
192. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական խոսքը Հանրապետության օրվա առիթով (28 մայիսի, 2010 թ.) 491
193. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը ՀՀ անկախության տոնի առիթով (21 սեպտեմբերի, 2010 թ.) 493
194. Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը հաղթանակի եւ խաղաղության տոնի առիթով (9 մայիսի, 2011 թ.) 494
195. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական խոսքը հանրապետության օրվա առիթով (28 մայիսի, 2011 թ.) 495
196. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի ընդլայնված նիստին (30 մայիսի, 2011 թ.) 496
197. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայաստանի Հանրապետության անկախության տոնի առիթով (Երեւանի Ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցի, 21 սեպտեմբերի, 2011 թ.) 499
198. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը հաղթանակի եւ խաղաղության օրվա առիթով (9 մայիսի, 2012 թ.) 503
199. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հանրապետության օրվա առիթով (28 մայիսի, 2012 թ.) 505
200. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը Հայաստանի Հանրապետության անկախության օրվա առիթով (21 սեպտեմբերի, 2012 թ.) 506
201. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայաստանի Հանրապետության նախագահ տիար Սերժ Սարգսյանի երդմնակալության առիթով (ապրիլ, 2013 թ.) 507

202. Թուրքիայից պահանջում ենք վերադարձնել բռնագրավված հայկական եկեղեցիներն ու եկեղեցապատկան կալվածքները (24 ապրիլի, 2013 թ.) 510
203. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հայաստանի Հանրապետության անկախության տոնի առիթով (սեպտեմբեր, 2013 թ.) 512
204. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը Հայոց բանակի օրվա առիթով (28 հունվարի, 2014 թ.) 513
205. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը հաղթանակի ու խաղաղության տոնի եւ Շուշիի ազատագրության օրվա առիթով (9 մայիսի, 2014 թ.) 514
206. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-ամյակի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստին (27 մայիսի, 2014 թ.) 515
207. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հանրապետության տոնի առիթով (28 մայիսի, 2014 թ.) 518
208. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հանրապետության օրվա առիթով ՀՀ նախագահի, պետական պաշտոնյաների, ՀՀ դիվանագիտական առաքելությունների ներկայացուցիչների հետ պաշտոնական ճաշկերույթի ժամանակ (28 մայիսի, 2014 թ.) 519
209. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը ՀՀ անկախության տոնի առիթով (21 սեպտեմբերի, 2014 թ.) 522
210. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը Հայոց բանակի օրվա առիթով (28 հունվարի, 2015 թ.) 523
211. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստին (29 հունվարի, 2015 թ.) 524
212. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը հաղթանակի եւ խաղաղության տոնի եւ Շուշիի ազատագրության օրվա առիթով (9 մայիսի, 2015թ.) 527
213. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հանրապետության տոնի առիթով (28 մայիսի, 2015) 528
214. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկիոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները համակարգող պետական հանձնաժողովի նիստին (26 սեպտեմբերի, 2015 թ.) 529
215. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ուղերձը Հայոց բանակի օրվա առիթով (28 հունվարի, 2016 թ.) 532
216. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը կանանց տոնի առիթով (8 մարտի, 2016 թ.) 533
217. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը հաղթանակի ու խաղաղության տոնի եւ Շուշիի ազատագրության օրվա առիթով (9 մայիսի, 2016 թ.) 534
218. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը Հանրապետության տոնի առիթով (28 մայիսի, 2016 թ.) 535
219. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը հանրապետական մաղթանքի ընթացքում (Շուշի, 5 սեպտեմբերի, 2016 թ.) 536
220. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական ուղերձը հաղթանակի եվ խաղաղության տոնի, Շուշիի ազատագրության եւ Արցախի պաշտպանության բանակի հիմնադրման օրերի առիթով (9 մայիսի, 2017 թ.) 539
221. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Ազգային ժողովի 6-րդ գումարման նիստին (18 մայիսի, 2017 թ.) 541
222. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը ՀՀ ռազմական կրթօջախների շրջանավարտների օրհնության առիթով (24 օգոստոսի, 2017 թ., Ս. Էջմիածին) 543

223. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը ՀՀ անկախության տոնի առիթով հանրապետական մաղթանքի արարողության ընթացքում (21 սեպտեմբերի, 2017 թ.)....546

ՀՈԲԵԼՅԱՆՆԵՐ, ՏԱՐԵԼԻՑՆԵՐ, ՑԱՎԱԿՑԱԳՐԵՐ

224. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց հայրապետի խոսքը Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա կապակցությամբ (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 24 ապրիլի 2010 թ.)....549
225. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Արցախի Հանրապետության 20-ամյակի առիթով (2 սեպտեմբերի, 2011 թ.)....552
226. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հաղթանակի տոնի, ԼՂՀ պաշտպանության բանակի եւ Շուշիի ազատագրության 20-ամյակի առիթով (ԼՂՀ, 9 մայիսի, 2012 թ.)....555
227. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Սոս Սարգսյանի հուղարկավորության առիթով (29 սեպտեմբերի, 2013 թ.)....558
228. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը գերմանա-հայկական ընկերության հարյուրամյակին նվիրված ակադեմիական սիմպոզիումի առիթով (18 սեպտեմբերի, 2014 թ.)....560
229. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը ԼՂՀ ռազմաօդային ուժերի կործանված ուղղաթիռի զոհված անձնակազմի հոգեհանգստյան արարողության առիթով (24 նոյեմբերի, 2014 թ.)....562
230. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը գերաշնորհ Տ. Տաթեւ արքեպիսկոպոս Ղարիբյանի հուղարկավորության առիթով (նոյեմբեր, 2014 թ.)....564
231. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով Հռոմի Սուրբ Պետրոսի տաճարում մատուցված պատարագի ընթացքում (12 ապրիլի, 2015 թ., Սուրբ Պետրոսի տաճար, Հռոմ)....566
232. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության հիշատակի օրվա առիթով (24 ապրիլի, 2015 թ.)....570
233. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Քըրք Քըրքորյանի հիշատակի ոգեկոչման արարողության առիթով (Սուրբ Էջմիածին, 2 4 հունիսի, 2015 թ.)....572
234. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը հանրապետական մաղթանքի ընթացքում Հայաստանի Հանրապետության 25-ամյակի առիթով (Երեւան, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ Մայր Եկեղեցի, 20 սեպտեմբերի, 2016 թ.)....575
235. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության 110-ամյակի առիթով (նոյեմբեր, 2016 թ.)....579
236. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Ապրիլյան պատերազմի ընթացքում զոհված զինվորների հոգեհանգստյան արարողության առիթով (Սուրբ Էջմիածին, 2 ապրիլի, 2017 թ.)....582
237. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը ՀՀ ԶՈՒ հոգեւոր առաջնորդության 20-ամյա հոբելյանի առիթով (8 դեկտեմբերի, 2017 թ.)....584
238. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայաստանի առաջին հանրապետության եւ Մայիսյան հերոսամարտերի 100-ամյակի առիթով հանրապետական մաղթանքի ընթացքում (Սուրբ Էջմիածին, 28 մայիսի, 2018 թ.)....588
239. Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Յուրի Վարդանյանի հոգեհանգստյան արարողությանը (13 նոյեմբերի, 2018 թ.)....591
240. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի գրականության ինստիտուտի 75-ամյակի առիթով (30 նոյեմբերի, 2018 թ.)....593

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ, ԳԻՏԱԺՈՂՈՎՆԵՐ, ՀԱՄԱԺՈՂՈՎՆԵՐ

241. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը «Ընտանիք, հասարակություն եւ եկեղեցի» համաժողովին (12 սեպտեմբերի, 2014 թ.)....595

242. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը եկեղեցական-ներկայացուցչական ժողովի գումարման առիթով (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 18 սեպտեմբերի, 2014 թ.)....597
243. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը Ռումինահայոց թեմի եւ Ռումինիայի կրոնից նախարարության կողմից կազմակերպված «Առաջին համաշխարհային պատերազմի ազդեցությունը Հայոց սփյուռքի ձեւավորման գործում» խորագրով միջազգային գիտաժողովի ընթացքին (Բուխարեստ, սեպտեմբերի 26-28, 2014 թ.)....602
244. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայկական գրադարանների միջազգային երրորդ համաժողովին (Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 6 հոկտեմբերի, 2014 թ.)....606
245. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց հայրապետի օրհնության խոսքը «Հայ կանանց միջազգային միավորման» 7-րդ միջազգային համաժողովին (10 հոկտեմբերի, 2014 թ.)....608
246. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույնի եւ օրհնության խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առիթով կազմակերպված «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումին (22 ապրիլի, 2015 թ., Երեւան)....610
247. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը «Հայոց ցեղասպանութիւն 100. Ճանաչումից հատուցում» միջազգային գիտաժողովի մասնակիցներին (15 հոկտեմբերի, 2015 թ.)....613
248. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայկական գրադարանների չորրորդ համաժողովի մասնակիցների հետ հանդիպման առիթով (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, 17 հոկտեմբերի, 2016 թ.)....615
249. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը եկեղեցական-ներկայացուցչական ժողովին (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, հունիս, 2017 թ.)....617
250. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Գեւորգյան հոգեւոր ճեմարանի նոր ուսումնական տարվա բացման առիթով (12 սեպտեմբերի, 2017 թ., Սուրբ Էջմիածին)....623
251. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը Ռուսաստանի եւ Նոր Նախիջեւանի Հայոց թեմի 300-ամյակին նվիրված գիտաժողովի մասնակիցներին (15-16 սեպտեմբերի 2017 թ., Մոսկվա)....625
252. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը «Վարպետաց դպրոց» հայորդյաց տան բացման առիթով (24 սեպտեմբերի, 2017 թ., Երեւան)....627
253. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը «Մերձավոր Արեւելքի քրիստոնյաները» միջազգային համաժողովի բացման ընթացքում (20 հոկտեմբերի, 2017 թ.)....630
254. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը «Հովհան Օձնեցի Իմաստասեր կաթողիկոսը եվ նրա ժամանակը» խորագրով գիտաժողովի բացման առիթով (Գեւորգյան հոգեւոր ճեմարան, 5 դեկտեմբերի, 2017 թ.)....633
255. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի օրհնության խոսքը Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսության Անթիլիասի Մայրավանքում հրավիրված համահայկական համագումարին՝ նվիրված Հայաստանի առաջին հանրապետության հռչակման 100-րդ տարեդարձին (Անթիլիասի Մայրավանք, 21 մարտի, 2018թ.)....636
256. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը «Արարատ» ամսագրի հիմնադրման 150-ամյակին նվիրված գիտաժողովին (19 դեկտեմբերի, 2018 թ., Սուրբ Էջմիածին)....639

ՄԻՋԵԿԵՂԵՑԱԿԱՆ

257. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույնի խոսքը Ուղղափառության միջխորհրդարանային համաժողովի 17-րդ վեհաժողովի բացման առիթով (Երեւան, 28 հունիսի, 2010 թ.)....641

258. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը ԵՀԽ 10-րդ համաժողովի բացման աղոթքին (Բուսան, Հարավային Կորեա, 30 հոկտեմբերի, 2013 թ.) 644
259. Ամենայն Հայոց կաթողիկոսի շնորհավորական գիրը Ասորի Ուղղափառ Եկեղեցու պատրիարք Նորին Սրբություն Տ. Տ. Իգնատիոս Եփրեմ Բ – ին (1 ապրիլի, 2014 թ., Դամասկոս, Սիրիա) 653
260. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը հընթացս Կաթոլիկ Եկեղեցու Սրբազան Քահանայապետ, Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի հետ հանդիպման (Սուրբ Աթոռ, Վատիկան, 8 մայիսի, 2014 թ.) 655
261. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Վաշինգտոնի Ազգային Մայր Տաճարում էկումենիկ արարողության ժամանակ (Վաշինգտոն, Ազգային Մայր Տաճար, 7 մայիսի, 2015 թ.) 659
262. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը էկումենիկ հանդիպման ժամանակ (Մայր Աթոռ Ս. Էջմիածին, ԳՀԵ հանդիսությունների սրահ, 26 սեպտեմբերի, 2015 թ.) 663
263. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի ոգեկոչման առիթով էկումենիկ արարողության ընթացքում (28 հոկտեմբերի, 2015 թ., Լոնդոն) 665
264. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի ողջույնի խոսքը Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապին՝ Մայր Տաճարում Հրաշափառի բարիգալստյան արարողության ընթացքում (Սուրբ Էջմիածին, 24 հունիսի, 2016 թ.) 668
265. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի կողմից Գյումրիի Սրբոց Վարդանանց հրապարակում մատուցված պատարագի ընթացքում (Գյումրի, 25 հունիսի, 2016 թ.) 671
266. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի հետ մատուցված խաղաղության աղոթքի ընթացքում (Երեւան, Հանրապետության Հրապարակ, 25 հունիսի, 2016 թ.) 674
267. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Հռոմի Սրբազան Քահանայապետ Ֆրանցիսկոս Պապի այցի առիթով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում մատուցված Հայրապետական Պատարագի ընթացքում (Սուրբ Էջմիածին, 26 հունիսի, 2016 թ.) 678
268. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Տուրկուի եւ Ֆինլանդիայի Ավետարանական-Լյութերական Եկեղեցու արքեպիսկոպոս Կարի Մեկկինենի հետ համատեղ աղոթքի ընթացքում (Ֆինլանդիա, Հելսինկի, Ավետարանական-Լյութերական Մայր Տաճար, 20 մարտի, 2017 թ.) 681
269. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Կարելիայի եւ համայն Ֆինլանդիայի արքեպիսկոպոս Լեոյի հետ համատեղ աղոթքի ընթացքում (Ֆինլանդիա, Նոր Վալաամի վանք, 21 մարտի, 2017 թ.) 685
270. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը Արեւելյան Ֆինլանդիայի համալսարանի Օրթոդոքս աստվածաբանական միացյալ դպրոցում (Ֆինլանդիա, Յոհենսու, 22 մարտի, 2017 թ.) 688
271. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի պատգամը Բեռլինի Մայր Տաճարում միջեկեղեցական արարողության ընթացքում (21 հոկտեմբերի, 2017 թ.) 694

ՀԱՄԱՏԵՂ ՀՌՉԱԿԱԳՐԵՐ, ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

272. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ կաթողիկոսի եւ Նորին Սրբություն Ֆրանցիսկոս Պապի համատեղ հռչակագիրը Սուրբ Էջմիածնում (26 հունիսի, 2016 թ.) 697
273. Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսի խոսքը տարածաշրջանի հոգեւոր առաջնորդների եռակողմ հանդիպմանը (7 սեպտեմբերի, 2017 թ.) 701

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ

ՀԱՏԸՆՏԻՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ

(2010-2018)

ՀԱՏՈՐ Բ

Կազմող՝ Տ. Արարատ քհն. Պողոսյան

Հրատարակչութեան տնօրէն՝	Տ. Արարատ քահանա Պողոսյան
Հրատարակչական խորհրդի անդամներ՝	Տ. Մկրտիչ եպս. Պռոշյան, Տ. Ռուբեն վրդ. Զարգարյան, Տ. Ասողիկ աբդ..Կարապետյան, Տ. Արարատ քհն. Պողոսյան, Տ. Գաբրիել քհն. Վարդանյան, Գեւորգ Տեր-Վարդանյան, Կարեն Մաթեւոսյան
Նյութերի հավաքագրումը՝	Զ. Անտոնյանի
Սրբագրիչ՝	Հ. Սրապիոնյան
Էջադրումը՝	Տ. Ղեւոնդ ավ. քհն. Մայիլյանի

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
Ս. ԷՋՄԻԱԾԻՆ - 2019

Չափսը՝ 70x100 1/16, թուղթը՝ 80 գ.,
ծավալը՝ 720 + 2 ներդիր էջ:

ISBN 978-9939-59-233-6



ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ
ԷՋՄԻԱԾՆԻ ՏՊԱՐԱՆ